

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱՐԱՐ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**



**ԵՐԵՎԱՆ - 2019**

**ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա  
Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ**

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱՐԱՐ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**Ժողովածուն նվիրվում է թավշյա հեղափոխության  
միամյակին (2018-2019թթ.)**

**ԵՐԵՎԱՆ**

**ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» հրատարակչություն  
2019**

ՀՏԴ 330:06  
ԳՄԴ 65.0  
Տ 776

Երաշխավորված է հրատարակության  
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

### **Խմբագրական խորհուրդ՝**

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Յուրի Սուվարյան**  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Ռոբերտ Սարինյան**  
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Ատոմ Մարգարյան**  
տնտեսագիտության թեկնածու **Հայկ Մարկոսյան**

### **Ժողովածուի պատասխանատու խմբագիր՝**

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **ՎԱԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**Տ 776**      Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշերը  
Հայաստանի Հանրապետությունում: Գիտաժողովի նյութեր/ ՀՀ ԳԱԱ  
Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ: Պատ. խմբա-  
գիր՝ Վ. Լ. Հարությունյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019.- 352 էջ:

Ժողովածուն նվիրվում է թավշյա հեղափոխության միամյակին  
(2018-2019թթ.): Ժողովածուն իր արձարձումների մեջ կարող է օգ-  
տակար և կիրառական լինել երկրում իրականացվող տնտեսական  
հեղափոխության գործընթացում:

ՀՏԴ 330:06  
ԳՄԴ 65.0

**ISBN 978-5-8080-1384-1**

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019  
© ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 2019

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՈՐԱԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ.  
բացման և ողջույնի խոսք (Յուրի Սուվարյան) ..... 6  
ՀՀ ԳԱԱ ՏԻ ՏՆՕՐԵՆԻ ԽՈՍՔԸ (Վլադիմիր Հարությունյան) .....11

## 1. ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ  
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ  
ՈՒՂԵՆԻՇԵՐԸ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍՈՎ  
(Վլադիմիր Հարությունյան, Տիգրան Հարությունյան)..... 14

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ  
ՈՒՂԵՆԻՇԵՐԸ ՀՀ-ՈՒՄ (Վլադիմիր Հարությունյան).....35

ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ  
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ  
ՈՒՂԵՆԻՇԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍՈՎ  
(Տիգրան Հարությունյան, Աննա Հարությունյան).....53

ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ  
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ  
ՈՒՂԵՆԻՇԵՐԸ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ  
ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍՈՎ (Դավիթ Հարությունյան) .....70

ՀԱՐԿԵՐ/ՀՆԱ ՑՈՒՑԱՆԻՇԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԱՃԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ  
ՈՒՂԵՆԻՇԵՐԸ ՀՀ-ՈՒՄ  
(Վլադիմիր Հարությունյան, Եվգենյա Հակոբյան) ..... 81

ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐՈՒՄ (Ռոբերտ Սարիյան).... 95

ԲԵՆԶԻՆԻ ԵՎ ԴԻԶԿԱՌԵԼԻՔԻ ՇՈՒԿԱՅԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՅՄԱՆ  
ՈՒՂԵՆԻՇԵՐԸ (Քրիստինե Բաղդասարյան) ..... 111

ՀԱՐԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՄԱՅԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ  
(Աշոտ Մարկոսյան, Էլյանորա Մաթևոսյան) .....122

ՀԱՆՐԱՅԻՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ  
ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ ՀՀ-ՈՒՄ (Ամալյա Գալստյան) ..... 134

ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ ՈՐՊԵՍ  
ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՈՒՂԵՆԻՇ  
(Թաթույ Մանասերյան, Ռոբերտ Քոչարյան).....147

## **2. ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ**

ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ ՀՀ-ՈՒՄ  
(Սվետլանա Դալլաթյան) ..... 156

ՀԱՅԱՍՏԱՆԸ «ՆՈՐ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ» ՃԱՆԱՊԱՐՀԻՆ  
ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ (Գայանե Հարությունյան).....172

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ  
ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԵՎ ԽԹԱՆՄԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ  
(Ատոմ Մարգարյան, Սոնա Մարգարյան)..... 189

## **3. ՄՐՑՈՒՆԱԿ, ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ  
ՈՒՂԵՆԻՇԵՐԸ ԱՐԴԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ  
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (Հայկ Մարկոսյան) .....209

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ  
ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՄՈԴԵԼԸ (Լիլիթ Սարգսյան) ..... 226

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐՆ ՈՒ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ  
ՀՀ-ՈՒՄ (Գայանե Թովմասյան, Ռուբիկ Թովմասյան) ..... 247

ՀՀ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ  
ԼՈՒԾՄԱՆ ԻՐԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ  
(Սամվել Ավետիսյան) .....266

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ  
ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ  
ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԵՆԻՇ (Մերի Մանուչարյան)..... 279

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ.  
ՄՏՈՐՈՒՄՆԵՐ, ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ

<b>(Արամ Խաչատրյան, Վահագն Խաչատրյան)</b> .....	295
ՊԵՏՈՒԹՅՈՒՆ - ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ <b>(Աշոտ Մարկոսյան, Էյլանորա Մաթևոսյան)</b> .....	311
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ ՀՀ-ՈՒՄ <b>(Գոհար Վարդանյան, Դիանա Պողոսյան)</b> .....	327
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ - ԱԶԱՏԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ <b>(Վահագն Խաչատրյան)</b> .....	337
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 1</b>	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ.....	348
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 2</b>	
ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ .....	350

**ՅՈՒ. Մ. ՍՈՒՎԱՐՅԱՆ**  
**ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս**

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՐԱԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ**  
**(բացման և ողջույնի խոսք)**

Հարգելի՛ գործընկերներ,

Այսօրվա գիտաժողովը նվիրված է Հայաստանի Հանրապետության առաջիկա տարիներին տնտեսական զարգացման հիմնախնդիրներին: Ակնհայտ ճշմարտություն է, որ տնտեսական զարգացման մակարդակը որոշիչ և առանցքային նշանակություն ունի ոչ միայն հասարակության սոցիալական զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, այլ նաև ազգային անվտանգության ապահովման և աշխարհում երկրի մրցունակության ու հեղինակության համար: Ուստի մեր գիտաժողովի խնդիրն է մշակել հիմնավոր երաշխավորություններ երկրի տնտեսության ժամանակակից տեխնոլոգիական հիմքով արագ առաջընթացի, դրա կառուցվածքի արդիականացման, թողարկվող արտադրանքի միջազգային մրցունակության բարձրացման, դրա հիման վրա հումքի փոխարեն մշակող արդյունաբերության գիտատար արտադրանքի արտահանման, երկրի վճարային հաշվեկշռի բարելավման համար: Օգտվելով պատեհ առիթից՝ փորձենք դիտարկել տնտեսական զարգացման արդի որոշ հիմնախնդիրներ:

Ընդունված է տնտեսական զարգացման ընթացքը բնութագրել քանակական ցուցանիշներով: Չնսեմացնելով դրանց կարևորությունը՝ անդրադառնամ ոչ պակաս կարևոր որակական բնութագրիչներին, որոնցից է տնտեսական զարգացման բնույթը: Եթե տնտեսական առաջընթացի քանակական ցուցանիշն աճի տեմպերն են, ապա որակական առումով այն կարող է լինել.

- էքստենսիվ՝ նոր ռեսուրսների ներգավմամբ,
- ինտենսիվ՝ առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործմամբ,
- հումքային ուղղվածության՝ համախառն ներքին արդյունքում լեռնահանքային և գյուղատնտեսական արտադրանքի գերակշռմամբ,
- աճի դանդաղ, կայուն կամ արագ (թռիչքային) տեմպերով:

Տնտեսական զարգացման որակական բնութագրիչներից է նաև այն, թե ինչպիսի տնտեսական կառուցակարգով է ապահովվում երկրի տնտեսության դինամիկան, այսինքն՝ ինչ չափով են առաջադիմական տնտեսական համակարգը և դրա կառավարման սկզբունքները:

Մեկ այլ որակական բնութագրիչ է այն, թե ինչքան հավասարաչափ են բաշխվում տնտեսական աճի շնորհիվ ստեղծված բարիքները հասարակության անդամների միջև, ինչը պայմանավորված է երկրում տիրապետող քաղաքական ու տնտեսական համակարգով և հետադարձ ազդեցություն կարող է ունենալ տնտեսական զարգացման ընթացքի վրա: Եկամուտների անհավասարաչափ բաշխումը համաշխարհային երևույթ է, այն բնորոշ է նաև շատ զարգացած

երկրների, անգամ ԱՄՆ-ին<sup>1</sup>, սակայն այն համահարթելու կամ մեղմելու խնդիրը մնում է արդիական ու կարևոր բոլոր երկրների համար:

Վերը նշվածի առումով ուշագրավ է, որ հայկական մամուլում նկատվում են դիտարկումներ «տնտեսական հեղափոխություն» արտահայտության՝ իբրև տնտեսական զարգացման բնույթի, վերաբերյալ: Դրական վերաբերմունքի հետ մեկտեղ հաճախ որոշ մասնագետներ գտնում են, որ տնտեսությունը սիրում է կայունություն, ուստի դրա համար հեղափոխությունը չի կարող բնութագրական լինել: Իսկ ի՞նչ է հեղափոխությունը: Հայտնի է հարցադրման հանրագիտարանային պատասխանը. այն որևէ երևույթի խոր որակական փոփոխությունն է և տարբերվում է թե՛ էվոլյուցիոն զարգացումից, թե՛ բարեփոխումներից: Տեսության մեջ և պրակտիկայում գործածական է և ընդունված քաղաքական, սոցիալական, գիտատեխնիկական, տեխնոլոգիական ոլորտներում կտրուկ, արմատական փոփոխությունները կոչել հեղափոխություն: Պատմությանը հայտնի են այդ բնույթի բազմաթիվ հեղափոխություններ: Հատկապես գիտատեխնիկական, տեխնոլոգիական հեղափոխություններն էականորեն նպաստել են հասարակական ու տնտեսական առաջընթացի վրա: Մասնավորապես հայտնի են միջազգայնորեն ընդունված տեխնոլոգիական հեղափոխության փուլերը և դրանց բնութագրիչները.

- արդյունաբերական հեղափոխություն (18-րդ դարի 60-ական թվականներ),
- ստանդարտացում և մեքենայացում (18-րդ դար),
- հոսքային հավաքման գծեր (1913 թ.):

ՌԳԱ ակադեմիկոս Ս. Գլազևը տեխնոլոգիական հեղափոխության շրջանակներում առանձնացնում է տեխնոլոգիական կացութաձևերը՝ համապատասխան առանցքային գործոններով, տեխնոլոգիական միջուկով, առանձնահատկություններով և ինստիտուցիոնալ կառուցվածքով<sup>2</sup>:

Կարո՞ղ է լինել նաև տնտեսական հեղափոխություն: Այս հարցի պատասխանը գտնելու համար հարկ է դիտարկել տնտեսական համակարգերի փոփոխությունների պատմական ընթացքը:

Տնտեսական համակարգը սերտորեն շաղկապված է քաղաքական համակարգին, դրա բաղադրիչն է, ուստի դրանց փոփոխությունները տեղի են ունենում միասին և միաժամանակ: Հայտնի է, որ քաղաքական համակարգի փոփոխությունը զուգակցվում է սեփականատիրական հարաբերությունների, տնտեսական կառուցակարգերի, կառավարման սկզբունքների և կառուցվածքների փոխակերպումներով: Օրինակ, XX դարի 90-ական թվականների սկզբում նախկին ԽՍՀՄ տարածքում, այդ թվում՝ Հայաստանում տեղի ունեցան լուրջ քաղաքական փոփոխություններ, որոնց արդյունքում արտադրության միջոցների պետական սեփականությունը մեծ մասամբ մասնավորեցվեց, տիրապետող դարձավ սեփականության բազմաձևությունը՝ մասնավորի առաջատար

<sup>1</sup> Տե՛ս Стиглиц Дж. Нечестная экономика, в ж. “В мире науки” №1-2, 2019, էջ 85-91:

<sup>2</sup> Տե՛ս Глазьев С. Ю. Становление шестого технологического уклада. – В кн.: Яковец Ю. В. , Фарах С. Н. Диалог и партнерство цивилизаций, Москва-Казань, 2018, էջ 200-2013:



դերով, էականորեն փոխվեց դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունը, ազատականացվեցին գները, արտաքին առևտուրը, ըստ էության ստեղծվեց տնտեսական գործող համակարգից տարբերվող որակապես նորը, որը համապատասխանում է նոր քաղաքական իրողություններին: Փոփոխությունների նկարագրված համալիրը, որը վերաբերում է տնտեսական համակարգի բազային բաղադրիչներին, իր բովանդակությամբ լիովին համապատասխանում է հեղափոխության բնութագրությանը, ուստի տեսականորեն և գործնականում տնտեսական հեղափոխություն կարող է լինել, եթե տեղի ունեցող փոփոխություններն ընդգրկում են ողջ տնտեսական համակարգը:

Տնտեսական համակարգում արմատական փոփոխությունները տրամաբանորեն կարող են հանգեցնել էական փոփոխությունների տնտեսական աճի տեմպերի և բնույթի առումով: Սակայն սույն եզրակացությունը վերաբերում է նոր համակարգի ներուժային հնարավորությանը, որի գործնական դրսևորումը պայմանավորված է բազմաթիվ քաղաքական, տնտեսական, տեխնոլոգիական, ընդհանուր առմամբ՝ ներքին և արտաքին միջավայրերի գործոններով: Նոր տնտեսական համակարգը կարող է ապահովել բարձր տեմպերով ու նոր որակական զարգացում, եթե դրա համար ստեղծվում է նպաստավոր ներքին և արտաքին միջավայր:

Հիմա անդրադառնանք տնտեսական զարգացման կարևորագույն գերակայություններին, որոնք էական են տնտեսական զարգացման քանակական ու որակական բաղադրիչների արմատական փոփոխության համար:

Ռազմավարական առումով և պետականորեն հարկ է կարևորել այնպիսի արտադրությունների բուռն զարգացումը, որոնք կարող են լուծման համար: Այդպիսին են, մեր համոզմամբ, գիտատար և աշխատատար, քիչ նյութատար ճշգրիտ մեքենաշինական արտադրությունները: Դրանց զարգացումը կարող է ստեղծել աշխատատեղեր, նպաստել քաղաքացիական նշանակության սարքավորումների և պաշտպանական բնույթի արտադրատեսակների թողարկման ընդլայնմանը:

Այսօր գիտական արդյունքների և բարձր որակավորման կադրերի հանդեպ պահանջարկը նվազել է, այդ աննպաստ միտումը կհաղթահարվի գիտատար արտադրանքի թողարկման ծավալման շնորհիվ, ավելին՝ կխթանի թե՛ կրթության, թե՛ գիտության զարգացումը: Մեր հաշվարկներով ներկայումս զուտ գիտատար արտադրանքի ծավալը, ներառյալ տեղեկատվության և կապի ծառայությունները, կազմում է ՀՆԱ 4.5-5.0 տոկոսը, նկատելիորեն բուժվում սովորողների թվում հարաբերաբար նվազում է ինժեներատեխնիկական և բնական գիտությունների մասնագիտություններով ուսանողների տեսակարար կշիռը: Տխուր է նաև արտահանման կառուցվածքը:

Սակայն այդ արտադրությունների զարգացումը հնարավոր է ներդրումների և մրցունակ տեխնոլոգիայի առկայության պարագայում: Այդ դժվարագույն խնդիրների լուծման համար համաշխարհային պրակտիկայում հայտնի է երկու տարբերակ.

- Սինգապուրյան փորձը<sup>3</sup> Պետություն-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում նպատակային ներգրավել տրանսազգային կամ ազգային խոշոր կորպորացիաների՝ առաջարկելով բարենպաստ տնտեսվարման պայմաններ, բարձր որակավորման մասնագետներ, որոշ զարգացած ենթակառուցվածքներ,

- համատեղել ձեռնարկությունների ստեղծումը պետական մասնակցությամբ:

Հնարավոր բոլոր տնտեսական լծակներով պետք է խրախուսել հանրապետության համար ավանդական թեթև, կահույքի, շինարարական նյութերի, փոքր քիմիայի արտադրությունների, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը: Նույնը վերաբերում է հարաբերաբար բարենպաստ զարգացման ընթացք ունեցող սննդի արդյունաբերության, ծառայությունների ոլորտի ճյուղերին:

Չափազանց կարևոր խնդիր է գյուղատնտեսության արդիականացումը՝ ինդուստրացման, գյուղատնտեսական կազմակերպությունների՝ կոոպերացման շնորհիվ խոշորացման, արտադրություն-արդյունաբերական մշակում-իրացում շղթայի կատարելագործման ուղիներով, ինչը հնարավորություն կընձեռի բարձրացնելու գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման մակարդակը, կիրառելու բերքի աճեցման ժամանակակից տեխնոլոգիաներ, զոոտեխնիկական, անասնաբուժական և ագրոնոմիական ծառայություններ, ստեղծելու բազմաճյուղ տնտեսություններ՝ բնական ռիսկերի ազդեցությունը նվազեցնելու համար և այդպիսով ավելացնելու բերքատվության ու մթերատվության մակարդակը: Գյուղատնտեսության ինտենսիվացումը մշակովի հողատարածքների սահմանափակության պայմաններում երկրի պարենային անվտանգության ապահովման գլխավոր ուղին է:

Անկախության տարիներին երկրում միջազգային կազմակերպությունների օժանդակությամբ ձևավորված հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունը հիմնականում համապատասխանում է ժամանակակից չափանիշներին, սակայն նկատելի են որոշ բացեր, որոնք կարող են հաղթահարվել: Դրանցից առաջինը պակաս արդյունավետ հարկային վարչարարությունն է, հարկային օրենսդրության հաճախակի փոփոխությունների ստեղծված պրակտիկան:

Դրամավարկային քաղաքականության ոլորտում չափազանց շատ են ֆինանսատնտեսական ռիսկերից խուսափելու ձգտումները, ինչի արդյունքում միշտ չէ, որ տնտեսական աճի ռազմավարությունը զուգակցվում է արդյունավետ փողի և վարկային քաղաքականության հետ:

XXI դարում առանձնակի կարևորություն են ստանում ազգային նորամուծական համակարգի ձևավորումը և գործարկումը: Այն երկրները, որոնք ավելի են կարևորել գիտական առաջընթացը, նպաստել դրան, հասել են ավելի բարձր քաղաքակրթական, տնտեսական և պաշտպանական արդյունքների: Արդի աշխարհն այդ չափանիշով բաժանվում է զարգացած, զարգացող և թույլ զարգացած երկրների: Գիտատեխնիկական զարգացումն ընթանում է շատ

<sup>3</sup> Տե՛ս **Լի Կուան Յու**, Երրորդից առաջին աշխարհ. Սինգապուրի 1965-2000 թվականների պատմությունը, Ե., 2017, էջ 93-113:

արագ. Եթե 18-րդ դարի 60-ական թվականներին և հաջորդ դարի առաջին կեսին տեխնոլոգիական միջավայրի առանցքային գործոնները մանածագործական հաստոցները և շոգեքարշն էին, ապա XXI դարում արդեն տիրապետող են նանո և բջջային տեխնոլոգիաները<sup>4</sup>:

ՀՀ-ում որոշակի աշխատանք է կատարվել նորամուծական համակարգի ձևավորման ուղղությամբ, մասնավորապես ստեղծվել է համապատասխան օրենսդրանորմատիվային դաշտ<sup>5</sup>: Սակայն դեռևս չի կայացել ազգային արդյունավետ գործող նորամուծական հնամակարգը՝ կրթություն-գիտություն-արտադրություն ինտեգրված շղթայով, պետական մարմինների միջև անհրաժեշտ լիազորությունների հստակ բաշխմամբ, գիտատեխնիկական գործունեության կոնկրետ գիտակոնստրուկտորական և սոցիալ-տնտեսական արդյունքներին միտված ֆինանսավորման և դրանց առևտրայնացման ենթահամակարգերով: Մինչդեռ այդ համակարգի ստեղծումը և դրա արդյունավետ գործունեության ապահովումը տնտեսության բարձր տեմպերով զարգացման և մրցունակ արտադրանքի թողարկման, երկրի ռազմավարական խնդիրների լուծման կարևորագույն երաշխիքներից են:

---

<sup>4</sup> Տե՛ս Глазьев С. Ю. նշվ. աշխ., էջ 201-202:

<sup>5</sup> Տե՛ս Ազգային նորամուծական համակարգ. ներուժի գնահատումը և հայեցակարգային գերակայությունները, ՀՀ ԳԱԱ ակադ. Յու. Մ. Սուվարյանի խմբ., Ե., «Գիտություն», 2017, էջ 165-173:

## Վլադիմիր Հարությունյան

### ՀՀ ԳԱԱ ՏԻ ՏՆՕՐԵՆԻ ԽՈՍՔԸ

Գիտաժողովի հարգարժան մասնակիցներ, առաջին հերթին թույլ տվեք շնորհակալություն հայտնել հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանին, կառավարության անդամների և ազգային ժողովի պատգամավորների, ովքեր ընդունել են ինստիտուտի հրավերը՝ մասնակցելու թավշյա հեղափոխության միամյակին նվիրված այսօրվա գիտաժողովին:

Իրողություն է, որ մինչև թավշյա հեղափոխությունը Հայաստանում ձևավորվել էր ծանր բարոյահոգեբանական մթնոլորտ՝ պայմանավորված ինչպես ազգաբնակչության սոցիալ-տնտեսական կենսապայմաններով, այնպես էլ անարդարության, հովանավորչության, կոռուպցիայի համատարած բնույթով, որտեղ յուրաքանչյուր քաղաքացի առանձին վերցրած անզոր էր հաղթահարելու առկա դժվարությունները: Եվ միայն հասարակության հավաքական ուժի համախմբմամբ հնարավոր դարձավ իրականացնել թավշյա հեղափոխությունը, որի առաջին դրական արդյունքներն ակնհայտ են: Սակայն հասարակության պահանջն ավելին է, քան արձանագրված հաջողությունները: Բարեփոխումների և կենսամակարդակի հեղափոխական ազդեցության ակնկալիքն արդարացի է և օբյեկտիվ: Մենք իրավունք չունենք թույլ տալու, որ մարի այն հույսի ճրագը, որ համակել է յուրաքանչյուր հայորդու:

Այս առումով մենք բոլորս, յուրաքանչյուրս մեր գործով և հնարավորությամբ պետք է բազմապատկենք սեփական ջանքերը մեր պետականության ամրապնդման և բարգավաճման ուղղությամբ: Այլևս չմտածված, անհեռանկարային քայլեր անելու իրավունք չունենք, քանզի յուրաքանչյուր սխալ թանկ է նստում հասարակական կյանքի յուրաքանչյուր ոլորտի վրա, սկսած կենցաղային հարցերից մինչև պետական սահմանի պաշտպանունակություն: Սա է մեր այսօրվա գիտաժողովի առաքելության փիլիսոփայությունը՝ մեկտեղել հայ տնտեսագիտական միտքը տնտեսական հեղափոխության իրականացման գործում:

Թավշյա հեղափոխությունից անցել է ընդամենը մեկ տարի և արդեն ակնհայտ են ձեռքբերումները ժողովրդի ազատ կամարտահայտությամբ իշխանության ձևավորման, օրենքի առաջ բոլորի հավասարության և իրավունքի գերակայության, ազգային միասնության ու քաղաքացիական համերաշխության, արտաքին և ներքին անվտանգության և քաղաքականության մեջ նոր շեշտադրումների, կոռուպցիայի դեմ պայքարի, քաղաքականության և բիզնեսի գործնական տարանջատման, մարդու իրավունքների պաշտպանության և այլ ուղղություններում: Բնականաբար դա շատ կարճ ժամանակամիջոց է երկրում առկա բոլոր սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման համար: Վերջինս իրատեսական է միայն տարիների կտրվածքով: Տնտեսական հեղափոխությունը կոչված է կարճելու այդ ժամանակը:

Արդեն իսկ ակնհայտ է նշանակալի առաջընթաց ոչ բնական տնտեսական մենաշնորհների բացառման, տնտեսական մրցակցության պաշտպանության, տնտեսության կառուցվածքային վերափոխումների և պետական կառավարման համակարգի օպտիմալացման հիմնախնդիրների լուծումներում:

Գիտաժողովի հարգարժան մասնակիցներ, հարկ եմ համարում արձանագրել, որ այսօրվա գիտաժողովն ունի որոշակի առանձնահատկություններ:

- Այն ամբողջապես կառուցված է 2019 թվականի փետրվարի 8-ի՝ ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված ծրագրի բովանդակությանը համապատասխան և բխում է ՀՀ կառավարության ծրագրի ելակետային դրույթներից, որը հստակ երևում է ժողովածուի 348-րդ էջում տեղադրված թիվ 1 հավելվածից:
- Գիտաժողովին իրենց մասնակցությունն են բերել հանրապետության տնտեսագետների լայն շրջանակներ (ԵՊՀ-ից, ՀՊՏՀ-ից, Հայաստանում ամերիկյան համալսարանից, Հայկական պետական մանկավարժական համալսարանից, Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանից, Հայաստանի պետական ագրարային համալսարանից և այլ տեղերից), ինչպես նաև տնտեսագետ փորձագետներ:
- Ցանկանում եմ հետադարձ հայացքի և արդյունքների գնահատման առումով արձանագրել, որ գիտությունը և իմաստությունները ոչ գրքերում և ոչ էլ աշխատասենյակներում են ամբարված, այլ ժողովրդի հետ շփումներում: Եվ ժողովրդի հետ ունեցած շփումների արդյունքում էր, որ Սայաթ-Նովան, Հովհաննես Թումանյանը, Կոմիտասը, Ջիվանին և այլ մեծանուն հայորդիներ մնացին հայ ժողովրդի հոգում ու սրտում և ստացան միջազգային ճանաչում: Եվ որպեսզի հանրապետությունում տնտեսական հեղափոխությունն իրականություն դառնա, դա առաջին հերթին պետք է տեղի ունենա ազգաբնակչության գիտակցության մեջ, այսինքն՝ մարդկանց ուղեղներում: Ուստի առաջարկում ենք ՀՀ կառավարությանը, ՀՀ ԱԺ հանձնաժողովների նախագահներին ու պատգամավորներին էլ ավելի ակտիվացնել շփումները հասարակության տարբեր խմբերի ու խավերի հետ: Այստեղ հիշատակության արժանի է աստվածաշնչյան այն միտքը, որ «Մեղուն փոքր է թռչունների մեջ, սակայն նրա պտուղը քաղցրության սիրտն է»: Եվ դա անհրաժեշտ է կատարել մարզերում, քաղաքներում, համայնքներում, բուհերում ու գիտահետազոտական ինստիտուտներում: Այդ ամենը մուտիպիլկատիվ էֆեկտով կտա իր արդյունքը, և «տնտեսական հեղափոխության» գաղափարը հոգևոր հեղեղի պես բույն կդնի մարդկանց հոգիներում ու սրտերում, իսկ կառավարությանը դրանից հետո կմնա ուղղակի արձանագրել իրականություն դարձած «տնտեսական հեղափոխության» արդյունքները:

«Տնտեսական հեղափոխություն» չեն կարող իրականացնել ո՛չ կառավարությունները և ո՛չ էլ ամենահզոր անհատները: Այն կարող են իրականացնել միայն ու միայն ժողովուրդները, իսկ կառավարություններն ու անհատները կարող են

ժողովուրդներին միայն ու միայն ուղղորդել և այն էլ ճիշտ կամ սխալ, լավ կամ վատ: Իսկ մեր՝ տնտեսագետներիս խնդիրն է օգնել կառավարությանը, որպեսզի այդ ուղղորդումը լինի մասնագիտորեն ճիշտ ու արդարացված, այսինքն՝ յուրաքանչյուր մասնագիտական ծառայություն ու մասնագետ այս գործընթացում իր բաժին գործն ունի անելու:

Այս տրամաբանությամբ մենք՝ հայերս Հայաստանում, Արցախում և Սփյուռքում պարտավոր ենք գիտությամբ, մտքով, գաղափարով, նպատակաուղղվածությամբ և այլ լավագույն որակներով յուրաքանչյուրս մեր հնարավորության չափով մարտահրավեր նետել.

- խեղճությանը (եսիրությանը),
- աղքատությանը,
- գործազրկությանը,
- արտագաղթին,
- կոռուպցիային,
- անարդարությանը,
- հուսահատությանը:

Գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ, թո՛ւյլ տվեք մեկ անգամ ևս շնորհակալություն հայտնել մասնակցության համար և հավաստիացնել, որ «Տնտեսական հեղափոխություն» խորագրով գիտաժողովներ ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտն այսուհետև ևս կանցկացնի տարեկան պարբերականությամբ՝ ակնկալելով ձեր մասնակցությունը:

Այսքանը, շնորհակալություն  
21 մայիս, 2019 թվական

# 1. ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

## Վլադիմիր Հարությունյան Տիգրան Հարությունյան

### ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱ- ՆԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍՈՎ

Հայաստանում ԱԱՀ-ի գծով հաշվարկված մուտքերի տեսակարար կշիռը ընդհանուր հարկային եկամուտների մեջ դեռևս 1998-2001թթ. եղել է ամենաբարձրը հետխորհրդային անցման շրջանի տնտեսությամբ երկրների մեջ, մինչդեռ այլ երկրների հետ համեմատած շահութահարկի և եկամտահարկի գծով մուտքերը եղել են շատ ցածր<sup>1</sup>:

#### Աղյուսակ 1

#### *ԱԱՀ-ի տեսակարար կշիռը հարկային և պեդական բյուջեի եկամուտների կառուցվածքում 2010-2018թթ.<sup>2</sup>*

Տարի	Պետական բյուջեի եկամուտներ (մլն դրամ)	Հարկային եկ- մուտներ (մլն դրամ)	ԱԱՀ (մլն դրամ)	ԱԱՀ/Հարկային եկամուտներ (%)
2010	780439.4	699434.9	301724.5	52.7
2011	880851	777409.7	328482.8	52.1
2012	946193.4	878381.4	369661.6	43.3
2013	1071371	1000931	401884.7	41.3
2014	1144763	1064118	440361.4	43
2015	1167744	1067889	423933.5	40.9
2016	1171107	1079689	391087.8	37.4
2017	1237781	1157988	406583.1	38.9

<sup>1</sup> Հայաստանում Ամերիկյան և Եվրոպական միության առևտրային պալատների «Հայաստանի հարկային համակարգի բարեփոխումներ. օտարերկրյա ներդրողների հեռանկարները» զեկույցը: Օգոստոս, 2003, էջ 7:

<sup>2</sup> <https://www.armstat.am/file/doc/99493848.pdf>

<https://www.armstat.am/file/doc/99499473.pdf>

<https://www.armstat.am/file/doc/99504418.pdf>

<https://www.armstat.am/file/doc/99510818.pdf>

[https://www.armstat.am/file/article/sv\\_11\\_18a\\_211.pdf](https://www.armstat.am/file/article/sv_11_18a_211.pdf)

[http://www.petekamutner.am/Shared/Documents/Publications/th\\_annual\\_report\\_2017.pdf](http://www.petekamutner.am/Shared/Documents/Publications/th_annual_report_2017.pdf)

[http://www.petekamutner.am/Shared/Documents/Publications/th\\_annual\\_report2016.pdf](http://www.petekamutner.am/Shared/Documents/Publications/th_annual_report2016.pdf)

[http://www.petekamutner.am/Shared/Documents/Publications/th\\_annual\\_report\\_2015.pdf](http://www.petekamutner.am/Shared/Documents/Publications/th_annual_report_2015.pdf)

[http://www.petekamutner.am/Shared/Documents/Publications/th\\_annual\\_report\\_2014.pdf](http://www.petekamutner.am/Shared/Documents/Publications/th_annual_report_2014.pdf)

[http://www.petekamutner.am/Shared/Documents/Publications/th\\_annual\\_report\\_2012.pdf](http://www.petekamutner.am/Shared/Documents/Publications/th_annual_report_2012.pdf)

<http://www.petekamutner.am/siPublications.aspx?ptname=AnnualReports>

ԱԱՀ-ի գծով հաշվարկված փաստացի մուտքերի տեսակարար կշիռը ընդհանուր հարկային եկամուտներում շարունակում է բարձր մնալ նաև 2010-2018թթ. (տե՛ս աղյուսակ 1):

Հարկ է նշել, որ Հայաստանի թե՛ հարկային բազան և թե՛ հարկազանձման գործընթացը անհավասարակշռված են, որը վնասակար ու կործանիչ է երկրի համար, քանի որ ԱԱՀ-ը լինելով անուղղակի հարկատեսակ, ավելի ազդեցիկ է ցածր եկամուտներ ունեցող սուբյեկտների համար, ինչն իր հերթին նպաստում է աղքատության խորացմանը: Ելնելով վերոհիշյալ և այլ փաստարկներից.

1. տնտեսագիտորեն հիմնավորված ենք համարում ԱԱՀ-ի դրույքաչափի տարբերակումը: Ընդ որում անհրաժեշտ է ցածր հարկադրույքները սահմանել սպառման առարկաների, իսկ բարձր հարկադրույքները՝ խրախճանքի և շքեղության օբյեկտ հանդիսացող ապրանքների համար, որոնք կնվազեցնեն անապահով խավի հարկային բեռը, իսկ ունևոր խավինը կբարձրացնեն:
  2. Անհրաժեշտ ենք համարում նաև որպես ԱԱՀ-ի հարկման բազա դիտարկել ոչ թե ամբողջ շրջանառությունը (որն անհարկի բարդացնում է ԱԱՀ-ի հաշվարկը, գործածության մեջ է մտցնում բացասական հետևանքներով հագեցած հաշվարկների պրակտիկան և այլն), այլ ավելացված արժեքը, որը կարելի է հաշվարկել վճարված աշխատավարձի և ստացված շահույթի հանրագումարով կամ վաճառված ապրանքներից ու մատուցված ծառայություններից ստացված գումարի և իրականացված ծախսերի տարբերությամբ, որով պայմանավորված դառնում է տրամաբանական.
- ա) ներմուծվող ապրանքներից ԱԱՀ-ի զանձման գործառույթի փոխանցումը մաքսային մարմիններից հարկային մարմիններին՝ ապահովելով «նշանակման վայրի» սկզբունքը,
- բ) հարկային հաշիվների վերացումը, որոնք, առանձին հարկատուների համար լինելով ոչ խիստ հաշվառման փաստաթղթեր, դարձել են հարստացման միջոց «կեղծ հարկային հաշիվներ» դուրս գրելու եղանակով:

Հարկ է նշել, որ ԱԱՀ-ի հաշվարկման օրենսդրական ու մեթոդաբանական կարգի թերություններ տեղ են գտել նաև օրենսդրական մակարդակի բարձրացված բազմաթիվ ու բազմաբնույթ հարկային արտոնություններում, որոնք հանդես են գալիս հարկվող շրջանառության նկատմամբ ԱԱՀ չհաշվարկելով, հարկվող շրջանառության նկատմամբ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափ կիրառելով<sup>3</sup> և այլն: Դա այն դեպքում, երբ «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքով թույլատրված է (բացի օրենքում նշվածներից) սահմանել նաև այլ արտոնություններ: Ընդ որում օրենքում առկա հարկային արտոնությունները սոցիալական ուղղվածություն չունեն և դեռ ավելին, շատ դեպքերում արդարացված չեն և ակտիվացնում են բացասական ազդեցություններ:

---

<sup>3</sup> ԱԱՀ-ից ազատումը հարկվող շրջանառության նկատմամբ այն չհաշվարկելն է, իսկ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկումը հարկվող շրջանառության նկատմամբ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափի կիրառումն է:



Մանրածախ առևտրի համար հարկվող շրջանառության և դրանց ձեռքբերման գների տարբերության սկզբունքով որոշումը հանգեցնում է ավելացված արժեքի հարկի ոչ հստակ հաշվարկի: Բացի դրանից, օրենքով սահմանվել են ավելացված արժեքի հարկից ազատման բազմաբնույթ, հաճախակի անորոշ և մեծածավալ արտոնություններ, որոնք կիրառության առումով խրթին են ու ոչ միանշանակ: Արտոնությունների այդպիսի առատությունը հանգեցնում էր միայն ավելացված արժեքի հարկի՝ որպես բյուջետային եկամուտների, դերի նվազեցմանը:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով ԱԱՀ-ից ազատելու միջոցով հարկային արտոնություններ են սահմանված ապահովագրական և վերապահովագրական գործառնությունների (ներառյալ դրանց հետ կապված ապահովագրական միջնորդները և գործակալները) կողմից մատուցվող ծառայությունների, ինչպես նաև բանկերի ու վարկային կազմակերպությունների կողմից իրականացվող ֆինանսական հսկայածավալ գործառնությունների ու ծառայությունների նկատմամբ<sup>4</sup>, որին օրենքում կատարված փոփոխությամբ ավելացվել են նաև բանկեր և վարկային կազմակերպություններ չհանդիսացող այլ անձանց կողմից վարկերի ու փոխառությունների տրամադրման գործարքները<sup>5</sup>: Եվ դա այն դեպքում, երբ Հայաստանում չկա մեկ այլ հարկատու, որը բանկերի և վարկային ու ապահովագրական կազմակերպությունների նման հնարավորություն ունենա իրականացնելու այդչափ շատ և բազմաբնույթ գործառնություններ, և դրանց գրեթե լրիվ գործարքների ու մատուցվող ծառայությունների գծով սահմանված լինեն ԱԱՀ-ի արտոնություններ, մանավանդ, որ բանկային բիզնեսը Հայաստանում կայացած է ու զարգացած, բանկային ու ապահովագրական բիզնեսները շահութաբեր են և աշխատում են շուկայական հարաբերություններին բնորոշ մեխանիզմներով, վարկային ռեսուրսները հիմնականում շրջանառվում են առևտրում, իսկ բանկերի ու ապահովագրական ընկերությունների և վարկային կազմակերպությունների մատուցած ծառայությունների սակագները որոշվում են շուկայի օրենքներով և այլն:

Դա նշանակում է, որ երկրի օրենսդիր մարմինը չարդարացված լիբերալ վերաբերմունք է դրսևորել բանկերի, վարկային ու ապահովագրական կազմակերպությունների նկատմամբ և նրանց կողմից իրականացվող հսկայածավալ ու բազմաբնույթ գործարքների ու մատուցվող ծառայությունների համար հարկային արտոնություններ սահմանելով՝ չի արժևորել դրանք (հարկային արտոնությունը պետք է ունենա գին), քանի որ բանկերն ու վարկային կազմակերպությունները չունեն դրանց սահմանմամբ պայմանավորված պարտավորություններ: Մինչդեռ հարկային արտոնությունները հնարավորություն են տալիս այդպիսի ծառայություններ ու գործարքներ իրականացնող կազմակերպություններին (բանկեր, ապահովագրական ու վարկային կազմակերպություններ), ի հաշիվ

<sup>4</sup> «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», Առաջին մաս, Եր.: 2009, էջ 137-139:

<sup>5</sup> Նույն տեղում:

բյուջեի, ստանալու լրացուցիչ եկամուտներ, որոնք «կերպարանափոխվում» և հանդես են գալիս ծառայության վճարի ձևով, այսինքն՝ այն, ինչ բյուջեն չի ստանում ԱԱՀ-ի, նրանք ստանում են ծառայության վճարի ձևով: Ավելին, ներկայումս բանկերով, ապահովագրական ու վարկային կազմակերպություններով որպես կապիտալ հիմնականում շրջանառվում են հարուստների գումարները, և իրականում ԱԱՀ-ի նշված արտոնությունը լրացուցիչ եկամուտ է բերում այդ մարդկանց և «ծառայում է» նրանց: Բացի դրանից, ՀՀ-ում ապահովագրական բիզնեսի օբյեկտներ են դարձել, որպես կանոն, խոշոր գումարներ ունեցող տնտեսվարող սուբյեկտները, քանի որ նրանք հնարավորություն ունեն օգտվելու այդպիսի մասնագիտական ծառայությունից, իսկ ապահովագրական ընկերությունները ստեղծվում են հիմնականում խոշոր գործարարների կողմից, և նույն անձին պատկանող գումարներն իր մի կազմակերպությունից անցնում են մյուսին՝ առանց ԱԱՀ-ով հարկվելու, որի արդյունքում հարուստն ավելի է հարստանում, իսկ աղքատը՝ աղքատանում:

Ընտևաբար, քանի դեռ քաղաքացիների ու տնտեսվարող սուբյեկտների գերակշիռ մասը չունեն ապահովագրական ծառայություններից օգտվելու ֆինանսական հնարավորություն, ապա այդպիսի ծառայությունների գծով ԱԱՀ-ի հարկային արտոնությունների սահմանումը նպաստում է ապահովագրական ընկերությունների լրացուցիչ շահույթի ստացմանը ի հաշիվ բյուջեի: Ուստի արդարացված պետք է համարել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 15-րդ և 17-րդ կետերով սահմանված հարկային արտոնությունների ուժը կորցրած ճանաչելը:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով հարկվող շրջանառության նկատմամբ ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափի կիրառմամբ հարկային արտոնություն է սահմանված միջազգային երթուղիներով թռիչքներ իրականացնող օդանավերի լցավորման համար վառելանյութի և ամբողջ երթուղու ընթացքում օդանավերում անձնակազմի և ուղևորների սպառման համար նախատեսվող ապրանքների, ինչպես նաև փոխադրամիջոցների սպասարկման, նորոգման, վերասարքավորման, փոխադրվող ուղևորների, ուղեբեռների, բեռների, փոստի սպասարկման ծառայությունների նկատմամբ: Այն ժամանակ, երբ միջազգային երթուղիներով թռիչքներ իրականացնող ընկերությունը պետական էր և միակը, այդպիսի հարկային արտոնությունների սահմանմամբ պետությունը կանխում էր բացասական ազդեցությունների ակտիվացումը, իսկ երբեմն էլ չեզոքացնում էր դրանք, որն, օրինակ, կարող էր դրսևորվել տոմսերի, անձնակազմին ու ուղևորներին մատակարարվող ապրանքների գների բարձրացման մեջ և այլն: Ներկայումս, երբ միջազգային երթուղիներով թռիչքներ իրականացնող ընկերությունը միակը չէ և պետական չէ, իսկ օդանավակայանը հանձնված է հավատարմագրային կառավարման, սահմանված հարկային արտոնությունները պետությանը փոխհատուցում չեն բերում: Դեռ ավելին, սահմանված հարկային արտոնությունները չեն կարող հետապնդել ուղևորափոխադրումների մեծացման նպատակ, քանի որ անկախ տոմսի ու ինքնաթիռում մա-

տուցվող ծառայությունների գների մեծությունից «գնացողը գնում է, իսկ եկողը՝ գալիս»։ Արդյունքում այդպիսի հարկային արտոնությունների գործողությունը հանգեցնում է ավիավառելիք, օդանավում սպառման համար նախատեսված ապրանքներ մատակարարող, փոխադրամիջոցների սպասարկում ու նորոգում և այլ ծառայություններ մատուցող հարկատուների բյուջետային վարկավորմանը, որը չի բխում հարկման սկզբունքների պահանջներից։ Ասվածի տրամաբանությունը հանգեցնում է այն հետևությանը, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին կետը օդանավերի լցավորման համար վառելանյութի և օդանավում սպառման համար նախատեսվող ապրանքների մատակարարման մասով, ինչպես նաև 16-րդ հոդվածի 5-րդ կետը միանգամայն արդարացված կլինի ուժը կորցրած ճանաչելը։

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում իր արտացոլումն է ստացել նաև հարկային խտրականության զուգակցմամբ հարկային արտոնության սահմանումը, որը հակասում է հարկման համընդհանրության սկզբունքին և հանգեցնում է բացասական այլ երևույթների։ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով հարկային արտոնություն սահմանող 16-րդ հոդվածի առաջին կետի երկրորդ պարբերության «օտարերկրյա անձանց կողմից հանրապետությունում ձեռք բերված ապրանքներն արտահանելիս դրանց համար հանրապետության տարածքում վճարված ԱԱՀ-ի գումարները վերադարձվում են» դրույթը նպաստում է այնպիսի բացասական ազդեցությունների ակտիվացմանը, ինչպիսիք են հայաստանցիների կողմից օտարերկրացիների միջոցով ապրանքների արտահանումը և ստվերային դաշտում նրանց գործելը, օտարերկրացիների կողմից «անաշխատ եկամտի» ձևով հանդես եկող գումարների տնօրինումը բյուջեից վերադարձվող ԱԱՀ-ի չափով (երբ իրական արտահանողը հայաստանցին է), արտահանվող ապրանքի վաճառքից ստացվող շահույթի տնօրինումը օտարերկրացու կողմից և այդ գումարի շրջանառումը արտասահմանում (երբ իրական արտահանողը օտարերկրացին է), հարկման արդյունավետության նվազումն ինչպես հայաստանցու, այնպես էլ օտարերկրացու մասով հատկապես այն դեպքերում, երբ համապատասխան երկրների հետ Հայաստանը չունի միջպետական համաձայնագրեր, որոնց պարագայում օտարերկրացուց հարկի գանձման հնարավորությունը հավասարվում է զրոյի։ Այդպիսի հարկային արտոնության սահմանման արդյունքը օտարերկրացու մուտքն է Հայաստան և դրսի հետ շփումների ակտիվացումը, ապրանքների արտահանումը և դրանց իրացման խնդրի հարցի լուծումը, որոնք ամբողջությամբ դրական ազդեցություններ էին տարիներ առաջ, բայց ոչ այժմ։

Հարկային խտրականության զուգակցմամբ հարկային արտոնությունների սահմանման օրինակ է՝ օտարերկրացիների կողմից տրված (ըստ էության նրանց կողմից մատակարարվող) հումքից, նյութերից ու կիսաֆաբրիկատներից և նրանց պատվերով ՀՀ տարածքում արտադրանքի մշակման կամ հավաքման, շարժական գույքի նորոգման, արդիականացման և համանման այլ ծառայությունների (որոնք արտահանվում են ՀՀ մաքսային սահմանից դուրս), ինչպես

նաև դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, նրանց հավասարեցված միջազգային, միջկառավարական (միջպետական) կազմակերպությունների պաշտոնական օգտագործման նպատակով ներմուծվող կամ հանրապետության տարածքում ձեռք բերվող ապրանքների, նրանց մատուցվող ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափի կիրառումը<sup>6</sup>: Այսպիսի հարկային արտոնությունների սահմանման առաջին դեպքի (երբ օտարերկրացին հումքի մատակարար է, պատրաստվող արտադրանքի ու մատուցվող ծառայության պատվիրատու ու դրանց արտահանող) ժամանակ դրական ազդեցություն է՝ արտադրանքի իրացումը արտասահմանում, իսկ բացասական ազդեցություններն են՝ բյուջեի մուտքերի նվազումը և հայաստանի գործարարների ձգտումը դրանք իրականացնելու օտարերկրացիների անվան տակ, որը նվազեցնում է հարկման արդյունավետությունը: Սակայն առավել շատ, գործնականում հնարավոր են ինչպես բացասական ազդեցությունների խորացումը, այնպես էլ դրական ազդեցությունների չեզոքացումը, քանի որ Հայաստանը դեռևս չի դարձել միջազգային ընկերության լիիրավ անդամ, որը հնարավորություն տար Հայաստանին ու նրա հարկատուներին օտարերկրացիների հետ ունեցած տարածայնությունները վիճարկելու միջազգային դատարաններում: Քանի դեռ դա այդպես չէ, ճիշտ կլիներ վերոհիշյալ նպատակին հասնելու խնդիրը լուծել ոչ թե հարկային արտոնությունների օրենսդրական սահմանման (որը գործողության երկար տևողություն ունի, առանց «խաղի միջազգային կանոնների» հստակեցման), այլ միջպետական որոշակի համաձայնագրերի կնքման միջոցով, որը կբացադի հարկային նշված արտոնությամբ պայմանավորված բացասական ազդեցությունների դրսևորումը:

Ելնելով վերոհիշյալից՝ անհրաժեշտ ենք համարում ուժը կորցրած ճանաչել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի հարկային արտոնություն սահմանող 16-րդ հոդվածի 7-րդ կետը ամբողջությամբ:

Հարկային խտրականության զուգակցմամբ հարկային արտոնությունների սահմանման երկրորդ դեպքի (երբ ապրանքը վաճառվում կամ ներմուծվում է, ինչպես նաև ծառայությունը մատուցվում է դիվանագիտական ներկայացուցչություններին, միջկառավարական կազմակերպություններին և այլն) ժամանակ բացասական ազդեցություններ են բյուջեի մուտքերի նվազումը, հարկատուների կողմից արտասահմանյան պետական կառույցների (դիվանագիտական ներկայացուցչություն, հյուպատոսական հիմնարկ և այլն) միջոցով ԱԱՀ-ի գումարի չափով սեփական եկամտի ավելացումը (ԱԱՀ-ի գումարը ամբողջությամբ կամ գուցե փոքր-ինչ պակասեցված չափով վաճառվող ապրանքի կամ մատուցվող ծառայության գնի մեջ ներառելով), ԱԱՀ-ի վճարումից խուսափումը՝ արտասահմանյան պետական կառույցներին փաստաթղթային կեղծ ծառայություններ մատուցելով, իսկ դրական ազդեցությունը միայն Հայաստանի Հան-

<sup>6</sup> «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», Առաջին մաս, Եր.: 2009, էջ 141-142:

րապետության կողմից արտասահմանյան պետական կառույցների նկատմամբ ուշադրության ու բարի վերաբերմունքի դրսևորումն է, որը կարելի է իրակա- նացնել նաև այլ եղանակներով, բայց ոչ հարկերից խուսափելու «սողանցք- ների» հնարավորություն տվող հարկային արտոնությամբ: Ուստի անհրաժեշտ ենք համարում ուժը կորցրած ճանաչել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ արտոնություն սահմանող 16-րդ հոդվածի 11-րդ կետը ամբողջությամբ:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով, հարկվող շրջանառու- թյան նկատմամբ ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափի կիրառմամբ, հարկային ար- տոնություն է սահմանված հանրապետության տարածքով օտարերկրյա բեռնե- րի տարանցիկ փոխադրումների նկատմամբ<sup>7</sup>, որը ունի հետևյալ բացասական ազդեցությունը: Ապրանքները, համաձայն փաստաթղթերի, արտասահմանյան մեկ երկրից մատակարարվում են մեկ այլ արտասահմանյան երկիր, սակայն դրանք իրականում ոչ թե արտահանվում, այլ իրացվում են հանրապետությու- նում՝ նախապես ապահովելով առաքված ապրանքները ստացող երկիր մուտք գործելու համապատասխան փաստաթղթերը: Այդպիսի ձևակերպմամբ սահ- մանված հարկային արտոնության բացասական ազդեցություններն են ինչպես բյուջեի մուտքերի նվազումը, այնպես էլ հարկային վարչարարության անկարո- դությունը, իսկ այդ գործարքը դառնում է քրեական դաշտի լուծելի խնդիր: Հար- կային այս արտոնության բացասական ազդեցությունների կանխման հնարավոր միջոցը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 12-րդ կետը հետևյալ բովանդակությամբ ձևակերպելն է. «Հանրապետության տա- րածքով օտարերկրյա բեռների տարանցիկ փոխադրումների նկատմամբ, եթե դրանց արտահանումը հաստատում է հանրապետության մաքսային մարմինը»:

Իսկ այժմ ցանկանում եմ ուշադրություն հրավիրել գիտական և գիտատեխ- նիկական գործունեության բարելավման տնտեսական ուղիների վերաբերյալ մշակված առաջարկությունների վրա, որոնց ընդունումը որոշակիորեն կբարե- լավի գիտական և գիտատեխնիկական գործունեության վիճակը:

Նախ, նշենք, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի (ընդուն- ված՝ 14.05.1997թ.) 15-րդ հոդվածի 2-րդ կետով բոլոր ուսումնական, ինչպես նաև միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատու- թյունները ուսման վարձի մասով ԱԱՀ-ից ազատված են, բացառությամբ ՀՀ ԳԱԱ գիտահետազոտական ինստիտուտների: Դա նշանակում է, որ անհավա- սար պայմաններ են ստեղծված բուհական համակարգերում և ՀՀ ԳԱԱ գիտա- հետազոտական ինստիտուտներում ուսանող վճարովի ասպիրանտների և հայ- ցորդների, ինչպես նաև բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների հա- մար՝ խախտելով հարկման արդարության սկզբունքը: Գիտահետազոտական ինստիտուտների նկատմամբ դրսևորվող նման խտրական վերաբերմունքը չի բխում նաև «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի (ընդունված՝ 05.12.2000թ.) 2-րդ հոդվածի ե) կետով գիտական և

<sup>7</sup> «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», Առաջին մաս, եր., 2009, էջ 141:

գիտատեխնիկական գործունեության ազատության երաշխիքների սահմանման պահանջներից:

Վերոնշյալներից ելնելով՝ առաջարկվում է.

- ՀՀ ԳԱԱ գիտատեխնիկական ինստիտուտներում վճարովի ասպիրանտների և հայցորդների ուսման վարձերը նույնպես ազատել ԱԱՀ-ից՝ համապատասխան փոփոխություններ կատարելով «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետում:

- «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով սահմանվում է. «Գիտական աշխատողի աշխատանքի վարձատրությունը և կենսաթոշակը պետք է նպաստեն գիտական աշխատանքի վարկի բարձրացման և գիտական կադրերի նորացման գործընթացին, բավարար նյութական պայմաններ ապահովեն ինքնուրույն և արդյունավետ ստեղծագործական գործունեություն իրականացնելու համար»: Մինչդեռ օրենքի ընդունումից (05.12.2000թ.) հետո մինչև օրս որևէ քայլ չի ձեռնարկվել գիտական աշխատողի կենսաթոշակ սահմանելու ուղղությամբ, որին գիտական աշխատողները սպասում են 19 տարի:

Ուստի, գիտական աշխատանքի նկատմամբ հասարակական դրական վերաբերմունք ձևավորելու, կառավարության կողմից գերակա ուղղություն հայտարարված գիտելիքահենք տնտեսություն ձևավորելու և այդ գաղափարին «միս ու արյուն» տալու նկատառումներից ելնելով, առաջարկվում է.

2020թ. օրենսդրական մակարդակով արժանավայել լուծել գիտական աշխատողների կենսաթոշակի խնդիրը և այն նախատեսել 2020թ. պետական բյուջեով, որպես գիտությանն ուղղված իրական և գործնական քայլ:

Միաժամանակ հարկ է նշել, որ գիտական աշխատողի և նրան սպասարկող անձնակազմի վարձատրությունն անասելիորեն ցածր է: Բանն այն է, որ ՀՀ ԳԱԱ համակարգի գիտահետազոտական ինստիտուտները մի կողմից շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձինք են, և մյուս կողմից, նրանց բյուջեներն աշխատավարձի մասով (որը կազմում է ընդհանուր բյուջեի գրեթե 90%-ը սոցվճարների հետ միասին) ծրագրվում են տնտեսագիտական հիմնավորում չունեցող մոտեցումներով: Ասվածը պատկերավոր լինելու համար նշենք, որ ինստիտուտների աշխատավարձի ֆոնդի պլանավորման հիմքում դրվում է աշխատողների ընդհանուր թիվը՝ այն տարբերակելով գիտական աշխատողների և սպասարկող անձնակազմի: Ընդ որում բոլոր ինստիտուտներում (անկախ դրանց առանձնահատկություններից) գիտական աշխատողների թիվն ընդունվում է 2 միավոր, իսկ սպասարկող անձնակազմինը՝ մեկ միավոր, որը շարունակում է պահպանվել խորհրդային պլանավորման պրակտիկայից: Նման մոտեցումն արդարացված էր այդ տնտեսակարգի օրոք, քանի որ այդ տարիներին գիտության նկատմամբ կային պետության կողմից վերաբերմունքի այլ դրսևորումներ, որոնք միմյանց փոխլրացնում էին, և վարձատրության առումով արդյունքը գոհացուցիչ էր: Նշենք միայն, որ հանրապետության ԳԱԱ նախագահի աշխատավարձը շատ չէր տարբերվում Կենտկոմի 1-ին քարտուղարի

աշխատավարձից: Ավելացնենք նաև այն փաստը, որ ՄԱԿ-ի փորձագետների գնահատականներով մեկ ժամվա վարձատրությունը 3 դոլարից պակաս լինելու դեպքում նվազում է աշխատանքի նկատմամբ աշխատողի շարժառիթները: Մինչդեռ ներկայումս ՀՀ ԳԱԱ համակարգի գիտաշխատողի մեկ ժամվա վարձատրությունը ձգտում է մեկ, իսկ սպասարկող անձնակազմինը՝ 0,5 դոլարի:

Անառարկելի է, որ ծանր է գիտնականի ֆինանսական վիճակը, և նա, բարեբախտաբար, չի հրաժարվում իր կոչումից, բայց, որպես մարդ, իր կենսա-ապահովման նվազագույնի համար փնտրում է և առանձին դեպքերում գտնում է նաև գործունեության այլ ոլորտներ (դասավանդում կամ ցածր վարձատրվող այլ աշխատանք): Այլ կերպ ասած, գիտնականը՝ որպես մարդ, ապրում է ինչպես ազգաբնակչության գերակշիռ մեծամասնությունը: Խնդիրն այն է, որ գիտնականը պետք է ապրի արժանապատիվ կյանքով, որպեսզի ներկա ու ապագա սերունդները ձգտեն գիտնական դառնալու, պետության «դեմքը» ներկայացնելու, տնտեսությունը և նրա կառավարումը գիտական ռելիեֆի վրա փոխադրելու, այսինքն՝ գիտնականի նորմալ վարձատրությունը ոչ թե գիտնականի անձի, այլ գիտության, նրա ապագայի ու պետության հզորացման խնդիր է: Մի կարևոր հանգամանք ևս չպետք է մոռանալ, որ գիտական արդյունքը սովորական արդյունք չէ, որ ակնկալենք ստանալ եռամսյակով, կիսամյակով, 9 ամսով կամ տարեկան կտրվածքով: Գիտական արդյունքը բացառիկ և յուրահատուկ ապրանք է, որն իր սպառողական արժեքը պահպանում է տասնյակ տարիներ, և, բնականաբար, դրա արդյունքաստեղծ գործընթացն էլ երկարատև է ու չպետք է սովորական ապրանքի նման այն շուկայականացնել:

Վերոնշյալներից ելնելով՝ առաջարկվում է.

- ա) 2020թ. բյուջեի պլանավորման ժամանակ հրաժարվել ինստիտուտների աշխատավարձի ֆոնդի հաշվարկման հնացած՝ խորհրդային պրակտիկայից,
- բ) որպես առաջին քայլ՝ 2020թ. բյուջեի պլանավորման ժամանակ ինստիտուտների աշխատավարձի ֆոնդի հաշվարկման հիմքում դնել քաղծառայողների աշխատանքի վարձատրության մոտեցումները կամ ինստիտուտների գիտական հրապարակումների (հոդվածներ, գրքեր) թիվը:

3. «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված է. «...գիտական աշխատողի վարձատրությունը բաղկացած է օրենսդրությամբ սահմանված աշխատավարձից, պարգևատրումներից, գիտական աստիճանի, գիտության ոլորտում աշխատանքային ստաժի համար տրվող լրացուցիչ վարձատրությունից և այլ հավելավճարներից»:

Քննարկենք վարձատրության վերոնշյալ բաղկացուցիչներն առանձին-առանձին:

- ա) Գիտական աշխատողների սահմանված աշխատավարձերը, ինչպես արդեն նշեցինք, շատ ցածր են:
- բ) Գիտության ոլորտում աշխատանքային ստաժի համար տրվելիք լրացուցիչ վարձատրություն և այլ հավելավճարներ սահմանված չեն:

գ) Գիտական աստիճանի հավելավճարները բաշխված են հետևյալ կերպ՝ 50 հազ. դրամ է դոկտորների և 25 հազ. դրամ թեկնածուների համար: Նշված գումարներն անհասկանալիորեն (այն առումով, որ հավելավճարները բարձր չեն, իսկ գիտաշխատողի աշխատավարձերը շատ ցածր են) հարկվում են եկամտահարկով այն դեպքում, երբ այդքան ցածր հավելավճարները դասական առումով եկամուտ համարել չի կարելի:

Հետևապես առաջարկվում է.

- «Եկամտահարկերի մասին» ՀՀ օրենքում կատարել համապատասխան փոփոխություններ և գիտական աստիճանների հավելավճարներն ազատել եկամտահարկով հարկվելուց, ինչպես դա կատարված է պատվովճարների պարագայում:
- Բարձրացնել գիտական աստիճանի հավելավճարները և դրանք հասցնել առնվազն 50 հազ. դրամի (գիտության թեկնածուների համար) և 80 հազ. դրամի (դոկտորների համար) այն գիտաշխատողների համար, ովքեր աշխատում են ՀՀ ԳԱԱ համակարգում, նշենք նաև, որ գիտական հրապարակումներն էլ էժան չեն լինում:

**Ակցիզային հարկի մասով** «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքով ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների (գարեջուրը, խաղողի և այլ գինիները, գինեյուրթը, սպիրտը և սպիրտային խմիչքները, ծխախոտի արդյունաբերական փոխարինիչները, ծխախոտի արտադրանքը, բենզինը, հում նավթը և նավթամթերքները, դիզելային վառելիքը, նավթային գազերը և գազանման այլ ածխաջրեր) արտահանման համար սահմանված են հարկային արտոնություններ՝ այն չհարկելու միջոցով<sup>8</sup>: Այդպիսի հարկային արտոնության սահմանումը կարող է արդարացված լինել և դրական ազդեցություններ ակտիվացնել միայն նշված ապրանքների «ավելցուկի» պայմաններում, քանի որ պետությունը հանդես է գալիս ոչ միայն որպես շուկայական հարաբերությունների կարգավորիչ, այլև դրանց անմիջական մասնակից: Այդ առումով անընդունելի է հանրապետությունում չարտադրվող դիզելային վառելիքի և բենզինի նկատմամբ այդպիսի հարկային արտոնության սահմանումը և ապա հանրապետությունում այդ ապրանքատեսակների վաճառքի գների նվազման դեպքում դրան մեկ այլ կազմակերպության միջոցով արտահանումը (ստացվող շահույթի մակարդակը պահպանելու նպատակով) այն պետություններ, որոնց հետ Հայաստանի Հանրապետությունն ունի կրկնակի հարկումը բացառելու միջպետական պայմանագիր: Հայտնի է նաև, որ հանրապետություն ներմուծված դիզելային վառելիքի և բենզինի իրացման գծով («Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքին համապատասխան) հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարը, ինչպես նաև շրջանառության ծախսերի գծով մատակարարների հարկային հաշիվներում սահմանված կարգով առանձնացված ԱԱՀ-ի գումարների հաշվանցումը թույ-

<sup>8</sup> «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», Առաջին մաս, Եր., 2009, էջ 192:



լատրվում են ՀՀ օրենսդրությամբ<sup>9</sup>: Ավելին, գործող հարկային օրենսդրությունը հնարավորություն է տալիս այդ ապրանքատեսակների գծով տնտեսական գործունեությամբ պայմանավորված զուտ կամ մաքուր շահույթի բացակայությունը կամ որոշակի չափով վնասի առկայությունը «փոխհատուցելու» այդ ապրանքատեսակների իրացմամբ պայմանավորված ԱԱՀ-ի գումարների հաշվանցմամբ, որն այլ կերպ կարելի է անվանել քողարկված բյուջետային ֆինանսավորում: Փաստորեն այս ապրանքատեսակների գծով ավելացված արժեքի հարկի հաշվանցման թույլտվության և արտահանումը ակցիզային հարկով չհարկելու սահմանումները պետության կողմից արժեքավորված չեն ու արդարացված համարել չի կարելի, քանի որ պետությունը դրանց դիմաց, որպես շուկայական հարաբերությունների կարգավորիչ ու մասնակից, «փոխհատուցում» չի ստանում ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հատվածում: Ուստի անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետություն ներմուծվող դիզելային վառելիքի և բենզինի հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի բ) կետի երկրորդ պարբերությունը, իսկ «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի ա) կետը սահմանել այլ բովանդակությամբ՝ օտարումը բառից հետո ավելացնելով «բացառությամբ դիզելային վառելիքի և բենզինի»:

Հարկ է նշել 1990-ական թվականներին ԽՍՀՄ հանրապետություններում գործող ապրանքների (աշխատանքների ու ծառայությունների) արտահանման և ներմուծման ժամանակ կիրառվող «ծագման վայրի» սկզբունքը: Դա պայմանավորված էր նրանով, որ ավելացված արժեքի հարկի գործողության համար միասնական հարկային դաշտ էին համարվում ԱՊՀ անդամ-երկրների տարածքները՝ և ԱՊՀ անդամ-երկրների միջև գործում էր ավելացված արժեքի հարկի գանձման «ծագման վայրի» սկզբունքը, որի էությունն այն էր, որ ԱՊՀ անդամ մի երկիր, մասնավորապես Հայաստանի Հանրապետություն ներմուծելու համար ԱՊՀ անդամ որևէ այլ երկիր ձեռք բերված ապրանքների և ծառայությունների համար ավելացված արժեքի հարկը գանձվում էր ապրանքների և ծառայությունների վաճառքի (ծագման) վայր հանդիսացող ԱՊՀ անդամ-երկրում և վճարված այդ երկրի պետական բյուջե: Այսինքն՝ ավելացված արժեքի հարկի գանձման «ծագման վայրի» սկզբունքի կիրառման արդյունքում Հայաստանի Հանրապետությունում սպառված ապրանքների և ծառայությունների համար վճարված ավելացված արժեքի հարկի մի մասը մնում էր այդ ապրանքների և ծառայությունների վաճառքի (ծագման) վայր հանդիսացող ԱՊՀ անդամ-երկրներում՝ կորուստներ պատճառելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեին: Այս պատճառով էր նաև, որ այդ տարիներին Հայաստանի Հանրապետության առևտրային հաշվեկշիռը ԱՊՀ անդամ-երկրների հետ ուներ բացասական մեծ մնացորդ (սալդո)՝ կապված Հայաստանի Հանրապետությունից արտահանված ապրանքների և ծառայությունների ծավալները ներմուծման

<sup>9</sup> «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», Առաջին մաս, Եր., 2009, էջ 200:

ծավալների համեմատությամբ փոքր լինելու հետ: Փաստորեն ավելացված արժեքի հարկը կորցրել էր ՀՀ բյուջեն համալրելու իր տնտեսական նշանակությունը:

Բավական է նշել, որ 1995-1996թթ. և 1997թ. առաջին կիսամյակում (ծագման վայրի) սկզբունքի արդյունքում ավելացված արժեքի հարկի գումարային կորուստը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի համար կազմել է 44.2 մլրդ դրամ<sup>10</sup>: Այստեղ տեղին է հիշատակել աստվածաշնչյան այն միտքը, որ «Շատ մեջ մի՛ ընկիր, որ չվռնդվես, ոչ շատ հեռու մնա, որ մոռացվես» (Հին կտակարան, էջ 927):

Իհարկե, դրանից հետո աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում բազմաթիվ իրողություններ են փոխվել: Մասնավորապես 1997 թվականից (երբ ընդունվեց «Հարկերի մասին» ՀՀ օրենքը (14.04.97թ.) սկսվեցին հարկային օրենսդրության բարեփոխումները, որոնք շարունակվել են հին Հայաստանում, իսկ նոր Հայաստանում այս գործընթացն իր ավարտին է հասցվում հարկային օրենսգրքի մշակմամբ ու ընդունմամբ, որի կապակցությամբ ցանկանում եմ նշել հետևյալները.

1. ավելացված արժեքի հարկի հետ կապված վերոնշյալ նմանատիպ կորուստներից խուսափելու համար առաջարկում եմ վերաքննության ու փորձաքննության ենթարկել ՀՀ-ում գործող բոլոր հարկային օրենքները, որոնք ընդունվել են հին Հայաստանում և մասամբ կամ առանձին դեպքերում երևի ծառայեցվել են առանձին մարդկանց կամ մարդկանց խմբերի շահերին՝ մանավանդ, որ ՀՀ հարկային օրենսգիրքը ՀՀ-ում գործող հարկային օրենքների մեխանիկական միացում է, որով փորձ է արվում.
- արհեստականորեն ավելի բարձրացնել հարկային մարմինների դերը, որպես օրենսգիրքը պարզաբանող ու մեկնաբանող մարմին, որից հոգնել են թե՛ հարկատուները և թե՛ հարկային մարմինները և հարկային աշխատակիցները: Կարծում եմ, հնացած մտածողության ժամանակներն անցել են, իսկ նախագծի հեղինակները դա չեն ուզում մոռանալ,
- գիտությունն ու կրթությունը խթանելու փոխարեն նախագծի հեղինակները վնասում են պետության այդ հենասյուների հանուն բյուջեի մուտքերի ավելացման: Կարծում եմ, դրա աղբյուրը խոշոր հարկատուների ստվերային շրջանառության կրճատումը և մականունավոր ու անունավոր գործարարներին հարկման դաշտ բերելն է: Արդեն բավական է. պետության պարտքերն են հասել անասելի չափերի:  
Ելնելով վերոնշյալներից՝ առաջարկվում է.
- հարկային օրենսգրքի նախագիծը հանել քննարկումից, եթե դա միջազգային պարտավորություններից չի բխում,
- անկախ բոլոր հանգամանքներից՝ փորձաքննության ենթարկել հարկային բոլոր օրենքները, որոնք ընդունվել են հին Հայաստանում և ընդունել նորերը կամ դրանց փոփոխված տարբերակները և միայն դրանից հետո

<sup>10</sup> Հարությունյան Վ., Հարկային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Եր., «Ձանգակ-97», 2003, 192 էջ, էջ 88:

անցնել հարկային օրենսգրքի ընդունմանը: Նշեմ, որ սույն հոդվածի շրջանակներում փորձաքննության են ենթարկվել «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի առանձին դրույթներ, որոնց հաշվառմամբ ընդունված օրենքը հարստացված կլինի դրական կողմերով:

Հարկային օրենքների փոփոխության կամ նորերի ընդունման դեպքերում անհրաժեշտ է կցել նաև դրանց արդյունքում ստացվելիք տնտեսական արդյունքը (էֆեկտը), հակառակ դեպքում (ինչպես եղել է քառորդ դար) կտիրի անպատասխանատվության մթնոլորտ՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Զարմանալ կարելի է, թե անկախացման տարիներին ՀՀ հարկային օրենքներում որքան լրացումներ ու փոփոխություններ են կատարվել: Եթե դրանք բոլորը նոր գաղափարներ են եղել և արդարացված, ապա ինչու՞ դրանց հեղինակները չեն ներկայացվել պետական բարձր պարգևների, իսկ եթե ոչ, ապա պետք է հետևություններ անել:

Անուղղակի հարկերի հարկային պարտավորությունների հաշվարկման օրենսդրական և մեթոդաբանական հիմքերը՝ ԱԱՀ-ի գումարը հաշվարկվում է ԱԱՀ-ով հարկվող գործարքների հարկվող շրջանառության<sup>11</sup> նկատմամբ 20 տոկոս դրույքաչափ կիրառելով: Ապրանքների ու ծառայությունների լրիվ արժեքով հատուցման գումարի մեջ (ներառյալ 20 տոկոս դրույքաչափը) ԱԱՀ-ի գումարը որոշվում է 16.67 տոկոս հաշվարկային դրույքաչափով:

Հարկ է նշել, որ օրենսդրական մակարդակով ԱԱՀ-ով չեն հարկվում, այսինքն՝ հարկման օբյեկտ չեն համարվում այնպիսի գործարքներ ու շրջանառություններ, ինչպիսիք են<sup>12</sup>.

ա) պետական տուրքի գումարը:

բ) ՀՀ կառավարության որոշումների հիման վրա հարկ վճարողների կողմից ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման անհատույց գործարքները, իսկ մասնակի հատուցմամբ գործարքների իրականացման դեպքում՝ սահմանված կարգով որոշվող հարկվող շրջանառության և ստացված հատուցման տարբերությունը:

գ) Ֆիզիկական անձանց կողմից օրենքով սահմանված անձնական օգտագործման իրերի ներմուծումը:

դ) ՀՀ մշտական բնակության մեկնող քաղաքացիների անձնական գույքի ներմուծումը և այլն:

Ավելին, ԱԱՀ-ի գումարի մեծության հաշվարկմանը չեն մասնակցում նաև ԱԱՀ-ի գծով սահմանված արտոնությունները՝ հանձինս հարկից ազատման և գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների: Առաջին դեպքում այն պատճառով, որ ԱԱՀ-ից ազատումը հենց հարկվող շրջանառության նկատմամբ այն չհաշվարկելն է, իսկ երկրորդ դեպքում այն պատճառով, որ ցանկացած ծավալի

<sup>11</sup> «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», Առաջին մաս, Եր., 2009, հոդ. 8:

<sup>12</sup> Նույն տեղում, հոդ. 7:

շրջանառություն, երբ բազմապատկվում է զրո հարկադրույքով, արդյունքում ստացվում է զրո մեծության հարկ:

ԱԱՀ-ի գումարի հաշվարկմանը (բացի վերը նշված արտոնություններից ԱԱՀ-ով չհարկում, հարկից ազատում և զրոյական դրույքաչափով հարկում) չեն մասնակցում նաև<sup>13</sup>. ա) այն իրավաբանական անձինք ու անհատ ձեռնարկատերերը, որոնք համարվում են պարզեցված հարկ և հաստատագրված վճար վճարողներ և կամ, որոնց գործարքների հասույթի ծավալը չի գերազանցել 3.0 մլն դրամը, բ) ֆիզիկական անձանց պատկանող բնակելի շինության օտարման գործարքները և այլն:

Վերը նշված օրենսդրական հիմքերով ու մեթոդաբանությամբ է հաշվարկվում ԱԱՀ-ի մեծությունը: Սակայն ԱԱՀ-ի հաշվարկված մեծությունը ամբողջությամբ բյուջե չի վճարվում: Պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի մեծությունը, վերը նշված մոտեցումներով, հարկվող գործարքների (գործառույթների)<sup>14</sup> հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարի և որոշակի նվազեցումների ու պակասեցումների տարբերությունն է: Այդ պակասեցումներին կամ նվազեցումներին վերաբերում են<sup>14</sup>.

ա) հանրապետության տարածքում ձեռք բերված այն ապրանքների և ստացված այն ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները, որոնց դիմաց բանկային փոխանցմամբ կատարվել է վճարում՝ բացառությամբ սահմանված դեպքերի,

բ) հանրապետության տարածք ներմուծված ապրանքների համար մաքսային մարմինների կողմից գանձված (գանձման ենթակա) ԱԱՀ-ի գումարները և այլն:

Ի դեպ, մատակարարների հարկային հաշիվներում (ներմուծման դեպքում՝ մաքսային հայտարարագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարները չի թույլատրվում հաշվանցել կամ պակասեցնել այն դեպքերում, երբ. ա) հարկատուն ԱԱՀ վճարող չէ, բ) գործարքները լինում են ԱԱՀ-ից ազատված ու չհարկվող (հարկման օբյեկտ չհամարվող), գ) հարկատուն շրջանառելի բազմակի օգտագործման տարան ձեռք է բերում անմիջական արտադրողից կամ անմիջական ներմուծողից, դ) հարկատուն աշխատում է հաստատագրված վճարով և այլն, որոնց դեպքում հարկային հաշիվներում (ներմուծման դեպքում՝ մաքսային հայտարարագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարները միացվում են ապրանքի ձեռքբերման գնին կամ շրջանառության ծախքերին, բացառությամբ ապրանքների արտահանման դեպքի<sup>15</sup>:

Վերը նշված մոտեցումներով հաշվարկված և հաշվանցված (պակասեցված)

<sup>13</sup> «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», Առաջին մաս, Եր., 2009, հոդ. 7:

<sup>14</sup> Նույն տեղում, հոդ. 23:

<sup>15</sup> Նույն տեղում, հոդ. 26:

ԱԱՀ-ի գումարների դրական տարբերությունը հաշվարկվում է<sup>16</sup> վճարողների կողմից հետագա հաշվետու ժամանակաշրջաններ ՀՀ տարածքում ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման համար վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարների հաշվին՝ բացառությամբ ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներին (բացառությամբ սև և գունավոր մետաղների ջարդոնի արտահանման գործարքների) վերաբերող ձեռքբերումների գծով մատակարարների հարկային հաշիվներում և ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրերում առանձնացված ԱԱՀ-ի գումարների, որոնք հաշվանցվում են հարկ վճարողների այլ հարկային պարտավորությունների հաշվին կամ վերջիններիս բացակայության պայմաններում վերադարձվում են վճարողներին (երբ առկա է լինում ԱԱՀ-ի դեբետային մնացորդ) այն չափով, որը չի գերազանցում հաշվետու ժամանակաշրջանում ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների հարկվող շրջանառության 20%-ը:

Մնացած բոլոր դեպքերում հաշվարկված ու հաշվանցված ԱԱՀ-ի գումարների դրական տարբերությունը այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման կամ վերադարձման համար հարկ վճարողները հարկային մարմիններին են ներկայացնում ՀՀ կառավարության սահմանած փաստաթղթերը, իսկ գումարը կարող է վերադարձվել դիմումը ներկայացնելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, և այն էլ միայն պետական բյուջեում ԱԱՀ-ի գծով առկա մուտքերի հաշվին:

Հաշվարկված և հաշվանցված ԱԱՀ-ի գումարների դրական տարբերությունը չի վերադարձվում (բացառությամբ այն գումարների, որոնք ուղղակիորեն վերագրվում են ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներին) և դուրս է գրվում շահույթի (եկամտի) հաշվին այն դեպքերում, երբ անհատ ձեռնարկատերերի գործունեության դադարեցման դեպքում ձեռնարկատիրական գործունեության օբյեկտների մնացորդների մասով (այդ թվում՝ ապրանքների, արտադրանքի, մտավոր սեփականության օբյեկտների), այլ գույքային իրավունքների գծով ձեռքբերումների դիմաց վճարված (հարկային հաշիվներում կամ մաքսային փաստաթղթերում առանձնացված) և մինչև գործունեության դադարեցումը հաշվանցված ԱԱՀ-ի գումարների չափով առաջանում է լրացուցիչ հարկային պարտավորություն<sup>17</sup>:

Բացի «Հարկերի մասին» ՀՀ օրենքից, տուգանքներ սահմանված են նաև «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքով՝ ստորև բերված չափերով ու հանգամանքներում.

1) սահմանված կարգի խախտումով հարկային հաշիվների լրացման համար վճարողներից գանձվում է տուգանք՝ այդ փաստաթղթերում հաշվարկված ԱԱՀ-ի տասը տոկոսի չափով:

2) ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը թաքցնելու կամ պակաս ցույց տալու, ինչպես նաև նախատեսված կարգի խախտումով ապրանքների և ծառայու-

<sup>16</sup> «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», Առաջին մաս, Եր., 2009, հոդ. 25:

<sup>17</sup> Նույն տեղում, հոդ. 25, 40:

թյունների դիմաց վճարված ԱԱՀ-ի գումարները պակասեցնելու (հաշվանցելու) հետևանքով բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարները թաքցնելու կամ պակաս ցույց տալու համար վճարողներից գանձվում է թաքցված կամ պակաս ցույց տրված ԱԱՀ-ի գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 50 տոկոսի չափով: Այդ տուգանքը կիրառվում է նաև այն դեպքում (անկախ բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարները թաքցնելու կամ պակաս ցույց տալու հանգամանքից), երբ հարկային տեսչության մարմինների կողմից կատարվող ստուգման արդյունքում բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումար չի առաջանում՝ հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարները հաշվարկված ԱԱՀ-ի գումարները գերազանցելու հետևանքով՝ պակաս հաշվարկված կամ ավել հաշվանցված (պակասեցված) ԱԱՀ-ի գումարների նկատմամբ:

3) Սահմանված կարգով հարկային մարմիններին ներկայացվող տեղեկություններում ապրանքների մատակարարման կամ ձեռքբերման և ծառայությունների մատուցման կամ ստացման գծով ԱԱՀ-ի գումարները չներառելու (չներկայացնելու) դեպքում տեղեկություններ<sup>18</sup> ներկայացնող անձը վճարում է տուգանք՝ սխալ ներկայացված յուրաքանչյուր տեղեկության (հարկային հաշվի) համար 5.000 դրամի չափով:

Օրենսդրությամբ սահմանված կարգով առ ոչինչ և անվավեր ճանաչվող գործարքների, ավելացված արժեքի հարկից ազատված կամ հարկման օբյեկտ չհանդիսացող գործարքների հաստատագրված վճարով հարկվող կամ պարզեցված հարկով հարկվող գործունեությանը վերաբերող գործարքների գծով դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ենթակա չեն հաշվանցման: Այդպիսի հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի հաշվանցված գումարները ենթակա են վերաձևակերպման: Ընդ որում հաստատագրված վճարով կամ պարզեցված հարկով հարկվող գործունեությանը վերաբերող հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերաձևակերպման (հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարներից պակասեցման) այն հաշվետու ժամանակաշրջանում, որում պարզվել կամ արձանագրվել է դրանց հաշվանցման անթույլատրելիությունը:

Անապրանք փաստաթղթերի օգտագործման միջոցով, ինչպես նաև ավելացված արժեքի հարկից ազատված կամ հարկման օբյեկտ չհանդիսացող, օրենսդրությամբ սահմանված կարգով առ ոչինչ և անվավեր ճանաչվող գործարքների մասով դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի

---

<sup>18</sup> Հարկային մարմիններին ներկայացվող տեղեկություններում ներառման ենթակա՝ ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի այն գումարները, որոնք չեն արտացոլվել ներկայացված տեղեկություններում կամ որոնց վերաբերյալ տեղեկություններ չեն ներկայացվել, ենթակա չեն հաշվանցման այդ հաշվետու ժամանակաշրջանում սակայն կարող են հաշվանցվել այդ տեղեկությունները ներկայացնելու հաշվետու ժամանակաշրջանում, եթե այդ տեղեկությունները չեն վերաբերում հարկային մարմինների կողմից ստուգվող կամ արդեն իսկ ստուգված ժամանակաշրջաններում ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով հարկային հաշիվներին:

գումարները ենթակա են վերաձևակերպման այն հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով, որում իրականացվել են այդ գործարքները (կատարվել է հաշվանցում):

Հաշվանցված ԱԱՀ-ի գումարների սահմանված կարգով չձևակերպելը (չպակասեցնելը) դիտվում է որպես օրենքով նախատեսված կարգի խախտումով ապրանքների և ծառայությունների դիմաց վճարված ԱԱՀ-ի գումարների հաշվանցում (պակասեցում):

Ակցիզային հարկի հարկային պարտավորությունների հաշվարկման օրենսդրական և մեթոդաբանական հիմքերը: Ակցիզային հարկի գծով հարկային պարտավորությունները ներառում են.

- ա) ակցիզային հարկի գումարը,
- բ) «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տույժերն ու տուգանքները,
- գ) «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները:

## Աղյուսակ 2

### Ակցիզային հարկի դրույքաչափը<sup>19</sup>

Ծածկագիրն ըստ ԱՏԳ-ի	Ապրանքախմբի անվանումը	Հարկման բազայի միավորը	Ակցիզային հարկի դրույքաչափը (դրամ)
2203	Գարեջուր	1 լիտր	70
2204	Խաղողի և այլ գինիներ, գինենյութ	բացթողման գնի (առանց ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի), իսկ ապրանքների ներմուծման դեպքում՝ մաքսային արժեքի	10 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 100 դրամ
2205	Վերմուտ և խաղողի այլ գինիներ, որոնք պարունակում են բուսական և արոմատիկ էքստրակտներ	1 լիտր	500
2206	Խմորման ենթարկված այլ ըմպելիքներ (խնձորի սիդր, պերրու (տանձի սիդր), մեղրաըմպելիք)	1 լիտր	180
2207	Էթիլային սպիրտ	1 լիտր (100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով)	600

Ակցիզային հարկը ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների՝ գարեջրի, խաղողի և այլ գինիների, գինենյութի, սպիրտի և սպիրտային խմիչքների, ծխախոտի արդյունաբերական փոխարինիչների, սիգարետների, սիգարելաների և սիգարետների՝ ծխախոտով կամ դրա փոխարինիչով, բենզինի, հում նավթի և նավթամթերքների, դիզելային վառելիքի, նավթային գազերի և

<sup>19</sup> «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», Առաջին մաս, Եր., 2009, էջ 176-177:

գազանման այլ ածխածինների (բացառությամբ բնական գազի) ներմուծման կամ ՀՀ տարածքում այդ ապրանքներն արտադրողների կողմից դրանց օտարման համար սահմանված կարգով հարկվող և պետական բյուջե վճարվող անուղղակի հարկ է:

Այն հաշվարկվում է ակցիզային հարկի ստորև բերված հարկման բազայի նկատմամբ՝ սահմանված դրույքաչափերով և կարգով:

Ընդ որում 40 տոկոսից բարձր սպիրտայնությամբ ապրանքատեսակների համար սպիրտայնության 40 տոկոսը գերազանցող յուրաքանչյուր տոկոսային կետի համար հարկի դրույքաչափն ավելացվում է 7.5 դրամով, իսկ մինչև 9 տոկոս սպիրտայնություն պարունակող խմիչքների համար սահմանվում է յուրաքանչյուր լիտրի համար 100 դրամ:

Եւթնք նաև, որ ծխախոտի արտադրանքի և ներմուծվող դիզելային վառելիքի ու բենզինի ակցիզային հարկը հաշվարկվում է այլ մոտեցումներով:

Ակցիզային հարկով հարկվող ապրանքների գծով սահմանված են հարկային արտոնություններ՝ ակցիզային հարկով չհարկելու միջոցով, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել հարկի հաշվարկման ժամանակ:

Ակցիզային հարկի հաշվարկման ժամանակ, վերոնշյալ հարկային արտոնությունների հաշվառումից բացի, հարկի գանձման ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել<sup>20</sup>, որ.

1) Հայաստանի Հանրապետությունում ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրողների կողմից Հայաստանի Հանրապետությունում բանկային վճարմամբ ձեռք բերված կամ Հայաստանի Հանրապետություն ներմուծված ակցիզային հարկով հարկված հումքի դիմաց վճարված ակցիզային հարկի գումարը.

ա) ենթակա է վերադարձման այդ հումքից պատրաստված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների արտահանման դեպքում.

բ) պակասեցվում է դրանց համար դուրս գրված հաշվարկային փաստաթղթերի հիման վրա հաշվետու ժամանակաշրջանում վճարման ենթակա ակցիզային հարկի ընդհանուր գումարից՝ բացառությամբ ստորև 2-րդ կետում նշված դեպքի:

2) Հայաստանի Հանրապետությունում բանկային վճարմամբ ձեռք բերված կամ Հայաստանի Հանրապետություն ներմուծված ակցիզային հարկով հարկված հումքի դիմաց վճարված ակցիզային հարկի գումարի՝ այդ հումքից պատրաստված ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների համար հաշվարկված ակցիզային հարկի գումարը գերազանցող մասը հաշվանցման կամ վերադարձման ենթակա չէ Հայաստանի Հանրապետությունում ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրողների կողմից:

3) Հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրողների կողմից Հայաստանի Հանրապե-

---

<sup>20</sup> «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», Առաջին մաս, Եր., 2009, էջ 180-181:



տությամբ ձեռք բերված կամ Հայաստանի Հանրապետություն ներմուծված ակցիզային հարկով հարկման ենթակա հումքի դիմաց վճարված ակցիզային հարկի գումարը՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների համար հաշվարկված ակցիզային հարկի գումարը գերազանցելու դեպքում գերազանցող մասը, բացառությամբ առանձին դեպքերի, հաշվանցվում է հետագա հաշվետու ժամանակաշրջաններում վճարման ենթակա ակցիզային հարկի գումարների հաշվին:

«Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված են տուգանքներ՝ ստորև բերված դեպքերով ու չափերով<sup>21</sup>.

1) ակցիզային հարկով հարկվող օբյեկտը կամ հարկման բազան թաքցնելու կամ պակաս ցույց տալու համար հարկ վճարողներից գանձվում է թաքցված կամ պակաս ցույց տրված ակցիզային հարկի գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի չափով:

2) Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար ակցիզային հարկի ճշգրտված մեկից ավելի յուրաքանչյուր հաշվարկի ներկայացման դեպքում գանձվում է տուգանք՝ 200 հազար դրամի չափով:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. Հայաստանում Ամերիկյան և Եվրոպական միության առևտրային պալատների «Հայաստանի հարկային համակարգի բարեփոխումներ. Օտարերկրյա ներդրողների հեռանկարները» զեկույցը: Օգոստոս, 2003, էջ 7:
2. <https://www.armstat.am/file/doc/99493848.pdf>  
<https://www.armstat.am/file/doc/99499473.pdf>  
<https://www.armstat.am/file/doc/99504418.pdf>  
<https://www.armstat.am/file/doc/99510818.pdf>  
[https://www.armstat.am/file/article/sv\\_11\\_18a\\_211.pdf](https://www.armstat.am/file/article/sv_11_18a_211.pdf)  
[http://www.petekamutner.am/Shared/Documents/Publications/th\\_annual\\_report\\_2017.pdf](http://www.petekamutner.am/Shared/Documents/Publications/th_annual_report_2017.pdf)  
[http://www.petekamutner.am/Shared/Documents/Publications/th\\_annual\\_report\\_2016.pdf](http://www.petekamutner.am/Shared/Documents/Publications/th_annual_report_2016.pdf)  
[http://www.petekamutner.am/Shared/Documents/Publications/th\\_annual\\_report\\_2015.pdf](http://www.petekamutner.am/Shared/Documents/Publications/th_annual_report_2015.pdf)  
[http://www.petekamutner.am/Shared/Documents/Publications/th\\_annual\\_report\\_2014.pdf](http://www.petekamutner.am/Shared/Documents/Publications/th_annual_report_2014.pdf)  
[http://www.petekamutner.am/Shared/Documents/Publications/th\\_annual\\_report\\_2012.pdf](http://www.petekamutner.am/Shared/Documents/Publications/th_annual_report_2012.pdf)  
<http://www.petekamutner.am/siPublications.aspx?ptname=AnnualReports>
3. «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», Առաջին մաս, Եր., 2009:
4. «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», Առաջին մաս, Եր., 2009:
5. Վ.Հարությունյան, Հարկային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Եր., «Զանգակ-97», 2003, էջ 88:

---

<sup>21</sup> «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», Առաջին մաս, Եր., 2009, էջ 182-183:

**Վլադիմիր Հարությունյան  
Տիգրան Հարությունյան**

**ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ  
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ  
ՈՒՂԵՆԻՇԵՐԸ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍՈՎ**

**Ամփոփագիր:** Հոդվածում հիմնավորվել է, որ Հայաստանում ԱԱՀ-ի գծով հաշվարկված մուտքերի տեսակարար կշիռը ընդհանուր հարկային եկամուտների մեջ դեռևս 1998-2001թթ. եղել է ամենաբարձրը հետխորհրդային անցման շրջանի տնտեսությամբ երկրների մեջ, մինչդեռ այլ երկրների հետ համեմատած շահութահարկի և եկամտահարկի գծով մուտքերը եղել են շատ ցածր: ԱԱՀ-ի գծով հաշվարկված փաստացի մուտքերի տեսակարար կշիռը ընդհանուր հարկային եկամուտներում շարունակում է բարձր մնալ նաև 2010-2018թթ.:

**Բանալի բառեր.** հարկային եկամուտներ, պետական բյուջե, հարկային բազա, ուղղակի հարկեր, անուղղակի հարկեր:

**Владимир Арутюнян  
Тигран Арутюнян**

**ЗАКОНОДАТЕЛЬНЫЕ И МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ОРИЕНТИРЫ  
СОВЕРШЕНСТВОВАНИЯ ИСЧИСЛЕНИЯ НАЛОГОВЫХ ОБЯЗАТЕЛЬСТВ ПО  
КОСВЕННЫМ НАЛОГАМ**

**Резюме.** В статье делается вывод о том, что доля доходов, рассчитанных по НДС в Армении, в общих налоговых поступлениях все еще была самой высокой среди стран с постсоветской переходной экономикой, тогда как доходы от подоходного налога и налога на прибыль были ниже, чем в других странах. Доля фактических доходов, рассчитанных по НДС, в общей сумме налоговых поступлений продолжает оставаться также высокой в 2010-2018 гг.

**Ключевые слова:** налоговые поступления, государственный бюджет, налоговая база, прямые налоги, косвенные налоги.

**Vladimir Harutyunyan**  
**Tigran Harutyunyan**

## **LEGISLATIVE AND METHODOLOGICAL DIRECTIONS FOR IMPROVING CALCULATION OF TAX LIABILITIES WITH RESPECT TO INDIRECT TAXES**

**Abstract:** The article concludes that the share of revenues collected as VAT in Armenia in the total tax revenues was the highest ratio among post-soviet countries with transition economies for the period 1998-2001, while the share of revenues received as income and profit tax was rather low lower compared to other countries. The share of actual revenues received as VAT in the total tax revenues remains high for the period 2010-2018.

**Keywords.** Tax revenues, state budget, tax base, direct taxes, indirect taxes

## Վլադիմիր Հարությունյան

### ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ՀՀ կառավարության՝ 2019 թվականի փետրվարի 8-ին ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության 5-ամյա ծրագիրը, որի գաղափարական հիմքը «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիրն է:

Կառավարությունը վճռական է «Իմ քայլը» խորհրդարանական խմբակցության, խորհրդարանական այլ ուժերի, քաղաքացիական հասարակության, հանրության հետ համագործակցության և երկխոսության միջոցով Հայաստանի Հանրապետությունում իրականացնել տնտեսական հեղափոխություն<sup>22</sup>:

Տնտեսական հեղափոխության հիմնախնդիրները և իրականացման մոտեցումները բոլոր ժամանակներում ու երկրներում եղել և շարունակում են մնալ տնտեսագետների, փիլիսոփաների և այլ մասնագետների, քաղաքական ու հասարակական գործիչների, ինչպես նաև հասարակության անդամների զգալի մասի ուշադրության կենտրոնում, քանի որ տնտեսական հեղափոխության դրսևորումները բազմաշերտ են ու շոշափում են հասարակության յուրաքանչյուր անդամի շահերը, որոնց ընկալումները տնտեսագետների, փիլիսոփաների, քաղաքական ու հասարակական գործիչների, աղքատների ու հարուստների մոտ տարբեր են: Մեր կարծիքով տնտեսական հեղափոխության իրականացման ուղենիշերը կարող են լինել բազմակողմ, որոնցից ստորև ներկայացվում է ֆինանսականը:

Ստորև ներկայացնում ենք տնտեսական վերելքը պայմանավորող ֆինանսական և հատկապես հարկային համակարգի կատարելագործման գործնական և հայեցակարգային հիմնուղիները ՀՀ-ում:

Առաջնային խնդիր ենք դիտում.

#### 1.

- մինչև 30%-ի հասցնել հարկեր/ՀՆԱ տոկոսային հարաբերակցության ցուցանիշը և այն դիտարկել որպես մակրոտնտեսական ցուցանիշ:
- հրաժարվել հարկային օրենսդրությունում հաճախակի ու մասնակի փոփոխություններ կատարելու պրակտիկայից և կատարել այնպիսի փոփոխությունները, որոնք կնպաստեն.
  - ա) անուղղակի և ուղղակի հարկերի հարաբերակցության փոփոխմանը՝ հօգուտ երկրորդի, քանի որ անուղղակի հարկերը ներառվում են ապրանքների և ծառայությունների գների մեջ՝ հարկային բեռը տեղափոխելով սպառողների վրա, որի գերակշռող մասը ազգաբնակչությունն է,
  - բ) պրոգրեսիվ հարկման մոտեցումների գործնականում կիրառմանը, մոտեցումներ, որոնք իրենց կիրառությունն են ստացել զարգացած երկրներում,

<sup>22</sup> ՀՀ կառավարության ծրագիր, Հայաստանի Հանրապետություն, փետրվար, 2019, 73 էջ:

գ) միասնական հարկի ձևավորման և գործնականում ճիշտ մոտեցումների արմատավորմանը, բայց ոչ այնպես, ինչպես կատարվել է «պարզեցված հարկի» և «հաստատագրված վճարների» պարագայում, որոնցում դրված մոտեցումները չեն բխում 1) հարկման արտերկրյա փորձից և 2) հարկման տեսություններից<sup>23</sup>.

- Հարկային օրենսդրությունում, այնուամենայնիվ, փոփոխություններ կատարելու դեպքերում անհրաժեշտ ենք համարում օրենսդրական փոփոխությունը՝ որպես հիմնավորում կցել նաև տնտեսական արդյունքի (էֆեկտի) հաշվարկը, որը.

- ա) պարզ ու հասկանալի կդարձնի օրենսդրական փոփոխության անհրաժեշտությունը և նրա քննարկումներն ԱԺ-ում և կառավարությունում,

- բ) հարկային ծառայությունում կնվազեցնի փոփոխություններ կատարելու չարդարացված պրակտիկան:

- Հրաժարվել հաստատագրված վճարներից և վերադառնալ հանրապետությունում հարկային տարածքի միասնականացմանը, քանի որ հաստատագրված վճարների պարագայում հարկման հիմքում ընկած է ոչ թե եկամուտը, այլ գործունեության տեսակը: Մանավանդ, որ հաստատագրված վճարների հարկման բազան կառուցված է տնտեսագիտական հիմնավորում չունեցող ելակետային սվյալների վրա, որոնց ճշտության վերահսկման արդյունավետությունը բավականին ցածր է, և վերջին հաշվով նվազեցված են բյուջեի եկամուտները<sup>24</sup>:

- Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ-ների զարգացման համար անհրաժեշտ ենք համարում քննական վերլուծության ենթարկել ՓՄՁ-ների դասակարգման մոտեցումները և ներկայացնել նոր մոտեցումներ դրանց վերանայման ուղիների վերաբերյալ, ինչպես նաև որդեգրել նոր մոտեցումներ ՓՄՁ-ների գործունեությունը խթանող հարկային և վարկային խթանների վերաբերյալ:

- Վեր հանել հարկման սկզբունքների կիրառման ժամանակակից մոտեցումները, քանի որ «ինչպես պետք է հարկել» հավերժական հարցի պատասխանի վերաբերյալ մինչև օրս եղած տեսական ընկալումներն ու մոտեցումները, որոնք իրենց ձևակերպումներն են ստացել հարկման արդարության, արդյունավետության ու համընդհանրության սկզբունքներում, եղել և շարունակում են մնալ տարբեր: Դա բնական է ու տրամաբանական, քանի որ մարդկանց ապրած ժամանակաշրջանը, միջավայրը, մասնագիտությունը, սոցիալ-հոգեբանական վիճակը և այլն ձևափոխում և կերպարանափոխում են մարդկանց ընկալումները և մոտեցումները: Ասվածը հավասարապես վերաբերում է նաև քննարկվող հարցին: Ուստի հարկման սկզբունքների ժամանակակից չափորոշիչների ընտրությունը պետք է կատարել՝ հիմք ընդունելով ներկա իրողությունները, չմոռանալով, որ տարբեր երկրներում ու տարբեր ժողովուրդների մոտ դրանք

<sup>23</sup> Հարությունյան Վ. և ուրիշներ, «Հարկեր և հարկագանձում», Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, 600 էջ, էջ 103:

<sup>24</sup> Հարությունյան Վ.Լ., Հարկային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Եր., «Ձանգակ-97», 192 էջ, էջ 165:

տարբեր են: Եվ բնավ էլ պետք չէ ու ճիշտ չէ ներկան կառուցել՝ հիմք ընդունելով անցյալը, որքան էլ դրանք իր ժամանակին լինեին առաջադիմական մոտեցումներ:

## 2.

• Այդ ընթացքում տնտեսագիտական միտքը հարստացել է նոր մոտեցումներով, առաջադրել նոր սկզբունքներ տեղին, ժամանակին, երկրի առանձնահատկություններին համապատասխան:

• Ժողովրդավարացման ուղին բռնած բոլոր երկրներում հարկերը սահմանվում են օրենսդիր մարմնի կողմից: Դա նշանակում է, որ կառավարություններն ու երկրների ղեկավարների խոստումները կարող են արդարացված լինել, եթե օրենսդիր մարմնում ունենան ժողովրդի ընտրյալների մեծամասնության աջակցությունը:

Արդարացի ու արդյունավետ հարկազանձում իրականացնելու համար, ժողովրդի ընտրյալների մեծամասնության աջակցությունից բացի, շահագրգիռ կողմերից՝ երկրի առաջնորդից ու կառավարությունից պահանջվում է ձևավորել նաև ոչ միայն պրոֆեսիոնալ կամ արհեստավարժ, այլև երկրի ժողովրդի մեծամասնության (կամ, որ նույնն է ասել, պետության) շահերի պաշտպանությամբ մտահոգված մեծամասնություն:

• Ժողովրդավարության ուղին բռնած երկրների գործադիր մարմինները, որպես կանոն, ձևավորվում են, առավել շատ, ոչ թե պրոֆեսիոնալիզմի, այլ քաղաքական հենքով, որը քաղաքական ժամանակակից համակարգի բացասական դրսևորումներից է և վնասում է երկրների տնտեսական վերելքին ու հետագա զարգացմանը:

Ընդհանուր առմամբ օրենսդիր և գործադիր մարմինների ձևավորման գործընթացի ապաքաղաքականացման ակտիվացումը կամ քաղաքականացման նվազեցումը լուրջ խթան կարող են դառնալ տնտեսագիտորեն հիմնավորված ու արդարացված, ինչպես նաև ազգաբնակչության մեծամասնության շահերից բխող հարկային օրենսդրություն ունենալու համար: Հակառակ դեպքում հարկային օրենսդրությունում շարունակական բարեփոխումներ կատարելու անհրաժեշտություն կզգացվի (ինչպես ներկայումս է), իսկ հարկահավաքները, 19-րդ դարի ռուս հայտնի գրող Նիկոլայ Նեկրասովի պատկերավոր արտահայտությամբ, հանդես կգան «Ագահ ու ոչ ոքի հետ չկիսվող հարկահավաքի տեսքով»<sup>25</sup>:

• Ժամանակակից պայմաններում դժվարացել է հատկապես եկամտների ամբողջական հաշվառման նկատմամբ արդյունավետ վերահսկողության և արդարացի հարկազանձման իրականացումը, որի պատճառով անցումային տնտեսությամբ երկրներում հարկային բեռն ինչպես օրենսդրորեն, այնպես էլ գործնականում, տեղափոխված է անուղղակի հարկերի վրա, քանի որ.

ա) այդպիսի հարկերի գանձումն աննկատելի է դառնում ժողովրդի համար և ներառվում է ապրանքի գնի մեջ ու մարդկանց ընկալումներում դիտարկվում

<sup>25</sup> Налоги. Люди. Время... или этот безграничный мир налогов, Под. Ред. А.В.Брызгалина. Екб,: Изд.-во «Налоги и финансовое право», 2008, 576 стр. էջ 436.

որպես ապրանքի գնի բաղադրիչ և ոչ որպես հարկ,

բ) անուղղակի հարկ վճարողը երբեք վաճառողը չի լինում, այն ամբողջությամբ վճարում է գնորդը:

Մինչդեռ հարկային եկամուտների գերակշիռ մասն անհրաժեշտ է ձևավորել ուղղակի հարկերից՝ իրականացնելով արդյունավետ հարկային վարչարարություն և ձևավորելով ուղղակի հարկերի գանձման գերակայությունն ապահովող հարկային օրենսդրություն: Այդ հիմնախնդրի լուծումը բխում է հենց հարկման արդարության սկզբունքի պահանջներից, քանի որ, որպես կանոն, հարկումը պետք է կատարվի հարկատուի մաքուր եկամտից: Ուստի անհրաժեշտ է շահութահարկի հաշվարկման մեխանիզմներում տեղադրել գիտականորեն հիմնավորված ու տրամաբանված մոտեցումներ, որը պետք է վերաբերի ոչ միայն հարկվող շահույթի հաշվարկմանը (որն անվանվում է հարկվող օբյեկտ), այլև դրա նկատմամբ կիրառվող տոկոսադրույքներին: Արդարացված չի կարող համարվել հարկվող շահույթի հաշվարկման մոտեցումների անտեսման պայմաններում հարկադրույքների համեմատությունների հիման վրա հարկային բեռի մասին դատողություններ անելը: Դա մեխանիկական մոտեցում է, իսկ մասնագիտական առումով՝ նաև անպտուղ: Ուստի, չի կարելի համաձայնվել այն տնտեսագետների<sup>26</sup> հետ, ովքեր ամերիկացի տնտեսագետ Ա.Լաֆերի կողմից կառուցված հարկման պրոգրեսիվության և բյուջեի հարկային եկամուտների կախվածության պարաբոլից (որը տնտեսագիտության մեջ հայտնի է «Լաֆերի կոր» անվանմամբ) բխեցված առանձին եզրակացություններ փորձում են տարածել այլ երկրների վրա: Խոսքը մասնավորապես, վերաբերում է Ա.Լաֆերի այն եզրահանգմանը, որի համաձայն բյուջեի հարկային վճարումների դրույքաչափը պետք է կազմի 30%, որի սահմաններում մեծանում են բյուջեի մուտքերը, 40-50% դրույքաչափի պայմաններում այդ աճը մի փոքր դանդաղում է, իսկ երբ հարկադրույքը գերազանցում է այդ չափը, որն անվանվել է «արգելված գոտի», ապա նկատվում է բնակչության խնայողությունների, տնտեսության մեջ ներդրումների և հարկային մուտքերի կտրուկ նվազում: Դրա արդյունքում Ա.Լաֆերը բյուջեի եկամուտների ավելացման ու տնտեսության զարգացման ճիշտ ուղի է համարում հարկադրույքների իջեցմամբ հարկման բազայի ընդլայնումը, որը և այլ ուրիշ հայեցակարգային մոտեցումներ մեծ դեր խաղացին ԱՄՆ-ի տնտեսության զարգացման գործում այդ երկրի 40-րդ նախագահ Ռոնալդ Ռեյգանի օրոք:

Դա պետք է բացատրել այն փաստով, որ Ա.Լաֆերը վերոհիշյալ պարաբոլը կառուցել է ամերիկյան տնտեսության իրողությունների և ԱՄՆ-ում գործող հարկային օրենսդրության հաշվառմամբ: Բնականաբար վերլուծությունների և ուսումնասիրության արդյունքում ստացված եզրակացություններն առավել օգտակար կարող են լինել նույնատիպ տնտեսություն ու նմանվող հարկային

<sup>26</sup> Кравченко Л.А. «Налоговые реформы 80-х годов в США (Социально-экономические аспекты)», М., «НИФИ», 1989, стр. 9, Пепеляев С.Г. «Законы о налогах: элементы структуры», М.: СВЕА, 1995, 345с., стр. 37.

օրենսդրություն ունեցող երկրների համար: Հարկ է նշել նաև, որ հարկային բեռը շահութահարկի գծով առավել շատ կախվածության մեջ է գտնվում ոչ թե դրույքաչափից, այլ հարկվող շահույթի (այն համախառն եկամտի և օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է) հաշվարկման մեխանիզմներից ու դրան մասնակից բաղադրիչներից:

- Անհրաժեշտ է բացահայտել ՀՀ-ում հարկային պարտավորությունների հաշվարկման օրենսդրական ու մեթոդաբանական թերություններն ու բացթողումները և կատարել առաջարկություններ դրանց վերացման ուղիների վերաբերյալ: Խոսքը վերաբերում է ՀՀ-ում գործող բոլոր հարկատեսակներին:

- Կարևոր նշանակություն ունի նաև ՀՀ հարկային և մաքսային ծառայողների կերպարի արմատական վերափոխումը, որը պետք է դիտարկել երկու տեսանկյունից

1. մասնագիտական հմտությունների և գիտելիքների կատարելագործում,
2. վարքագծի կանոնների պահպանում:

Մասնագիտական գիտելիքների կատարելագործման հիմնական ձևը վերապատրաստումն է: Անձնակազմի վերապատրաստումը հենց ուղղակի մեկ անգամյա վերապատրաստումը չէ, այլ պլանավորված շարունակական մասնագիտական ուսուցում գիտելիքների արդիականացման և իրազեկման, հմտությունների զարգացման միջոցով, որը հարկային ծառայողների առջև դրված խնդիրների իրագործման հիմնական պայմանն է: Շատ դեպքերում հանրային ոլորտում վերապատրաստումների միջոցառումը սահմանվում է բյուջեով և կանոնակարգվում համապատասխան օրենքներով (Ներքին առևտրի, Հարկային և մաքսային ծառայությունների մասին օրենքները): Ամբողջ աշխարհում ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր հատվածի առաջատար կազմակերպությունները մեծ ներդրումներ են կատարում անձնակազմի մասնագիտական զարգացման ոլորտում: Հարկային և մաքսային ծառայողի մասնագիտական գործունեությունը ենթադրում է մի շարք մասնագիտությունների գծով հաշվապահական հաշվառում, հարկային համակարգ, իրավագիտություն և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ, համապատասխան գիտելիքների և հմտությունների առկայություն:

Ընդհանուր նպատակների իրականացման բարձր արդյունավետության ապահովման նպատակով գիտելիքներից զատ անհրաժեշտ է նաև հաղորդակցման, թիմային աշխատանքում ինտեգրվելու ունակություն: Ժամանակի մարտահրավերները մշտապես փոփոխում են հարկային համակարգի առջև դրված խնդիրները, համապատասխանաբար փոփոխվում են նաև ծառայողի մասնագիտական ունակությունների նկատմամբ պահանջները, հետևաբար՝ վերապատրաստումները պետք է կրեն շարունակական բնույթ: Հարկային և մաքսային համակարգի կադրային քաղաքականությունը միտված է հետևյալ երեք ուղղություններով՝ նոր մասնագետների պատրաստում, որոշակի փորձ ունեցող ծառայողների շարունակական վերապատրաստում, կարիերայի աճի հնարավորությունների ընձեռում: Հարկային և մաքսային ծառայողների վարվե-



լակերպի բարելավման նպատակով պետք է մանրակրկիտ ուսումնասիրվեն վերապատրաստման կարիքներն ըստ ոլորտների, պաշտոնների, սահմանվեն երկարաժամկետ գերակայությունները: Հետևաբար՝ հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստումն անհրաժեշտ է կազմակերպել ինչպես կրթական հաստատությունների, այնպես էլ պետական մարմիններին կից գործող մասնագիտական վերապատրաստման կառույցների միջոցով՝ ապահովելով սերտ կապ առաջարկ ձևավորողների և պահանջարկ թելադրող կառույցների միջև:

Վարքագծի կանոնների սահմանման նպատակն է ուղղորդել հարկային ծառայողին իր վարվելակերպում:

Հարկային և մաքսային ծառայողը պարտավոր է՝

- ցուցաբերել անմնացորդ հավատարմություն ու նվիրվածություն իր երկրին և աշխատանքին,
- գերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են պետական մարմնի աշխատանքները խոչընդոտել կամ վարկաբեկել և հեղինակազրկել,
- ղեկավարվել մարդասիրության, արդարության և ազնվության սկզբունքների վրա հիմնված բարոյական նորմերով,
- հարգել մարդու արժանապատվությունը,
- լինել անաչառ, անկողմնակալ, զուսպ, անկախ և օրինակելի,
- անհարկի չընդգծել իրենց պաշտոնական դիրքը,
- լինել հավասարակշռված, կարգապահ, ճշտախոս,
- լինել քաղաքավարի հարկատուների, գործընկերների, ենթակա անձանց և ղեկավարության հետ,
- խուսափել ցանկացած տեսակի հովանավորչությունից, միջնորդությունից, աջակցությունից, որոնց արդյունքում կարող է խոչընդոտվել հարկային օրենսդրության պահանջների կատարումը, ծառայության ընթացքում օգտագործել միայն բարոյական միջոցներ՝ նպատակին հասնելու համար,
- իրենց վարքով կախվածության մեջ չընկնել որևէ անձից և լինել անկախ,
- մաքսային ծառայության անվտանգ գործունեությունն ապահովելու նպատակով անվերապահորեն պահպանել ծառայողական տեղեկությունների գաղտնիությունը<sup>27</sup>:

Հարկային ծառայողի անմիջական ղեկավարը, հետևելով մասնագիտական վարքագծի կանոններին, հնարավորության սահմաններում միջոցներ է ձեռնարկում, որպեսզի իր ենթակա աշխատողները ևս պահպանեն այդ կանոնները: Դրանց խախտման և ոչ պատշաճ կատարման դեպքում պետք է կիրառվեն համապատասխան պատժամիջոցներ:

• Խնդիրները հնարավոր է իրականացնել հարկային վարչարարության մշտապես կատարելագործման և օպտիմալ կազմակերպչական կառուցվածքի ներդրման միջոցով: Կազմակերպչական կառուցվածքի ընդունված չորս տեսակներից առավել մեծ կիրառություն ունի ըստ գործառնությունների սկզբունքի

<sup>27</sup> [www.taxservice.am](http://www.taxservice.am), [www.costoms.am](http://www.costoms.am)

կազմակերպական կառուցվածքի կիրառումը: Սակայն շատ դեպքերում կազմակերպական կառուցվածքում, սահմանված նորմատիվային և օպերատիվ գործառնությունները կանոնակարգող ստորաբաժանումներին զուգահեռ ներառվում են անուղղակի հարկատեսակների հաշվառման և վերահսկողության ստորաբաժանումներ, ինչպես նաև առանձնացվում է խոշոր հարկատուների գործունեությունը վերահսկող հարկային ստորաբաժանումը: Հարկային համակարգի օպտիմալ կազմակերպչական կառուցվածքն ապահովում է հարկային համակարգի օրենսդրության կիրարկման ու հսկողության ամուր հիմքը:

Անկախության տարիներին Հայաստանում հարկային քաղաքականության և վարչարարության բարելավման դիտակետում մշտապես եղել են հարկային հսկողության մեխանիզմների և տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների զարգացումը, հարկ վճարողների սպասարկման ծառայությունների ընդլայնումը, մաքսային գործընթացների կատարելագործումը, հարկային ու մաքսային համակարգի կազմակերպական կառուցվածքների օպտիմալացումը: Մասնավորապես մատուցվող ծառայությունների որակի բարելավման նպատակով ներդրվել են էլեկտրոնային հաշվետվությունների համակարգ, հարկ վճարողների գրանցման պարզեցված ընթացակարգ, հեռախոսազանգերի ու հարկ վճարողների սպասարկման կենտրոններ և այլն: Սակայն վերը թվարկված բարեփոխումներին զուգահեռ, հարկային և մաքսային համակարգերի արդյունավետության բարձրացման տեսանկյունից առանձնակի կարևորվում է հարկային ու մաքսային օրենսդրության, պետական եկամուտների քաղաքականության և ռիսկերի գնահատման համակարգերի, կազմակերպական կառուցվածքների կատարելագործումը:

Պետությունը քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտն է, իսկ պետականության ձևը՝ կառավարման, պետական կառուցվածքի ձևի և քաղաքական վարչակարգի ամբողջությունը: Ըստ սահմանադրական իրավունքի. պետությունները լինում են ունիտար և դաշնային: Ունիտար պետությունները, որպես կանոն, ձևավորվում են մոնոէթնիկ տարածքների վրա, որտեղ գործում են մեկ սահմանադրություն և օրենսդրություն, միասնական օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների մարմիններ: Ունիտար պետությունները տարանջատվում են կենտրոնացված և ապակենտրոնացված պետությունների: Կենտրոնացված ունիտար պետության օրինակ է Հայաստանի Հանրապետությունը, իսկ ապակենտրոնացվածի՝ Ֆրանսիան, Վրաստանը և այլն: Ունիտար պետություններում հարկային և մաքսային համակարգը կառավարվում է մեկ կենտրոնից, միասնական օրենսդրությամբ, ինչպես օրինակ՝ Իտալիայում, Մեծ Բրիտանիայում, շատ դեպքերում գործում է համապետական հարկային օրենսգիրքը: 2016 թվականին Հայաստանը ևս ընդունել է հարկային օրենսգիրք, որն ուժի մեջ է մտել 2018 թվականի հունվարի մեկից:

Ֆեդերատիվ պետությունը, ի տարբերություն ունիտարի, ունի իշխանության բարձրագույն մարմինների երկու մակարդակ: Ֆեդերացիայի սուբյեկտներն իրավունք ունեն ընդունել ու տարածաշրջանային օրենքներ: Այդպիսի պետու-

թյունների, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Գերմանիան, Ավստրալիան, Շվեդիան, հարկային համակարգը կազմված է մի քանի մակարդակներից՝ կենտրոնական և տարածաշրջանային (նահանգներ, մարզեր և այլն): Հարկային համակարգի միասնականության հիմքը բոլորի կողմից կիրառվող միասնական օրենսդրությունն է:

Պետական կառավարման համակարգում հարկային և մաքսային մարմինները կարող են գործել որպես.

- միասնական կիսահինքնավար մարմին, որը կազմակերպական կառուցվածքի այնպիսի տեսակ է, որում բոլոր գործառույթները կենտրոնացված են մեկ մարմնում, իսկ ղեկավարը, որպես կանոն, հաշվետու է ֆինանսների նախարարին: Կազմակերպական կառուցվածքի այս տեսակը ընտրել են Ավստրալիան, Դանիան, Ճապոնիան, Իռլանդիան: Հատկապես Ճապոնիայում հարկային վարչարարության գործառույթն իրականացնում է ֆինանսների նախարարության ենթակայությամբ գործող ազգային հարկային գործակալությունը, որը ներառում է կենտրոնական ապարատ, 11 տարածքային մարմիններ և 524 տարածքային տեսչություններ<sup>28</sup>:

- Միասնական կիսահինքնավար մարմին, որը հաշվետու է կառավարման խորհրդին: Խորհրդի կազմ ներառվում են ինչպես օրենսդիր մարմնի ներկայացուցիչներ, այնպես էլ հարկային խորհրդատուներ, իրավաբաններ, որակավորված հաշվապահներ: Կառավարման խորհրդի լիազորություններն ընդգրկում են լրացուցիչ վերահսկողություն, հարկային և մաքսային մարմնի գործունեության արդյունավետության գնահատում, հետագա ռազմավարության մշակում: Խորհուրդը անմիջականորեն հաշվետու է վերադաս մարմնի ղեկավարին, հիմնականում ֆինանսների նախարարին: Հարկային համակարգի կազմակերպական կառուցվածքի այս տեսակը ընտրել են ԱՄՆ-ը, Կանադան, Մեծ Բրիտանիան:

- Միասնական հարկային ստորաբաժանում (ծառայություն), որը գործում է ֆինանսների նախարարության ենթակայության ներքո: Հարկային վարչարարության գործառույթն իրականացնում է հարկային ծառայության ստորաբաժանումը, իսկ մյուս վարչակառավարչական գործառույթները (կադրային քաղաքականություն, նյութատեխնիկական մատակարարում, տեղեկատվական տեխնոլոգիաներ, ֆինանսներ և այլն) իրականացնում են ֆինանսների նախարարության համապատասխան ստորաբաժանումները: Կազմակերպական կառուցվածքի այս մոդելը կիրառվում է Ֆրանսիայում, Շվեյցարիայում:

- Հարկային վարչարարության գործառույթների բաշխումը տարբեր ստորաբաժանումների միջև: Հարկային համակարգի կառուցվածքը ենթադրում է հարկային վարչարարության գործառույթների բաշխում մի քանի նախարարությունների միջև, օրինակ՝ Գերմանիայում հարկային վարչարարության գործառույթներն իրականացնում է ֆինանսների նախարարության ենթակայության

<sup>28</sup> Институциональные и организационные характеристики налоговых органов [http://studme.org/1115121/29929/ekonomika/institutsionalnye\\_organizatsionnye\\_harakteristiki\\_nalogovyh\\_organov](http://studme.org/1115121/29929/ekonomika/institutsionalnye_organizatsionnye_harakteristiki_nalogovyh_organov)

ներքո գործող ֆեդերալ հարկային ծառայությունը: Բացի այդ, հարկային գործառույթների որոշ մասը բաշխված է ֆեդերալ կառավարության մյուս կառույցների միջև, օրինակ՝ որոշակի գործառույթներ իրականացնում է ոգելից խմիչքների արտադրության և իրացման վերահսկողության ֆեդերալ ծառայությունը: Կազմակերպական կառուցվածքի այս մոդելը կիրառվում է Բելգիայում, Հունաստանում, Պորտուգալիայում:

Հարկային և մաքսային մարմինների կարևորագույն խնդիրներից են հարկային համակարգի միջոցով տնտեսական անվտանգության, տնտեսական շահերի պաշտպանվածության ապահովումը, հարկային օրենսդրության պահանջների կատարման հսկողության իրականացումը, հարկ վճարողների սպասարկման և հարկային հսկողության գործառույթների հավասարաչափ զարգացումը: Այդ կարևորագույն խնդիրները հնարավոր է իրականացնել հարկային վարչարարության մշտապես կատարելագործման միջոցով, որի կարևորագույն մասն են կազմում գործառույթների ճիշտ բաշխումը, արդյունավետ և օպտիմալ կազմակերպչական կառուցվածքի սահմանումը:

Հարկային վարչարարությունը հարկային մարմնի օրենսդրությանը համապատասխան իրականացվող գործողություններն են, որոնք ուղղված են հարկային օրենսդրության համատարած և ճիշտ կիրառման ապահովմանը, հարկային մարմնի խնդիրների իրագործմանը:

Հարկային վարչարարության առաքելությունը պետք է ընդգրկի հետևյալ գործառույթները.

1. հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացում, անհրաժեշտ օգնության և տեղեկատվության տրամադրում,
2. հարկային մարմնի հիմնական բիզնես գործընթացների վերակազմակերպում,
3. հարկային հսկողության ժամանակակից մեխանիզմների ներդրում,
4. մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարում, ներքին հսկողության մեխանիզմների կատարելագործում,
5. հարկային խախտումների կանխարգելում և հարկային պարտավորություններից խուսափողների հայտնաբերում,
6. ստվերային տնտեսության դեմ պայքարի արդյունավետության բարձրացում,
7. հարկային կարգապահության ամրապնդում և այլն:

Հարկային ու մաքսային համակարգն իր առաքելության իրականացման ընթացքում բախվում է գործառույթային, կադրային և կառուցվածքային նշանակության խնդիրների, որոնց լուծման նպատակով անհրաժեշտ է իրականացնել գործառույթների օպտիմալացում, արդյունավետ կազմակերպական կառուցվածքի ներդրում, ծառայողների որակավորման բարձրացում:

Ժամանակակից հարկային վարչարարության հիմնախնդիրներից է հարկային և մաքսային համակարգի արդյունավետ կազմակերպական կառուցվածքի ներդրումը: Եվ ինչո՞ւ է հարկային վարչարարության արդյունավետության տեսանկյունից այդքան կարևորվում կազմակերպական համակարգի դերը:

Վերջին տարիներին ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր հատվածներում մեծ ուշադրություն են դարձնում օպտիմալ կազմակերպական կառուցվածքի ձևավորմանը, քանզի համակարգերի գործունեության հաշվետվողականությունը, պատասխանատվությունը, թափանցիկությունն ու արդյունավետությունը շատ անգամ պայմանավորված են կազմակերպական կառուցվածքով, օրինակ՝ որքան հզոր և կայացած է օրենսդիր մարմինը, այնքան հսկողության մեխանիզմները կլինեն հասցեավորված և արդյունավետ, այնքան մարմինը ճկունություն կդրսևորի ժամանակակից կառավարման խնդիրների լուծման ընթացքում: Կառավարությունը գործառնական արդյունքների կատարելագործման ուղիներ է փնտրում, որպեսզի մեծացնի համակարգի հաշվետվողականությունն ու թափանցիկությունը: Հարկային համակարգի կազմակերպական կառուցվածքն այդ ջանքերի հիմնական բանալին է: Հետևաբար՝ մշտապես ենթարկվում է կատարելագործման:

Կազմակերպական կառուցվածքը նախագծելիս հաշվի են առնում մի շարք գործոններ, որոնց վերաբերում են.

- հարկատեսակները՝ ավելացված արժեքի հարկ, շահութահարկ, եկամտային հարկ, ակցիզային հարկ և այլն,
- գործառույթները՝ հարկերի հավաքագրում, հարկ վճարողների սպասարկում, վերահսկողություն, աուդիտ և այլն,
- հարկ վճարողների տեսակները՝ խոշոր, միջին և փոքր հարկատուներ:

Պրակտիկայում կիրառվում են հարկային վարչարարության կազմակերպական կառուցվածքի հետևյալ չորս մոտեցումները.

1. ըստ գործառնական սկզբունքի (principles of a function-based),
2. ըստ մասնագիտացման հարկատեսակների,
3. համակցված,
4. ըստ հարկատուների սեգմենտի<sup>29</sup>:

Ըստ գործառնական սկզբունքի՝ կազմակերպական կառուցվածքի հիմքում դրվում են համընդհանուր սահմանված նորմատիվային և օպերատիվ գործառույթները, որոնք ուղղակիորեն առնչվում են հարկատուներին: Սովորաբար կազմակերպական կառուցվածքի այս տեսակին բնորոշ է ստորաբաժանների ղեկավարների բարձր կազմակերպվածությունը, որոնք սահմանում են քաղաքականության և ծրագրերի ուղղվածությունը: Կառուցվածքը ներառում է տարբեր կազմակերպական միավորներ, որոնք կառավարվում են կառույցի անմիջական ղեկավարին հաշվետու ծառայողների կողմից:

Հարկային վարչարարության գործառույթները դասակարգվում են.

- նորմատիվային և օպերատիվ,
- հիմնական և օժանդակ:

Նորմատիվային գործառույթները կիրառվում են հարկային վարչարարության առաջնային նպատակի օրենսդրական խնդիրների լուծման և օպերատիվ

<sup>29</sup> [www.taxservice.am/ATS\\_Structural\\_Units.aspx?puid=13&suid=118](http://www.taxservice.am/ATS_Structural_Units.aspx?puid=13&suid=118).

համակարգի բարձր արդյունավետության ապահովման նպատակով: Անհրաժեշտ մեթոդների և վարչական ընթացակարգերի ներդրմամբ այդ գործառույթներն ապահովում են նորմատիվ ակտերի և հարկային օրենսդրության կիրարկումն ու մեկնաբանումը:

Արդյունավետ օպերատիվ համակարգը հարկային համակարգի հաջորդ կարևորագույն նպատակի նվազագույն ծախսերով առավելագույն հարկային մուտքերի ապահովման համար հիմք է ստեղծում:

Օպերատիվ գործառույթներն ուղղակիորեն առնչվում են հարկերի հավաքագրմանը: Դրանք ներառում են հարկատուների գրանցումն ու հաշվառումը, ընթացիկ հարկային ստուգումներն ու հսկողությունը:

Հարկային համակարգի հիմնական գործառույթները ներառում են հարկատուների գրանցումն ու հաշվառումը, ընթացիկ հարկային վերահսկողությունն ու ստուգումը, որոնց օգնությամբ հարկային մարմինները տիրապետում են գրանցված հարկատուների գործունեությանն առնչվող օպերատիվ տեղեկատվությանը:

Օժանդակ գործառույթները նպաստում են հիմնական գործառույթների կատարմանը: Դրանք են.

- **իրավական գործառույթն** ապահովում է հարկային մարմնի և հարկատուի կողմից նորմատիվ ակտերի ճիշտ կիրառումը,

- **կադրերի** կառավարումը ցանկացած կազմակերպության կարևորագույն գործառույթներից է: Կադրերի կառավարումն իրականացվում է գործատու և ծառայող հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ (աշխատանքային օրենսգիրք, հարկային և մաքսային ծառայությունների մասին օրենքները և այլն): Հարկային համակարգում առաջնահերթությունների շարքում են կադրերի ուսուցումն ու շարունակական վերապատրաստումը:

- **Աուդիտի և ներքին վերահսկողության գործառույթն** իրականացնող ստորաբաժանումը պատասխանատու է կառույցի և նրա միավորների ներքին աուդիտի, հարկային համակարգում առկա ռիսկերի կառավարման գործընթացի գնահատման, վերլուծության և բացահայտված խնդիրների լուծման առաջարկությունների ներկայացման համար: Ընդ որում հարկային համակարգի նպատակների վրա ազդող ռիսկերի բացահայտման նպատակով իրականացնում է հարկային համակարգի ստորաբաժանումների և աշխատակիցների գործունեության գնահատում<sup>30</sup>:

- Հարկատուների իրազեկման գործառույթն իր ուրույն տեղն ունի հարկային մշակույթի բարձրացման գործում: Հարկային համակարգում գործող համապատասխան ստորաբաժանումները պատասխանատու են հարկային օրենսդրության վերաբերյալ հարկատուների ժամանակին և պատշաճ իրազեկմանն ու օժանդակմանը:

- Հաշվապահական, ֆինանսական գործառույթներն իրականացնող ստո-

---

<sup>30</sup> Tax Administration in OECD Countries: Comparative Information Series, October 2004, P. 70. [www.oecd.org/ctp/administration/CIS-2004.pdf](http://www.oecd.org/ctp/administration/CIS-2004.pdf)

րաբաժանումները ձևավորում և բաշխում են կառույցի ու նրա ենթակա միավորների բյուջեն, վարում են հաշվապահական հաշվառումը և կազմում հաշվետվություններ:

- Տեղեկատվական տեխնոլոգիաներին առնչվող գործառույթներ: Հաշվի առնելով հարկային և մաքսային համակարգում առաջադեմ տեխնոլոգիաների ներդրման արդի պահանջները՝ կառույցն աջակցում է համակարգի արդիականացմանը, իրականացնում է ծրագրավորման աշխատանքներ, համակարգչային տեխնիկայի, տարբեր տեխնոլոգիական ծրագրերի սպասարկում<sup>1</sup>:

Հարկային և մաքսային համակարգի չափերից կախված՝ օժանդակ գործառույթները կարող են միավորվել կամ ընդլայնվել:

Ըստ գործառնական սկզբունքի՝ կազմակերպական կառուցվածքի կիրառման արդյունքում հարկային համակարգի գործունեությունը դառնում է առավել մասնագիտացված, վերահսկումն առավել արդյունավետ, հետևաբար՝ բազմաթիվ երկրներում կազմակերպական կառուցվածքի այս տեսակի լայնամասշտաբ կիրառման միտում է նկատվում: Բուլղարիան, Հունգարիան, Հնդկաստանը, Կանադան, Հոլանդիան, Թուրքիան, Ֆինլանդիան և այլ երկրներ հարկային համակարգում կիրառում են գործառնական սկզբունքով կազմակերպական կառուցվածքը:

Կանադայում եկամուտների գործակալության կենտրոնական ապարատում կազմակերպական կառուցվածքը սահմանված է ըստ գործառույթի: Այդ գործառույթների իրականացման նպատակով սահմանվել են բողոքարկման, հարկային արտոնությունների տրամադրման, հաշվառման, ստուգումների, ռիսկերի կառավարման, աուդիտի հարկատուների հետ հարաբերությունների և ապառքների, օրենսդրության վերլուծության ստորաբաժանումները: Այսպիսով, ըստ գործառնական սկզբունքի, կազմակերպական կառուցվածքի հիմքը երկու կարևորագույն սկզբունքներն են.

1. կառուցվածքը ձևավորվում է ըստ սահմանված քաղաքականության/առաքելության, և հսկողությունն իրականացնում են համապատասխան կառույցների ղեկավարները:

2. Քաղաքականությունը պետք է սահմանվի ըստ գործառույթների՝ սպասարկում, գրանցում, տվյալների մշակում, գանձումներ, աուդիտ և այլն: Գործառույթները սահմանելիս հաշվի են առնվում պետական կառավարման համակարգի առանձնահատկությունները, համընդհանուր ընդունված մոտեցումները՝ նպատակ ունենալով ապահովելու ինչպես համակարգի, այնպես էլ տնտեսության առջև դրված նպատակների կատարումը<sup>2</sup>:

Ըստ մասնագիտացման՝ կազմակերպական կառուցվածքը ձևավորվել է շատ վաղուց և մինչև վերջերս համարվում էր ամենատարածվածը: Մեծ Բրիտանիայի հարկային վարչարարություն իրականացնող մարմնի կազմակերպ-

<sup>1</sup> А.В.Аронов, В.А.Кашин. Налоги и налогообложение (Учебное пособие). 2009, стр. 576.

<sup>2</sup> Maureen Kidd, Revenue Administration: Functionally Organized Tax Administration, June 2010, P. 15

չական կառուցվածքը, ըստ հարկերի տեսակի, ձևավորվել է դեռևս 1690 թվականին: ԱՄՆ-ի հարկային համակարգը մինչև 1950 թվականը նույնպես հիմնված է եղել այս սկզբունքի վրա, սակայն 1950-1998 թվականներին անցում կատարվեց գործառնական սկզբունքին, իսկ այնուհետև կազմակերպական կառուցվածքը սահմանվեց ըստ հարկատուների չորս սեգմենտների՝ փոքր բիզնես և անհատ ձեռներեցներ, միջին և խոշոր բիզնես, հարկերից ազատված և պետական միավորներ, աշխատավարձից և ներդրումներից եկամուտներ: Նոր Զելանդիան, Ավստրալիան նույնպես ի սկզբանե հարկային համակարգի կառուցվածքը սահմանել են ըստ հարկատեսակների, այնուհետև վերակազմավորվել են ըստ գործառույթների, սակայն նախորդ դարի իննսունականներից կիրառում են ըստ հարկատուների սեգմենտի կազմակերպական կառուցվածքը: Մասնավորապես զարգացած երկրներում առավել հաճախ հարկային համակարգի կազմակերպական կառուցվածքը ձևավորելիս կիրառվում է վերը թվարկված երկու և ավելի կառուցվածքների տեսակների համակցությունը<sup>1</sup>: Մասնագիտացման մոտեցման համաձայն՝ հարկային համակարգում բազմաֆունկցիոնալ ստորաբաժանումները սահմանվում են ըստ կիրառվող հարկատեսակների, և դրանք գործում են իրարից անկախ, որը կարող է առաջացնել կազմակերպական կառուցվածքի անարդյունավետություն, քանզի գործառույթների կրկնությունն ուղեկցվում է ծախսերի ավելացմամբ: Հետևաբար՝ այս մոտեցումը կիրառող երկրները հիմնականում իրենց հարկային համակարգերի կազմակերպական կառուցվածքը վերակազմավորում են ըստ գործառնական սկզբունքի և հարկատուների սեգմենտի: Բազմաթիվ երկրներում, ինչպիսիք են՝ ավստրիա, Բելգիա, Իտալիա, Գերմանիա, Ֆրանսիա, Ճապոնիա, հարկային համակարգի ներքին կազմակերպական կառուցվածքը, որպես կանոն, սահմանվում է վերը թվարկված մեթոդների համակցմամբ: Այս կամ այն սկզբունքի գերակշռությունը որոշելը դժվար է, քանզի հարկային համակարգի գործունեության արդյունավետության վրա ազդում են նաև այլ բազմաբնույթ գործոններ: Օրինակ.

- գործառնական սկզբունքի հիման վրա սահմանված կառուցվածքը, որում առկա են նաև որոշ հարկատեսակների գծով մասնագիտացված ստորաբաժանումներ,
- մասնագիտացման հիման վրա կազմակերպական կառուցվածքը, որում առկա են որոշակի գործառնական գործառույթներ և այլն:

Հարկային համակարգի, ըստ հարկատուների, սեգմենտի կազմակերպական կառուցվածքում, հարկատուների սեգմենտներից բացի, առանձնացվում են ստանդարտ օպերատիվ գործառույթներ իրականացնող ստորաբաժանումներ: Սեգմենտները դասակարգվում են ըստ փոքր, միջին և խոշոր տնտեսվարողների: Քանի որ հարկային եկամուտների գերակշռ մասն ապահովում են քիչ քանակությամբ խոշոր կազմակերպությունները, հետևաբար՝ բազմաթիվ երկրներում ընդունված մոտեցում է խոշոր հարկատուների սեգմենտի առանձնացումը:

<sup>1</sup> Arturo Jacobs, Detailed Guidelines for Improved Tax Administration in Latin America and the Caribbean, Organizational Structure and Management, USAID, August 2013, P.43




Պետք է նշել, որ բազմաթիվ երկրներում կիրառում են գործառնական սկզբունքի հիման վրա կազմակերպական կառուցվածքի տեսակը, սակայն այն երկրները, որտեղ առկա է ԱԱՀ (ավելացված արժեքի հարկ), կազմակերպական կառուցվածքում առանձնացվում է այդ հարկատեսակի համար պատասխանատու ստորաբաժանում, ինչպես նաև ստորաբաժանում ըստ հարկատուների սեգմենտի խոշոր հարկատուների: Հայաստանի հարկային համակարգում նույնպես գործում է խոշոր հարկատուների հարկային տեսչություն:

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը ստեղծվել է 1991 թվականին, որն իր գործունեությունը սկսել է բավականին դժվար պայմաններում՝ առանց սեփական հարկային օրենսդրության, պետական բյուջեի և վերջինիս հարկային եկամուտների պլանավորման, չունենալով նյութատեխնիկական բազա, շենքային պայմաններ, բանիմաց և որակավորված կադրեր: Անցնելով բարդ ճանապարհ՝ 26 տարիների ընթացքում համակարգն ունեցել է մեծ ձեռքբերումներ, ինչպիսիք են տնտեսության աճի խթանումը, սպառողների շահերի պաշտպանությանը միտված օրենսդրության մշակումը, միջազգային չափանիշներին համապատասխան մաքսային համակարգի ստեղծումը, համակարգում առաջադեմ տեխնոլոգիաների լայնածավալ կիրառումը, հեռախոսագանգերի, հարկատուների սպասարկման կենտրոնների ստեղծումը, մարդկային ռեսուրսների կառավարման կատարելագործումը, ստուգումների և վերահսկողության կանոնակարգումը և այլն: Հարկ վճարողների սպասարկման ոլորտի զարգացումը պետական եկամուտների կոմիտեի ռազմավարության գերակայություններից է: Այդ գերակայությունն իրագործելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել խորը կառուցվածքային փոփոխություններ, ինչպիսիք են մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը, հարկ վճարողների կողմից իրենց իրավունքների, պարտավորությունների և հարկային օրենսդրության պահպանման անհրաժեշտության պատշաճ ընկալումը: Համատեղ հեռախոսային, ինտերնետային, փոստային կապի, զանգվածային լրատվամիջոցների և անմիջական շփումների միջոցով տրամադրվող ծառայությունների ծավալի և որակի մեծացումը հնարավորություն է տալիս ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին ավելի արդյունավետորեն սպասարկել և իրազեկել ավելի մեծ քանակի հարկ վճարողներին, որն իր հերթին հանգեցնում է հարկ վճարող հանրության կողմից ՀՀ ՊԵԿ-ի և նրա առաքելության դրական ընկալմանը<sup>1</sup>: Կոմիտեի գործունեությունը կանոնակարգվում է «Հարկային ծառայության մասին», «Մաքսային ծառայության մասին», «Մաքսային կարգավորման մասին» օրենքներով: Եկամուտների կոմիտեն ստեղծվում, վերակազմավորվում, գործունեությունը դադարեցվում է Հայաստանի Հանրապետության հրամանագրերով: Ձևավորման սկզբնական փուլում կոմիտեն գործում էր որպես միասնական կիսահիմնադար մարմին, որին զուգահեռ գործում էր մեկ այլ վերահսկող կառույց՝ հարկային տեսչության խորհուրդ: Կոմիտեի կազմակերպական կառուցվածքը սահմանված էր ըստ հա-

<sup>1</sup> Arturo Jacobs, Detailed Guidelines for Improved Tax Administration in Latin America and the Caribbean, Organizational Structure and Management, USAID, August 2013, P.43

մակցման սկզբունքի, որտեղ առավել գերակշռում էր ըստ հարկատեսակների մասնագիտացումը: Այնուհետև հաշվի առնելով այդ ոլորտում տեղի ունեցող միջազգային մարտահրավերները, առկա լավագույն միջազգային փորձը՝ կոմիտեն ևս անցում կատարեց հիմնականում գործառնական սկզբունքով՝ կազմակերպական կառուցվածքին ավելացնելով խոշոր հարկատուների սեզմենտը:

Կազմակերպական կառուցվածքի հիմնական օղակները՝ վերադաս հարկային մարմին, տարածքային հարկային տեսչություններ, մասնագիտացված առանձնացված ստորաբաժանումներ, ստորև ներկայացված են գծապատկերի տեսքով:



**Գծապատկեր 1.** Հարկային մարմնի կազմակերպական կառուցվածքի օղակները

Պետական եկամուտների կոմիտեի և նրան ենթակա հարկային և մաքսային կառույցների կազմակերպական կառուցվածքը սահմանվում է կոմիտեի կանոնադրությամբ<sup>1</sup>: Կոմիտեի համակարգը կազմված է նախագահից, նախագահի տեղակալներից, խորհրդականներից, օգնականներից, կոմիտեի աշխատակազմից, տարածքային ստորաբաժանումներից: Վերադաս մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներն են.

- ռիսկերի կառավարման և հարկային կարգապահության ծրագրերի վարչությունը,
- հարկ վճարողների սպասարկման և հարկման ընթացակարգերի վարչությունը,
- կազմակերպման և հսկողության վարչությունը,
- ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչությունը,
- ներքին աուդիտի վարչությունը,
- տեղեկատվական տեխնոլոգիաների վարչությունը,
- մաքսային հսկողության վարչությունը,
- իրավաբանական վարչությունը,
- քննչական վարչությունը,
- իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրա-

<sup>1</sup> [www.armenpress.am/arm/news/832217/hayastanum-kirakanacven-harkayin-varchararutyanyardyunavetutyanyan](http://www.armenpress.am/arm/news/832217/hayastanum-kirakanacven-harkayin-varchararutyanyardyunavetutyanyan) .

կանացման վարչությունը,

- օպերատիվ հետախուզության վարչությունը,
- մաքսանենգության դեմ պայքարի և կրկնակի մաքսային հսկողության վարչությունը,
- ներքին անվտանգության վարչությունը,
- անձնակազմի կառավարման վարչությունը,
- ֆինանսահաշվային վարչությունը և այլն:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. ՀՀ կառավարության ծրագիր, Հայաստանի Հանրապետություն, փետրվար, 2019, 73 էջ:
2. Հարությունյան Վ. և ուրիշներ, «Հարկեր և հարկազանձում», Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, 600 էջ:
3. Հարությունյան Վ.Լ., Հարկային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Եր., «Ձանգակ-97», 192 էջ:
4. Аронов А.В., Кашин В.А., Налоги и налогообложение (Учебное пособие). 2009.
5. Кравченко Л.А. «Налоговые реформы 80-х годов в США (Социально-экономические аспекты)», М., «НИФИ», 1989, Пепеляев С.Г. «Законы о налогах: элементы структуры», М.: СВЕА, 1995, 345 с.
6. Налоги. Люди. Время... или этот безграничный мир налогов, Под. Ред. А.В.Брызгалкина. Екб,: Изд.-во «Налоги и финансовое право», 2008, 576 с.
7. Arturo Jacobs, Detailed Guidelines for Improved Tax Administration in Latin America and the Caribbean, Organizational Structure and Management, USAID, August 2013.
8. Maureen Kidd, Revenue Administration: Functionally Organized Tax Administration, June 2010.
9. Tax Administration in OECD Countries: Comparative Information Series, October 2004. [www.oecd.org/ctp/administration/CIS-2004.pdf](http://www.oecd.org/ctp/administration/CIS-2004.pdf)
10. [www.taxservice.am](http://www.taxservice.am), [www.costoms.am](http://www.costoms.am)
11. Институциональные и организационные характеристики налоговых органов [http://studme.org/111512129929/ekonomika/institutsionalnye\\_organizatsionnye\\_harakteristiki\\_nalogovyh\\_organov](http://studme.org/111512129929/ekonomika/institutsionalnye_organizatsionnye_harakteristiki_nalogovyh_organov)
12. [www.taxservice.am/ATS\\_Structural\\_Units.aspx?puid=13&suid=118](http://www.taxservice.am/ATS_Structural_Units.aspx?puid=13&suid=118).
13. [www.armenpress.am/arm/news/832217/hayastanum-kirakanacven-harkayin-varchararutyun-ardyunavetutyun](http://www.armenpress.am/arm/news/832217/hayastanum-kirakanacven-harkayin-varchararutyun-ardyunavetutyun).

## Վլադիմիր Հարությունյան

### ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

**Ամփոփագիր:** Հոդվածում իրականացվել է ուսումնասիրություն, համաձայն որի շեշտադրվել է, որ արդարացի ու արդյունավետ հարկազանձում իրականացնելու համար, ժողովրդի ընտրյալների մեծամասնության աջակցությունից բացի, շահագրգիռ կողմերից՝ երկրի առաջնորդից ու կառավարությունից, պահանջվում է ձևավորել նաև ոչ միայն պրոֆեսիոնալ կամ արհեստավարժ, այլև երկրի ժողովրդի մեծամասնություն (շահերի պաշտպանությամբ մտահոգված մեծամասնություն: Ընդ որում, հիմնավորվել է, որ հարկային եկամուտների գերակշիռ մասն անհրաժեշտ է ձևավորել ուղղակի հարկերից՝ իրականացնելով արդյունավետ հարկային վարչարարություն և ձևավորելով ուղղակի հարկերի գանձման գերակայությունն ապահովող հարկային օրենսդրություն:

**Բանալի բառեր.** հարկային համակարգ, տնտեսական հեղափոխություն, հարկային օրենսդրություն, հարկային քաղաքականություն, գործադիր մարմիններ, քաղաքացիական հասարակություն:

## Владимир Арутюнян

### ОРИЕНТИРЫ ПО СОВЕРШЕНСТВОВАНИЮ ФИНАНСОВОЙ СИСТЕМЫ В АРМЕНИИ

**Резюме.** В статье было проведено исследование, в соответствии с которым подчеркивается, что помимо поддержки большинства избирателей, имеющих право голоса, заинтересованные стороны, лидер страны и правительство должны формировать не только профессиональные, но также и большинство населения страны, занятого защитой интересов, и было подтверждено, что большинство налоговых поступлений необходимо для формирования прямых налогов результативного администрирования и налогового законодательства, устанавливающего прямую норму налогообложения.

**Ключевые слова:** налоговая система, экономическая революция, налоговое законодательство, налоговая политика, органы исполнительной власти, гражданское общество.

**Vladimir Harutyunyan**

## **FINANCIAL SYSTEM IMPROVEMENT DIRECTIONS IN ARMENIA**

**Abstract:** A study has been carried out in the article, according to which it is emphasized that besides supporting the majority of the eligible voters, the interested parties, the country's leader and the government are required to form not only professional, but also the majority of the people of the country (the majority concerned with the protection of interests), and it has been substantiated that the majority of tax revenues are necessary to collect as direct taxes, by carrying out effective tax administration and initiate tax legislation changes reflecting the priority of collecting direct taxes.

**Keywords:** Tax system, economic revolution, tax legislation, tax policy, executive bodies, civil society

## Տիգրան Հարությունյան Աննա Հարությունյան

### ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍՈՎ

**Հարկային պարտավորությունների հաշվարկման կատարելագործման օրենսդրական ու մեթոդաբանական մոտեցումները եկամտային հարկերի մասով**

**Շահութահարկի մասով:** Շահութահարկի որոշման մասով մեթոդաբանական սխալ մոտեցում է հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից, այսպես կոչված, «անհուսալի դեբիտորական պարտքերի» դուրսգրման համար, սահմանված կարգով<sup>1</sup>, պահուստաֆոնդին կատարվող մասհանումների, իսկ այդ պարտքերի դուրսգրման դեպքում՝ այդ նպատակով ստեղծված պահուստաֆոնդին կատարված մասհանումները գերազանցող գումարի, ինչպես նաև նախկինում դուրս գրված, այսպես կոչված, «անհուսալի կրեդիտորական պարտքերի» մարման գումարների նվազեցումները:

Այն, որ անհրաժեշտություն է, այսպես կոչված անհուսալի դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի դուրսգրման կարգի սահմանումը տարակարծություններ քիչ կարող են լինել, քանի որ դա հաշվապահական հաշվառման վարման միջազգային ստանդարտների պահանջն է, որը պարզեցնում է ակտիվների ու պասիվների հաշվառումը, թեթևացնում հաշվապահական հաշվեկշիռը և դրան կից կազմվող ֆինանսական հաշվետվությունը, այդ գծով ձևավորում է առանձնացված պահուստաֆոնդեր, որոնք տնտեսվարող սուբյեկտներին հնարավորություն են տալիս ցանկացած ժամանակ ի հայտ բերելու իրենց համար «դեբիտոր» և «կրեդիտոր» հանդիսացող անձանց՝ նույնիսկ նրանց վերակազմակերպման կամ լուծարման, իսկ ֆիզիկական անձանց պարագայում նաև նրանց մահվան դեպքում: Այսինքն՝ այդպիսի պարտքերն անհուսալի պետք է դիտարկել միայն հաշվապահական հաշվառման վարման տեսանկյունից, քանի որ դրանք, որպես կանոն, վերադարձվում են: Բայց քիչ դեպքերում են գանձված դեբիտորական կամ մարված կրեդիտորական պարտքերն իրենց արտացոլումը ստանում տնտեսվարող սուբյեկտների (առավել ևս պետական մասնակցության պարագայում) հաշվապահական հաշվեկշիռներում, քանի որ, ինչպես գանձված դեբիտորական, այնպես էլ մարված կրեդիտորական գումարները կողմերի փոխշահավետ համաձայնությամբ շրջանառվում են ստվերային դաշտում, որի համար «պարարտ հող» է ստեղծում համախառն

<sup>1</sup> Կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ բանկերի և վարկային կազմակերպությունների դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված մարմինը Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի հետ համատեղ:

եկամտից օրենսդրությամբ սահմանված վերոհիշյալ նվազեցումը:

Անհուսալի դեբիտորական և կրեդիտորական պարտքերի առաջացման պարագայում հարկվող շահույթի հաշվարկման ժամանակ կատարվում են օրենքով սահմանված նվազեցումները, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված հայցային վաղեմության ժամկետն անցնելուց հետո դրանց հարկման հարցը համարվում է «լուծված», որի արդյունքում պետական բյուջեն չի ստանում իրեն հասանելիք մուտքերը: Դա է հանրապետությունում անհուսալի դեբիտորական և կրեդիտորական պարտքերի մասով ստեղծված փաստացի իրավիճակի պատկերը, որը աստիճանաբար մեծանում է «ձնագնդի» պես և հրատապ լուծում պահանջում: Դա պահանջում է ուժը կորցրած ճանաչել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածն ամբողջությամբ և այսպիսի գումարների հարկումից «զերծ պահել» իրավաբանական անձանց՝ այն էլ միայն նրանց սնանկացման դեպքերում:

Վերջին դեպքում հարկային մարմիններն ավելի շուտ և ժամանակին կբացահայտեն սնանկացման ճանապարհին գտնվող բանկերի դեմքը, որոնց ուշացած բացահայտումները, իրենց բոլոր բացասական հետևանքներով, հատկապես վերջին տարիներին գործնականում լայն տարածում են ստացել, մասնավորապես բանկերի պարագայում («Արդշինբանկ», «Կրեդիտ Երևան» և այլ բանկեր):

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքն ունի նաև այլ «ծանր բեռ», որը «թաքնված է» հարկվող շահույթի հաշվարկման մոտեցումներում:

ՀՀ օրենքով հարկվող շահույթը սահմանվում է որպես համախառն եկամտի և սահմանված նվազեցումների դրական տարբերություն: Սակայն սահմանված նվազեցումները վերաբերում են ինչպես համախառն եկամտին, այնպես էլ դրանց ստացման հետ կապված անհրաժեշտ ու փաստաթղթերով հիմնավորված ծախսերին, որոնց մի մասը երբեմն չարդարացված ու անհասկանալի ձևով նորմավորվում է, իսկ ծախսերի մի այլ մաս չարդարացված չի նորմավորվում՝ ավելացնելով նվազեցումների չափը:

Արդյունքում ստացվում է այնպես, որ հանրապետության շատ հարկատուներ, ունենալով հաշվեկշռային շահույթ (իսկ երբեմն էլ շոշափելի), շահութահարկ չեն վճարում՝ հարկվող շահույթ չառաջանալու պատճառով, քանի որ օրենքով սահմանված նվազեցումներն այնքան ծավալուն և ընդգրկուն են, որ շահութահարկի հարկման բազան վերածվում է փոքր մեծության: Դրանով է պայմանավորված երկրի տնտեսական աճին ոչ աղեկվատ շահութահարկի գանձումների աճը, որից օգտվում են հարկատուները, բայց պետությանը վճարում են իրենց ստացած օգուտներին խիստ անհամամասնական հարկեր:

**ա) «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի առումով, այսինքն՝ հարկվող շահույթը որոշելու տեսակետից համախառն եկամուտ չեն համարվում կամ դիտարկվում:**

• Մասնակիցների կողմից հարկատուի կանոնադրական կապիտալում կատարված ներդրումները, որը ներդրումների խթան հանդիսանալ չի կարող,

քանի որ հայաստանյան ծագում ունեցող գումարներն արդեն ներդրված են, բիզնեսի բազմաթիվ յուրտներ մենաշնորհված են, իսկ օտարերկրյա ներդրողների համար հանրապետությունը, պատկերավոր ասած, գրեթե օֆշորային երկիր: Հետևաբար՝ ժամանակն է վերանայելու «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի նշված հարկային արտոնությունը սահմանող դրույթը:

- Արտարժույթի և արտարժույթով արտահայտված այլ ակտիվների և պարտավորությունների, ինչպես նաև սահմանված կարգով իրականացված հիմնական միջոցների վերագնահատման դրական արդյունքը, որը օգուտ է բերում հարկատուներին, բայց ոչ պետությանը: Իհարկե, այս հարցում անհրաժեշտ է ցուցաբերել զգուշավորություն, քանի որ կան ռիսկեր, որոնք պետք է կառավարվեն, ինչպես վարվում է Կենտրոնական բանկը՝ արտարժույթի տնօրինման տնտեսական նորմատիվներ սահմանելով: Սակայն, ռիսկերի կառավարումից հրաժարվելը և հարկային «թաքնված» արտոնություն սահմանելը խնդրի արդարացի լուծման ճանապարհը չէ:

**բ) Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է:**

- Նախորդ երեք տարիներին ավել ցույց տրված եկամտի և (կամ) պակաս ցույց տրված նվազեցման չափով: Դա նշանակում է, որ նախորդող 4-րդ և ավելի տարիներին ավել ցույց տրված եկամուտը և (կամ) պակաս ցույց տրված նվազեցումը չեն մասնակցում հարկվող շահույթի հաշվարկին՝ կապված ՀՀ քաղաքացիական օրենսգրքում ամրագրված հայցային վաղեմության ժամկետի հետ: Մինչդեռ պետության պարտավորությունների կատարումը, կապված բյուջետային ծախսերի իրականացման հետ, հայցային վաղեմության ժամկետ չունի: Հետևաբար, հարկային պարտավորությունների կատարման նկատմամբ հայցային վաղեմության ժամկետի կիրառումը սխալ է, և օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, ինչպես նաև «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի վերանայումը:

- Ծերանոցներին, մանկատներին, հիվանդանոցներին և այլ սոցիալ-մշակութային ու առողջապահական հիմնարկներին փոխանցված միջոցների կամ մատուցված ծառայությունների արժեքի չափով, բայց ոչ ավելի, քան համախառն եկամտի 0.25 տոկոսը: Դա նշանակում է, որ պետությունը հիշատակված օբյեկտներին ֆինանսական աջակցություն ցույց տալու իր պարտավորությունը փոխանցում է հարկատուների իրագործման խղճին՝ դրանում ոչ միայն համոզված չլինելով, այլև վերահսկողություն չիրականացնելով, որի արդյունքում հարկային արտոնությունը դառնում է չհասցեագրված: Նման մոտեցումը հարկման արդյունավետության բարձրացման նկատմամբ պետության անվստահության դրսևորման չարդարացված ձև է և պայմաններ է ստեղծում շահարկումների ու չարաշահումների համար, որոնցից խուսափելու միջոցը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի ուժը կորցրած ճանաչելն է:

- Համախառն եկամտի ստացման հետ կապված անհրաժեշտ ու փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով, որը ներառում է նաև ֆակտորինգային ու լիազորագրային գործառնությունների ծախսերը, ինչպես նաև



երաշխիքների, երաշխավորությունների, ակրեդիտիվների և բանկային ու վարկային կազմակերպությունների այլ ծառայությունների համար վճարները: Բնական է, որ այլ ծառայությունների վճարների մեջ մտնում են նաև. 1) ծառայությունների և թղթակցային հարաբերությունների դիմաց բանկին և վարկային կազմակերպությանը վճարված միջնորդական վճարները, 2) կանխիկ դրամի, չեկերի, վճարային այլ փաստաթղթերի տեղափոխման դիմաց, ինչպես նաև արժեքների փաթեթավորման համար բանկին և վարկային կազմակերպությանը և նրանց հաճախորդներին պատկանող արժեքների տեղափոխման, պահպանման և առաքման ծախսերը, 3) հաշվարկադրամարկային և հաշվողական կենտրոնների ծառայությունների վճարները, 4) բանկի և վարկային կազմակերպության գործունեություն ապահովելու համար անհրաժեշտ վճարային միջոցներ պատրաստելու, թողարկելու, ի պահ ընդունելու և ներդնելու հետ կապված ծախսերը, 5) բաժնետոմսեր, պարտատոմսեր և պարտքի այլ հանձնառություններ թողարկելու հետ կապված ծախսերը, 6) կեղծ թղթադրամների վճարային փաստաթղթերի պատճառով բանկի և վարկային կազմակերպության կրած կորուստները: Մինչդեռ բանկերի և վարկային կազմակերպությունների համախառն եկամտի ստացման հետ կապված վերոհիշյալ ծախսերը, (որոնք, բնականաբար, փաստաթղթերով հիմնավորված են), օրենքի 30-րդ հոդվածի համաձայն, մասնակցում են նաև համախառն եկամտի նվազեցումներին, որը հանդես է գալիս «այլ նվազեցումների» անվան տակ (հոդված 9): Իրականում նշված ծախսերը համախառն եկամտի նվազեցումներին մասնակցում են երկու անգամ, որը կարելի է բնորոշել որպես հարկային արտոնության կրկնակի սահմանում կամ այդպիսի ծախսերի գծով համախառն եկամտի կրկնակի նվազում, որը հակասում է հենց սույն օրենքի 9-րդ հոդվածի պահանջներին:

Հետևաբար՝ արդարացված պետք է համարել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի բանկերի և վարկային կազմակերպությունների համախառն եկամտի նվազեցումները սահմանող 30-րդ հոդվածի դ), ե), զ), է), ը) և թ) կետերի ուժը կորցրած ճանաչելը:

Հարկ է նշել նաև, որ ծախսերի գծով համախառն եկամտից կատարվող նվազեցումները չարդարացված են նորմավորվում: Այսպես, օրինակ, օրապահիկի ծախսերը (հոդված 19), իսկ բնական պաշարների արդյունահանման նախապատրաստական, երկրաբանական հետախուզման և նախազձահետախուզական աշխատանքների ծախսերը (որոնք առավել տարողունակ են ու դժվար վերահսկելի), գովազդային, նյութական, ներկայացուցչական, աուդիտորական, իրավաբանական և այլ խորհրդատվական, ինչպես նաև բանկային և վարկային կազմակերպությունների առանձին ծախսեր (որոնք եկամուտներ են բերում նաև ծառայությունների վճարների տեսքով) չեն նորմավորվում, որն արդարացված չէ:

Շահութահարկի հաշվարկման չարդարացված մոտեցումների «ինքնախոստովանություն» պետք է «համարել» 2004թ. հունվարի 26-ից «նվազագույն

շահութահարկի» հաշվարկման ու գանձման օրենսդրորեն սահմանումը<sup>2</sup>, որի էությունն այն է նրանում, որ որոշված շահութահարկի կանխավճարի գումարը յուրաքանչյուր ամսվա ընթացքում սահմանված մեծության<sup>3</sup> 1 տոկոսից պակաս լինելու դեպքում հարկատուից գանձվում են նվազագույն շահութահարկի ամսական վճարումներ:

Բացի վերոնշյալից, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքին բնորոշ է նաև հարկային արտոնությունների սահմանումը հարկային խտրականության զուգակցմամբ, որը կատարվում է արտասահմանյան խոշոր ներդրողների նկատմամբ: Այսպես, օրինակ, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն, եթե ռեզիդենտի կանոնադրական կապիտալում օտարերկրյա ներդրողի փաստացի կատարած ներդրման չափը 1998 թվականի հունվարի 1-ից հետո կազմում է առնվազն 500 մլն դրամ, ապա տվյալ ռեզիդենտի շահութահարկի գումարը նվազեցվում է համաձայն ստորև ներկայացված դրույքաչափի սանդղակի:

**«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածում տրված դրույքաչափի սանդղակը<sup>4</sup>**

<b>Ռեզիդենտի կանոնադրական կապիտալում օտարերկրյա ներդրման սահմանված չափաքանակի լրանալու տարեթիվը</b>	<b>Օտարերկրյա ներդրումներով ռեզիդենտի շահութահարկի նվազեցման չափն ըստ տարիների</b>	
	100 տոկոս	50 տոկոս
1998	1999 և 2000թթ.	2001-2008թթ. ներառյալ
1999	2000 և 2001թթ.	2002-2009թթ. ներառյալ
2000	2001 և 2000թթ.	2003-2008թթ. ներառյալ
2001	2002 և 2003թթ.	2004-2007թթ. ներառյալ
2002	2003 և 2004թթ.	2005-2006թթ. ներառյալ
2003	2003 և 2005թթ.	
2004	2004 և 2005թթ.	
2005	2005 և 2007թթ.	
2006	2006 և 2008թթ.	
2007	2007 և 2009թթ.	

Հարկային այսպիսի արտոնության սահմանման դրական ազդեցությունը օտարերկրյա ներդրումների խրախուսումն է, իսկ բացասականը՝ տեղական

<sup>2</sup> «Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», Առաջին մաս, Եր., 2009, էջ 75:

<sup>3</sup> Նվազագույն շահութահարկը հաշվարկվում է նախորդ ամսվա ընթացքում ապրանքների (բացառությամբ հիմնական միջոցների, ինչպես նաև արժեթղթերի և ֆոնդային ապրանքների), արտադրանքի իրացումից և ծառայությունների մատուցումից հաշվեգրման եղանակով հաշվարկված եկամտի (որը չի ներառում նշված եկամուտների ստացման համար վճարված անուղակի հարկերը) և նույն ժամանակահատվածում այդ եկամտի 50 տոկոսը չզերազանցող մասով՝ հիմնական միջոցների համար հաշվարկված ամորտիզացիոն մասհանումների տարբերության նկատմամբ:

<sup>4</sup> «Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», Առաջին մաս, Եր., 2009, էջ 68:

ներդրողների շահերի անտեսումը, որի բացասական ազդեցության պատճառով հայաստանյան ծագում ունեցող գումարներն արտահանվում են հանրապետությունից և տարբեր անհասկանալի կազմակերպությունների ու քաղաքացիների անվան տակ նվազեցված չափով «վերադառնում են» հանրապետության արտասահմանյան ներդրման կարգավիճակով, իսկ գումարների պտույտի (հանրապետությունից արտասահման և արտասահմանից հանրապետություն) արդյունքում նրա մի մասն անհրաժեշտաբար ծախսվում է, իսկ մի այլ մաս էլ արտասահմանում «գտնում է» շրջանառության ոլորտ: Հարկային խտրականության բացասական ազդեցությունները չեզոքացնելու նպատակով անհրաժեշտ ենք համարում «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով սահմանված հարկային արտոնությունը տարածել նաև տեղական ներդրողների վրա:

ՀՀ հարկային օրենսդրությունում գործող, բայց չարդարացված հարկային արտոնություն է արագացված ամորտիզացիան, երբ հարկվող շահույթը որոշելու նպատակով հարկատուն իր հայեցողությամբ ընտրում է հիմնական միջոցների ամորտիզացման այլ ժամկետ, սակայն տվյալ խմբի համար սահմանված ժամկետներից ոչ պակաս, այն դեպքում, երբ համաշխարհային պրակտիկայում այդպիսի արտոնությունների կիրառումն ուղղված է լինում ԳՏԱ-ի արագացմանը, գիտատար ճյուղերում ներդրումների առաջնահերթության ապահովմանը, զբաղվածության ընդլայնմանը և մի շարք այլ խնդիրների լուծմանը:

Հարկ է նշել, որ 1950-70-ական թվականները հարկային տեսությունում և պրակտիկայում դարձան ներդրումները խթանող հարկային արտոնությունների ձևավորման շրջան: Ներդրումները խթանող հարկային արտոնություններից 1980-ական թվականներին տարածված էր, օրինակ, արագացված ամորտիզացիան, որի էությունը հանգում է ամորտիզացիայի բարձրացված գործակիցների օգտագործմանը, որը, որպես կանոն, հանգեցնում է տնտեսական և հարկային ամորտիզացիայի տարբերության և, հետևաբար, հարկվող շահույթի մեծության նվազման: Սակայն այլ է իրավիճակը ՀՀ-ում, որտեղ սահմանված նմանատիպ հարկային արտոնությունը պետությունը չի արժեքավորել, և իրականում բոլոր հարկատուներն առանց պարտավորությունների օգտվում են հարկային այս արտոնությունից, կարծես հանուն չհարկման:

Արագացված ամորտիզացիայի թույլտվության հարկային արտոնության տարածումը բոլոր հարկատուների նկատմամբ ճիշտ չէ: Անհրաժեշտ ենք համարում, որ հանրապետության կառավարության կողմից առանձնացվեն տնտեսության այն ոլորտները, որոնք կարող են ստանալ արագացված ամորտիզացիայի թույլտվության հարկային արտոնություն: Բացի դրանից, անհրաժեշտ է կարևորել նաև արագացված ամորտիզացիայի հարկային արտոնության նպատակը, որոնցից մեկը կարող է լինել, օրինակ, ներդրումների խթանումը: Արագացված ամորտիզացիայի թույլտվության հարկային արտոնության նպատակը անհրաժեշտ է ամրագրել օրենսդրորեն և վերահսկողություն իրականացնել դրանց կատարման նկատմամբ: Ուստի, բնականաբար, փոփոխության կարիք ունի արագացված ամորտիզացիայի հարկային արտոնություն սահմանող «Շա-

հուֆահարկի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ կետը:

**Եկամտահարկի մասով:** «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքը տարբերակում է ոչ ռեզիդենտների և ռեզիդենտների հարկումը՝ խախտելով հարկման համընդհանրության սկզբունքը: Հարկման նման մոտեցումը, որն իր արտացոլումն է ստացել նաև «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում, նպաստում է այնպիսի բացասական ազդեցությունների ակտիվացմանը, ինչպիսիք են հայաստանցիների կողմից օտարերկրացիների և մասնավորապես սիրիացիների ու իրանցիների անվան տակ ձեռնարկատիրական գործունեության ծավալումը, հայաստանյան ծագում ունեցող գումարների մի մասի արտահոսքը արտասահման՝ որպես հայաստանցու ձեռնարկատիրական գործունեությանը «նպաստող» միջնորդավճար, ինչպես նաև արտասահմանցիների պարագայում հարկի մեծության օրենսդրական նվազումը, իսկ առանձին դեպքերում նույնիսկ դրանց գանձման անհնարինությունը: Նշված բացասական ազդեցություններն առավել ցայտուն դրսևորվում են Իրանից և Սիրիայից ներկրվող ապրանքների իրացման ոլորտում, որոնց պարագայում եկամտահարկի համեմատաբար չնչին գումարներ են մուտք պետական բյուջե, քանի որ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց հարկվող եկամուտը դիտարկվում է որպես հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտների (բացառությամբ արտաքին տնտեսական գործունեության<sup>5</sup> հետ կապվածի) և ռեզիդենտների համար օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերություն, որոնց նկատմամբ կիրառվող եկամտահարկի դրույքաչափերը սահմանված են. 5%՝ ապահովագրությունից ստացված ապահովագրական հատուցումների և փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտներից և 10%՝ ռոյալթիներից, տոկոսներից, գույքի վարձակալությունից, ձեռնարկատիրական գործունեությունից և հայաստանյան այլ աղբյուրներից ստացված եկամուտներից<sup>6</sup>: Դա այն դեպքում, երբ ռեզիդենտի եկամտահարկի դրույքաչափը կազմում է 20% (հարկային գործակալի միջոցով հարկվող եկամուտները 80 հազար դրամը գերազանցելու և հարկային գործակալի միջոցով չհարկվող եկամուտները 960 հազար դրամը գերազանցելու դեպքում):

Փաստորեն ոչ ռեզիդենտները օգտվում են ռեզիդենտներին տրված համախառն եկամտից նվազեցումներ կատարելու իրավունքից, որին գումարվում է նաև արտաքին տնտեսական գործունեությունը չհարկելու արտոնությունը (այսինքն՝ նշված դեպքով կատարվում է համախառն եկամտից ևս մեկ դեպքով նվազեցում), ինչպես նաև ստացված հարկվող եկամտից նվազեցումը, երբ եկամուտները ոչ ռեզիդենտին վճարվում են հարկային գործակալի միջոցով, այսինքն՝ գանձվում է կրկնակի պակաս եկամտահարկ, քան ռեզիդենտի հարկվող

<sup>5</sup> Եկամտահարկի և շահութահարկի առումով ոչ ռեզիդենտի արտաքին տնտեսական գործունեություն է համարվում բացառապես ոչ ռեզիդենտի անունից իրականացված, նրան պատկանող ապրանքները Հայաստան ներկրելու հետ կապված գործունեությունը, որի դեպքում Հայաստանի հարկային ռեզիդենտն ապրանքների սեփականատեր է դառնում մինչև Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելը:

<sup>6</sup> «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», Առաջին մաս, Եր., 2009, հոդ. 4, կետ 2, 22 և 35 հոդ.:

եկամտի նույն ծավալի եկամտահարկն է:

Իրավիճակը բոլորովին այլ է, երբ ոչ ռեզիդենտին եկամուտները վճարվում են ոչ հարկային գործակալի միջոցով (ապրանքների ու մատուցվող ծառայությունների մանրածախ իրացումը, օրինակ՝ տոնավաճառներում) և հայաստանյան աղբյուրներից ոչ ռեզիդենտների եկամտահարկի գանձումը, հատկապես շոշափելի գումարների դեպքում, դառնում է երբեմն անհնարին: Դրանց մասին են խոսում օտարերկրյա քաղաքացիություն ունեցող անհատ ձեռներեցների (ձեռնարկատերերի) հարկային պարտավորությունների մեծ ծավալներն ու դրանց գանձման անհնարինությունը (հանրապետությունից դրանց միտումնավոր բացակայելու պատճառով), որտեղ գուցե իրենց մեղքի բաժինն ունեն ձեռնարկությունների գրանցման պետական ռեգիստրի և ներքին գործերի մարմինները: Բայց փաստն այն է, որ եկամտահարկ վճարող այդպիսի անհատ ձեռներեցները դառնում են «անորսալի» հարկատուներ:

Հարկման այդպիսի արտոնությունների սահմանմամբ ոչ ռեզիդենտ հարկ վճարողների ձևավորումը պետական բյուջեի եկամտային բազան ամրապնդելու տեսանկյունից տնտեսապես արդարացված չէ նաև հարկման արդյունավետության նվազման, հայաստանյան ծագում ունեցող գումարները «միջնորդավճարի» ու զուտ կամ մաքուր եկամտի ձևով արտասահման արտահոսելու պատճառներով:

Դրա հետ մեկտեղ, ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք «ձեռք են բերում» հարկային այլ արտոնություններ, որոնք կապված են նրանց գործունեության վայրի առանձնահատկությունների հետ, քանի որ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք գործունեություն իրականացնում են ոչ միայն իրենց ստորաբաժանումների<sup>7</sup>, այլև ձեռնարկատիրական գործակալի<sup>8</sup> միջոցով: Եթե ոչ ռեզիդենտների գործունեության իրականացման վայրը ստորաբաժանումների պարագայում ոչ ռեզիդենտի ստորաբաժանման գրանցման վայրն է, իսկ ձեռնարկատիրական գործակալի պարագայում՝ ձեռնարկատիրական գործակալի վայրը, ապա թե՛ մեկի և թե՛ մյուսի բացակայության դեպքերում ոչ ռեզիդենտի գործունեության իրականացման վայր են ոչ ռեզիդենտի՝ ՀՀ-ում գտնվող գրասենյակը, գործակալությունը, հանքահորը, գործարանը, ֆաբրիկան, հանքավայրը,

<sup>7</sup> Դրանք ՀՀ-ում պետական գրանցում ստացած ոչ ռեզիդենտի առանձնացված ստորաբաժանումներն են:

<sup>8</sup> Դրանք ռեզիդենտ համարվող իրավաբանական անձը, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններն ու ֆիզիկական անձինք են, որոնք ոչ ռեզիդենտի համար կատարվող գործունեությունը (կապված գնումներ կատարելու և այլ պայմանագրեր կնքելու, երրորդ անձանց հետ գործակալական պայմանագրային հարաբերություններ հաստատելու, լիազորող անձին պատկանող ապրանքները կանոնավոր ձևով կուտակելու, պահեստավորելու և լիազորող անձի անունից այլ անձանց այդպիսի ապրանքներ առաքելու, առևտրական պայմանագրեր կնքելիս կամ գնման պատվերներ կատարելիս լիազորող անձին ներկայացնելու հետ) ոչ ռեզիդենտի կողմից վերահսկվում է հանձնարարության պայմանագրի, լիազորագրային կառավարման պայմանագրի կամ լիազորագրի հիման վրա կամ այլ ձևով: Այս ձևով գործունեություն իրականացնելու դեպքում ոչ ռեզիդենտի գործունեության իրականացման վայր է համարվում ձեռնարկատիրական գործակալի գտնվելու վայրը:

պայմանագրային, շինարարական խորհրդատվական և այլ աշխատանքներ ու մատուցվող ծառայություններ իրականացնելու և դրանք վերահսկելու վայրը: Սակայն բոլոր երեք դեպքերում էլ անհասկանալիորեն ոչ ռեզիդենտի հարկվող շահույթը նվազում է նաև նրա ստորաբաժանման և գործունեության վայրի վրա կատարված ծախսերի և ՀՀ-ում իրականացվող գործունեության կապակցությամբ կրած կորուստների չափով<sup>9</sup>, որը տնտեսապես արդարացված չէ, և ռեզիդենտ հարկատուները հայտնվում են անհավասար հարկման դաշտում: Բացի դրանից, եթե ռեզիդենտը շահութահարկի կանխավճարային մուծումները (որն, ըստ էության, պետությանը հատկացվող անտուկոս վարկ է) կատարում է յուրաքանչյուր ամիս, ապա ոչ ռեզիդենտը՝ կիսամյակը մեկ (եթե նախորդ տարվա շահութահարկի գումարը գերազանցում է 2.0 մլն դրամը): Ճիշտ է, որ երբ ոչ ռեզիդենտների նկատմամբ խստացվում է հարկային ռեժիմը, ապա նվազում է արտասահմանյան գործարարների մուտքը հանրապետություն այն պետություններից, որոնցում հարկման ռեժիմներն իրենց ռեզիդենտների համար ավելի մեղմ են: Ուստի, հարկման տեսանկյունից արտասահմանյան գործարարների համար Հայաստանի գրավչության խնդիրը հնարավոր է լուծել միայն հանրապետության ոչ ռեզիդենտների նկատմամբ կիրառվող հարկման ռեժիմն արտասահմանում իրենց ռեզիդենտների նկատմամբ կիրառվող հարկման ռեժիմների համեմատությամբ մեղմացնելու ճանապարհով: Բայց, նկատի ունենալով այն փաստը, որ «Շահութահարկի մասին» և «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքները բավականին ազատականացված են նույնիսկ ռեզիդենտ հարկատուների համար և ելնելով ոչ ռեզիդենտների համար այդպիսի հարկային արտոնություններ սահմանելու հետևանքով առաջացող բացասական ազդեցությունների ակտիվացումներից, անհրաժեշտ ենք համարում ուժը կորցրած ճանաչել շահութահարկի և եկամտահարկի գծով ոչ ռեզիդենտների հարկման տարբերակումը:

Հարկման մոտեցումների կատարելագործման առումով կարևոր քայլ կարող է հանդիսանալ արտադրության բազային գործոններից տնտեսական ճանապարհով հարկման բացառումը: Այդ տեսակետից դրան միտված կարևորագույն քայլ պետք է դառնա եկամտահարկի չհարկվող նվազագույն շեմի բարձրացումը, որը ներկայումս կազմում է 30000 դրամ և բավարար համարել չի կարելի: Բավական է նշել, որ միայն կոմունալ վարձերի (էլեկտրաէներգիա, ջուր, աղբահանություն և այլն), գույքային հարկերի և սպառողի հացի գինը արդեն գերազանցում է չհարկվող նվազագույն շեմի սահմանված մեծությունը: Բացի դրանից, այն տնտեսապես արդարացված չէ նաև այն պատճառով, որ այն գործատուներին ու վարձու աշխատողներին փոխհամաձայնեցված կարգով մղում է գործունեության ստվերային դաշտ արհեստականորեն նվազեցնելով ամսական հարկվող եկամտի չափը: Բավական է նշել, որ, համաձայն հաշվետվությունների, որոնք գործատուները ներկայացրել են կենսաթոշակային հիմ-

<sup>9</sup> «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», Առաջին մաս, Եր., 2009, էջ 105, 114:

նադրամ, վարձու աշխատողների 68 տոկոսին վճարած աշխատավարձերը կազմում են ընդհանուր աշխատավարձերի 40 տոկոսը կամ շուրջ 50 մլրդ դրամ<sup>10</sup>: Դեռ ավելին, այս աշխատողները կազմել են բնակչության անապահով մասը, որի արդյունքում ավելանում է նաև անապահով խավերին տրվող փոխհատուցումների ծավալը, այսինքն՝ եկամտահարկի չհարկվող նվազագույն շեմի տնտեսապես չարդարացված լինելը նոր հիմնախնդիր է առաջացնում և ակտիվացնում այնպիսի բացասական ազդեցություններ, ինչպիսիք են գործատուների կողմից վարձու աշխատողների ստվերային վարձատրությունը (քանի որ 20000 դրամից պակասը հատկապես հաստատագրված վճարով հարկվող գործունեության տեսակների ոլորտներում այն գումարը չէ, որ աշխատողին «կապի» իր աշխատատեղի հետ) և այլն, որոնց արդյունքում պետական բյուջե ոչ միայն պակաս գումարներ են մուտքագրվում, այլև պետական բյուջեից անհրաժեշտից ավելի գումարներ են ծախսվում, իսկ հարկային մարմինների և կենսաթոշակային հիմնադրամի համար ձևավորվում է «ավելորդ» և պակաս արդյունավետ վերահսկողության դաշտ: Հետևաբար՝ անհրաժեշտ է ոչ միայն բարձրացնել եկամտահարկի ամսական չհարկվող նվազագույն սահմանը (շեմը), այլև այն հավասարեցնել ապրուստի նվազագույնին: Ընդ որում՝ անհրաժեշտ ենք համարում եկամտահարկի հաշվարկման մոտեցումների հիմքում դնել ռեզիդենտի ոչ թե անձնական, այլ ընտանիքի բոլոր անդամների եկամուտները, ինչպես արվում է Արևմտյան Եվրոպայի բազմաթիվ երկրներում (Մեծ Բրիտանիա, Նորվեգիա, Գերմանիա, Իտալիա և այլն)<sup>11</sup>, որտեղ եկամտահարկի գումարները տարբեր են լինում միայնակների, ամուսնացածների, երեխաներ ունեցողների համար և այլն:

«Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ հանրապետությունում «ռեզիդենտների վճարված եկամտահարկը պակասեցվում է հարկի այն գումարի չափով, որը նրանից գանձվել է օտարերկրյա պետություններում՝ դրանց օրենսդրությանը համապատասխան, բացառությամբ այն եկամուտներից օտարերկրյա պետություններում գանձված հարկի գումարի, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ենթակա է նվազեցման համախառն եկամտից»: Ընդ որում պակասեցվող կամ հաշվանցվող հարկի գումարի չափը չի կարող գերազանցել օտարերկրյա պետություններում ստացված եկամտից՝ օրենքի դրույթներին համապատասխան Հայաստանում վճարման ենթակա հարկի գումարը: Բնականաբար հարկման նման ձևակերպումը գործնականում իրագործելը քիչ հավանական է, քանի որ Հայաստանի հարկային ռեզիդենտը հնարավորություն չի ունենա օտարերկրյա պետությունից վերցնելու կամ պահանջելու համախառն եկամտից նվազեցվող եկամուտների վերաբերյալ հայկական հարկային օրենսդրությանը համապա-

<sup>10</sup> Բարխուդարյան Լ., Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր. Պետական ֆինանսները և աղքատության կրճատումը, Եր., 2002, 33 էջ, էջ 15:

<sup>11</sup> Русакова И.Г., Кашин В.А., Толкушкин А.Б. и др.: Налогоинналогообложение. -М.: ЮТИТИ, 2000, 495 с.; Стиглиц Дж. Ю.: "Экономика государственного сектора". Пер. с англ., М.: Изд-во МГУ, ИНФРА-М, 1997, 720 с., стр. 476.

տասխանող տեղեկանք (հայկական հարկային օրենսդրությունը չիմանալու կամ դրա անհնարինության պատճառով): Արդյունքում եկամտահարկի հաշվարկման հիմք կարող են հանդիսանալ հարկային ռեզիդենտի ճիշտ կամ սխալ ներկայացվող գրավոր հայտարարությունը և հարկային մարմնի կողմից այն ընդունելու կամ չընդունելու սուբյեկտիվ ցանկությունը, ինչպես նաև համապատասխան երկրի հարկային մարմնի կողմից կատարվող կամ կատարվելիք հարցումը, որը գործնականում քիչ կիրառական է հատկապես ոչ ռուսալեզու պետությունների պարագայում: Դեռ ավելին, Հայաստանի հարկային ռեզիդենտները հանրապետություն են վերադառնում, շատ դեպքերում նույնիսկ առանց հարկված գումարի չափի վերաբերյալ տեղեկանք ունենալու, իսկ երբ բանկային փոխանցմամբ հանրապետությունում ստացվում են արդեն հարկված եկամուտները, ապա սկսվում են տարածայնությունները հարկային ռեզիդենտների և հարկային մարմինների միջև, որի արդյունքը, որպես կանոն, շատ հաճախ լինում է եկամտի կրկնակի հարկումը<sup>12</sup>: Վերջինիս պատճառները կապված են ապրանքների, ծառայությունների, կապիտալի, եկամուտների մշտական շարժման և այդ եկամուտները ստացած անձանց տեղաշարժի ու նրանց հարկային կարգավիճակի պարզաբանման հետ<sup>13</sup>, քանի որ մշտական տեղաշարժի մեջ են գտնվում նաև եկամուտներ ստացող անձինք, իսկ տարբեր պետություններում հարկման բազայի ընտրության կամ հարկման ենթակա եկամուտների որոշման մեթոդաբանության մեջ գոյություն ունեն տարբերություններ: Դրա հետ մեկտեղ տնտեսական կյանքի միջազգայնացման գործընթացի ներկայիս զարգացումներն ավելի են խորացնում ու «անտեսանելի դարձնում» կրկնակի հարկման հնարավորությունները, որոնք առաջանում են այն դեպքերում, երբ.

1. օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը երկու և ավելի պետություններում ենթարկվում է հարկման այդ պետություններում ստացած միևնույն եկամտի կամ տնօրինվող կապիտալի մասով,
  2. տվյալ պետության քաղաքացին, ստանալով եկամուտ կամ տնօրինելով կապիտալ, մեկ այլ պետության մեջ ենթարկվում է հարկման միևնույն օբյեկտների գծով ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ երկրի ազգային օրենսդրությանը համապատասխան,
  3. երկուսից ավելի պետություններում միևնույն հարկ վճարողը ենթարկվում է հարկման ստացված ամբողջ եկամտի կամ տնօրինվող կապիտալի մասով:
- Բոլոր թվարկված դեպքերում էլ կրկնակի հարկումը ոչ բարենպաստ ներգործություն է ունենում տնտեսական համակարգերի ինտեգրացման, տնտեսական հավասար մրցակցության ծավալման, միասնական շուկայի ստեղծման,

<sup>12</sup> Կրկնակի հարկումը միևնույն հարկատեսակով, հարկման միևնույն օբյեկտի նկատմամբ և միևնույն ժամանակահատվածում, մեկ հարկատուի երկու և ավելի պետություններում միաժամանակ հարկվելն է:

<sup>13</sup> Fuchs B. Transnationaler Vertus tasgleich bei internationalen Unternehmungen and Konzernen im Steuerrecht. Bern, 1993, S. 256, 17-19, 164-165. (Куксин И. Н. Российская налоговая практика: История. Теория и практика, СПб., Академия МВД, России. 1997) pp. 17-19, 164-165, 111.



ապրանքների ու ծառայությունների և կապիտալի ազատ փոխանակման ու տեղաշարժի վրա:

Վերոհիշյալ ներգործությունների բացասական ազդեցությունները չեզոքացնելու և կրկնակի հարկումը բացառելու կամ կրկնակի հարկման ծանրությունը նվազեցնելու ուղիներ կարող են հանդիսանալ ազգային հարկման մոտեցումների կատարելագործումը և միջազգային հարկային համաձայնագրերի<sup>14</sup> կնքումը, քանի որ միջազգային իրավունքը կրկնակի հարկման նկատմամբ արգելակող ընդհանուր բնույթի կանոններ չի բովանդակում:

Կրկնակի հարկման նշված երկու ուղիները պետք է միմյանց փոխլրացնեն և գործեն մեկը մյուսի հետ փոխկապակցված: Այսպես, եթե ազգային հարկային օրենսդրությամբ հարկային արտոնության տրամադրումը նպատակաուղղվում է հայրենական տնտեսվարող սուբյեկտների համար բարենպաստ պայմանների ձևավորմանը, ապա օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների համար այդ հանգամանքը պետք է պայմանավորված լինի երկու երկրների միջև ֆինանսատնտեսական հարաբերությունների զարգացման աստիճանով:

Միջազգային կրկնակի հարկման բացառման նպատակով միմյանց միջև միջազգային հարկային համաձայնագիր կնքող պետությունները պետք է պարտավորվեն.

- ա) սահմանելու կրկնակի հարկման բացառման սխեմա, որը կարող է իրականացվել յուրաքանչյուր պայմանավորվող պետությանը եկամուտների կամ գույքի այս կամ այն տեսակի հարկման բացառիկ իրավունքն ամրագրելու միջոցով,
- բ) որոշելու կրկնակի հարկման բացառման մեխանիզմներն այն դեպքերում, երբ եկամտի կամ գույքի հարկման իրավունքը թողնվում է տվյալ պետության իրավասությանը,
- գ) պաշտպանելու մեկ պետության հարկ վճարողին մեկ այլ պետության մեջ խտրականություն բովանդակող երևույթներից,
- դ) նախատեսելու տեղեկատվության փոխադարձ փոխանակում կրկնակի հարկման բացառման նպատակով:

Հարկ է նշել, որ միջազգային հարկման պրակտիկայում լայն տարածում են ստացել կրկնակի հարկումից խուսափելու հետևյալ երեք հիմնական մեթոդները՝ բաշխման, հարկային հաշվանցման և հարկային նվազեցման:

---

<sup>14</sup> Միջազգային կրկնակի հարկման համաձայնագրի (կոնվենցիայի) մոդելային փաստաթուղթը երկկողմ հարկային համաձայնագրի նախագիծ է, որը բաղկացած է 30 հոդվածներից: Այս համաձայնագրի նախագիծն օգտագործվում է որպես ուղեցույց շահագրգիռ պետությունների միջև բանակցություններ վարելու և անհրաժեշտ փաստաթղթեր նախապատրաստելու համար, քանի որ կրկնակի հարկման հիմնախնդիրը դիտվում է որպես միջազգային համագործակցության ապահովման կարևոր նշանակություն ունեցող հարց: Միջազգային կրկնակի հարկման համաձայնագրի մոդելը մշակվել ու նախապատրաստվել է ՄԱԿ-ի Տնտեսական համագործակցության ու զարգացման կազմակերպության ֆինանսական հարցերով զբաղվող հանձնաժողովի կողմից (1977, 1980, 1981թթ. խմբագրությամբ): Куксин И.Н. Российская налоговая практика: История. Теория и практика, СПб., Академия МВД, России. 1997, стр. 108-109.

**Առաջին.** բաշխման մեթոդի ժամանակ պետությունը հարկման չի ենթարկում այն եկամուտը կամ հրաժարվում է հարկել հարկման օբյեկտի այն մասը, որը ըստ հարկային համաձայնագրի, հարկման է ենթարկվել մյուս պետության մեջ: Այս մեթոդն, ըստ էության, պայմանավորվող պետությունների միջև հարկման օբյեկտներն իրար մեջ բաշխելու գործընթաց է, որը գրականության մեջ հայտնի է նաև «հարկից ազատման սկզբունք» անվանումով<sup>1</sup>:

**Երկրորդ.** հարկային հաշվանցման մեթոդի ժամանակ պետությունը, հաշվարկելով հարկ վճարողի համախառն եկամուտը, այդ թվում նաև՝ այլ պետություններում ստացվածը, գանձում է կատարում ընդհանուր հաշվարկված հարկի գումարի և այլ պետություններում վճարված հարկի գումարի տարբերության չափով<sup>2</sup>: Այսինքն, եթե բաշխման մեթոդի ժամանակ հարկից ազատումը կիրառվում է ստացված եկամուտների հաշվանցման նկատմամբ, ապա հարկային հաշվանցման մեթոդի ժամանակ՝ միայն հաշվարկված ու վճարված հարկերի նկատմամբ:

**Երրորդ.** հարկային նվազեցման մեթոդը, որը նաև անվանվում է «հարկային զեղչ», ունի հետևյալ բնութագրումը. արտասահմանում վճարված հարկի գումարի չափով նվազեցվում է հարկման ենթակա գումարի չափը, և հետո միայն որոշվում հարկման ենթակա գումարը: Հարկ է նշել, որ հարկային նվազեցումն ուղղակիորեն առնչվում է հարկման բազայի հետ, և այս մեթոդը գործնական կիրառման տեսանկյունից ավելի քիչ շահեկան է հենց հարկ վճարողի համար, քան հարկային հաշվանցումը: Այս առումով հարկ է նկատել, որ մի դեպքում այլ երկրում վճարված հարկի գումարի չափով է նվազեցվում տվյալ պետության մեջ վճարման ենթակա հարկի գումարը, իսկ մյուս դեպքում հիշյալ նվազեցումը կատարվում է հարկման ենթակա եկամտից:

Կրկնակի հարկման բացառման գործընթացներում կարևոր քայլ պետք է համարել.

- ա) միջազգային հարկային համագործակցության ընդլայնման ու զարգացման շրջանակներում Միավորված ազգերի կազմակերպության մասնագիտացված հիմնարկների կողմից նախապատրաստված և հրապարակված «Համաշխարհային հարկային օրենսգրքի հիմունքները» մոդելային փաստաթուղթը<sup>3</sup>, որը համարվում է տիպային, նրանում մշակված ու բերված

<sup>1</sup> Основы налогового права. Под. ред. С.Г. Пепеляева. М.: Инвест-Фонд, 1995. стр. 144, Налоги и налоговое право. Под ред. А. В. Брызгалина, М.: Аналитика-Пресс, 1997, стр. 241.

<sup>2</sup> Այս մեթոդը գրականության մեջ հայտնի է նաև «հարկավարկային սկզբունք» կամ «հարկային վարկ» կամ «վարկ արտասահմանյան հարկի դիմաց» անվանումներով: Основы налогового права. Под. С.Г.Пепеляева. М. Инвест-Фонд, 1995. стр.144, Налоги и налоговое право. Под ред. А. В. Брызгалина, М.: Аналитика-Пресс, 1997. стр.241, Козырин А. Налоговое право зарубежных стран: вопросы теории и практики. М.: Манускрипт: 1993. стр.44-45:

<sup>3</sup> Ward M. Husce. Donald S. Lubex. The bases of the world Tax lawbook N-Y. 1994 Համաշխարհային հարկային օրենսգրքի դրույթների մեկնաբանությունների մասին ավելի մանրամասն տե՛ս Бутаков Д. Основы Мирового налогового кодекса. Финансы, 1996, № 8, էջ 23:

ցուցանիշները կրում են պայմանական, իսկ արտացոլված դրույթները՝ երաշխավորական բնույթ: Դրա հետ մեկտեղ, պետությունների համագործակցության համատեքստում «Օրենսգրքում» առանձնակի նշանակություն է տրվում միջազգային հարկային իրավունքի ձևավորմանը և այդ հարաբերությունները կարգավորող օրենսդրական ակտերի միասնականացմանն ու համապատասխանեցմանը, իսկ «Օրենսգրքի» կիրառելիության համար անհրաժեշտ նախապայմաններից մեկն է համարվում ընկերությունների շահութահարկի ու քաղաքացիների եկամտահարկի հաշվարկման ու վճարման կարգերի նույնացումը և դրանց միավորումը մեկ ընդհանուր հարկատեսակի՝ եկամտահարկի մեջ, որի դրույքաչափն առաջարկվում է միասնականացնել բոլոր հարկատուների համար և այն սահմանել 30, իսկ արտասահմանյան ներդրողների համար՝ 15 տոկոս, որն, ըստ հեղինակների, հանգեցնելու է ներդրումների խթանմանը և հարկման բազայի ընդլայնմանը:

- բ) 1991 թվականի դեկտեմբերի 8-ին ստորագրված Անկախ պետությունների համագործակցության ստեղծման մասին համաձայնագիրը, որի դրույթների շրջանակներում մասնակից պետությունները պարտավորվել են ապահովել Խորհրդային Միության կողմից արտասահմանյան պետությունների հետ գույքի և եկամուտների կրկնակի հարկման բացառման մասին նախկինում կնքված համաձայնագրերի պահանջների կատարման ապահովումը: Միջազգային հարաբերություններում նմանաբնույթ համագործակցության ձևավորումը պայմանավորված էր մի կողմից ԱՊՀ անդամ-պետությունների տնտեսական ոլորտների ու տնտեսվարող սուբյեկտների փոխկապվածությանը և ինտեգրացման բարձր մակարդակով, իսկ մյուս կողմից՝ հետխորհրդային տարածքում միասնական շուկայի ձևավորման համար ներդաշնակ հարկային համակարգերի ստեղծման անհրաժեշտությամբ: Բացի այդ, գույքի և եկամտի կրկնակի հարկումից խուսափելու կամ նման դեպքերը բացառելու վերաբերյալ համաձայնագրերի ստորագրման ժամանակ միասնական մոտեցումներ ցուցաբերելու նպատակով ԱՊՀ մասնակից պետությունների կառավարությունների ղեկավարները Տաշքենդում 1992 թվականի մայիսի 15-ին ստորագրել են արձանագրություն գույքի և եկամտի կրկնակի հարկումից խուսափելու տիպային համաձայնագրի հաստատման մասին: Հիշյալ փաստաթղթով կողմերը պարտավորվել են տվյալ ոլորտին առնչվող հարցերը ինչպես միմյանց միջև, այնպես էլ երրորդ երկրների միջև կանոնակարգել՝ հիմք ընդունելով տվյալ տիպային համաձայնագրի դրույթները:

Ինչպես տեսնում ենք, կրկնակի հարկման բացառման իրական ճանապարհը օտարերկրյա պետությունների (առաջին հերթին հայաշատ) հետ կրկնակի հարկումը բացառող պայմանագրերի կնքումն է, որոնք առկա են Ռուսաստանի Դաշնության (ստորագրվել է 1996թ. դեկտեմբերի 28-ին և գործողության մեջ է դրվել 1999թ. հունվարի 1-ից), Ուկրաինայի (ստորագրվել է 1996թ. մայիսի 14-ին

և գործողության մեջ է դրվել 1997թ. հունվարի 1-ից), Թուրքմենիայի (ստորագրվել է 1997թ. հունիսի 5-ին և գործողության մեջ է դրվել 2000թ. հունվարի 1-ից), Վրաստանի (ստորագրվել է 1997թ. նոյեմբերի 18-ին և գործողության մեջ է դրվել 2001թ. հունվարի 1-ից), Բելառուսի (ստորագրվել է 2000թ. հուլիսի 19-ին և գործողության մեջ է դրվել 2002թ. հունվարի 1-ից) հետ և այլն<sup>1</sup>: Բայց քանի որ դա երկարատև ու շարունակական գործընթաց է, ապա նպատակահարմար է «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Հայաստանի հարկային ռեզիդենտների՝ Հայաստանից դուրս ստացված եկամտի գումարը չի մտցվում Հայաստանում հայտարարագրվող տարեկան եկամտի ընդհանուր գումարի մեջ, այլ հարկվում է առանձին՝ օտարերկրյա պետություններում նրանց օրենսդրությանը համապատասխան հաշվարկված (գանձված) հարկի և այդ եկամուտներից Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան հաշվարկված հարկի դրական տարբերության հաշվով, եթե տվյալ օտարերկրյա պետության հետ Հայաստանի Հանրապետությունն ունի կրկնակի հարկումը բացառող երկկողմ պայմանագիր»: Նման ձևակերպման պայմաններում.

նախ՝ բացառվում է ստացված եկամտի կրկնակի հարկումը, որը բխում է ոչ միայն հարկման սկզբունքների պահանջներից, այլև դրսում «դառը քրտինքով իր ընտանիքի ու պետության համար եկամուտ աշխատած քաղաքացու շահերից»:

Երկրորդ՝ գանձման ենթակա հարկի հաշվարկը հարկային մարմինները կատարում են միջպետական երկկողմ պայմանագրերի պահանջով հանրապետություն ուղարկվող հարկային անհրաժեշտ փաստաթղթերի հիման վրա՝ բացառելով հարկային մարմինների ու հարկային ռեզիդենտների միջև օրենսդրության անկատարությամբ պայմանավորված տարաձայնությունները:

Երրորդ՝ հարկային ռեզիդենտը «անմեղ մեղավոր» չի դառնում և «անհարկի քաջքուկների» մեջ չի հայտնվում կապված հանրապետության իշխանությունների միջպետական աշխատանքների ոլորտում ունեցած բացթողումների հետ:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», Առաջին մաս, Եր., 2009:
2. «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», Առաջին մաս, Եր., 2009:
3. Հայաստանի հարկային համաձայնագրերը, Եր.: ՀՀ պետական եկամուտների նախարարություն, 2002:
4. Բարխուդարյան Լ., Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր. Պետական ֆինանսները և աղքատության կրճատումը, Եր., 2002, 33 էջ:
5. Русакова И.Г., Кашин В.А., Толкушкин А.Б. и др.: Налогоиналогообложение.

---

<sup>1</sup> Հայաստանի հարկային համաձայնագրերը, Երևան, ՀՀ պետական եկամուտների նախարարություն, 2002:

- М.: ЮТИТИ, 2000, 495 с.; Стиглиц Дж. Ю.: "Экономика государственного сектора". Пер. с англ., М.: Изд-во МГУ, ИНФРА-М, 1997, 720 с.
6. Fuchs B. Transnationaler Vertus tasgleich bei internationalen Unternehmungen and Konzernen im Steuerrecht. Bern, 1993, S. 256, 17-19, 164-165. (Куксин И.Н. Российская налоговая практика: История. Теория и практика, СПб., Академия МВД, России. 1997).
  7. Основы налогового права. Под. ред. С.Г.Пепеляева. М.: Инвест-Фонд, 1995. Налоги и налоговое право. Под ред. А.В.Брызгалина, М.: Аналитика-Пресс, 1997.
  8. Ward M. Husce. Donald S. Lubex. The bases of the world Tax lawbook N-Y. 1994 Համաշխարհային հարկային օրենսգրքի դրույթների մեկնաբանությունների մասին ավելի մանրամասն տե՛ս Бутаков Д. Основы Мирового налогового кодекса. Финансы, 1996, № 8.

**Տիգրան Հարությունյան**  
**Աննա Հարությունյան**

**ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ  
 ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ  
 ՈՒՂԵՆԻՇԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍՈՎ**

**Ամփոփագիր:** Հոդվածում ներկայացվել են շահութահարկի հաշվարկման մոտեցումները, որոնք կարգավորվում են «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում: Բացի այդ վերլուծվել են շահութահարկի մասով գոյություն ունեցող խնդիրները՝ առաջարկելով բարեփոխել շահութահարկի հաշվարկումն ու դրույքաչափերը՝ ելնելով հարկման խթանող գործառույթի կիրառման անհրաժեշտությունից:

**Բանալի բառեր.** հարկային մարմին, շահութահարկ, սոցիալ-տնտեսական հարաբերություններ:

**Тигран Арутюнян**  
**Анна Арутюнян**

**ЗАКОНОДАТЕЛЬНЫЕ И МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ОРИЕНТИРЫ  
 СОВЕРШЕНСТВОВАНИЯ РАСЧЕТА НАЛОГОВЫХ ОБЯЗАТЕЛЬСТВ  
 ПО ПРЯМЫМ НАЛОГАМ**

**Резюме:** В статье представлены подходы к налогу на прибыль, которые регулируются Законом РА «О налоге на прибыль». Кроме того, проанализированы существующие проблемы с налогами на прибыль, что говорит об улучшении

расчета налога на прибыль и ставок, основанных на необходимости использования функции освобождения от налогов.

**Ключевые слова:** налоговый орган, корпоративный налог, социально-экономические отношения.

**Tigran Harutyunyan**

**Anna Harutyunyan**

## LEGISLATIVE AND METHODOLOGICAL GUIDELINES FOR IMPROVING CALCULATION OF TAX LIABILITIES ON DIRECT TAXES

**Abstract:** The article introduced profit tax calculation approaches that were regulated by the RA Law on Profit Tax. Moreover, the authors have analyzed the existing issues with respect to profit tax, proposing specific recommendation on the profit tax calculation and defining rates based on the need of applying tax-exempt function.

**Keywords:** Tax authority, profit tax, socio-economic relations.

## Դավիթ Հարությունյան

### ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱ- ՆԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍՈՎ

**Հողի հարկի մասով:** «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված են հարկային արտոնություններ, որոնք արդարացված չեն: Այսպես, օրինակ, հողի հարկից 100 տոկոսի չափով ազատվելու արտոնություն է սահմանված «հողային ռեֆորմի և սեփականաշնորհման ընթացքում ձևավորված գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների նկատմամբ՝ հողի սեփականության իրավունքի» ձեռքբերման ամսից սկսած երկու տարվա ընթացքում<sup>1</sup>, որը կարող է նպաստել այնպիսի դրական ազդեցությունների ակտիվացմանը, ինչպիսին հողի սեփականության իրավունքի ձեռքբերումն է: Սակայն ներկայումս նշված նախապայմաններով (հողային ռեֆորմ և սեփականաշնորհման ընթացք) ձևավորված գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների հողի սեփականության իրավունքի ձևակերպման երկու տարին հիմնականում լրացել է, հողային ռեֆորմը, կարելի է ասել, ավարտված է, սեփականաշնորհումը՝ նույնպես: Հետևաբար՝ այսպիսի հարկային արտոնության կիրառումը եթե 1990-ական թվականներին անհրաժեշտություն էր, ապա ներկայումս գործնականում կիրառություն ունենալ չի կարող: Ուստի անհրաժեշտ ենք համարում ուժը կորցրած ճանաչել «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի բ) կետով ամրագրված վերոհիշյալ հարկային արտոնությունը:

«Հողի հարկի մասին» ՀՀ օրենքը հողի հարկից 100 տոկոսի չափով ազատելու հարկային արտոնություն է սահմանում նաև «բնակավայրերում պետական սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման հողերի (հրապարակներ, փողոցներ, անցումներ, ճանապարհներ, զբոսայգիներ, պուրակներ, ջրամբարներ և այլն)»<sup>2</sup> նկատմամբ: Ընդ որում հարկային այս արտոնությունը սահմանվել է, երբ նշված հողերը եղել են պետական սեփականություն, իսկ հողի հարկը եղել և շարունակում է մնալ համայնքների բյուջեի եկամտի աղբյուր: Հարկային արտոնություն չսահմանելու դեպքում հողի սեփականատերը, այսինքն՝ պետությունը, համաձայն վերոնշյալ օրենքի 1-ին հոդվածի, ճանաչվում է հողի հարկ վճարող և պարտավորվում գումարը փոխանցել այն բյուջեին, որին ամրակցված է հողի հարկը, այսինքն՝ համայնքային բյուջե՝ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի<sup>3</sup>:

<sup>1</sup> «Հողի հարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», Առաջին մաս, Եր., 2009, էջ 298:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք: ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 21 (196), 21.06.2002, էջ 33:

Սակայն գործնականում դա կնշանակեր պետական բյուջեից գումարների հատկացում համայնքային բյուջեներին, բայց ոչ թե դրամաշնորհների (որն ընդունված մեխանիզմ է միջբյուջետային հարաբերություններում), այլ հողի հարկի ձևով, որի նախադեպը չկա միջբյուջետային հարաբերությունների համաշխարհային պրակտիկայում:

Ուստի հարկային արտոնության սահմանման միջոցով խնդրի լուծման այս տարբերակը համարում ենք ճիշտ, որը, սակայն, ունի թերություն այն հողերի մասով, որոնք հանձնված են վարձակալության, քանի որ դրանց դիմաց գանձվող վարձավճարները մուտքագրվել են ոչ թե համայնքային, այլ պետական բյուջե, այսինքն՝ երկրի օրենսդիր մարմինը գործել է երկակի ստանդարտով: Ներկայումս, երբ այդ հողերը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի պահանջով սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել են համայնքներին, և տեղի է ունեցել սեփականատիրոջ փոփոխություն, «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքում նույն ձևակերպմամբ շարունակում է պահպանվել հարկային այդ արտոնությունը:

Ելնելով վերը շարադրվածից և սեփականատիրոջ փոփոխության փաստից՝ անհրաժեշտ ենք համարում «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի դ) կետը ձևակերպել հետևյալ բովանդակությամբ. «...համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման հողերը (հրապարակներ, փողոցներ, անցումներ, ճանապարհներ, զբոսայգիներ, պուրակներ, ջրամբարներ և այլն)՝ բացառությամբ վարձակալության տրված հողերի»: Դա նշանակում է, որ համայնքային սեփականություն հանդիսացող հողերը վարձակալության հանձնվելուց հետո վարձակալները պետք է դառնան հողի հարկ վճարողներ, որի համար անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ կատարել «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածում և հողի հարկ վճարող ճանաչել նաև հողի վարձակալներին:

Միաժամանակ հարկ է նշել նաև, որ Հայաստանի Հանրապետությունում հողը ներկայումս հարկվում է ստանդարտ մոտեցումներով՝ անկախ այն բանից՝ հողն իր սեփականատերերին, մշտական ու ժամանակավոր օգտագործողներին, այսինքն՝ հողի հարկ վճարողներին եկամուտ բերո՞ւմ է, թե՞ ոչ, այսինքն՝ հողի հարկի չափը կախված չէ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից, այն սահմանված է հողակտորի միավոր մակերեսի համար տարեկան հաստատագրված վճարի ձևով, իսկ հողերը տարբերակված են միայն ըստ գյուղատնտեսական նշանակության և ոչ գյուղատնտեսական նշանակության: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հողի կադաստրային գնահատմամբ որոշված հարկային զուտ եկամուտը, իսկ ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար՝ հողի կադաստրային գնահատման արժեքը<sup>4</sup>, որոնց նկատմամբ կիրառվում են համապատասխանաբար 15 և 0.5-1.0 տոկոս հարկադրույքներ:

<sup>4</sup> «Հողի հարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 2:



Այսպիսի մոտեցումների պարագայում հողերը ամենաթանկ կապիտալից վերածվում են էժան կապիտալի, որոնք շատ դեպքերում չեն օգտագործվում կամ օգտագործվում են ընտանիքների կարիքները հոգալու նպատակով և միայն քիչ դեպքերում են վերածվում բիզնեսի օբյեկտի, քանի որ հողի սեփականատերը, դրանց մշտական ու ժամանակավոր օգտագործողները շատ հաճախ չեն ունենում անհրաժեշտ ֆինանսական հնարավորություններ՝ հողը որպես եկամտի հավելյալ աղբյուր ծառայեցնելու համար: Այդ ամենի արդյունքում հողերը առք ու վաճառքի օբյեկտի քիչ են վերածվում, չի ձևավորվում հողի շուկան (բացառությամբ Երևան քաղաքի) և այլն: Դրանից ելնելով անհրաժեշտ ենք համարում բարձրացնել հողի հարկադրույքները և վերարժեքավորել հարկման օբյեկտները (ներկայումս դրանց մեծությունները սիմվոլիկ են), որոնք կարող են չեզոքացնել վերոհիշյալ բացասական ազդեցությունները և հարկային արտոնություններ (հարկադրույքների նվազեցում, հարկադրույքի զրոյացում, հարկվող օբյեկտների հաշվարկում նվազեցումների մեխանիզմի կիրառում և այլն) սահմանել այն հողերի նկատմամբ, որոնք օգտագործվում են ըստ նշանակության և առավել բարձր արդյունավետությամբ: Հողի հարկի հաշվարկման այդպիսի մոտեցումների պարագայում կակտիվանան այնպիսի դրական ազդեցություններ, ինչպիսիք են գյուղական համայնքների բյուջեների մուտքերը, քաղաքից դեպի գյուղ կապիտալի տեղաշարժը և, դրանով պայմանավորված, աշխատատեղերի ստեղծումը մարզերում, ինչպես նաև չօգտագործվող հողերի վաճառքը արդյունավետ հողօգտագործողներին, որն առավել կարևոր է սակավահող Հայաստանի տնտեսության զարգացման համար:

**Գույքահարկի մասով:** «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված հարկային արտոնությունները սահմանափակ են և չեն բխում հարկման սկզբունքների պահանջներից: Այսպես, օրինակ, ջրամբարների մասով հարկային արտոնության սահմանումն արդարացված էր, երբ խմելու և ոռոգման ջուրը բնակչությանը տրվում էր ձրի: Այսօր, երբ հանրապետությունում ջուրը դիտարկվում է որպես ապրանք և վաճառվում է նրա տեղափոխման, պահպանման և այլ ծախսերի հաշվառմամբ որոշված սակագնով և ոչ զեղչ գներով, չարդարացված է դառնում դրանց գծով սահմանված հարկային արտոնության պահպանումը: Այդ առումով կարևորվում է «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի հարկային արտոնություններ սահմանող 15-րդ հոդվածի 2) կետի ուժը կորցրած ճանաչելը:

Գույքահարկի հաշվարկման կատարելագործման առումով անհրաժեշտ ենք համարում գույքահարկի հաշվարկման մեխանիզմներում կիրառել հետևյալ մոտեցումները.

- բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, ավտոտնակների<sup>5</sup> արժեքի մեծությունից գույքահարկը հաշվարկել և գանձել տարեկան զրոյական դրույքաչափով՝ նկատի ունենալով ազգաբնակչության մեծ չափերի

<sup>5</sup> Բացառությամբ հասարակական և արտադրական նշանակության ոչ բնակելի տարածքների:

հասնող աղքատության և նրանց միջև եկամուտները խիստ անհավասարաչափ բաշխվելու հանգամանքը:

- Անհատական բնակելի տների և ամառանոցային շինությունների մասով գույքահարկի դրույքաչափը սահմանել հանրապետությունում գործող բանկային ավանդի միջին տարեկան տոկոսի և ուղղիչ գործակիցների արտադրյալի չափով: Իսկ վերջիններիս համար որպես հիմք կարող են ընդունվել հաստատագրված վճարի հաշվարկման համար խանութի, կրպակի (տաղավարի) գտնվելու վայրի հետ կապված ուղղիչ գործակիցները: Գույքահարկի որոշման նման մոտեցումը կնպաստի այնպիսի դրական ազդեցության ակտիվացմանը, ինչպիսին է քաղաքացիների ազատ դրամական միջոցների ուղղակի կամ անուղղակի (բանկային ավանդների) եղանակով տեղափոխումը տնտեսության իրական հատված: Արդեն կառուցված անհատական բնակելի տների և ամառանոցային շինությունների մասով գույքահարկի դրույքաչափը առաջարկվում է սահմանել նույն մոտեցմամբ, բայց հետևյալ տարբերակմամբ. մինչև երեք տարվա վաղեմության շինությունների համար գույքահարկի դրույքաչափը սահմանել նոր կառուցվողի չափով, իսկ երեք տարուց ավելի վաղեմության շինությունների համար՝ գույքահարկի դրույքաչափը երրորդ տարվան հաջորդող յուրաքանչյուր տարվա համար պակասեցնել 10 տոկոսի չափով, որից հետո կիրառել գույքահարկի զրոյական դրույքաչափ 1990թ. և դրանից առաջ կառուցված շինությունների մասով: Այդպիսի շինությունների գույքահարկի դրույքաչափի սահմանման նման մոտեցումը կարող է մեղմացնել տնտեսության իրական հատվածից հանված գումարների բացասական ազդեցության ներգործությունը:
- Հասարակական և արտադրական նշանակության չօգտագործվող շինությունների համար գույքահարկի դրույքաչափը առաջարկվում է սահմանել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված ամորտիզացիոն մասհանումների տոկոսի (որոնք համապատասխանաբար կազմում են 5 և 10 տոկոս) և «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածով սահմանված ուղղիչ գործակիցների արտադրյալի չափով: Իհարկե, առանձին դեպքերում նմանատիպ շինությունների նկատմամբ (կախված նրանց տեխնիկական վիճակից ու կառուցման տարեթվից) նպատակահարմար է կիրառել հարկային արտոնություններ՝ նվազեցված կամ զրոյական դրույքաչափի ձևով: Գույքահարկի դրույքաչափերի սահմանման այսպիսի մոտեցումը կարող է ակտիվացնել այնպիսի դրական ազդեցություններ, ինչպիսիք են տնտեսական ճանապարհով այդպիսի շինությունների փոխանցումը դրանք չօգտագործողներից օգտագործողներին, համայնքային բյուջեների եկամտային բազայի ամրապնդումը և տնտեսության իրական հատված վաճառքից ստացած գումարների ներհոսքն ուղղակի կամ անուղղակի ձևով:

Մեր կարծիքով չօգտագործվող հասարակական ու արտադրական նշանակության շինությունները անհրաժեշտ է հարկել նաև շահութահարկով, այսինքն՝

համախառն եկամուտը չնվազեցնել այդպիսի շինությունների ամրոտիզացիոն մասհանումների չափով, որի բացակայությունը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի թերություններից մեկն է (օրենքի 12-րդ հոդված), իսկ օգտագործման կամ արտադրության մեջ գտնվող հասարակական ու արտադրական նշանակության շինությունները անհրաժեշտ է հարկումից «պաշտպանել» հարկային արտոնություններով: Այդ առումով նպատակահարմար է գույքահարկի և շահութահարկի մասով հարկային այդպիսի նպատակային արտոնությունների սահմանումը, որոնք նպաստում են պետությանն անհրաժեշտ դրական ազդեցությունների ակտիվացմանը և բացասական ազդեցությունների չեզոքացմանը, որոնք կարող են լինել ներդրումների խթանումը, նոր աշխատատեղերի ստեղծումը և այլն:

Փոխադրամիջոցների գույքահարկի չափը առաջարկվում է սահմանել որպես հարկման բազաներին գործող օրենքին համապատասխանող ձիաուժերի դրամական գումարի և «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածով սահմանված ուղղիչ գործակիցների արտադրյալ՝ հարկման մնացած մոտեցումները թողնելով անփոփոխ՝ բացառությամբ կազմակերպություններին պատկանող ու օգտագործվող փոխադրամիջոցների գույքահարկի, որոնց գծով նպատակահարմար է, ըստ նրանց օգտագործման ոլորտների, սահմանել հարկային արտոնություններ՝ դրանք կախվածության մեջ դնելով կազմակերպության կատարած աշխատանքների ու մատուցվող ծառայությունների աճի մեծությունից:

**Հաստատագրված վճարների մասով:** Շահութահարկի, եկամտահարկի և ավելացված արժեքի հարկի տնտեսագիտորեն չարդարացված և հարկման արդյունավետության պահանջի իրականացումը խոչընդոտող հարկային արտոնությունների կասեցման և հարկային օրենսդրության բարեփոխումների չհաջողված փորձ է գործունեության առանձին տեսակների և սահմանված պայմաններին բավարարող առանձին հարկատուների նկատմամբ հաստատագրված վճարների կիրառումը, որը ոչ միայն հակասում է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված միասնական հարկային համակարգի արդարացի սկզբունքին<sup>6</sup>, այլև առաջացնում է նոր հիմնախնդիրներ՝ պայմանավորված հետևյալ փաստարկներով:

Նախ, որ հաստատագրված վճարների դեպքում հարկման օբյեկտ են համարվում ոչ թե եկամուտները, այլ գործունեության առանձին տեսակներ, որոնք, ի տարբերություն գործունեության մնացած տեսակների, տեղափոխվում են հարկման արտոնյալ դաշտ՝ սկիզբ դնելով հարկման սկզբունքներին հակասող անհավասար հարկման<sup>7</sup> անընդունելի պրակտիկային: Գործունեության տեսակը հարկման օբյեկտ դիտարկելը մեթոդաբանական սխալ մոտեցում է, որի նախադեպը չկա համաշխարհային պրակտիկայում:

<sup>6</sup> Մինչև 01.01.2009թ. Հայաստանի Հանրապետությունում գործում է «եռաչափ» հարկային համակարգ՝ պարզեցված հարկեր, հաստատագրված վճարներ և «սովորական» հարկեր:

<sup>7</sup> Բագրատյան Հ., Հայաստանը դարերի սահմանագծին, Երևան, «Նաիրի», 2003, էջ 190:

Բացի դրանից, հարկման ցածր արդյունավետությամբ օժտված գործունեության ոլորտները (վարսավիրական ծառայությունների մատուցում, վիճակախաղերի կազմակերպում, ավտոտրանսպորտային միջոցների գազալցում, ավտոկանգառների գործունեություն, դրամական շահումով խաղային ավտոմատների կազմակերպում, բաղնիքների և ցնցուղաշարանների կազմակերպում և այլն) հարկման սկզբունքների խախտմամբ հարկման այլ դաշտ տեղափոխելը հարցի լուծման ճիշտ ճանապարհը չէ մանավանդ, որ հարկման արտոնյալ դաշտը խրախուսում է գործունեության այդպիսի ոլորտների ակտիվացումը և հանգեցնում է հարկման արդյունավետության ավելի նվազման: Ուստի անհրաժեշտ է ընտրել հարկման արդյունավետության բարձրացման ու վարչարարության կատարելագործման այլ ուղի:

**Երկրորդ՝** հաստատագրված վճարների դեպքում հարկման բազան գործունեության նշված տեսակների համար սահմանված ելակետային տվյալների և ուղղակի գործակիցների որոշակի արտադրյալն է՝ դրամական արտահայտությամբ<sup>8</sup>:

Հարկման բազայի նման եղանակով ձևավորումը կառուցված է տնտեսագիտորեն հիմնավորում չունեցող ելակետային տվյալների և չարդարացված ուղղիչ գործակիցների հիման վրա, որոնք ճիշտ չեն արտացոլում հարկատուների ստացած եկամուտների և նրանց կողմից վճարվող հաստատագրված վճարների մեծությունների կախվածությունը: Դրանց միջև առկա կախվածությունն առավել շատ օգուտ բերում է հարկատուներին, քան պետությանը, որի պատճառով հարկատուները, օգտվելով հարկային գործող օրենսդրության «սողանցքներից», տեղափոխվում են հաստատագրված վճարով հարկման դաշտ: Բացի դրանից, եթե նույնիսկ ուղղիչ գործակիցներն ու ելակետային տվյալները լինեն հիմնավորված ու արդարացված, ապա նույն հաջողությամբ կարելի է պնդել, որ հարկման այդպիսի գործիքները ճկունություն չեն կարող դրսևորել անընդհատ փոփոխվող տնտեսական իրավիճակներում: Ինչ վերաբերում է հաստատագրված վճարով աշխատող հարկատուներին հարկման սովորական ռեժիմին փոխադրելու նպատակով սահմանված սահմանային չափերին (խանութների, կրպակների միջոցով առևտրական գործունեություն իրականացնողների մասով եռամսյակի ընթացքում առևտրական տարածքի 1մ<sup>2</sup>-ի հաշվով ապրանքաշրջանառության ծավալի գերազանցումը 310 հազար դրամը, հասարակական սննդի մասով՝ եռամսյակի ընթացքում՝ սպասարկման մակերեսի 1մ<sup>2</sup>-ի հաշվով ապրանքաշրջանառության ծավալի գերազանցումը 200 հազար դրամը, բենզինի և դիզելային վառելիքի մեկ մանրածախ կետի միջոցով ամսվա ընթացքում բենզինի քանակի գերազանցումը 10 հազար լիտրը, ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման գործունեություն իրականացնողների համար ամսական իրացման շրջանառությունը մեկ աշխատողի հաշվով 800 հազար դրամի գերազանցումը), ապա դրանք ցանկալի արդյունք չեն կարող տալ մանավանդ, որ սահմանային չափեր ունեցող գործունեության

<sup>8</sup> «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», Առաջին մաս, Եր., 2009, էջ 205:

առանձին տեսակների հաստատագրված վճարի հաշվարկման մոտեցումները նվազեցնում են հարկային եկամուտների չափը:

Հետևաբար՝ հարկման հայեցակարգային ոչ ճիշտ մոտեցումներով հնարավոր չէ զարգացնել տնտեսության շարժիչ ուժ հանդիսացող ՓՄՁ-ները: Եվ պատահական չէ, որ հանրապետությունում ՓՄՁ-ներին բաժին է ընկնում ՀՆԱ-ի շուրջ 40%-ը, իսկ դրանց զբաղվածների տեսակարար կշիռը զբաղվածների ընդհանուր թվաքանակում կազմում է մինչև 5%՝ այն դեպքում, երբ այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմում են էստոնիայում՝ 70%-ից ավելի և շուրջ 60%, Լիտվայում՝ 60%-ից ավելի և շուրջ 70%, Լատվիայում՝ շուրջ 60 ու 70 տոկոս, իսկ Եվրամիության երկրներում ՓՄՁ-ին բաժին է ընկնում ՀՆԱ-ի ավելի քան 70%-ը, ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում՝ 50%-ից ավելին և այլն:

Վերոնշյալ տվյալները խոսում են այն մասին, որ հարկման հատուկ ռեժիմ հանդիսացող հաստատագրված վճարների կիրառման 10-ամյա գործունեությունը չի նպաստել ՓՄՁ-ների զարգացմանը, և, դեռ ավելին, դրանց կիրառմամբ նվազեցվել են պետական բյուջեի հարկային ակնկալվող մուտքերը, որի պատճառով ոչ միայն հարկման հատուկ ռեժիմների չարդարացված մոտեցումներով կիրառումն է, այլև ՓՄՁ-ների դասակարգման չափանիշների ոչ ճիշտ ընտրությունը: Ստեղծված իրավիճակի բարեփոխման նպատակով անհրաժեշտ է լուծել հետևյալ խումբ խնդիրները, որոնց վերաբերում են.

**առաջին՝** ՓՄՁ-ների դասակարգման ցուցանիշների ճշգրտումը և հստակեցումը, որպեսզի արդյունքաբեր լինի նաև դրա հենքի վրա կառուցվող հարկային քաղաքականությունը:

Բանն այն է, որ ՀՀ-ում ՓՄՁ-ների դասակարգման ցուցանիշների հիմքում դրվել են միայն քանակական ցուցանիշները, այն է՝ աշխատողների թիվը, որը տարբերակված է ըստ տնտեսության ճյուղերի ու բնագավառների: Այս ցուցանիշի կիրառման հիմնական առավելությունն այն է, որ դրա օգտագործումը շատ հարմար է ու հեշտ: Սակայն այս ցուցանիշի կիրառմամբ դժվար է համեմատական վերլուծություններ կատարել ու արդյունքաբեր քաղաքականություն իրականացնել, որի վառ ապացույցն է այն փաստը, որ հանրապետությունում ՓՄՁ-ների նկատմամբ արտոնյալ հարկային քաղաքականություն իրականացնելու հիմքում դրվեց ոչ թե ՓՄՁ-ների դասակարգման հիմքում դրված աշխատողների միջին ցուցակային թվաքանակը, այլ իրացման շրջանառությունը (պարզեցված հարկի մասով): Եվ պատահական չէ, որ Եվրոպական երկրներում լայն տարածում է ստացել ՓՄՁ-ների դասակարգման քանակական ու որակական ցուցանիշների զուգակցումը, ինչպես, օրինակ, Ֆրանսիայում աշխատողների թիվը և հասույթը, Մեծ Բրիտանիայում շրջանառու միջոցների ծավալն ու աշխատողների թիվը և այլն: Սակայն ՓՄՁ-ների չափի որոշման հաջողված օրինակ և համակցված մոտեցում պետք է համարել 1971թ. Մեծ Բրիտանիայում Բոլտոնյան զեկույցի ժամանակ կատարված առաջարկությունները, որոնց համաձայն փոքր են համարվում այն ձեռնարկությունները, որոնք բավարարում են ստորև բերված պահանջներին:

- Ձեռնարկությունն իր գործունեության ոլորտային շուկայում ունենում է համեմատաբար փոքր մասնաբաժին:
- Ձեռնարկության ղեկավարումը ստանձնում է ինքը՝ հիմնադիրը:
- Ձեռնարկությունն անկախ է և չի կազմում այլ ձեռնարկության մաս:

Կերոնշյալ ցուցանիշները բովանդակային առումով պետք է ընդունելի և օբյեկտիվ համարել: Սակայն այստեղ խնդիրը ճիշտ չափանիշի (հաշվի առնելով երկրի տնտեսության առանձնահատկությունները) որոշման մեջ է, որի համար անհրաժեշտ է կատարել երկրի տնտեսության լուրջ ուսումնասիրություններ, որը հնարավորություն կտա բիզնեսը առավել հստակ դասակարգելու փոքրի, միջինի և խոշորի՝ հիմք ընդունելով համախառն հասույթը և աշխատողների միջին ցուցակային թիվը, իհարկե, հաշվի առնելով նաև հիմնադրի կողմից ձեռնարկությունն անձամբ ղեկավարելու և ձեռնարկությունն այլ ձեռնարկության մաս չկազմելու պարտադիր պայմանը: Ընդ որում ՓՄՁ-ների դասակարգումը պետք է տալ ըստ ձեռնարկատիրական գործունեության հինգ հիմնական տեսակների՝ արտադրական, առևտրային, ֆինանսական, միջնորդական, ապահովագրական, որպեսզի պետական քաղաքականությունն իր դիրքորոշումները հստակեցնի ոչ միայն ՓՄՁ-ների, այլև գործունեության տեսակների նկատմամբ:

**Երկրորդ՝** հարկային հստակ ու իրական խթանների ձևավորումը, քանի որ ՓՄՁ-ների զարգացման գործում կարևոր է ոչ միայն ձեռնարկատերերի դերակատարումը, այլ նաև պետության հովանավորչական քաղաքականության իրականացումը, մանավանդ որ, ի տարբերություն խոշորի, ՓՄՁ-ների համար ծանր է հարկային բեռը, անհավասար է մրցակցային միջավայրը, «անհասանելի են» բանկային վարկերը, իսկ կառավարության կողմից հատկացվող գումարները չեն բավարարում շուկայում առկա նվազագույն պահանջարկը: Չանդրադառնալով ՓՄՁ-ների կայացումն ու զարգացումը խոչընդոտող մյուս հանգամանքներին (գործարարների մասնագիտորեն թերի պատրաստվածությունը, օրենսդրական դաշտում կատարվող անընդհատ փոփոխությունները և այլն)՝ տնտեսական բարեփոխումների ներկա փուլում առաջնահերթությունները պետք է տալ հարկային լծակներին ու գործիքներին, որոնց մասով առաջարկվում է.

ա) հրաժարվել ՓՄՁ-ների զարգացմանը «միտված» հարկման հատուկ կամ արտոնյալ ռեժիմի՝ հաստատագրված վճարների հաշվարկման ու գանձման հայաստանյան փորձից:

բ) Նոր ստեղծված ՓՄՁ-ները, առաջին երեք տարիներին ազատել եկամտային (շահութահարկ, եկամտահարկ) և գույքային (հողի հարկ, գույքահարկ) հարկերից, իսկ հետագա երկու տարիներին դրանք հարկել 50%-ով: Սա մոտեցում է, որը տարբեր կերպ է կիրառվում տարբեր երկրներում, որոնցից յուրաքանչյուրն ունի որոշակի առանձնահատկություններ: Այսպես, օրինակ, Ֆրանսիայում այս մոտեցումը կիրառվում է շահութահարկի մասով: Ընդ որում ՓՄՁ-ների համար հարկային պարտավորությունների 5 տարվա ժամկետ առաջարկելու հիմնավորվածությունը պայմանավորված է ոչ միայն արտերկրյա փորձով, այլև գործարարների շրջանում անցկացված

հարցա-զրույցի արդյունքներով, իսկ այդ ժամանակահատվածում այդչափ հարկային արտոնությունները (100% և 50%) այն փաստով, որ ՓՄՁ-ների հարկային մուտքերը պետական բյուջեի ընդհանուր հարկային մուտքերում էական դերակատարում չունեն, որը ներառում է ոչ միայն նոր ստեղծված, այլև երկար ժամանակ գործող ՓՄՁ-ների վճարումները բոլոր հարկատեսակների գծով: Այլ կերպ ասած, առաջարկվող հարկային արտոնությունից պետական բյուջեն էական կորուստներ չի ունենա, բայց կշահեն փոքր ու միջին ձեռնարկատերերը և, վերջին հաշվով, տնտեսությունն ու պետականությունը:

- Առաջին երեք տարիներին ազատել անուղղակի (ԱԱՀ, ակցիզային հարկ) հարկերից, իսկ հետագա երկու տարիներին դրանք հարկել 50%-ով՝ հիմք ընդունելով վերոնշյալ փաստարկները: Ընդ որում այս մոտեցումն անհրաժեշտ է կիրառել ներմուծման հարկերի ու հանրապետության ներսում գանձվող անուղղակի հարկերի վրա: Այս դեպքում ՓՄՁ-ների կողմից ներմուծվող ապրանքները կդառնան նաև մրցունակ ու ներքին շուկայում իրենց արժանի տեղը կունենան:
- գ) Գործող ՓՄՁ-ներին (նաև նոր ստեղծվածներին).
  - ազատել կանխավճարային բոլոր տեսակի մուծումներից, քանի որ այն, ըստ էության, ձեռնարկատիրոջ կողմից պետությանը տրվող «անտոկոս վարկ» է, որը, եթե խոշորի համար տանելի է ու թեթև, ապա ՓՄՁ-ների համար անտանելի ու ծանր «բեռ» է:
  - Պարզեցնել ու հստակեցնել ՓՄՁ-ների կողմից հարկային մարմիններ ներկայացվող հաշվարկների, հաշվետվությունների ընթացակարգերը (ժամկետների, լրացման ու հաշվարկման)՝ նկատի ունենալով ՓՄՁ-ը ներկայացնող ձեռնարկատերերի ու նրանց կողմից ներգրավված ֆինանսական մասնագետների թերի պատրաստվածությունը, որը պայմանավորված է նաև ֆինանսական միջոցների սղությամբ:
  - Տալ արագացված ամորտիզացիայի հարկային արտոնություն, քանի որ դրա կարիքն առավել շատ զգում են ՓՄՁ-ները, իսկ խոշոր բիզնեսին զրկել հարկային այդ արտոնությունից:
  - Տալ ԱԱՀ-ի գծով հարկային արտոնություն՝ չհարկվող նվազագույն շեմի մեծությունը դարձնելով 70 մլն դրամ և այդ արտոնությունից զրկել խոշոր բիզնեսին: ԱԱՀ-ի գծով հարկային արտոնությունների հարկվող շրջանառության նկատմամբ այն չհաշվարկելու և հարկվող շրջանառության նկատմամբ ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափ կիրառելու միջոցով լրացուցիչ լծակներ ու գործիքներ «տեղադրել» «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքում, քանի որ գործողները հիմնականում «սպասարկում են» խոշոր բիզնեսի շահերին:

Անհրաժեշտ է հստակեցնել աճող ֆինանսական միջոցները, որոնց ծավալները բավարար համարել չի կարելի՝ մանավանդ որ ՓՄՁ-ների համար ոչ միշտ են «հասանելի» դառնում վարկային միջոցները, մասնավորապես կապված բանկային վարկի բարձր տոկոսադրույքների հետ:

## **Օգտագործված գրականության ցանկ**

1. «Հողի հարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», Առաջին մաս, Եր., 2009:
2. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք: ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 21 (196), 21.06.2002:
3. «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», Առաջին մաս, Եր., 2009:
4. Բագրատյան Հ., Հայաստանը դարերի սահմանագծին, Երևան, «Նաիրի», 2003:

## **Դավիթ Հարությունյան**

### **ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍՈՎ**

**Ամփոփագիր:** Հոդվածում վերլուծվել են հարկային պարտավորությունները գույքային հարկերի մասով, ընդ որում ընդգծվել է գույքային հարկերի դերը համայնքների ֆինանսական խնդիրները լուծելու գործում: Այդ հիմքերով կատարվել են գործնական առաջարկություններ՝ ուղղված գույքային հարկերի հաշվառման մեթոդի և վարչարարության բարելավմանը:

**Բանալի բառեր.** գույքային հարկեր, հարկային պարտավորություն, հարկային քաղաքականություն, հաստատագրված վճարներ, հողի հարկ, հարկ վճարող, հարկային մարմին:

## **Давит Арутюнян**

### **ЗАКОНОДАТЕЛЬНЫЕ И МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ОРИЕНТИРЫ СОВЕРШЕНСТВОВАНИЯ РАСЧЕТА НАЛОГОВЫХ ОБЯЗАТЕЛЬСТВ ПО НАЛОГАМ НА ИМУЩЕСТВО И ФИКСИРОВАННЫМ ПЛАТЕЖАМ**

**Резюме.** В статье проанализированы налоговые обязательства в отношении налогов на имущество с акцентом на роль корпоративных налогов в решении финансовых проблем общества. На их основе были даны практические рекомендации по улучшению метода учета и администрирования налога на имущество.

**Ключевые слова:** налог на имущество, налоговые обязательства, налоговая политика, фиксированные платежи, земельный налог, налогоплательщик, налоговый орган.



**Davit Harutyunyan**

**LEGISLATIVE AND METHODOLOGICAL GUIDELINES FOR IMPROVING  
CALCULATION OF TAX LIABILITIES FOR PROPERTY TAX AND FIXED  
PAYMENTS**

**Abstract:** The article analyzed tax liabilities with respect to property taxes, emphasizing the role of corporate tax in addressing financial issues of the society. Based on this, practical recommendations have been proposed to improve property tax accounting and administration methods.

**Keywords:** Property tax, tax liability, tax policy, fixed payments, land tax, tax-payer, tax authority

## **Վլադիմիր Հարությունյան Եվգենյա Հակոբյան**

### **ՀԱՐԿԵՐ/ՀՆԱ ՑՈՒՑԱՆԻՇԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԱՃԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

«Ի՞նչ է հարկը» հարցադրման պատասխանը տարբեր ժամանակներում ու տարբեր մասնագիտություններ ունեցող մարդկանց կողմից տարբեր ձևակերպումներ ու բնորոշումներ է ստացել: Այն զբաղեցրել է ոչ միայն տնտեսագետներին, այլև փիլիսոփաներին, իրավաբաններին, պոետներին, քաղաքական գործիչներին: Դա ոչ պատահական է և ոչ էլ զարմանալի:

Հարկազանձման «պտուղները» ճաշակում է յուրաքանչյուր երկրի յուրաքանչյուր քաղաքացի՝ անկախ սեռից, ռասայից, ազգային պատկանելությունից, մասնագիտությունից, զբաղեցրած հասարակական դիրքից և այլն, մանավանդ, որ այդ «պտուղները» լինում են տարբեր համի՝ կախված, թե ով կամ ովքեր են «ծնունդ տալիս ու կյանքի կոչում» հարկային քաղաքականությունը: Եթե այն մշակում ու կյանքի են կոչում քաղաքական դիլետանտները, ոչ պրոֆեսիոնալները կամ պրոֆեսիոնալների կարծիքն անտեսողները, ապա այդպիսի քաղաքականության և դրա արդյունքում իրականացվող հարկազանձման պտուղները լինում են դառը, կորուստները՝ անդառնալի, իսկ հետևանքները՝ վնասակար հասարակության յուրաքանչյուր անդամի համար:

Դարեր շարունակ հարկահավաքումը եղել է պետությունների գործառույթներից մեկը, որի հաշվին իշխանությունները համալրել են պետական գանձարանները և վարել են նվաճողական ու պաշտպանողական ճակատամարտեր, կառուցվել են մարդկության անկրկնելի ճարտարապետական կառույցները, կատարվել են մեծագույն հայտնագործությունները տարբեր բնագավառներում, և, ի վերջո, հարկերը եղել են հասարակական պահանջումները բավարարելու հիմնական միջոց և օգտագործվել են պետության գործառույթների իրականացման համար:

Պատահական չէ, որ բոլոր ժամանակներում հարկման տեսությունները փորձել են լուծել մեկ հավերժական խնդիր՝ բյուջեի համար անհրաժեշտ եկամուտների հավաքագրման համար որն է ավելի նպատակահարմար՝ հարկային բեռի մեծացումը, թե՛ հարկային բեռի կրճատումը և հարկման բազայի ընդլայնումը: Ահա թե ինչու հարկեր/ՀՆԱ ցուցանիշի շարունակական աճի ապահովումը մնում է պետական գանձարանի համալրման հիմնական ուղենիշերից մեկը:

Այժմ դիտարկենք, թե Հայաստանի Հանրապետությունում վերջին 10 տարիների ընթացքում ինչպիսի փոփոխությունների է ենթարկվել հարկեր/ՀՆԱ ցուցանիշը: Նշենք, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում հարկային բեռի վերաբերյալ վերլուծությունները կատարվել են երկու փուլով.

1. 2008-2015 թթ., որն ընդգրկում է մինչև ԵՏՄ անդամակցությունը,
2. 2015-2018 թթ., ԵՏՄ անդամակցությունից հետո:

Այսպես, մինչև ԵՏՄ անդամակցությունը հարկային բեռը կազմել է միջինը 16.9%, իսկ ԵՏՄ անդամակցությունից հետո՝ 18.9%: Փաստորեն ԵՏՄ անդամակցությունից հետո հարկային բեռն ավելացել է 2%-ով, որը պայմանավորված է ԵՏՄ երկրներում հարկային և մաքսային քաղաքականությունների փոփոխություններով: Մասնավորապես ԵՏՄ անդամակցությունից հետո ԵՏՄ անդամակցություններ արտահանված ապրանքների մատակարարման գործարքների նկատմամբ կիրառվեց ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափ<sup>9</sup> և 10 տոկոս մաքսատուրքից ազատում:

Կատարված վերլուծությունների արդյունքներն արտացոլված են ստորև բերված աղյուսակ 1-ում:

### Աղյուսակ 1

#### Հարկեր/ՀՆԱ ցուցանիշ 2008-2018թթ.

Տարի	Հարկեր	ՀՆԱ	հարկեր/ՀՆԱ
2008	553072.5	3568227.6	15.5
2009	454954.7	3141651.0	14.5
2010	524493.1	3460202.7	15.1
2011	575 860.7	3777945.6	15.2
2012	792153.8	4266460.5	18.6
2013	914169.8	4555638.2	20.1
2014	969651.0	4828626.3	20.1
2015	971558.3	5043633.2	19.2
2016	975686.5	5067293.5	19.3
2017	1043504.0	5568901.5	18.7
2018	1104091.4	6002747.8	18.4

2018 թվականի հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում կիրառվել է հարկային նոր օրենսգիրքը, որտեղ փոփոխություններ են կատարվել հարկային մի շարք օրենքներում: Մասնավորապես ուղղակի հարկերի մասով փոփոխություններ են կատարվել եկամտային հարկի հաշվառման մեջ: Այսպես, հարկման բազայի նկատմամբ եկամտային հարկը հաշվարկվում է մինչև 150000 դրամը ներառյալ դրույքաչափը կազմում է 23 տոկոս, իսկ 150000-ից մինչև 2000000 դրամը ներառյալ՝ 28 տոկոս<sup>10</sup>:

Օրենքի ընդունումից հետո հարկեր /ՀՆԱ ցուցանիշն էական փոփոխության չի ենթարկվել, մասնավորապես 2017 թվականին այն եղել է 18.7 տոկոս, իսկ 2018 թվականին՝ 18.4, այսինքն՝ տարբերությունը կազմել է ընդամենը 0.3 տոկոսային կետ, իսկ դա վկայում է 2018 թվականին հարկային ցածր վարչարարության կամ բարձր ստվերային տնտեսության առկայության մասին: Այս

<sup>9</sup> <https://www.arlis.am>, ՀՀ հարկային օրենսգիրք, հոդված 76:

<sup>10</sup> Նույն տեղում, հոդված 150:

համատեքստում կարևոր դերակատարում կարող է ունենալ ստվերային շրջանառության կրճատումը: Սակայն պետք է նշել, որ տեղի ունեցած տնտեսական հեղափոխությունից հետո արդեն իսկ բավականին տարբերություն է նկատվում: Այսպես, Հայաստանի Հանրապետությունում նոր կառավարության ձևավորումից հետո՝ 2018 թ. հունիսի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում, ՀՀ իրավասու մարմինների վարույթում կոռուպցիոն բնույթի և հարկերը վճարելուց խուսափելու վերաբերյալ հարուցվել է 1079 քրեական գործ<sup>11</sup>, որոնց շրջանակներում արձանագրվել է պետությանը պատճառած 66.9 մլրդ դրամի գույքային վնաս, որից փաստացի վճարվել է բյուջե շուրջ 22.5 մլրդ դրամ: Նշվում է նաև, որ քրեական գործերի քննության ընթացքում մասնակից անձանց կողմից կամավոր վճարվել է շուրջ 9.5 մլրդ դրամ գումար:

Դեռևս 20-րդ դարի կեսերին ամերիկացի տնտեսագետ Գուտմանը նշել է, որ ԱՄՆ-ում գոյություն ունի տնտեսության չվերահսկվող մի հատված, որի ծավալներն աճելու միտում ունեն<sup>12</sup>, իսկ ավելի ուշ ամերիկացի մեկ այլ տնտեսագետ՝ Էդգար Ֆայգը, հավելել է, որ չվերահսկվող տնտեսության ծավալները կազմել են պաշտոնական ՀՆԱ-ի 1/3-ը<sup>13</sup>:

Ըստ էության ստվերային շրջանառության գլխավոր բնութագրական գծերից մեկը պետության չվերահսկած գործունեությունն է, երբ տնտեսական գործակալների գործունեությունը թաքցվում է պետական կառավարման և վերահսկողական մարմիններից կամ ընդհանրապես արգելվում է օրենքով<sup>14</sup>:

Ընդհանուր առմամբ կարելի է տարբերակել ստվերային շրջանառության երկու հիմնական ոլորտ.

- ստվերային շրջանառություն, որը գործում է օրինական հատվածում, սակայն վերահսկողությունից և հաշվառումից դուրս,
- ստվերային շրջանառություն, որն օրենքով արգելված է և գործում է անօրինական հատվածում:

Հետևաբար՝ կարելի է տարբերակել տնտեսության երկու հատված.

- արտադրողական, որն իրական ներդրում ունի ՀՆԱ-ի աճի մեջ,
- վերաբաշխող, որը չի առնչվում տնտեսական բարիքներ ստեղծելուն (կոռուպցիա և այլն):

Էդգար Ֆայգը ստվերային տնտեսությունում իրականացվող գործունեության տեսակները ներկայացնում է 4 խմբով<sup>15</sup>.

1. անօրինական կամ հակաօրինական, երբ ստեղծված եկամուտը տնտեսության անօրինական գործունեության հետևանք է.

<sup>11</sup> ՀՀ կառավարության՝ 2019 թվականի փետրվարի 28-ի N141-Ա որոշման հավելված:

<sup>12</sup> Hart K., Informal Urban Income Opportunities and Urban Employment in Ghana, Journal of Modern African Studies, 1973, Vol. 11, #1

<sup>13</sup> Gutmann P., The Subterranean Economy, Financial Analysis Journal, 1977, Vol. 33

<sup>14</sup> Handbook on the Shadow Economy: Friedrich Schneider, Austria, 2011, էջ 3

<sup>15</sup> Feige, Edgar L., Working Papers, Reflections on the meaning and measurement of Unobserved Economies: What do we really know about the "Shadow Economy"?, MPRA Paper 68466, University Library of Munich, Germany, 2015

2. չհայտարարագրված, երբ շրջանցվում են հարկաբյուջետային կանոնները, կամ խուսափում են այդ կանոններով նախատեսված պահանջները կատարելուց.
3. չգրանցված, որտեղ իրականացվող գործունեությունը շրջանցում է պաշտոնական վիճակագրության սահմանած հաշվետվություններ ներկայացնելու և հայտարարագրելու համակարգը.
4. ոչ պաշտոնական (ոչ ֆորմալ)՝ ներառելով տնտեսական այն գործունեությունները, որոնք շրջանցում են կամ չեն վճարում նախատեսվող ծախսերը և միաժամանակ չեն օգտվում տարբեր ոլորտների (ինչպիսիք են սեփականատիրական հարաբերությունները, առևտրային գործունեության տեսակներն արտոնագրելը, վարկավորումը, սոցիալական ապահովվածությունը և այլն)՝ իրավական ակտերով նախատեսված եկամուտներից և իրավունքներից:

Վերջինս մեր հանրապետությունում շատ տարածված է, պայմանավորված աշխատուժի շուկայի թերզարգացմամբ, որտեղ աշխատող-գործատու հարաբերությունները հաճախ բանավոր համաձայնությամբ են, որը թույլ է տալիս բարձր դրույքաչափերի վճարումներով հնարավորինս նվազեցնել պարտադիր վճարումները<sup>16</sup>: Սակայն հարկ է նկատել, որ 2018 թվականի չորրորդ եռամսյակի դրությամբ ոչ պետական աշխատատեղերի քանակն ավելացել է մոտ 37 հազարով<sup>17</sup>, ինչն էլ թույլ է տալիս ենթադրել, որ նույն ժամանակահատվածում ստվերից դուրս է բերվել առնվազն 30 հազար աշխատատեղ:

Ստվերային գործունեության առանձնահատուկ տեսակ է դրամանենգությունը, որի դեմ պայքարի միջոցներն են՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ թղթադրամի պաշտպանվածության աստիճանը բարձրացնելը կամ երկրում վճարային ոչ կանխիկ միջոցները զարգացնելը (անդորրագրերի, կրեդիտային և դեբետային քարտերի համակարգերի ներդնումը և լայն կիրառումը), որը նվազագույնի կհասցնի կանխիկ դրամով իրականացվելիք, հատկապես տնտեսական խոշոր գործարքների թիվը և կմեղմի դրամանենգության բացասական հետևանքները:

Երկրի տնտեսության վրա ունեցած բացասական հետևանքներից կարելի է առանձնացնել հետևյալները:

- Ստվերային տնտեսությունը հանգեցնում է հարկային եկամուտների նվազման, որի հետևանքով պետությունը հարկադրաբար կարող է բարձրացնել հարկային դրույքաչափերը՝ ավելի վատթարացնելով երկրի տնտեսության վիճակը, կապված որպես հետևանք պետության կատարած ներդրումների ծավալների ու տրամադրած ծառայությունների նվազման հետ:

- Կասկածելի է դառնում ՀՆԱ-ի, գործազրկության մակարդակի, սղաճի և այլ մակրոտնտեսական ցուցանիշների ճշգրտությունը:

---

<sup>16</sup> Վիճակագրական ծառայության պաշտոնական կայքէջ.  
[http://www.armstat.am/file/article/rep\\_ashx\\_09a\\_4.pdf](http://www.armstat.am/file/article/rep_ashx_09a_4.pdf)

<sup>17</sup> ՀՀ կառավարության՝ 2019 թվականի փետրվարի 28-ի N141-Ա որոշման հավելված:

- Անհավասար մրցակցային պայքար է ստեղծվում արտադրության և առևտրի ոլորտների միջև:

- Խաթարվում է նաև աշխատուժի արդյունավետ վերաբաշխումը տնտեսության տարբեր ճյուղերի միջև: Քանի որ, ինչպես արդեն նկատել ենք, ՀՀ-ում գործատու-աշխատող փոխհարաբերությունները երբեմն բանավոր համաձայնությամբ են՝ աշխատողներին չգրանցելով, հետևաբար՝ վերջիններս չեն վճարում հարկային ու սոցիալական ապահովության պարտադիր վճարները՝ հայտնվելով ավելի լավ վիճակում, քան տնտեսության պաշտոնական հատվածում զբաղվածները:

Չնայած ստվերային շրջանառությունը տնտեսության համար ունի մի շարք բացասական հետևանքներ, սակայն այդուհանդերձ կարելի է առանձնացնել նաև որոշակի դրական կողմեր:

- Հարկեր չմուծելը ձեռնարկատերերին կարող է մրցակցային առավելություններ տալ, որոնք էլ հնարավորություն են ընձեռել նոր տեխնոլոգիաների նկատմամբ և արտադրության նոր ձևեր կազմակերպելով ավելացնել տնտեսական արդյունավետությունը:

- Ստվերային հատվածում գտնվող աշխատողները, հարկային պարտավորությունները չկատարելով, ձևավորված եկամուտներն օգտագործում են իրենց անձնական կարիքների համար, որն էլ նպաստում է նրանց կենսամակարդակը բարձրացնելուն:

- Նոր աշխատատեղեր ստվերային ոլորտում:

Ստվերային շրջանառությունը նպաստում է ամբողջական պահանջարկը մեծացնելուն, իսկ ստեղծված եկամուտը, այդուհանդերձ, ծախսվում է տնտեսության պաշտոնական հատվածում:

Ստվերային տնտեսության շրջանառությունն իրատեսորեն գնահատելը ստվերի դեմ պայքարի կարևորագույն քայլերից է: Աշխարհի բոլոր երկրներում կառավարությունները ստվերային տնտեսությունը կրճատելու ուղղությամբ մշակում և կյանքի են կոչում տարբեր ծրագրեր ու մեխանիզմներ, որոնք, սակայն, միշտ չէ, որ ակնկալվող արդյունք են ապահովում: Դրանք առավել արդյունավետ ու իրատեսական են զարգացած երկրներում:

Ընդհանուր առմամբ ստվերային տնտեսությունը կրճատելու միջոցառումները կարելի է խմբավորել հետևյալ կերպ

1. օրենքների և նորմատիվ ակտերի ընդունում, օրենսդրական բարեփոխումների իրականացում.
2. դատաիրավական համակարգի բարեփոխումների իրականացում.
3. քաղաքական ոլորտի առողջացում(ազատ ընտրություններ, քաղաքական հովանավորչության բացառում).
4. բանկային համակարգի զարգացում, տնտեսական գործունեության մեջ ընդգրկվածության ավելացում.
5. հարկային վարչարարության բարելավում, վարչարարական ներուժի ամբողջական կիրառում:

Ստվերը կրճատելու վերը թվարկված բարեփոխումները փոխկապակցված են. իրականացնում են պետական համապատասխան շահառու գերատեսչությունները, իսկ վերահսկում՝ կառավարությունը և այլ օրենսդիր մարմիններ:

Ստվերային տնտեսության ծավալները կրճատելու նպատակով օրենսդրական բարեփոխումներն իրականացվում են ինչպես հարկային և մաքսային, այնպես էլ հարակից մյուս ոլորտներում, քանի որ տնտեսվարման բարենպաստ պայմաններ ապահովելը հնարավոր է միայն պետական և մասնավոր հատվածում կոռուպցիոն ռիսկերը, բյուրոկրատիան նվազեցնելով, անհրաժեշտ օրենքներ և նորմատիվ ակտեր ընդունելով և տնտեսվարողի տեսանկյունից դյուրին կիրարկելով:

Հանրապետությունում հարկային օրենքները վաղուց են ընդունվել, և պարբերաբար իրականացված փոփոխությունների նպատակը կարճատև, ժամանակավոր խնդիրներ լուծելն էր, իսկ ժամանակի մարտահրավերները, միջազգային տարբեր տնտեսական միությունների անդամակցելը պահանջում են խնդիրների առավել երկարաժամկետ և արմատական լուծումներ, կայուն և կանխատեսելի հարկային միջավայր՝ նպաստելով տնտեսվարող սուբյեկտների ներդրումային մեծ ակտիվությանը: Ուստի տնտեսության զարգացման ներկա փուլում կարևորվում են հարկային օրենսդրական դաշտում իրականացվող արմատական փոփոխությունները: Կարելի է արձանագրել, որ մեր հանրապետությունում կատարվող բարեփոխումներն արդեն իսկ տալիս են իրենց պտուղները: Մասնավորապես կարևորվում է նոր սերնդի հսկիչ դրամարկղային մեքենաների համատարած և պարտադիր կիրառումը, որը հնարավորություն է տալիս հարկային մարմինն ստանալու հարկ վճարողի գործարքի մասին մանրամասն տեղեկատվություն, ինչպես նաև նպաստում է անկանխիկ գործարքների աճին, ինչն էլ զգալիորեն նվազեցնում է շրջանառությունների թերհայտարարագրման ռիսկերը:

Հարկեր/ՀՆԱ տոկոսային հարաբերակցության շարունակական աճի հարցում կարևոր դեր կարող է խաղալ նաև փոքր ու միջին ձեռնարկատիրության (այսուհետ՝ ՓՄՁ) արդյունավետ հարկումը, որը թե՛ հրատապ է և թե՛ բարդ:

**ՓՄՁ-ների արդյունավետ հարկման հրապապությունը** պայմանավորված է դրանց դերի բարձրացող կարևորությամբ, բազմաթիվ երկրներում ՓՄՁ-ների համար նոր մոտեցումների, զբաղվածության և տնտեսական աճի հարցերում դրանց ստանձնած պարտավորություններով: Դրանք նպատակ ունեն իրականացնելու բարեփոխումներ՝ պայմանավորված ավելի խոշոր ձեռնարկությունների հարկման, ինչպես նաև ստվերի պատճառով առաջացած անհավասար պայմանների և անարդյունավետ ռեժիմների վերանայման անհրաժեշտությամբ: Դրանք բարդ հարցեր են՝ պայմանավորված քաղաքականության և վարչարարության տարաբնույթ մոտեցումներով, ինչպես նաև համեմատաբար լուրջ վերլուծական աշխատանքների բացակայությամբ: Հետևաբար՝ ՓՄՁ-ների հարկման արդյունավետ համակարգի ձևավորման անհրաժեշտ պայմանը դրանց բազմազանության ճանաչումն է, քանի որ այն, ինչ երկրի համար կարող է

համարվել փոքր կամ միջին, մի ուրիշ երկրում կարող է լինել խոշոր: Բայց այդ ամենով հանդերձ, գրեթե բոլոր երկրներում ՓՄՁ-ների մասնաբաժինը զբաղվածության մեջ ավելի մեծ է, քան հարկային եկամուտներում: Դա նշանակում է, որ ՓՄՁ-ների հարկումը կարող է ունենալ ինչպես քաղաքական, այնպես էլ սոցիալական նշանակություն, քանի որ ՓՄՁ-ների հարկման տիրույթում են կենտրոնացած աշխատող ազգաբնակչության շահերի բախումները կամ համընկնումը: Հետևաբար՝ ՓՄՁ-ների համար հատուկ հարկային ռեժիմ ներդնելիս հարկավոր է հիշել, որ ՓՄՁ-ների վրա բացասաբար անդրադարձող շուկայում տիրող իրավիճակը հարկ վճարողի չափի վրա հիմնված հարկային միջոցառումների միջոցով կարգավորելը հազիվ թե կարելի լինի համարել ամենաճիշտ լուծումը: Երբեմն փաստարկներ են բերվում ավելի փոքր ձեռնարկությունների համար ավելի նպաստավոր ռեժիմ սահմանելու օգտին: Այսպես, եթե կան արտաքին ֆինանսավորումն ավելացնելու հետ կապված դժվարություններ, ապա, օրինակ, նվազեցված հարկային դրույքաչափը կարող է օգտակար լինել: ՓՄՁ-ների լրիվ ներուժի օգտագործման առումով այս և շուկայի հետ կապված այլ հնարավոր դժվարությունների ազդեցությունը դեռևս մնում է չպարզված: Սակայն կարևոր է այն, որ տնտեսվարող սուբյեկտի չափը՝ որպես այդպիսին, միշտ չէ, որ սերտորեն կապված է համապատասխան շուկայի դժվարությունների հետ (օրինակ՝ որոշ փոքր ձեռնարկություններ կարող են ֆինանսական դժվարություններ չունենալ), և հարկային միջամտությունները հաճախ կարող են նպատակային ծախսումների ազդեցություն կրել: Հարկավոր է խուսափել սխալ հարկի ներդրման արդյունքում փոքր ձեռնարկություններին հասցվող անդառնալի վնասից:

Կան հարկի ներդրման և կիրարկման հիմնավորված փաստարկներ, որոնք նպաստում են ՓՄՁ-ների լայնածավալ ներառմանը հարկային դաշտում: Չափը կարևոր հանգամանք է հարկային խախտումների և վարչական ծախսերի մոտավոր սահմանները որոշելիս, թեև այդ դերն արդյունավետ հարկային քաղաքականությունը որոշելիս այդպիսի ծախսերի բացակայության պայմաններում վիճելի հարց է: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն առավելությունները, որ կարող է իր հետ բերել հարկ վճարողների ներառումը (որը կարող է, օրինակ, հեշտացնել ֆինանսական միջոցներից օգտվելու հնարավորությունը), ինչպես նաև մյուս առավելությունները, որ կարող է բերել հարկային դաշտ լրացուցիչ հարկ վճարողների տեղափոխումը (կարգապահության խթան հանդիսանալով այդ հարկ վճարողների հետ համագործակցող այլ տնտեսվարող սուբյեկտների համար), ինչպես նաև հարկի ներդրման գործընթացի պարզեցման հետ կապված ծախսերի կրճատումը: Այս առումով ԱԱՀ-ի շեմը, որը զգալիորեն տարբերվում է ըստ երկրների, կարող է կարևոր դեր խաղալ: Սակայն պետք է փաստել, որ ՓՄՁ-ների հարկման հիմնական խնդիրները ծագում են աշխատողների աշխատավարձից հարկերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների պահման դեպքերում: Այս ոլորտում իրավիճակի պարզեցումը կապված է դժվարությունների հետ: Եվ պատահական չէ, որ ՓՄՁ-ների հարկումը վերջին տա-



րիներին մեծ կարևորություն է ստանում թե՛ զարգացած և թե՛ զարգացող երկրներում, քանի որ.

- անցած ժամանակաշրջանում զարգացող և զարգացած երկրների հիմնական ուշադրությունը կենտրոնացած է եղել խոշոր հարկ վճարողների վրա, և բնական է, որ հաջորդ քայլը պետք է լիներ ուշադրության շեշտադրումը ՓՄՁ-ների վրա տեղափոխելը: Վերջինիս նպատակն էր ջանքերը (հարկ վճարողների և հարկային մարմնի) կենտրոնացնել այնտեղ, որտեղից ավելի շատ եկամուտ է հավաքագրվում: Ավելին, ավելի ցածր եկամուտ ունեցող երկրներում խոշոր հարկ վճարողների խումբը հաճախ հանդես է գալիս որպես հարկային եկամուտների հավաքագրման գործընթացի արդիականացումն ապահովող հենարան:

- ՓՄՁ-ներին անբավարար ուշադրություն դարձնելու վտանգի մասին ահազանգերն ածել են, որի անտեսումը կարող է անհավասար հարկային դաշտի արդյունքում հանգեցնել, օրինակ, մրցակցության խաթարմանը, սահմանափակել աճը և խուսափել հարկերից՝ արհեստականորեն մասնատելով ձեռնարկությունները:

- Խոշոր ձեռնարկությունների և վարձու աշխատողների կամավոր կարգապահությունը կարող է արդարացիորեն տուժել, քանի որ նրանց փոքր կամ բարեկեցիկ գործընկերների խախտումների վրա հարկային մարմինը կարող է «աչք փակել»:

- Մեծանում է ՓՄՁ-ների պոտենցիալ առանցքային նշանակությունը՝ կապված նորարարությունների, զբաղվածության աճի ապահովման, ինչպես նաև սպասարկումների ոլորտում ունեցած դերի հետ, որոնք հավասարապես կարևոր են ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների համար:

- Մեծանում և ուղղակի է դառնում սուվերի և ձեռնարկությունների չափերի միջև եղած կապը: Հենց ՓՄՁ-ների միջոցով ու օգնությամբ են խոշոր հարկատուներն ավելացնում իրենց սուվերային շրջանառությունները՝ ստեղծելով մրցակցային անհավասար պայմաններ հենց ՓՄՁ-ների համար:

Նկատի ունենալով տարբեր երկրներում ՓՄՁ-ների դասակարգման չափանիշների զգալի տարբերությունները, միանշանակ է, որ հնարավոր չէ հանգել ՓՄՁ-ների հարկման մեկ միասնական «լավագույն» մոտեցման, որը կիրառելի լինի բոլոր հանգամանքներում և զարգացման նույնիսկ նույն մակարդակներում գտնվող երկրների համար:

ՓՄՁ-ների համար հարկային հատուկ ռեժիմի սահմանումը դժվար խնդիր է և պահանջում է ավելի շատ քաղաքականության և վարչարարության փոխկապակցված մոտեցում:

Հաջողված հարկային վարչարարություն նշանակում է ոչ միայն եկամուտների ավելացում, այլև, ավելի շուտ, կամավոր կարգապահության աճ: Այն լուծումները, որոնք հարմար են անցումային շրջանում գտնվող զարգացած և առաջավոր երկրների համար (ինչպես և էլեկտրոնային կառավարումը), կարող են չգործել ոչ զարգացած ենթակառուցվածքներ ունեցող երկրներում: Խնդիրները տարբեր կլինեն տարբեր երկրներում և նույնիսկ միևնույն երկրում՝ տարբեր տարիների

կտրվածքով: Օրինակ, սովերային տնտեսության բարձր չափեր ունեցող երկրներում ավելի մտահոգված են փոքր ձեռնարկություններին հարկային դաշտ բերելու անհրաժեշտությամբ, իսկ զարգացած արդյունաբերություն ունեցող երկրներում կարող են համարել, որ փոքր ձեռնարկությունների հարկային ճեղքվածքն առաջանում է գրանցված ձեռնարկությունների եկամտի պակաս հայտարարագրման արդյունքում:

Արդի հարկային վարչարարությունը կախված է հարկ վճարողի ինքնագնահատումից, որն իր հերթին կախված է հարկ վճարողների սպասարկման մոտեցումներից, որոնք ուժեղացվում են հարկային օրենսդրության կիրառմամբ՝ ուղղված այն հարկ վճարողներին, որոնք հավանաբար կամ չեն հասկանում, կամ միտումնավոր խուսափում են իրենց պարտավորությունները կատարելուց: Ինքնագնահատման ենթատեքստում ռիսկերի վրա հիմնված և հավասարակշռված սպասարկումը և հարկային ռազմավարությունը զուգահեռ իրականացնելը նպատակ ունեն ուժեղացնելու կամավոր հարկային կարգապահությունը և եկամուտների հավաքագրումը օրենքի շրջանակներում: Այս մեթոդն իր գործնական առումով հարկ վճարողներին խմբավորում է ըստ մի քանի խոշոր ռիսկերի տեսակների՝ ընտրելով ակնհայտ հատկանիշներ, որոնք բնութագրում են հարկային կարգապահության վարքագիծը: Այստեղ մեկնարկային կետը ձեռնարկության մեծությունն է, թեև սովորաբար կիրառվում են բազմաթիվ այլ չափանիշներ: Փոքր հարկ վճարողների ռիսկերի ցուցանիշները կարող են ներառել ընկերությունների արագ ստեղծումներն ու լուծարումները, գրքերի ոչ պատշաճ վարումը կամ դրանց բացակայությունը, կանխիկով կամ բարտերի վրա հիմնված գործարքները, սովերային տնտեսությունում գործելը, բազմաթիվ մանրածախ գործարքները, որոնք հատկապես դժվար է վերահսկել սպասարկման ոլորտում: Հարկային մարմինների համար սա բազմաթիվ դժվարություններ է ստեղծում: Օրինակ, ընկերությունների շրջանառությունը ծանրաբեռնում է գրանցման գործընթացը, ինչպես նաև սպասարկման գործառույթի իրականացումը: Գրանցումների գրքերի թերի վարումը, որը հատկապես խնդիր է զարգացող երկրներում, որտեղ ինքնագրադների և միկրո ձեռնարկությունների ոլորտի մի մասը կարող է լիովին տեղեկացված չլինել, կարող են խոչընդոտել ինքնագնահատման համակարգի ներդրումը, հանգեցնելով վարչարարական գնահատումների կիրառմանը:

Սահմանափակ ռեսուրսներ ունեցող հարկային մարմինները հաճախ համեմատաբար ավելի քիչ կարևորություն են տալիս ՓՄՁ-ների աճող թվին՝ հաշվի առնելով դրանցից ակնկալվող փոքր հարկային մուտքերը: Սա հատկապես ճիշտ է, երբ հարկային մարմնի կատարողականը անցյալում գնահատվել է կամ ներկա պահին գնահատվում է հիմնականում ըստ հարկային մուտքերի մեծության: Հաջող ինքնագնահատման համակարգերը հիմնված են արդար և անկողմնակալ վարչարարության վրա, որը ներառում է թափանցիկ օրենքներ և ընթացակարգեր, հարկային պարտավորությունների վերաբերյալ հստակ տեղեկություններ ստանալու հնարավորություն, հեռախոսով այդ պարտավորություն-

ների կատարման համար աջակցության տրամադրում, սպասարկման կետ, թղթակցություն և բողոքարկման իրավունքներ: Հարկային կարգապահության ապահովման հարցում հարկ վճարողին աջակցելու համար մատուցվող ծառայությունները եկամուտների վարչարարության օժանդակ և էական մաս են կազմում: Ավելին, թեև հաճախ դժվար է ծախսերի և օգուտների առումով չափել այն պնդումը, որ ավելի արդյունավետ ծառայության տրամադրման շնորհիվ եկամուտների հավաքագրումն ավելի բարձր է, քան լրացուցիչ հարկադիր աշխատանքների<sup>18</sup> միջոցով հավաքագրումը: Դրույթը վիճարկելի է:

ՓՄՁ հանդիսացող հարկ վճարողներին որակյալ ծառայություններ առաջարկելու մարտահրավերները հատկապես զարգացող երկրներում կարևոր են, քանի որ.

- այս հարկը վճարողները բազմաթիվ են և տարբեր,
- նրանք սովորաբար հարկային օրենքների և պարտավորությունների մասին թույլ գիտելիքներ ունեն,
- նրանց թվում գերակշռում են քիչ փորձված և հաճախ տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու սահմանափակ հնարավորություն ունեցողները, և, հետևաբար, նրանց համար անհրաժեշտ են թանկ, առերես ծառայություններ և ավելի շատ աջակցություն գրքույկների և տեղեկագրերի միջոցով,
- նրանք «անկայուն հաճախորդներ» են, քանի որ նրանց կարճ գործարար կյանքի պատճառով մշտական ջանք է պահանջվում նորաստեղծներին ուսուցանելու համար:

Սույն մարտահրավերները հաղթահարելու համար հարկային մարմինները պետք է հասկանան հարկ վճարողներին աջակցելու տարբեր ծառայությունների (թղթակցությունը, տեղական գրասենյակներում հանրային սպասարկման կետերը, հեռախոսային կապի կենտրոնները, գրքույկներն ու տեղեկագրերը, արտաքին օժանդակությամբ ծառայությունները և կայքի վրա հիմնված տարբերակները) մատուցման հարաբերական ծախսերն ու օգուտները: Հարկ վճարողների սպասարկման ավանդական ծրագրեր ունեցող երկրներում ռազմավարությունը սովորաբար ծախսերի կառավարումն է՝ հարկ վճարողներին ինքնաջակցման տարբերակների (էլեկտրոնային ծառայությունների, օրինակ, հեռախոսային զանգերի ավտոմատ սպասարկման տարբերակը) դաշտ տեղափոխելու միջոցով: Հարկային մարմինը նվազեցնում է իր ընդհանուր ծախսերը՝ նվազագույնի հասցնելով անմիջական ծառայությունների անհրաժեշտությունը, որոնք տրամադրվում են ավելի ծախսատար թղթակցության և տեղական գրասենյակների սպասարկման կետերի միջոցով՝ առավելագույնի հասցնելով հեռախոսների օգտագործումը և խրախուսելով տեղեկատվությունից օգտվելու ցանցային ձևը:

Զարգացող երկրների համար, որոնք ձգտում են սպասարկման ծրագիր մշակել, հիմնական կառուցվածքային նկատառումը ՓՄՁ-ների կողմից հեռախոսային ծառայությունից, լրատվամիջոցներից և ինտերնետից օգտվելու հնարավորու-

---

<sup>18</sup> Քանի որ ծառայությունների եկամտային վճարումը հաճախ համեմատաբար դժվար է չափել, հարկային ծառայությունների գործառնական բյուջեները հաճախ ավելի մեծ ճնշման տակ են, քան հարկադիր ծրագրերինը:

թյան չափն է: Բազմաթիվ երկրներում էլեկտրոնային ծառայությունները և ինքնաաջակցման տարբերակները ներկայումս կարող են սահմանափակ կիրառում ունենալ: Այդպիսի դեպքերում, թեև դրանք պետք է լինեն միջնաժամկետ կամ երկարաժամկետ նպատակներ, հարկ վճարողների սպասարկումը միշտ պետք է ավելի հաճախ կատարվի ավելի ծախսատար, հեշտ տրամադրվող և հեռախոսային ծառայությունների միջոցով:

Այդպիսի երկրներում հանրության հետ կապված աշխատանքները (համայնքային հանդիպումները և նման միջոցառումները), հարկային գրագիտության ծրագրերը և լրատվամիջոցները մեծ կարևորություն ունեն:

Ծառայությունները և ապրանքները պետք է ձևափոխվեն և մշակվեն ՓՄՁ-ների գործարքային և կենսափուլի կարիքներին համապատասխանեցնելու տեսանկյունից: Կոնկրետ հարցերի համար ՓՄՁ-ներին պարզ և հասկանալի պատասխաններ են անհրաժեշտ. ինչպե՞ս ձեռնարկություն հիմնել, ինչպե՞ս ներկայացնել հարկային հայտարարագիրը և վճարել, ինչպիսի՞ մատյաններ պետք է վարել, որո՞նք են պարտավորությունները որպես գործատու, ո՞ր եկամուտն է ենթակա հաշվետվության, և ո՞ր ծախսերն են ենթակա նվազեցման, ինչպե՞ս լուծարել ձեռնարկությունը և այլն: Հարկային օրենսգրքից կամ հարկային ընթացակարգերի մասին օրենքից, որքան էլ դրանք պարզ լինեն, պարզապես օգտվելու հնարավորությունը չի բավարարի ինքնազբաղ հարկատուի կարիքները, ով պատրաստվում է առաջին անգամ աշխատող վարձել:

Բազմաթիվ հարկային մարմիններ ներկայումս մասնագիտացված կենտրոններ են ձևավորել տարբեր ոլորտներում գործող փոքր ձեռնարկությունների աջակցության համար (օրինակ՝ շինարարություն, հանրային սնունդ, գյուղատնտեսություն, մանրածախ առևտուր, արտադրություն): Հարկային մասնագետների և մյուսների դերը պետք է լծակների կիրառման միջոցով ամրապնդվի՝ ավելացնելու համար ցածր գներով ՓՄՁ ծառայությունների ծավալը: Հարկային մարմինները պետք է ուղիներ փնտրեն՝ ներգրավելու համար երրորդ անձանց, որպեսզի վերջիններս օժանդակեն ՓՄՁ-ներին նրանց հարկային պարտավորությունների կատարման գործում:

Հաշվի առնելով ՓՄՁ-ների կարգապահության կարողությունների սահմանափակումները՝ հարկային մարմինները պետք է ընթացակարգերը պարզեցնեն՝ առաջնորդվելով չորս սկզբունքներով.

1. մի՛ պահանջեք ավել տվյալներ, քան կարող են մշակվել և օգտագործվել հարկային մարմնի նպատակների համար,
2. պարզ և հասկանալի տեղեկատվություն տրամադրե՛ք այն մասին, թե ինչի վերաբերյալ, ինչպես, որտեղ և երբ պետք է գործողություններն ավարտվեն, և հստակ նկարագրե՛ք մատյանների վարման պայմանները,
3. ամբողջ երկրում ընթացակարգերը միօրինա՛կ դարձրեք, որպեսզի հնարավոր լինի խուսափել տարբեր գրասենյակներում տարբեր կարգերի կիրառումից,
4. աշխատեք թափանցիկ և հասարակության հանդեպ պատասխանատվությամբ:

Չարգացող երկրներում ապօրինի գործունեությունը փոքր ձեռնարկությունների շրջանում հարկային մարմինների ամենամեծ խնդիրներից է: Գրանցումը կարգապահության հիմնական խնդիր է՝ կապված ելքային տվյալների գրանցման և հուսալի տեղեկատվության հետ: Չգրանցված հարկ վճարողների հայտնաբերումը չափազանց ծախսատար է և սովորաբար հարկադիր միջոցառումների և ուսուցման (իրազեկման) զգալի ջանքեր է պահանջում: Օրինակ՝ վերջերս Մեքսիկայում անցկացված փորձնական ուսումնասիրությունը ցույց է տվել, որ.

1. ակտիվ ձեռնարկությունների 24 տոկոսը (որոնցից 93 տոկոսը ՓՄՁ-ներ էին) ներառված չէին հարկային գրանցամատյանում, ընդհանուր ակտիվ հարկ վճարողների 38 տոկոսի հասցեները ճշգրիտ չէին հարկ վճարողների անձնական գործերում, իսկ ճշգրիտ հասցե պարունակող գործերի 71 տոկոսում պակասող տվյալներ կային (Gonzalez, 2006): Հետևաբար՝ չգրանցելը և (չներկայացնելը) ցածր եկամուտներ ունեցող որոշ երկրներում կարող է հարկային եկամուտների լուրջ կորուստներ առաջացնել: Չգրանցվելու և հայտարարագիր չներկայացնելու հետ կապված կարգապահության չկատարման համամասնությունը կարող է տարբեր լինել զարգացած և զարգացող երկրներում: Օրինակ, Միացյալ Նահանգներում ներքին եկամուտների ծառայության անցկացրած հետազոտությունը ցույց է տալիս, որ կարգապահության ընդհանուր բացի միայն մոտավորապես 7 տոկոսն է կապված հայտարարագրեր չներկայացնելու հետ, թեև ընդհանուր ճեղքվածքի 32 տոկոսն առաջանում է ձեռնարկության եկամտի պակաս հայտարարագրումից:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. Feige, Edgar L., Working Papers, Reflections on the meaning and measurement of Unobserved Economies: What do we really know about the “Shadow Economy”?, MPRA Paper 68466, University Library of Munich, Germany, 2015
2. Gutmann P., The Subterranean Economy, Financial Analysis Journal, 1977, Vol. 33.
3. Hart K., Informal Urban Income Opportunities and Urban Employment in Ghana, Journal of Modern African Studies, 1973, Vol. 11, #1.
4. Handbook on the Shadow Economy: Friedrich Schneider, Austria, 2011.
5. ՀՀ կառավարության պաշտոնական կայքէջ, <http://www.gov.am> ՀՀ կառավարության՝ 2019 թվականի փետրվարի 28–ի N141-Ա որոշման հավելված:
6. Վիճակագրական ծառայության պաշտոնական կայքէջ. [http://www.armstat.am/file/article/rep\\_ashx\\_09a\\_4.pdf](http://www.armstat.am/file/article/rep_ashx_09a_4.pdf).
7. Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի կայքէջ. <https://www.arlis.am/>

## Վլադիմիր Հարությունյան Եվգենյա Հակոբյան

### ՀԱՐԿԵՐ/ՀՆԱ ՑՈՒՑԱՆԻՇԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԱՃԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

**Ամփոփագիր:** Ստվերային շրջանառությունը պետության չվերահսկված գործունեությունն է, ինչը տարածված է ՀՀ տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում: Հոդվածում դրված խնդրի և ստացված արդյունքների հիման վրա առաջարկվել են գործնական քայլեր՝ ուղղված ստվերային տնտեսության ծավալների կրճատմանը: Այդ հիմքերով վերլուծվել է հարկեր / ՀՆԱ ցուցանիշը և առաջարկվել են ուղենիշեր՝ ուղղված վերջինիս շարունակական աճի ապահովմանը ինչն էլ իր հերթին, կնպաստի հարկման արդյունավետության բարձրացմանը և բնակչության կենսամակարդակի բարելավմանը: Հոդվածի շրջանակներում վերլուծվել և ներկայացվել են նաև ՓՄՁ ոլորտի արդյունավետ հարկման մեթոդները:

**Բանալի բառեր.** հարկ, ՀՆԱ, ստվեր, ստվերային տնտեսություն, շարունակական աճ, պետություն, հարկային մարմիններ, ԵՏՄ երկրներ:

**Владимир Арутюнян  
Евгения Акопян**

### ОРИЕНТИРЫ ПО ОБЕСПЕЧЕНИЮ ПРОДОЛЖИТЕЛЬНОГО РОСТА ПОКАЗАТЕЛЯ НАЛОГИ / ВВП В РА

**Резюме:** Теневой оборот это неконтролируемая деятельность государства, что довольно распространено, практически, во всех сферах экономики РА. На основе поставленной цели и полученных результатов статьи были предложены практические шаги по сокращению теневой экономики. На этих основах было проанализировано соотношение налоги / ВВП и предложены принципы, направленные на обеспечение его продолжительного роста, что, в свою очередь, будет способствовать повышению налоговой эффективности и уровня жизни населения. В рамках статьи рассмотрены и представлены также эффективные методы налогообложения сектора МСП.

**Ключевые слова:** налоги, ВВП, тень, теневая экономика, продолжительный рост, государство, налоговые органы, страны ЕАЭС.

**Vladimir Harutyunyan**  
**Yevgenya Hakobyan**

## **CONTINUAL INCREASE OF THE TAX REVENUE-TO-GDP RATIO IN THE REPUBLIC OF ARMENIA**

**Abstract.** Shadow turnover has been the uncontrolled activity by the state, which was widespread in almost all sectors of Armenia's economy. Based on the problem and the results obtained in the article, practical steps have been proposed to reduce the size of the shadow economy. Based on that, the tax revenue-to-GDP ratio has been analyzed and directions have been proposed to ensure continued growth of thereof, which, in its turn, would contribute to improving of the tax efficiency and the living standards of the population. In the framework of the article, the methods of effective taxation for the SMEs have been analyzed and presented as well.

**Keywords:** Tax, GDP, shadow, shadow economy, continual growth, state, tax authorities, EAEU member-states

## Ռոբերտ Սարինյան

### ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐՈՒՄ

Սույն տեսությունը նպատակ չի հետամտում համակարգելու ազգային տնտեսության վերաբերյալ արդի հայ տնտեսագիտական մտքի տիրույթը, այն ավելի շուտ անդրադարձ է վերջին շրջանում առավել արձարծվող որոշ հարցերի դրվածքներին:

#### **«Պետական պարտքի» սահմանը**

Ինչպես ասում է Բեռնարդ Շոուն, եթե տնտեսագետները փորձեն մինչև վերջ հասցնել իրենց գործը, նրանք երբեք համաձայնության չեն գա:

Անցման շրջանում գտնվող երկրների համար շատ արձարծվող հարցերից է արտաքին պարտքի խնդիրը:

Հենրի Ֆորդը այն կարծիքին է, թե «փողեր փոխ վերցնելը հեշտությամբ վերակերպվում է հնարքի, որպեսզի չնայես վնասի աչքերին: Ուրիշի փողերը հաճախ ծուլությանն օգնում են: Անշուշտ, փող վաստակելը ավելի դժվար է, բայց նա ավելի լավ է, քան փոխ վերցնելը. «կապիտալը պետք է հոսի ֆաբրիկայից, այլ ոչ թե բանկից»<sup>19</sup>: Պետական պարտքի սահմանման առումով գուցե և այն չի արտահայտում այդ հասկացության արդի բովանդակությունը, բայց որ բերված փողերը խորքային չափումներ են ենթադրում, ստույգ է:

Գրականության մեջ փոխառություններ վերցնելը հաճախ դիտվում է երկրի կառավարման արդյունավետության հետ կապի մեջ: Սույն հարցերի քննությունն է ակնկալում Ա.Բայադյանի և Հ.Մարկոսյանի «Պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» (ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2015) մենագրությունը: Սովորաբար աշխատության վերնագրից զատ, ներածականում բացում են ուսումնասիրության նպատակադրման փակագծերը: Սույն դեպքում աշխատության վերնագիրը փարատում է դրա անհրաժեշտությունը՝ արտահայտելով արձարծվող հարցերի շրջանակները:

Պետական պարտքի խնդիրը վաղուց է զբաղեցնում տնտեսագիտական միտքը: Հետազոտական շրջանակների մեջ են առնվել խնդրի տարբեր ենթաշերտերը, կատարվել են վերանայումներ, ստեղծվել են կողմնորոշումներ, ընդլայնվել են առարկայի իմացության սահմանները: Այս առումով պետական պարտքի նկատմամբ տնտեսագետների հայացքների վերլուծության համար աշխատության հեղինակները շառավիղ են գծում սկսած XVIII դարի կեսերից (Դավիդ Հյում, Ադամ Սմիթ, Ռոբերտ Մալթուս, Դավիդ Ռիկարդո, Պիեռ Լերսա-Բոլյեն, Ռոբերտ Բարրո և ուրիշներ): Անդրադառնալով խնդրի մանրամասներին՝ ընդհանրացվում է հայացքների էվոլյուցիայի ընթացքի հետևյալ հետագիծը.

<sup>19</sup> Форд Генри, Моя жизнь, мои достижения, М., 1989» с, 128-129.



«...ավելի վաղ դասականները գտնում էին, որ պետական պարտքը բացասական երևույթ է, քանի որ այն... վատնում է կապիտալը: Իսկ ահա ավելի ուշ շրջանի դասականներն էլ գտնում էին, որ պետական պարտքը կարող է դրական անդրադառնալ, եթե այն ուղղվի ներդրումներին: Իրենց հերթին էլ նոր տնտեսագետները գտնում էին, որ դեֆիցիտն օգտակար է տնտեսության կայունության առումով, իսկ ձևավորված պարտքը, երկարաժամկետ հատվածում, պետության համար վտանգ չի ներկայացնում: Միաժամանակ նոր դասականները գտնում էին, որ ձևական առումով նշանակություն չունի, թե ինչպես է պետությունը ֆինանսավորում ծախսերը: Ռիկարդոյի հավասարության Բարրոյան մեկնաբանությունից հետո, ըստ էության, տնտեսական գրականությունում դեռևս որևէ սկզբունքային նոր բան չի արժարժվել»<sup>20</sup>:

Հայտնի է, որ պետական պարտքը տվյալ երկրի քաղաքացիներին և արտասահմանյան երկրների կազմակերպություններին դեռևս չմարված փոխառությունների գումարն է: Վերջինս աճում է, եթե աճում է բյուջետային դեֆիցիտը. ծախսերը գերազանցում են եկամուտները: Դրանց հավասարակշռելու հարցում որևէ «սուրբ օրենք» գոյություն չունի և որին կարելի է հասնել հայտնի հնարքների միջոցով՝ կա՛մ ծախսերը կրճատել, կա՛մ եկամուտները մեծացնել, կա՛մ դրամական էմիսիա, կա՛մ էլ պետական փոխառություններ թողարկել: Ինչ խոսք, հրապուրիչ է ներկայանում բյուջեի ծախսերը կրճատելու և առանց պարտքի ապրելու տարբերակը: Տարբերակներից մեկն էլ հարկերի բարձրացումն է: Սակայն 90-ական թվականներին հանրապետությունն ուներ չաշխատող տնտեսություն, որի պայմաններում աշխատանքային եկամուտները վեր էին ածվել կենսապայմաններ «ապահովող օժանդակ միջոցի»: Եվ ահա «Անկախության առաջին իսկ տարիներից,– գրում են հեղինակները,– Հայաստանի առջև ծառայող բազմաթիվ ու բազմաբնույթ խնդիրներ, ինչպիսիք են 1988թ. Սպիտակի երկրաշարժի չվերացված հետևանքները, Ղարաբաղյան հակամարտությունը, տրանսպորտային շրջափակումը, էներգետիկ և պարենային ճգնաժամը, ազգային արժույթի ներդրումը և այլն: Դրանց լուծումն ու հաղթահարումը զգալի միջոցներ էին պահանջում, որոնք ներքին աղբյուրներից հայթայթելը գործնականում անհնար էր»<sup>21</sup>: Երկիրը պիտի դիմեր արտաքին աղբյուրներից միջոցների ներգրավմանը՝ վարկեր վերցնելով միջազգային կազմակերպություններից, ծայր տալով պետական պարտքի աճին: Սակայն 90-ական թվականները «պարտքի ներգրավման և անկանոն միտումների» ժամանակաշրջան էր:

XVI դարի ֆրանսիացի փիլիսոփա, գրող Միշել Մոնտենը նկատում է, թե հարստությունը «ստեղծվում է ոչ այնքան մեծ եկամուտներով, որքան գործերը լավ վարելով»: Տվյալ դեպքում պարտքերը կառավարելով: Ժամանակի ընթացքում տնտեսական գիտությունը մշակել է որոշակի սկզբունքներ պետական

<sup>20</sup> Բայադյան Ա.Հ., Մարկոսյան Հ.Ա., Պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները. դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2015, էջ 22:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 50:

պարտքի կառավարման վերաբերյալ: Հանրապետությունում պետական պարտքի անմիջական կառավարումը սկսվել է իրականացվել 2000թ.-ից ֆինանսների նախարարությունում ձևավորված պետական պարտքի կառավարման վարչության և ֆինանսների նախարարության աշխատակազմի գանձապետական պահառու բաժնի կողմից: Աշխատությունը միջազգային փորձի պատկերի վրա ուսանելի վերլուծություններ է պարունակում պետական պարտքի կառավարման նպատակների, մեթոդների, պարտքային բեռի գնահատման, ռիսկերի վերաբերյալ՝ դրանք որոշակիացնելով հանրապետության տնտեսական վերափոխումների ընթացքին համապատասխան, առաջադրում առաջարկություններ իրավական հիմքերի կատարելագործման և ինստիտուցիոնալ բարեփոխումների վերաբերյալ, ինչպես օրինակ այն անհարթությունների և անորոշությունների առումով, որոնք առկա են պետական պարտքի նպատակների, թափանցիկության, տեղեկատվության հետ կապված, կամ պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունից բացի դիտարկելու պետական պարտքի այլ բնութագրիչների սահմանային մեծությունների օրենսդրորեն ամրագրման անհրաժեշտությունը, որոնցից են՝ պետական պարտքի արտարժույթային և արտոնյալության կառուցվածքը, ինչպես նաև արտաքին պարտք/ներքին պարտք հարաբերակցությունը:

Տնտեսագետները, շրջանառության մեջ դնելով համապատասխան վիճակագրական տվյալներ, տալիս են պետական պարտքի ժամանակագրական վերլուծությունը 2000-2014թթ. համար, ինչպես նաև կանխատեսումներ անում սպասվող միտումների մասին: Նկատելով, որ արտաքին պարտքը հաճախ մեծացնում է երկրի տնտեսական, հետևապես նաև քաղաքական կախվածությունն այլ երկրներից և միջազգային ֆինանսական կազմակերպություններից, որոնք վարկ են տրամադրել, այնուամենայնիվ նախապատվություն է տրվում արտաքին պարտքին, որը թույլ է տալիս «ապահովել կապիտալի այնպիսի ներդրումներ, որոնք գերազանցում են ժամանակի տվյալ պահի ներքին հնարավորությունները»<sup>22</sup>:

\* \*  
\*

Երկրի ֆինանսական ռեսուրսների խնդիրը Էդուարդ Սանդոյանը դիտարկում է պետական պարտքի հետ ունեցած առնչություններում: Պետական պարտքի սահմանի վերաբերյալ միանշանակ չեն տնտեսագետների կարծիքները: Վերջին մոտեցումները հանգում են նրան, որ պետության ֆինանսների գլխավոր խնդիրը ոչ թե բյուջեի հավասարակշռելն է, այլ լրիվ զբաղվածության ապահովումը: Եթե դա ապահովվում է աճող պետական պարտքով, ապա թող այդպես լինի: Հակառակը, որն իր հիմքում ունի արտաքին պարտքի կանխակալ սահմանը չհատելու պոստուլատը, կաղապարում է և ազգային ֆինանսական քաղաքականության համար գծում կախյալ կացություն: Կարևորն առաջընթաց

<sup>22</sup> Բայադյան Ա.Հ., Մարկոսյան Հ.Ա., Պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները. դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2015, էջ 67:

ցի խնդիրն է: Այս դիտակետից էլ Է.Սանդոյանի կարծիքով, հաշվի առնելով երկրի ներքին ռեսուրսների հնարավորությունները, այսպես կոչված «անվտանգ կայունություն» ապահովող քաղաքականության բանաձևումները չեն տալու որակական նոր փոփոխություններ: Իսկ դա նշանակում է արմատավորված պատկերացումների հաղթահարում և նախապաշարմունքներից ազատ ֆինանսական քաղաքականություն: Ստորև բերվող ընդարձակ մեջբերումն ուրվագծում է նրա մտակառույցի շղթան. «Եթե մենք պարտքը չավելացնենք, չենք զարգանա: Մեզ ներդրումներ են պետք, միջոցներ՝ երկարաժամկետ: Բայց երբեք չի կարելի պարտքն ուղղել ընթացիկ ծախսերին: Պետական բյուջեի ընթացիկ ծախսերի քաղաքականությունը պետք է հիմնված լինի բացառապես ընթացիկ եկամուտների վրա: Իսկ պարտքը պետք է գնա բացառապես երկարաժամկետ ներդրումների քաղաքականությանը: Հիմա շատ կարևոր է, թե այստեղ ինչ ծրագրեր ունենք: Խոսքը կարող է լինել շատ կարևոր հանրային, ազգային նշանակության ծրագրերի մասին. ենթակառուցվածքներ, մեծ էներգետիկա, ճանապարհներ, երկաթգիծ, գյուղատնտեսություն, բազմաթիվ հիմնախնդիրներ ունենք, որոնք պահանջում են շուտափույթ ֆինանսավորում: Իսկ տարիներ սպասել, թե ներքին աղբյուրներից ե՞րբ կունենանք, շատ հետ կընկնենք: Հաջորդը. սրան անցնելու համար մեզ անհրաժեշտ է խորքային, հիմնովին բարեփոխել ողջ համակարգը՝ հարկային, արդիականացնել կապիտալի շուկան, որը մենք չունենք, երկար փողերի ինստիտուտը՝ ներառյալ կուտակային կենսաթոշակային համակարգի արդիականացումը, որը չի նպաստում մեր ներքին զարգացումներին: Խոսքն ինչի՞ մասին է. ավելի կարճ հորիզոն ընտրել, կորպորատիվ կենսաթոշակային հիմնադրամներ կայացնել, ազգային հիփոթեքային մարմինը զարգացնել, երկարաժամկետ պարտատոմսերի թողարկման ճանապարհով հիփոթեքի շուկան զարգացնել, ազգային սուվերեն հիմնադրամ ստեղծել, որ արտաքին աղբյուրներից, ինչպես նաև՝ ներքին, ներդրումները հոսեն, ըստ էության, կենտրոնացված, տեսանելի, թափանցիկ դաշտում և իրականացնենք մեր ազգային ծրագրերը: Մենք պետք է համակարգի արագ բարեփոխումներ իրականացնենք, բայց դրանք իրենք էլ են կախված ֆինանսական ռեսուրսներից: Եթե ոչինչ չանենք, ավելացնենք պետական պարտքը և, ինչպես նախկինում, փոշիացնենք, իհարկե, անիմաստ կլինի և ավելի կծանրանա մեր արտաքին բեռը»<sup>23</sup>:

Բերված դիտարկումները բխում են հանրապետությունում իրականացվող տնտեսական քաղաքականության նորոգության անհրաժեշտությունից: Հրանտ Բագրատյանը տնտեսական ոլորտի համար ընդունելի դիտելով միայն էվոլյուցիա հասկացությունը, հանրապետության պետական պարտքի ավելացումը դիտում է տեղին, որպես միջազգային պրակտիկայում վաղուց ընդունված երևույթ: Ավելին, բոլոր այն երկրներում, որոնցից պարտք ենք վերցնում, արտաքին պարտքը հաճախ կազմում է ՀՆԱ-ի 500-600 տոկոսը: Տնտեսագետի խոսքը 9

<sup>23</sup> «Հրապարակ», 27 փետրվարի, 2019թ.:

մլրդ. դրլարով արտաքին պարտքն ավելացնելու մասին է, որը հնարավորություն կտա հանրապետության ենթակառուցվածքներում այնպիսի ներդրումների իրականացմանը, որոնք թույլ կտան փոխել «երկրի ռազմաստրատեգիական դիրքը» և կավելացնեն ազգային հարստությունն ու ՀՆԱ-ը: Խոսքն արտաքին պարտքի այնպիսի նպատակային ծրագրերի իրականացման մասին է, որոնք կոչված կլինեն ավելացնելու երկրի հիմնական կապիտալը<sup>24</sup>:

Հակոբ Քոչարյանն արտաքին ներդրումների խնդրի լուծումը դիտարկում է ներքին միջավայրի հնարավորությունների հետ ունեցած կապի մեջ՝ «Բայց, քանի դեռ չի հաջողվում տնտեսություն բերել ներքին կապիտալը, դժվար է լուրջ հույսեր կապել արտաքին ներդրումների հետ: Որքան էլ օտարերկրյա ներդրումները կարևոր են Հայաստանի տնտեսության համար, անհնարին է պատկերացնել տնտեսական հեղափոխություն՝ առանց ներքին ռեսուրսների օգտագործման: Սա խնդիր է, որը եղել և շարունակում է լուրջ մարտահրավեր լինել Հայաստանի տնտեսության համար: Ու, քանի դեռ կառավարությանը չի հաջողվել պայմաններ ստեղծել, որպեսզի ներքին կապիտալը վերածվի ներդրումների, պետք է մոռանալ տնտեսական հեղափոխության ու թռիչքային աճի մասին»<sup>25</sup>: Խոսքը ներքին խնայողությունների մասին է, որոնք, ըստ փորձագիտական գնահատումների, կազմում է շուրջ 5 միլիարդ դոլար, որից 3 միլիարդը բանկային համակարգում որպես ավանդներ: Վերջիններս, եթե նույնիսկ վերածվում են վարկերի, ապա կոշտ տոկոսադրույքների պայմաններում դրսևորում են ցածր արդյունավետություն՝ միայն ավելացնելով բանկային համակարգի եկամուտները: Իսկ ավանդատուները գերադասում են, առանց ավելորդ ռիսկայնության, եկամուտներ ստանալ բանկային տոկոսադրույքների միջոցով: Խնայողություններն աճում են նույնիսկ ՀՆԱ-ի ցածր աճի պայմաններում: Չկայացած արժեթղթերի շուկայի, բարձր վարկային տոկոսադրույքների, կենսաթոշակային ֆոնդերի ցածր տնտեսական էֆեկտի և այլ գործոնների առկայությամբ է Հ.Քոչարյանը բացատրում ներքին ներդրումների միջավայրի հնարավորությունների ցածր մակարդակի պատճառականությունը: Ժամանակ առ ժամանակ, դեռևս խորհրդային տարիներից, տնտեսագիտական միտքն առաջադրում է մի որևէ հիմնահարց՝ ուղղություն տալով նրա արժարժույթների տիրույթին: Այդպիսին է արդի փուլում արտաքին պարտքի ավելացման միջոցով լուծելու հանրապետության ներդրումային ծրագրերի խնդիրը: Սակայն, ինչպես նկատում է Վահագն Վարդանյանը, եթե դա կատարվի խիստ հսկողության և ենթակառուցվածքային զարգացման հիմքում ունենալով հստակ հաշվարկներ և հեռանկարային ծրագիր. «Իսկ ուղղակի տնտեսական աճի ակնկալիքով պարտք վերցնելը ինքն իրենով տարակուսանք է առաջացնում՝ հաշվի առնելով այն, որ երկրից ներդրման համար առկա պոտենցիալ գումարներ անգամ արտահոսում են»<sup>26</sup>: Նա մեր երկրի համար առանձնացնում է

<sup>24</sup> «Հրապարակ», 2 մարտի 2019թ.:

<sup>25</sup> «168 ժամ», փետրվարի 9-11, թիվ 14:

<sup>26</sup> «168 ժամ», մարտի 2-4, թիվ 23:

ներդրումների երեք աղբյուրներ՝ Հայաստանի ներքին աղբյուրները, հայկական Սփյուռքի արտաքին աղբյուրները և համաշխարհային (ծագումով ոչ հայկական) աղբյուրները: Վերջին երկու խմբերն առաջնորդվում են նույն մղումներով. վերջինը, թե ինչու ներդրումներ կատարել, եթե հայկական Սփյուռքը, որը լավ է ճանաչում Հայաստանն ու նրա մշակույթը, այդպես չի անում, իսկ հայկական Սփյուռքն էլ, որի հավաքական կարողությունը հասնում է 150-200 միլիարդ դոլարի, նույն սկզբունքով, թե ինչու ներդրում կատարել, երբ Հայաստանում ապրող պոտենցիալ ներդրողը, որն ավելի լավ է ճանաչում գործարար միջավայրը, ներդրումներ չի կատարում, իսկ ներդրվելիք գումարները երկրից դուրս է հանում<sup>27</sup>: Այսինքն՝ վերը բերված տեսակետներից կարելի է ընդհանրացնել, որ ունենք պոտենցիալ, բայց ոչ իրական ներդրողներ: «Այսպիսով, – գրում է Վ.Վարդանյանը, – չթերագնահատելով արտաքին ներդրումների կարևորությունը, առաջարկվող առաջին քայլը նախ նպատակ է հետապնդում ներդրողների համար ստեղծել հնարավորություն՝ իրականացնելու ներքին ներդրումային միջավայրի փոփոխում: Մեր տեսակի համաշխարհային ազգի դեպքում, քանի դեռ ներքին միջոցներն արդյունավետ չեն օգտագործվում, արտաքին աղբյուրներից մեծածավալ ներհոսք ակնկալելը՝ ինքնախաբեություն է»<sup>28</sup>:

Շեղինակի հոդվածի «Հայաստանի ներդրումների ներգրավումն ունի իր տրամաբանական հերթականությունը» վերնագիրն արտահայտում է արտաքին ներդրումների հավանականությունը ժխտելու և ներքին հնարավորություններին ապավինելու գուցե ծայրահեղ ցուցմունքը\*:

2017թ. տվյալներով Հայաստանի պետական պարտքը կազմել է 6,7 մլրդ դոլար: Այն մեկ տարվա ընթացքում աճել է շուրջ 832,5 մլն դոլարով կամ 12 տոկոսով, որից արտաքին պարտքը՝ 689 մլն դոլարով:

Առաջին գծի նշանակություն է ստանում ոչ այնքան պարտքի չափը, որքան նրա արդյունավետ կառավարումը: 2020թ. պարտքի սպասարկումը կազմելու է

<sup>27</sup> Նույն տեղում:

<sup>28</sup> Նույն տեղում:

\* Ի դեպ, հարցի դրվածքի իմաստով նկատենք, որ մի անգամ չէ, որ անդրադարձ է եղել այն հարցին, թե ինչ է ստեղծել տնտեսագիտական միտքն անցյալում, և որքան է այն համապատասխանում տնտեսական կյանքի այսօրվա բարդ կացության կարգավորման պահանջներին: Իսկ հաճախ էլ նախորդ բանաձևերն իրենց զգալի մասով համարվում են հնացած, թե անհրաժեշտ են երևոյթների գնահատման նոր մոտեցումներ: Օրինակ, տնտեսական աճի վերաբերյալ հայեցողությունը վերընթերցման կարիք ունի և անհամապատասխանություն է հայտաբերում իրականության հետ: Տնտեսագետ Նիկիտա Կրիշևսկին, հենվելով նորագույն հետազոտությունների վրա, թե որքանով է տնտեսական աճը պայմանավորված պետական կառուցվածքի առանձնահատկություններով, նկատում է, թե վերջին երեք տասնամյակներին կայուն տնտեսական աճ են գրանցել դեմոկրատական երկրների 52 տոկոսը և ավտորիտար երկրների 48 տոկոսը: Դա նշանակում է, որ քաղաքական կարգը գլխավորը չէ: Կամ այլ տնտեսագետների (Ի.Պրասադ, Ռ.Ռադժան, Ա.Սուբրամյան) կարծիքով այդ նույն ժամանակահատվածում և ոչ մի երկիր, որոնք կողմնորոշում ունեին դեպի արտասահմանյան ներդրումները, երկարատև տնտեսական հաջողություն չեն ունեցել: Կամ տնտեսական աճի առումով գլխավորապես անհրաժեշտ է հիմնվել սեփական ֆինանսական ռեսուրսների, սեփական արտադրության և սեփական կադրերի և, որ գլխավորն է՝ ազգային մենթալիտետի վրա: Նա արդի տնտեսագիտական մտքի գլխավոր հակասությունը, հատկապես անցման շրջանի երկրների համար, տեսնում է տեսության և պրակտիկայի միջև խզվածության, իրականության գիտակցման պատճառականության մեջ (Литературная газета, 19-25 декабря 2018г.)

շուրջ 900 մլն, դուլար, որը Վահագն Խաչատրյանի կարծիքով «հսկայական թիվ է» բյուջեի համար, և որը կարելի է իրականացնել առանց ցնցումների բարձր տնտեսական աճի դեպքում: Բոլոր դեպքերում պարտքը վերադարձնելու հնարավորությունների հաշվառումը մնում է օրակարգում:

Տնտեսագետ Գ.Յագուրովը, անդրադառնալով հարցի վերաբերյալ Ռուսաստանի կառավարությանը, նկատում է, թե Հունաստանի զանգը դողանջում է «նաև քեզ համար»: Դա պարտավորեցնում է յուրաքանչյուրին ապրել ըստ միջոցների և անհոգորեն չմտնել պարտքերի մեջ: Ինչպես ասում է գրողը. «Ճանապարհի վերջում պիտի հաշիվները փակես»<sup>29</sup>:

### **Անդրադարձ**

Ամերիկյան հայտնի տնտեսագետ, հայազգի Տարոն Աճեմոլյին, անդրադառնալով Հայաստանի «թավշյա հեղափոխության» կարևորությանը, այն դիտում է որպես «շրջադարձային կետ», քանի որ երկիրը «չափազանց երկար է տառապել կոռումպացված, անարդյունավետ կառավարության պատճառով, որն արտացոլվում էր տնտեսական վիճակով և արտագաղթի թվերով», «Հայաստանին հաջողվեց ստեղծել խաղաղ, շատ խոստումնալից սկիզբ, և դա փայլուն հաղթանակ է: Երկրորդ քայլը կլինի, այդ խաղաղ սկզբի վրա հիմնվելով, շարունակել համակարգային բարեփոխումների գործընթացը և ստեղծել ապագա բարգավաճման, որակյալ կառավարման, խաղաղ գոյատևման հիմնասյուները» («Ամերիկյան ծայնին», 12.06.2018թ. տված հարցազրույցից):

Հայաստանի տնտեսության արդի կառուցումն իր շատ մասերով տեղադրվում է Տարոն Աճեմոլյու և Ջեյմս Ռոբինսոնի տեսության առաջադրույթներում\*: Ընդհանուր առմամբ դրա հիմքում ընկած է «ինկլյուզիվություն-էքստրակտիվություն» կոնցեպցիան, որն օգտագործվում է ազգային բարեկեցության մակարդակը որոշող ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական գործոնների դասակարգման համար: Այն գործում է հետևյալ ձևով. ինկլյուզիվ տնտեսական ինստիտուտները նպաստում են բարգավաճմանը, բայց իրենց կայունության համար կարիք ունեն քաղաքական կառուցվածքի ինկլյուզիվ ձևերի, որոնք իրենց հերթին հենվում են ինկլյուզիվ տնտեսության վրա: Էքստրակտիվ տնտեսական կառուցվածքները կարող են որոշ ժամանակով ապահովել ազգային արտադրության արագ աճ (այն էլ տնտեսության որոշակի ոլորտներում), սակայն երկարատև հեռանկարի համար դրանք անաշխատունակ են կամ լավագույն դեպքում քիչ արդյունավետ: Դրանց սատարում են էքստրակտիվ քաղաքական ինստիտուտները, որոնք կարիք ունեն էքստրակտիվ տնտեսության և զորավիճ են դառնում իրենց իշխանությամբ և հեղինակությամբ:

Սա մի ունիվերսալ տեսություն է, ըստ որի, ինչպես ասում է փիլիսոփան «չկա հետևանք առանց պատճառի, պատճառը պատճառ է հետևանքի մեջ»:

<sup>29</sup> «Литературная газета», 29 июля-4 августа, №31, 2015г.

\* Այդ մասին հանգամանորեն տե՛ս մեր «Ինչու որոշ երկրներ հարուստ են, իսկ մյուսները աղքատ» հոդվածը (Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում. գիտաժողովի նյութեր, Եր., 2018, էջ 259-271):

Իսկ որ 1990-ական թվականներին հանրապետությունում սկիզբ առած շուկայական տնտեսաձևի մուտքի ռեֆորմները կառուցված էին էքստրակտիվ ինստիտուտների վրա, այդպես էին:

Ձևավորվել էր մի քաղաքական վերնախավ, որը հասարակության հարստությունը վերաբաշխում էր իր օգտին, թեև կոչված լինելով ուղղություն տալու հասարակության բնական կազմակերպության ձևավորմանը: Եվ բավարարված այդ վիճակով, ըստ էության, դարձել էր առաջընթացի խոչընդոտ:

Անդրադառնալով 2017թ. Ռուսաստանի տնտեսական տարվա արդյունքներին՝ փորձագետ Սերգեյ Յիպյանը երկրի տեխնոլոգիական հետամնացության պատճառը կապում է դիմադրության հետ, լինի դա տնտեսական, թե քաղաքական: Պատմությունը նրա կարծիքով հարուստ է նման օրինակներով. Ավստրիայի կայսր Ֆրանց Իոսիֆը, որը գահակալել է շուրջ 68 տարի, կտրականապես մերժում էր երկաթուղիների կառուցումը՝ գտնելով, որ «երկաթուղով մեզ մոտ մուտք է գործելու հեղափոխությունը»: Երկաթուղիների կառուցմանը դեմ էր նաև Ռուսաստանի ֆինանսների նախարար Եգոր Կանկրինը: Նույն կարծիքին էր նաև իմպերատոր Նիկոլայ Առաջինը: Վերջինիս համոզում էին, որ Ռուսաստանին ընդհանրապես երկաթուղիներ պետք չեն: Եվ 1842-ին ամբողջ Ռուսաստանում կար ընդամենը մեկ երկաթուղի, որը Սանկտ Պետերբուրգը կապում էր Յարսկոյե սելոյի հետ: Ս.Յիպյանը նկատում է. «...այժմ էլիտայի որոշ մասի մոտ գործում է նույն ինքնապաշտպանության զգացմունքը (հատկությունը –Ռ.Ս.), ծագում է այն միտքը, թե եկեք ոչինչ չփոխենք: ...նույնը կուսակցությունների, քաղաքական առաջնորդների հետ է կատարվում... անհրաժեշտ է սերունդների հերթափոխություն: Հասարակությունը պիտի հասկանա, որ մրցակցությունն է զարգացման մեխանիզմը և՛ տնտեսության, և՛ քաղաքականության մեջ... հնարավոր չէ մրցակցության, ազատ էկոնոմիկայի պայմաններում պահպանել իշխանության մոնոպոլիան»<sup>30</sup>: Այդպիսին էր պատկերը նաև հանրապետությունում հատկապես վերջին տասը տարիներին: Այդ ընթացքում, նկատում է Հ.Բագրատյանը, տնտեսական գումարային աճը կազմել է 25 տոկոս, մինչդեռ Ադրբեյջանինը կազմել է 38, Վրաստանինը՝ 46, աշխարհինը՝ 25 տոկոս: Աղքատությունը 23 տոկոսից դարձել է 29,9 տոկոս, գործազրկությունը 19 տոկոսից դարձել է 16,5 տոկոս<sup>31</sup>:

\* \*  
\*

Իսկ հանրային կյանքի համար կարծես պահվածքի նորմ էր դարձել կոռուպցիայի երևույթը: Եվ կառավարությունն իրավացիորեն սուր կետի վրա է դրել, եթե չասեմ վերացման, ապա նրա չափերի խիստ կրճատման անխուսափելիությունը:

Սկսած շումերական թագավորության ժամանակներից՝ սահմանվել են պատիժներ, օրենսդրական ակտերով ու տնտեսական գործառույթների կատա-

<sup>30</sup> «Аргументы недели», 29 декабря 2017г.

<sup>31</sup> «Հրապարակ», 1 մայիսի, 2018:

րելագործման միջոցով փորձ է արվել սահմանափակելու կոռուպցիա ծնող հնարավոր դրսևորումները: Սակայն այսօր էլ այն մնում է որպես մարդկային գործունեության ասպարեզներից մեկը: Ըստ եվրոպառլամենտի 03.02.14թ. զեկույցի՝ կոռուպցիան ԵՄ երկրների տնտեսության վրա նստում է տարեկան 120 միլիարդ եվրո: Եվրամիությունում համարում են, որ կոռուպցիան լայն տարածում ունի իրենց երկրներում. բնակչության 26 տոկոսը համարում է, որ իրենք դա զգում են ամենօրյա կյանքում, 8 տոկոսը մասնակից և վկա են այդ ակտերին, 73 տոկոսը կաշառքը և կապերի օգտագործումը համարում է որոշ ծառայություններ ստանալու ամենահեշտ ուղին, 67 տոկոսը, թե քաղաքական կուսակցությունների ֆինանսավորումը թափանցիկ չի և չէ վերահսկվում պետության կողմից: Տասը միավորներից 4-ից ավելին կոռուպցիան դիտում են պորբլեմ բիզնեսի համար: Իսկ որքան փոքր է միավորումը, այնքան ավելի շատ է տուժում կոռուպցիայից<sup>32</sup>:

Պատմության ամբողջ ընթացքում մարդը շարժվել է փողի նկատմամբ կենսահոգեբանական դրդմամբ: Կենսամակարդակն ունի «սովորության բնույթ»: Այն պայմանավորված է հասարակության մեջ կամ տվյալ դասակարգի համար ընդունված ծախսերի մակարդակով: Դիֆերենցված սպառումը հասարակությանը բնորոշ է եղել վաղ ժամանակներից սկսած: Սակայն ժամանակակից համակարգը, - նկատում է Թ.Վերլենը, - հիմնված է դրամական մրցակցության վրա: Գողը կամ խաբեբան, իրավախախտումների ճանապարհով տիրանալով մեծ հարստության, փոքր գողի համեմատությամբ մեծ հնարավորություններ է ունենում խուսափելու օրենքի կողմից պատժվելուց, իսկ նրա կուտակած կարողության և անազնիվ ձևով ձեռք բերված սեփականությունը, բարեպատեհ ծախսելու շնորհիվ, նա ձեռք է բերում բարի համբավ: Թալանվածի բարեկիրթ ծախսումն այնքան տպավորիչ է ուժեղ արտաքին պատշաճության զգացում ունեցող անձանց վրա, որ նրանց մոտ թուլանում է բարոյական անազնվության զգացումը օրինազանցություն տեսնելու ժամանակ: Հեղինակության հիմքը «...դրամական ուժն է: Եվ դրամական ուժի ցուցադրման միջոցներն են... շռայլությունը և ցուցադրական նյութական սպառումը»<sup>33</sup>:

«Վերլենի էֆեկտը» հանգում է հետևյալին. ապրանքները հաճախ սկսում են գնահատվել ոչ ըստ օգտակարության: Որքան մարդը շատ է սպառում, այնքան շրջապատի նկատմամբ ձեռք է բերում բարձր կարգավիճակ: Այդ «ցուցադրական սպառումը» իր բնույթով «վատնողական է», բնորոշ է սոցիալական հիերարխիայի վերին դասակարգի պահվածքին որպես «հեղինակության», «վարկի» դրսևորում: «Նախանձախնդրային դրամական համեմատության» արդյունքում ստորին սոցիալական շերտերը սկսում են ընդօրինակել «աչքի ընկնող սպառման պահվածքին»: Իսկ այդպիսի «վատնողական, ցուցադրական» սպառումը միշտ պատրաստ է կլանելու արտադրության «ցանկացած բարձրացում կամ ապրանքների թողարկում, երբ առավել տարրական նյութական պահանջ-

<sup>32</sup> Литературная газета, 25-31 марта 2015г.

<sup>33</sup> Веблен Т. Теория праздного класса, М., 1984, с. 120.



մունքները բավարարված են»<sup>34</sup>: Այսինքն՝ տեղի է ունենում հասարակության արտադրողական էներգիայի և հասարակական եկամտի անտեղի վատնում:

Միայն զուտ պետական վերահսկողական միջոցներով կոռուպցիան հաղթահարել հնարավոր չէ: «Ռևիզոր»-ի հեղինակը նկատում է. «...նոր պաշտոնյա նշանակել, որպեսզի նախորդին սահմանափակի գողության մեջ, նշանակում է մեկի փոխարեն ունենալ երկու գողեր... Մարդուն չի կարելի սահմանափակել մարդով, հաջորդ տարի անհրաժեշտություն կառաջանա սահմանափակել նաև նրան, ով նշանակվել է սահմանափակման համար, և այդ ժամանակ սահմանափակումներին վերջ չի լինի»: Իսկ քանի որ կոռուպցիան կրում է ավանդականի խորհուրդը՝ պայմանավորված բազմաթիվ գործակիցներով, որը հաճախ ավելի ուժեղ է, քան օրենքը, ուստի առավել արդյունավետը պետական վերահսկողության և համապատասխան ինստիտուցիոնալ դաշտի կառուցելագործման ուղին է:

\* \*  
\*

Արդի սոցիալ-տնտեսական համաշխարհային կապերի, փոխազդեցությունների ու մրցակցության պայմաններում ռուսական մտավորականության հրապարակումներում հաճախ վկայակոչվում են խորհրդային երկրի ղեկավարի՝ Իոսիֆ Ստալինի՝ 1931-ին ասված այն խոսքերը, թե «Մենք առաջավոր երկրներից հետ ենք մնացել 50-100 տարով: Մենք այդ տարածությունը պետք է անցնենք 10 տարում: Կամ մենք դա կանենք, կամ մեզ կճզմեն»<sup>35</sup>:

Տնտեսական աճի բարձր տեմպերը պարզապես պարտադրված են հանրապետության և Արցախի, արդի հայ պետականության հարատևության համար:

«Մենք ենք մեր սարերը» ֆիլմում մի այսպիսի հատված կա, որտեղ ֆիլմի հերոսներից մեկը՝ Պավլեն, ասում է. «Պետությունը բժշկին քիչ է վճարում, հովվին քիչ է վճարում, բոլորին քիչ է վճարում, որ խնայված միջոցներով այս երկիրը դարձնի երկիր»: Ինչ խոսք, այլ սկզբունքների վրա էր կառուցված խորհրդային սոցիալական կարգը: Հարկ է նկատել, որ Ռուսաստանի տնտեսությանը պատմականորեն բնորոշ է եղել պետական պատերնալիզմի տարրերի առկայությունը: Հայաստանը եղել է խորհրդային երկրի մի մասը, և բնակաչափար այդ մթնոլորտում են ձևավորվել մեր ազգային պահվածքի որոշակի նորմեր: Պետական պատերնալիզմը բնավ չի նշանակում տնտեսական ու սոցիալական ֆունկցիաներից պետության հրաժարում: Կոռուպցիան կրճատելու, աղքատությունը վերացնելու և բարեկեցություն ստեղծելու խնդրի լուծումը՝ որպես հանգուցային և նոր սոցիալ-տնտեսական ձևավորման ուղի, իրավացիորեն արդի պայմաններում կապվում է կառավարություն-բիզնես-կառուցվածքներ գործակցության հետ: Մի առիթով Լ.Տոլստոյին հարցնում են, թե ինչու այլևս չի գրում: Նա պատասխանում է. «...մոլորությունների էներգիան սպառվել

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 140:

<sup>35</sup> Литературная газета, 17-23 октября 2018г.

է»: Միայն թե ժամանակ անց մեր դեպքում հասարակության մոտ չստեղծվի այսպիսի կացություն, և նորից չհառնեն մինչև ե՞րբ և մինչև ո՞ւր հարցերը:

\* \*  
\*

Երկրի ֆինանսական ռեսուրսների խնդիրը անմիջականորեն կապված է առկա հարկային համակարգի հետ: Վարդան Բոստանջյանի «Բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» (Եր., 2017) աշխատության վերջին գլխում՝ «Բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման հիմնական ուղիները Հայաստանի Հանրապետությունում» կարծես իրենց վավերացումներն են ստանում նախորդ շարադրանքի առաջադրույթները, որի առաջին գիծը վերաբերում է հարկային համակարգի հարցերին: Վերջինիս է վերապահված ֆինանսական միջոցների հավաքագրումը:

Հարկային համակարգը, երևի թե, բոլոր ժամանակներում եղել է ամենանիծված ոլորտը: Պետությունն իր ծախսերը հոգալու համար ինչ «հիմար հարկատեսակներ» ասես, որ չի կիրառել՝ անզավակության հարկ, քվեարկության հարկ, կյանքի հարկ և այլն:

Խնդիրն առավելագույն արժարժվողներից է անցման շրջանի երկրների համար: Որքան գրականություն է ստեղծվել, որքան առաջարկություններ են արվել, այդուհանդերձ «ՀՀ-ում ձևավորված հարկային համակարգը չի նպաստում երկրում ներդրումային ակտիվության բարձրացմանը, ձեռնարկատիրական գործունեության ընդլայնմանը և տնտեսական զարգացման խթանմանը»<sup>36</sup>: Հիմնական հարցը թե՛ իր տնտեսական և թե՛ իր գործնական նշանակությամբ հանգում է նրան, որ վերափոխումներ են անհրաժեշտ հարկային օրենսդրության կատարելագործման, դրա պարզեցման, հարկային համակարգի կայունության և թափանցիկության ապահովման, չեզոքության բարձրացման, բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Շատ ցածր է հանրապետության «հարկային բարոյականության մակարդակը», չնայած անցած տասնամյակներում կատարված բազմաթիվ օրենքներին, որոշումներին, ճշգրտումներին, պարզաբանումներին:

Ինչպես հայտնի է, հարկն իր փիլիսոփայական ընդհանուր մեկնության մեջ ներկայանում է որպես հասարակական անհրաժեշտ բարիք, որը պետք է վճարի ամեն ոք՝ դրանով իսկ իր ավանդը ներդնելով ազգի քաղաքակրթական կենսակերպի ապահովման իմաստով: Բայց, ինչպես միշտ, այլ բան է հարկի փիլիսոփայական բացատրությունը, և այլ՝ նրա իրական կոնկրետ դրսևորման ձևերը, որը պահանջում է հիմնավորել հարկազանձման արդարացիությունը և չափը, որոշակիացնել օբյեկտներն ու սուբյեկտները, գանձման իրականացման արդյունավետ մեխանիզմները: Ինչպես միշտ, ամեն մի պատմություն իր ընթացքի մեջ հարաբերվում է հասարակության կենսափորձի նախորդ շրջանի

<sup>36</sup> Վարդան Բոստանջյան, նշվ. աշխ., էջ 325:

նստվածքներին: Հարկային բարոյականության ցածր մակարդակը հաճախ մեկնաբանվում է միակողմանի՝ հանգույցը լուծելով մի պարզ բնորոշմամբ, թե դրանում մեղավոր են միայն հարկային մարմինները: Ինչ խոսք, այժմ այլ է հանրապետության տնտեսական, սոցիալական և քաղաքական կացությունը, բայց «բարոյականության այդ ցածր մակարդակը», որի տակ հաճախ նկատի է առնվում տեղ գտած կոռուպցիան, միշտ էլ ուղեկցել է խորհրդային տասնամյակներին: Իսկ վերջիններս նաև ավանդության ուժ ունեն, որոնք նոր պայմաններում՝ կապված անհատի և տնտեսական ազատականացման հետ, պետք է դրսևորվեին նոր ուժով, կապված ցածր կենսամակարդակի, անկատար ու նոր ձևավորվող օրենսդրական դաշտի հետ, որպես այդ փուլին յուրահատուկ անխուսափելի դրսևորում:

Ինչպես մյուս, այնպես էլ հարկային համակարգի վերաբերյալ կարելի է հանդիպել արևմտյան երկրների փորձի վկայակոչումների: Յանոշ Կորնայը հենց այս իմաստով նկատում է, թե պառլամենտական դեմոկրատիան, որը քաղաքացիների և պետության միջև հարաբերությունները բերել է վստահության, տևել է հարյուրամյակներ: Այնտեղ հարկային տեսուչների միջամտությունը քաղաքացիների անձնական կյանքին սահմանափակված է օրենքով, իսկ քաղաքացին կարող է անհրաժեշտության դեպքում դիմել դատարան: Եվ միևնույնն է, այդ պայմաններում հարկային տեսչությունը հաճախ չարաշահում է իր իշխանությունը: «Եվ այստեղ ծագում է կարևորագույն բարոյական մի երկրնտրանք՝ ո՞ր մեղքն է շատ՝ պատժել 100 հոգո՞ւ, եթե նույնիսկ 99 մեղավորների կողքին հայտնի է ընդամենը մեկ անմեղ, թե՞ թույլատրել այդ 99-ին պատժվելուց ազատվել, միայն նրա համար, որպեսզի միակ անմեղ մարդը չտուժի: Անձամբ ես վերջին որոշման հաստատուն կողմնակիցն եմ»<sup>37</sup>:

Զեմ ուզում անդրադառնալ հարկերից խուսափելու օրինական կամ անօրինական եղանակների, հարկային վերահսկողության բովանդակության ու ձևերի և այդ կարգի հարցերի վերաբերյալ արծարծումներին: Սակայն մի բան ակներև է. հարկերից խուսափելը քայքայում է շուկայական մրցակցության հիմքերը՝ բարեխիղճ հարկատուի համեմատությամբ հարկ չվճարողներին դնելով ավելի շահեկան վիճակում: Որքան փաստարկներ կարելի է բերել հարկերի վճարումից խուսափելու տնտեսական ու սոցիալական ոչ ցանկալի հետևանքների, նույնքան էլ կարելի է բերել հարկերի վճարումից խուսափելու պատճառների մասին: Գրականության մեջ հարկերի հավաքագրման ցածր մակարդակը պայմանավորվում է հարկային օրենքների ու հարկային համակարգի անբավարար մշակվածության ու հակասականության, կազմակերպչական ու տեխնիկական գործոնների՝ մասնավորապես նյութական, տեղեկատվական ու մեթոդաբանական անհրաժեշտ հագեցվածության, կարգապահական և «հարկային կուլտուրայի» առկայությամբ: Բնակչության ցածր եկամուտները, տնտեսական ճգնաժամային կացության պայմաններում ձեռնարկությունների գոյատևելու պահ-

<sup>37</sup> Янош Корнай, Путь к свободной экономике, М., 1990, с. 77.

վածքը ձևավորում են հարկերի վճարումից խուսափելու հոգեբանություն: Հարկային բարոյականության այսպիսի ցածր մակարդակի պայմաններում հարկային տեսչությունները սկսում են «...լրտեսել հարկատուներին, ուսումնասիրել եկամուտների աղբյուրները և ծախսերի կառուցվածքը: Դա մարդկանց խրախուսում է ոստիկանություն հայտնել բոլոր իրենց այն բարգավաճող հարևանների մասին, որոնց կարելի է կասկածել հարկային վճարումների ժամանակ մեքենայություններ կատարելու մեջ: Այդ ամբողջ սահմանը կարող է դառնալ մի համակարգ, որը ենթադրում է. ամեն մի ընտանիքում պետք է լինի հարկային տեսուչ, որը մշտապես կստուգի ընտանիքի օրական եկամուտներն ու ծախսերը: Այդ դեպքում իրականում արժե վճարել տեսուչներին խոստացած փողերը յուրաքանչյուր գլխի և, իհարկե, օձիքից բռնած յուրաքանչյուր քաղաքացու համար:

Միայն այդպիսի ելքի հնարավորությունը բավական է սարսափեցնելու ցանկացածին, ով հանդես է գալիս անհատի ազատության, իր հայեցողությամբ փողերին տնօրինելու հնարավորության, անձի իրավունքների լիիրավ հարգանքի համար»<sup>38</sup>:

Վերը նշված որոշակի հարցերի արծարծումներն է ակնկալում Վլադիմիր Հարությունյանի «Հարկային և մաքսային մարմինների գործունեության կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (2017) աշխատությունը:

Հարցի դրվածքի առումով արդարացված է խնդրի այդպիսի միավորումը՝ համակարգը դիտարկելով «...ինչպես պետական բյուջեի եկամուտների հավաքագրման գործիք, այնպես էլ զարգացման տնտեսական և սոցիալական ոլորտների վրա ազդող ֆինանսական կատեգորիա»<sup>39</sup>: Հեղինակը հանրապետության անցած ժամանակաշրջանի տնտեսության պատկերի ընդհանուր ֆոնի վրա գծում է հարկային վարչարարության չորս շրջափուլեր՝ մինչև 1992-1997, 1997-2000, 2000-2007 և 2007 թվականից հետո: Նկատի առնելով հարկային համակարգի նշված շրջափուլերի տեղաշարժերի ինչ-ինչ առանձնահատկությունները, բացառությամբ վերջին տարիների, Վ.Հարությունյանը ճիշտ կետում է գտնում նրա արդյունավետության գնահատումը, որն ուներ «դրվագային բնույթ», և որի հիմքում բացակայում էին «համապատասխան մաթեմատիկական ձևաչափերը»: Այնուհանդերձ, առաջադրվում են որոշակի վերլուծական գործակիցներ, որոնք թույլ են տալիս տարբերակել 2007-ից հետագա ընթացքը, բնութագրել որպես հարկային վարչարարական համակարգի արդյունավետության տեղաշարժերի ժամանակաշրջան: Այդ են հաստատում պետական բյուջեի հարկերի և տուրքերի հոսքերի, հարկեր/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշի, հարկային մարմնի կողմից իրականացված ստուգումների քանակի ու դրանց արդյունքում հայտնաբերված գումարների և այլ հարցերի վերաբերյալ կատարված վերլուծությունները:

<sup>38</sup> Янош Корнай, Путь к свободной экономике, М., 1990, с. 77.

<sup>39</sup> Հարությունյան Վ., Հարկային և մաքսային մարմինների գործունեության կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2017, 264 էջ, էջ 5:

Աշխատությունն այդպիսի մի ուղի է գծում նաև մաքսային ոլորտի համար: Կան հարցեր, որ նույնիսկ ավելորդ է փորձարարական տվյալներով հաստատել դրանց տեսական ստուգությունը: Այդպիսին է հարկային համակարգի արդյունավետության և աշխատողների մասնագիտական ունակությունների և իրականացվող ծառայությունների միջև կապը: Չի կարելի ասել, թե այս ուղղությամբ որոշակի որակական անցումներ չեն կատարվել հանրապետության հարկային և մաքսային մարմիններում ծառայողների «կերպարի վերափոխման» իմաստով: Այնուհանդերձ, այս ուղղությամբ զարգացած ու զարգացող երկրների փորձի՝ աշխատության մեջ բերված տեսությունն ակնկալում է այդ ուղղությամբ հանրապետությունում նոր շերտերի յուրացման միտումը:

Վերը նշված արժարժումները հարկային ու մաքսային մարմինների գործունեության և մակրոտնտեսական ակտիվության փոխադարձ կապի արտահայտություններն են գտնում այնպիսի ցուցանիշներում, ինչպիսիք են ՀՆԱ-ի իրական աճ/ հարկերի հավելածի տեմպեր, հարկային եկամուտներ, պետական տուրքեր, հարկատեսակներ, հարկային եկամուտներում անուղղակի հարկերի և մաքսատուրքի տեսակարար կշիռներ և այլն, որոնք, ինչպես նկատում է հեղինակը, ուղղորդում են, որ «նշված հարցերում հաջողություն արձանագրելու համար կարևորագույն նշանակություն ունի ճիշտ ու միասնական սկզբունքների վրա հիմնված հարկային ու մաքսային քաղաքականության վարումը»: Առավելապես Հայաստանի համար, երբ նշված իրավահարաբերությունները կարգավորող նորմերը զետեղված են տարաբնույթ իրավական ակտերում, բացակայում է համակարգվածությունը, իսկ օրենսդրական փոփոխություններն ունենին «իրավիճակային բնույթ»: Հենց այստեղ են վտանգվում հարկ վճարողների իրավունքները, գործարարների շահերի պաշտպանության մեխանիզմները, որը չի կարող բացասաբար չանդրադառնալ նշված ոլորտների ծառայողների «կերպարի վերափոխմանը», ի վերջո կառույցների կատարելագործմանը<sup>40</sup>:

Աշխատության բովանդակությունն իր ընդգրկումներում Հայաստանի Հանրապետության հարկային ու մաքսային մարմինների ձևավորման հիմքերի, փոխակերպությունների նկարագիրն է, նրա սկիզբը, ընթացքը ժամանակի հարաբերություններում: Հանրապետության հարկային և մաքսային մարմիններն արդեն կայացած կառույցներ են: Սա արդեն նոր ելակետ է հետագա որակական նոր մակարդակների համար: Կազմակերպական կառուցվածքի բարեփոխման հիմնական մոտեցումները, գործունեության կազմակերպման առանձնահատկությունները ԵՏՄ և ԵՄ անդամ-պետությունների հետ, գործունեության թափանցիկության հաշվետվողականության ապահովման ուղիները, օրինապահ հարկատուների համար հարկային վերահսկողության տարբերակված մոտեցումների կիրառական հնարավորությունները, ծառայողի կերպարի արմատական վերափոխման հնարավոր ուղիները. սրանք են մենագրության հարցերը, որոնց շարադրանքի համար Վ.Հարությունյանն ընտրել է հարկային ու մաքսա-

---

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 76:

յին մարմինների «պատմակենսագրական ձևը»՝ կոնկրետ հարցադրումներով հարուցելով խնդիրներ ու առաջադրելով հանգույցները բացող որոշակի միջոցառումներ:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. «Հրապարակ», 27 փետրվարի, 2019թ.:
2. «Հրապարակ», 2 մարտի 2019թ.:
3. «Հրապարակ», 1 մայիսի 2018թ.:
4. «168 ժամ», փետրվարի 9-11, թիվ 14:
5. «168 ժամ», մարտի 2-4, թիվ 23:
6. “Аргументы недели”, 29 декабря 2017г.
7. “Литературная газета”, 25-31 марта 2015г.
8. “Литературная газета”, 29 июля-4 августа, №31, 2015г.
9. “Литературная газета”, 17-23 октября 2018г.
10. “Литературная газета”, 19-25 декабря 2018г.
11. Բայադյան Ա.Հ., Մարկոսյան Հ.Ա., Պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2015, 204 էջ:
12. Բոստանջյան Վ., Բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2017, 364 էջ:
13. Հարությունյան Վ., Հարկային և մաքսային մարմինների գործունեության կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2017, 264 էջ:
14. Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում. գիտաժողովի նյութեր, Եր., 2018, 280 էջ:
15. Веблен Т. Теория праздного класса, М., 1984, 367 с.
16. Форд Генри, Моя жизнь, мои достижения, М., 1989, 205 с.
17. Янош Корнай, Путь к свободной экономике, М., 1990, 149 с.

### **Ռոբերտ Սարինյան**

## **ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐՈՒՄ**

**Ամփոփագիր:** Պետական պարտքի խնդիրը վաղուց է զբաղեցրել տնտեսագիտական միտքը: Առաջարկվել են կողմնորոշումներ, հետազոտական շրջանակների մեջ են առնվել նրա տարբեր ենթաշերտերը, փորձելով պատասխանել այն հարցին, թե որն է նրա թույլատրելի սահմանը, կամ կա՞րողյոք այդպիսի սահման: Ինչպիսին են մոտեցումները մեր հանրապետության համար:

Հայաստանի տնտեսության արդի կացությունն իր մասերով տեղադրվում է «ինկլյուզիվություն-էքստրակտիվություն» կոնցեպցիայում: Հենց 1990-ական թվա-

կանները ծայր տվեցին սոցիալական շերտավորմանը, կոռուպցիային, ստվերային տնտեսությանը, որպես տնտեսական աճի խոչընդոտների: Հոդվածում կարևորվում է «հարկային բարոյականության մակարդակի» բարձրացման խնդիրը:

**Բանալի բաներ.** պետական պարտք, տնտեսական քաղաքականություն, ինկլյուզիվություն, էքստրակտիվություն, կոռուպցիա, հարկային բարոյականություն, Վերլենի էֆեկտը:

**Роберт Саринян**

## НА ПЕРЕКРЕСТКАХ НАЦИОНАЛЬНОЙ ЭКОНОМИКИ

**Резюме:** Проблема государственного долга давно занимает экономистов. Выдвигались концепции, рассматривались различные пласты, пытаюсь ответить на вопрос какова допустимая граница государственного долга или же есть такая граница. Каковы эти подходы для нашей республики.

Современное состояние экономики Армении в своей большей части подлежит объяснению концепцией эксклюзивность-эксактивность. Именно в 1990-ые годы начались социальное расслоение, коррупция, теневая экономика, как факторы тормозящие экономический рост. В статье подчеркивается проблема повышения «уровня налоговой морали».

**Ключевые слова:** государственный долг, экономическая политика, эксклюзивность, эксактивность, коррупция, налоговая мораль, “эффект Веблена”.

**Robert Sarinyan**

## ON THE CROSSROADS OF THE NATIONAL ECONOMY

**Abstract:** The issue of public debt has long been on the focus of economists. Concepts have been proposed, various aspects have been proposed trying to answer the question on what are the boundaries of thereof, or is there such a boundary? What are our approaches to our Republic?

The current state of the Armenian economy could be largely explained by the concept of "inclusiveness and excitability". Just in the 1990s, social stratification, corruption, and the shadow economy were the obstacles to economic growth. The issue of raising the level of "tax morality" is stressed in the article.

**Keywords.** Public debt, economic policy, inclusiveness, excitability, corruption, tax morality, “Weblen effect”

## Քրիստինե Բաղդասարյան

### ԲԵՆՉԻՆԻ ԵՎ ԴԻՉՎԱՌՆԵԼԻՔԻ ՇՈՒԿԱՅԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ

Բենզինի շուկայում որևէ մեկին որևէ բան չի պարտադրվում: Այն, ըստ էության, ազատ շուկա է, իսկ բենզինի գները բարձրանում ու իջնում են շուկայական գործոնների ազդեցությամբ: Ստացվում է, որ բենզինի շուկան, իր տնտեսական և իրավական դրդապատճառներից ելնելով, բաց շուկա է, որի վրա ազդում են ներքին և արտաքին գործոններ: Մասնավորապես բենզինի միջազգային գները՝ բարձրանան կամ իջնեն, նույնպես այս փոփոխությունները կազդեն բենզինի ներքին շուկայի գների մակարդակի վրա: Այս գործընթացի փոփոխությունները կարող ենք բացատրել նաև ՀՀ տնտեսության մեջ գործարար մշակույթի փոփոխությամբ կամ կառուցվածքային բարեփոխումներով, որոնք ուղեկցվելու են միջազգային կազմակերպությունների, կորպորացիաների ներկայացուցիչների ներգրավմամբ: Օրինակ՝ ներքին շուկայում բենզինի մրցակցության վրա էական ազդեցություն կունենա այս ոլորտի միջազգային հայտնի կորպորացիաների մուտքը, օրինակ՝ GULF, Lukoil, Total, British Petroleum, Agip, Wissol, Shell և այլն, որոնց բենզալցակայանները և ներկրող ներկայացուցչություններն ազատորեն գործում են հարևան Վրաստանի Հանրապետությունում:


Բենզինի գնագոյացման շուկան կարգավորելու համար պետությունը պետք է վերահսկի կամ կարգավորի մեծածախ շուկան, օրինակ՝ մեծածախ վաճառքն իրականացվի էլեկտրոնային աճուրդներով: Որպես մոտեցում կամ ձևաչափ կարող է հաստատվել այն, որ պետության կողմից դիզվառելիքի և բենզինային վառելիքի ներմուծումը էական ազդեցություն կունենա շուկայում գնագոյացման վրա:

Բացի այդ, կախված միջազգային շուկայի իրավիճակից, օրենսդրության փոփոխություններից և այլնից, օբյեկտիվորեն հնարավոր են գնային ճնշումներ, որոնք կլանող-չեզոքացնող տնտեսական «բարձիկները» Հայաստանի տնտեսության դեպքում շատ թույլ են կամ բացակայում են այն ապրանքային շուկաներում, որտեղ գործունեություն են ծավալում մենաշնորհի կամ գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտները:

Ըստ գծապատկեր 1-ի՝ ՀՀ-ում 2011-2018թթ. ընկած ժամանակահատվածում բենզինի և դիզվառելիքի գներն ամենացածրը եղել են 2016-2017թթ.: Օրինակ, դիզվառելիքի գները 2016 թվականին 2015 թվականի համեմատ նվազել են 74 դրամով՝ 426 դրամից կազմելով 352 դրամ, իսկ 2017 թվականին 2016 թվականի համեմատ այն աճել է 14 դրամով՝ 352 դրամից դառնալով 366 դրամ:

Դիզվառելիքի գների աճը շարունակվել է նաև 2018 թվականին, որը 2017 թվականի համեմատ աճել է 100 դրամով՝ 366 դրամից դառնալով 466 դրամ (տե՛ս գծապատկեր 1-ը):





**Գծապատկեր 1. 2011-2018թթ. բենզինի և դիզելային գները ՀՀ-ում <sup>41</sup>**

Բենզինի գների տատանողականությունը նույնպես կտրուկ փոխվել է 2016-2017թթ., ընթացքում: Օրինակ՝ բենզինի գները 2016 թվականին 2015 թվականի համեմատ նվազել են 49 դրամով, 2017 թ. 2016 թ. համեմատ բենզինի գները բարձրացել են 15 դրամով, իսկ 2018 թվականին՝ 65 դրամով՝ կազմելով 462 դրամ:

***Բենզինի և դիզելային գների բարձրացման վրա ազդող տնտեսական լծակներն են:***

2018 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտավ ՀՀ-ում հարկային նոր օրենսգիրքը, ըստ որի՝ մի շարք ապրանքատեսակների ակցիզային հարկը վերանայվեց, մասնավորապես բենզինի, դիզելային վառելիքի դեպքում ակցիզային հարկի դրույքաչափերի վերանայումը հանգեցրեց գների աճի: ՀՀ տնտեսության և ազգաբնակչության համար առավել զգայուն է դիզելային վառելիքի, բենզինի գների աճը, քանի որ այս ապրանքները ոչ միայն սպառողական, այլև տնտեսական նշանակություն ունեն:

Դիզելային վառելիքի, բենզինի գների կտրուկ աճն ուղղակիորեն ազդում է ՀՀ տարածքում արտադրվող և մատուցվող ապրանքների և ծառայությունների ինքնարժեքի վրա: Մասնավորապես դիզելային վառելիքի գների ազդեցությունը մեծ է գյուղատնտեսության, արդյունաբերության և տրանսպորտի ոլորտների վրա:

Հարց է առաջանում. ի՞նչ ազդեցություն է ունեցել հարկային նոր օրենսգրքի կիրառությունը բենզինի և դիզելային գների վրա:

1. ***Բենզինի գների մասով՝*** 2018 թվականի հունվարի 1-ից բենզինի ներմուծման համար ակցիզային հարկը բարձրացել է 1 տոննայի հաշվով 15 000 ՀՀ դրամով: Եթե մինչև 01.01.18 թվականը 1 տոննա բենզինի ներմուծման համար ակցիզային հարկի գումարը կազմում էր 25 000 դրամ, ապա ներկայումս այն կազմում է 40 000 դրամ: Բացի այդ, մինչև 2018 թվականը մաքսային սահմանին վճարվող ակցիզային հարկի և ԱԱՀ-ի հանրագումարը կազմում էր 120 000 ՀՀ դրամ, իսկ **այժմ՝ 135 000 ՀՀ դրամ:** Արդյունքում տեղի է ունեցել

<sup>41</sup> [https://www.armstat.am/file/article/f\\_sec\\_4\\_2018\\_2.pdf](https://www.armstat.am/file/article/f_sec_4_2018_2.pdf)

գների աճ: Ալցիզային հարկի դրույքաչափի բարձրացումը համաչափ է ազդել բենզինի մանրաձախ գնի գնագոյացման վրա, որը որևէ կերպ չի արդարացնում այս շուկայում տարիներ շարունակ իրականացվող միասնական գնային քաղաքականությունը:

2. *Դիզվառելիքի գների մասով*՝ «Ալցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն (ուժի մեջ է եղել **մինչև 01.01.2018թ.**)՝ **դիզելային վառելիքի ալցիզային հարկի դրույքաչափը 1 տոննայի համար սահմանված էր մաքսային արժեքի 10 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան 1 տոննայի համար 35000 ՀՀ դրամ:**

01.01.2018 թվականից ուժի մեջ մտած հարկային նոր օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիզելային վառելիքի ալցիզային հարկի դրույքաչափը 1 տոննայի համար սահմանված է 13 000 ՀՀ դրամ, սակայն նույն օրենսգրքի 450-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ, ներմուծված և 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկ վճարողների մոտ առկա դիզելային վառելիքի ապրանքային մնացորդների մասով ներմուծման ժամանակ վճարված ալցիզային հարկը յուրաքանչյուր տոննայի հաշվով 22000 ՀՀ դրամի չափով է:

Մինչև 2018 թվականի հունվարի 1-ը դիզելային վառելիքի ներմուծումը և օտարումը ազատված էին ԱԱՀ-ից: ՀՀ նոր հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածը կարգավորում է ԱԱՀ-ից ազատված գործարքները և գործառնությունները, ըստ որի՝ այս տարվա հունվարի 1-ից դիզելային վառելիքի ներմուծումը և օտարումը ԱԱՀ հարկման ենթակա են:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ դիզվառելիքի գների փոփոխության հարցում առաջնային խնդիրն այն է, որ անհրաժեշտ է հստակեցնել դիզելային վառելիքի մանրաձախ գնի ձևավորման մեթոդաբանությունը՝ հաշվի առնելով ԱԱՀ հաշվանցման առկա հնարավորությունը: Ընդ որում՝ դիզելային վառելիքի մանրաձախ գների հաշվարկման մեթոդաբանության մեջ ներառված չէ տնտեսվարողի կողմից ձեռք բերված ապրանքների և ծառայությունների (օրինակ՝ էլեկտրաէներգիայի, տրանսպորտային ծառայությունների, սարքավորումների և այլնի) գնի մեջ ներառված ԱԱՀ-ի հաշվանցման հնարավորությունը (համամասնությամբ): Եթե մինչև 2018 թվականի հունվարի 1-ը դիզելային վառելիք ներմուծողը և վաճառողը նվազեցնում էր շահույթից ԱԱՀ-ի գումարը, ապա ներկայումս կարող է հաշվանցել, ինչը թույլ կտա վերանայել իր վերադրի կամ շահույթի մեծությունը: Հակառակ դեպքում ստացվում է, որ ԱԱՀ-ի բարձրացման ողջ բեռը դրվում է դիզելային վառելիքի սպառողների վրա: Դիզելային վառելիք ներմուծման և օտարման դեպքում պետք է հաշվարկել ԱԱՀ հաշվանցման մեծությունը:

Ավելին, վառելիքային շուկայի դեպքում գրեթե բոլոր գնային ճնշումներն արտահայտվում են գների բարձրացմամբ, երբ այլ մրցակցային ապրանքային շուկաներում տեսանելի են ծախսերի նվազեցման կամ արդյունավետության աճին ուղղված հստակ մեխանիզմները: Այս շուկայում տարիներ շարունակ

իրականացվող միասնական գնային քաղաքականությունը կարող է փաստել շուկայի բաժանման և հակամրցակցային համաձայնության մասին:

Կարելի է ասել, որ ՀՀ-ում բոլոր գործարարներն էլ ռիսկի են գնում և կրում են կամ տնտեսական վնասներ, կամ ստանում են օգուտներ, ինչը հնարավոր է չափել կամ հաշվարկել: Ամենակարևորն այն է, որ բենզինի գինը պետք է որոշի շուկան, իսկ գները դառնան շուկայական: Իսկ որքան մեծաթիվ խաղացողներ հայտնվեն բենզինի շուկայում, մրցակցությունն այդքան կմեծանա, ու շուկան ավելի զգայուն կլինի միջազգային շուկայի նկատմամբ: Այսինքն, բենզինի շուկայում տատանողականությունը կավելանա, որովհետև, եթե շուկան բացարձակ մրցակցային է, միջազգային շուկայում ցանկացած փոփոխություն գների վրա է ազդում:

Ինչպես ներկայացված է ՀՀ կառավարության՝ 2018թ. ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույցի 1.6 կետում, որը վերաբերում է արհեստական տնտեսական մենաշնորհների բացառմանը, տնտեսական մրցակցության պաշտպանությանն ու տնտեսական որևէ գործունեությամբ զբաղվելու իրական հնարավորությանը, հարկ է արձանագրել, որ վերջինում ներառվել են նաև բենզինի և դիզելային շուկայի ներմուծման համակենտրոնացման և մենաշնորհային կարգավիճակ ունեցող դեպքերը: Հայաստանը բենզինը ձեռք է բերում հիմնականում ՌԴ-ից, Ռումինիայից, Բուլղարիայից, իսկ Վրաստանը՝ Ադրբեջանից և Թուրքմենստանից:

ՀՀ-ում բենզինի տեղափոխումն իրականացվում է Վրաստանի տարածքով՝ երկաթուղային տրանսպորտի միջոցով, ինչն էական ազդեցություն ունի գնադրացման վրա:

## Աղյուսակ 1

### Նավթի և նավթամթերքի ներմուծումը (հազ.ԱՄՆ դոլար)

ԱՏԳ, ԱԱ-ի կոդը	Ապրանքի անվանումը	ՆԵՐՄՈՒԾՈՒՄ				
		Չափի միավոր	2017թ.		2018թ.	
			քանակ	միավորի արժեք	քանակ	միավորի արժեք
2710	Նավթ և նավթամթերք՝ հում	տ	346,146.7	243,775.1	330,328.9	278,186.5

Վրաստանում ռեգուլյար տեսակի բենզինը վաճառվում է 2 լարիով, որը հայկական դրամի վերածելու դեպքում կկազմի 384 դրամ (1 լարին 192 դրամ է):

ՀՀ-ում ռեգուլյար տեսակի մոտ բենզինի մեկ լիտրը վաճառվում է 440-460 դրամով՝ մոտ 40-60 դրամով ավելի:

Վրաստանում բենզինի գնի թանկացումը պայմանավորված է լարիի արժեզրկմամբ:

Վրաստանում բենզինի գինը միշտ էլ ՀՀ ներքին շուկայի համեմատ էժան է եղել: Եթե այնտեղ բենզինի գնի բարձրացման մասով դժգոհություն է առաջանում, 2 հանգամանք կարող է դրա պատճառը լինել.

1. միջազգային շուկայում նավթի գների բարձրացումը,

2. լարիի արժեզրկումը:


Եթե մեկը փորձի բարձր գնով բենզին վաճառել, մյուսները չեն թողնի, որովհետև այնտեղ այլընտրանքի հնարավորություն կա, իսկ ՀՀ-ում բենզինի ոլորտը մոնոպոլացված է :

Վրաստանում բենզինի շուկան լրիվ ազատականացված է, մոնոպոլացված չէ: Սեփական փորձից ելնելով՝ Վրաստան մտնելիս ճանապարհին կարող եք նկատել 4-5 ընկերության տարբեր բենզալցակայաններ և, որոնցում բենզինի գները տարբեր են:

Այսինքն՝ Վրաստանում գինը ձևավորվում է մրցակցության արդյունքում:

ՀՀ-ում վերջինիս խոչընդոտման նախապայմաններից հիմնականն այն է, որ ՀՀ-ում միակ ներկրողը «Ռոսնեֆտ»-ն է, երկրորդ, երրորդ, չորրորդ կամ հինգերորդ չկա ու չի էլ լինելու: Բացի դրանից մանրածախ շուկայում վերավաճառում են երկու-երեք կազմակերպություն, որոնք էլ որևէ հնարավորություն չունեն գների մեծ տարբերություն դնելու:

Ըստ ԱՎԿ-ի՝ ՀՀ-ում 2017 թվականին ներմուծվել են 346,2 հազար տոննա նավթ և նավթամթերք՝ 243,8 մլն դոլար մաքսային արժեքով (տե՛ս աղյուսակ 1-ը): Արտաքին տնտեսական գործունեության 2710 կողով այս ապրանքախմբի մեջ մտնում են ոչ միայն բենզինն ու դիզվառելիքը, այլև մեքենաների յուղերն ու նմանատիպ այլ արտադրանք: Այսինքն՝ մաքսայինի տվյալների հիման վրա կարելի է ընդամենը մոտավոր պատկերացում կազմել բենզինի և դիզվառելիքի առանձին ծավալների մասին:



**Գծապատկեր 2. ՀՀ-ում բենզինի և դիզվառելիքի սպառման ծավալները 2011-2017թթ.<sup>42</sup>**

Գծապատկեր 2-ի համաձայն՝ ՀՀ-ում բենզինի սպառման ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է 2011 թվականին՝ կազմելով 225,1 մլն լիտր, իսկ դիզվառելիքի համար՝ 2012 թվականին 193 մլն լիտր: 2017 թվականին 2016

<sup>42</sup> [https://www.armstat.am/file/article/f\\_sec\\_4\\_2018\\_2.pdf](https://www.armstat.am/file/article/f_sec_4_2018_2.pdf)

թվականի համեմատ դիզվառելիքի սպառումը գրեթե չի փոխվել, իսկ բենզինի սպառումն ավելացել է շուրջ 3 մլն լիտրով:

Հարց է առաջանում. «Ի՞նչ գումարներ են շրջանառվում բենզինի և դիզվառելիքի շուկայում»: Սա նույնպես հնարավոր է հաշվել: Ըստ ՀՀ ԱՎԿ-ի՝ 2017 թվականի ընթացքում Հայաստանում բենզինի 1 լիտրի միջին մանրածախ գինը կազմել է 397 դրամ, դիզվառելիքինը՝ 366 դրամ: Ըստ այդմ, պարզ թվաբանական գործողությունների միջոցով կարելի է հաշվել, որ 2017 թվականին Հայաստանում սպառվել են 77.4 մլրդ դրամի բենզին և 56.3 մլրդ դրամի դիզելային վառելանյութ: Ընդամենը բենզինի և դիզելային վառելիքի շուկայի ծավալը կազմել է մոտ 133,7 մլրդ դրամ (տե՛ս աղյուսակ 2-ը):

## Աղյուսակ 2

### Վառելիքի շուկայի ծավալը 2011-2017թթ.

Տարի	Դիզվառելիքի շուկայի ծավալը (մլն դրամ)	Բենզինի շուկայի ծավալը (մլն դրամ)
2011թ.	74018.8	98368.7
2012թ.	88780	90016
2013թ.	85944.1	88195.7
2014թ.	85840.2	83190
2015թ.	67180.2	76976.6
2016թ.	54524.8	73535
2017թ.	56364	77415

Բենզինի շուկան բաժանված է 3 խաղացողների միջև՝ CPS օյլ քորփորեյշն, Ֆլեշ և Էյ բի էքսպորտ ՍՊԸ և Մաքս պետրոլ (անցած տարվա վերջից): Հարց է առաջանում. արդյո՞ք մեծ է շուկան այս 3 ընկերությունների համար, թե՞ ոչ (տե՛ս աղյուսակ 3-ը):

2014 թվականի սկզբից դուրս եկավ այս շուկայից խաղացողներից մեկը՝ Միկան: Սակայն 2016 թվականի վերջից շուկայում մնացած 2 հիմնական ընկերություններին՝ CPS-ին և Ֆլեշին, միացավ երրորդը՝ Մաքս պետրոլը (բենզինի գնի նվազումը պայմանավորվում էր հենց այս ընկերության մուտքով):

Ստացվում է, որ բենզինի և դիզվառելիքի շուկայի կրճատման ամենացավոտ շրջանում մասնակիցների թիվն ավելացավ՝ համապատասխանաբար նվազեցնելով մյուս երկուսի հասույթը: Դրա համար էլ շուկայի «հնաբնակներն» ուրախանալու առանձնապես մեծ պատճառներ չունեն:

2017 թվականին բենզինի շուկայում գերիշխող դիրք ունի Սիփիէս օյլ քորփորեյշն ՍՊԸ-ն, որը կազմում է այս շուկայի 52%-ը, 2018 թվականին նրա դիրքերն ավելի են ընդլայնվել՝ կազմելով շուկայի 58 %-ը: Այս ընկերությունը 2017 թվականին ներմուծել է 74,3 տ բենզին, որի մաքսային արժեքը կազմել է 24,7 մլրդ դրամ, իսկ 2018 թվականին ներմուծել է 80,6 տ բենզին՝ 31,7 մաքսային արժեքով, շուկային ավելացնելով իր մասնաբաժինը 6 տոկոսային կետով:

**Բենզինի շուկայի 4 խաղացողները**

Տնտեսվարող սուբյեկտ	Քաշ (կգ)	Ինվոյսային արժեք (ԱՄՆ դոլար)	Մաքսային արժեք (դրամ)	Տեսակարար կշիռ
<b>2017 թ.</b>				
Սիփիէս օյլ քորփորեյշն՝ ՍՊԸ	74,336,058	51,183,557	24,704,296,674	52%
Ֆլեշ ՍՊԸ	66,509,385	42,619,017	20,545,051,569	47%
Էյ բի էքսպորտ ՍՊԸ	497,394	348,137	166,660,888	0%
Մաքս պետրոլ ՓԲԸ	342,921	241,503	116,196,762-	0%
<b>Ընդամենը՝ 2017 թ.</b>	<b>141,685,758</b>	<b>94,392,213</b>	<b>45,532,205,894</b>	<b>100%</b>
<b>2018 թ.</b>				
Սիփիէս օյլ քորփորեյշն ՍՊԸ	80,662,982	64,947,959	31,368,782,463	58%
Ֆլեշ ՍՊԸ	46,436,958	35,519,238	17,138,796,656	34%
Ռոսնեֆտ էքսպորտ ՍՊԸ	10,409,168	8,561,541	4,153,746,780	8%
Էյ բի էքսպորտ ՍՊԸ	745,606	547,878	277,147,320	1%
Պլատինում օյլ ՍՊԸ	298,305	236,829	114,323,472	0%
<b>Ընդամենը՝ 2018 թ.</b>	<b>138,553,019</b>	<b>109,813,445</b>	<b>53,052,796,691</b>	<b>100%</b>

2017 թվականին Ֆլեշ ՍՊԸ-ն գրավել է բենզինի շուկայի 47 %-ը՝ ներմուծելով 66,5 տ բենզին՝ 20,5 մլրդ դրամ մաքսային արժեքով, իսկ 2018 թվականին, կորցնելով շուկայում իր նախկին դիրքերը շուրջ 13 տոկոսով, կրճատել է նաև բենզինի ներմուծման ծավալները 20,1 տ չափով, ինչպես նաև պակաս է վճարել մաքսային արժեքը 3,4 մլրդ դրամով: Դա պայմանավորված է եղել նրանով, որ 2018 թվականին հայկական բենզինի շուկայում հայտնվել են այլ խաղացողներ՝ Ռոսնեֆտ էքսպորտ ՍՊԸ-ն, Էյ բի էքսպորտ ՍՊԸ-ն, Պլատինում օյլ ՍՊԸ-ն, որոնք այսպես ասած «ջարդել են» մոնոպոլ դիրք գրավող Ֆլեշ ՍՊԸ-ի դիրքերը: Թվարկված ընկերություններից միայն 2-ն են շուկայում դիրք զբաղեցրել 8 և 1 տոկոսի չափով (տե՛ս աղյուսակ 3-ը):

Բենզինի շուկայի այլ մասնակիցներ՝ Էյ բի էքսպորտ ՍՊԸ-ն և Մաքս պետրոլ ՓԲԸ-ն 2017 թվականին բենզինի շուկայում դիրք չեն զբաղեցրել, ուստի վերլուծություն իրականացնելու տնտեսական իմաստը կորչում է:

Աղյուսակ 4-ի համաձայն՝ բենզինի շուկայի 2 խաղացողների՝ Սիփիէս օյլ քորփորեյշն ՍՊԸ-ի և Ֆլեշ ՍՊԸ-ի իրացման ծավալները 2017 թվականին կազմել են 100,036 հազ. լիտր և 93,299 հազ. լիտր, որոնք փաստացի վաճառվել են (ներառյալ՝ ԱԱՀ) 36,1 մլրդ դրամով և 33,7 մլրդ դրամով:

**Բենզինի իրացման ծավալները առավել խոշոր 2 ընկերություններում**

2017 թվական	Տնտեսվարող սուբյեկտ	Բնեղեն (հազ. լիտր)	Արժեքային, վաճառքի փաստացի գնով (ներառյալ ԱԱՀ հազ. դրամ)
	Սիփիէս օյլ քորփորեյշն ՍՊԸ	100,036	36,118,545
	Ֆլեշ ՍՊԸ	93,299	33,735,702

Բենզինի ներկրմամբ և մեծածախ վաճառքով այսօր զբաղվում են 4 ընկերություններ՝ CPS-ը, Ֆլեշը և Մաքս պետրոլը, որն իր գործունեությունը սկսել է 2016 թվականի 4-րդ եռամսյակից:

2018 թվականին ևս բենզինի շուկայում գործել են գերիշխող դիրք ունեցող Սիփիէս օյլ քորփորեյշն ընկերությունները, որոնց մասնաբաժինը ներմուծման կառուցվածքում կազմել է համապատասխանաբար՝ 58, 34 տոկոս:

Դիզվառելիքի շուկայում պատկերը հետևյալն է.

2017 թվականին այս շուկայի 50%-ը պատկանում է Ֆլեշ ՍՊԸ-ին, որը ներմուծել է 71,1 տ բենզին՝ 22,1 մլրդ դրամ մաքսային արժեքով:

**Դիզելային վառելանյութի ներմուծման ծավալները**

Տնտեսվարող սուբյեկտ	Քաշ (կգ)	Ինվոյսային արժեք (դոլար)	Մաքսային արժեք (դրամ)	Տեսակարար կշիռ
<b>2017 թ.</b>				
Ֆլեշ ՍՊԸ	71,096,793	45,737,571	22,051,548,721	50%
Սիփիէս օյլ քորփորեյշն ՍՊԸ	59,455,861	40,386,059	19,471,443,214	42%
Էլ բի էքսպորտ ՍՊԸ	6,988,311	4,364,649	2,099,703,764	5%
Մաքս պետրոլ ՓԲԸ	4,702,891	2,953,395	1,427,180,821	3%
Ռուսալ Արմենալ ՓԲԸ	443,500	7,383	3,596,785	0.3%
ԶԱՐԶԱՆԴ ՍԱՐՈՅԱՆ ՍՊԸ	313,320	205,632	98,989,302	0.2%
<b>Ընդամենը՝ 2017 թ.</b>	<b>143,000,676</b>	<b>93,654,688</b>	<b>45,152,462,607</b>	<b>100%</b>
<b>2018 թ.</b>				
Սիփիէս օյլ քորփորեյշն ՍՊԸ	70,241,551	59,017,535	28,483,149,293	59%
Ֆլեշ ՍՊԸ	44,608,111	35,691,170	17,243,559,989	37%
Էլ բի էքսպորտ ՍՊԸ	3,742,269	2,632,448	1,278,954,646	3%
Պլատինում օյլ ՍՊԸ	605,016	488,576	236,046,109	1%
ԶԱՐԶԱՆԴ ՍԱՐՈՅԱՆ ՍՊԸ	549,234	380,986	185,050,366	0%
<b>Ընդամենը՝ 2018 թ.</b>	<b>119,746,181</b>	<b>98,210,715</b>	<b>47,426,760,403</b>	<b>100%</b>

Դիզվառելիքի շուկայի 42 տոկոսը պատկանում է Սիփիէս օյլ քորփորեյշն ՍՊԸ-ին, ինչը ներմուծել է 59,5 տ բենզին՝ 19,5 մլրդ դրամ մաքսային արժեքով: Վառելիքի շուկայի 0,2-5 տոկոսը պատկանում է այլ մասնակիցների՝ էյ բի էքսպորտ ՍՊԸ-ին, Մաքս պետրոլ ՓԲԸ-ին, Ռուսալ Արմենալ ՓԲԸ-ին, Զարգանդ Սարոյան ՍՊԸ-ին:

2018թ. տեղի է ունենում հիմնական խաղացողների փոփոխություն՝ և Սիփիէս օյլ քորփորեյշն ՍՊԸ-ն գրավում է այս շուկայի 59 տոկոսը, Ֆլեշ ՍՊԸ-ն՝ 3 տոկոսը, և դիզվառելիքի ներմուծման մաքսային արժեքները կազմում են համապատասխանաբար՝ 28,5 մլրդ դրամ և 17,2 մլրդ դրամ: Իսկ այլ մասնակիցների բաժինը շուկայում նվազում են և կազմում են 0-3 տոկոս (տե՛ս աղյուսակ 5-ը):

Նույնը վերաբերում է նաև դիզվառելիքի իրացման ծավալներին (տե՛ս աղյուսակ 6-ը). 2017 թվականին այս շուկայի «թելադրողներն» են Սիփիէս օյլ քորփորեյշն ՍՊԸ-ն և Ֆլեշ ՍՊԸ-ն, որոնց շրջանառությունը կազմել է 68,565 հազար լիտր դիզվառելիքի դեպքում 22,9 մլրդ դրամ փաստացի գնով (ներառյալ՝ ԱԱՀ-ը) և 85,909 հազար լիտր դիզվառելիքի դեպքում 28,2 մլրդ դրամ փաստացի գնով (ներառյալ ԱԱՀ-ը):

**Աղյուսակ 6**

**Դիզելային վառելանյութի իրացման ծավալները առավել խոշոր 2 ընկերություններում**

2017 թ.	Տնտեսվարող սուբյեկտ	Բնեղեն (հազ. լիտր)	Արժեքային, վաճառքի փաստացի գնով (ներառյալ ԱԱՀ հազ. դրամ)
	Սիփիէս օյլ քորփորեյշն ՍՊԸ	68,565	22,941,581
	Ֆլեշ ՍՊԸ	85,909	28,206,358

Վերոնշյալները հիմք ընդունելով՝ բիզնես-իշխանություն սերտաճումը և մենաշնորհների գերակայությունը վերացնելու, բենզինի և դիզվառելիքի ոլորտի ազատականացման քաղաքականություն իրականացնելու նպատակներով կատարվել են գործնական բնույթի առաջարկություններ.

1. սոցիալական և ռազմավարական նշանակություն ունեցող ապրանքների մեծածախ վաճառքն առավել արդյունավետ և վերահսկելի է, երբ այն իրականացվում է էլեկտրոնային հարթակների (բորսաների) միջոցով, ինչը նպաստում է շուկա մուտք գործող նոր տնտեսվարողների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությանը, խտրական գների բացառմանը, մեծածախ շուկայում ստվերի կրճատմանը, առողջ մրցակցությանը և այլն:
2. Այս կամ այն շուկայում որևէ տնտեսվարողի մրցակցության վրա ազդեցությունը գնահատելիս անհրաժեշտ է տիրապետել շուկայի իրական շրջանառության ծավալներին, հետևաբար՝ առաջարկվում է առավել խստացնել բենզալցակայաններում ՀԴՄ կանոնների շահագործմանն ուղղված հարկային վարչարարությունը:
3. Բենզինի և դիզելային վառելիքի դեպքում պետք է սահմանափակվի (չար-



գելվի) ներկրող տնտեսվարողների (նաև փոխկապակցված անձանց) գործունեությունը մանրաձախ շուկայում, ինչը կնպաստի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը և եկամուտների վերաբաշխմանը:

4. Ելնելով ՀՀ շուկայի փոքրությունից՝ չպետք է բացառել գերիշխող դիրք ունեցող տնտեսվարողների գործունեությունը: Այդ ընկերությունները, դառնալով բաժնետիրական, բաժնետոմսերի որոշ մասը ազատ վաճառքի հանելով, կնպաստեն հանրային վերահսկողության և եկամուտների վերաբաշխման հաստատմանը: Օրինակ՝ պետական կառավարման մարմինները, մասնավորապես Երևանի քաղաքապետարանը ևս կարող է հանդիսանալ բենզալցակայանների բաժնետոմսերի որոշ մասի սեփականատեր, ինչը կապահովի լրացուցիչ եկամուտներ, որի արդյունքում պետական բյուջեից տրվող Երևանի հատկացումների մի մասը կվերաբաշխի հոգուտ մարզերի՝ ապահովելով տարածքային համաչափ զարգացում:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենք: Ուժի մեջ է 01.01.2018թ.:
2. «Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենք: Ուժի մեջ է 01.01.2018թ.:
3. ՀՀ կառավարության 2018թ. ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույց:
4. [https://www.armstat.am/file/article/f\\_sec\\_4\\_2018\\_2.pdf](https://www.armstat.am/file/article/f_sec_4_2018_2.pdf)

### **Քրիստինե Բաղդասարյան**

#### **ԲԵՆԶԻՆԻ ԵՎ ԴԻԶԿԱՌԵԼԻՔԻ ՇՈՒԿԱՅԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ**

**Ամփոփագիր:** Հոդվածում վերլուծվել են ՀՀ –ում բենզինի և դիզվառելիքի շուկան, մասնակիցներն ու գնագոյացման մեխանիզմները, ինչպես նաև հիմնավորվել է հարկային նոր օրենսդրության փոփոխությունների ազդեցությունը տեղի ունեցող մրցակցային դիրքի, կենտրոնացման քաղաքականության վրա: Կատարվել են գործնական առաջարկություններ, որոնք կարող են նպաստել բենզինի և դիզվառելիքի շուկայի ազատականացմանը:

**Բանալի բառեր.** շուկայական գործոններ, գործարար մշակույթ, ներմուծում, շուկայի համակենտրոնացում, մենաշնորհ, մեծաձախ շուկա:

**Кристине Багдасарян**

## **ОРИЕНТИРЫ ЛИБЕРАЛИЗАЦИИ БЕНЗИННОГО И ДИЗЕЛЬНОГО РЫНКА**

**Резюме.** В статье проанализированы рынок бензина и дизельного топлива в Армении, участники и механизмы ценообразования, а также влияние изменений в новом налоговом законодательстве на конкурентную позицию и политику концентрации. Даны практические рекомендации, которые могут способствовать либерализации рынка бензина и дизельного топлива.

**Ключевые слова:** рыночные факторы, деловая культура, импорт, концентрация рынка, монополия, оптовый рынок.

**Kristine Baghdasaryan**

## **DIRECTIONS OF LIBERALIZING GASOLINE AND DIESEL MARKET**

**Abstract:** The article analyzed the gasoline and diesel market in Armenia, participants and pricing mechanisms, as well as the impact of changes of the new tax legislation on the competitive position and competition policy. Practical recommendations have been proposed that can contribute to the liberalization of the gasoline and diesel market.

**Keywords:** Market factors, business culture, import, market coordination, monopoly, retail.

## Աշոտ Մարկոսյան Էլյանորա Մաթևոսյան

### ՀԱՐԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՄԱՑԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

#### Կյանքում անխուսափելի է երկու բան՝ մահը և հարկերը: Բենջամին Ֆրանկլին

Ժամանակակից աշխարհում հարկային քաղաքականությունը դարձել է ոչ միայն տնտեսագետների և հարկային մարմինների ու պետական կառավարման մասնագետների ուսումնասիրության և նրանց միջև սուր քննարկումների ու բանավեճերի առարկա, այլ նաև գտնվում է յուրաքանչյուր հարկատուի ու քաղաքացու ուշադրության կենտրոնում, քանի որ հարկերը վերաբերում են բոլորին կամ գրեթե բոլորին: Ընդ որում հատկապես մասնագետների շրջանում հարկերի սահմանման և հարկային քաղաքականության հիմնախնդրի վերաբերյալ քննարկումներն ունեն ոչ միայն զուտ տեսական, այլև գործնական կարևորություն և նշանակություն<sup>43</sup>: Այդ հանգամանքը պայմանավորված է պետության և առավելապես տնտեսության կառավարման գործում այն դերակատարմամբ, որն ունի հարկային քաղաքականությունը: Հանրահայտ ճշմարտություն է, որ արդի շուկայական տնտեսության պետական կառավարման գործիքակազմում կիրառվում է երկու գործիք՝ հարկաբյուջետային և դրամավարկային: Սակայն հատկապես վերջին 20-30 տարիների ընթացքում հարկերին վերաբերող հիմնահարցերը դարձել են նաև առանձին երկրներում ժողովրդական տարբեր բնույթի շարժումների առաջացման պատճառներից մեկը, ինչպես նաև ժողովրդական լայն շերտերի կողմից երկրների գործող իշխանություններին ներկայացվող՝ արդարացի տնտեսական քաղաքականության պահանջներից հիմնականը: Այսպես, Ֆրանսիայում լայն տարածում ստացած «դեղին բաճկոնավորների» հիմնական պահանջների մեջ կարևոր տեղ են զբաղեցնում տնտեսական պահանջները: Թվարկենք միայն դրանցից երկուսը. «Հարկման բարեփոխումների համար կազմակերպել համաժողովրդական հավաք: Օրենսդրորեն արգելել այն հարկերը, որոնք գերազանցում են քաղաքացիների ունեցվածքի արժեքի 25%-ը» և «Անհապաղ, 40%-ով բարձրացնել նվազագույն աշխատավարձը, կենսաթոշակները և կենսապահովման նվազագույն արժեքը»<sup>44</sup>:

Հարկային քաղաքականության միջոցով ապահովվում է ոչ միայն պետության եկամուտների ձևավորումը, այլև դրա օգնությամբ խթանվում և (կամ)

<sup>43</sup> «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի N 65-Ա որոշման մեջ (ծրագրի վերջաբանում) կարևորվեց հանրապետությունում «իրականացնել տնտեսական հեղափոխություն», ինչը ենթադրում է առաջին հերթին տնտեսության կառավարման ոլորտում արմատական փոփոխությունների իրականացում:

<sup>44</sup> Տե՛ս "Требования "желтых жилетов" Франции", էլեկտրոնային ռեսուրս՝ [https://zen.yandex.ru/media/burckina\\_new/trebovaniia-jeltyh-jiletov-francii-5c0e8e045970ce00a9372c0c?from=editor](https://zen.yandex.ru/media/burckina_new/trebovaniia-jeltyh-jiletov-francii-5c0e8e045970ce00a9372c0c?from=editor)

խրախուսվում է ձեռնարկատիրական գործունեությունը: Վերջինս հիմնականում իրականացվում է տարբեր եղանակներով և մեթոդներով: Օրինակ, Չինաստանի կառավարությունը որոշում է ընդունել նվազեցնել լրացուցիչ արժեքի և եկամուտների, ինչպես նաև սոցիալական ապահովության վճարների հարկերի դրույքաչափերը: 2019թ. հունվարի 1-ից ապրելով և աշխատելով Չինաստանում՝ դուք կարող եք ամենևին էլ չվճարել հարկեր՝ 5000 յուանին (շուրջ 50 հազար ռուսական ռուբլուն համարժեք) հավասար և դրանից ցածր եկամուտ ունենալու դեպքում: Այս միջոցառմամբ Չինաստանի ողջ պատմության ընթացքում հարկերը նվազեցվեցին ամենաշատ չափով: Այդ որոշումը դրականորեն է ընդունվել բոլոր նրանց կողմից, ովքեր աշխատում են Չինաստանում, այդ թվում՝ արտասահմանյան քաղաքացիների: Մարդկանց կյանքը թեթևացնող արմատական հարկային բարեփոխումների սկզբունքները, ինչպես նաև երկրում ձեռնարկատիրական կլիմայի բարելավումը կապահովեն ոչ միայն հարկային բազայի ընդլայնում, այլև սոցիալական խնդիրների լուծում, հատկապես ցածր եկամուտներ ունեցող բնակչության համար:

Նվազեցումը տեղի է ունենում եկամտային հարկից սահմանված մեծության գումարները հանելու միջոցով, հետևյալ դեպքերում.

- բոլոր այն քաղաքացիները, ովքեր ստանում են հետդիպլոմային կրթություն, տարեկան վճարում են 4800 յուանով ավելի պակաս,
- այն ծնողները, որոնց երեխաները կրթություն են ստանում առկա համակարգում, կարող են տնտեսել ամսական 1000 յուան,
- տարեկան 12000 յուան նվազեցում բոլոր ֆիզիկական անձանց համար, ովքեր բնակարանի ձեռքբերման վարկերի համար տոկոսներ են վճարում,
- այն անձինք, որոնց ապահովագրական գումարները չեն ծածկում ծանր հիվանդությունների բուժումը, որոնց արժեքը 15 հազարից մինչև 60 հազար յուան է, կարող են իրենց հայտարարագրելու չներառել այդ գումարը, որպեսզի այն չհարկվի,
- կառավարությունը պատրաստ է տրամադրելու հարկային արտոնություններ այն դեպքում, երբ անձը չունի սեփականություն այն քաղաքում, որտեղ գտնվում է նրա աշխատանքի վայրը,
- աշխատելով Չինաստանում՝ դուք կարող եք եկամուտներից հարկեր չվճարել, որոնք համապատասխանում են միջին աշխատավարձին<sup>45</sup> (5000 յուանին կամ 50 հազար ռուսական ռուբլուն համապատասխան) և դրանից պակաս են:

Հատկանշական է, որ ունենալով 15 հազար յուանի չափով աշխատավարձ՝ դուք հարկեր կվճարեք միայն 10 հազար յուանի համար, իսկ մնացած 5 հազարը ընկնում է բնակչության ֆինանսական բեռի նվազեցման տակ:

Հարկային բարեփոխումների արդյունքում Չինաստանի բնակչության հար-

---

<sup>45</sup> Ներկայումս միջին վիճակագրական չինացու ամսական միջին աշխատավարձը համարժեք է 750 ԱՄՆ դոլարին:

կային բեռը տարեկան թեթևանալու է 1.5 տրիլիոն յուանով<sup>46</sup>: Բերված օրինակները, ինչպես նաև ներկայումս ՀՀ-ում հարկային օրենսգրքում իրականացվող փոփոխություններն ու լրացումները պահանջում են վեր հանել հարկային քաղաքականության իմացաբանական<sup>47</sup> կողմերը, որոնք ընկած են իրականացվող տնտեսական քաղաքականության հիմքում:

Ցանկացած պետության կողմից վարվող հարկային քաղաքականությունը պետք է ուղղվի տնտեսության ներդրումային գրավչության բարձրացմանն ու տնտեսական ակտիվության մակարդակի բարելավմանը՝ դրանով իսկ ստեղծելով կայուն նախադրյալներ՝ արտահանման և երկարաժամկետ տնտեսական աճի, հանրային բարիքների բաշխման ու վերաբաշխման և հարկաբյուջետային կայունության ամրապնդման համար: Այս նպատակների իրականացման տեսանկյունից կարևորվում է ամենից առաջ ներդրողների համար արդար, ընկալելի և կանխատեսելի ձեռնարկատիրական միջավայրի ձևավորումը:

Պետական ֆինանսների կառավարման գործում ՀՀ կառավարությունը նույնպես կարևորել է հարկային համակարգի դերը: ՀՀ կառավարության՝ 2019-2023թթ. ծրագրում նշվում է. «Կառավարությունը երկարաժամկետ տնտեսական աճին նպաստելու նպատակով իրականացնելու է ուղղակի հարկերի բեռի նվազեցում՝ ի հաշիվ անուղղակի հարկերի: Այսպիսի քաղաքականությունը թույլ կտա բարձրացնել տնտեսության մրցունակությունը, ինչի արդյունքում հեռանկարային զարգացման տեսանկյունից կարևոր՝ արտահանելի հատվածում կաճեն շահութաբերությունը և ներդրումների իրականացման խթանները: Մասնավորապես կառավարությունն իջեցնելու է շահութահարկի դրույքաչափը, սահմանելու է եկամտային հարկի համահարթ դրույքաչափ՝ աստիճանաբար իջեցնելով այն, օտարերկրացի ֆիզիկական անձանց շահաբաժինները հարկվելու են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների շահաբաժինների հարկման միևնույն՝ ավելի ցածր դրույքաչափերով, աստիճանաբար բարձրացվելու են ակցիզային հարկի դրույքաչափերը:

Արդարացի հարկման նպատակով ձեռնարկվելու են քայլեր հարկային բեռը դեպի «վճարունակ հարկ վճարողներ» տեղափոխելու ուղղությամբ, մաս-

---

<sup>46</sup> Աղբյուրը՝ "В Китае резко снизили налоги. Жители со средним доходом и ниже не будут платить во все" էլեկտրոնային ռեսուրս՝ <https://rusmonitor.com/v-kitae-otmenili-rezko-snizili-nalogi-zhiteli-so-srednim-dokhodom-i-nizhe-ne-budut-platit-vovse.html? utl t=fb&fbclid=IwAR2tA3BA2rDV 2Wn 51zVEUV74xO6v2wL hrsxC9F-9SjFgMPE5RP6uDO -Y> :

<sup>47</sup> Իմացաբանությունը ուսմունք է գիտելիքի էության, հավաստիության և համոզմունքի ռացիոնալության մասին: Իմացաբանության քննարկումները չորս հիմնական ոլորտի են բաժանվում. 1) գիտելիքի էության և տարբեր հայեցակարգերի (ճշմարտություն, հավատ) հետ դրա կապի փիլիսոփայական վերլուծությունը, 2) սկեպտիցիզմի տարբեր խնդիրները, 3) գիտելիքի և համոզմունքի ակունքներն ու շրջանակները և 4) գիտելիքի և համոզմունքի չափանիշները: Իմացաբանությունը հասցեագրված է այնպիսի հարցերի, ինչպես. «Ի՞նչն է հիմնավորված համոզմունքը դարձնում հիմնավորված», «Ի՞նչ է նշանակում ասել, որ մենք գիտենք որևէ բան», և հիմնահարցը. «Ի՞նչպե՞ս մենք գիտենք, որ գիտենք»: Տե՛ս էլեկտրոնային ռեսուրս՝ <https://hy.wikipedia.org/wiki/%D4%BB%D5%B4%D5%A1%D6%81%D5%A1%D5%A2%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6>

նավորապես սահմանվելու են անշարժ գույքի հարկը գույքի իրական՝ շուկայական արժեքի հիման վրա հաշվարկելու ընթացակարգեր, միաժամանակ սահմանվելու է հավաքագրումների նկատմամբ հանրային հսկողության առցանց գործիքակազմ՝ ուղղված սոցիալական արդարության վերականգնմանը»<sup>48</sup>:

Վերը շարադրվածից ակներև է, որ պետության հարկային քաղաքականությունը կանխորոշում է տվյալ երկրի հասարակությունում սոցիալական իմացաբանությունը և հանրության կողմից ընդունված արժեքներն ու դրանց համակարգերը: Հարկադրման ընդհանուր տրամաբանության և մասնավորապես, հարկման մոտեցումների ընտրության վերաբերյալ հանրային բանավեճերը շատ հաճախ բուռն են ընթանում, և այդպիսի բանավեճերի մասնակիցներն իրենց ընդդիմադիր հայացքներում, մոտեցումներում անհաշտելի են: Քննարկելով և ընտրելով (ընդունելով) որևէ հարկային քաղաքականություն՝ հանրությունն այդպիսով քննարկում և ընտրում է իր էությունը (ինչպիսին է այն), ինչպես նաև այն հանգամանքը, թե ինչպիսի դեր պետք է ունենա պետությունը (հասկանանք՝ կառավարությունը) տվյալ հասարակության մեջ:

ԱՄՆ-ի հայտնի հասարակական գործիչ, ԱՄՆ-ի հիմնադիր հայրերից մեկի՝ Բենջամին Ֆրանկլինի (17.01.1706թ.-17.04.1790թ.) խոսքերով. «Կյանքում անխուսափելի է երկու բան՝ մահը և հարկերը», իսկ հարկերի վճարումը քաղաքացու և պետության միջև գոյություն ունեցող ամենաբարդ ու լարված հարաբերություններն են, անկախ քաղաքացու քաղաքական հայացքներից և կուսակցական պատկանելությունից:

Անհրաժեշտ է նկատել, որ հարկատուները՝ թե՛ պահպանողականները և թե՛ ազատականները, գտնում են, որ թեև հարկերը քաղաքացիական հասարակության, ինչպես նաև պետության ու քաղաքացիական հասարակության միջև կնքված հանրային պայմանագրի անբաժանելի մասն են կազմում, սակայն բազմաթիվ երկրների հարկային համակարգերը չեն կատարում իրենց առջև դրված գործառույթներն ու արմատական փոփոխությունների կարիք ունեն: Շատ հաճախ այդպիսի փոփոխությունների պատճառը գոյություն ունեցող համակարգերի ծանր, անհարմար, չափազանց բարդ ու շփոթեցնող լինելն է ինչպես սովորական հարկատուների, այնպես էլ տնտեսվարող սուբյեկտների համար:

Եթե ընդունում ենք, որ պետության հարկային համակարգը կանխորոշում է ազգային արժեքներն ու առաջնահերթությունները, ապա հարց է առաջանում, թե այդ արժեքներից ու առաջնահերթություններից որոնք են դրված այս կամ այն երկրի հարկային բարեփոխումների հիմքում: Այդ նպատակով, եթե դիտարկենք ԱՄՆ-ում ներկայիս նախագահ Դոնալդ Թրամփի կողմից նախաձեռնված հարկային բարեփոխումների օրինակը, ապա կարող ենք որոշակի ընդհանրացումներ կատարել:

Դեռևս 2017թ. դեկտեմբերի 22-ին ԱՄՆ-ի նախագահ Դ.Թրամփը ստորա-

---

<sup>48</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը, ընդունվել է ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ (կետ 8.1. Հարկային համակարգը, էջ 67), ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈՒ-002-Ն որոշմամբ:

գրեց «Հարկերի կրճատման և նոր աշխատատեղերի ստեղծման մասին» ("Tax Cuts and Jobs Act", TCJA) օրենքը, ըստ որի՝ նախատեսվում է. (1) նվազեցնել կորպորացիաների շահույթի նկատմամբ կիրառվող հարկային տոկոսադրույքը և (2) պարզեցնել (ավելի հասկանալի դարձնել) շարքային ամերիկացիների հարկման գործընթացը և այն, ընդհանուր առմամբ, ուղղված էր երկրում տնտեսական իրավիճակի բարելավմանը:

ԱՄՆ-ի ներկայիս նախագահի կողմից հարկային բարեփոխումների հռչակումից հետո բազմաթիվ փորձագետներ ու մեկնաբաններ իրենց կարծիքները ներկայացրին առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ, ընդ որում, ինչպես ընդունված է, դեմոկրատները քննադատում էին այն, իսկ հանրապետականները շեշտը դնում էին դրանց առավելությունների վրա՝ ելնելով այն կանխավարկածից, որ հանրապետականները մտահոգված են միայն հարուստների շահերի պաշտպանությամբ:

Եթե ավելի հանգամանալից ուսումնասիրենք առաջարկվող հարկային բարեփոխումների էությունը, ապա կարող ենք առանձնացնել այն հիմնաքարերը, որոնք դրված են ԱՄՆ-ում հարկային բարեփոխումների հիմքում և համապատասխանում են ամերիկյան աջակենտրոն էլիտաների վաղեմի ավանդույթներին: Հասկանալով այն՝ կկարողանանք նաև ավելի պարզ ընկալել առաջարկվող բարեփոխումների էությունը և այն կապակցել ՀՀ-ում իրականացվող հարկային բարեփոխումների հետ:

Դ.Թրամփի հարկային բարեփոխումների կողմնակիցները "Laissez-faire" տնտեսական դոկտրինի կողմնակիցներն են, որոնք գտնում են, որ պետության միջամտությունն ազատ շուկայում տնտեսվարող սուբյեկտների գործունեությանը պետք է նվազագույնը լինեն, ինչը զարմանալի չէ: ԱՄՆ-ի ներկայիս նախագահը առաջին հերթին գործարար աշխարհի ներկայացուցիչ է (ում ֆինանսական կարողությունը գնահատվում է 4-6 մլրդ ԱՄՆ դոլար), այլ ոչ թե քաղաքական գործիչ կամ պաշտոնատար անձ: Հարկային բարեփոխումների կողմնակիցների կարծիքով հարուստ քաղաքացիների համար հարկային բեռի, ինչպես նաև անշարժ գույքի ու կորպորացիաների շահույթի նկատմամբ հարկային դրույքաչափերի նվազեցումը պետք է բարձրացնի ինչպես տնտեսվարող սուբյեկտների, այնպես էլ քաղաքացիների շուկայական ակտիվությունը: Իսկ հիփոթեքային վարկավորման տոկոսների նվազեցումը և պետական ու համայնքային մակարդակներում հարկային արտոնությունների կրճատումը պետք է նրա համար, որպեսզի պետությունը խուսափի գնագոյացման գործընթացներում ավելորդ միջամտությունից:

Այս բարեփոխման միջոցով նախատեսվող հարկերի կրճատումը զգալիորեն սահմանափակում է պետության հնարավորությունները ծախսեր կատարելու առումով, որն ավելի ակտիվորեն քննարկվում է հասարակության կողմից և տարբեր լրատվամիջոցներում: Այնուամենայնիվ, ըստ որոշ գնահատականների, բարեփոխումները կարող են հանգեցնել առաջիկայում բյուջետային ծախսերի գերազանցմանը եկամուտների նկատմամբ:

Այս պարագայում կարևորագույն հարցերից է, թե ինչպես է համալրվելու պետական բյուջեն, և ինչպես է փոխհատուցվելու բյուջետային դեֆիցիտը (պակասուրդը)<sup>49</sup>:

Տեսակետներից մեկի համաձայն (ԱՄՆ-ում դրա կողմնակիցները հանրապետականներն են)՝ բյուջետային ծախսերի (հատկապես բոլոր տեսակի արտոնությունների ու սոցիալական նպաստների) կրճատումը թույլ կտա լուծել բյուջեի պակասուրդի հիմնախնդիրը: Այլ կերպ ասած, այդ տեսակետը պաշտպանողները գտնում են, որ հարկային բարեփոխումները պետք է հանդիսանան պետական ծախսերի կրճատման խթան և նվազագույնի հասցնեն տնտեսվարող սուբյեկտների (գործարարությամբ զբաղվողների) գործունեության սահմանափակումները:

Մինչդեռ հարկային բարեփոխումների կողմնակիցները գտնում են, որ հարկային քաղաքականության արդարացիությունն այն է, թե հարկատուն որքան հարկ է վճարելու բյուջե (որքան քիչ, այնքան ավելի լավ է հարկատուի համար), այլ ոչ թե այն բանում, թե ինչ օգուտներ կարող է հարկատուն ստանալ պետությունից (պետության հաշվին):

Առաջին հայացքից ոչ այդքան կարևոր այս սահմանազատման մեջ է այն հիմնարար տարբերությունը, ըստ որի՝ այժ և ձախ քաղաքական հայացքներ ունեցող քաղաքացիները տարբերակում են երկրի տնտեսության և հասարակության զարգացումը:

Ձախ հայացքների կողմնակիցները հիմնականում շեշտադրում են այն հանգամանքը, որ հանրության բոլոր անդամները գտնվում են «մեկ նավակում», իսկ պետությունն ընդամենը ռիսկերի վերաբաշխման գործիք է: Այդ պատճառով էլ հարկային քաղաքականության արդարացիության վերաբերյալ իրենց մոտեցումն այն է, թե հանրության ընդհանուր ռեսուրսներից յուրաքանչյուր քաղաքացի կամ ընտանիք ինչպիսի մասնաբաժին ստանալու իրավունք ունի: Եվ այս տեսակետի կողմնակիցների համար հարկման պրոգրեսիվ սանդղակի կիրառումն ակնհայտ և միակ ճիշտ ընտրությունն է, հատկապես այնպիսի տնտեսական միջավայրում, որտեղ տնտեսական անհավասարությունը հատկապես նկատելի է և ավելին՝ շարունակում է մեծանալ (տե՛ս աղյուսակ 1):

Այսպես, օրինակ, 2008-2017թթ. ժամանակահատվածում ՀՀ բնակչության դրամական եկամուտների անհավասարությունն ավելի է խորացել: ՀատկաՆշական է, որ 2017թ. 2008թ. նկատմամբ բնակչության առաջինից չորրորդ քվինտիլային խմբերում, ներառյալ բնակչության դրամական եկամուտները, նվազել են համապատասխանաբար 2, 3, 1 և 2 տոկոսային կետերով, և ավելացել է հինգերորդ քվինտիլային խմբի բաժինը, այսինքն «աղքատներն ավելի են աղքատացել, իսկ հարուստներն ավելի են հարստացել»:

---

<sup>49</sup> Այդպիսի դիլեման հատկապես արդիական է մեր հանրապետության համար:



**Հայաստանի Հանրապետության բնակչության դրամական եկամուտներն ըստ քվինտիլային խմբերի 2008-2017թթ.<sup>50</sup>, %**

Ցուցանիշները	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2017թ. 2008թ. համեմատ, տոկոսային կետ
Դրամական եկամուտները, այդ թվում՝ ըստ 20% խմբի բնակչության	100	100	100	100	100	100	100	100	100	100	-
առաջին (նվազագույն եկամուտներով)	7	7	5	7	7	7	7	6	5	5	-2
երկրորդ	14	13	11	14	13	14	13	11	10	11	-3
երրորդ	17	18	16	18	17	18	17	15	16	16	-1
չորրորդ	24	25	23	24	23	23	23	21	23	22	-2
հինգերորդ (առավելագույն եկամուտներով)	38	37	45	37	40	38	40	47	46	46	8
Եկամուտների կենտրոնացման գործակիցը (Ջինի ինդեքսը)	0.339	0.355	0.362	0.371	0.372	0.372	0.373	0.374	0.375	0.359	0.02

128

<sup>50</sup> Աղբյուրը. աղյուսակը կազմվել և հաշվարկվել է Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2018, Եր., ՀՀ ՎԿ, էջ 107, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2017, Եր., ՀՀ ԱՎԾ, էջ 103-ի , Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, Եր., ՀՀ ԱՎԾ, էջ 104-ի տվյալների հիման վրա:

և ավելացել է հինգերորդ քվինտիլային խմբի բաժինը, այսինքն՝ «աղքատներն ավելի են աղքատացել, իսկ հարուստներն ավելի են հարստացել»: Կամ բնակչության չորրորդ և հինգերորդ քվինտիլային խմբերի դրամական եկամուտները 2008թ. 62%-ից 2017թ. ավելացել են՝ կազմելով 68%: Բնակչության դրամական եկամուտների նման բևեռացումը (իսկ եթե հաշվի առնենք նաև ՀՀ-ում ստվերային տնտեսության մակարդակը, ապա այդ պաշտոնական ցուցանիշները կարող են աճել առնվազն 1.5 անգամ) հասարակության ներսում չի կարող ստեղծել նորմալ բարոյահոգեբանական և սոցիալական համերաշխության միջավայր, և այն հղի է սոցիալական լուրջ ցնցումներով, ինչին ականատես եղանք 2018թ. ապրիլ-մայիս ամիսներին:

Հարկային բարեփոխումների ամենասկզբից ԱՄՆ-ի նախագահի վարչակազմը կենտրոնացավ կորպորացիաների շահույթի միասնական դրույքաչափի նվազեցման խնդրի վրա՝ 35%-ից նվազեցնելով 21%, որպեսզի այդ դրույքաչափը մոտեցվի այնպիսի երկրներում կիրառվող դրույքաչափերին, ինչպիսիք են Կանադան (15%), Իռլանդիան (12.5%), որի արդյունքում ԱՄՆ-ի տնտեսությունն ավելի գրավիչ կդառնա ներդրողների համար: Բացի այդ, 2018թ.-ից Դ.Թրամփը չեղարկեց կորպորացիաների համար կիրառվող նվազագույն այլընտրանքային շահութահարկը, որի տոկոսադրույքը կազմում էր 20%:

Ի տարբերություն ֆիզիկական անձանց համար կիրառվող հարկային մեղմացնող ռեժիմի՝ կորպորացիաների համար նախատեսված հարկային բարեփոխումներն անժամկետ են:

Բարեփոխումների կողմնակիցները գտնում են, որ կորպորացիաների շահութահարկի դրույքաչափերի իջեցումը, ի թիվս այլ բարենպաստ հետևանքների, կնպաստի, որ խոշոր ընկերությունները զերծ մնան հակադարձման իրենց պրակտիկայից, երբ ամերիկյան ընկերությունները դաշնային հարկերից խուսափելու համար ստեղծում են նոր մայր-ընկերություն օֆշորային գոտիներում՝ այն հետագայում վերակազմավորելով կամ վերագրանցելով որպես ամերիկյան մասնաճյուղ (ինչը բնորոշ է նաև «հայկական իրականությանը»):

Օրենքով փոփոխություններ են նախատեսված նաև արտասահմանում աշխատող ամերիկյան ընկերությունների հարկման վերաբերյալ, ըստ որի՝ այդ ընկերությունները չեն վճարելու ԱՄՆ-ի սահմաններից դուրս ստացված շահույթից շահութահարկը: Ընդ որում ԱՄՆ վերադարձվող (հայրենադարձ) շահույթի նկատմամբ շահութահարկի տոկոսադրույքը կազմելու է 15.5%, իսկ ԱՄՆ-ում իրականացվող ներդրումներինը (ռեհինվեստիցիաներինը)՝ 8%, նախկինում կիրառվող 35%-ի փոխարեն: Նմանատիպ մոտեցման կիրառումն արդիական է նաև ՀՀ-ում համար, քանի որ հանրապետությունից կապիտալի արտահոսքը զգալի է եղել:

Երկրի սահմաններից դուրս ստացած շահույթի նկատմամբ շահութահարկի տոկոսադրույքի նվազեցումը կարող է խթանել ընկերությունների կողմից երկրի տնտեսությունում իրականացվող ներդրումների աճը, թույլ տա բարձրացնել աշխատողների աշխատավարձերը, ստեղծել նոր աշխատատեղեր և, ընդհա-

նուր առմամբ, ապահովել աննախադեպ սոցիալ-տնտեսական զարգացում:

Հարկային բարեփոխումների կարևոր ուղղություններից մեկը կարող է լինել, երբ օրենքով թույլատրվեն նաև միջանկյալ ընկերությունների սեփականատերերին եկամուտների տարանցիկ փոխանցումներ (pass-through companies) կատարել գործարար միավորների միջև (ՍՊԸ-ների, ընկերակցությունների, անհատական ձեռնարկությունների)՝ սահմանելով, օրինակ, 20%-անոց հարկային արտոնություն ի հավելումն այն ֆիզիկական անձանց եկամուտների հարկման դրույքաչափերի նվազեցման, ովքեր ստանում են աննախադեպ բարձր չափերի աշխատավարձեր ու պարգևավճարներ:

Անդրադառնալով առանձին երկրների տնտեսական պատմությանը՝ նշենք, որ օրինակ ԱՄՆ-ում առաջին կորպորացիաները ստեղծվեցին XVIII դարի վերջում և գրեթե անմիջապես դարձան այն ժամանակ երիտասարդ պետության տնտեսության կարևոր բաղադրիչներից մեկը: Թեև Եվրոպայում կորպորացիաները գոյություն ունեն XIX դարի սկզբից (մասնավորապես Մեծ Բրիտանիայում և Նիդեռլանդներում), սակայն այդ երկրներից և ոչ մեկը կորպորատիվ կառավարման զարգացմանը այնպիսի ուշադրություն չի դարձնում, ինչպես ԱՄՆ-ը: Անցյալ դարի սկզբին հակամենաշնորհային օրենքների ընդունումը զգալիորեն վնասեց ամերիկյան կորպորացիաների հեղինակությանը, որը սակայն արագ տեմպերով վերականգնվեց Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, և ԱՄՆ-ում կորպորացիաների գերիշխանություն հաստատվեց մինչև 1980-ական թվականները, մինչև այն ժամանակահատվածը, երբ ճապոնական, իսկ ավելի ուշ՝ 1990-ականներին՝ գերմանական ընկերությունները համաշխարհային շուկաներում դարձան ամերիկյան ընկերությունների ամենաուժեղ մրցակիցները:

Ինչպես անցյալում, այնպես էլ ներկայում կորպորացիաները կարևորագույն դերակատարում ունեն ԱՄՆ-ի տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում և համարվում են ամերիկյան ինքնության և «ամերիկյան երազանքի» անբաժանելի մասը:

Խոշորագույն ընկերությունների կողմից իրականացվող կապիտալի ազատ շարժի և զանգվածային արդյունաբերականացման քաղաքականությունը դարձավ XIX դարի սկզբին տեղի ունեցած ամերիկյան արդյունաբերական հեղափոխության լոկոմոտիվը: Այդ ժամանակից ի վեր ԱՄՆ-ը դարձավ նորարարությունների ոլորտում առաջատար տնտեսությունը:

ԱՄՆ-ի կորպորատիվ և հարկային օրենսդրությունը վերջին 200 տարիների ընթացքում բազմաթիվ փոփոխություններ է կրել, որոնց նպատակը միշտ եղել է համապատասխանությունը ժամանակի հրամայականին, փոփոխվող մրցակցային միջավայրին, ինչպես նաև ընկերությունների բաժնետերերի պահանջների բավարարումը: Սակայն միշտ էլ ԱՄՆ-ում օրենսդրությունը ծառայեցվել է ի շահ խոշորագույն ընկերությունների, սակայն ոչ անհատի: Սա է ամերիկյան հանրային արժեքը, որը սահմանում է գործարարության, քաղաքացու և պետու-

թյան դերը հասարակությունում, որն ընդգծված արտահայտվում է Դ.Թրամփի նոր հարկային բարեփոխումներում<sup>51</sup>:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» ՀՀ կառավարության՝ 2019թ. փետրվարի 8-ի N 65-Ա որոշում, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական՝ [www.arlis.am](http://www.arlis.am) կայք:
2. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2018, Եր., ՀՀ ՎԿ, ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական՝ [www.armstat.am](http://www.armstat.am) կայք:
3. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2017, Եր., ՀՀ ԱՎԾ, ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական՝ [www.armstat.am](http://www.armstat.am) կայք:
4. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, Եր., ՀՀ ԱՎԾ, ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական՝ [www.armstat.am](http://www.armstat.am) կայք:
5. "Требования "желтых жилетов" Франции", էլեկտրոնային ռեսուրս՝ [https://zen.yandex.ru/media/burckina\\_new/trebovaniia-jeltyh-jiletov-francii-5c0e8e045970ce00a9372c0c?from=editor](https://zen.yandex.ru/media/burckina_new/trebovaniia-jeltyh-jiletov-francii-5c0e8e045970ce00a9372c0c?from=editor)
6. "В Китае резко снизили налоги. Жители со средним доходом и ниже не будут платить вовсе" էլեկտրոնային ռեսուրս՝ [https://rusmonitor.com/v-kitae-otmenili-rezko-snizili-nalogi-zhiteli-so-srednim-dokhodom-i-nizhe-ne-budut-platit-vovsehtml? utl t=fb&fbclid=IwAR2tA3\\_BA2rDV2Wn51zVEUV74x06v2wL\\_hrsxC9F-9SjFgMPE\\_5RP6uD0\\_-Y :](https://rusmonitor.com/v-kitae-otmenili-rezko-snizili-nalogi-zhiteli-so-srednim-dokhodom-i-nizhe-ne-budut-platit-vovsehtml? utl t=fb&fbclid=IwAR2tA3_BA2rDV2Wn51zVEUV74x06v2wL_hrsxC9F-9SjFgMPE_5RP6uD0_-Y :)
7. էլեկտրոնային ռեսուրս՝ <https://hy.wikipedia.org/wiki/%D4%BB%D5%B4%D5%A1%D6%81%D5%A1%D5%A2%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6>
8. էլեկտրոնային ռեսուրս՝ <https://habr.com/ru/post/426629/> 16.10.2018թ.:

### **Աշոտ Մարկոսյան Էլյանորա Մաթևոսյան**

#### **ՀԱՐԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԻ ԻՄԱՑԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

**Ամփոփագիր:** Ժամանակակից պետության տնտեսագիտության առանցքներից թերևս ամենակարևորը հարկային քաղաքականությունն է: Հարկերի միջոցով ապահովվում են ինչպես պետական բյուջեի եկամուտները, այնպես էլ այդ միջոցների հաշվին իրականացվող պետական ծրագրերը: Հարկային քաղաքականությունը կոչված է ոչ միայն հավաքագրելու պետության կողմից իրականացվող ամենատարբեր ծրագրերի համար անհրաժեշտ միջոցները, այլ նաև խրախուսելու ու խթանելու երկրում տնտեսական ակտիվությունը: Հատկապես

<sup>51</sup> էլեկտրոնային ռեսուրս՝ <https://habr.com/ru/post/426629/> 16.10.2018թ.:

ՀՀ-ում կարևորվում են նաև հարկային քաղաքականության միջոցով սոցիալական արդարության ապահովումը և բնակչության եկամուտների խիստ բևեռացվածության մեղմումը: Այսինքն հարկային քաղաքականության իմացաբանական կարևորագույն հիմնասյուն պետք է հանդիսանա հասարակության սոցիալական համերաշխության ապահովումը՝ ներառելով նաև բնակչության հարուստ և աղքատ խավերի եկամուտների այնպիսի հարկումը, որը կբերի ոչ թե բնակչության եկամուտների անհավասարության խորացմանը, այլ Ջինի գործակցի մոտեցմանն իր ստանդարտին:

**Բանալի բաներ.** հարկեր, հարկային քաղաքականություն, հարկային բարեփոխումներ, հարկերի դրույքաչափեր, իմացաբանություն, տնտեսական հեղափոխություն:

**Ашот Маркосян**

**Эянора Матевосян**

## ГНОСЕОЛОГИЧЕСКИЕ ОСНОВЫ НАЛОГОВЫХ РЕФОРМ

**Резюме:** Одним из основных направлений в экономике современного государства является налоговая политика. Именно за счет налогов обеспечиваются как доходы государственного бюджета, так и осуществление широкомасштабных государственных программ, реализуемых за счет государственных средств. Налоговая политика призвана не просто собирать налоги, формировать доходы, столь необходимые для осуществления государственных программ, но и стимулировать экономическую активность в стране. В таких странах как Армения важно обеспечить также социальную справедливость посредством налоговой политики и смягчить ситуацию, связанную с крайней поляризацией доходов населения. Иными словами, наиболее важной функцией налоговой политики является обеспечение социальной солидарности в обществе, включая такое налогообложение доходов богатых и бедных групп населения, которое поможет приблизить значение коэффициента Джини к его общепринятому (стандартному) значению, вместо еще бо́льшей поляризации доходов населения

**Ключевые слова:** налоги, налоговая политика, налоговые реформы, процентные ставки налогов, гнесеология, экономическая революция.

**Ashot Markosyan**  
**Elyanora Matevosyan**

## **GNESEOLOGICAL PRINCIPLES OF TAX REFORMS**

**Abstract:** One of the main directions in the economy of the modern state is the tax policy. It is through taxes that both the revenues of the state budget and the implementation of large-scale government programs implemented with state funding are provided. Tax policy is designed not only to collect taxes, generate income, so necessary for the implementation of government programs, but also to stimulate economic activity in the country. In countries such as Armenia, it is also important to ensure social justice through tax policies and implementation, also to mitigate the situation associated with extreme polarization of household incomes. In other words, the most important function of tax policy is to ensure social solidarity in society, including such taxation of incomes of rich and poor groups of the population, which will help bring the value of the Gini index to its generally accepted (standard) value, instead of deepening the polarization of incomes of the population.

**Keywords:** Taxes, tax policy, tax reforms, rates of taxes, gneseology, economic revolution

## Ամայա Գալստյան

### ՀԱՆՐԱՅԻՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

«Ֆինանսներ» հասկացությունը սահմանվում է որպես տնտեսական հարաբերությունների ամբողջություն, որոնք ենթադրում են դրամական միջոցների կենտրոնացված և ապակենտրոնացված ֆոնդերի կանխատեսում, ձևավորում, բաշխում<sup>52</sup>: Ֆինանսների հիմնական խնդիրը անհատների, կազմակերպությունների, պետության տնտեսական նպատակների իրագործման համար անհրաժեշտ գումարների ապահովումն է: Ֆինանսները տարանջատվում են երեք հիմնական խմբերում՝ անձնական, մասնավոր/կորպորատիվ, հանրային:

Հանրային ֆինանսների առաքելությունը պետության գործառույթներն իրականացնելու համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների ձևավորումը, ռեսուրսների արդյունավետ տեղաբաշխումն ու մակրոտնտեսական կայունության ապահովումը, ինչպես նաև նպատակների առաջնահերթությունների և ֆինանսական ռեսուրսների օգտագործման ընթացակարգային պահանջների սահմանումն է, որոնք էական ազդեցություն են ունենում պետական տնտեսական քաղաքականության սահմանման և իրականացման գործում: Հանրային ֆինանսների կարևորագույն գործառույթներն են.

- բաշխումը,
- վերահսկողությունը:

Բաշխման գործառույթի միջոցով նախ՝ բաշխվում, հետո վերաբաշխվում են համախառն ներքին արդյունքն ու ազգային եկամուտը: Հանրային ֆինանսները բաշխման գործառույթի շրջանակներում ապահովում են հանրային հատվածի բնականոն գործունեությունը, քանզի պետության կողմից մատուցվող ծառայությունները հավասարապես պետք է հասանելի լինեն հասարակության բոլոր խավերին՝ համապատասխանելով համահավասարության, օրինականության, թափանցիկության, հաշվետվողականության սկզբունքներին: Հանրային ֆինանսների թույլ կամ ոչ արդյունավետ կառավարումը բոլոր տեսանկյուններով հանգեցնում է պետական բյուջեի (եկամուտների թերհավաքագրելիություն, ծախսերի անարդյունավետություն՝ քանակապես, որակապես բնակչությանը ցածրորակ ծառայությունների մատուցում) կատարողականի անկմանը: Հանրային ֆինանսների արդյունավետ կառավարումը ենթադրում է բյուջեի կատարում, պետական ֆինանսական ռեսուրսների արդյունավետ ներդրումներ, քանակական և որակական առումով լավ արդյունքներ: Հանրային ֆինանսների կառա-

<sup>52</sup> <https://hy.wikipedia.org/wiki/%D5%96%D5%AB%D5%B6%D5%A1%D5%B6%D5%BD%D5%B6%D5%A5%D6%80>

վարումը և վերահսկողությունն իրականացնում են պետական օրենսդիր և գործադիր մարմինները:

Տնտեսությունից հարկերի և այլ վճարների տեսքով անհրաժեշտ ռեսուրսների հավաքագրումը (հարկային եկամուտներ) և այդ ռեսուրսների արդյունավետ բաշխումը հանրային ֆինանսների կառավարման արդյունավետության գրավականներն են: Հանրային ֆինանսների կառավարման համակարգը ներառում է.

- բյուջետային գործընթացը,
- բյուջետային եկամուտների հավաքագրումը,
- բյուջետային ծախսերի կառավարումը,
- պետական պարտքի կառավարումը,
- կանոնակարգումը և ֆինանսական վերահսկողությունը:

Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգն իրավունքի նորմերով կարգավորվող Հայաստանի Հանրապետության տնտեսական հարաբերությունների և Հայաստանի Հանրապետության պետական կառուցվածքի վրա հիմնված հետևյալ երկու մակարդակի բյուջեների ամբողջությունն է.

- առաջին մակարդակ՝ պետական բյուջե,
- երկրորդ մակարդակ՝ համայնքների բյուջեներ:


Այս երկու մակարդակների բյուջեներում ներառվում են ինչպես պետական, այնպես էլ համայնքային ենթակայության տակ գտնվող պետական կազմակերպությունների (պետական և համայնքային ոչ առևտրային և առևտրային կազմակերպություններ) բյուջեները:

**Բյուջետային գործընթաց:** Հանրային ֆինանսների կառավարման կարևորագույն օղակներից է բյուջետային գործընթացը: Վերջինս յուրաքանչյուր բյուջետային տարվա բյուջեները կազմելու, քննարկելու, հաստատելու և կատարելու, դրանց տարեկան հաշվետվությունը հաստատելու ուղղությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով կանոնակարգված գործունեությունն է<sup>53</sup>: Այն սահմանում է առաջիկա տարվա կտրվածքով հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունները, բյուջետային հարաբերությունների մասնակիցների իրավունքները և պարտականությունները, համակարգում է ֆինանսական համակարգի գործունեությունը՝ նպատակադրվելով տեսլականի կյանքի կոչմանը: Հետևաբար՝ հանրային ֆինանսների կառավարումն արդյունավետ է, եթե թափանցիկ է բյուջետային ողջ գործընթացը: Միջազգային տարբեր մասնագիտացված կառույցներ (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը, Բյուջետային համագործակցության միջազգային կազմակերպությունը) մշակում են բյուջեի թափանցիկության գնահատման ուղենիշեր, գործիքներ, ներկայացնում են տարբեր երկրների բյուջեների թափանցիկության ինդեքսի հաշվարկներ խորախուսելով երկրներին ջանքեր գործադրել իրենց դիրքերը բարելավելու ուղղությամբ: Հաշվարկներն

<sup>53</sup> Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենք, հոդված 3, 24 հունիսի, 1997:




իրականացվում են 100-ից ավելի չափանիշների վերլուծության շնորհիվ, որոնցում կարևորվում են քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը, տեղեկատվության հասանելիությունը, անկախ վերահսկողությունը բյուջետային ողջ գործընթացում<sup>54</sup>:



**Գծապատկեր 1. Բյուջետային գործընթացի փուլերը**

**Բյուջետային եկամուտներ:** Բյուջետային եկամուտների գլխավոր աղբյուրն անուղղակի և ուղղակի հարկերն են, որոնք կազմում են բյուջետային բոլոր եկամուտների 85-95%-ը, ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվող, տրամադրված բյուջետային վարկերի և փոխատվությունների վերադարձից ստացվող, ինչպես նաև փոխառու և ներգրավված այլ դրամական միջոցները (5-15%-ը): Բյուջետային եկամուտների ճիշտ պլանավորմամբ ու հավաքագրելիության մակարդակով է պայմանավորված պետության գործառույթների արդյունավետ իրականացումը:


<sup>54</sup> International Budget Partnership, <http://survey.internationalbudget.org/#>



## Գծապատկեր 2. Կառավարության կադարողական

Պետական բյուջեն սահմանում է առաջիկա տարվա ընթացքում իրականացվելիք տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները և դրա հիմքում ընկած հիմնարար սկզբունքները: Բյուջետային եկամուտների հավաքագրելիության ցուցանիշի բարելավման նպատակով անհրաժեշտ է ի սկզբանե կազմել իրատեսական բյուջե՝ կատարելագործելով եկամուտների կանխատեսման տեխնիկան, այսինքն՝ հանրային հատվածի բոլոր օղակներում բյուջեները կազմելիս եկամուտները և ծախսերը հաշվարկվեն ոչ թե նախորդ տարվա ցուցանիշների մեխանիկական աճի հիման վրա, այլ նախորդ տարիների կատարողականների վերլուծության արդյունքներով կազմել **արդյունքի վրա հիմնված բյուջե** (results-based budgeting): Հետևաբար՝ հարկաբյուջետային քաղաքականությունը սահմանելիս շեշտադրումը կատարվում է ինչպես հարկերի միջոցով բյուջետային եկամուտների ավելացմանը, այնպես էլ տնտեսական գործունեության համար բարենպաստ միջավայրի ստեղծմանը՝ տնտեսական աճի խթանմանը, որի շղթայական արդյունքը բյուջետային եկամուտների ավելացումն է: Վերջին տարիներին ֆիսկալ քաղաքականության բարեփոխումները միտված են հարկային արտոնությունների կրճատմանը, հարկման բազայի ամրապնդմանը, հարկային վարչարարության բարելավմանը, արդյունքում ակնկալվում է բարելավել հարկեր և ՀՆԱ (համախառն ներքին արդյունք) հարաբերակցությունը, որը 2017 և 2018 թվականներին համապատասխանաբար կազմել է 20.8% և 21□3%:

Զարգացած երկրներում հարկեր և ՀՆԱ հարաբերակցությունը տատանվում է 30-50%: Եվրամիության երկրներում վերը նշված միջին հարաբերակցությունը 2017թ. կազմել է 40,2%, 2016թ. 39,9%-ի փոխարեն: Հարկերը և ՀՆԱ-ն ուղիղ համեմատական կախվածության մեջ են, եթե բարձր է ՀՆԱ-ն, բարձր է նաև բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն (բարձր է կենսամակարդակը), հետևաբար բարձր է նաև հարկերի հավաքագրելիությունը:



### Գծապատկեր 3 □ Հարկեր և ՀՆԱ հարաբերակցությունը<sup>55</sup>

Պատճառն այն է, որ որքան մեծ է ֆիսկալ դեֆիցիտը, այնքան մեծ է բյուջետային եկամուտների՝ հարկերի և այլ վճարների տեսքով ստացվող և պետության գործառույթների իրականացման ծախսերի միջև ճեղքվածքը, քանի որ պետությունը բյուջեով սահմանված տնտեսական քաղաքականության իրականացման համար չբավարարող միջոցները լրացնում է փոխառությունների միջոցով, որոնց դիմաց վճարները ներառվում են ծախսերում, բայց ոչ եկամուտներում: Եվ հակառակը, որքան փոքր է ճեղքվածքը եկամուտների և ծախսերի միջև, պետությանը անհրաժեշտ լրացուցիչ ֆինանսական միջոցների աղբյուրը հարկային եկամուտներն են հանդիսանում՝ ավելացնելով ՀՆԱ-ն: Այն երկրներում, որտեղ տնտեսությունը չի զարգանում կամ շատ դանդաղ է զարգանում, համատարած հարկերից խուսափում են (ստվերային տնտեսության իրական չափերը բավականին բարձր են՝ գնահատվում են 20% և ավելի), բարձր է գործազրկության մակարդակը, ցածր են բնակչության եկամուտները, հետևաբար ՀՆԱ-ի մեջ փոքր է նաև հարկերի տեսակարար կշիռը:

Հայաստանում հարկեր և ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշի բարելավման նպատակով՝ տնտեսական աճով և բնակչության կենսամակարդակի բարձրացմամբ պայմանավորված կառավարության առաքելությունը տնտեսության զարգացման խթանումն է, նոր աշխատատեղերի ստեղծումը, գործազրկության կրճատումը, իսկ հարկային քաղաքականության հիմնական առաքելությունը՝ ստվերի կրճատման, տնտեսավարման բարենպաստ պայմանների ապահովման հաշվին հարկային եկամուտների աճը:


**Բյուջետային ծախսեր:** Բյուջետային ծախսերը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների օրենսդրությամբ վերապահված գործառույթների իրականացման ֆինանսական ապահովման նպատակով համապատաս-

<sup>55</sup> Taxation in 2017 Eurostat, Newsrelease, 182/2018

խան բյուջեներից ուղղվող դրամական միջոցներն են: Ըստ նպատակայնության (գործառույթի)՝ ծախսերը դասակարգվում են՝

- ռազմական,
- տնտեսական,
- սոցիալական,
- կառավարման ապարատի պահպանության,
- կառավարությանն օրենքով վերապահված այլ իրավասությունների իրականացման և այլ ուղղություններ:

Բնակչության և երկրի սահմանների անվտանգությունը յուրաքանչյուր պետության առաջնահերթություններից է և պայմանավորված է տվյալ երկրի աշխարհաքաղաքական դիրքով, տնտեսական և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացածության մակարդակով, և այդ ուղղությամբ կատարվող ծախսերը կազմում են բյուջետային ծախսերի 50%-ը և ավելին: Հայաստանում պաշտպանությանը (ռազմական) ուղղվող ծախսերը կազմում են բյուջետային ծախսերի 20-22%-ը, որը շատ ավելի քիչ է մեր երկրի համար սպառնալիք ներկայացնող հարևան երկրի՝ Ադրբեջանի՝ այդ ուղղությամբ կատարվող ծախսերից, հետևաբար՝ Հայաստանը, չցանկանալով գտնվել ռազմական սպառնալիքայինությունների ձեռքբերման մրցավազքում, պարտավոր է մշտապես արդիականացնել իր ռազմական արդյունաբերությունը՝ զարկ տալով նորագույն տեխնոլոգիական հետազոտությունների իրականացմանն ու արդյունքների ներդրմանը:



**Գծապատկեր 4.** Բյուջետային եկամուտների, ծախսերի, պետական պարտքի դինամիկան 2014-2018թթ.<sup>56</sup>

<sup>56</sup> <http://www.edrc.am>

Տնտեսության զարգացում, ՀՆԱ աճը հնարավորություն է տալիս մեծացնել ռազմական ծախսերը՝ զարգացնելով ռազմական տնտեսության հետ ազգային տնտեսության մյուս փոխկապակցված ճյուղերը՝ մեքենաշինություն, ՏՏ ոլորտ, քիմիական արդյունաբերություն, սննդի և թեթև արդյունաբերություն:

Բյուջետային ծախսերի կառուցվածքը պայմանավորված է կառավարության ծրագրով սահմանված տնտեսական քաղաքականության ուղղվածությամբ:

Ինչպես գծապատկեր 4-ից երևում է, պետական եկամուտների աճի տեմպերը շատ ավելի դանդաղ են, քան պետական պարտքի աճը: 2018 թվականին պետական բյուջեի եկամուտները կազմել են 1 341 միլիարդ դրամ, որը 2017 թվականի նույն ժամանակահատվածից ավելի է շուրջ 103 միլիարդ դրամով: 2018 թվականին բյուջեի ծախսերը կազմել են 1446 միլիարդ դրամ, իսկ պակասորդը՝ 105.4 միլիարդ դրամ: 2017 թվականի համեմատ պակասորդը կրճատվել է 160 միլիարդ դրամով: 2018 թվականին բյուջետային ծախսերը 2017 թվականի համեմատ նվազել են 57.5 միլիարդ դրամով, որը պայմանավորված է կառավարության հանրային ֆինանսների կառավարման արդյունավետության բարձրացման ուղղությամբ որդեգրած քաղաքականությամբ՝ պետական ապարատի օպտիմալացում, պետական ծախսերի կրճատման հետ զուգահեռ կատարվող ծախսերի արդյունավետության բարձրացում, հաշվետվողականության բարձրացում: Սուվերի կրճատման, տնտեսությունում ներդրումների խթանման արդյունքում, համաձայն ֆինանսների նախարարության կանխատեսումների, պետական պարտքի ծավալի մեծացմանը զուգահեռ կանխատեսվում է նաև ՀՆԱ աճ, արդյունքում պետական պարտքի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կնվազի և 2021թ. կկազմի ՀՆԱ-ի 51.6%-ը: Այս առումով շատ կարևորվում է պետական պարտքի արդյունավետ կառավարման խնդիրը, քանզի փորձը ցույց է տվել, որ նախորդ ժամանակներում պարտքերը գոյացնող վարկերը փոշիացվել են և համապատասխան հանրային արդյունք չեն ապահովել, հետևաբար պարտքի արդյունավետ կառավարումը ենթադրում է վարկերի հաշվին տնտեսությունում հավելյալ արժեքի ստեղծում և պետական պարտքի ռիսկերի նվազեցում: Այս դեպքում միայն դեֆիցիտը վարկավորող ֆինանսական ռեսուրսները ծախսերի մեջ ներառվելուն զուգահեռ, որոշ չափով կներառվեն նաև եկամուտներում, ավելացնելով հարկեր ՀՆԱ հարաբերակցությունը:

Պետական առողջ ֆինանսների կառավարման համակարգը Հայաստանի տնտեսության զարգացման առանցքային գերակայություններից է: Հայաստանը վերջին 15 տարիների ընթացքում տարբեր դոնոր կազմակերպությունների՝ Միջազգային վալյուտային ֆոնդ (IMF), Համաշխարհային բանկ (WB) աջակցությամբ հետամուտ է եղել հանրային ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումներին: Հանրային ֆինանսների կառավարման արդյունավետության բարձրացման կարևորագույն հիմնահարցերից է հանդիսանում բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացումը: Բյուջետային ծախսերի արդյունավետությունը դիտարկվում է որպես առկա ռեսուրսներով առավելագույն արդյունքի ստացում կամ նվազագույն ծախսերով քանակապես և

որակապես չափելի օպտիմալ ծառայությունների մատուցում: Այս նպատակով անհրաժեշտ է յուրաքանչյուր միավոր ծախսի համար ապահովել համապատասխան արդյունք, որը կբխի տնտեսական քաղաքականության գերակայություններից, ինչպես նաև հանրային ֆինանսների կառավարման համակարգը դարձնել թափանցիկ և մեծացնել միևնույն սկզբունքներով հաշվառվող հաշվետվողականությունը: Հանրային ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումները իրականացվել են հետևյալ ուղղություններով՝

- **Պետական եկամուտների քաղաքականության մշակում.** տնտեսվարողների համար տնտեսվարման հավասար պայմանների ապահովում, ստվերի կրճատում, հարկային բեռի և ստվերային տնտեսության ծավալների կրճատում, հարկային համակարգի կառուցվածքի օպտիմալացում:

- **Ռազմավարական պլանավորում** □ միջին ժամկետ ծախսերի ծրագրերի հիման վրա բյուջետային ծախսերի պլանավորում՝ չափելի և գնահատելի նպատակների և կատարողական պահանջների սահմանում: Տեսլականի իրականացման համար ի սկզբանե չափազանց կարևորվում է ծրագրերի բովանդակության և ակնկալվող արդյունքների հստակ սահմանումը և նոր միայն համապատասխան ծախսերի գնահատումը:

- **Գանձապետական համակարգ.** բարեփոխումները իրականացվել են հաշվետվական էլեկտրոնային համակարգերի ներդրմամբ, պետական համակարգի ծախսերի վերահսկողության մեծացման և բյուջեի նախահաշվով սահմանված ծախսերին համապատասխանության ապահովման նպատակով կենտրոնական վճարման համակարգի ներդրում (գանձապետական համակարգի կենտրոնացում)՝ կենտրոնական և տեղական կառավարման համակարգի և նրանց ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարման համար:

- **Ծրագրային բյուջետավորում (ԾԲ).** բյուջետավորման մի եղանակ է, որ հիմնվում է բյուջեի շրջանակում իրականացվող ծրագրերի վրա: ԾԲ հիմնական նպատակը ծախսային առաջնահերթությունների բարելավումն է, ինչը նշանակում է, որ այլ հավասար պայմաններում սահմանափակ բյուջետային ռեսուրսները հատկացվում են այն ծրագրերին, որոնք ապահովում են առավել մեծ օգուտներ հանրության համար՝ ծախս-արդյունք, հետևաբար ծրագրային բյուջետավորման ներդրումը կնպաստի բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացմանը<sup>57</sup>: Ծրագրային բյուջետավորման մեթոդաբանության ներդրման շուրջ աշխատանքները ՀՀ-ում սկսվել են 2003 թվականից: Այս տարիների ընթացքում ծրագրային բյուջետավորման մեթոդաբանությունը փորձարկվել և ներդրվել է պետական կառավարման որոշ օղակներում, արդյունքում վերհանվել են առկա խնդիրները, կատարվել են անհրաժեշտ օրենսդրական բարեփոխումներ, ՀՀ կառավարությունն ընդունել է ծրագրային բյուջետավորման ներդրման համապատասխան ռազմավարություն և գործողությունների

<sup>57</sup> Հայեցակարգային ուսումնասիրություն՝ ԱԾԲ համակարգի առկա հիմնահարցերը Հայաստանում և դրանց վերաբերյալ խորհրդատուի առաջարկները, «ԱՎԱԳ Սոլյուշնս» ՍՊԸ, 2016թ.:

ծրագիր: 2019 թվականի բյուջեն ներկայացված է ծրագրային բյուջետավորման ձևաչափով, և բյուջեի կատարման արդյունքներով հնարավոր կլինի գնահատել համապատասխան հանրային կառույցների ռազմավարական նպատակների իրականացումը, համապատասխան գերատեսչությունների աշխատանքը, ծախսերի հիմնավորվածությունն ու նպատակայնությունը և որոշումներ կայացնել հետագա գործունեության ռազմավարական պլանավորման, առաջնահերթությունների սահմանման վերաբերյալ: Վերջին տասնամյակում պետական կառույցների կողմից իրականացվող բազմաթիվ ծառայություններ պատվիրակվում են մասնավոր հատվածի կազմակերպություններին՝ պետական-մասնավոր հատված համագործակցություն, նպատակ ունենալով հանրային արդյունքի ձևավորման գործում ներգրավել մասնավոր ներդրումներ, կրճատել պետական ծախսերը, հանրությանը մատուցել ավելի որակյալ ծառայություններ: Ծրագրային բյուջետավորման կարևորագույն պահանջներից է տեղեկատվության ներկայացումը ըստ նպատակների, ըստ շահառուների և որակական ու քանակական չափերի արդյունքների, այսինքն՝ բյուջեն պետք է ապահովի ծախսվող միջոցների դիմաց առավելագույն արդյունքի ստացումը՝ կանխելով պետության ֆինանսական միջոցների ոչ արդյունավետ բաշխումը: Սակայն առկա են որոշ խնդիրներ, օրինակ՝ պետական որոշ գերատեսչությունների տեսանկյունից արդյունքների քանակական և որակական չափումը, երբեմն, չի կարող տալ սպասելի արդյունք՝ կրթություն, ոստիկանություն, դատական համակարգ և այլն: Օրինակ՝ հանրակրթական ուսուցումը ֆինանսավորվում է աշակերտների քանակով, բոլոր ծախսերը հիմնավորված և նպատակային են, արդյունքը յուրաքանչյուր երեխայի անվճար կրթության իրավունքի իրացումն է, կրթված ու առողջ հասարակության ձևավորումը: Չափելիության տեսանկյունից մենք կարող ենք ներկայացնել ուսուցում ստացած աշակերտների թվաքանակը, բայց որակական գնահատականը, թե որքանով են յուրացվել մատուցված գիտելիքները, ձևավորել հասարակության պիտանի և ակտիվ քաղաքացի, գրագետ գիտելիքներով հարուստ մարդ, ավելի դժվար է ներկայացնել:

**Պետական գնումներ.** պետական գնումների համակարգի արդյունավետության, թափանցիկության և օրենքներին համապատասխանության բարելավումը, հանրային ֆինանսների վերահսկողության բարձրացումը կնպաստի հանրային ֆինանսների կառավարման արդյունավետության բարձրացմանը, քանզի պետական բյուջեի ծախսերի մոտավորապես 60%-ը իրականացվում է պետական գնումներով: Պետական գնումների իրականացման հիմքում դրված են արդյունավետություն, օգտակարություն, խնայողություն սկզբունքները, որոնց կիրառման ընթացքում առաջանում են խնդրահարույց և չլուծված հարցեր: Օրինակ՝ գնումների գործընթացում հաղթող մասնակիցը որոշվում է՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Լինում են դեպքեր, երբ մյուս գնային առաջարկների համեմատ տնտեսվարողի կողմից առաջարկվում են շատ ցածր գներ, չնայած գնումների օրենքով նշվում է, որ առաջարկվող գինը ինքնարժեքից ցածր չի կարող լինել, սակայն յուրա-

քանչյուր տնտեսավարողի մոտ տարբեր ձևով է ձևավորվում ինքնարժեքը, հետևաբար ընտրվում է նվազագույն գնային առաջարկը՝ շուկայականից շատ ցածր գնով: Նման դեպքերում ցանկալի է, որ եթե մրցույթին ներկայացված կլինեն գնային մյուս առաջարկներից և շուկայական գներից էապես տարբերվող առաջարկներ, ապա այդ առաջարկները չդիտարկվեն, քանզի որակը ամեն դեպքում կզիջի, և պետական կառույցը հաջորդ տարի իր գնումների պլանը կազմելիս ծախսերի սահմանման հարցում խնդրի առջև կկանգնի: Փորձը ցույց է տալիս, որ շատ դեպքերում ցածր գինը ծախսի կառավարման արդյունավետության չափանիշ չի կարող լինել, այն միշտ պետք է համադրել որակի և մյուս այլ կարևոր տեխնիկական բնութագրերի հետ՝ բացառելով հնարավոր կոռուպցիոն մեխանիզմները:

• **Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի նոր ստանդարտի ամբողջական ներդրում.** հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգը, ունենալով իր ուրույն տեղը պետական ֆինանսական համակարգում, 2014թ. սկսած իրականացվել են լայնամասշտաբ օրենսդրական բարեփոխումներ, որոնց դիտարկետում հաշվապահական համակարգի միասնականացումն ու միջազգային ստանդարտներին համապատասխանեցումն էր: Ընդունվել են հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգը կանոնակարգող «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը, Հաշվապահական հաշվառման ստանդարտը և այլ նորմատիվ ակտեր: Դրանցով նախատեսվում է նախկինում գործող հաշվապահական հաշվառման համակարգից անցում կատարել հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային չափանիշներին համապատասխանող համակարգի, որը համահունչ և համադրելի կլինի Հայաստանի Հանրապետության բյուջետային ու հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումներին (GFSM) և հանրային հատվածի միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտներին (IPSAS), ծրագրային բյուջետավորման մեթոդաբանությանը և այլն: Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ներդրման ինստիտուցիոնալ կարողությունների գնահատմամբ ակնկալվում է, որ հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրումը հանրային հատվածում կիրականացվի 6-7 տարվա ընթացքում: 2016թ. հանրային հատվածի միավորները սահմանված փուլային հաջորդականությամբ անցում կատարեցին նոր համակարգին: Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ և՛ ներդրման փուլը, և՛ կիրառման փուլը ուղեկցվել են որոշակի խնդիրներով, և անցել է շուրջ 3 տարի, սակայն հանրային հատվածում թվով շատ քիչ կազմակերպություններ են, որ հաշվառումն ամբողջությամբ վարում են նոր համակարգով սահմանված համակարգչային ծրագրով, հանրային հատվածի հաշվային պլանին և ստանդարտներին համապատասխան: Խնդիրը կայանում է նաև նրանում, ինչպես նախկինում, այնպես էլ հիմա գերակա է համարվում ծախսերի և եկամուտների ճիշտ համադրումը, նախահաշվին դրանց համապատասխանեցումը, այլ ոչ նաև զուգահեռ հաշվապահական հաշվառման ստանդարտով սահմանված մեթոդա-



բանությանը համապատասխան դրանց հաշվառման վարումը՝ առավել ևս 2019թ. երբ պետական ոչ առևտրային կազմակերպությունների միջոցների վերահսկողության համար կիրառվեց գանձապետական կենտրոնացված համակարգը: Հանրային հատվածի բոլոր մակարդակներում դեռևս առկա է հաշվապահական հաշվառման միասնական մեթոդաբանությամբ վարման, ակտիվների ճիշտ հաշվառման խնդիրներ: Արդյունքում գործող հաշվապահական հաշվառման համակարգը դեռևս հնարավորություն չի տալիս ստանալ հուսալի և արժանահավատ տեղեկատվություն հանրային կազմակերպությունների գործունեությունների վերաբերյալ, կազմել միասնական սկզբունքների վրա հիմնված պետության համախմբված ֆինանսական հաշվետվություններ: Հաշվապահական հաշվառման համակարգը ծրագրային բյուջետավորման հետ միևնույն հարթակում, հետևելով հաշվապահական հաշվառման կանոններին պետք է հետևի, որպեսզի ծախսերը ոչ միայն լինեն հիմնավորված, այլ նաև նպատակային, արդյունավետ՝ հիմնվելով ծախս-արդյունք մոտեցման վրա: Այս ուղղությամբ պետական պատկան մարմինները՝ ֆինանսների նախարարությունը, պետական և համայնքային նշանակության լիազորված մարմինները պետք է պատշաճ վերահսկեն գործընթացի իրականացումը և համակարգի ամբողջական ներդրում՝ ապահովելով համապատասխան մասնագիտական աջակցություն՝ իրազեկում, տեղեկատվության տրամադրում, վերապատրաստումների իրականացում: Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մասին օրենքով սահմանվում է հաշվապահների որակավորում: Որակավորման համակարգը դեռևս ներդրված չէ, այս ուղղությամբ աշխատանքներ տանելիս անհրաժեշտ է զուգահեռաբար հիմնվելով միջազգային փորձի վրա ներդնել հաշվապահների շարունակական մասնագիտական զարգացման համակարգ՝ շեշտադրումը կատարելով ինչպես գիտելիքների բարելավմանը, այնպես էլ ոլորտային առանձնահատկություններին, գործնականում կիրառվող հմտությունների կատարելագործմանը:

• **Պետական ներքին ֆինանսական հսկողություն և ներքին աուդիտ** □

պետական ներքին վերահսկողության և ներքին աուդիտի համակարգը հանրային ֆինանսների կառավարման համակարգի բաղադրիչ է հանդիսանում, որի միջոցով կազմակերպությունների նպատակների իրագործմանն աջակցելու նպատակով ուղղորդվում և հսկվում են հանրային ծառայությունների մատուցման ֆինանսական գործառույթները՝ համակարգային և կազմակերպված մոտեցում ցուցաբերելով ռիսկերի կառավարման, հսկողության և ղեկավարման գործընթացների կատարելագործմանը: Ներքին աուդիտի ներդրումը կարևոր դերակատարում ունի պետական բյուջեի, պետական մարմինների թափանցիկության ու հաշվետվողականության, համապատասխանության ապահովման գործում: Այդ համակարգի միջոցով վերահսկվում է հանրային ֆինանսների կառավարման ողջ համակարգը՝ բյուջեի նախագծի կազմումից մինչև կատարման հաշվետվությունների հաստատումը: Ռիսկերի բացահայտումն ու կանխարգելիչ գործիքների ներդրման առումով շեշտադրումը պետք է կատարել ոչ թե միայն բյուջետային ծախսերի խնայողության վրա, տնտեսել, ինչքան հնարավոր է շատ

գումար վերադարձնել պետական բյուջե, այլ ծրագրային նպատակների իրականացմանը, արդյունքի քանակական և որակական վերահսկողությանը:

Այսպիսով, վերջին տասնամյակում շարունակական բնույթ են կրում ՀՀ պետական հատվածի արդիականացումը, որի իրականացման նպատակը պետական ծախսերի թափանցիկության և հաշվետվողականության, ամբողջ համակարգի վերահսկողության ապահովումն ու մատուցվող ծառայությունների քանակական և որակական բարելավումն է, հանրային ակտիվների և պարտավորությունների կառավարման արդյունավետության մեծացումը: Պետական ֆինանսների կառավարման համակարգը Հայաստանի տնտեսության զարգացման առանցքային գերակայություններից է, քանզի արդյունավետ կառավարումը ենթադրում է առկա ռեսուրսներով առավելագույն արդյունքի ստացում կամ նվազագույն ծախսերով քանակապես և որակապես չափելի օպտիմալ ծառայությունների մատուցում:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենք, հոդված 3, 24 հունիսի, 1997:
2. Հայեցակարգային ուսումնասիրություն՝ ԾԲ համակարգի առկա հիմնահարցերը Հայաստանում և դրանց վերաբերյալ խորհրդատուի առաջարկները, «Ավագ Սոլյուշնս» ՍՊԸ, 2016թ.:
3. International Budget Partnership, <http://survey.internationalbudget.org/#>
4. Taxation in 2017 Eurostat, Newsrelease,182/2018
5. <https://hy.wikipedia.org/wiki/%D5%96%D5%AB%D5%B6%D5%A1%D5%B6%D5%BD%D5%B6%D5%A5%D6%80>
6. <http://www.edrc.am>

### **Ամայլա Գալստյան**

#### **ՀԱՆՐԱՅԻՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

**Ամփոփագիր:** Յուրաքանչյուր պետություն իր առջև խնդիր է դնում լուծել հասարակության գերակա խնդիրները, որն իրատեսական է դառնում հանրային ֆինանսների արդյունավետ կառավարման արդյունքում՝ պետական բյուջեի եկամուտների պատշաճ հավաքագրում, առաջնահերթությունների սահմանում և առկա ռեսուրսների արդյունավետ բաշխում: Հանրային ֆինանսների կառավարման կարևորագույն օղակներից է բյուջետային ողջ գործընթացը, որը սահմանում է առաջիկա տարվա ընթացքում իրականացվելիք տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները և դրա հիմքում ընկած հիմնարար սկզբունքները:

**Բանալի բաներ.** բյուջե, ծախս, եկամուտ, որակական և քանակական ցուցա-

նիշներ, արդյունավետություն, ֆինանսներ, հանրային հատված,  
կառավարում:

**Амалия Галстян**

## **ОРИЕНТИРЫ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ УПРАВЛЕНИЯ ГОСУДАРСТВЕННЫМИ ФИНАНСАМИ В РА**

**Резюме:** Каждая страна ставит перед собой задачу решения приоритетных задач общества, которая становится все более реалистичной в результате эффективного управления государственными финансами: высокий уровень сбора доходов государственного бюджета, определение приоритетов и эффективное распределение ресурсов. Одним из важнейших аспектов управления государственными финансами является бюджетный процесс, в котором определены основные направления экономической политики, реализуемой в текущем году и, заложенные в ней основные принципы.

**Ключевые слова:** бюджет, расходы, доходы, качественные и количественные показатели, эффективность, финансы, государственный сектор, управление.

**Amalya Galstyan**

## **THE DIRECTION OF IMPROVING PUBLIC FINANCIAL MANAGEMENT EFFICIENCY IN THE RA**

**Abstract:** Each country defines the objective of addressing the priorities of the society, which is becoming more realistic as a result of effective public finance management: high degree of collection of state budget revenues, identification of priorities and effective resource allocation. One of the most important aspects of the public finance management is the budgetary processes, in which the main directions of the economic policy and the fundamental principles are defined that are implemented in the current year.

**Keywords:** Budget, expenditure, income, qualitative and quantitative indicators, efficiency, finance, public sector, management

## Թաթուլ Մանասերյան Ռոբերտ Քոչարյան

### ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՈՒՂԵՆԻՇ

Ստվերային տնտեսության հասցրած վնասները նույնքան էական են, որքան երկրի առաջընթացի այնպիսի սպառնալիքների հետևանքները, ինչպիսիք են կոռուպցիան, մենաշնորհները, բիզնեսի «տանիքները», անձնական հովանավորչությունը և այլ արատավոր երևույթներ:

Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) ուսումնասիրությունը՝ “Shadow Economies Around the World: What Did We Learn Over the Last 20 Years?” («Աշխարհի ստվերային տնտեսությունները. ինչ գիտենք վերջին 20 տարիների ընթացքում») զեկույցում Հայաստանի ոչ պաշտոնական (ստվերային) տնտեսությունը գնահատվում է ընդհանուր ՀՆԱ-ի 36% -ը<sup>58</sup>:


Հետազոտության համաձայն՝ անկախությունից ի վեր Հայաստանի ոչ ֆորմալ տնտեսությունը միջին հաշվով ՀՆԱ-ի 42,59% է կազմել: Տարածաշրջանի երկրներից ամենամեծ ոչ ֆորմալ տնտեսությունը գրանցվել է Իրանում (18.38%): Թուրքիայում դա ՀՆԱ-ի 27,43%-ն է, Ադրբեջանում՝ 43,66%-ը, Վրաստանում՝ 53,07%-ը: Զարգացած երկրներից Շվեյցարիայում ստվերային տնտեսության տեսակարար կշիռն ամենացածրն է՝ 6.94%, այնուհետև՝ Միացյալ Նահանգներում (7%), Գերմանիայում (7.75%), Նիդեռլանդներում (7.83%), Ավստրիայում (8.1%) և Ճապոնիայում (8%): Ամենաբարձր մասնաբաժինը գրանցվել է Զիմբաբվեում (67%) և Հաիթիում (56.38%)<sup>59</sup>:

Որպես կանոն, ստվերային տնտեսությունը ներառում է տնտեսական գործունեության բոլոր ձևերը, որոնց արդյունքները թաքցված են հարկային մարմիններից՝ դրամավարկային քաղաքականության, կարգավորիչ գործառույթների անկատարության և այլ ինստիտուցիոնալ պատճառներով: Այն արտացոլում է հիմնականում օրինական տնտեսական և արտադրական գործունեության տարբեր տեսակներ, որոնք հաշվառելու պարագայում կարող են նպաստել երկրի իրական ՀՆԱ-ի աճին:

1991 թ. մինչ օրս հետազոտված 158 երկրների ստվերային տնտեսության միջին չափերը կազմում են ՀՆԱ-ի 31,9%-ը: Զեկույցում կիրառվել են ուսումնասիրության նոր մեթոդներ, հատկապես նոր մակրո մեթոդ, «Արժույթի պահանջարկի մոտեցում» (CDA) և բազմակի ցուցանիշներ ու բազմակի պատճառներ՝

<sup>58</sup> “Shadow Economies Around the World: What Did We Learn Over the Last 20 Years?”, <http://www.armbanks.am/en/2018/02/07/112439/>

<sup>59</sup> Նույն տեղում:



(MIMIC) կառուցված հիբրիդային մոդելային գնահատման ընթացակարգով<sup>60</sup>:

**Գծանկար 1. Տնտեսության տեսակարար կշիռները տարբեր երկրներում 2011-2025թթ.**<sup>61</sup>

Ընդհանուր առմամբ ստվերային տնտեսությունը մասնագիտական գրականության մեջ ներկայացվում է տարբեր տերմիններով՝ «ստվերային», «թաքնված», «չգրանցված», «ընդհատակյա», «սև շուկա», «գորշ տնտեսություն», «ապօրինի գործունեություն» և այլն: Տարածված է այն տեսակետը, որ Հայաստանի պարագայում առավել հարիր է «թաքնված» տնտեսություն եզրույթը, որը դիտարկվում է նաև որպես նվազ արդյունավետ կամ կոշտ հարկային վարչարարության արդյունք:

Ստվերային տնտեսության ներկայիս մասշտաբները, որպես պետությունից թաքնված տնտեսական գործունեություն, լայնորեն տարբերվում է տարբեր երկրներում: Սակայն ստվերային տնտեսության դեմ պայքարի անհրաժեշտությունը սուր է ոչ միայն մեր երկրում, այլև ողջ աշխարհում: Ներկայումս ստվերային տնտեսության և դրա կառուցվածքի ընդհանուր ընդունված սահմանում գոյություն չունի: Այնուամենայնիվ, ստվերային տնտեսության մակարդակի գնա-

<sup>60</sup> <http://www.armbanks.am/en/2018/02/07/112439/>

<sup>61</sup> Shadow economy as a % of GDP, in Azerbaijan's shadow economy a staggering 66% of GDP, By bne IntelliNews July 4, 2017, <https://www.intellinews.com/azerbaijan-s-shadow-economy-a-staggering-66-of-gdp-124699/>

հատման տարբեր մեթոդների հիմքում այս կամ այն կերպ դիտարկվում են տնտեսական գործունեության ոչ ֆորմալ կողմերը: Տնտեսության ստվերային հատվածում բնակչության ստացված եկամուտների զգալի մասը, որպես կանոն, կատարվում է կանխիկ:

Այս առումով ծագում է ողջամիտ հարց. կարո՞ղ է կանխիկ դրամաշրջանառությունը դիտարկվել որպես ստվերային տնտեսության գոյության գործոններից մեկը: Այս հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է պարզել ստվերային տնտեսության մակարդակի և դրամական շրջանառության միջև փոխկապակցվածությունը:

Այս նպատակով կարևոր է վերլուծել օրենսդրական սահմանափակումների արտասահմանյան փորձը կանխիկ դրամաշրջանառության վերաբերյալ և սահմանել կանխիկ դրամաշրջանառության ռացիոնալ մակարդակը՝ մակրոտնտեսական ցուցանիշների և շրջանառության մեջ գտնվող դրամական միջոցների միջև տնտեսամաթեմատիկական փոխկապակցվածությունների հիման վրա:

Աշխարհում ստվերային տնտեսության մակարդակի գնահատումները կատարում են ազգային և միջազգային հետազոտական կենտրոնները: Այսպես, համաձայն Համաշխարհային բանկի հրապարակած տարբեր երկրներում ստվերային տնտեսության մակարդակի գնահատումները հիմնված են դրամական ցուցանիշների վրա: Հաշվարկները հիմնված են այն ենթադրության վրա, որ իրավական գործարքները, որոնցից հարկերը վճարվում են, իրականացվում են ոչ կանխիկ ձևով: Կանխիկ դրամի շրջանառությունն օգտագործվում է ապօրինի եկամուտները և ծախսերը թաքցնելու համար: Որպես արդյունք առանձնացվեցին երկրներ ստվերային տնտեսության նվազագույն մակարդակով՝ 9-10% սահմաններում (Շվեյցարիա, ԱՄՆ, Ավստրիա, Լյուքսեմբուրգ) և ստվերային տնտեսության առավելագույն մակարդակ ունեցող երկրներ՝ 60-70% սահմաններում (Վրաստան, Բոլիվիա, Ադրբեջան, Պերու): Ռուսաստանում, ըստ Համաշխարհային բանկի փորձագետների, ստվերային տնտեսության մակարդակը կազմել է ՀՆԱ-ի 43.8%-ը<sup>62</sup>:

Վերլուծությունները ցույց են տալիս, որ միջազգային ֆինանսական և վարկային հաստատությունների փորձագետները գնահատում են տարբեր երկրներում ստվերային տնտեսության մակարդակը, հիմնված այն կարծիքի վրա, որ ստվերային տնտեսության չափի և շրջանառության մեջ գտնվող կանխիկ դրամի զանգվածի միջև կա ուղիղ համեմատական կապ: Մինչույն ժամանակ կանխիկ դրամաշրջանառության սահմանափակումից և, համապատասխանաբար, անկանխիկ վճարումների և հաշվարկների տեսակարար կշռի ավելացումից սովորաբար եզրակացվում է, որ ստվերային տնտեսության մասնաբաժինը նվազում է, և գործարարների ու հասարակության միջև հարաբերությունների թափանցիկությունը մեծանում է: Այս առումով հարցն ակնհայտորեն բխում է դրամաշրջանառության օպտիմալ կառուցվածքից, այն է՝ կանխիկ և անկանխիկ մասերի օպտիմալ հարաբերակցության սահմանումից:

<sup>62</sup> Ռուսաստանի Բանկի պաշտոնական կայքէջ ([http://www.cbr.ru/statistics/credit\\_statistics/MB.asp](http://www.cbr.ru/statistics/credit_statistics/MB.asp))

Պետական մակարդակով կանխիկ վճարումների և հաշվարկների նկատմամբ կիրառվում են վարչական սահմանափակումներ աշխարհի մի շարք երկրներում: Օրինակ, կանխիկ շրջանառության նկատմամբ բավականին խիստ սահմանափակումներ կան ԱՄՆ-ում՝ 5000 ԱՄՆ դոլար<sup>1</sup>, Իտալիայում՝ 1000 եվրո<sup>2</sup>, Ֆրանսիայում<sup>3</sup> 3000 եվրո մեկ գործարքի ժամանակ: Այնպիսի երկրներ, ինչպիսիք են Շվեդիան և Նորվեգիան, հայտարարել են մոտ ապագայում ամբողջությամբ կանխիկ դրամի շրջանառությունից հրաժարվելու մասին:

Արևմտյան երկրներն անկանխիկ վճարումների զարգացման և կանխիկ շրջանառության սահմանափակման իրենց ծրագրերի իրականացման ընթացքում մի շարք խնդիրների են հանդիպել.

- արևմտյան բանկային համակարգերը և առկա անկանխիկ վճարումների և հաշվարկային համակարգերը միշտ չէ, որ պատրաստ են նոր միջավայրում անընդհատ «շահագործման»,
- մանրածախ առևտրով զբաղվող կազմակերպություններին պետք է օրենսդրորեն պարտադրել ներդնել անկանխիկ վճարումների նոր միջոցներ,
- հասարակությունն ու բնակչությունը միշտ չէ, որ համարժեքորեն ընկալում են առաջիկա փոփոխությունները, այդ առումով անհրաժեշտ է բարձրացնել բնակչության ֆինանսական գրագիտությունը, բացատրական աշխատանքներ տանել,
- վճարումների անկանխիկ ձևերին անցնելու գործընթացում, հաշվի առնելով մասնակիցներից ստացված բազմաթիվ իրավական հարցերը, անհրաժեշտ է իրավաբանական համակարգի ժամանակին աջակցություն,
- էլեկտրոնային վճարումների իրականացման համար անհրաժեշտ են ջանքերի, ժամանակի, ֆինանսական և մարդկային ռեսուրսների և այլնի զգալի ծախսեր:

Ընդհանուր առմամբ օտարերկրյա պետություններում կանխիկ շրջանառության նկատմամբ վարչական սահմանափակումների ներդրումը հնարավոր դարձավ նախապատրաստական մի շարք միջոցառումներից հետո: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ այդ երկրները բնութագրվում են անկանխիկ վճարումների զարգացած համակարգով, հարկաբյուջետային համակարգի բարձր արդյունավետությամբ, իրավապահ համակարգի արդյունավետությամբ և քաղաքացիների բարձր գիտակցությամբ:


Շրջանառության համար անհրաժեշտ կանխիկի վրա անմիջական ազդեցություն ունեցող ամենակարևոր ցուցանիշը ՀՆԱ-ի ցուցանիշն է: Հենց արտադրված ապրանքների ու ծառայությունների ծավալն է, որ հիմնականում որոշում է դրամական միջոցների անհրաժեշտ քանակությունն ապրանքների ու ծառայությունների փոխանակման և սպառման անխափան գործընթացի ապահովման համար:

<sup>1</sup> U.S. Federal Reserve, պաշտոնական կայքէջ (<http://www.federalreserve.gov/releases/>)

<sup>2</sup> ECB. պաշտոնական կայք-էջ (<http://www.ecb.int/stats/hist>)

<sup>3</sup> Համաշխարհային բանկի պաշտոնական կայքէջ (<http://www.worldbank.org/>)

« ՀՀ ՀՆԱ-ի և շրջանառությունում գտնվող կանխիկի աճի տեմպի վիճակագրական տվյալները ներկայացնենք գծապատկերի տեսքով (գծապատկեր 2):



**Գծապատկեր 2. ՀՀ ՀՆԱ-ն և շրջանառությունում գտնվող կանխիկը<sup>1</sup>**

Հաշվարկները ցույց են տալիս, որ վերջին 5 տարիների ընթացքում այս երկու ցուցանիշների միջև կորելյացիայի գործակիցը կազմում է 0.66, այսինքն՝ կապը ուղիղ համեմատական է և բավական սերտ:

Շարունակելով վերլուծությունը՝ ուսումնասիրենք շրջանառությունում գտնվող կանխիկի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում: Այսպես, կանխիկ շրջանառության տեսակարար կշիռը 2017 թվականի վերջին կազմել է ՀՆԱ-ի 7,99%-ը (2016 թվականին՝ 7,71%, իսկ 2015 թվականին՝ 6,85%): Այս տեսանկյունից համեմատության համար նշենք, որ ԱՄՆ-ում կանխիկ շրջանառության տեսակարար կշիռը 2017 թվականի վերջին կազմել է ՀՆԱ-ի 7%-ը: Մեծ Բրիտանիայում այդ հարաբերակցությունը կազմել է 4.5%, ԵՄ երկրների կշռված միջինը՝ 10.7%: Ռուսաստանում նույն ժամանակահատվածում տարեկան ՀՆԱ-ի դրամական շրջանառության տեսակարար կշիռը կազմել է 10.4%<sup>2</sup>:

Ընտևաբար՝ զարգացած արևմտյան երկրները կարող են ապահովել իրենց վճարային գործարքները՝ օգտագործելով ավելի քիչ կանխիկ գումար, իսկ մեր երկիրն այս առումով բավականին դրական միտումներ է ցուցաբերում:


Շարունակելով վերլուծությունը՝ ուսումնասիրենք առևտրի և ծառայությունների ոլորտների շրջանառության և շրջանառությունում գտնվող կանխիկի միջև կապը (հաշվի առնելով, որ Հայաստանի ՀՆԱ-ի՝ միջինում 70%-ը կազմում են այս 2 ոլորտները): Վիճակագրական տվյալները ներկայացնենք գծապատկերի

<sup>1</sup> Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2018, 2015, «ՀՀ ԿԲ հրապարակումներ» [www.cba.am](http://www.cba.am)

<sup>2</sup> <https://stats.bis.org/statx/srs/table/CT2>



տեսքով (գծապատկեր 3):



**Գծապատկեր 3. Առևտրի և ծառայությունների ոլորտների շրջանառության և շրջանառությունում գտնվող կանխիկ հարաբերակցությունը<sup>1</sup>**

Համանման վերլուծություն կատարելով՝ շրջանառությունում գտնվող կանխիկի և առևտրի ու ծառայությունների ցուցանիշների միջև կորելյացիայի գործակիցը կազմում է 0.81: Ստացվում է, որ մեր երկրում առևտրի ու ծառայությունների գումարային ծավալի առյուծի բաժինը կատարվում է կանխիկ:

Հայաստանի Հանրապետության համար նշենք, որ ֆիզիկական և իրավաբանական անձանց միջև դրամական գործարքների առավելագույն չափի վարչական սահմանափակման ներդրումն օգտակար միջոց է ստվերի դեմ պայքարում, բայց դրա հաջող իրականացման համար անհրաժեշտ է իրականացնել մի շարք նախապատրաստական միջոցառումներ.

1. բանկային ենթակառուցվածքի արդիականացում, ներառյալ վճարային տերմինալների լայնածավալ ներդրումը երկրում, բանկի հետ հաճախորդների հարաբերությունների պարզեցում,
2. անկանխիկ վճարման համակարգի գործունեության համար իրավական դաշտը կարգավորող նորմատիվ ակտերի բարելավում,
3. բնակչության շրջանում բացատրական աշխատանքների իրականացում՝ բնակչության ֆինանսական գրագիտության բարձրացման համար:

Այսպիսով, ստվերային տնտեսության բարձր մակարդակը հանգեցնում է սոցիալական ծանր հետևանքների, նվազեցնում պետական բյուջեի եկամուտները, ապրանքների և ծառայությունների ցածր որակի, շուկայական մրցակցության խեղաթյուրումների, տնտեսական և սոցիալական ինստիտուտների

<sup>1</sup> Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2018, 2015, ՀՀ ԿԲ հրապարակումներ՝ [www.cba.am](http://www.cba.am)

որոշակի դեգրադացման և՛ ցածր տնտեսական աճի: Հետևաբար, կարևոր է մշակել այնպիսի գործիքներ և լուծումներ, որոնք կարող են աստիճանաբար նվազեցնել սովետային տնտեսության տեսակարար կշիռը: Մեր համոզմամբ, նման միջոցներից կարող է լինել էլեկտրոնային վճարումների համակարգի ընդլայնումը: Ուսումնասիրությունները վկայում են, որ սովետային տնտեսության գոյության և աճի գլխավոր հիմքերից մեկը կանխիկ վճարումների առկայությունն է: Հետևաբար, քարտային վճարումների խթանումը կարող է զգալիորեն կրճատել երկրի մասշտաբով իրականացվող տարբեր ֆինանսական գործարքների հնարավոր «սովերը»:

Մասնավորապես, կարևոր է գնահատել կանխիկ դրամական գործարքների առավել ընդգրկուն ոլորտները: Դրանց զգալի մասը, մեր համոզմամբ, առնչվում է սննդամթերքի տարբեր տեսակների, ակոհոլային և ոչ ոգելից խմիչքների, ծխախոտի և լայն սպառման ապրանքների այլ տեսակների մանրածախ, իսկ երբեմն նաև՝ մեծածախ առևտրին: Բացի այդ, կանխիկ վճարումների մեծ ծավալներ են գրանցվում նաև խաղադրույքների, շահումով խաղերի ոլորտում, շարժական և անշարժ գույքի առք ու վաճառքի ժամանակ, երբ առկա են նաև հայտարարագրված և իրական գների զգալի տարբերություններ: Առանձին ուսումնասիրության առարկա են նաև զբոսաշրջության և դրա զարգացմանը նպաստող ոլորտները՝ սկսած օդանավակայանից, հյուրանոցային համակարգից և վերջացրած հուշանվերների առևտրով, հասարակական սննդի օբյեկտներով և այլն:

Ընդհանուր առմամբ, կանխիկ դրամաշրջանառության կրճատումը անկանխիկ գործարքների և էլեկտրոնային վճարումների խթանումը պայմանավորված են նաև գործարար և սպառողական նոր մշակույթի ձևավորմամբ, որն, իր հերթին, համալիր միջոցառումների մշակման և իրականացման կարիք ունի:

### **Օգտագործված գրականություն**

1. “Shadow Economies Around the World: What Did We Learn Over the Last 20 Years?”, <http://www.armbanks.am/en/2018/02/07/112439/>
2. Shadow economy as a % of GDP, in Azerbaijan's shadow economy a staggering 66% of GDP, By bne IntelliNews July 4, 2017, <https://www.intellinews.com/azerbaijan-s-shadow-economy-a-staggering-66-of-gdp-124699/>
3. Ռուսաստանի Բանկի պաշտոնական կայքէջ (http://www.cbr.ru/statistics/credit\_statistics/MB.asp)
4. U.S. Federal Reserve, պաշտոնական կայքէջ (<http://www.federalreserve.gov/releases/>)
5. ECB. պաշտոնական կայքէջ (<http://www.ecb.int/stats/hist>)
6. Համաշխարհային բանկի պաշտոնական կայքէջ (<http://www.worldbank.org/>)
7. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2018, [www.armstat.am](http://www.armstat.am)
8. ՀՀ ԿԲ հրապարակումներ, [www.cba.am](http://www.cba.am)
9. <https://stats.bis.org/statx/srs/table/CT2>

**Թաթուլ Մանասերյան**  
**Ռոբերտ Քոչարյան**

**ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԱՇԻՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ ՈՐՊԵՍ  
ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՈՒՂԵՆԻՇ**

**Ամփոփագիր:** Ստվերային տնտեսության հասցրած վնասները նույնքան էական են, որքան երկրի առաջընթացի այնպիսի սպառնալիքների հետևանքները, ինչպիսիք են կոռուպցիան, մենաշնորհները, բիզնեսի «տանիքները», անձնական հովանավորչությունը և այլ արատավոր երևույթներ: Ստվերային տնտեսության ներկայիս մասշտաբները, որպես պետությունից թաքնված տնտեսական գործունեություն, լայնորեն տարբերվում են տարբեր երկրներում: Տնտեսության ստվերային հատվածում բնակչության ստացված եկամուտների զգալի մասը, որպես կանոն, կատարվում է կանխիկ: Արժույթի միջազգային հիմնադրամի տվյալներով Հայաստանի ստվերային տնտեսությունը գնահատվում է ընդհանուր ՀՆԱ-ի 36%-ը:

**Բանալի բաներ.** ստվերային տնտեսություն, կանխիկ, վճարում, հարկեր, վարչարարություն, հաշվառում, առևտուր, ծառայություններ, ֆինանսական գործարք, դրամաշրջանառություն:

**Татул Манасерян**  
**Роберт Кочарян**

**ОГРАНИЧЕНИЯ НА НАЛИЧНОЕ ДЕНЕЖНОЕ ОБРАЩЕНИЕ КАК ОРИЕНТИР  
БОРЬБЫ С ТЕНЕВОЙ ЭКОНОМИКОЙ**

**Резюме:** Убытки от теневой экономики столь же существенны, как и последствия таких угроз, как коррупция, монополии, “крыша” бизнеса, личное покровительство и другие порочные явления. Нынешние масштабы теневой экономики как деятельность, скрытая от государства, сильно различаются в разных странах. В теневой экономике значительную часть доходов населения обычно составляют наличные денежные средства. По данным Международного валютного фонда, теневая экономика Армении оценивается в 36% от общего ВВП.

**Ключевые слова:** теневая экономика, наличные, платежи, налоги, администрирование, учет, торговля, услуги, финансовые операции, денежное обращение.

**Tatul Manaseryan**  
**Robert Kocharyan**

## **RESTRICTIONS ON CASH CIRCULATION AS A DIRECTION TO COMBAT THE SHADOW ECONOMY**

**Abstract:** Losses from the shadow economy are as significant as the consequences of threats such as corruption, monopolies, and the “roof” of the business, personal patronage and other vicious phenomena. The current scale of the shadow economy as an activity hidden from the state varies greatly from country to country. In the shadow economy, a significant portion of household income is usually the cash. According to the International Monetary Fund, the size of the shadow economy in Armenia is estimated at 36% of the GDP.

**Keywords:** Shadow economy, cash, payments, taxes, administration, accounting, trade, services, financial transactions, money circulation

## 2. ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

### Սվետլանա Դալլաքյան

#### ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Վերջին տարիների Հայաստանի տնտեսության անկայունությունն ու մրցունակության անկումը վկայում է տնտեսական առաջընթացի նախկին մոդելը նորով փոխարինելու ահնրաժեշտության մասին: Ապրում ենք աննախադեպ տեխնոլոգիական նորարարությունների դարաշրջանում, ինչը ազդարարում է «Չորրորդ արդյունաբերական հեղափոխության» սկիզբ: ՀՀ կառավարությունը կարևորելով բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության զարգացումը ոչ միայն որպես առանձին ոլորտ, այլ նաև որպես Հայաստանի տնտեսության ընդհանուր առաջընթացի, արտադրողականության բարձրացման և համաշխարհային տնտեսության մեջ մրցունակությունն ապահովելու հիմնական գործոն, հատուկ շեշտադրում է Հայաստանում այդ ոլորտի արդյունավետության շարունակական աճի ապահովումը և նրա բերած հնարավորությունների օգտագործումը ՀՀ տնտեսության հեռանկարային զարգացման մեջ: Ուստի անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ բարձր տեխնոլոգիական ընկերությունների զարգացումը խթանող էկոհամակարգի ստեղծման, ներառյալ՝ սկսնակ ընկերությունների հարկային արտոնությունների շարունակականության ապահովման, պետական աջակցության նոր օրենսդրական նախաձեռնությունների ընդլայնման, ռազմարդյունաբերական տնտեսության առաջնահերթությունների ուղենշման, սկսնակ ընկերությունների կողմից նորարար գաղափարների իրականացումը խթանելու նպատակով ֆինանսական միջոցների հասանելիության ապահովման, նորագույն տեխնոլոգիաների մշակումն ու ներդրումը խրախուսող վենչուրային ֆոնդերի, արքսելերատորների հիմնման խթանման հարցերին:

Բարձր տեխնոլոգիաների և SS ոլորտը վերջին տարիներին զգալի առաջընթաց է ապրում Հայաստանում՝ արձանագրելով տարեկան միջինում 22-25% աճ<sup>1</sup>: Մեծանում և ընդլայնվում է արտահանման և ներդրումների ծավալների աշխարհագրությունը, արտահանումը կազմում է ոլորտի գրեթե 60%-ը: Ակտիվ գործող կազմակերպությունների թիվը հասել է գրեթե 800-ի՝ ապահովելով աննախադեպ 23% աճ 2017թ.-ի համեմատ: Տեղական ընկերությունների մասնա-

<sup>1</sup> Հայաստանի տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի հետազոտության հաշվետվություն – 2018, էջ 15:

բաժինը նշված 800 ընկերությունների մեջ կազմում է 52.5%: 2008-2018թթ. միջին տարեկան հաշվով հիմնվել է մոտ 53.8 SCS ձեռնարկություն<sup>2</sup>: Անհրաժեշտ է նշել, որ 2018թ.-ին ակտիվ գործող ընկերությունների քանակն ավելացել է շուրջ 150-ով, իսկ աշխատուժը տարեկան առնվազն 10% աճ է արձանագրում<sup>3</sup>: Այսօր այդ ոլորտում ներգրավված է շուրջ 15239 մասնագետ: Այսպիսի մեծ թվով ընկերությունների ստեղծումը պայմանավորված է SCS ոլորտի պետական աջակցությանն ուղղված օրենսդրական փաթեթի կիրարկմամբ, որով հարկային արտոնություններ են սահմանվում նորաստեղծ ընկերությունների համար, ինչպես նաև բազմակողմ ենթակառուցվածքային, ֆինանսական և այլ ուղղություններով ցուցաբերված աջակցության շնորհիվ: Սակայն այդ արտոնությունները չեն կիրառվում բարձր տեխնոլոգիական տնտեսության այլ ոլորտներում: SCS ոլորտը Հայաստանի տնտեսության մեջ ամենաբարձր հավելյալ արժեք ձևավորող ոլորտն է՝ տեղ զբաղեցնելով երկրի տնտեսության զարգացման գերակայությունների առաջին շարքում:

Աշխարհում գոյություն ունեն բարձր տեխնոլոգիական և ինովացիոն տնտեսության գործունեության արդյունավետության գնահատման տարատեսակ մոտեցումներ, որոնց հիմնական տարբերությունը գնահատվող չափանիշի ընտրությունն է: Մի շարք տնտեսագետների կողմից առաջարկվում է որպես ինովացիոն գործունեության ինտենսիվությունն արտահայտող ցուցանիշ դիտարկել երկրի ներսում գրանցված պատենտների քանակը<sup>4,5</sup>: Այսպես, գծապատկեր 1-ում ներկայացված է 2017թ. ընթացքում գրանցված պատենտների և օգտակար մոդելների, առևտրային նշանների և արտադրանմուշների բաշխվածությունը: Անհրաժեշտ է նշել, որ 2017թ. երեք դեպքերում էլ առաջատար դիրք ունի Չինաստանը, որն արձանագրել է ռեկորդային ցուցանիշ՝ 1.38 մլն. պատենտավորման դիմումներ, ինչը ավելի քան երկու անգամ գերազանցում է ԱՄՆ-ի դիմումներին (606 956) (տե՛ս գծապատկեր 1)<sup>6</sup>: Ինչպես նկատում ենք, առևտրային նշանների գրանցման դիմումների մասով բավականին նշնակալից տեղ ունեն Հայաստանի հարևաններ Իրանի Իսլամական Հանրապետությունը (358 353) և Թուրքիան (247 474)<sup>7</sup>:

---

<sup>2</sup> Հայաստանի տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի հետազոտության հաշվետվություն – 2018, էջ 16:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 37:


<sup>4</sup> Furman J.L., Porter M.E., Stern S.: “Does the Entrepreneurial Activity Enhance the National Innovative Capacity?” - Research Policy 31 (2002) pp. 899–933

<sup>5</sup> Furman J. L., Hayes R.: “Catching up or standing still? National innovative productivity among ‘follower’ countries, 1978–1999” - Research Policy 33 (2004) pp. 1329–1354


<sup>6</sup> World Intellectual Property Organization (WIPO) - “WIPO Facts and Figures” Economics & Statistics Series 2018, pp. 12

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 22:


### Պատենտներ



### Արտադրանմուշներ



### Առևտրային նշաններ




**Գծապատկեր 1. Պատենտների, առևտրային նշանների և արտադրանմուշների բաշխվածությունը 2017թ., %<sup>8</sup>**

Տարածաշրջանում առկա ինովացիոն համակազմի առանձնահատկությունները առավել պատկերարավոր է արտահայտում Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում և Թուրքիայում ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների կողմից գրանցված պատենտների քանակը 2016թ. (տե՛ս գծապատկեր 2):

Տարածաշրջանի երկրների տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանը գրանցված պատենտների թվով զիջում է Ադրբեջանին, ընդ որում դրանց մեծամասնությունը պատկանում է ոչ ռեզիդենտներին, ինչը ցույց է տալիս ինովացիոն ոլորտում ֆինանսների շարժունության մակարդակի մասին: Այս իմաստով առաջատարը Թուրքիան է՝ 6230 գրանցված պատենտ 2016թ. ընթացքում: Հանգամանք, որը հնարավորություն է ստեղծում Թուրքիային դառնալ բարձր տեխնոլոգիաների տարածաշրջանային կենտրոն:

<sup>8</sup> Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով World Intellectual Property Organization (WIPO) - “WIPO Facts and Figures” Economics & Statistics Series 2018, pp 12,22,29



**Գծապատկեր 2.** Ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների կողմից գրանցված պատեկանների քանակը 2016թ.<sup>9</sup>

**Աղյուսակ 1**

**Բարձր տեխնոլոգիաների արտահանումը բնութագրող ցուցանիշներ, 2012–2017թթ., %**

	Բարձր տեխնոլոգիաների արտահանում (ԱՄՆ դոլար)	Բարձր տեխնոլոգիաների արտահանման տեսակարար կշիռը արդյունաբերական ապրանքների արտահանման մեջ, %		
		Միջին տարեկան աճի տեմպը	մասնաբաժինը	փոփոխությունը
2012	7,045,295	2.65	2.6	1.96
2013	8,886,596	2.88	2.9	8.82
2014	8,317,916	2.70	2.7	-6.34
2015	11,067,794	5.27	5.3	95.32
2016	21,142,634	5.94	5.9	16.60
2017	25,601,284	-	6.8	15.27

**Աղբյուրը՝** Համաշխարհային բանկի տվյալներ: <https://tcdata360.worldbank.org>

Երկրի առևտրային արդյունքի գնահատման, ինչպես նաև բարձր տեխնոլոգիական և ինովացիոն տնտեսության արդյունավետության գնահատման հիմնական ցուցանիշներից մեկը ընդհանուր ապրանքների արտահանման մեջ բարձր տեխնոլոգիաների արտահանման մասնաբաժինն է (տե՛ս աղյուսակ 1):

Ակներև է, որ բարձր տեխնոլոգիաների արտահանման մասնաբաժինը արդյունաբերական ապրանքների արտահանման մեջ 2017թ.-ի համար կազմում է 6.8%, փոփոխությունը նախորդ տարվա համեմատ 15.27%, իսկ միջին աճի տեմպը 2016թ. համար՝ 5.94 %: Այս ցուցանիշով տարածաշրջանում առաջատար դիրք է գրավում Թուրքիան՝ 3.571.518.721 մլրդ ԱՄՆ դոլար ծավալով (ընդհանուր ապրանքային արտահանման 2,5%), սակայն և՛ Վրաստանը 22,147,916 ԱՄՆ դոլար. (ընդհանուր ապրանքային արտահանման 2.9%), և՛ Ադրբեջանը

<sup>9</sup> Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով [data.worldbank.com](http://data.worldbank.com) էլ. կայքում առկա տվյալները



(9,003,491 ԱՄՆ դոլար, ընդհանուր ապրանքային արտահանման 2%) ծավալով հետ են ընկնում Հայաստանից: Հարկ ենք համարում նշել, որ ընդհանուր արտահանման մեջ, մասնաբաժնի առումով, ՀՀ-ն գերազանցում է տարածաշրջանի բոլոր, այդ թվում նաև ԵԱՏՄ երկրներին (Բելառուս՝ 3.8%, Ղազախստան՝ 2.9%, Ղրղզստան՝ 5.6%), բացառությամբ ՌԴ (11.5%)<sup>1</sup>: Այսիպիսով, բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված թռիչքային աճ ապահովելու հնարավորությունները շարունակում են լինել գրավիչ, սակայն դրան տանող քաղաքականությունները դեռևս ակնհայտ բանաձևեր չունեն:

Բարձր տեխնոլոգիական և ինովացիոն տնտեսությունը հաճախ բնութագրվում է նաև մի շարք համաշխարհային համաթվերով՝ համաշխարհային նորարարական համաթիվ՝ ՀՆՀ (GII) և համաշխարհային մրցունակության համաթիվ՝ ՀՄՀ (GCI): Տնտեսագիտության էվոյուցիոն մոտեցումը կարևորում է տնտեսական համակարգի շարունակական զարգացման դերը տնտեսական սուբյեկտների հարմարեցման մշտական դինամիկ գործընթացում: Տնտեսական և տեխնոլոգիական էկոհամակարգերը երբեք հավասարակշռված վիճակում չեն լինում, ընդհակառակը՝ մշտապես գտնվում են ակտիվ «ստեղծագործական ավերվածությունների» վիճակում, որի միջոցով էլ ստեղծվում է տնտեսական արժեքը: Շուկաներն արդյունավետ չեն հավասարակշռության պայմաններում ռեսուրսների հավասար բաշխման մեջ, սակայն արդյունավետ են անհավասարակշռության պայմաններում նորարարության մեջ<sup>2</sup>: Նորարարությունը գոյատևման նախապայման է և, հետևաբար՝ առանցքային գործոն աճի համար: Նորամուծական կարողության մեծությունը պարամետր է, որ թույլ է տալիս տարածաշրջանը գնահատել իր նորարարական գործունեության հնարավորությունների մեջ և որոշել նորարարական զարգացման ռազմավարությունը: Այս մոտեցմամբ որոշ հեղինակներ<sup>3</sup> առաջարկում են բացահայտել, այսպես կոչված, «թաքնված ռեսուրսները կամ հնարավորությունները», որը թեև հիմնավորված է, սակայն չի բացահայտում ընթացիկ իրավիճակը: Անհրաժեշտ է փաստել, որ ամերիկյան հետազոտողները նորարարության աղբյուրներ են համարել կազմակերպությունների ստեղծարարությունը, գիտահետազոտական և մշակման աշխատանքները, առևտրայնացման հանգեցնող ինովացման «շարժիչները» (համալսարաններ, լաբորատորիաներ, ինկուբատորներ և այլն) և տեխնոլոգիական կլաստերները, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքների ու դրանցից բխող գիտելիքների տարածումը (այսպես կոչված, «տեխնոլոգիայի արտանետումը՝ technology spillover») <sup>4</sup>: Նորարարությունը ստեղծվում է

<sup>1</sup> Համաշխարհային բանկի տվյալներ: <https://tcdata360.worldbank.org>

<sup>2</sup> Beinhocker, E., 2006, “The Origin of Wealth”, Harvard Business Review Press

<sup>3</sup> Чекулина Т.А., Тамахина Е.А. Инновационный потенциал региона : содержательные особенности и теоретические аспекты исследования ( Вестник ТГУ , 2011, № 2 (94), с . 65-70).

<sup>4</sup> A.Datta, R.Reed and L.Jessup , Commercialization of innovations: an overarching framework and research agenda, American Journal of Business, Vol. 28, No. 2, pp. 147-191, 2013.

այնպիսի ռազմավարությունների և կազմակերպչական ունակությունների որոնման գործընթացում, որոնք ապահովում են առավելագույն հարմարեցում շուկայական պայմաններին՝ նպաստելով գոյատևմանն ու հարատևմանը: Նորարարությունը համալիր խնդիրների համար լուծումներ որոնելու մշտական գործընթաց է, որը հիմնված է շարունակական ուսուցման և գիտելիքներ կուտակելու վրա: Հենց այս տրամաբանությամբ է կառուցված ՀՆՀ, որը որպես ծախսերի և արդյունքի հարաբերակցություն հնարավորություն է տալիս օբյեկտիվորեն գնահատել այս կամ այն երկրում ինովացիայի զարգացմանն ուղղված ջանքերի արդյունավետությունը (տե՛ս աղյուսակ 2):

## Աղյուսակ 2

### Հայաստանի համաշխարհային նորարարական համաթիվը իր երկու ենթահամաթիվերով և ցուցանիշներով 2017-2018թթ.-ի կտրվածքով<sup>1</sup>

Ցուցանիշի անվանումը	2017		2018	
	Միավորը (0-100)	Դիրքը	Միավորը (0-100)	Դիրքը
<b>Ենթահամաթիվ 1. Ինովացիոն հեղափոխության համար անհրաժեշտ ռեսուրսները և պայմանները (Innovation Input).</b>	39.70	82	24.7	94
• Ինստիտուտներ	61.9	63	60.8	67
• Մարդկային կապիտալ և հետազոտություններ	19.4	103	15.2	110
• Ենթակառուցվածքներ	39.0	91	36.5	93
• Շուկայի զարգացում	50.5	46	43.5	81
• Բիզնեսի զարգացում	27.7	85	26.1	88
<b>Ենթահամաթիվ 2. Ինովացիաների իրականացումը և ձեռքբերված գործնական արդյունքը (Innovation Output)</b>	31.6	47	34.1	50
• Գիտելիքի և տեխնոլոգիայի արդյունք	25.7	50	23.2	62
• Ստեղծագործական գործունեության արդյունք	37.5	44	35.0	48

Ինչպես նկատում ենք, ՀՄՀ-ի ցուցանիշներում ՀՀ 2018 թվականին առկա է դիրքերի վատթարացում՝ իջնելով ինը հորիզոնականով 59-րդից՝ 68-րդը, իսկ ՀՆՀ-ի միավորը համապատասխանաբար 35.65-ից՝ 32.81 միավոր: Վերջինս պայմանավորված է այն ձևավորող երկու ենթահամաթիվերում ներառված ցուցանիշների անկմամբ: Բավականին ցածր միավոր ունեն երկրորդ ենթահամաթիվի (Innovation Output) բաղադրիչները՝ գիտելիքի և տեխնոլոգիայի արդյունքը (23.2) և ստեղծագործական գործունեության արդյունքը (35.0):

Անհրաժեշտ է անդրադառնալ նաև համաշխարհային մրցունակության համաթիվին (ՀՆՀ), որը ներառում է 12 հենասյուներ կամ ենթաինդեքսներ, որոնք ազդեցացվում են մեկ՝ ազգային տնտեսության մրցունակությունը բնութագրող համաթիվի մեջ, որով էլ պայմանավորվում է երկրների դասակարգումը: Ամենա-

<sup>1</sup> Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով՝ Global innovation index 2018, Energizing the World with Innovation, 11<sup>th</sup> edition, p. 221, Global innovation index 2017, Energizing the World with Innovation, 10<sup>th</sup> edition, p.188.

**Նորարարության համաթիվ և դրա բաղադրիչի ցուցանիշների շարժընթացը ՀՀ-ում 2010–2018թթ.<sup>1</sup>**

h/h		2012–2013		2013–2014		2014–2015		2015–2016		2016–2017		2017–2018	
		Տեղը 144 երկրների շարքում	Ցուցանիշը (1-7)	Տեղը 148 երկրների շարքում	Ցուցանիշը	Տեղը 144 երկրների շարքում	Ցուցանիշը	Տեղը 140 երկրների շարքում	Ցուցանիշը	Տեղը 139 երկրների շարքում	Ցուցանիշը	Տեղը 137 երկրների շարքում	Ցուցանիշը
	<b>Գլոբալ մրցունակության համաթիվ</b>	82	4.02	79	4.10	85	4.01	82	4.01	79	4.07	73	4.2
	Նորարարություններ	105	2.89	103	2.99	104	2.95	107	3.02	87	3.2	70	3.3
1.	Նորարարությունների կարողություն	62	3.2	77	3.4	98	3.5	87	3.8	63	4.2	59	4.2
2.	Գիտահետազոտական կազմակերպությունների որակ	111	3.0	106	3.1	105	3.1	105	3.2	100	3.4	88	3.5
3.	Կազմակերպությունների ԳՀՓԿԱ (R&D) հատկացումներ	111	2.7	109	2.8	102	2.8	109	2.8	92	3.0	71	3.2
4.	Արդյունաբերության ու ԲՈՒՀ-երի համագործակցությունը ԳՀՓԿԱ շրջանակներում	122	2.9	107	3.2	112	3.1	111	3.1	92	3.2	88	3.2
5.	Առաջավոր տեխնոլոգիաների արդյունքների պետական գնումներ	108	3.1	111	3.0	121	2.9	109	2.8	93	2.9	80	3.2
6.	Գիտնականների ու ինժեներների առկայություն (հասանելիություն)	73	4.0	74	4.0	75	4.0	59	4.1	52	4.2	48	4.3
7.	Մտավոր սեփականության առևտրայնացման արտոնագրեր (դիմումներ 1 մլն բնակչի հաշվով)	61	1.4	58	1.7	53	3.2	49	3.7	57	2.8	57	2.6

162

<sup>1</sup> Աղյուսակը կազմված է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով Global competitiveness report-ի համապատասխան տարիների հրապարակումներից՝ 2012-13, էջ 92-93, 2013-14, էջ 108-109, 2014-15, էջ 112-113, 2015-16, էջ 98-99, 2016-17, էջ 100-101, 2017-18, էջ 48-49:

վերջին հենասյունը իրենից ներկայացնում է նորարարությունը (Innovation), որին առավել մանրամասն անդրադարձել ենք աղյուսակ 3-ում:

2018թ. մրցունակության համաշխարհային զեկույցում (ՄՀՀ) Հայաստանը 140 երկրների մեջ գրավում է 70-րդ տեղը<sup>1</sup> բարելավելով իր դիրքը նախորդ տարվա համեմատ. 2017թ. զբաղեցնում էր 72-րդ տեղը 137-րդ երկրների շարքում<sup>2</sup>:

Հայաստանը բավարար ներդրումներ չի ուղղորդել նորարարական և տեխնոլոգիական էկոհամակարգերի ստեղծմանը: Համակարգի գործառնական արդյունավետությունը, որը չափվում է կատարողական ցուցանիշի և ներդրված ռեսուրսների (ներառյալ մարդկային, ֆինանսական և ենթակառուցվածքային) հարաբերակցությամբ, բավականին բարձր է, սակայն չի կարող կայուն համարվել երկարաժամկետ կտրվածքով: Ռազմավարական արդյունավետությունը պետք է կարևորություն ունենա գործառնական արդյունավետության նկատմամբ: Վերջինս պահանջում է ավելի խոշոր ներդրումներ նոր զարգացող տեխնոլոգիական ուղղություններում:

Հիմք ընդունելով աղյուսակ 2-ում և 3-ում ներկայացված տվյալները՝ կարող ենք փաստել, որ Հայաստանում առկա է նորարարությունների կարողությունը (capacity for innovation) հավաստող բավականին հուսադրող ցուցանիշ՝ 4.2 (աղյուսակ 3, 1-ին ցուցանիշ): Հուսադրող է նաև գիտնականների ու ինժեներների առկայությունը՝ 4.2 (աղյուսակ 3, 6-րդ ցուցանիշ): Սակայն հակառակ դրանց 7-րդ ցուցանիշը, որը վերաբերում է մտավոր սեփականության առևտրայնացմանը՝ 2.6 է: Սա հաստատում է նաև մեր կողմից վերլուծված գծապատկեր 2-ում ներկայացված տարածաշրջանի երկրների ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների կողմից գրանցված պատենտների քանակը 2016թ., որտեղ ՀՀ-ն ամենացածր տեղն էր զբաղեցրել՝ 126 դիմում: Շարադրվածից հետևում է, որ բացակայում է գիտություն-տնտեսություն կապը, որի հետևանքով էլ գեներացված նորարարական, գիտական, ինժեներական կարողությունները արդյունավետ կերպով չեն առևտրայնացվում և մտնում տնտեսություն: Մտահոգիչ են նաև 3-րդ, 4-րդ և 5-րդ ցուցանիշները, որոնց շնորհիվ ապահովվում է կրթություն-գիտություն-տնտեսություն կապը: Այսպիսով, Հայաստանը, թեև ունակ է որոշ ոլորտներում տալու համաշխարհային մակարդակով մրցունակ հետազոտական արդյունք, այնուհանդերձ, հետ է մնում հետազոտական գիտելիքները առևտրային հնարավորություններ վերածելու առումով:

Նորարարության միջոցով երկրի տնտեսական զարգացմանը նպաստ բերելու ամենաանմիջական եղանակներն են հետազոտական ու նորարարական արդյունքների ներդրումը, առևտրայնացումը և տեխնոլոգիաների փոխանցումը տնտեսվարողներին: Ուսումնասիրությունները վկայում են, որ, օրինակ, այսպես կոչված գիտելիքի փոխանցման գործընկերությունները (Knowledge transfer partnerships, KPI) Անգլիայում կայուն հնարավորություններ են ստեղծում բիզնեսի

<sup>1</sup> The Global Competitiveness Report 2018, p. 73-74.

<sup>2</sup> The Global Competitiveness Report 2017-2018, p. 48-49.

նորարարության համար, ինչի շնորհիվ բարձրանում են երկրի ինովացիոն կարողությունները<sup>1</sup>:

Կատարված վերլուծության հիման վրա՝ բացահայտել ենք մի շարք խոչընդոտներ, որոնք համարվում են ՀՀ բարձր տեխնոլոգիական և ինովացիոն տնտեսության զարգացման առկա *հիմանխնդիրներ*՝

- գիտահետազոտական աշխատանքի ցածր առևտրայնացում՝ չնայած առանձին ոլորտներում մրցունակ գիտահետազոտական աշխատանքների առկայության,
- կրթություն–գիտություն–տնտեսություն փոխկապակցված շղթայի բացակայություն (հատկապես գիտելիքի փոխանցման և առևտրայնացման տեսանկյունից),
- բարձր տեխնոլոգիաների և SCS ոլորտում աշխատուժի առաջարկի և պահանջարկի միջև անհամապատասխանության առկայություն
- արտապատվիրման մոդելից սեփական արտադրության և ձեռներեցության զարգացման մոդելի անցման մեխանիզմների և գործիքակազմի բացակայություն, որը պահանջում է գիտելիքի ավելի բարձր մակարդակ, առևտրային գործունեության և ձեռներեցության նոր մասնագիտական ունակություններ, ինչպես նաև բիզնես վարելու համար անհրաժեշտ գիտելիքներ,
- ինովացիոն հետազոտությունների ծավալների ընդլայնման, դրանց որակի ապահովման ու համապատասխան կարողությունների կատարելագործման հիմնախնդրի առկայություն,
- ինովացիոն արդյունքի նկատմամբ պահանջարկի խթանման, ինչպես նաև հարկային քաղաքականության ճկուն մեխանիզմների բացակայություն,
- գիտության և տեխնոլոգիայի, գիտահետազոտական զարգացման աշխատանքների ֆինանսավորման ցածր մակարդակ,
- գիտելիքի կուտակման և տնտեսության մեջ դրա կիրառման շրջանակների շարունակական ընդլայնման պետական միջամտության և աջակցության բացակայություն:

Բարձր տեխնոլոգիական և ինովացիոն տնտեսության վերափոխման ցանկացած օրակարգ պիտի լուծի վերոնշյալ խնդիրները՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի դժվարության աստիճանը, գործոնների խմբերի միջև հարաբերությունների բարդ կառուցվածքը և առկա սահմանափակ միջոցները: Գծային մտածողությունը ենթադրում է յուրաքանչյուր խնդրի անմիջական լուծում, սակայն անհրաժեշտ է կիրառել նորարարական ու արդյունավետ այնպիսի հեղափոխական մոտեցում, որը ենթադրում է անցում գծային երկկողմ հարաբերություններից բազմակողմ՝ ցանցային փոխհարաբերություններին, որը կարող է գործածել փոփոխությունների արագացումը խթանող լծակներ: Այս ամենը պահանջում է ձևավորել բարձր տեխնոլոգիական և նորարարական տնտե-

---

<sup>1</sup> P.Ternouth, C.Garner, L.Wood and P.Forbes , Key Attributes for Successful Knowledge Transfer Partnerships, Commissioned by the Technology Strategy Board and the Research Councils, from [http://www.ncub.co.uk/index.php?option=com\\_docman&task=doc\\_download&gid=35&Itemid](http://www.ncub.co.uk/index.php?option=com_docman&task=doc_download&gid=35&Itemid)

սուբյեկտային և օբյեկտային արտացոլող ոչ գծային մոտեցումներ:

Բարձր տեխնոլոգիաները, մասնավորապես բեկումնային տեխնոլոգիաները (բլոկ շղթա, արհեստական բանականություն, ռոբոտաշինություն), կարող են զգալի ազդեցություն ունենալ Հայաստանի տնտեսության վրա և հիմնականում կախված են տեղական տնտեսության կլանման ունակությունից: Այդ ազդեցության բնույթը մեծապես պայմանավորված է նաև հիմնական տնտեսական շահառուների, այդ թվում՝ ձեռնարկատերերի և կառավարության նախաձեռնություններից: Բացվում են նոր հնարավորություններ հայաստանյան ձեռներեցության միջազգայնացման, ինչպես նաև հանրապետությունը համաշխարհային շուկաների համար լուծումներ առաջարկող հարթակ դարձնելու ուղղությունները: Բարձր տեխնոլոգիաները՝ թե՛ մեքենայական ուսուցումը, և թե՛ իրերի համացանցը, կարող են տարբեր ոլորտներում ավելացնել տեղական ձեռնարկատիրական գործունեության արտադրականությունը, ինչպես նաև՝ բոլորովին նոր արժեքի ստեղծման աղբյուր դառնալ ապահովների համար (տես գծապատկեր 3):

Բարձր տեխնոլոգիական և ինովացիոն տնտեսություն ունենալու համար առաջակում ենք ոչ գծային փոփոխություններ իրականացնել միաժամանակ մի շարք ոլորտներում և այդ գործընթացի կազմակերպումն էլ ապահովել համակարգային ուղենիշերով:

### **1. Ազգային ինովացիոն էկոհամակարգի առաջնություն**

Շտեղծարարական ժամանակաշրջանում Ազգային ինովացիոն էկոհամակարգի ձևավորումը և առաջնությունը ունի հստակ ուղենիշեր՝ ավելացնել ՀՆԱ-ն, հասնել գիտատար արտադրանքի, ստեղծագործական ապրանքների և ծառայությունների ծավալների ավելացմանը, ինչը կարող է հանգեցնել նաև ամբողջ համաշխարհային տնտեսության մասշտաբով Հայաստանի մրցունակության դիրքի բարձրացմանը: Վերջինս ապահովելու համար առաջարկում ենք ազգային ինովացիոն էկոհամակարգի հիմքում դնել «ինովացիոն վերելակների» մոտեցումը՝ ելակետ ունենալով Համաշխարհային նորարարական համաթվի երկու կշռադատված ենթահամաթվերի (*Innovation Input, Innovation Output*) տարրերը (տես՝ ս աղյուսակ 2):


Գնահատման մոտեցումն ունի հետևյալ կառուցվածքը՝ նորարարությունները *խթանող գործոններ* → *ռեսուրսներ* → *կապարողական արդյունք*, որը ներկայացրել ենք հիերարխիկ բուրգի տեսքով (տես՝ ս գծապատկեր 4): Հստակ մշակված խթանող գործոնների ներազդմամբ ինովացիոն գործունեության արդյունքը կհայտնվի «վերելակի առաջին հարկում», ինչը հավաստում է հստակ բարձրանալու մեխանիզմներ, այնուհետև խթանող գործոններին միանում են ռեսուրսներ (մարդկային, ֆինանսական, ենթակառուցվածքային), որոնց շնորհիվ ինովացիոն արդյունքը կհայտնվի «վերելակի երկրորդ հարկում», որը գի-

<sup>1</sup> Տե՛ս, Դալլաքյան Ս.Ա., «Նորամուծական տնտեսության զարգացումը կլաստերացման համատեքստում», «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» գիտ.հոդվածների ժողովածու ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018, էջ 140:



**Գծապատկեր 3.** Հայաստանի տնտեսության որոշ ոլորտներում բեկումնային տեխնոլոգիաների որոշակի կիրառումների ազդեցության գնահատում

տական արդյունքի առևտրայնացման միջոցով կապահովի ավելի մեծ վերելքների հասնելու հնարավորություն:



**Գծապատկեր 4. Հայաստանի տեխնոլոգիական էկոհամակարգի գնահատման մոդել**

Այսպիսով անհրաժեշտ է ուղենշել ինովացիաների կենսագործման «լոգիստիկ շղթան», այսինքն մշակել քայլերի այն համակարգը, որը ինովացիոն գաղափարը վերածում է առևտրայնացման արդյունքի: Այս առումով առաջարկում ենք «Ինովացիոն գործունեության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում իրականացնել որոշակի փոփոխություններ և սահմանել ինովացիաների առևտրայնացման լոգիստիկ շղթա, ինչպես նաև ցույց տալ «Ինովացիոն վերելակի» գործարկման մեխանիզմները:

**2. Կրթություն և գիտություն:**

Ներկայացված առաջարկները պետք է նպաստեն կրթություն–գիտություն–տնտեսություն փոխկապակցված շղթայի լիարժեք ապահովմանը:

- Մշակել բուհական և հետբուհական համակարգի (մասնավորապես բնագիտական և տեխնիկական մասնագիտությունների համար) նոր կրթակարգ՝ մասնավոր հատվածի մասնակցությամբ: Մշակված նոր կրթակարգի մեջ պարտադիր ներառել յուրաքանչյուր ուսանողի ցանկության հիմունքներով կամավորության սկզբունքով (աշխարհում հայտնի փորձ) աշխատելու բաղադրիչը (հստակ սահմանված ժամաքանակով) որևէ մասնագիտական կազմակերպությունում, ինչն իր վերջնական արտացոլումը կգտնի յուրաքանչյուր ուսանողի ՄՈԳ–ի (մասնագիտական որակական գործակից) մեջ: Արդյունքում ԲՈՒՀ–ն ավարտելու պահին ուսանողներն արդեն ձեռք կբերեն իրենց մասնագիտական որակավորման զարգացման համար անհրաժեշտ աշխատանքային փորձը և կունենան փաստացի իրականացված ծրագրերի ցուցակ՝ ապացուցելով իրենց աշխատանքային կարողությունները:



Ինչն էլ իր հերթին հնարավորություն կտա ընկերություններին մասնագիտական գիտելիքները արագ փոխանցել ուսանողներին, ինչպես նաև կնպաստի ուսանողների միջև գիտելիքների փոխանակմանը, որը բնականաբար կբարձրացնի ուսումնական հաստատությունների նկատմամբ ակնկալիքները, և աստիճանաբար ուսանողները պատրաստ կլինեն ԲՈՒՀ-ը ավարտելուց հետո անցնել աշխատանքի:

- Մշակել և ներդնել մեխանիզմներ ուսանողներին, երիտասարդ գիտնականներին գիտակրթական և գիտահետազոտական գործունեության մեջ ներգրավման ուղղությամբ (տեխնոպարկերի, ինկուբատորների), ստեղծել պայմաններ գիտական աշխատանքի գրավչության բարձրացման, երիտասարդների խրախուսման ու շահագրգռման համար:

### **3. Գործարար և ներդրումային միջավայր**

Բարձր տեխնոլոգիաների խթանները կարող են դառնալ արժեքավոր ռեսուրս ձեռնարկատերերի համար: Այդ նպատակով առաջարկում ենք ապահովել բարձր տեխնոլոգիական ընկերությունների, ինչպես նաև S<S սկսնակ ընկերությունների զարգացումը խթանող էկոհամակարգի ստեղծումը, ներառյալ՝ պետական աջակցության նոր օրենսդրական նախաձեռնությունների ընդլայնում, սկսնակ ընկերությունների կողմից նորարար գաղափարների իրականացումը խթանելու նպատակով ֆինանսական միջոցների հասանելիության ապահովում, նորագույն տեխնոլոգիաների մշակում ու ներդրում, խրախուսող վենչուրային ֆոնդերի, արքսելերատորների հիմնման խթանում, մասնավորապես՝

- ստեղծել Ազգային վենչուրային հիմնադրամ (ԱՎՀ), որը ներդրումներ կկատարի այնպիսի գերակա ուղղություններում, ինչպիսիք են բլոքչեյն, արհեստական ինտելեկտ, հիպերանվտանգություն, իրերի համացանց, ռոբոտաշինություն և բեկումնային այլ տեխնոլոգիաներում,
- ապահովել վենչուրային կապիտալի համալրման ուղղությամբ բանկերի մասնակցությունը, քանի որ ՀՀ բանկային համակարգը հանդիսանում է ֆինասական շուկայի ամենակայացած ինստիտուցիոնալ կառույցը և կարող է էապես աջակցել վենչուրային համակարգի կայացմանը՝ ՀՀ կենտրոնական բանկի միջամտությամբ նորմատիվային դաշտը մեղմելու միջոցով,
- կառավարության միջնորդությամբ արքսելերատորի միջոցով հող նախապատրաստել, «արքսելերացիա անել» ինչպես սկսնակ ընկերություններին, այնպես էլ գործող ստարտափերին և վենչուրներին, ինչը կնպաստի նրանց շուկաներում դառնալ մրցունակ, առևտրայնացնել արդյունքները և կապիտալացնել ու ընդլայնել բիզնեսը,
- ինովացիան խթանելու նպատակով ձևավորել գործարար ոլորտի հետ գիտելիքների և տեխնոլոգիաների փոխանակման, հետազոտողների կողմից իրենց ստեղծած արդյունքների շուկայական հնարավորությունների քննարկման պայմաններ, ուղիներ և հարթակներ:

### **4. Ֆիզիկական ենթակառուցվածքներ**

- Գործարար հատվածում նորամուծությունների սահմանափակվածության

հիմնական պատճառը ինովացիոն գործընթացում միջնորդների, աջակցության գործուն մեխանիզմների և գործիքների սակավությունն է: Հայաստանում բացակայում է ինովացիոն ձեռնարկություններին վաղ շրջանում ֆինանսավորելու համակարգը, բացառությամբ ՏՀՏ ոլորտում, որը ուղեկցվում է «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի ստեղծմամբ, ինչպես նաև ՏՀՏ ոլորտի պետական աջակցությանն ուղղված օրենսդրական փաթեթի ընդունմամբ (մասնավորապես հարկային): Ուստի կարևոր է «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի փորձը կիրառել նաև ինովացիոն և բարձր տեխնոլոգիական այլ ոլորտներում ևս, մասնավորապես, կապված պետական և մասնավոր ֆինանսական ռեսուրսների ներգրավման, միջազգային կառույցների ու պետական-մասնավոր հատվածների համագործակցության հետ:

- Հայաստանի գիտակրթական ու գործարար ոլորտների առաջադեմ, ստեղծարար, փորձառու մասնագետների ներգրավմամբ ստեղծել ինովացիոն խորհուրդներ ՀՀ գիտահետազոտական և գիտակրթական հաստատություններում՝ նորարարական գործունեության առաջնահերթությունները սահմանելու և համակարգելու, կրթություն-գիտություն-արդյունաբերություն / գործարար ոլորտ կապն ապահովելու նպատակով:

Այսպիսով ՀՀ կառավարության կողմից ներդրված գործիքակազմը թեև նպաստեց տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի արագատեմպ զարգացմանը և ինովացիոն ծառայությունների արտահանման տեմպերի ավելացմանը, սակայն դեռևս առկա համակարգային ու կառուցվածքային խնդիրները խոչընդոտում են ոլորտի կայուն աճին: Ուստի ՀՀ տնտեսության բարձր տեխնոլոգիական և ինովացիոն միջավայրի զարգացման քաղաքականությունը պետք է ուղղված լինի ՀՀ ինովացիոն ներուժի գնահատման հիմնախնդիրների լուծմանը, առաջադեմ տեխնոլոգիական ձեռնարկությունների գործունեության արդյունքների լայնամասշտաբ առևտրայնացմանը, գլոբալ տեխնոլոգիական ընկերությունների Հայաստանի ներգրավմանը, ինչպես նաև հայկական տեխնոլոգիական ընկերությունների գլոբալացմանը:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. Դավլաթյան Ս.Ա., Նորամուծական տնտեսության զարգացումը կլաստերացման համատեքստում, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» գիտ.հոդվածների ժողովածու, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018, 278 էջ:
2. ՏՀՏ ոլորտը Հայաստանում, Հայաստանի տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի հետազոտության հաշվետվություն, Ձեռնարկությունների ինկուբատոր, Հայաստան, Եր., 2018, 25 էջ:
3. Чекулина Т.А., Тамахина Е.А. Инновационный потенциал региона: содержательные особенности и теоретические аспекты исследования, Вестник ТГУ, 2011, № 2 (94), 262 стр.

4. A.Datta, R.Reed and L.Jessup, Commercialization of innovations: an overarching framework and research agenda, American Journal of Business, Vol. 28, No. 2, 201 p, 2013.
5. Beinhocker, E., 2006, “The Origin of Wealth”, Harvard Business Review Press
6. Furman J. L., Porter M. E., Stern S.: “Does the Entrepreneurial Activity Enhance the National Innovative Capacity” - Research Policy 31 (2002) pp. 899–933. 1025 p.
7. Furman J.L., Hayes R.: “Catching up or standing still? National innovative productivity among “follower” countries, 1978–1999” - Research Policy 33 (2004) pp. 1329–1354, 1625p.
8. P.Ternouth, C.Garner, L.Wood and P.Forbes , Key Attributes for Successful Knowledge Transfer Partnerships, Commissioned by the Technology Strategy Board and the Research Councils, from [http://www.ncub.co.uk/index.php?option=com\\_docman&task](http://www.ncub.co.uk/index.php?option=com_docman&task)
9. Global innovation index 2018, Innovation Feeding the World, Energizing the World with Innovation, 11<sup>th</sup> edition, 430 p.
10. Global innovation index 2017, Innovation Feeding the World, Energizing the World with Innovation, 10<sup>th</sup> edition, 463 p.
11. The Global Competitiveness Report 2012-2018, Klaus Schwab, World Economic Forum.
12. World Intellectual Property Organization (WIPO) - “WIPO Facts and Figures” Economics & Statistics Series 2018, 54 p.

## Սվետլանա Դալլաքյան

### ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

**Ամփոփագիր:** Հոդվածում հիմնավորվել է, որ տեխնոլոգիական նորարարությունները հանդիսանում են տնտեսական աճի հզոր շարժիչ ուժ, հետևաբար պետք է առավելագույնս օգտագործել բարձր տեխնոլոգիաների և ինովացիաների հնարավորությունները ՀՀ տնտեսության հեռանկարային զարգացման համար: Ներկայացվել են բարձր տեխնոլոգիական և ինովացիոն տնտեսությունը բնութագրող մի շարք ցուցանիշներ և համաթվեր (իդեքսներ), ինչպես նաև կատարվել է համեմատական վերլուծություն հարևան երկրների հետ: Առաջարկվել է բարձր տեխնոլոգիական և նորարարական տնտեսության հեռանկարները ապահովող ոչ գծային մոտեցումներ՝ ազգային ինովացիոն էկոհամակարգի առաջնորդմամբ, ինչպես նաև կրթության և գիտության, գործարար ու ներդրումային միջավայրի և ֆիզիկական ենթակառուցվածքների կատարելագործմամբ:

**Բանալի բառեր.** պատենտավորում, առևտրային նշաններ, արտադրանմուշ-

ներ, վենչուրային հիմնադրամ, արտերելատորներ, ազգային ինովացիոն էկոհամակարգ, մրցունակություն, կրթություն, գիտություն:

**Светлана Даллакян**

## **ОСНОВНЫЕ ВОПРОСЫ И ОРИЕНТИРЫ РАЗВИТИЯ ВЫСОКОТЕХНОЛОГИЧНОЙ И ИННОВАЦИОННОЙ ЭКОНОМИКИ В РА**

**Резюме:** В статье обосновывается то, что высокотехнологичные инновации являются мощным двигателем экономического роста, в связи с чем необходимо максимальное использование высоких технологий и инноваций в перспективном развитии экономики Армении. Представлен ряд показателей и индексов, характеризующих наукоемкую и инновационную экономику, а также проведен сравнительный анализ с соседними странами в данной сфере. Предложен нелинейный подход, обеспечивающий перспективы высокотехнологичной и инновационной экономики, поддерживающей поступательное движение национальной инновационной экосистемы, а также улучшение образования и науки, деловой и инвестиционной среды и физической инфраструктуры

**Ключевые слова:** патенты, товарные знаки, промышленные образцы, венчурный фонд, акселераторы, национальная инновационная экосистема, конкурентоспособность, образование, наука.

**Svetlana Dallaqyan**

## **PROBLEMS OF HIGH TECHNOLOGICAL, INNOVATIVE ECONOMY AND DEVELOPMENT DIRECTIONS IN THE REPUBLIC OF ARMENIA**

**Abstract:** It is justified that technological innovations are huge drivers for economic growth, so the opportunities of the technology and innovation should be used for the future growth of the economy of the Republic of Armenia. A series of indicators and indexes describing high technological and innovative economy are introduced in the article, and comparative analysis with neighbor countries has been provided. Non-linear approaches were offered providing high technological and innovative economy perspectives, promoting national innovative ecosystem, upgrading education, science, business, investment environments and physical infrastructure.

**Keywords:** Patents, trademarks, product samples, venture fund, accelerators, national innovation system, competitiveness, educations, science

## Գայանե Հարությունյան

### ՀԱՅԱՍՏԱՆԸ «ՆՈՐ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ» ՃԱՆԱՊԱՐՀԻՆ. ՈԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ <sup>1,2</sup>

#### Ներածություն

2019 թվականի փետրվարի 12-ին Խորհրդարանում նորընտիր կառավարության ծրագիրը ներկայացնելիս ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն անդրադառնալով տնտեսական հեղափոխության անհրաժեշտությանը, ըստ էության, ձևակերպեց տնտեսական զարգացման տեսլականը. «ճայրահեղ աղքատության հաղթահարում, աղքատության և գործազրկության էական կրճատում, աշխատավարձերի և թոշակների շարունակական աճ, արտահանման տեմպերի բարձրացում»: «Այս բոլոր ցուցանիշների համադրությունն ենք համարում տնտեսական հեղափոխություն»<sup>3</sup>: Ինչ խոսք, նոր կառավարության նպատակադրումները համահունչ են երկրի առաջ ծառայած խնդիրների հրատապ լուծման հրամայականին, սակայն, ինչպես Սոկրատն է նկատում. «Փոփոխությունների հաջողությունը կայանում է նրանում, որ բոլոր ջանքերն ուղղորդվեն նորը ստեղծելու, այլ ոչ թե հնի դեմ պայքարելու վրա»: Ուստի, Հայաստանի «Նոր տնտեսության» կառուցումը պիտի հիմնվի զարգացման նոր չափանիշների վրա, չափանիշներ, որոնք արդեն իսկ թելադրված են Հայաստանին «4-րդ արդյունաբերական հեղաշրջմամբ»:

Նկատենք, որ «Չորրորդ արդյունաբերական հեղաշրջման» փաստն համաշխարհային հանրությունն արձանագրել է դեռևս 2016 թվականի հունվարին Դավոսի Համաշխարհային տնտեսական ֆորումի հարթակում: Ավելի վաղ՝ 2015-ին, ֆորումի հիմնադիր և նախագահ Քլաուս Շվաբն այս հեղաշրջման հիմնական շարժիչ ուժեր է համարել այնպիսի նոր տեխնոլոգիաները, ինչպիսիք են արհեստական ինտելեկտը, մեծածավալ տվյալների տեխնոլոգիաները (Big Data Technology), իրերի համացանցը (Internet of Things), ռոբոտատեխնիկան, ինքնակառավարվող մեքենաները, 3D տպագրությունը, բիոտեխնոլոգիաները, քվանտային հաշվարկները և այլն<sup>4</sup>:

Տեխնոլոգիական այս բոլոր փոփոխությունները, առաջին հայացքից, տրա-

<sup>1</sup> Կատարված հետազոտությունը բխում է ՀՀ կառավարության գործունեության 2019 թվականի ծրագրի 7-րդ կետից՝ «Բարձր տեխնոլոգիաները, թվայնացումը և ռազմարդյունաբերությունը», էջ 63-66:

<sup>2</sup> Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 18T-5B047 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

<sup>3</sup> Աղբյուրը՝ Ինչպես է Հայաստանը տնտեսական հեղափոխություն անելու. բացատրում է վարչապետ Փաշինյանը: <https://armeniasputnik.am/economy/20190212/17228592/armenia-nikol-pashin-yan-tntesakan-hexapoxutyun.html>

<sup>4</sup> Schwab, K. (2015). The Fourth Industrial Revolution; What it means and how to respond. Foreign Affairs. December 12, 2015. <https://www.foreignaffairs.com/articles/2015-12-12/fourth-industrial-revolution>

մագճորեն հակադրվում են «գործազրկության կրճատման և աղքատության հաղթահարման» նպատակադրումներին, քանի որ «4-րդ արդյունաբերական հեղաշրջման» ամենավտանգավոր միտումներից մեկը համարվում է տեխնոլոգիական գործազրկության աճն ամբողջ աշխարհում: Այդ սպառնալիքի մասշտաբները լավագույնս ներկայացված են Օքսֆորդի համալսարանի մասնագետների կողմից իրականացված մի հետազոտության մեջ, ըստ որի աշխատանքի ավտոմատացման և ռոբոտացման հետևանքով ԱՄՆ-ի աշխատունակ բնակչության մոտ 47%-ը գործազուրկ դառնալու ռիսկային գոտում է<sup>5</sup>:

Սակայն հեղաշրջման ազդեցությունը կարող է տարբեր լինել՝ կախված երկրի զարգացման աստիճանից, ռեսուրսային ապահովվածության մակարդակից, ինչպես նաև մարդկային կապիտալի առանձնահատկություններից: Հայաստանի համար «4.0 արդյունաբերության» կոնցեպտը մարտահրավերից կարող է վերածվել տնտեսության թռիչքաձև զարգացման կարևոր հարթակի: Բանը նրանում է, որ արհեստական ինտելեկտը կփոխարինի աշխատուժին միայն այն ոլորտներում, որոնք չեն պահանջում աշխատանքի նկատմամբ ստեղծարար ու նորարար մոտեցումներ, իսկ դրանք հիմնականում գերակշռում են սպասարկման ոլորտում: Վերջինս ցածր ավելացված արժեք ստեղծող տնտեսական ոլորտ է, և հեռանկարում դրանց փոխարինումն առավել մեծ ավելացված արժեք ստեղծող իրական արտադրական ոլորտներով կարող է վկայել միայն դրական փոփոխությունների մասին: Խնդիրը կայանում է նրանում, որ *նոր* արտադրական ճյուղերում *նոր* աշխատատեղերի ստեղծումն ավելի արագ տեղի ունենա, քան սպասարկման ոլորտի ռոբոտացումը:

#### **«4-րդ արդյունաբերական հեղաշրջման» նոր տեխնոլոգիական լուծումները ռազմարդյունաբերությունում**

Վերլուծաբաններն ակտիվորեն քննարկում են այն հարցը, թե որ արտադրական ոլորտներն են առավել ճկուն և ունակ ընդունելու տեխնոլոգիական «նոր օրակարգը»: Էբները և Բեխտոլդը (Ebner and Bechtold, 2012) գտնում են, օրինակ, որ ամենաճկուն ճյուղն այս տեսանկյունից ավտոմոբիլաշինությունն է<sup>6</sup>: Այնուամենայնիվ, պետք է նկատել, որ ռազմարդյունաբերությունն ավանդաբար հանդիսանում է նոր տեխնոլոգիաների ավանգարդը. 20-րդ դարի երկրորդ կեսին ռազմական նպատակներով իրականացված գիտահետազոտական և նախագծային աշխատանքների արդյունքում են ձեռք բերվել այնպիսի հեղաշրջումային տեխնոլոգիական նորարարություններ, ինչպիսիք են արբանյակային կապը, ռեակտիվ շարժիչները, կիսահաղորդիչները, միջուկային էներ-

<sup>5</sup> Հայաստանի ազգային մրցունակության զեկույց-2017: Մեր դերը Չորրորդ արդյունաբերական հեղաշրջման մեջ: «Ի-Վի Քոնսալտինգ», «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն, 2017, էջ 39:

<sup>6</sup> Ebner, G., and J. Bechtold. 2012. “Are Manufacturing Companies Ready to Go Digital?” Capgemini Study 1–15.

գիան, տիեզերական արդյունաբերությունը, ինտերնետը և այլն (Naughton, 2016)<sup>7</sup>:

Դիտարկենք, թե նոր տեխնոլոգիական լուծումներն ինչպես են իրացվում ռազմարդյունաբերության ոլորտում:

**3D-տպագրություն կամ ադիտիվ արտադրություն:** Արտադրական տեխնոլոգիա է, որը հնարավորություն է տալիս թվային եռաչափ մոդելի հիման վրա արտադրել ամենատարբեր իրեր, դետալներ, պահեստամասեր՝ կադապարի վրա նյութերի (պլաստիկ, մետաղական, կերամիկական փոշու) շերտ առ շերտ տարածման ճանապարհով: Ներկայում այդ տեխնոլոգիաները թույլ են տալիս արտադրել մետաղական և ոչ մետաղական իրերի նախատիպեր, ինչպես նաև՝ ֆունկցիոնալ արտադրանք, որը չի պահանջում հետագա վերամշակում<sup>8</sup>: 2018 թվականի սեպտեմբերի դրությամբ ադիտիվ արտադրության համաշխարհային շուկան կազմում է 1.3 մլրդ ԱՄՆ դոլար, առաջատարներն են ԱՄՆ-ը, Ճապոնիան, Գերմանիան և Չինաստանը: 3D-տպագրության առավելություններն առավել ինտենսիվ օգտագործվում են բժշկության, մեքենաշինության, աէրոտիեզերական և ռազմարդյունաբերության մեջ:

Ադիտիվ արտադրության բացառիկ հնարավորությունները թույլ են տալիս ոչ միայն էսպես բարձրացնել նյութերի օգտագործման արդյունավետությունը և հասնել արտադրանքի չափսերի ու տեխնիկական հատկանիշների գերբարձր ճշգրտության, առանց որոշակի մեխանիկական միջամտության, այլ նաև ունեն հետևյալ առավելությունները.

- զանգվածային արտադրությունից զանգվածային կաստոմիզացիայի<sup>9</sup> (համապատասխանեցման) անցում, ինչը հնարավորություն կտա հնարավորինս շատ անհատական պատվիրատուների պահանջմունքներ բավարարել,
- բարդ կառուցվածքով դետալների պատրաստում, ինչը հնարավոր չէ սովորական արտադրության պայմաններում,
- արտադրական ծախքերի կրճատում, այդ թվում նաև. *փոքրածավալ պատվերների դեպքում* ինքնարժեքի կրճատում, ինչը սովորական արտադրության պայմաններում անհնար էր առանց մասշտաբի էֆեկտի,
- արտադրական ցիկլի տևողության կրճատում, ինչպես նաև. արտադրության ճկունության էական աճ, քանի որ սարքավորումը նոր արտադրատեսակի թողարկման համար ճշգրտելու և հարմարեցնելու կարիք չկա<sup>10</sup>:

Այս տեխնոլոգիաներն անփոխարինելի են հատկապես անօդաչու թռչող

<sup>7</sup> Naughton J. (2016). The evolution of the Internet: from military experiment to General Purpose Technology, Journal of Cyber Policy, 1:1, 5-28, DOI: 10.1080/23738871.2016.1157619

<sup>8</sup> Марина Волосова, Андрей Маслов, Анна Окунькова, Игорь Смуров, Сергей Григорьев. Высокоэффективные технологии обработки / Григорьев С.Н.. 1-е изд. -М.: Машиностроение, 2014. 256 с. ISBN 978-5-94275-756-4

<sup>9</sup> To customize- անգլերեն բառից, ենթադրում է գործընթաց, որի արդյունքում ինչ-որ բան ձևափոխվում է, համապատասխանեցվում սպառողի կամ սպառողների խմբի պահանջմունքներին:

<sup>10</sup> Михайлов Ю. Перспективы использования аддитивных технологий в оборонно-промышленном комплексе. <http://federalbook.ru/files/OPK/Soderjanie/OPK-11/III/Mihaylov.pdf>

սարքերի արտադրությունում: Օրինակ, ռուսական ընկերություններից մեկի («Լուչ» ԲԲԸ) կողմից արտադրված անօդաչու թռչող սարքերի փորձանմուշների օրինակով կարելի է ասել, որ ադիտիվ արտադրական տեխնոլոգիաները հնարավորություն են տվել նկատելիորեն խնայել ժամանակ և ֆինանսական միջոցներ, մյուս կողմից այս տեխնոլոգիայով արտադրված անօդաչուները կարելի է վերանորոգել և արտադրել անմիջականորեն ռազմական գործողությունների անցկացման վայրում<sup>11</sup>:

**Ամպային տեխնոլոգիաներ:** Ամպային արտադրությունը կարելի է բնորոշել որպես «ինտելեկտուալ ցանցային արտադրության մոդել», որն ապահովում է արտադրանքի անհատականացում, գլոբալ համագործակցության և շուկայի փոփոխություններին շատ արագ արձագանքելու հնարավորություն, գիտատար նորարարությունների ինտենսիվացում<sup>12</sup>: Արտադրության նման մոդելը գործում է շնորհիվ կիբեռ-ֆիզիկական արտադրական ուղիների, որոնք ապահովում են ամենատարբեր բնույթի արտադրական և տեղեկատվական ռեսուրսներին ընդհանուր ազատ հասանելիություն: Ամպը թույլ է տալիս կազմակերպությանը իր արտադրական ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվությունը պահպանել և մշակել տվյալների կենտրոններում, իսկ նրա հետ համագործակցող ընկերություններին տրամադրում է համագործակցության հասանելիություն ընդհանուր ամպային հարթակում. ժամանակի իրական ռեժիմում՝ տնտեսելով գործառնական և այլ բնույթի ծախսերը<sup>13</sup>: Մատակարարների և պատվիրատուների միջև նման միշտ հասանելի և օպերատիվ «փոխգործակցությունը» որոշիչ նշանակություն ունի «էլեկտրոնային արժեշղթաների» ստեղծման համար: Վերջինս հնարավորություն կտա ընկերություններին զգալիորեն նվազեցնել արտադրական ծախսերը, կրճատել պատվերների կատարման ժամկետները, բարձրացնել հաճախորդների սպասարկման որակը, կվերացնի արտադրանքի պահեստավորման ծախսերը և կօպտիմալացնի գործընկերների միջև աշխատանքը՝ էլեկտրոնային արժեշղթայի ստեղծման համար անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը հասանելի դարձնելով ժամանակի իրական ռեժիմում բոլոր շահագրգիռ կողմերի համար<sup>14</sup>:

Ռազմարդյունաբերության ոլորտում ամպային տեխնոլոգիաների կիրառումը թեև կապված է որոշակի ռիսկերի հետ, պայմանավորված տեղեկատվության արտահոսքի մեծ հավանականությամբ և այլ պատճառներով, այնուամենայնիվ, դրանք նույնպես ունեցել և շարունակում են ունենալ «հեղափոխական» ազդեցություն տիեզերական և ռազմարդյունաբերության վրա:

<sup>11</sup> Михайлов Ю. Перспективы использования аддитивных технологий в оборонно-промышленном комплексе. <http://federalbook.ru/files/OPK/Soderjanie/OPK-11/III/Mihaylov.pdf>

<sup>12</sup> Ren, L., L.Zhang, L.Wang, F. Tao, and X.Chai. 2017. “Cloud Manufacturing: key Characteristics and Applications. International Journal of Computer Integrated Manufacturing 30 (6): 501–515. doi:10.1080/0951192X.2014.902105

<sup>13</sup> Hao, Y., and P. Helo. 2015. “The Role of Wearable Devices in Meeting the Needs of Cloud Manufacturing: A Case Study.” Robotics and Computer-Integrated Manufacturing 1 (1): 1–12.

<sup>14</sup> Pearson, M. 2013. “Digitizing the Value Chain” □ Pearson on Excellence 1 (1): 22–23.



Մասնավորապես, բջջային սարքավորումների միջոցով ամպը կարող է դուրս բերվել ռազմադաշտ, հնարավորություն տալով ռազմական գործողությունների վերաբերյալ օպերատիվ լայնածավալ տեղեկատվություն ստանալ և հակազդող միջոցառումներ ձեռնարկել: Բացի այդ, նպատակահարմար է դրանց կիրառումը ռազմական տնտեսության ավտոմատացված կառավարման, կիրառանվտանգության ոլորտում հետազոտությունների համար: Նկատենք, որ ամպային տեխնոլոգիաները փոխկապված են մեծածավալ տվյալների և իրերի համացանցի հետ:

**Իրերի համացանց:** Ենթադրում է ֆիզիկական իրերի փոխազդեցության տիրույթ, որտեղ անխափան փոխանակվում է տեղեկատվությունը՝ հատուկ սենսորների, ակտուատորների և այլ սարքերի օգնությամբ, որոնք հավաքագրում և փոխանցում են տեղեկատվություն իրերի վերաբերյալ<sup>15</sup>: Իրերի համացանցը հնարավորություն է տալիս առարկաներից ստացվող տեղեկատվության հիման վրա վերլուծել դրանց շրջակա միջավայրը և դրան համապատասխան հեռակառավարել (առցանց) այդ առարկաները՝ բարձրացնելով գործողությունների արդյունավետությունը և ճշգրտությունը:

Իրերի համացանցը ներառում է տեխնոլոգիաների լայն սպեկտր՝ իրերի նույնականացման տեխնոլոգիաներ (ինչպիսիք են, օրինակ, օպտիկական իդենտիֆիկատորները՝ շտրիխ-կոդերը, մատրիցային շտրիխ-կոդերը, QR-կոդերը կամ իրական ժամանակում տեղորոշման միջոցները), ստացված տվյալների չափման տեխնոլոգիաներ (ամենապարզ չափիչ սարքերից մինչև ինտելեկտուալ չափիչներ), տվյալների փոխանցման (փոխանակման) և տվյալների մշակման տեխնոլոգիաներ: Այստեղ հիմնական խնդիրներից մեկն այն է, որ համակարգը կարողանա ապահովել այնպիսի ֆունկցիոնալ հնարավորություններ, որպեսզի համակարգիչն ինքնուրույն ստանա ամբողջ տեղեկատվությունը՝ առանց մարդկային միջամտության, ընդ որում, անհրաժեշտ է առավելագույնս բացառել նաև ինֆորմացիայի հավաքագրման պահին մարդկային գործոնի ազդեցությունը՝ ստացված տվյալների հավաստիությունն ու անկախությունն ապահովելու նպատակով: Ամերիկյան հեղինակավոր Gartner հետազոտական և խորհրդատվական ընկերության վերլուծաբանները կանխատեսում են, որ 2020 թվականին աշխարհում իրերի համացանցի միջոցով կապակցված սարքավորումների թիվը կհասնի 21 մլրդ-ի, իսկ Intel ընկերությունը կանխատեսում է ավելի տպավորիչ ցուցանիշ՝ 200 մլրդ<sup>16</sup>:

Ռազմարդյունաբերության ոլորտում իրերի համացանցը լայնորեն կիրառվում է հատկապես հետախուզական նպատակներով, սակայն ապագայում դրա կիրառման հնարավորություններն ավելի են ընդլայնվելու: Բերենք մի քանի

---

<sup>15</sup> Հայաստանի ազգային մրցունակության զեկույց- 2017: Մեր դերը Չորրորդ արդյունաբերական հեղաշրջման մեջ: «Ի-Վի Քոնսալտինգ», «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն, 2017, էջ 46.

<sup>16</sup> Промышленный интернет вещей (IIoT) - когда он станет в России массовым? <https://real-trac.com/ru/company/blog/industrial-internet-of-things-iiot-is-when-he-will-be-in-the-russian-mass/>

օրինակ: Պատերազմական իրավիճակում առավել արդյունավետությամբ հանդես կարող է գալ, այսպես կոչված՝ անօդաչու թռչող սարքերի (կամ ստորջրյա ու վերերկրյա ինքնակառավարվող սարքավորումների) «հարձակողական երամբ», որը կարող է գործողությունների մեկ միասնական պլանով արդյունավետությամբ իրականացնել իր առաջ դրված խնդիրները՝ շնորհիվ տեղադրված զգայուն սարքերի (սենսորների), որոնք օպերատիվ հավաքագրում են անհրաժեշտ տեղեկատվությունը, որը մշակվում է ժամանակի իրական ռեժիմում և ուղղորդում գործողությունները: Իրերի համացանցի տրամաբանությամբ են իրականացվում նաև զրահապատման նորարարական մոտեցումները, որոնք ենթադրում են զրահապատ ռազմական տեխնիկայի խոցման դեպքում տվյալների փոխանցում մարտի դաշտում գտնվող այլ ռազմական տեխնիկային, զինվորներին և կառավարման կենտրոնին՝ հարձակման ուղղության և այլ մանրամասների վերաբերյալ:

**Ռոբոտապեխնիկա:** «Արդյունաբերություն 4.0» հայեցակարգի շրջանակներում կանխատեսվող հաջողությունների, ակնկալվող արդյունավետության և արտադրողականության բարձրացման նախապայմանը վերլուծաբանները համարում են հենց ռոբոտաչինության զարգացումը: Տեխնոլոգիական նոր աշխարհում առավել կատարելագործված ռոբոտները, որոնք ունակ են համագործակցել միմյանց հետ (կոչվում են նաև կոբոտներ<sup>17</sup>) իրականում 4-րդ արդյունաբերական հեղաշրջման շարժիչ ուժն են<sup>18</sup>, քանի որ դրանց արտադրությունը և շահագործումը պահանջում է բեկումնային բոլոր տեխնոլոգիաների համադրում՝ արհեստական ինտելեկտ, ավտոմատացված կառավարում, ամպային տեխնոլոգիաներ, իրերի համացանց և այլն: Ռոբոտների օգտագործումը արտադրական գործընթացում նկատելիորեն բարձրացնում է արտադրողականությունը, քանի որ ռոբոտները հաճախ աշխատում են ավելի արագ, ճշգրիտ և արդյունավետ, քան մարդիկ: Հայտնի է, որ Philips ընկերությունն ունի ամբողջությամբ ռոբոտիզացված արտադրություններ, օրինակ, Նիդեռլանդներում տեղակայված էլեկտրական սարքերի գործարանում աշխատում է 128 ռոբոտ, որոնց աշխատանքը վերահսկվում է ընդամենը 9 աշխատողի կողմից<sup>19</sup>:

Հաշվի առնելով ռոբոտատեխնիկայի և արհեստական ինտելեկտի զարգացման ներկա մակարդակը, չենք կարող չենթադրել, որ դրանք իրենց լայնամասշտաբ կիրառումն ունեն նաև ռազմական ոլորտում: Եվ իսկապես, ռազմական ոլորտում կիրառվում են ամենաբազմազան ռոբոտացված համակարգեր, սկսած հետախույզ և սակրավոր ռոբոտներից մինչ ամենասովորական ռոբոտահետևակային զորամասերը: Ընդսմին, թվարկված դրսևորումներով ռոբոտների օգտագործումը ռազմական ոլորտում արդեն վաղուց նորարարություն չէ, օրինակ՝ ռոբոտ-սակրավորներն արդեն ավելի քան 40 տարվա պատմություն

<sup>17</sup> Cobots-collaborative robots.

<sup>18</sup> Gray, S. 2016. “Advanced Technologies/Robotics Shaping the Future of Manufacturing.” Area Development Site and Facility Planning 51 (4): 14–5.

<sup>19</sup> Бизнес-журнал. Август, #08 (118), 2015, стр 31.

ունեն, իսկ հեռակառավարմամբ զրահատեխնիկան՝ նույնիսկ ավելի վաղ: Ներկա միտումներում գերակշռում են ռազմական ռոբոտների բազմաֆունկցիոնալության ապահովումը, գործողությունների ճշգրտումը, ինչպես նաև բարդ տեղանքներում տեղաշարժվելու հնարավորության ապահովումը:

Բավական հետաքրքիր մշակում է Իսրայելի կողմից դեռևս 2009 թվականին ներկայացված օձ-ռոբոտը, որը կարող է առանց աղմուկի սահել նույնիսկ բավական բարդ ռելիեֆ ունեցող տեղանքով, կրում է ջերմացուցիչ, տեսախցիկ, բարձրախոս: Ավելի ուշ նման մշակում ներկայացրեցին նաև ԱՄՆ-ը, «ամերիկյան օձը» կարողանում էր ծառեր բարձրանալ, փաթաթվել օբյեկտներին և հետախուզում իրականացնել բավական ծածուկ վայրերում<sup>20</sup>:

**Արհեստական ինտելեկտ:** Ռոբոտաշինության հետ սերտորեն կապված է ժամանակակից մեկ այլ տեխնոլոգիա՝ արհեստական ինտելեկտը, որն, ըստ կանխատեսումների, կարող է հանգեցնել մարդկության պատմության մեջ հնարավոր ամենախոշոր հեղաշրջման, ցավոք նաև՝ տանելով դեպի մարդկության կործանումը<sup>21</sup>: Այնուամենայնիվ, իր բոլոր ռիսկերով հանդերձ, արհեստական ինտելեկտի զարգացումն ու կիրառումը ժամանակակից աշխարհում արդեն իրողություն է: Խոսքը վերաբերում է այնպիսի ինտելեկտուալ համակարգերի գոյությանը, որոնք կարող են իրականացնել ստեղծագործական ֆունկցիաներ, ինչը մինչ այդ համարվել է միայն մարդկային մենաշնորհ: Արհեստական ինտելեկտով օժտված ռոբոտները դրսևորում են որոշումների կայացման և գործողությունների որոշակի ինքնուրույնություն, ինչպես նաև՝ գործողությունների կրկնօրինակման և դրանց իմպրովիզացման ունակություն: Արհեստական ինտելեկտը ներկայում լայն կիրառում ունի առևտրի կազմակերպման ոլորտում, ֆինանսական ծառայությունների շուկայում, քանի որ հնարավորություն է տալիս արագորեն ուսումնասիրել շուկան և տվյալների ինտելեկտուալ վերլուծություն իրականացնել: Արհեստական ինտելեկտի կիրառման կարևորագույն ոլորտ է նաև բժշկությունը՝ բժշկական ախտորոշումը, բժշկական պատկերների մեկնաբանությունը, բուժման անհատական ծրագրերի կազմումը, ծերերին և հաշմանդամներին խնամող ռոբոտների գործունեությունը: Ավելին, արհեստական ինտելեկտն ունակ է նաև արվեստի ստեղծագործություններ արարելու, օրինակ, Էմիլի Հաուել արհեստական ինտելեկտի երաժշտական ստեղծագործությունները (ալգորիթմական երաժշտություն) գրանցված է որպես ամերիկյան պատենտ<sup>22</sup>:

Marketsandmarkets վերլուծական ընկերության կողմից ներկայացված հետազոտության արդյունքներով ռազմական նպատակներով օգտագործվող արհեստական ինտելեկտի տեխնոլոգիաների համաշխարհային շուկան 2017 թվա-

<sup>20</sup> Военные роботы: технологии на службе армии. <https://robo-sapiens.ru/stati/voennyie-robotyi-techno-logii-na-sluzhbe-armii/>

<sup>21</sup> Stephen Hawking warns artificial intelligence could end mankind. By Rory Cellan-Jones. December, 2014, <https://www.bbc.com/news/technology-30290540>

<sup>22</sup> Արդյուրը՝ <https://patents.google.com/patent/US7696426>

կանին գնահատվել է 6.26 մլրդ ԱՄՆ դոլար, որը կանխատեսումների համաձայն, 2025 թվականին կհասնի 18,8 մլրդ-ի, ամեն տարի աճելով մոտ 14,7%-ով<sup>1</sup>: Սա, թերևս ամենաարագ աճող շուկան է, իսկ այս ոլորտում տեխնոլոգիական նորարարություններն ամենակատարյալն են: Ներկայացնենք դրանցից առավել արդիականները:

2019 թվականի սկզբին ԱՄՆ-ում գործարկվել է նախագիծ, որը ենթադրում է մշակել վիրտուալ օգնականներ՝ ռազմական տեխնիկայի անձնակազմի համար, որոնք պետք է նպաստեն անձնակազմի արդյունավետության բարձրացմանը՝ ռազմական գործողությունների պայմաններում: Համակարգը, որը ստացել է ATLAS (Advanced Targeting & Lethality Automated System) անվանումը ունի նշանառության և բարձր մահաբերության ընդլայնված հնարավորություններ՝ պայմանավորված ռազմական գործողությունների ժամանակ սթրեսային իրավիճակի բացասական ազդեցությունն անձնակազմի գործողությունների վրա նվազագույնի հասցնելու հանգամանքով: Համակարգը, մասնավորապես իր վրա է վերցնում թիրախների հայտնաբերման և դրանց նշանառության գործառույթները, դրանց խոցման (կրակ բացելու հրահանգը) գործառույթը թողնելով հրամանատարին:

Արհեստական ինտելեկտի կիրառումն արդյունավետ է նաև ռազմական կործանիչների կառավարման համակարգերում: 2016 թվականին ապացուցվել է, որ ռազմական կործանիչների կառավարման համար նախատեսված ամերիկյան արհեստական ինտելեկտ ALPHA-ն վստահ հաղթանակ է տարել ամերիկյան բանակի նախկին աս-օդաչուի նկատմամբ վիրտուալ օդային մարտում<sup>2</sup>:

Օբյեկտների, մարդկանց և առարկաների նույնականացման (ճանաչման) տեխնոլոգիաներն ապահովում են արբանյակային նկարների և տեղակողմնորոշումային սարքերից ստացված տվյալների վերլուծության ավտոմատացում և բարձր արդյունավետություն: Արհեստական ինտելեկտը կարող է նաև բարձրացնել ռադիոլոկացիոն կայանների աշխատանքի արդյունավետությունը՝ հրթիռային հարձակման կանխատեսման և հակազդեցության տեսանկյունից:

Այս ամենով հանդերձ, մարդկության գլոբալ հիմնախնդիրներից ամենաարդիականն ու վտանգավորն արհեստական ինտելեկտի չափից դուրս ռազմականացումն է: 2017 թվականի օգոստոսին արհեստական ինտելեկտի և ռոբոտաշինության 116 փորձագետներ աշխարհի 26 երկրներից ՄԱԿ-ին ուղղված բաց նամակով կոչ են արել արգելել ինքնուրույն կառավարվող (արհեստական ինտելեկտով օժտված) զենքի արտադրությունը՝ հիմնավորելով, որ դա կարող է հանգեցնել աննախադեպ մասշտաբներով և արագությամբ զարգացող պատերազմների և կործանարար լինել մարդկության համար: Սակայն այս հարցում

<sup>1</sup> Искусственный интеллект в ВПК. 2018/04/20 14:33:29. [http://www.tadviser.ru/index.php/Статья:Искусственный\\_интеллект\\_в\\_ВПК](http://www.tadviser.ru/index.php/Статья:Искусственный_интеллект_в_ВПК)

<sup>2</sup> Искусственный интеллект победил аса в виртуальном воздушном бою □ [http://www.strf.ru/material.aspx?CatalogId=222&d\\_no=118987#.XLHvKvZulPa](http://www.strf.ru/material.aspx?CatalogId=222&d_no=118987#.XLHvKvZulPa)

իրավական ուժ ունեցող միջազգային պայմանագիր այդպես էլ չի կնքվել, իսկ արհեստական ինտելեկտի կիրառումը ռազմարդյունաբերությունում արդեն անշրջելի գործընթաց է:

Ռազմարդյունաբերությունում կիրառվող նոր տեխնոլոգիական լուծումների օրինակները բազմաթիվ են: Մենք չենք անդրադարձել ռազմարդյունաբերության ոլորտում բլոկ-շղթա տեխնոլոգիաների, նոնոտեխնոլոգիաների, քվանտային և բազմաթիվ այլ տեխնոլոգիաների կիրառմանը, որոնք նույնպես «4.0 Արդյունաբերության» միտումներ են: Կարևորել ենք ընդգծել, որ այս հեղաշրջման հիմնական նպատակն է, համատեղելով ներկայացված նոր տեխնոլոգիաների հնարավորությունները, ստեղծել և օպտիմալացնել արտադրական նոր արժեզրեաներ (այդ թվում նաև՝ էլեկտրոնային): Օրինակ, համատեղելով իրերի համացանցը, ամպային տեխնոլոգիաները, մեծածավալ տվյալները և ադիտիվ արտադրությունը որևէ ընկերություն կարող է ժամանակի իրական ռեժիմում արձագանքել կոնկրետ ապրանքի պահանջարկին և այն բավարարելու համար անհատական բոլոր պահանջներին համապատասխանող ապրանք արտադրել, այդ թվում նաև՝ սպառազինություններ և ռազմական տեխնիկա՝ յուրաքանչյուր երկրի ռազմավարական պահանջմունքներից ելնելով:

### **Հայաստանում ռազմարդյունաբերության զարգացման նոր օրակարգը**

Աշխարհում, ըստ էության, սկսվել է նորարարական սպառազինությունների մրցավազք, և ռազմական հակամարտության մեջ ներքաշված պետությունները չեն կարող հաշվի չառնել այս հանգամանքը: Իրողությունը, որ Հայաստանում ռազմարդյունաբերության զարգացումն այլևս այլընտրանք չունի, փաստել ենք դեռևս 2017 թվականի սկզբին<sup>1</sup>, դեռ այն ժամանակ նկատելով, որ երկրի անվտանգության և տնտեսական զարգացման փոխկապված խնդիրների լուծման միակ ուղին տեղական ռազմարդյունաբերության զարգացումն է: Ակնհայտ է, որ Հայաստանում տնտեսական վերափոխումների նոր ալիքի և «4-րդ արդյունաբերական հեղաշրջման» ուղիների անխուսափելի հատման կետում դարձյալ ռազմարդյունաբերությունն է՝ որպես տնտեսությունում դրական փոփոխությունների առաջամարտիկ, որտեղից շղթայական ռեակցիայով դրական էքստերնալները պիտի տարածվեն ամբողջ տնտեսությունում:

Որպես փոքր երկիր, որը շրջապատված է իրական և պոտենցիալ թշնամիներով, Հայաստանին անհրաժեշտ է տնտեսություն-բանակ փոխսերտաճման այնպիսի «ինտելեկտուալ» համակարգ, որը թույլ կտա համարժեք արձագանքել երկրի անվտանգության ցանկացած, նույնիսկ ամենաչնչին սպառնալիքին: Գործնականում երկրի անվտանգության գլխավոր երաշխավորը բանակն է, որը պահանջում է առաջին հերթին ռազմական գործում ներգրավված զգալի մարդկային ռեսուրսներ, ապա նաև՝ ֆինանսական ռեսուրսներ: Հայաստանի պարագայում մարդկային ռեսուրսների սահմանափակությունը պայմանավոր-

<sup>1</sup> Հարությունյան Գ., «Հ ռազմարդյունաբերության զարգացման առաջնահերթությունները, «21-րդ ԴԱԲ», թիվ 5 (75), 2017թ»:

ված է ոչ միայն բնակչության փոքր թվաքանակով, այլ նաև՝ սոցիալ-տնտեսական ոչ բարենպաստ կացությամբ, ինչը շարունակում է արտագաղթի հիմնական պատճառ հանդիսանալ: Մյուս կողմից, մարդկային ռեսուրսների շարունակական ներգրավումը ռազմական ուժեր, պետության համար մեկ այլ սպառնալիք է ենթադրում՝ մարդկային կապիտալի սպառում: Մինչդեռ, Հայաստանը տարիներ շարունակ համարվել է բարձրորակ մարդկային կապիտալ ունեցող երկիր, որը հատկանշվել է գիտատեխնիկական առաջընթացի նվաճումներն արագ յուրացնելու և բարձր տեխնոլոգիական արտադրություններ նախաձեռնելու իր ունակությամբ: 2017 թվականին Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հրապարակված Մարդկային կապիտալի զարգացման ինդեքսի<sup>1</sup> վերլուծությունը ցույց է տալիս, որ մոտ ապագայում Հայաստանը կարող է կորցնել բարձրորակ աշխատուժի առավելությունը, որի վերականգնման համար անհրաժեշտ կլինի ոչ մեկ տասնամյակ<sup>2</sup>: Ինչ վերաբերում է ֆինանսական ռեսուրսներին, ապա պետք է նշենք, որ ռազմական ծախսերը, չնայած զգալի ծավալներին (ՀՆԱ 4%-ի շրջակայքում վերջին 10 տարիներին) տնտեսական աճի վրա խթանող ազդեցություն չեն ունեցել այն դեպքում, երբ տնտեսական օրինաչափությունները ենթադրում են նման ակնհայտ ազդեցություն: Բանը նրանում է, որ ռազմական ծախսերը տնտեսության վրա խթանիչ ազդեցություն կարող են ունենալ միայն այն դեպքում, երբ դրանց զգալի մասը պետական ռազմական պատվերի միջոցով ուղղորդվում է իրական տնտեսություն: Այն դեպքում, երբ ռազմական ծախսերի զգալի մասն ուղղորդվում է սպառողականությունների կամ ռազմական նախանշանակման այլ արտադրանքի ներկրմանը, բազմարկվում է ոչ թե տնտեսության վրա խթանիչ ազդեցությունը, այլ բացասականը, հատկապես, եթե հաշվի ենք առնում, որ մեծ ռազմական ծախսերի ֆինանսավորման աղբյուրը պետական պարտքի աճն է:

«Արդյունաբերություն 4.0» հարթակը հրամցնում է մարդկային և ֆինանսական ռեսուրսների սահմանափակությամբ պարտադրված օպտիմալության խնդրի բոլոր լուծումները Հայաստանի անվտանգության ապահովման համար, և ոչ միայն: Այն նաև տնտեսության ռազմականացման կանխարգելման հնարավորություն է տալիս: Հասարակության բարեկեցության ֆունկցիայում անվտանգությունն էական կշիռ ունի, բայց այն, այնուամենայնիվ, *բարեկեցության ֆունկցիա է*: Ուստի, բանակը զարգացնել առանց տնտեսական զարգացման ինքնին անհավանական է: Նպատակադրելով տնտեսության վերափոխումն այնպես, որ ապահովվի նորարարական տեխնոլոգիաների ու ռազմարդյունաբերության ինտեգրված զարգացում, «Ազգ-բանակ» հայեցակարգն, ըստ էության, վերաճում է «Ազգ-տնտեսություն-անվտանգություն» հայեցակարգի, որի շեշտադրումները փոխվում են «ամբողջ հասարակությունը բանակի համար»-ից

<sup>1</sup> The Global Human Capital Report 2017□ World Economic Forum□ ISBN 978-1-944835-10-1, p.61.

<sup>2</sup> Վերլուծությունն առավել մանրամասն տե՛ս. Հարությունյան Գ., Ռազմարդյունաբերություն. գերակայություններ, հնարավորություններ, հեռանկարներ (մենագրություն): Երևան, 2018թ., էջ 131-133:

դեպի «ամբողջ հասարակությունը սեփական բարեկեցության և անվտանգության համար»-ի: Թվում է՝ շատ բան չի փոխվում: Բայց հենց այս օրակարգին բերելով հասարակության ամենօրյա կենսագործունեությունը, կարելի է ձևավորել այն ինստիտուցիոնալ միջավայրը, որը երկարաժամկետ միտումներ կթելադրի հասարակության զարգացմանը:

«Արդյունաբերություն 4.0»-ն այս համատեքստում «առաջարկում է» ոչ թե ազգը բանակ դարձնել, այլ ազգը դարձնել ինտելեկտուալների հսկայական «բանակ»՝ ունակ մշակելու և ձևավորելու ռազմարդյունաբերական այնպիսի «խելացի» համալիր, որը նվազագույն մարդկային ռեսուրսներով, բայց զգալի գիտատարությամբ ու տեխնոլոգիատարությամբ կարող է առավելագույն արդյունավետությամբ լուծել երկրի առաջ ծառայած ցանկացած անվտանգային խնդիր: Արդյունքում կարող ենք ունենալ ռազմարդյունաբերական համալիր հետևյալ առանձնահատկություններով՝

- առաջնագծի լրիվ ռոբոտացում, ինչը թույլ կտա նկատելիորեն նվազեցնել դիվերսիոն հարձակումների ժամանակ զոհերի թիվը,
- հետախուզական ռոբոտացված համակարգերի (օդային և ցամաքային) զանգվածային օգտագործում խաղաղ և պատերազմական իրավիճակում,
- բազմաֆունկցիոնալ անօդաչու թռչող սարքերի (այդ թվում նաև՝ հարվածային) օգտագործում ռազմական գործողությունների ժամանակ,
- արդիականացված սպառազինություններ և ռազմական տեխնիկա՝ հագեցած ավտոմատ կառավարման (հեռակառավարման) համակարգերով,
- տեղեկատվության փոխանակման և վերլուծության նոր կատարելագործված համակարգերի հիման վրա (ամպային տեխնոլոգիաների կիրառմամբ) բարձր արդյունավետությամբ ցանցակենտրոն ռազմական գործողությունների (Network-centric warfare) իրականացման հնարավորություն,
- իրերի համացանցի տեխնոլոգիական հնարավորություններով բարձր իրավիճակային իրազեկվածության (Situation Awareness) պայմաններում ռազմական իրավիճակի արդյունավետ կառավարում, հակահարվածի ճշգրտության ապահովում,
- բարձր տեխնոլոգիական մարտական համազգեստներ, որոնցում ներդրված են զինձառայողի բարոյահոգեբանական վիճակը գնահատող և համապատասխան արձագանքման տարրեր,
- ադիտիվ արտադրական տեխնոլոգիաներով հագեցած ռազմարդյունաբերական ձեռնարկություններ, որոնք ճկուն են պատվերների բարձր ճշգրտության (գրեթե անհատական) և ժամանակին կատարման հարցում,
- ռազմարդյունաբերական համալիրի կատարելագործված լոգիստիկ համակարգ՝ պայմանավորված դրանց պարզեցմամբ, տրանսակցիոն ծախքերի կրճատմամբ՝ կառավարման միջանկյալ օղակների նվազեցման և վերացման արդյունքում:

Միաժամանակ, ակնհայտ է, որ ռազմարդյունաբերության նմանատիպ զարգացումը չի կարող կտրված լինել արտադրական այլ ոլորտների զար-

գացումից, քանի որ «Արդյունաբերություն 4.0» տեխնոլոգիաներն առավել մեծ հաջողությամբ կարող են կիրառվել նաև քաղաքացիական նշանակության արտադրություններում, իսկ որոշ դեպքերում՝ ռազմական ոլորտ են փոխանցվում հենց այնտեղից: Մյուս կողմից, ռազմարդյունաբերության զարգացումը կարող է նպաստել նաև հարակից և սպասարկող արտադրությունների (այլընտրանքային էներգետիկա, ռադիոէլեկտրոնիկա, էլեկտրատեխնիկա և այլն) զարգացմանը՝ վերաձվելով այն առանցքային արտադրական ոլորտին, որը գործողության մեջ պետք է դնի ամբողջ տնտեսությունը:

## **Առաջարկություններ**

Կատարված հետազոտության հիման վրա, ներկայացնում ենք մի շարք առաջարկություններ՝ Հայաստանում տնտեսական հեղափոխությունը համաշխարհային նորարարական միտումներին համապատասխանեցնելու և ռազմարդյունաբերությունը զարգացնելու ուղղությամբ:

1. Նորարարական տեխնոլոգիաները ստեղծվում և արտադրական գործընթաց են ներդրվում մարդկային կապիտալի կողմից, ուստի, առաջնահերթ է Հայաստանում մարդկային կապիտալի շարունակական դեգրադացման կասեցումը և զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը հետևյալ կերպ՝

- սահմանել խիստ չափորոշիչներ կրթության որակի նկատմամբ՝ սկսած տարրական ուսուցումից մինչև հետբուհական կրթություն, ինչը կբացառի «կիսագրագետ» դիպլոմավորված մասնագետների և գիտական աստիճան ունեցողների մեծ թվաքանակը հանրապետությունում, որոնք գործնական խնդիրների լուծման ժամանակ դրսևորում են «մտավոր հաշմանդամություն»,
- խստացնել մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի դասավանդման մոտեցումները դպրոցական ծրագրերում,
- ռոբոտաշինությունը դարձնել պարտադիր առարկա դպրոցներում և միջին տեխնիկական կրթություն ապահովող հաստատություններում,
- մեծացնել բուհերում ինժեներական և ֆիզիկամաթեմատիկական մասնագիտությունների գծով պետական պատվերով նախատեսված տեղերի քանակը, միաժամանակ խիստ պահանջներ ներկայացնելով կրթական ծրագրերով նախատեսված ելքային արդյունքների տիրապետման նկատմամբ,
- նպաստավոր պայմաններ ստեղծել բուհ-գործատու սերտ համագործակցության համար՝ մասնագիտական կրթական ծրագրերը գործատուների իրական պահանջներին համապատասխան կառուցելու տեսանկյունից,
- հաշվի առնելով, որ «նոր տնտեսությունում» ինչպես տեխնոլոգիական, այնպես էլ կազմակերպական առումով էապես բարդանում են արտադրական գործընթացները, նկատելիորեն մեծացնել միջառարկայական հետազոտությունների ֆինանսավորումը, ինչպես նաև՝ խթանել ամենատարբեր մաս-



նագիտությունների համար միջառարկայական կոմպետենցիաների զարգացումը:

2. Ամբողջ տնտեսության մակարդակով (և մասնավորապես ռազմարդյունաբերության ոլորտում) զարգացման գործընթացների հիմնական խոչընդոտ դիտելով տնտեսության տարբեր հատվածների (պետական-մասնավոր, ֆինանսական-արտադրական, գիտակրթական-արտադրական) միջև արդյունավետ կապերի բացակայությունը և արտադրական տարբեր ոլորտների միջև թույլ փոխկապվածությունը, *առաջարկում ենք*.

- որպես պետություն-մասնավոր հատված համագործակցության արդյունավետության ապահովման հիմք, արագացնել «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքի ընդունումը, որը ներկայում լրամշակման փուլում է,
- մասնակիորեն ազատականացնել ռազմարդյունաբերության ոլորտի վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը (գաղտնի պահելով սպառազինությունների նոր նմուշների արտադրության տեխնոլոգիաները), ինչը հնարավորություն կտա մասնավոր ներդրողներին (այդ թվում նաև՝ սփյուռքահայ և օտարերկրյա) ճիշտ գնահատել ներդրումային արդյունավետությունը և ավելի մեծ նախաձեռնողականություն հանդես բերել,
- պետության կողմից պարբերաբար (հարցումների միջոցով) իրականացնել բարձր տեխնոլոգիական ձեռնարկությունների կադրային պահանջարկի վերլուծություն, պահանջվող հմտությունների և կարողությունների «գույքագրում», կրթական գործընթացները դրանց համապատասխանեցնելու նկատառումներով,
- բարձր տեխնոլոգիական պետության, մասնավոր ընկերությունների և գիտահետազոտական հաստատությունների միջև փոխգործակցության հարթակների դիվերսիֆիկացում՝ համատեղ հետազոտական և նախագծման աշխատանքներից մինչև դրանց առևտրայնացումը և համաշխարհային շուկա դուրս բերումը:

3. Բարձր տեխնոլոգիական նախագծերի ֆինանսավորման նոր աղբյուրների հասանելիության, «Ժամանակակից փողերի» ներգրավման մեխանիզմների (կրաուդֆանդինգ, կրաուդլենդինգ, կրաուդինվեստինգ, ICO<sup>1</sup>) կիրառման հնարավորությունների ապահովում, մասնավորապես.

- «Այլընտրանքային ֆինանսավորման» պարտադիր դասընթացի ներառում տնտեսագիտական բուհերում,
- հեռահաղորդակցական զարգացած ենթակառուցվածքների ապահովում (որպես «4.0 Արդյունաբերության» հիմնական էկոհամակարգ)՝ համապատասխան ծրագրային հագեցվածությամբ և կիբերանվտանգության երաշխիքներով, որն անսահմանափակ հասանելիություն կունենա տնտեսութ-

<sup>1</sup> ICO-Initial coin offering- ներդրումների ներգրավման ձև կրիպտոարժույթների վաճառքի ճանապարհով:

յան բոլոր մասնակիցների համար,

- բլոկչեյն (block-chain) տեխնոլոգիաների կիրառման համար բարենպաստ պայմանների ստեղծում, այս ուղղությամբ հասարակության լայն զանգվածներին իրազեկման միջոցառումների իրականացում,
- կրաուդհարթակներում գործարքների իրականացման իրավական հիմքերի մշակում և կատարելագործում,
- պետական երաշխավորությամբ մասնավոր պարտքային գործիքների թողարկում, որը նաև տեղական ֆոնդային շուկայի զարգացման խթան կարող է դառնալ,
- քննարկել կուտակային կենսաթոշակային հիմնադրամների միջոցները նվազ ռիսկային բարձրտեխնոլոգիական նախագծերում ներդրման հնարավորությունները:

4. Սեղմ ժամանակում մշակել «խելացի» ռազմարդյունաբերական համալիրի ճարտարապետությունը և դրա թվային կառավարման մոդելը, այս ոլորտում նոր տեխնոլոգիական լուծումների պահանջարկը և տնտեսության արձագանքման հնարավորությունները հստակ գնահատելու համար:

5. Որպես ռազմարդյունաբերության ոլորտում ադիտիվ արտադրության պիլոտային ծրագիր առաջարկում ենք Գյումրու ավիավերանորոգման զորամասի հիմքով ավիացիոն ռազմական տեխնիկայի վերանորոգման, արդիականացման և արտադրության ձեռնարկություն հիմնել (որը կարող է լինել նաև հայ-ռուսական համատեղ ընկերություն), որը կմասնագիտանա ռազմական և քաղաքացիական ավիացիայի տեխնիկական բարձրակարգ սպասարկման, ավիավերանորոգման և արդիականացման, ինչպես նաև՝ ավիացիոն տեխնիկայի համար անհրաժեշտ մասերի, համալրող սարքերի արտադրությունում, կիրականացնի ուղղաթիռների և ինքնաթիռների հավաքման գործունեություն, կունենա լաբորատորիաներ՝ ավիացիոն տեխնիկայի նոր նմուշների նախագծման, արդիականացման նոր տեխնոլոգիաների ներդրման համար: Նման առաջարկը հիմնավորված է մի քանի հանգամանքներով.

- բարձրորակ աշխատանքային կադրերի առկայություն (Խամփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարանի շրջանավարտները),
- Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի հարևանություն,
- երկակի նշանակության արտադրանքի թողարկում (ծառայության մատուցում),
- 102-րդ ռուսական ռազմաբազայի տեղակայումը Գյումրիում,
- տրանսպորտային բավարար ենթակառուցվածքների, այդ թվում՝ գործող օդանավակայանի առկայությունը:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. Հարությունյան Գ., ՀՀ ռազմարդյունաբերության զարգացման առաջնահերթությունները «21-րդ ԴԱԴ», թիվ 5 (75), 2017թ.:
2. Հարությունյան Գ., Ռազմարդյունաբերություն. գերակայություններ, հնարա-

- վորություններ, հեռանկարներ (մենագրություն), Երևան, 2018, էջ 131-133:
3. Ինչպես է Հայաստանը տնտեսական հեղափոխություն անելու. բացատրում է վարչապետ Փաշինյանը: <https://armeniasputnik.am/economy/20190212/17228592/armenia-nikol-pashinyan-tntesakan-hexapoxutyun.html>
  4. Հայաստանի ազգային մրցունակության զեկույց-2017: Մեր դերը Չորրորդ արդյունաբերական հեղաշրջման մեջ: «Ի-Վի Քոնսալտինգ», «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն, 2017, էջ 39:
  5. Ebner, G., and J. Bechtold. 2012. “Are Manufacturing Companies Ready to Go Digital?” Capgemini Study 1–15.
  6. Gray, S. 2016. “Advanced Technologies/Robotics Shaping the Future of Manufacturing.” Area Development Site and Facility Planning 51 (4): 14–5.
  7. Hao, Y., and P. Helo. 2015. “The Role of Wearable Devices in Meeting the Needs of Cloud Manufacturing: A Case Study.” Robotics and Computer-Integrated Manufacturing 1 (1): 1–12.
  8. Naughton J. (2016). The evolution of the Internet: from military experiment to General Purpose Technology, Journal of Cyber Policy, 1:1, 5-28, DOI:10.1080/23738871.2016.1157619
  9. Pearson, M. 2013. “Digitizing the Value Chain”. Pearson on Excellence 1 (1): 22–23.
  10. Ren,L., L.Zhang, L.Wang, F.Tao, and X.Chai. 2017. “Cloud Manufacturing: key Characteristics and Applications. International Journal of Computer Integrated Manufacturing 30 (6): 501–515. DOI:10.1080/0951192X.2014.902105
  11. Schwab, K. (2015). The Fourth Industrial Revolution; What it means and how to respond. Foreign Affairs. December 12, 2015. <https://www.foreignaffairs.com/articles/2015-12-12/fourth-industrial-revolution>
  12. Stephen Hawking warns artificial intelligence could end mankind. By Rory Cellan-Jones. December, 2014, [https://www.bbc.com/news/technology\\_30290540](https://www.bbc.com/news/technology_30290540)
  13. The Global Human Capital Report 2017. World Economic Forum. ISBN 978-1-944835-10-1, p.61.
  14. Бизнес-журнал. Август, #08 (118), 2015, стр 31.
  15. Военные роботы: технологии на службе армии. <https://robo-sapiens.ru/statii/voennyye-robotyi-tehnologii-na-sluzhbe-armii/>
  16. Искусственный интеллект победил аса в виртуальном воздушном бою. [http://www.strf.ru / material.aspx?CatalogId=222&d\\_no=118987#.XLHvKvZujPa](http://www.strf.ru / material.aspx?CatalogId=222&d_no=118987#.XLHvKvZujPa)
  17. Искусственный интеллект в ВПК. 2018/04/20 14:33:29. <http://www.tadviser.ru/index.php / Статья:Искусственный интеллект в ВПК>
  18. Марина Волосова, Андрей Маслов, Анна Окунькова, Игорь Смулов, Сергей Григорьев. Высокоэффективные технологии обработки / Григорьев С.Н.. 1-е изд. М.: Машиностроение, 2014. 256 с., ISBN 978-5-94275-756-4
  19. Михайлов Ю. Перспективы использования аддитивных технологий в обо-

ронно-промышленном комплексе.

<http://federalbook.ru/files/OPK/Soderjanie/OPK-11/III/ Mihaylov.pdf>

20. Промышленный интернет вещей (IIoT) – когда он станет в России массовым?  
<https://real-trac.com/ru/company/blog/industrial-internet-of-things-iiot-is-when-he-will-be-in-the-russian-mass/>

## Գայանե Հարությունյան

### ՀԱՅԱՍՏԱՆԸ «ՆՈՐ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ» ՃԱՆԱԴԱՐՀԻՆ. ՈՒՋՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

**Ամփոփագիր:** Աշխարհում, ըստ էության, սկսվել է նորարարական սպառազինությունների մրցավազք, որի հիմնական գործոնները, այսպես կոչված, «4-րդ արդյունաբերական հեղաշրջման» նոր տեխնոլոգիաներն են, և ռազմական հակամարտության մեջ ներքաշված պետությունները չեն կարող հաշվի չառնել այս հանգամանքը: Ակնհայտ է, որ Հայաստանում նույնպես տնտեսական վերափոխումների նոր ալիքի և «4-րդ արդյունաբերական հեղաշրջման» ուղիների անխուսափելի հատման կետում ռազմարդյունաբերությունն է՝ որպես տնտեսությունում դրական փոփոխությունների առաջամարտիկ, որտեղից շղթայական ռեակցիայով դրական էքստերնալները պիտի տարածվեն ամբողջ տնտեսությունում:

**Բանալի բաներ.** տնտեսական հեղափոխություն, արդյունաբերություն 4.0, ռազմարդյունաբերություն, ադիտիվ արտադրություն, 3D տպագրություն, արհեստական ինտելեկտ, ռոբոտատեխնիկա, իրերի համացանց, ամպային տեխնոլոգիաներ:

## Гаяне Арутюнян

### АРМЕНИЯ НА ПУТИ К «НОВОЙ ЭКОНОМИКЕ»: ОБОРОННАЯ ПРОМЫШЛЕННОСТЬ

**Резюме:** По сути, в мире началась гонка инновационных вооружений, основными факторами которой являются технологии так называемой «4-й промышленной революции», и страны, вовлеченные в военные конфликты, не могут пренебрегать этим обстоятельством. Очевидно, что в Армении тоже, в неизбежной точке пересечения новой волны экономических преобразований и прорыва «4-ой промышленной революции» находится оборонная промышленность, в качестве инициатора позитивных изменений в экономике, откуда положительные экстерналии цепной реакцией должны распространяться по всей экономике.

**Ключевые слова:** экономическая революция, индустрия 4.0, оборонная промышленность, аддитивное производство, 3D печать, искусственный интеллект, робототехника, интернет вещей, облачные технологии.

**Gayane Harutyunyan**

## **ARMENIA ON THE WAY TO THE “NEW ECONOMY”: DEFENSE INDUSTRY**

**Abstract:** In fact, an innovative arms race has begun in the world, the main factors of which are technologies of the so-called “4-th industrial revolution”, and countries involved in the military conflicts cannot overlook this circumstance. It is obvious that in Armenia, too, the defense industry is in the inevitable point of intersection of the new wave of economic transformations and the breakthrough of the “4th industrial revolution”, as the initiator of positive changes in the economy, from which positive externalities must be spread throughout the economy by a chain reaction.

**Keywords:** Economic revolution, industry 4.0, defense industry, additive manufacturing, 3D printing, artificial intelligence, robotics, Internet of things, cloud technologies.

## Ատոմ Մարզարյան Սոնա Մարզարյան

### «ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐՏԵՆՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԵՎ ԽԹԱՆՄԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ

#### Նախաբան

Նորանկախ Հայաստանի Հանրապետության տնտեսության վերջին տասնամյակների զարգացման առանցքային հիմնահարցը կապված է նրա գիտելիքահենք տեխնոլոգիական արդիականացման, դրա շնորհիվ նրա մրցունակության բարձրացման և համաշխարհային տնտեսության մեջ նրա շահեկան դիրքավորման պահանջների հետ: Գտնվելով տրանսպորտային շրջափակման ծանր պայմաններում, չունենալով ազատ ելք դեպի ծով, զուրկ լինելով էներգակիրներից և հարուստ հանքային ռեսուրսներից Հայաստանի Հանրապետությունը հարկադրված է ապավինել գիտատար, տեխնոլոգիատար և ավելացված արժեքի մեծ մասնաբաժին պարունակող ապրանքների և ծառայությունների արտադրությանը և արտահանմանը: Այդուհանդերձ, 1990-ական թվականներից ի վեր Հայաստանում տեղի ունեցած համակարգային փոփոխությունները չեն հանգեցրել այնպիսի արդյունքների, որոնք թույլ կտան ապահովել երկրի տնտեսության մրցունակության և արտադրողականության բարձր մակարդակը, հետևաբար և՛ բնակչության բարեկեցության բարձր աստիճանը: Հայաստանը, ինչպես և երեք տասնամյակ առաջ, միջազգային չափանիշներով շարունակում է մնալ ցածր եկամուտ ունեցող երկիր:

Փաստենք, որ անկախության արշալույսին Հայաստանի Հանրապետության տնտեսական ողջ համալիրը պահանջում էր արմատական վերակառուցում և արդիականացում, դրանց արդյունքում դեպի գիտատեխնոլոգիական նորաստեղծությունները միտված տնտեսության մրցունակ հատվածների ձևավորում: Տնտեսական բարեփոխումների նախօրեին, սակայն, Հայաստանում տիրապետող էին այն մտայնությունները, թե «վաշինգտոնյան համաձայնության» սկզբունքների<sup>1</sup> հիման վրա գների համատարած ազատականացումը, տնտեսության բացումը, մենաշնորհների զսպումը և զանգվածային մասնավորեցումը կարող են մեխանիկորեն տնտեսության առաջադիմական տեխնոլոգիական-կառուցվածքային փոփոխություններ հարուցել այնպես, որպեսզի հաղթահարվեն վերարտադրության ձևախախտված համամասնությունները, ու տնտեսության մեջ մրցակցային պայմաններ ստեղծվեն:

<sup>1</sup> [https://en.wikipedia.org/wiki/Washington\\_Consensus](https://en.wikipedia.org/wiki/Washington_Consensus)

## **Նորագույն տեխնոլոգիաները և արդիականացման պահանջը**

Հայաստանյան ռեֆորմների երեքտասնամյա արդյունքների վերլուծությունն ու հետահայաց գնահատականը ցույց է տալիս, որ չափազանցված ակնկալիքները բավականին խնդրահարույց էին: Ակնհայտ էր, որ կատարված քայլերի ու բարեփոխական որոշումների արդյունքում շուկայական սկզբունքները կարող էին գործել միայն տնտեսության **ավանդական** ու **պարզունակ տեխնոլոգիաների** վրա հիմնված արտադրությունների պարագայում, որոնք գլխավորապես միտված էին դեպի ներքին շուկայի պահանջարկը, քանզի այդտեղ լուրջ ներդրումների, տեխնոլոգիաների նորացման կամ արմատական կառուցվածքների փոփոխությունների մեծ կարիք չկար: Սակայն, երբ խնդիրը վերաբերում էր զարգացած ու գիտատար տեխնոլոգիական արտադրություններին, որոնք կողմնորոշված էին դեպի արտաքին շուկաներ, զանգվածային մասնավորեցումը, գների ազատականացումը կամ տնտեսության փակության վերացումը կարող էին նրանց զարգացման համար ընդամենը անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայմաններ հանդիսանալ: Բարձր տեխնոլոգիական և միջազգային շուկաներում մրցունակ արտադրությունների զարգացումը հրամայաբար պահանջում էին մեծածավալ երկարաժամկետ ներդրումներ, առանց որոնց մրցունակ արտադրանքի թողարկման ու առավել ևս՝ դրանց արտահանման մասին խոսելն ավելորդ էր:

Հայաստանի տնտեսության գլխավոր խնդիրն, այդպիսով, երկարաժամկետ ներդրումների միջոցով **տեխնոլոգիաների արդիականացման** մեջ էր: Այս խնդիրը, ի վերջո, պետք է լուծեր համակարգային բարեփոխումների քաղաքականությունը: Սակայն, կյանքը ցույց տվեց, որ արտաքին առևտրի կտրուկ ազատականացումը և զանգվածային մասնավորեցումը չկարողացան լուծել տնտեսության արդիականացման խնդիրը: Զանգվածային ներմուծումը, որը հինված էր ազգային դրամի փոխարժեքի շարունակական ամրապնդման վրա, և, մյուս կողմից, ուղեկցվում էր արտաքին ներդրումների բազմաթիվ վարչական և օրենսդրական սահմանափակումներով ու անբարենպաստ ներդրումային միջավայրի խոչընդոտներով, հանգեցրեց հայրենական ապրանքների նկատմամբ պահանջարկի կտրուկ սահմանափակմանը, ինչը սկզբունքորեն հակառակ արդյունքները տվեց, քան ակնկալվում էր բարեփոխումների ծրագրով: Այն է՝ Հայաստանի տնտեսությունը առավելագույնս ինտեգրել համաշխարհային տնտեսությանը, հաշվի առնելով գլոբալացման արդի միտումները:

Մինչդեռ, հատկապես վերջին տասնամյակի ընթացքում, միջազգային ասպարեզում առկա գործընթացներին ակներևաբար բնորոշ են ինտեգրացման միտումները: Տեղեկատվության և էլեկտրոնային հաղորդակցության բնագավառներում կատարվող վիթխարի թռիչքը, ցանցային տեխնոլոգիաների ու բիզնես-մոդելների զարգացումը նպաստում են երկրների միջև առկա կապերի սերտացմանը: Սա էլ իր հերթին հնարավորություն է ընձեռում առավել թույլ ու աղքատ երկրների կողմից առաջատար երկրների տեխնոլոգիական ձեռքբերումների արագ ընդօրինակմանն ու յուրացմանը:

Այդուհանդերձ, հատկապես ետխորհրդային տարածքի երկրներում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում, ընթացող բարեփոխումների քաղաքականության հիմքում դրվեցին տեսական հիմնադրույթներ, որոնք առնվազն մի քանի տասնամյակի վաղեմություն ունեին: Այդ շրջանի տեսական հետազոտողների մի մասի մոտ արմատացած էր այն տեսակետը, ըստ որի, այլ հավասար պայմաններում երրորդ աշխարհի թույլ զարգացած երկրները զարգացման ավելի բարձր տեմպեր պետք է ունենան, մասնավորապես, տնտեսական աճի ցուցանիշի գծով, քան՝ առաջատար նորարդյունաբերական երկրները: Հիմնավորումն այսպիսին էր՝ զարգացող երկրները կարող են առանց լրացուցիչ նախապատրաստական ծախսերի անմիջականորեն օգտագործել զարգացած երկրների ստեղծած նոր տեխնիկական և բարձր արդյունաբերական տեխնոլոգիաները: Այսինքն՝ ազգային տնտեսության մրցակցային առավելությունների ձևավորման մեջ զարգացման թռիչքաձևության գործոնին վճռական նշանակություն էր տրվում:

Ենթադրվում էր, որ համաշխարհային առևտրի խորացումը բերելու է նրան, որ նորագույն տեխնոլոգիաները, մասնագիտական գիտելիքները և արդիական կառավարման համակարգերը շատ արագ կփոխանցվեն դեպի երրորդ աշխարհի և անցումային փուլում գտնվող ետխորհրդային տարածքի երկրներ և կդառնան ավելի արագ տնտեսական աճի գործուն ազդակներ: Այդ շրջանում տեսաբանները նկարագրելով տնտեսական աճի համեմատական բնութագիրը, որպես այն պայմանավորող գործոններ առանձնացնում էին ինստիտուցիոնալ փոփոխությունները, միջազգային մասնագիտացման խորացումը և առևտուրը, տեխնոլոգիական փոփոխությունները և նորամուծությունների գործընթացը, ներդրումների ակտիվացումը և այլն: Ժամանակ առ ժամանակ առաջին պլան էր մղվում այս կամ այն գործոնը: Այդ շրջանի հայտնի տեսաբաններից մեկը՝ ամերիկյան տնտեսագետ **Արթուր Լյուիսը** զարգացումն ապահովող գործոնների մեջ շեշտը դնում էր հատկապես կապիտալի կուտակման սահմանափակումների հաղթահարման և ռեսուրսների առավել արդյունավետ բաշխման վրա<sup>2</sup>: Սակայն, կյանքը ցույց տվեց, որ ներդրումների (ինչպես արտաքին, այնպես էլ՝ ներքին) հոսքերի ակտիվացումը դեռևս տնտեսական աճի արագացման ռեալ երաշխիք լինել չի կարող: Միևնույն ժամանակ, ամբողջությամբ չի հաստատվում այն հետևությունը, թե, երրորդ աշխարհի առավել թույլ զարգացած և անցումային փուլում գտնվող երկրները պետք է ավելի արագ տեմպերով զարգանան, քան զարգացման մեջ առաջ անցած երկրները:

Համակարգափոխությանն առնչվող տեսակետներից մեկը ևս գործնական կյանքի ճնշման տակ հարկ եղավ վերանայել: Այդ տեսակետի համաձայն, մի համակարգից մյուսին անցման ու զարգացման սկզբնափուլում, բարեկեցության ճեղքվածքը հասարակության առավել հարուստ և առավել աղքատ շերտերի միջև, որպես կանոն, խորանում է: Սակայն, տարբեր երկրների փորձի համե-

---

<sup>2</sup> Lewis, W. Arthur. (1955). The Theory of Economic Growth. Reprint, New York. Harper Torchbooks, 1970. Pg. 98



մատուցությունը թույլ չի տալիս նման միանշանակ հետևություն անել: Հատկապես Հարավարևելյան Ասիայի նոր արդյունաբերականացած երկրների զարգացման փորձը հակառակն է ապացուցում: Մինչդեռ, ետխորհրդային տարածքում առաջացած անկախ պետությունների բարեփոխումների փորձը մասամբ հաստատում է այդ իրողությունը: Դժվար է, իհարկե, վերջին տասնամյակի ընթացքում ետխորհրդային տարածաշրջանի երկրներում, այդ թվում և՛ Հայաստանում, տեղի ունեցող ընթացքներին «զարգացում» բնորոշումը տալ, սակայն, փաստ է, որ այս ընթացքում հարստության և աղքատության միջև անջրպետը այդ երկրներում ծայրահեղ խորացել է: Ահավասիկ, հայաստանյան սոցիալական իրողությունները դրա վկայությունն են:

### **Ազատական ռեֆորմները և ռենտագոյացնող տնտեսությունը**

Ակնհայտ է, որ անկախության հռչակումից ի վեր Հայաստանում ընթացող տնտեսական բարեփոխումների նպատակները բխել են 70-80-ական թվականներին Արևմուտքի զարգացած երկրներում արմատավորված ազատական տնտեսական մոդելի նմանակման պահանջներից: Թերևս, ռազմավարական տեսանկյունից նման մոդելի ընտրությունը միանգամայն արդարացված էր. ազատ ձեռնարկատիրության և տնտեսական որոշումների ընդունման ապակենտրոնացված համակարգին անցումը թվում է թե այլընտրանք չունեք, քանի որ վարչահրամայական տնտեսակարգի՝ էքստենսիվ ու ռեսուրսների ծախսողական մեխանիզմների վրա հիմնված համակարգը այլևս անկարող էր ապահովել տնտեսական աճի և բարեկեցության հետագա բարձրացման պահանջները:

Հիմնային ռեսուրսների, առաջին հերթին՝ էներգակիրների, ահագնացող սակավությունը վարչակենտրոնացված համակարգը հասցրել էր կայթվածի: Երբեմնի հզոր Խորհրդային Միության քաղաքական համակարգի «լուծարումը» իր հետ տնտեսական կապերի կազմալուծման ու խզման մի աննախադեպ շղթա էր առաջացրել: Այս պայմաններում նախկին ԽՍՀՄ անկախացած տնտեսությունների գործունեությունը, թեկուզ նվազագույն չափով, ապահովելու համար նորաթուխ ազգային-քաղաքական վերնախավերը ազատական բարեփոխումները դիտում էին որպես իրավիճակը ինչ-որ կերպ վերահսկելի դարձնելու միակ հնարավոր տարբերակը:

Ազատական վերափոխումների հռչակվող սկզբունքները հանգում էին հետևյալին.

- տնտեսական իշխանության և ռեսուրսների բաշխման կենտրոնացված-պլանային և գերկենտրոնացված համակարգից անցում շուկայական և ազատ մրցակցության սկզբունքների վրա հիմնված տնտեսավարման համակարգի,
- պետական սեփականության մենաշնորհի վերացում, տնտեսական ուժի ապակենտրոնացում և բազմասեփականության սկզբունքների արմատավորում,
- հիմնարար շուկայական ենթակառուցվածքների և տնտեսական ժողովրդավարությանն հարիր ինստիտուտների և իրավաօրենսդրական միջավայրի ձևավորում,

- մի կողմից՝ տնտեսությանը պետական իշխանության ուղղակի միջամտության առավելագույն սահմանափակում, մյուս կողմից՝ ներդրումների և արդյունավետ մակրոտնտեսական պահանջարկի ըստ ամենայնի խրախուսման մեխանիզմների ստեղծում,
- մակրոտնտեսական կայունության ապահովում՝ առաջին հերթին գնաճի զսպման, պետական բյուջեի դեֆիցիտային ֆինանսավորման բացառման և նրա երկարաժամկետ հավասարակշռության ապահովման միջոցով,
- արտաքին տնտեսական հարաբերությունների և միջազգային տնտեսական կապերի ազատականացում, ազգային տնտեսության բացության աստիճանի բարձրացում:

Տնտեսաքաղաքական համակարգափոխության ազատական մոդելին գերապատվություն տալը ինչպես Հայաստանի այնպես էլ ԱՊՀ երկրների կառավարությունների կողմից, թերևս, մի շարք բացատրություններ ուներ:

**Նախ՝** միայն նման մոդելի ընտրության դեպքում էր հնարավոր ակնկալել Արևմուտքի հզոր ֆինանսական կառույցների (Համաշխարհային բանկ, Արժույթի միջազգային հիմնադրամ և այլն) համապարփակ աջակցությունը վարվող տնտեսական ուղեգծին: **Երկրորդ՝** ազատական վերափոխումների սկզբնափուլում բարեփոխական կառավարությունները վայելում էին հասարակության անվերապահ աջակցությունը կամ էլ, ծայրահեղ դեպքում, բացակայում էր ընդգծված դիմակայությունը վարվող ուղեգծին: **Երրորդ,** հասարակության մեջ նշանակալից ոգևորություն կար ժողովրդավարության արտաքին հատկանիշների յուրացման և Արևմուտքի տնտեսական և սոցիալական ձեռքբերումների փորձը ընդօրինակելու նկատմամբ, ու, միաժամանակ, թերագնահատվում էին հնարավոր բարդությունները:

Թերևս, տնտեսական բարեփոխումների **ազատական մոդելի** ընտրությունը թելադրված էր նաև քաղաքական շարժառիթներով: Ենթադրվում էր, որ որքան արագ ընթանա հին, վարչապլանային համակարգի կազմաքանդումը, այնքան ավելի փոքր կլինեն այն վերակենդանացնելու հնարավորությունները, իսկ բարեփոխումները կլինեն անշրջելի, միաժամանակ՝ անհամեմատ ավելի ցածր կլինի դրանց «սոցիալական գինը», իսկ կորուստները՝ նվազագույն: Ընդամին, ազատական բարեփոխումների հաջողության նախադրյալներից մեկը դիտվում էր հասարակական համաձայնության մթնոլորտի ձևավորումը: Դա, ըստ էության այն է, ինչը քաղաքացիական հասարակություններում շահերի ներդաշնակեցման հիմնական կռվան է համարվում: Ըստ այդմ՝ համաձայնությունը պետք է կայանա իշխանության, կապիտալի և գործավորների միջև: Սակայն, անցումային փուլում գտնվող երկրների համար շատ կարևոր է, թե բարեփոխումների ընթացքում պետական սեփականության «ապամոնտաժման» ի՞նչ սխեմա է ընտրվում և սեփականության իրավունքների բաշխման ինչպիսի՞ կառուցվածք է ձևավորվում: Առանց այս խնդրի լուծման անհմաստ է խոսել կենտրոնացված տնտեսական ուժի «ապակենտրոնացման-ցրման», հասարակական համաձայնության կայացման և հասարակական շահերի ներդաշ-

նակեցման մասին:

Մյուս կողմից, տրամաբանական կլիներ ակնկալել, որ բարեփոխումների նպատակների մեջ հիմնականը պետք է լիներ հասարակության և տնտեսության արդիականացման պահանջը: Դա նշանակում է, որ **ինստիտուցիոնալ փոփոխությունները** պետք է լինեին ոչ թե ինքնանպատակ, այլ՝ միտված իրավական պետության կայացմանը, քաղաքական կառավարման, տնտեսական և սոցիալական նոր «տեխնոլոգիաների» յուրացմանը: Ավելորդ չէ նկատել, որ Արևմուտքի ու զարգացած Արևելքի բարգավաճ հասարակությունների ազատականության արդի մոդելները բացառապես արդյունավետության ու արտադրողականության չափանիշների վրա չեն հիմնված: Դրանք նաև ենթադրում են ժողովրդավարական համակարգերին բնորոշ արդարացի բաշխման սկզբունքների գործադրում: Այդ հասարակությունները վաղուց են անցել այն շրջանը, երբ սոցիալ-տնտեսական երկու հայեցակարգերը՝ արմատական ազատականությունը և սոցիալ-դեմոկրատիան, հակամարտող ու փոխբացառող գաղափարախոսություններ էին: Նման հասարակություններում բարեկեցության աստիճանը որոշվում է ոչ միայն ու ոչ այնքան հարստության քանակական աճի պարամետրերով, այլ նրանով, թե ինչպես է այն բաշխված հասարակական խավերի միջև, ու նրա արդյունքները որքանով են մատչելի հասարակության բոլոր անդամներին: Այսինքն՝ խոսքը այստեղ զարգացման ներառականության և մասնակցային տնտեսության ձևավորման մասին է<sup>3</sup>:

Կարելի է արձանագրել, որ շուրջ երկու տասնամյակ Հայաստանի Հանրապետությունում միակողմանիորեն անցկացված ինստիտուցիոնալ և կառուցվածքային բարեփոխումները չուղեկցվեցին տնտեսության մեջ առաջադիմական տեխնոլոգիական և ֆունկցիոնալ տեղաշարժերով: Այս պայմաններում, չնայած շարունակ մատուցվող մակրոտնտեսական «կայունության ու հավասարակշռության» ապահովման կարգախոսներին, այդուհանդերձ, մակրոտնտեսական իրավիճակը երկարաժամկետ առումով մնում է խիստ լարված: Գլխավորապես արտաքին վարկերի ու դրամաշնորհների միջոցով բյուջեում գոյացած ահռելի ճեղքվածքի ծածկման համար բարեփոխումների արդյունքում այդպես էլ համապատասխան ներքին «փոխարինիչներ» չստեղծվեցին՝ հանձին տնտեսության արդյունավետ ու մրցունակ իրական հատվածից գանձվող ուղղակի հարկերի: Ինչպես բարեփոխումների արշալույսին էր, ներկայում էլ բյուջեի հարկային մուտքերի առյուծի բաժինը գոյանում է անուղղակի հարկերից ու դեռևս չի զգացվում, թե այս միտումը կարող է արմատապես փոխվել: Իսկ երկրի պետական պարտքը հասել է շուրջ 7 միլիարդ դոլարի<sup>4</sup>:

Հայաստանում շուրջ երկու տասնամյակ իրականացված ազատական ռեֆորմների հետևանքով, ըստ էության, գոյացել է ոչ թե ազատական-մրցակցային, այլ **ռենտագոյացնող տնտեսություն**: Ետխորհրդային շատ փորձա-

<sup>3</sup> ՀՀ կառավարության ծրագիր 2019// 5.2.Ստեղծարար ներուժի ընդլայնումը և իրացումը/ էջ 39-40: <http://www.gov.am/files/docs/3133.pdf>

<sup>4</sup> [https://www.armstat.am/file/article/sv\\_02\\_19a\\_221.pdf](https://www.armstat.am/file/article/sv_02_19a_221.pdf)

գետ-գիտնականներ հակված են ուղիղ համեմատական կապ տեսնել տնտեսական ազատության աստիճանի և տնտեսական աճի միջև: Մինչդեռ ազատականության զուտ քանակական ու միակողմանի ըմբռնումը շատ դեպքերում կարող է խեղաթյուրել իրերի իրական վիճակը: Ասենք, ելնելով միայն համախառն ներքին արդյունքի մեջ պետության ծախսերի ավելի ցածր մակարդակից՝ դատել ազատականության ու տնտեսությանը պետության ավելի նվազ միջամտության մասին, մեր կարծիքով, այնքան էլ հիմնավորված մոտեցում չէ:

Համակարգայնորեն կերպափոխվող տնտեսության համար տնտեսական աճի բարձր մակարդակը, մեր կարծիքով, էական չափանիշ չի կարող լինել այն պարագայում, երբ այդ աճը ձեռք է բերվում գոյություն ունեցող վերարտադրական անհամամասնությունների ու կառուցվածքային ձևախեղումների պահպանման ճանապարհով: ՀՀ տնտեսության մեջ 2000-ական թվականների երկնիշ տնտեսական աճի պատմությունը դրա ակնառու ապացույցն է: Մինչդեռ, ավելի կարևոր է, թե տնտեսության իրական հատվածը ինչպե՞ս է կառուցվածքայնորեն վերափոխվում նոր՝ շուկայական խաղի կանոնների ու ավելի արդիական տեխնոլոգիաների հենքի վրա: Այս պայմաններում տնտեսական աճը նույնիսկ կարող է լինել ոչ այնքան բարձր: Սա նշանակում է, որ տնտեսության համակարգափոխության պայմաններում պետք էր «տնտեսական զարգացում» հասկացությունը հստակորեն տարանջատել «տնտեսական աճ» հասկացությունից: Այսինքն, տնտեսության ինստիտուցիոնալ և արմատական կառուցվածքային վերափոխումների փուլում գերապատվությունը պետք տրվեր գիտության և բարձրակարգ տեխնոլոգիաների հենքի վրա տնտեսական զարգացման, այն է՝ նորացման և արդիականացման խնդրի լուծմանը, իսկ տնտեսական աճը ընկալվեր և արժևորվեր որպես տնտեսական զարգացման օբյեկտիվ հետևանք: Սակայն, մեր տնտեսության մեջ այդ իրողությունները բացակայել են:

Թերևս, ճիշտ է նկատում ժամանակակից ինստիտուցիոնալիզմի խոշոր տեսաբաններից մեկը՝ **Դ.Նորթը**, շեշտելով, թե՛ «Տնտեսական զարգացման հետազոտողների հիմնական սխալն այն է, որ նրանք իբրև տնտեսական աճի գլխավոր գործոն են համարում տեխնոլոգիայի զարգացման մակարդակը: Իրականում, աճի հանգուցային գործոնը ինստիտուցիոնալ կառուցվածքն է և նրա ազդեցությունը ոչ միայն տեխնոլոգիական հայտնագործությունների և նորամուծությունների, այլև՝ արտադրական գործընթացի առավել արդյունավետ կազմակերպման, ապրանքների և ռեսուրսների շուկաներում տրանսակցիոն ծախքերի իջեցման, պայմանագրերի կատարման վրա վերահսկողության իրավական մեխանիզմների ստեղծման, սեփականության իրավունքների պաշտպանության խթանների վրա, իսկ ամենակարևորն է՝ այդ խթանների պահպանման վրա»<sup>5</sup>: Բնականաբար, տնտեսության համակարգափոխության գործընթացները դիտարկելիս, ու առավել ևս՝ նոր քաղաքականություն մշակելիս, անհրա-

<sup>5</sup> **North, Douglass Cecil.** Understanding the process of economic change. Princeton University Press. Pp.127-145. [https://zodml.org/sites/default/files/%5BDouglass\\_C.\\_North%5D\\_Understanding\\_the\\_Process\\_of\\_E\\_O.pdf](https://zodml.org/sites/default/files/%5BDouglass_C._North%5D_Understanding_the_Process_of_E_O.pdf)

ժեշտ է հաշվի առնել նախընթաց զարգացման ողջ ժամանակահատվածի թողած ժառանգությունը: Այս առումով, հարկ է նկատել, որ, գտնվելով զարգացման որոշակի փուլում, հասարակության համար չափազանց բարդ է արագորեն արմատապես փոխել զարգացման վեկտորը: Վերստին ճիշտ է Դ.Նորթը, երբ գրում է, որ «երկարաժամկետ լճացման տնտեսությանը շատ դժվար է միանգամից վերածել կայուն ու դինամիկ աճի տնտեսության և հակառակը»<sup>6</sup>:

Կարելի է արձանագրել, որ տնտեսական հաստատված մոդելի գործադրումը տասնամյակներ շարունակ բարձր եկամուտներ է ապահովել, ըստ էության, բնակչության մի փոքրաթիվ խմբին, այսպես կոչված, **էլիտային**: Վերջինիս բարեկեցությունը շարունակաբար աճել է անգամներով, իսկ հասարակության գերակշիռ մասի բարեկեցությունը չի աճել, կամ աճել է սողացող տեմպերով, ու այս մոդելը այլևս սպառել է իրեն: Մյուս կողմից, մասնավոր տրանսֆերտների աճը, ըստ էության ապահովվել է արտագաղթի հաշվին, մինչև մարդիկ դուրս են տարել իրենց ընտանիքները, երեխաներին և մյուս աղքյուրը՝ հանքարդյունաբերական արտադրանքն ու հայրենի մյուս բնական ռեսուրսները: Տնտեսությունը զարգացել է վերավաճառքի վրա: Սա է եղել տնտեսական մոդելի տրամաբանությունը:

### **ՀՀ բարձրտեխնոլոգիական սեգմենտի զարգացման որոշ արդյունքներ**

Չնայած այն բանին, որ վերջին տասնամյակների ընթացքում Հայաստանում ձևավորված տնտեսական մոդելը, գործադրված տնտեսական կարգավորման համակարգը, ներառյալ դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունները ամենևին բարենպաստ չեն եղել գիտության, բարձր տեխնոլոգիաների և նորամուծությունների զարգացման համար, այդուհանդերձ, տնտեսության որոշ բարձրտեխնոլոգիական հատվածներ տպավորիչ զարգացում են ունեցել, այսպես ասած, ինքնաշխատ (ավտոմատ) ռեժիմով: Խոսքը տեղեկատվական ու հաղորդակցության տեխնոլոգիաների մասին է: Բավական է նշել, որ 2018թ. արդյունքներով տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների թիվը հասել էր 800-ի, որտեղ աշխատում էին 19.552 աշխատողներ, իսկ համախառն թողարկման ծավալը կազմել է 922,3 միլիոն դոլար, 1 աշխատողի արտադրողականությունը՝ 50,3 հազար դոլար<sup>7</sup>: Այս բնագավառի միջին տարեկան աճը, որը վերջին տասնամյակում կազմել է 23.1 տոկոս, բազմակի անգամ գերազանցել է ՀՀ ՀՆԱ-ի աճի տեմպերը:

Մասնագիտական գնահատականներով, առաջիկա տասնամյակում աշխարհում թվային տեխնոլոգիաների և ծրագրային ապահովման միջոցների, արհեստական բանականության վրա հիմնված համակարգերի բուռն զարգացումը հանգեցնելու է այդ բնագավառի ու դրան հարակից մի շարք այլ ոլորտ-

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> SCS ոլորտը Հայաստանում. Հայաստանում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի հետազոտություն-2018թ., Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, էջ 57-58: <http://www.eif.am/arm/researches/report-on-the-state-of-the-industry/>

ների (նանոտեխնոլոգիաներ, կենսատեխնոլոգիաներ և բիոինժեներիա, կոգնոտեխնոլոգիաներ և մարդու առողջությանն ուղղված միջոցներ և այլն) մեծ հնարավորություններ են ստեղծում Հայաստանի Հանրապետությունում բարձրտեխնոլոգիական թռիչք ապահովելու համար: Այդ տեսակետից բոլոր նախադրյալները մարդկային ռեսուրսների, կրթական ներուժի, գիտական և ինժեներական համակարգերի առկա են: Ինդիքը համապատասխան քաղաքականությունների և ինստիտուցիոնալ համակարգերի ձևավորման մեջ է:

Վերը նշված խնդրի լուծումը պահանջում է անցում կատարել **նոր արդյունաբերական քաղաքականության՝** այսպես կոչված չորրորդ արդյունաբերական հեղափոխության (4.0) տեխնոլոգիաներին անցման համատեքստում: 4.0 արդյունաբերական տեխնոլոգիաները առաջիկա տասնամյակների ընթացքում աշխարհի առաջատար գիտելիքահենք տնտեսությունների դեմքն ու մրցունակությունը որոշող գլխավոր գործոններն են լինելու: Խոսքը վերաբերում է, այսպես կոչված, **NBIC-տեխնոլոգիաներին**, որոնք ներառում են չորս խումբ տեխնոլոգիական ուղղություններ՝ **նանո** (սկզբնատառը՝ N-nano), **կենսաբանական** (սկզբնատառը՝ B-Bio), **ինֆորմացիոն** (սկզբնատառը՝ I-info), **կոգնիտիվ** կամ սոցիալական (C-cogno) տեխնոլոգիաների համատեղ կամ համադրված զարգացմանը:

Աշխարհի այն երկրները, որոնք իրենց ապաարդյունաբերականացված կամ տարբեր պատճառներով քայքայված տնտեսությունները վերականգնելու և նոր արդյունաբերական հենքի վրա դրանք արդիականացնելու խնդիր ունեն, տեխնոլոգիական համալիր զարգացման փունջը կարող են օգտագործել տնտեսական թռիչք ապահովելու համար: Խոսքը վերաբերում է հատկապես այն երկրներին, որոնք զուրկ են հիմնային ռեսուրսներից և էներգակիրներից, և որոնց զարգացման հիմնական գործոնը որակյալ մարդկային ռեսուրսներն են ու գիտելիքատար ու տեխնոլոգիատար արտադրություններ ստեղծելու ու զարգացնելու կարողություններ ունեն: Այս տեսակետից Հայաստանի Հանրապետության **NBIC** տեխնոլոգիական կլաստերի վրա հիմնված տնտեսության զարգացումը այլընտրանք չունի:

Նկատենք, որ նախորդ տասնամյակների ընթացքում Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ ստեղծվել են նշված տեխնոլոգիական փնջի տեխնոլոգիաների գեներացման լուրջ նախադրյալներ, մասնավորապես գիտահետազոտական, կրթական (համալսարանական), տնտեսական (արտադրական), սոցիոմշակութային տպավորիչ բաղադրիչների տեսքով: ԽՍՀՄ ժամանակաշրջանից ի վեր ՀՀ-ում այն ժամանակվա չափանիշներով զարգացած է եղել և՛ բիոտեխնոլոգիաների, և՛ ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտը: Հետանկախական ժամանակահատվածում որոշակիորեն զարգացել են նաև նանո-տեխնոլոգիական հետազոտությունները և կիրառական մշակումները:

Մյուս կողմից, վերջին տասնամյակների ընթացքում իրականացված լիբերալ-արմատական բարեփոխումները հանգեցրել են ՀՀ տնտեսության իրական հատվածի քայքայմանը և ապաարդյունաբերականացմանը, ինչի հետևանքով

տեղի է ունեցել մարդկային ռեսուրսների որակի անկում, աշխատուժի որոշակի մասի դեգրադացիա, դրա մի մասը արտագաղթել է: Այս պայմաններում այսպիսի բացասական զարգացման միտումները կանխելու և տնտեսական գործընթացներին դրական դինամիկա հաղորդելու որոշիչ ճանապարհը կարող է լինել **նորարդյունաբերականացումը**՝ հիմնված նորագույն տեխնոլոգիական մշակումների վրա: Հետազոտական այս նախագծի առանցքում դրված է լինելու այս անցումն ապահովող տեսական հիմքերի մշակումն ու գիտագործնական հանձնարարականների ձևակերպումը:

Հատկապես վերջին տասնամյակի ընթացքում տեղեկատվական տեխնոլոգիաների բուռն զարգացումը թույլ է տալիս եզրակացնել, որ համապատասխան ինստիտուցիոնալ համակարգի, պետական տնտեսական քաղաքականության ու խթանման համապատասխան գործիքակազմի մշակման և կիրառման դեպքում Հայաստանի Հանրապետությունը ի վիճակի է լինելու սանձել 4.0 արդյունաբերական տեխնոլոգիաները և այդ հենքի վրա տնտեսական մեծ թռիչք ապահովել: Հարկ է նկատել, որ հատկապես վերջին տարիներին նախորդ մի քանի կառավարությունների կողմից արվել են որոշակի հովանավորչական քայլեր, և ընդունվել ու տրամադրվել են մի շարք բարենպաստ արտոնություններ, մասնավորապես, շահութահարկի և եկամտային հարկի գծով, որոնք արագացրել են տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի աճը:

Բիզնեսի սկսման և վարման ծախսերի առումով Հայաստանում պայմանները նույնիսկ ավելի նպաստավոր են, քան Եվրոպայում, Կենտրոնական Ասիայում և ՏՀԶԿ անդամ երկրներում: Ներկայումս օտարերկրյա ներդրողները կարող են օգտվել նաև հետևյալ արտոնություններից.

- Գույքի նկատմամբ 100% սեփականության ապահովում,
- Հայաստանում գրանցված օտարերկրյա ընկերությունները կարող են գնել հող,
- Ազատ տնտեսական գոտիներ. Հայաստանի Հանրապետության ազատ տնտեսական գոտիների շահագործողներն ազատված են շահութահարկի, ավելացված արժեքի հարկի, գույքահարկի և մաքսատուրքի վճարման պարտավորություններից: Գոտում պետական մարմինների կողմից ծառայությունները մատուցվում են «մեկ պատուհան» սկզբունքով,
- ԱԱՀ վճարումը հետաձգվում է մինչև 3 տարի ժամկետով՝ ներդրումային ծրագրերի շրջանակում սարքավորումների և ապրանքների ներմուծման նպատակով,
- օտարերկրյա ներդրումները կարգավորող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության փոփոխության դեպքում ներդրման պահից սկսած 5 տարվա ընթացքում, օտարերկրյա ներդրողի ցանկությամբ, կիրառվում է ներդրումների իրականացման պահին գործող օրենսդրությունը,
- ներդրումների համար աշխարհագրական կամ ոլորտային սահմանափակումների բացակայություն,
- գույքի և շահույթի ազատ ու անսահմանափակ ռեպատրիացիա,

- օտարերկրյա արժույթի ազատ փոխարկում,
- օտարերկրյա աշխատողների անձնական իրերի մաքսատուրքից ազատում,
- բնական ռեսուրսների շահագործում կոնցեսիոն պայմանագրերի միջոցով,
- սահմանափակումների բացակայություն աշխատակազմի հավաքագրման համար:

Երկայում Հայաստանն ունի ստորագրված և գործողության մեջ դրված ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության երկկողմ համաձայնագրեր շուրջ 40 երկրների հետ, և այժմ բանակցություններ են ընթանում ևս 24 երկրների հետ<sup>8</sup>: Այդուհանդերձ, առաջիկա տեխնոլոգիական զարգացման մարտահրավերները պահանջում են օրենսդրական լայնածավալ փոփոխություններ և բարենպաստ տնտեսական քաղաքականության ավելի արդիական գործիքակազմեր:

### **«Տնտեսական հեղափոխության» մարտահրավերը. չեզոք գնահատական**

**Նկատենք, որ «տնտեսական հեղափոխություն»** եզրույթը առավելապես քաղաքական հոետորաբանության ժանրից է: Այն բնորոշ է քաղաքական գործիչներին, երկրների ղեկավարներին, կուսակցությունների առաջնորդներին և այլն: Մինչդեռ, տնտեսական քաղաքականություն իրականացնող պատասխանատուների և որոշում կայացնողների համար նախ հարկավոր է **ախտաճանաչել կամ ախտորոշել համակարգային խնդիրները**, իրերը կոչել իրենց անուններով ու հասկանալ՝ թե որտեղ է գտնվում երկրի տնտեսությունը, ինչ է իրենց ներկայացնում, ունի՞ արդյոք արագ արդիականացման հեռանկար, թե՞ ոչ: Ակնհայտ է, որ տնտեսությունը զարգացնելու համար մեզ անհրաժեշտ է նոր արդյունաբերական քաղաքականություն, անհրաժեշտ է, որպեսզի բանկերը ստեղծեն երկար փողեր ու երկարաժամկետ ցածր տոկոսներով վարկեր՝ հենց տնտեսության ռեալ հատվածի վարկավորման համար: Նման բան չկա: Մեզ հարկավոր է նոր տիպի դրամավարկային քաղաքականություն, նոր տիպի հարկաբյուջետային քաղաքականություն:

Տնտեսական հեղափոխության մասին խոսելիս պետք է շատ զգույշ լինել: Իհարկե, կարելի է մի գիշերվա մեջ քաղաքական հեղափոխություն կամ հեղաշրջում անել: Բայց տնտեսությունը այլ՝ ավելի բարդ համակարգ է, այն ունի կառուցվածքային իր մակարդակները՝ մակրո, մեզո- (միջին կամ ճյուղային), միկրո և վերջապես անհատական ձեռնարկատիրության կամ ինքնազբաղվածության մակարդակ, որոնցից յուրաքանչյուրը յուրովի է արձագանքում քաղաքական և ինստիտուցիոնալ փոփոխություններին: Ու **պարադոքսն այն է**, որ որպեսզի տնտեսության մեջ տեղի ունենան դինամիկ, առաջադիմական ու վերընթաց փոփոխություններ, անհրաժեշտ է մակրոմակարդակում ոչ թե հեղափոխություն, այլ կայունություն, մեզոմակարդակում անհրաժեշտ են համարժեք

<sup>8</sup> Տե՛ս SCS ոլորտը Հայաստանում. Հայաստանում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի հետազոտություն-2018թ., Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, էջ 4-5: <http://www.eif.am/arm/researches/report-on-the-state-of-the-industry/>



ու ճակատային փոփոխություններ, որպեսզի տնտեսության այս կամ այն ճյուղը բովանդակային առումով կայանա, այլապես շուկաներում մենատիրությունը կամ խմբիշխանությունը անխուսափելի են: Դրանում պետք է աշխատի մրցակցության և շուկաների ընտրողական մեխանիզմը: Ու միկրոմակարդակի վրա միանշանակ չէ հեղափոխություն ասվածը. այնտեղ նախ ցանկացած ընկերություն խնդիր ունի մի կողմից պահպանողական վարքագիծ դրսևորել՝ արդեն ներդրված ու գնորդների կայուն զանգված ապահոված ու, հետևաբար, կայուն շահույթներ ապահովող ապրանքների ու ծառայությունների հարցում, մյուս կողմից պարտավոր է լինել նորարար՝ ստեղծելով նոր պահանջարկ՝ սկզբունքորեն նոր ապրանքներով ու ծառայություններով:

Սակայն խնդիրը ո՞րն է. Հայաստանի Հանրապետությունում տեղի է ունեցել քաղաքական հեղափոխություն, սակայն տնտեսական քաղաքականությունը մնացել է 90-ական թվականների նեոլիբերալ մտածողության շրջանակներում: Մեզ թվում է, որ եթե ապահովվի կայուն մակրոտնտեսական իրավիճակ, ասենք գների կայունություն, բյուջեի դեֆիցիտի տանելի իրավիճակ, ապա ինչ-որ «բարի ներդրողներ» դուրսից կգան ու Հայաստանում նոր ձեռնարկություններ կհիմնեն իրենց կապիտալով, տեխնոլոգիաներ կբերեն ու ներդրումներ կանեն, աշխատատեղեր կստեղծեն, ու տնտեսությունը կաճի: Սակայն հարց տանք՝ որքանով է մեր տնտեսությունը պատրաստ դրան: Օրինակ, ինչպիսին է մեր տնտեսության դրամավարկային միջավայրը: Դրամական զանգված/ՀՆԱ հարաբերակցությունը սարսափելի ցածր է: Այսպիսի քաղաքականությամբ մենք հեռու չենք գնա: Որպեսզի տնտեսության մեջ զարգանան բարձր տեխնոլոգիաները մեզ հարկավոր է դուրս գալ մոնետար և նեոլիբերալ մտածողության շրջանակներից ու իրականացնել վերջապես նոր տիպի՝ էվոլյուցիոն դրամավարկային քաղաքականություն: Սակայն դրա համար անհրաժեշտ է դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների արմատական վերանայում:

Երկար փողեր՝ հասանելի ֆինանսական միջոցներ տնտեսության ռեալ հատվածը՝ արդյունաբերությունը, զարգանալու համար պետք է ստեղծի դրամական համակարգը: Այսինքն՝ նոր **արդյունաբերականացման** համար մեզ անհրաժեշտ է ունենալ երկարաժամկետ զարգացման ծրագիր՝ ռազմավարություն և հետևողական հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության աջակցություն այդ բնագավառներին: Ինչպիսի՞ն է մեր բանկերի լիկվիդայնությունը՝ դրանք իհարկե բավարար կապիտալիզացված են, փող կա, սակայն նրանք տրտնջում են թե՛ ուշագրավ ու գրավիչ ներդրումային ծրագրեր չկան: Սակայն անհրաժեշտ է որպեսզի ավելացվի իրական և ոչ թե անվանական դրամական զանգվածը:

Ակնհայտ է, որ մեր երկրի **գիտելիքահենք ներդրումային մոդելը** պետք է լինի դոմինանտ: Սակայն բոլոր ներդրումների հիմքում պետք է մասնավոր փողերը լինեն: Երբ բանկերի ու մասնավոր ներդրողների համար ավելի գրավիչ է դառնում ներդրումները պետական պարտատոմսերի մեջ, քան տնտեսության

ոեալ հատվածում՝ արդյունաբերության, գյուղատնտեսության բարձր տեխնոլոգիաների և այլ ոլորտներում, այդպիսի տնտեսությունը չի զարգանա: Այսինքն՝ մենք կառուցել ենք կայուն մակրոտնտեսություն՝ ստեղծել ենք դեֆիցիտ ու ֆինանսավորում ենք՝ ավելացնելով երկրի արտաքին ու ներքին պարտքը՝ ի հաշիվ երկրի արդեն արտարժույթային պարտատոմսերի: Սա փակուղի է: Այս մոդելը այլևս սպառել է իրեն:

Վերը նշված պատճառներով մեզ հարկավոր է ունենալ **տնտեսության զարգացման նոր օրակարգ**՝ հիմնված տնտեսության բարձրտեխնոլոգիական հատվածում երկարաժամկետ ու ռիսկային ներդրումների ներգրավման վրա: Սակայն հեղափոխությամբ եկած իշխանությունը ինչքան էլ հավաստիացումներ անի, միևնույն է, ոչ ոք մի այնպիսի ներդրում չի անի, որը ենթադրում է ասենք՝ ներդրված կապիտալի 5-7 տարվա ետգնման կամ փոխհատուցման ժամկետ: Ներդրումները փոխկապակցված են աշխատանքի, տեխնոլոգիաների, վաճառահանման շուկաների, տարածաշրջանային և գլոբալ ռիսկերի հետ: Դրանք չեն կարող կատարվել սոսկ հայրենասիրական կոչերի կամ էնտուզիազմի հիման վրա: Ներդրումների խնդիրը, այդպիսով, առնչվում է ամբողջական համակարգի հետ: Ներդրողը պետք է վստահի երկրի ողջ ինստիտուցիոնալ համակարգին: Դա ոչ միայն տնտեսական քաղաքականությունն է, այլև մնացած բոլոր բաղադրիչները՝ արդարադատությունը, մշակույթը, բարոյականությունը, շրջակա միջավայրը:

Մեծ հաշվով, այն **կառուցվածքային փոփոխությունները**, որոնք ենթադրում են տնտեսության մեջ նոր առաջնահերթություններ, անվտանգության բարձիկներ փոքր ու միջին բիզնեսի զարգացման տեսքով: Եթե խոշոր ընկերությունների կայացման համար միջին ժամկետ ժամանակահատված է պետք, ապա պետք է հնարավորություն ու արտոնյալ պայմաններ ապահովել փոքրերի ու միկրոբիզնեսի զարգացման համար: Հարկավոր է, որ պետությունը իր կարգավորիչ ֆունկցիան օգտագործի՝ տնտեսական բոլոր մասշտաբի խաղացողների՝ փոքր, միջին և խոշոր սուբյեկտների՝ իրավահավասարության սկզբունքի հաստատման ճանապարհով: Այլ տարբերակ չկա: Ժամանակակից բարձրտեխնոլոգիական բիզնեսի զարգացումը հենց այդպիսի իրավահավասարություն է պահանջում: Խոսքը հատկապես վերաբերում է ռեսուրսների հասանելիությանը: Արդիականացումը օրակարգի թիվ մեկ խնդիրն է, ու ամբողջ հարցը նրանում է, թե որ գործոնների կամ սուբյեկտների պահանջով կամ ճնշման տակ այն պետք է իրականանա: Սա չափազանց կարևոր խնդիր է: Ակնհայտ է, որ այսօր արդիականացման պահանջատերը երիտասարդությունն է՝ լավ կրթված, ճկուն, ադապտիվ նոր իրավիճակներին, հատկապես՝ ուսանող երիտասարդությունը: Պետության ինստիտուտների կարգավորման որակը պետք է նպաստի հենց այդպիսի արդիականացմանը և արդյունավետությանը:

Պետությունը պետք է նվազագույն կոռուպցիա ունենա, այլապես իշխանության ինստիտուտները կձառայեն իշխանության հիերարխիայի հարստացմանը, արդյունքում՝ պետությունը, հետևաբար՝ պետականությունը կարող է

պարզապես փլուզվել: Համակարգային կոռուպցիան այլ կերպ կարելի է անվանել ինստիտուցիոնալ ձախողում:

Ինստիտուցիոնալ ձախողումը կարող է հանգեցնել ոչ միայն տնտեսության, այլև՝ պետության փլուզմանը: Երբ 90-ական թվականներին սեփականության համակարգի ռեֆորմներ էին իրականացվում և որպես հիմնական նպատակակետ չէին դիտարկվում **արդյունավետության, արտադրողականության և մրցունակության աճի** խնդիրները, այլև լուծվում էր յուրայիններին ամեն գնով ռեսուրսի սեփականատեր դարձնելու խնդիր, ապա այդպիսի հիմքի վրա ձևավորված տնտեսությունը շատ արագ կազմալուծվում և փոշիացվում է, ինչպես եղավ մեր պարագայում՝ **ապարդյունաբերականացման** ու երկրի **մրցունակ ակտիվների** կորստի տեսքով:

1992-1994թթ արցախյան պատերազմը և դրան հաջորդած դիրքային կոնֆլիկտը հարևան Ադրբեջանի հետ ստիպում է բազմաթիվ իրողությունների, այդ թվում տնտեսության արդիականացմանը նայել այլ, ոչ սովորական, դիտանկյունից: Բարձրտեխնոլոգիական հենքի վրա խարսխված ռազմարդյունաբերական համալիրի ձևավորումն ու հզորացումը այլընտրանք չունի: Այդ պատճառով տևական կոնֆլիկտի մեջ ներքաշված երկրի համար գերժամանակակից զենքի ու սպառազինությունների ստեղծման **գլոբալ արժեշղթաների** մեջ ներառումը պարզապես հրամայական անհրաժեշտություն է տևական, կամ միջնաժամկետ հեռանկարի համար: Ընդ որում, այդօրինակ զենքերի ստեղծումն ու առևտրայնացումը մեր կարգի երկրների համար (այդպիսին է, օրինակ, Իսրայելը), պարզապես գոյության պայքարի հիմնապայմաններից է: Հայաստանի **տնտեսության արդիականացման հիմնարար վեկտորներից մեկը, այդպիսով, լինելու է հենց մրցունակ ռազմարդյունաբերական համալիրի ձևավորումը:** Սա իրապես դիտվում է ՀՀ նոր կառավարության տնտեսական քաղաքականության առաջնահերթություններից մեկը<sup>9</sup>:

Իշխանությունը, կառավարությունը, իշխող քաղաքական ուժը միշտ պետք է լինի հաշվետու և պատասխանատու, նա մշտապես պետք է լինի վերահսկելի ու հանրային հսկողության կիզակետում: Իշխանությունը պետք է արժանապատվություն և ինքնասիրություն ունենա, այն պետք է լինի լեգիտիմ, վստահելի ու պատասխանատու: Այլապես նրան ոչ ոք լուրջ չի ընդունի, նրա որոշումներն ու ուղերձները ոչ մի արժեք չեն ունենա, ավելին, պետության հպատակները, քաղաքացիները ցանկություն չեն ունենա՝ իրենց հարկերով պահելու այդ իշխանությունը, նրանք ավելի շուտ կարտագաղթեն: Արտագաղթի պատճառներից մեկն էլ այն ընտրություններն ու իշխանության ձևավորման արատավոր մեխանիզմներն են, որոնք մարդկանց մեջ ծնում են հիասթափություն ու երկիրը լքելու ցանկություն:

Քաղաքական հեղափոխությանը, որ կարելի է անվանել ժողովրդավարական համակարգի սկզբնավորում, պետք է հաջորդի տնտեսական զարգացումը:

<sup>9</sup> ՀՀ կառավարության ծրագիր - 2019// 7.1. Բարձր տեխնոլոգիաների զարգացումը, թվայնացումը և ռազմարդյունաբերությունը//, էջ 62-63: <http://www.gov.am/files/docs/3133.pdf>

Իրականում Հայաստանում տեղի ունեցավ այսպիսի քաղաքական տրանսֆորմացիա, քաղաքացիական հասարակության բազմաթիվ խմբերի կլաստերը այս փուլում հաղթեց տասնամյակների ընթացքում ձևավորված էլիտաների (տնտեսական, քաղաքական, ռազմական, օլիգարխիկ-կրիմինալ) համախմբությանը: Ակնհայտ է, **սակայն, որ հասարակության մեջ ցանկացած ռեֆորմի շուրջ հանրային համաձայնություն չի լինելու**, քանի դեռ հանրային տարբեր խմբերի ու շերտերի նախընտրությունները տարամետ են, բացի այդ հասարակության մի զգալի մասը ոչինչ չի հասկանում ոչ տնտեսությունից, ոչ էլ տնտեսական քաղաքականությունից: Ավելին, հեղափոխական ընթացքներն ու դրանց հաջորդած ընտրությունները այնպիսին էին, որ ձևավորված հեղափոխական Ազգային ժողովի անդամների մեծ մասն էլ նույնպիսի աղոտ պատկերացումներն ունի տնտեսությունից և տնտեսական քաղաքականությունից:

Տնտեսական հեղափոխությունը հնարավոր կլինի, եթե հնարավոր լինի ապահովել արդյունավետ **ինստիտուցիոնալ տրանսֆորմացիա** այն օրակարգին համապատասխան, որը հոչակվել էր հեղափոխության նախօրեին: Խոսքը ներառական (ինկլյուզիվ) տնտեսական ինստիտուտների ձևավորման մասին է: Ի տարբերություն բացառող (էքստրակտիվ) կամ կլանող ինստիտուցիոնալ համակարգի, ներառական համակարգը թույլ կտա տնտեսական աճի պտուղները դարձնել հասանելի հանրության հնարավորինս լայն շերտերին: Այլ կերպ՝ իրական տնտեսական հեղափոխությունը հնարավոր կլինի ապահովել, եթե հնարավոր լինի քաղաքական ինստիտուտների որակին համապատասխանեցնել տնտեսական ինստիտուտների որակը: Հակառակ պարագայում մենք կունենանք մի վիճակ, որը բնութագրվում է որպես **ինստիտուցիոնալ դրեյֆ**: Ինստիտուցիոնալ դրեյֆը մի կողմից բացատրվում է ռեֆորմների բարենպաստ (ներառական ինստիտուտների) և արատավոր (էքստրակտիվ ինստիտուտների) ոչ բարենպաստ համադրման մեխանիզմների շրջանակով: Այդ պարագայում տնտեսական և քաղաքական ինստիտուտները գտնվում են աններդաշնակ միասնության մեջ<sup>1</sup>:

**Դարոն Աջեմօղլուն, Ջոն Սայմոնը և Ջեյմս Ռոբինսոնը** իրենց հետազոտություններում ապացուցում են, որ տնտեսական զարգացման (աճի) և ժողովրդավարության միջև բացակայում է քիչ թե շատ էական կոռելյացիան: Ըստ այդմ՝ քաղաքական ռեֆորմները ինքնին չեն երաշխավորում տնտեսական ինստիտուտների արդյունավետ տրանսֆորմացիան և ամենևին չեն փոխում տնտեսության օլիգարխիկ կառուցվածքը: Այդուհանդերձ, երկարաժամկետ տնտեսական աճի հիմնապատճառը ինստիտուտների ազդեցության մեջ է<sup>2</sup>: Հետևում

<sup>1</sup> **Арсланов В.В.** География, институты и истоки глобального неравенства: критика концепции экономического развития Аджемоглу и Робинсона // Москва, Институт экономики НААН РФ. 2016, стр. 33-45// [https://inecon.org/docs/Arslanov\\_paper\\_20160324.pdf](https://inecon.org/docs/Arslanov_paper_20160324.pdf)

<sup>2</sup> **Дарон Аджемоглу, Саймон Джонсон, Джон Робинсон.** Институты как фундаментальная причина долгосрочного экономического роста//Институт приватизации менеджмента. ЭКОБЕСТ (2006) 5, 1, 4-43//<http://www.research.by/webroot/delivery/files/ecowest/2006n1r01.pdf>

թյունն այն է, որ սուկ տնտեսական ռեֆորմներով անհնար է ինչ-որ բան փոխել, անհրաժեշտ է փոխել հասարակարգի **ինստիտուցիոնալ բովանդակությունը**: Խնդիրը, սակայն, այն է, թե ինչպես պետք է այն փոխել, ինչ մեխանիզմներով, ու այստեղ դժվարությունն այն է, որ **պատրաստի դեղատոմսեր չկան**:

Հայաստանի Հանրապետությունում ռեֆորմների երեք տասնամյա փորձը մարդկանց գիտակցության մեջ արմատավորել է գոյատևման արժեքային համակարգը, երբ անձնական շահերը բացառում են հանրային շահի որևէ առաջնահերթություն: Հայաստանյան իրականության մեջ, ըստ էության, գերիշխել է պաշտոնյա-օլիգարխի և գործարար-օլիգարխի տիպաժը, ըստ էության՝ այդ երկուսի սիմբիոզը: Փաստորեն, Հայաստանում գլխավոր մեծահարուստները եղել են պաշտոնյաները, այն էլ՝ դե-յուրե զինադադարի, իսկ դե-ֆակտո իրական պատերազմի մեջ գտնվող երկրում: Հայաստանյան առավել հարուստ ընտանիքների 1 տոկոսը տնօրինել է ազգային եկամտի 60 տոկոսից ավելին, ընդ որում՝ վերահսկելով առավել եկամտաբեր ու շահութաբեր ճյուղերն ու բնագավառները: Հայաստանյան տնտեսական համակարգը այդպիսով հիմնված է եղել ոչ թե շահույթի, այլ **քաղաքական ռենտայի** գոյացման ու յուրացման վրա: Այդ պայմաններում տեղի է ունեցել պետական ինստիտուտների յուրացում և **էքստրակտիվ** տնտեսական ինստիտուտների ամրապնդում: Հայաստանում հաստատված անվանական կամ լեգիտիմ ժողովրդավարությունը ոչինչ է, եթե այն հաշվետու և պատասխանատու գործադիր իշխանություն չի ձևավորում: Դա այն է, ինչ կոչվում է ներառական ինստիտուցիոնալ համակարգ: Եթե ռեֆորմները չեն ուղեկցվում ներառական ինստիտուտների ձևավորմամբ, ապա անխուսափելի են ինստիտուցիոնալ ծուղակները:

### **Եզրակացություն և առաջարկություններ**

Համաշխարհային տնտեսության մեջ վերջին տասնամյակների ընթացքում ձևավորված տեխնոլոգիական զարգացման միտումները Հայաստանի Հանրապետության համար ձևավորում են մարտահրավերների նոր միջավայր, որը առաջիկա տասնամյակների ընթացքում պայմանավորելու է ամբողջության մեջ ազգային տնտեսության ու նրանում գործող նորաստեղծական համակարգերի վարքագիծը:

Այդ մարտահրավերների մեջ առավել էականներն են՝

- ա) Գլոբալ մասշտաբով զարգացած և զարգացող երկրների միջև տեխնոլոգիական խզվածքի կտրուկ մեծացումը՝ ի հաշիվ զարգացած տնտեսություններում նորագույն տեխնոլոգիական փնջերի՝ ի դեմս 6-րդ և 7-րդ կոնդրատկյան ալիքների կամ, այսպես կոչված, տեխնոլոգիաների մշակումների արմատավորման ու դրանց հիման վրա տնտեսական թռիչքի ապահովման:
- բ) Համաշխարհային շուկայում բարձրտեխնոլոգիական և գիտատար արտադրանքի գծով մրցակցության մակարդակի կտրուկ բարձրացումը, ինչը գործնականում սպառնում է հիմնական խաղից դուրս թողնել զարգացող

երկրներին ու նրանց վերածել այդ գործընթացի համր դիտորդների կամ, լավագույն դեպքում, նրանց ուրվագծած տեխնոլոգիական շավիղների հլու նմանակողների կամ որակյալ մարդկային և հիմնային ռեսուրսների մատակարարների:

- գ) Համաշխարհային տնտեսության մեջ բարձրտեխնոլոգիական հենքի վրա արժեստեղծման, մասնավորապես, ավելացված արժեքի շղթաների էլ ավելի մեծ չափով յուրացումը զարգացած փոքրաթիվ երկրների կողմից, ինչը եկամտի ու կենսամակարդակի էլ ավելի մեծ չափաբաժիններ է ապահովում այդ երկրների ազգաբնակչության համար, աշխարհի բնակչության՝ մեծամասնությունը կազմող մնացած մասին թողնելով բարեկեցության բարձրացման ոչ մեծ հնարավորություններ:

Տարբեր փորձագիտական գնահատումներով առաջիկա 1,5-2 տասնամյակների ընթացքում համաշխարհային տնտեսության մեջ բարձրտեխնոլոգիական հենքի վրա կձևավորվի նոր վերարտադրական առանցք, որը հիմնված կլինի 6 և 7-րդ կոնդրատկայան տեխնոլոգիական փնջի վրա: Այդ առանցքի հիմնական տեխնոլոգիաները իրենց բնույթով լինելու են միջառարկայական, միջուրտային ու կոնվերգենտ տեխնոլոգիաներ՝ հիմնված նանոտեխնոլոգիաների, կենսատեխնոլոգիաների և տեղեկատվական տեխնոլոգիաների տարաբնույթ ու ոչ ստանդարտ համակցությունների վրա: Տեխնոլոգիական այս փնջերի վրա հիմնված լուծումները թույլ կտան ստանալ սկզբունքորեն նոր ապրանքներ, որոնց պարամետրերն ու սպառողական հատկությունները սկզբունքորեն անհասանելի կլինեն 4-րդ կամ 5-րդ «կոնդրատկայան ալիքների» վրա խարսխված տնտեսություններ ունեցող երկրներին: Մեր կարծիքով Հայաստանի Հանրապետությունը, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ մի շարք այլ երկրներ այս պայմաններում կարող են զարգացման ու արդիականացման որոշակի հնարավորություններ ստանալ, եթե իրենց ինստիտուցիոնալ կերպափոխումների վեկտորը համապատասխանեցնեն այդ մարտահրավերներին ու ամենակարևորը՝ ստեղծել դրանց համապատասխան ինստիտուցիոնալ, ենթակառուցվածքային և ֆինանսավորման համապատասխան համակարգեր ու մեխանիզմներ:

Ելնելով վերը նկարագրված մարտահրավերներից նպատակահարմար է օրենսդրական փոփոխությունների և տնտեսական քաղաքականության մեջ իրականացնել բարելավումների հետևյալ քայլերը.

1. Իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության համալիր և համապարփակ փորձաքննություն, բացահայտել այն օրենսդրական խոչընդոտներն ու հիմնախնդիրները, որոնք արգելքներ են ստեղծում գիտության, տեխնոլոգիաների և նորամուծությունների զարգացման ճանապարհին: Ելնելով դրանից իրականացնել ինովացիոն համակարգերի զարգացմանը բարենպաստող օրենսդրության համալիր փոփոխություններ:
2. Իրականացնել տնտեսական քաղաքականության, մասնավորապես հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության համալիր բարեփո-

խումներ:

Մասնավորապես, **դրամավարկային քաղաքականության մասով՝**

- ա) Անցում կատարել, այսպես կոչված, էվոլյուցիոն դրամավարկային քաղաքականության մոդելին, որը թույլ է տալիս մատչելի ֆինանսական ռեսուրսներ ապահովել գիտելիքահենք ու ավելացված արժեքի մեծ մասնաբաժին ենթադրող նախագծերի ֆինանսավորմանն ու համաֆինանսավորմանը:
- բ) Ֆինանսական շուկաների կարգավորման քաղաքականության մեջ մտցնել նորարարական տարրեր, մասնավորապես ներդնել էլեմենտներ, որոնք բարենպաստում են վենչուրային հիմնադրամների ձևավորմանը և գործունեության ծավալմանը:
- գ) Մշակել և ներդնել ֆինանսական կարգավորման ինստիտուտներ և մեխանիզմներ, որոնք կխթանեն բարձրտեխնոլոգիական ոլորտի ընկերությունների ակտիվների արժեթղթավորմանը և նրանց արժեթղթերի շուկայի զարգացմանը:

**Հարկաբյուջետային քաղաքականության մասով՝**

- ա) Այն բոլոր հարկային արտոնությունները, որոնք գործում են տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի նկատմամբ, տարածել բարձրտեխնոլոգիական սեգմենտի մյուս բոլոր բնագավառների, մասնավորապես, նանոտեխնոլոգիաների, կենսաբանական մշակումների, դեղագործության և մարդու առողջությանը միտված տեխնոլոգիաների վրա:
- բ) Բարձրտեխնոլոգիական ստարտապ ընկերությունների նկատմամբ, որոնք ռազմական մշակումներ են իրականացնում, սահմանել պետական բյուջետային ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի աջակցության մեխանիզմներ, մասնավորապես, համաֆինանսավորման տարրեր կիրառել վենչուրային հիմնադրամների գործունեության համար:
- գ) Բարձրտեխնոլոգիական նախագծեր իրականացնող ազգային ընկերությունների նկատմամբ սահմանել հարկային արտոնություններ, մասնավորապես շահութահարկի, եկամտային հարկի և գույքահարկի գծով:
- դ) Ավելացնել այն գիտահետազոտական կազմակերպությունների և կրթական հաստատությունների պետական ֆինանսավորման և համաֆինանսավորման ծավալները, որոնք ազգային գերակա ուղղություններով հետազոտություններ են իրականացնում և ստեղծում բարձրակարգ ու գերարդիական տեխնոլոգիաներ:

**Օգտագործված գրականության ցանկ**

1. ՀՀ կառավարության ծրագիր 2019. 70 էջ, <http://www.gov.am/files/docs/3133.pdf>  
[https://www.armstat.am/file/article/sv\\_02\\_19a\\_221.pdf](https://www.armstat.am/file/article/sv_02_19a_221.pdf)
2. ՏՀՏ ոլորտը Հայաստանում. Հայաստանում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի հետազոտություն, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, 2018թ., 59 էջ:

- <http://www.eif.am/arm/researches/report-on-the-state-of-the-industry/>
3. Арсланов В.В. География, институты и истоки глобального неравенства: критика концепции экономического развития Аджемоглу и Робинсона // Москва, Институт экономики НАН, (Научные доклады Института экономики РАН). РФ. 2016, 55 стр.// [https://inecon.org/docs/Arslanov\\_paper\\_20160324.pdf](https://inecon.org/docs/Arslanov_paper_20160324.pdf)
  4. Дарон Аджемоглу, Саймон Джонсон, Джон Робинсон. Институты как фундаментальная причина долгосрочного экономического роста//Институт приватизации менеджмента. ЭКОБЕСТ (2006) 5, 1, 44 с. <http://www.research.by/webroot/delivery/files/ecowest/2006n1r01.pdf>, [https://en.wikipedia.org/wiki/Washington\\_Consensus](https://en.wikipedia.org/wiki/Washington_Consensus)
  5. Lewis,W. Arthur. (1955). The Theory of Economic Growth. Reprint, New York. Harper Torchbooks, 1970. 456 Pg.
  6. North, Douglass Cecil. (2010). Understanding the process of economic change. Princeton University Press. 200 Pg. [https://zodml.org/sites/default/files/%5BDouglass\\_C.\\_North%5DUnderstanding\\_the\\_Process\\_of\\_E\\_0.pdf](https://zodml.org/sites/default/files/%5BDouglass_C._North%5DUnderstanding_the_Process_of_E_0.pdf)

**Ատոմ Մարգարյան**  
**Սոնա Մարգարյան**

**«ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԵՎ ԽԹԱՆՄԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ**

**Ամփոփագիր:** Սույն հոդվածում քննարկվել են «ՏՏ տնտեսության բարձր-տեխնոլոգիական հատվածում ներդրումների ներգրավման և խթանման հիմնախնդիրները: Դիտարկվել է վերջին տասնամյակների ընթացքում իրականացված ազատական բարեփոխումների ոչ բարենպաստ զարգացումները ու նրանց բացասական ազդեցությունները տնտեսության ինովացիոն հատվածի կենսագործունեության վրա: Քննարկվել են «ՏՏ տնտեսության գիտելիքահենք զարգացման խնդիրները, մարտահրավերները և հնարավորությունները: Հիմնավորվել է այն թեզը, որի համաձայն, Հայաստանի Հանրապետությունը բարենպաստ ինստիտուցիոնալ ռեֆորմների պարագայում կարող է տեխնոլոգիական թռիչք ապահովել ու այդ հիմքի վրա իրականացնել տնտեսական լուրջ առաջընթաց:

**Բանալի բառեր.** Ներդրումներ, բարեփոխումներ, տեխնոլոգիաներ, նորամուծություններ, ռենտագոյացնող տնտեսություն, վենչուրային հիմնադրամներ, արդյունավետություն, արտադրողականություն:



**Атом Маргарян**  
**Сона Маргарян**

## **ОРИЕНТИРЫ ПРИВЛЕЧЕНИЯ И СТИМУЛИРОВАНИЯ ИНВЕСТИЦИЙ В ВЫСОКОТЕХНОЛОГИЧНЫЙ СЕКТОР ЭКОНОМИКИ РА**

**Резюме:** В данной статье рассматриваются вопросы привлечения и продвижения инвестиций в высокотехнологичный сектор экономики республики Армения. Исследуются неблагоприятные тенденции и негативное влияние либеральных реформ, проведенных в последние десятилетия, на жизнеспособность и конкурентоспособность национального инновационного сектора. Были обсуждены проблемы, вызовы и возможности вопросов развития экономики Армении на основе научных знаний. Предлагаемый тезис основан на том факте, что в случае благоприятных институциональных реформ Республика Армения может обеспечить технологический рывок и на этой основе добиться серьезного экономического прогресса.

**Ключевые слова:** Инвестиции, реформы, технологии, инновации, рентная экономика, венчурные фонды, эффективность, производительность.

**Atom Margaryan**  
**Sona Margaryan**

## **DIRECTIONS OF ATTRACTING AND STIMULATING INVESTMENT IN THE HIGH- TECH SECTOR OF THE ARMENIAN ECONOMY**

**Abstract:** This article discusses the issues of attracting and promoting investment in the high-tech sector of the economy of the Republic of Armenia. We study the unfavorable trends and the negative impact of the liberal reforms carried out in recent decades on the viability and competitiveness of the national innovation sector. Problems, challenges and opportunities for the development of the Armenian economy on the basis of scientific knowledge were discussed. The proposed thesis is based on the fact that in the case of favorable institutional reforms, the Republic of Armenia can provide a technological breakthrough and on this basis achieve a serious economic progress.

**Keywords:** Investments, reforms, technologies, innovations, rental economy, venture funds, efficiency, productivity.

### 3. ՄՐՑՈՒՆԱԿ, ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

#### Հայկ Մարկոսյան

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ ԱՐԴԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Էներգիան, ինչպես կապիտալն ու աշխատուժը, արտադրության և հասարակության առաջընթացի կարևոր գործոն է, ժամանակակից քաղաքակրթության զարգացման և գոյության անփոխարինելի ու կարևորագույն բաղկացուցիչը<sup>1</sup>: Էներգետիկան ցանկացած երկրի տնտեսական ենթակառուցվածքի վրա էական ու որոշիչ ազդեցություն ունեցող ճյուղերից մեկն է: Հայաստանը, չունենալով վառելիքաէներգետիկ ռեսուրսների բավարար կիրառելի պաշարներ, միշտ էլ խիստ կախվածության մեջ է գտնվել դրա ներմուծումից, ինչը սպառնում է թե՛ ազգային անվտանգությանը, թե՛ ազգային տնտեսության մրցունակությանը:

Անբավարար էներգետիկ ռեսուրսներով երկրներում էներգիայի հասանելիությունը կապվում է էներգակիրների ներմուծման շղթայի կայունության հետ: Ընդ որում, եթե շատ երկրներում էներգիայի անհասանելիությունը հաճախ դիտվում է որպես հնարավոր սցենար կամ տեսական ռիսկ, ապա 1990-ականների սկզբներին Հայաստանը համտեսել է այդ ռիսկի ողջ դառնությունը, երբ ԽՍՀՄ փլուզումից հետո հայտնվեց էներգետիկ շրջափակման մեջ: Դրա հետևանքով 1992-1996թթ. էներգետիկ սովի պայմաններում բնակչությանն օրական միջինում 2 ժամ էր էլեկտրաէներգիա մատակարարվում, ինչը հանգեցրեց արտագաղթի, ջեռուցման նպատակով լայնածավալ անտառահատումների, շահագործման և պահպանման ռեժիմների խախտմամբ պայմանավորված հսկայածավալ բնակելի և արտադրական գույք պարզապես ոչնչացվեց կամ փոշիացվեց<sup>2</sup>: Ընդ որում, բոլոր այն գործոնները, որոնք հանգեցրին Հայաստանի էներգետիկ և տնտեսական շրջափակմանը, այդ թվում Արցախյան հակամարտությունը, Ադրբեջանի և Թուրքիայի կողմից մինչ օրս շարունակվող Հայաստանի շրջափակումը, Վրաստանի ներքին խնդիրների առկայությունը, ռուս-վրացական անկայուն և անկանխատեսելի տնտեսական ու քաղաքական հարաբերությունները, Իրանի և Ռուսաստանի դեմ պարբերաբար գործադրվող պատժամիջոցները, չեն կորցրել իրենց արդիականությունը և

<sup>1</sup> Jefferson, M., There's nothing much new under the Sun: The challenges of exploiting and using energy and other resources through history. Energy Policy, Vol. 86, November 2015, pp. 804-811.

<sup>2</sup> Gevorg Sargsyan, Ani Balabanyan, and Denzel Hankinson, From Crisis to Stability in the Armenian Power Sector: Lessons Learned from Armenia's Energy Reform Experience, World Bank Working Paper, 2006.

ցանկացած պահի կարող են նորովի արտահայտվել:

Հայաստանի էներգետիկ անվտանգության վերաբերյալ գիտական քննարկումները 1992-1996 թթ. խորը էներգետիկ ճգնաժամի հաղթահարումից հետո, կարծես թե, ետին պլան էին մղվել: Դա պայմանավորված էր Հայաստանում խոշոր էներգետիկ հզորությունների առկայությամբ, որոնք էներգակիրների մատակարարումների շղթայի վերականգնումից հետո ապահովեցին էլեկտրաէներգիայի ավելցուկային արտադրություն: Վերագործարկվեց միակ միջուկային էլեկտրակայանի 2-րդ էներգաբլոկը, և Հայաստանը վերադարձավ միջուկային երկրների «ակումբ»: Չարգացման ներկա փուլում Հայաստանում կրկին արդիական են դարձել էներգետիկ անվտանգության քննարկումները, ինչը պայմանավորված է առկա էներգետիկ արտադրական հզորությունների սերնդափոխության պահանջով: Այս առումով կարևորագույն հարցադրումն այն է, թե ինչ մասնաբաժիններ պետք է ունենան էներգիայի տարբեր աղբյուրները էներգիայի արտադրության ընդհանուր կառուցվածքում: Ընդ որում, ամենաթեժ բանավեճերը վերաբերում են վերականգնող և միջուկային էներգետիկայի միջև ընտրությանը կամ մասնաբաժինների սահմանմանը:

Վերջին տասնամյակներում գերիշխող է եղել այն տեսակետը, որ ՀՀ տնտեսական և էներգետիկ անվտանգության և կայունության ապահովման գործընթացում միջուկային էներգետիկայի զարգացումն այլընտրանք չունի: Նման մոտեցումը արդարացված էր, քանի որ առկա տեխնոլոգիաների և արժեքային շղթաների պայմաններում միջուկային էներգետիկային այլընտրանք առաջադրելը գործնականում անհնար էր: Բնականաբար գործող միջուկային էներգաբլոկը ունի շահագործման սահմանափակ ժամկետ, որի ավարտից հետո անհրաժեշտ կլինի գործարկել համարժեք այլընտրանքային հզորություններ: Որպես այդպիսին, առնվազն վերջին 10-15 տարիների ընթացքում, միջուկային էներգետիկան ներկայացնելով որպես այլընտրանք չունեցող տարբերակ՝ առավել հաճախ քննարկվում է 3-րդ միջուկային ռեակտորի շինարարությունն ու շահագործումը: Իրողությունն այն է, որ էներգետիկայի զարգացման ծրագրերը երկարաժամկետ բնույթ ունեն, հետևաբար դրանք պետք է հիմնավորված լինեն բոլոր տեսանկյուններից, այլապես նոր կայանի կառուցումը կարող է բեռ դառնալ ապագա սերունդների համար և մինչև 21-րդ դարի կեսերը վերածվել ՀՀ էներգետիկ անվտանգության աքիլլեսյան գարշապարի:

ՀՀ նախկին իշխանությունների դիրքորոշումն այս հարցում իր արտացոլումն է գտել 2015թ. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից մշակված «ՀՀ էներգետիկ համակարգի երկարաժամկետ (մինչև 2036թ.) զարգացման ուղիների» վերաբերյալ ռազմավարությունը<sup>3</sup>, որի կիզակետում ՀՀ էներգետիկ համակարգի ֆիզիկապես և բարոյապես մաշված ենթակառուցվածքների նվազագույն ծախսերով սերնդափոխությունն է: Չնայած զեկույցում ընդհանուր առմամբ կարևորվում է վերականգնվող էներգե-

<sup>3</sup> ՀՀ էներգետիկ համակարգի երկարաժամկետ (մինչև 2036թ.) զարգացման ուղիները, [http://www.arlis.am/Annexes/4/ardzN4-7\\_2017hav1.doc](http://www.arlis.am/Annexes/4/ardzN4-7_2017hav1.doc)

տիկայի զարգացումը, այդուհանդերձ, պետք է փաստել, որ ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականությունը, առաջնային կարևորություն տալով նվազագույն ծախսերի քաղաքականությանը, անտեսում է էներգետիկ անվտանգության շատ հիմնահարցեր: Չեկույցում ուղղակիորեն սահմանվում է, որ անհրաժեշտ է սահմանափակել արևային ֆոտովոլտային տեխնոլոգիաներով էլեկտրակայանները՝ 70 ՄՎտ-ով, իսկ հողմային էլեկտրակայանների հզորությունը՝ 200 ՄՎտ-ով, ակնկալելով, որ երկրաջերմային պոտենցիալի ուսումնասիրությունները կտան դրական արդյունք և կհիմնավորվի ևս 30 ՄՎտ հզորությամբ երկրաջերմային կայանի կառուցումը մինչև 2036թ. ընկած ժամանակաշրջանում: Փոխարենը հիմնավորվում է նոր միջուկային կայանի շինարարության անհրաժեշտությունը՝ այն ներկայացնելով որպես Հայաստանի էներգետիկ անվտանգության ապահովման, թերևս, միակ ճանապարհ:

Սակայն նվազագույն ծախսերի քաղաքականության մշակման հիմքում դրված են մի քանի վիճելի դրույթներ, որոնց չիրագործման պարագայում համակարգը կփլուզվի: Նշված փաստաթղթում էներգետիկ համակարգի զարգացման քննարկումներում շեշտվում է էներգիայի արտահանման հանգամանքը: Նպատակադրվում է առկա հզորությունների հետագա զարգացում և արտադրվող էլեկտրաէներգիայի առնվազն կրկնապատկում՝ մինչև տարեկան 15 մլրդ կվտ/ժ, որից 30%-ը պետք է արտահանվի՝ որպես պոտենցիալ շուկա առանձնացնելով ԻԻՀ-ն, որը ներկայումս ունի էլեկտրաէներգիայի պակասուրդ:

Արտահանման հնարավորությունների քննարկումները ցույց են տալիս, որ էլեկտրաէներգիայի արտահանման հեռանկարներն ու ծավալները, մեղմ ասած, գերազնահատված են, կամ, առնվազն, խորությամբ ուսումնասիրված չեն: Միջուկային նոր էլեկտրակայանը իր նախագծահաշվային արդյունքները ցույց տալու համար պետք է աշխատի առնվազն 40 տարի, ևս միջինում 10 տարի կպահանջվի շինարարության համար, այսինքն, լավատեսական սցենարում, Հայաստանի նոր միջուկային էլեկտրակայանը կգործի 2030-2070թթ: Չկա որևէ փորձագետ, ով կկարողանա հիմնավորել, որ Հայաստանը 2030-2070թթ. կունենա էլեկտրաէներգիայի արտահանման կայուն շուկա, հետևաբար, մեր կարծիքով, էներգետիկ համակարգի զարգացումը առաջին հերթին պետք է ուղղված լինի ազգային տնտեսության սպասարկմանը և ոչ թե արտահանման հնարավորությունների ավելացմանը:

Անտեսվում է նաև այն հարցը, թե ինչ կլինի, եթե այդչափ արտադրական հզորությունները կառուցվեն, սակայն արտահանման ներուժը չօգտագործվի: Պատասխանը շատ պարզ է. հաստատուն ծախսերը կվերաբաշխվեն սպառվող էլեկտրաէներգիայի քանակի վրա, որի արդյունքում սակագինը կբարձրանա: Ավելին, էներգախնայող տեխնոլոգիաների հետագա զարգացման պայմաններում հարցականի տակ է նաև ներքին շուկայում էլեկտրաէներգիայի սպառման տեմպերի ավելացման առկա միտումների պահպանման կամ աճի խնդիրը: Ազդեցության երկրորդ փուլում սակագնի բարձրացումը կհանգեցնի սպառման կրճատմանն ու արտադրանքի մրցունակության անկմանը, որը կրկին կառա-

ջացնի սակագինը վերանայելու անհրաժեշտություն: Հետևաբար առանց երկարաժամկետ պայմանագրերի և գնման երաշխիքների արտահանման կողմնորոշմամբ էներգետիկ հզորությունների զարգացման սցենարը ոչ միայն վտանգավոր թակարդ է, այլև վտանգում է երկրի տնտեսական անվտանգությունը:

Ակներև է, որ փաստաթղթում ըստ էության քննարկված չեն ներկայումս օգտագործվող էներգետիկ ռեսուրսների մատակարարումների շղթայի գործունեության խափանումների, շուկայական իրավիճակի փոփոխության, շուկայում նոր խաղացողների հայտնվելու ռիսկերը: Տարածաշրջանային զարգացումները, Ռուսաստանի և Իրանի նկատմամբ նոր տնտեսական պատժամիջոցների սահմանման և գործողների երկարաժամկետ պայմաններում ճիշտ չէ բոլոր խաղադրույքները կենտրոնացնել այդ երկրների վրա՝ անտեսելով ազգային էներգետիկ անվտանգության հարցերը: Ակնհայտ է, որ նման ռազմավարության իրականացման պայմաններում կտրուկ ավելանալու է մեկ առանձին երկրից, սովյալ դեպքում Ռուսաստանից, ՀՀ էներգետիկ կախվածությունը: Ահա նման պայմաններում խիստ արդիական է դառնում նոր իրողությունների համատեքստում քննարկել էներգետիկ համակարգի զարգացման հեռանկարները՝ դրանում ներառելով ինչպես համաշխարհային կարևորագույն միտումները, այնպես էլ գնահատելով ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման գործում էներգետիկայի տարբեր ուղղությունների իրական ազդեցությունն ու ներդրումը:

Էներգետիկ անվտանգության տեսանկյունից միջուկային էներգետիկան քննարկելիս ակնհայտ է, որ այն չի կարող ապահովել Հայաստանի էներգետիկ անկախությունը այն պարզ պատճառով, որ Հայաստանը չի տիրապետում միջուկային վառելիքի սեփական պաշարների: Ավելին, միջուկային վառելիքի համաշխարհային շուկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միջուկային էներգետիկան որպես էներգետիկ անկախության երաշխավոր չի կարող ներկայանալ գրեթե ոչ մի երկրում: Միջուկային էներգետիկա շահագործող 31 երկրներից միայն Կանադան և Հարավ-աֆրիկյան հանրապետությունն է, որ միջուկային վառելիքի տեսանկյունից ինքնաբավարար է<sup>4</sup>: Հայաստանի դեպքում պատկերն էլ ավելի մտահոգիչ է, քանի որ ՀՀ միջուկային վառելիքը մատակարարվում է Ռուսաստանից, որն ինքն է հանդիսանում միջուկային վառելիք ներկրող: Հետևաբար, Հայաստանում միջուկային էներգետիկայի հետագա զարգացումը, եթե պետք է հիմնվի ռուսաստանյան միջուկային վառելիքի մատակարարումների վրա, ոչ միայն չի լուծում, այլև խորացնում է էներգետիկ անվտանգության հիմնահարցը:

Միջուկային վառելիքի տեղափոխումը տեխնիկատնտեսական տեսանկյունից շատ ավելի հեշտ է, քան նույն էներգատարությամբ ածխաջրածնային վառելիքի տեղափոխումը: Այսպես՝ Հայաստանի միջուկային էլեկտրակայանի համար անհրաժեշտ տարեկան վառելիքի զանգվածը կազմում է շուրջ 65

---

<sup>4</sup> Nikolaus A., Klaus G. The future of nuclear fuel supply. NURIS 2015, the 1st International Conference on Nuclear Risk, Vienna, 16-17 April 2015. [http://nuris.org/wp-content/uploads/2015/04/Arnold\\_Gufler\\_The-Future-of-Nuclear-Fuel-Supply.pdf](http://nuris.org/wp-content/uploads/2015/04/Arnold_Gufler_The-Future-of-Nuclear-Fuel-Supply.pdf)

տոննա, ինչը կարելի է տեղափոխել տարեկան մեկ անգամ և ապահովել ամբողջ տարվա ընթացքում էներգիայի արտադրությունը: Էլեկտրաէներգիայի նույն քանակը արտադրելու համար ածխաջրածնային վառելիքը անհրաժեշտ է մատակարարել անընդհատ, ընդ որում հաշվի առնելով, որ Հայաստանում էլեկտրաէներգիայի արտադրության համար օգտագործվող ածխաջրածնային վառելիքը բնական գազն է, պետք է արձանագրենք, որ դրա պահեստավորումը պահանջում է լուրջ և ծախսատար ինժեներական կառույցներ: Ահա այս պայմաններում միջուկային էներգետիկայի զարգացման հիմնավորումների շարքին է դասվում միջուկային վառելիքի տեղափոխման մատչելիությունը որպես ՀՀ էներգետիկ անվտանգության կարևոր բաղադրիչ:

Սակայն նման հիմնավորումներում հաշվի չեն առնվում մի քանի կարևոր դրոյթներ: Նախ, միջուկային վառելիքի մատակարարումը նույնպես չի կարող երաշխավորված համարվել, քանի որ չկա միջուկային վառելիքի ներքին արդյունահանում և վերամշակում, և մյուս կողմից դրա մատակարարումը իրականացվում է բացառապես Ռուսաստանի կողմից և ցանկացած պահի քաղաքական, տնտեսական կամ պարզապես միջուկային վառելիքի համապատասխան պաշարի բացակայության պայմաններում կարող է և դադարեցվել: Պետք է չմոռանանք, որ Ռուսաստանն ինքը հանդես է գալիս միջուկային վառելիք ներկրող, այսինքն արտադրության ներքին ծավալներով ինքնաբավարար չէ:

Մյուս կողմից միջուկային էներգետիկայի դերը գնահատելիս անթույլատրելի է սահմանափակվել միայն էլեկտրաէներգետիկ ոլորտի դիտարկումով, քանի որ երկրի ներսում էլեկտրաէներգիան սպառվող էներգիայի միակ տեսակը չէ: Սպառվող ընդհանուր էներգիայի ծավալում էլեկտրաէներգիայի մասնաբաժինը միայն մի մասն է, հետևաբար մեծ կախվածություն կա էներգիայի այլ աղբյուրներից: Այսպես, գործնականում ամբողջ տրանսպորտային համակարգը հենված է ածխաջրածնային վառելիքի վրա: Ընդ որում Հայաստանը բնական գազի հիման վրա աշխատող ավտոտրանսպորտի մասնաբաժնով աշխարհում առաջատար երկրներից է: Հայաստանի բնակլիմայական պայմաններում նորմալ կենսագործունեությունը, մանավանդ տարվա ցուրտ ամիսներին, անհնար է պատկերացնել առանց շենքերի և շինությունների ջեռուցման, ինչը նույնպես իրականացվում է գերազանցապես ներմուծվող ածխաջրածնային վառելիքի հիման վրա: Նույնը վերաբերում է նաև պարենային արտադրությանը, արտադրության մյուս ոլորտներին, որտեղ ածխաջրածնային վառելիքի օգտագործումը տեխնոլոգիական ցիկլի անբաժանելի բաղադրիչ է:

Այս առումով միջուկային էներգետիկայի դերի գնահատումը վառելիքաէներգետիկ ռեսուրսների ներկրման մատչելիության տեսանկյունից խիստ նվազում է, քանի որ եթե հնարավոր չլինի ապահովել ածխաջրածնային վառելիքի անընդհատ ներկրում, ապա միևնույնն է տնտեսությունը կոլապսի կենթարկվի, և միջուկային կայանի արտադրած էլեկտրաէներգիան բավարար չի լինի ապահովելու տնտեսության նորմալ կենսագործունեությունը, էլ չենք ասում տրանսպորտային համակարգի կոլապսի մասին, քանի որ երկաթգիծն ու մետրոպոլի-


տենը ի վիճակի չեն լինի ապահովել տրանսպորտային հոսքերը: Սրանով կարելի է բացատրել նաև այն ֆենոմենը, որ չնայած 1990-ականների սկզբին Հայաստանում արտադրվում էր նույնքան էլեկտրաէներգիա, որքան 2000-ականների կեսերին, այն չէր բավարարում առկա պահանջմունքի բավարարմանը, քանի որ չկար անհրաժեշտ քանակի ածխաջրածնային վառելիքի ներկրում, ասել է թե, անկախ Հայաստանում միջուկային էներգետիկայի զարգացվածության աստիճանից և մասշտաբներից, այն չի կարող փոխարինել ածխաջրածնային վառելիքի անխափան ներկրումների ապահովմանը:

Շեռտաբար սխալ է այն տեսակետը, որ միջուկային էներգետիկան Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության հիմքն ու երաշխավորն է: Նման հայեցակետը չափազանցված է, քանի որ միջուկային էներգետիկան առանձին չի կարող երաշխավորել տնտեսության կայուն կենսագործունեությունը: Ավելի կտրուկ արտահայտվելու դեպքում կարող ենք պնդել, որ առանց միջուկային էներգետիկայի ՀՀ տնտեսությունը կարող է գոյատևել և զարգանալ, իսկ առանց ածխաջրածնային վառելիքի՝ ոչ: Այն առավելագույնս կարող է դիտվել որպես տնտեսության էներգետիկ համակարգի կարևոր բաղադրիչ, որը կարևոր ներդրում ունի էլեկտրաէներգետիկ կայունության ապահովման գործում:

Միջուկային էներգետիկայի զարգացման տնտեսական հիմնահարցերի ուսումնասիրության ժամանակ անհրաժեշտ է ցուցաբերել տարբերակված մոտեցում արդեն գործող էլեկտրակայանի և նոր էլեկտրակայանի կառուցման այլընտրանքները քննարկելիս: Ետգնված միջուկային էներգետիկ օբյեկտի շահագործման տնտեսական նպատակահարմարությունը բանավեճի առարկա չի կարող հանդիսանալ, քանի որ զուտ տնտեսական տեսանկյունից դիտարկելիս այն ունի գնային ամենաբարձր մրցունակությունը բնութագրող ցուցանիշներ: Հայաստանում էներգետիկ անվտանգության հարցերի քննարկումներում առաջնային նշանակություն է տրվում ՀԱԷԿ-ի արտադրած էլեկտրաէներգիայի ցածր ինքնարժեքին, որն ապահովելով Հայաստանում թողարկվող էլեկտրաէներգիայի 30-40 տոկոսը՝ զգալի ազդեցություն է թողնում էլեկտրաէներգիայի վերջնական սակագնի ձևավորման վրա: ՀԱԷԿ-ի արտադրած էլեկտրաէներգիայի ինքնարժեքը չի հրապարակվում, փոխարենը հրապարակվում է ՀԱԷԿ-ից էլեկտրաէներգիայի գնման սակագինը, և հաշվի առնելով որ ՀԱԷԿ-ը վնասով աշխատող կազմակերպություն է, կարելի է ենթադրել, որ ինքնարժեքը մոտ է գնման գնին և կազմում է մոտ 6 դրամ 1 Կվտ/ժ համար: Այսպիսով, մեջբերելով ՀԱԷԿ-ի արտադրած էլեկտրաէներգիայի ցածր ինքնարժեքը, հանրության մոտ տպավորություն է ստեղծվում, որ նոր ատոմակայան կառուցելու դեպքում ևս թողարկվող էլեկտրաէներգիայի ինքնարժեքը լինելու է նույն միջակայքում, հետևաբար տնտեսապես ձեռնտու կլինի նման էլեկտրակայանի կառուցումն ու շահագործումը: Սակայն նոր կառուցվող միջուկային կայանի դեպքում թողարկված էլեկտրաէներգիայի սակագինը կլինի բոլորովին այլ հարթությունում:

Կարևորագույն դիտարկում է այն իրողությունը, որ ամբողջ աշխարհում մեկնարկել է վերականգնվող էներգետիկայի անցման հեղափոխությունը, որին

չհետևող երկրների տնտեսությունները, ամենայն հավանականությամբ, կհայտնվեն մրցունակության լուսանցքից դուրս: Շարունակաբար կրճատվում է միջուկային էներգետիկայի ներդրումը էլեկտրաէներգիայի համաշխարհային արտադրության կառուցվածքում (գծապատկեր 1), ինչը ցույց է տալիս, որ էլեկտրաէներգիայի նկատմամբ անընդհատ աճող պահանջարկը բավարարվում է այլ աղբյուրների առավել արագ ընդլայնման հաշվին:



**Գծապատկեր 1.** Միջուկային էներգետիկայի մասնաբաժինը էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքում 1971-2015թթ.<sup>5</sup>, %

Գծապատկերում ներկայացված տվյալները վկայում են, որ միջուկային էներգետիկայի մասնաբաժինը 1990-ականներից հետո անընդհատ նվազել է՝ կրճատվելով ավելի քան կրկնակի՝ 2015թ. հասնելով 8 տոկոսի: Ընդ որում, հաշվի առնելով 2015թ. հետո վերականգնվող էներգետիկայի զարգացման միտումները, կարելի է կանխատեսել, որ այդ մասնաբաժինն էլ ավելի է կրճատվելու: Հետևաբար անհրաժեշտ է բացահայտել նման կրճատման պատճառներում օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների նշանակությունը, ինչը հիմք կտա ազգային միջուկային էներգետիկայի զարգացման համար մշակել ռացիոնալ ռազմավարություն:


Մինչև 2010թ. հրապարակված էներգետիկայի զարգացման կանխատեսումների վերաբերյալ բոլոր հետազոտություններում սկզբունքորեն ամրագրվում էր, որ վերականգնվող էներգետիկան առկա տեխնիկատնտեսական գործոնների պայմաններում տեսանելի ապագայում չի կարող ոչ միայն փոխարինել, այլև անգամ մրցակցել ավանդական էներգետիկ աղբյուրների հետ: Դա հիմք էր տալիս հասարակության կայուն զարգացման համար անհրաժեշտ

<sup>5</sup> Ըստ Համաշխարհային բանկի տվյալների: Աղբյուրը՝ <https://data.worldbank.org/indicator/EG.ELC.NUCL.ZS?locations=IW>



Էներգետիկ անվտանգությունը կապել միջուկային էներգետիկայի հետ: Սակայն վերջին տասնամյակում վերականգնվող էներգետիկան կտրուկ զարգացում է ապրել: Փորձագետներն արձանագրում են, որ էներգետիկ ոլորտում վերջին հինգ տարիներին տեղ գտած նորարարությունների ու փոփոխությունների ռիթմը նման հեղափոխության, և ընդամենը տասը տարի առաջ վերականգնվող էներգետիկայի զարգանալու հեռանկարների վերաբերյալ հոռետեսական տեսակետներն ու սցենարները այլևս որևէ քննադատության չեն դիմանում: Ներկայիս տեխնոլոգիաների պայմաններում բազմաթիվ երկրներում հողմային և արևային էլեկտրակայանները հանդես են գալիս որպես ամենաէժան սակագնով էլեկտրաէներգիա մատակարարողներ:

Էներգետիկ ոլորտը չափազանց կապիտալատար է, որտեղ ներդրումային որոշումները առաջնային նշանակություն ունեն: Ներդրումային որոշումների ուղղությունները և դինամիկան էներգետիկ ռազմավարության և քաղաքականության մշակման կարևորագույն ազդակներ են, ինչպես տարածաշրջանային, այնպես էլ՝ գլոբալ մակարդակներում: Գծապատկեր 2-ում ներկայացված են 2004-2017թթ. էներգետիկ ոլորտում ներդրումային որոշումների ուղղություններն ու դինամիկան:




**Գծապատկեր 2.** Համաշխարհային ներդրումային որոշումները միջուկային և վերականգնվող էներգետիկայում, 2004-2017թթ., մլրդ ԱՄՆ դոլար<sup>6</sup>

2017թ. տվյալներով միջուկային էներգետիկայի ոլորտում ներդրվել է շուրջ 16 մլրդ դոլար, քամու էներգետիկայի ոլորտում՝ շուրջ 100 մլրդ դոլար և արևային ֆոտովոլտային էներգիայի ոլորտում՝ շուրջ 160 մլրդ դոլար: 2017թ. վերականգնվող էներգետիկայի ոլորտում ներդրումները, առանց խոշոր հիդրոէներ-

<sup>6</sup> The World Nuclear Industry Status Report 2018, A Mycle Schneider Consulting Project, Paris, London, September 2018, p. 188.

գետիկայի, կազմել են 279.6 մլրդ դոլար, 2016թ.<sup>7</sup> 274 մլրդ դոլար և 2015թ.<sup>8</sup> 323.4 մլրդ դոլար, որը և այս պահին պատմական առավելագույնն է<sup>7</sup>: Սակայն վերականգնվող էներգետիկ տեխնոլոգիաները սրընթաց էժանանում են, որով պայմանավորված նույն տարիներին շահագործման հանձնված տարիների հզորությունները փոքր-ինչ այլ դինամիկա են դրսևորում, քանի որ միավոր ֆինանսական միջոցով ավելի շատ տեղակայված հզորություն են ապահովում:

«Լազարդ» խորհրդատվական ընկերությունը, ի թիվս մի շարք այլ վերլուծությունների<sup>8</sup>, պարբերաբար հրապարակում է տարբեր տեխնոլոգիաներով ստացված էլեկտրաէներգիայի հաշվեկշռված արժեքի վերաբերյալ հաշվետվություններ<sup>9</sup>: Դրանցից վերջինը հրապարակվել է 2018թ. նոյեմբերին, որում հետաքրքիր միտումներ են բացահայտվում (գծապատկեր 3)<sup>10</sup>:



**Գծապատկեր 3. Էլեկտրաէներգիայի հաշվեկշռված արժեքը տարբեր տեխնոլոգիաների պայմաններում**

Համաձայն ստացված արդյունքների՝ միջուկային էներգետիկայի արտադրած 1 Մվտ/ժ էլեկտրաէներգիայի հաշվեկշռված արժեքը կազմում է 112-189 դոլար, որը էլեկտրաէներգիայի արդյունաբերական արտադրության բոլոր տեխնոլոգիաներից ամենաբարձրն է: Ամենացածր հաշվեկշռված արժեքն ունի քանու էներգետիկան, որտեղ այն կազմում է 29-56 դոլար: Արդյունաբերական մասշտաբի ֆոտովոլտային կայաններում էլեկտրաէներգիայի հաշվեկշռված

<sup>7</sup> Global Trends in Renewable Energy Investment Report 2018, United National Environment Programme, April, 2018.

<sup>8</sup> Պաշտոնական կայք՝ [www.lazard.com](http://www.lazard.com)


<sup>9</sup> Levelized Cost of Energy (LCOE): Էլեկտրաէներգիայի հաշվեկշռված արժեքը էլեկտրակայանի ողջ կենսացիկլի ընթացքում արտադրված էլեկտրաէներգիայի միջինացված արժեքն է: Էլեկտրաէներգիայի հաշվեկշռված արժեքի հաշվարկի համար օգտագործվում է բավականին ընդգրկուն մոդել, որը հաշվի է առնում կայանի կապիտալ շինարարության, վառելիքի, վարկերի մարման և տոկոսի սպասարկման, հարկերի, շահույթի մարժայի, կայանի միջին բեռնվածքի և այլ ցուցանիշներ:

<sup>10</sup> Levelized Cost of Energy and Levelized Cost of Storage 2018, կայք՝ <https://www.lazard.com/perspective/levelized-cost-of-energy-and-levelized-cost-of-storage-2018/>

արժեքը կազմում է 40-46 դոլար, կամ միջուկային էներգետիկայից շուրջ 3 անգամ պակաս: Ավանդական էներգետիկ տեխնոլոգիաներից ամենաէժանր համակցված ցիկլով գազային էլեկտրակայաններն են, որտեղ էլեկտրաէներգիայի հաշվեկշռված արժեքը կազմում է 41-74 դոլար:

Շեռաքրքիր է, որ էլեկտրաէներգիայի հաշվեկշռված միջին արժեքը վերջին 10 տարիներին աճել է միայն միջուկային էներգետիկայի դեպքում, իսկ աճը կազմել է 23%: Մյուս տեխնոլոգիաների պարագայում արժեքի նվազումը կազմել է համապատասխանաբար, արևայինի (կոնցետրացիոն) դեպքում՝ 17%, ածուխի դեպքում՝ 9%, գերթերմալի դեպքում՝ 21%, բնական գազի (համակցված ցիկլով) դեպքում՝ 30%, արևայինի (ֆոտովոլտային) դեպքում՝ 88%, հողմայինի դեպքում՝ 69%: Ամենամեծ անկումն արձանագրվել է արևային ֆոտովոլտային կայանների արտադրած էլեկտրաէներգիայի միջին արժեքի համար, ինչն էլ ապահովել է ոլորտի սրընթաց զարգացումն ու ընդլայնումը:

Էներգետիկայի զարգացման համաշխարհային միտումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նոր գործարկված էներգետիկ հզորությունների կառուցվածքում վերականգնվող էներգետիկան անխոս առաջատարն է: 2000-2018թթ. ընդհանուր առմամբ հողմային էլեկտրակայանների ընդհանուր տեղակայված հզորությունների հավելածը կազմել է 497 ԳՎտ, արևային կայաններինը՝ 399 ԳՎտ, այն դեպքում, երբ միջուկային կայաններինը՝ 35 ԳՎտ (գծապատկեր 4):




**Գծապատկեր 4.** Տեղակայված արևային, հողմային և միջուկային էներգետիկ կայանների գումարային հզորությունները, ԳՎտ, 2000-2017թթ. համար<sup>11</sup>

Միջուկային կայանների այս հավելածում ներառված են նաև երկարաժամ-

<sup>11</sup> The World Nuclear Industry Status Report 2018, A Mycle Schneider Consulting Project, Paris, London, September 2018, p. 194.

կետ դադարի կարգավիճակում գտնվող ռեակտորները, որոնք, չնայած փաստացի չեն գործում, պաշտոնապես համարվում և ներառվում են տեղակայված հզորությունների կազմում: Վերջիններս հաշվարկներում չներառելու պարագայում միջուկային էլեկտրակայանների տեղակայված հզորությունների հավելածը 2000թ. նկատմամբ 2017թ. կլինի ընդամենը 2.8 ԳՎտ:

Տեղակայված էներգետիկ հզորությունների գումարային մեծության վերաբերյալ տեղեկատվությունը թույլ չի տալիս ամբողջական պատկերացում կազմել էլեկտրաէներգիայի արտադրության ընդհանուր կառուցվածքում դրանց ներդրման չափի վերաբերյալ: Էներգետիկ կայանների տեխնոլոգիական առանձնահատկություններով պայմանավորված օբյեկտիվորեն տարբերվում է դրանց միջին բեռնվածքի մեծությունը: Մասնավորապես, ակնհայտ է, որ արևային էներգետիկ կայանները գիշերային ժամերին էլեկտրաէներգիա չեն թողարկում: Ընդհանուր առմամբ, միջուկային էլեկտրակայաններն օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով պայմանավորված ունենում են բեռնվածքի ամենամեծ գործակիցը, ինչն ապահովում է նաև միավոր տեղակայված հզորությունից ավելի մեծ ծավալով թողարկվող էլեկտրաէներգիա:



**Գծապատկեր 5.** Արևային, հողմային և միջուկային էներգետիկ կայանների արտադրած էլեկտրաէներգիան, ՏՎտ/ժ, 2000-2017թթ. համար<sup>12</sup>

Ահա այս իրողությամբ է պայմանավորված այն հանգամանքը, որ չնայած արևային և հողմային էլեկտրակայանների տեղակայված հզորությունները, անգամ առանձին-առանձին, գերազանցում են միջուկային կայանների համանուն ցուցանիշին, այնուամենայնիվ տարեկան արտադրված էլեկտրաէներգիայի ծավալով միջուկային էներգետիկան քննարկվող 3 տեխնոլոգիաների շարքում

<sup>12</sup> The World Nuclear Industry Status Report 2018, A Mycle Schneider Consulting Project, Paris, London, September 2018, p. 194.

բացարձակ առաջատարն է (գծապատկեր 4)

Գծապատկերում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ 2017թ. միջուկային էներգետիկան ապահովել է հողմայինից ավելի քան 2 անգամ և արևայինից ավելի քան 5.5 անգամ ավելի թողարկված էլեկտրաէներգիա: Միանշանակ արձանագրենք, որ դատելով գծապատկերներ 3 և 4-ից, այդ տարբերությունը առաջիկա տարիներին կրճատվելու է: Նշենք նաև, որ նմանատիպ զարգացումներ են արձանագրվում նաև ածխաջրածնային հիմքով էներգետիկայի ոլորտում, որտեղ ևս համեմատության մեջ առավելությունը տրվում է վերականգնվող էներգետիկային:

Վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործումը վերջին տարիներին լայն քննարկման առարկա է դարձել: Վերականգնվող էներգետիկ ռեսուրսները յուրահատուկ հնարավորություններ են ընձեռում կայուն և էկոլոգիապես մաքուր էներգետիկ համակարգ ձևավորելու համար, ինչպես նաև մեղմում են տնտեսության վրա բնական վառելիքահումքային ռեսուրսների սակավության անբարենպաստ ազդեցությունը՝ բավարարելով էլեկտրաէներգիայի, ջեռուցման և տրանսպորտային կարիքների պահանջարկի մի մասը: Հայաստանը վառելիքաէներգետիկ ռեսուրսների ներկայիս գների պայմաններում տիրապետում է տնտեսապես հիմնավորված ռեսուրսների բավականին լայն սպեկտրի և ծավալներ:

## Աղյուսակ 1

### **Վերականգնվող էլեկտրաէներգիայի ռեսուրսների ներուժը Հայաստանում ըստ տեխնոլոգիայի<sup>13</sup>**

<i>Տեխնոլոգիայի տեսակը</i>	<i>Հզորություն (ՄՎտ)</i>	<i>Արտադրություն (ԳՎտժ/տարի)</i>
Հողմ	300	650
Արդյունաբերական արևային ՖՎ	830-1200	1700-2100
Կոնցենտրացիոն արևային կայան	1200	2400
Ապակենտրոնացված արևային ՖՎ	1300	1800
Երկրաջերմային կայան	25-150	200-1100
Աղբավայրի գազ	2	20
ՓՀԷԿ	100	340
Կենսագազ	5	30
Կենսագանգված	30	230
Ընդամենը	3800-4300	7400-8700

Աղյուսակ 1-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ տարբեր գնահատումներով Հայաստանում առկա են 3800-4300 մվտ պոտենցիալ հզորությամբ և 7.4-8.7 մլրդ կվտժ տարեկան թողարկման հնարավորությամբ վերականգնվող ռեսուրսներ, ինչը համարժեք է Հայաստանի ներկայիս շահագործվող էլեկտրակայանների դրվածքային հզորությանն ու տարեկան արտադրվող

<sup>13</sup> «Վերականգնվող էներգիայի ընդլայնման ծրագիր» Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ, Երևան, 2014: [http://r2e2.am/wp-content/uploads/2014/09/Armenia-SREP-Investment-Plan\\_final-June-27-2014-arm-final.pdf](http://r2e2.am/wp-content/uploads/2014/09/Armenia-SREP-Investment-Plan_final-June-27-2014-arm-final.pdf)

էլեկտրաէներգիայի ծավալին:

Աղյուսակում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանում վերականգնվող էներգետիկան ծավալային ցուցանիշներով ունակ է ապահովելու առկա պահանջարկը, եթե, իհարկե, տեխնոլոգիապես հնարավոր լիներ պահուստավորել արտադրված էլեկտրաէներգիան: Ավելին, քանի որ վերականգնվող էներգետիկական տեխնոլոգիաները շարունակ էժանանում են, տնտեսապես հիմնավորված էներգետիկ ներուժը աճում է, և նախկինում ոչ մրցունակ տեղանքը կարող է դառնալ մրցունակ: Հաշվի առնելով էներգիայի պահուստավորման տեխնոլոգիական առաջընթացն ու ինքնարժեքի դինամիկան՝ կարելի է վստահորեն պնդել, որ ինչ-որ ժամանակ հետո վերականգնվող էներգետիկան ունակ կլինի բավարարել ամբողջ էներգետիկ պահանջարկը:

Վերականգնվող էներգետիկայի լայնամասշտաբ կիրառման խոչընդոտները բնորոշ են գրեթե բոլոր երկրներին<sup>14</sup>: Հողմային կայանների անհավասար բեռնվածքը, արևային էլեկտրակայանների օրական և սեզոնային հզորության տատանումները էներգիայի այդ աղբյուրների անբաժանելի հատկություններ են, ինչը չի խանգարում բազմաթիվ երկրներում դրանք հաջողությամբ զարգացնելուն: Ոլորտի շատ մասնագետներ փորձում են հիմնավորել, որ վերականգնվող էներգիան չի կարելի դիտարկել որպես ավանդական էներգետիկայի փոխարինող: Որպես հիմնավորում նշվում է, որ էներգիայի վերականգնվող աղբյուրներին զուգահեռ պետք է լինեն նաև այլընտրանքային էներգատադրող հզորություններ, որոնք անհրաժեշտության դերում պետք է ունակ լինեն արագ գործարկվել և միացվել ընդհանուր ցանցին: Այսինքն, եթե վերականգնվող էներգետիկան դիտվում է որպես էներգետիկ համակարգի ընդլայնման ուղի, ապա պետք է կառուցվեն նաև միևնույն հզորությամբ ավանդական էներգիայի արտադրական հզորություններ, ինչը կրկնապատկում է կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալը: Ավելին, քանի որ էներգետիկայի մասին օրենսդրության համաձայն սակագինը պետք է ներառի հզոր, կամ հիմնական էլեկտրակայանների պահպանման ֆիքսված ծախսերը, ապա անգամ չգործող էլեկտրակայանները մշտական բեռ են սակագնի, ինչպես նաև սպառողների համար:

Նման մոտեցումը հատկապես կիրառելի չէ փոքր տնտեսություններում միջուկային էներգետիկայի զարգացման հիմնավորումների համար: Եվ իրոք, նույն հիմնավորմամբ կարելի է պնդել, որ, օրինակ, Հայաստանը միջուկային կայան շահագործելու պարագայում պետք է տիրապետի այլընտրանքային համարժեք հզորությունների, որոնք միջուկային կայանի լիցքավորման, ընթացիկ վերանորոգման և վթարային անջատումների ժամանակ իրենց վրա կվերցնեն էլեկտրաէներգիայի պահանջարկի բեռը: Ընդ որում, լիցքավորումն ու ընթացիկ նորոգումը միջուկային կայանի տեխնոլոգիական ցիկլի բաղադրիչներ են, որոնք տեղի են ունենում որոշակի պարբերականությամբ:

---

<sup>14</sup> Aviel Verbruggen et al., “Renewable Energy Costs, Potentials, Barriers: Conceptual Issues”, Energy Policy 38, no. 2 (2010), 850–61.

Հետևաբար վերականգնվող էներգետիկայի այս բնութագրիչ թերությունը պետք է պարզապես հաղթահարվի առկա տեխնիկական հնարավորություններով: Որպես խնդրի լուծում հաճախ մատնանշվում է էներգիայի կուտակման արդյունաբերական և տեղային տեխնոլոգիաների զարգացումը: Առանց վարանելու կարելի է պնդել, որ վերականգնվող էներգետիկայի զարգացման և համընդհանուր օգտագործման բոլոր սկզբունքային հիմնախնդիրները կլուծվեն, եթե ստեղծվեն էներգիայի արդյունաբերական մասշտաբի կուտակման մատչելի և վստահելի գործիքներ: Ի դեպ, ինչպես և վերականգնվող էներգետիկայում, վերջին տարիներին նկատվում է կուտակող, մասնավորապես էլեկտրաքիմիական տեխնոլոգիաների սրընթաց էժանացում, ինչը խոստումնալից ապագա է նախանշում դրանց արդյունաբերական համատարած կիրառության համար<sup>15</sup>:

Այս պայմաններում վառելիքաէներգետիկ համալիրում նոր էներգաարդյունավետ տեխնոլոգիաների և վերականգնվող էներգետիկայի ընդլայնման խնդրի լուծումը կբարձրացնի տնտեսության էներգետիկ ապահովվածության աստիճանը, կմեղմի երկրի կախվածությունն արտերկրի հումքային աղբյուրներից, հիմք կստեղծի տնտեսության էքստենսիվ աճից ինտենսիվ զարգացման անցնելու և սեփական շահերով թելադրված ազգային էներգետիկ քաղաքականության վարման համար՝ բարձրացնելով երկրի էներգետիկ անկախության և անվտանգության աստիճանը<sup>16</sup>: Հաշվի առնելով միջազգային շուկաներում վերականգնվող էներգետիկայի ոլորտին առնչվող տեխնոլոգիաների և սարքավորումների նկատմամբ բարձր պահանջարկը՝ տնտեսության այս ճյուղի զարգացումը կարող է նպաստել նաև հայկական կազմակերպությունների արտահանման ներուժի ավելացմանը:

Վերականգնվող էներգետիկայի առաջանցիկ տեմպերով զարգացումը հնարավոր է ապահովել պետական ֆինանսական և ոչ ֆինանսական աջակցության մեխանիզմների լայն ցանկով, որոնց շարքում կարող են ներառվել.

1. Վերականգնվող էներգիայի անհատական օգտագործման համակարգերի ներդրման համար ֆինանսական աջակցության մեխանիզմների ներդրում, այդ թվում հարկային արտոնություններ, պետական դրամաշնորհներ, համաֆինանսավորման մեխանիզմներ, վարկային միջոցներով էներգետիկ հզորությունների տեղակայման դեպքում հաշվարկված տոկոսադրույքը ֆիզիկական անձանց վճարած եկամտային հարկից փոխհատուցելու տարբերակը:

2. Էլեկտրաէներգիայի կուտակման էլեկտրաքիմիական մարտկոցների և հիդրոակումուլյացիոն կառույցների պիլոտային նախագծերի իրականացում, ինչը հնարավորություն կտա տեղում գնահատել դրանց կիրառելիությունը ՀՀ բնակլիմայական պայմաններում:

3. Էներգետիկ ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործում, ինչը

---

<sup>15</sup> Levelized Cost of Energy and Levelized Cost of Storage 2018, կայք՝ <https://www.lazard.com/perspective/levelized-cost-of-energy-and-levelized-cost-of-storage-2018/>

<sup>16</sup> Odabashian V., Karamyan G., “Fuel Cells Development in Armenia, Renewable Energy: Reality and Perspectives”, p5, Conference Proceedings, Yerevan, 2003.

հնարավորություն կտա էլեկտրաէներգետիկ կուտակման հզորություններ տիրապետող մասնավոր և պետական ընկերություններին հանդես գալ որպես էներգետիկ համակարգի լիիրավ մասնակիցներ՝ ապահովելով ֆինանսական հոսքեր և եկամուտներ:

4. Ավարտին հասցնել էներգետիկ շուկայի ազատականացման գործընթացը, որի արդյունքում հնարավորություն կստեղծվի ուղղակի համագործակցություն հաստատել էլեկտրաէներգիա արտադրող և սպառող կազմակերպությունների միջև:

5. Բարձրացնել հանրային տեղեկացվածության մակարդակը վերականգնվող էներգիայի աղբյուրների, անհատական հզորությունների ընձեռած հնարավորությունների և շուկայում առկա առաջարկների վերաբերյալ, ինչը հիմքեր կստեղծի ավելացնել հասարակության ընդգրկվածությունը վերականգնվող էներգիայի օգտագործման բնագավառում:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. ՀՀ էներգետիկ համակարգի երկարաժամկետ (մինչև 2036թ.) զարգացման ուղիները, [http://www.arlis.am/Annexes/4/ardzN4-7\\_2017hav1.doc](http://www.arlis.am/Annexes/4/ardzN4-7_2017hav1.doc)
2. «Վերականգնվող էներգիայի ընդլայնման ծրագիր» Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ, Երևան, 2014: [http://r2e2.am/wp-content/uploads/2014/09/Armenia-SREP-Investment-Plan\\_final\\_-June-27-2014-arm-final.pdf](http://r2e2.am/wp-content/uploads/2014/09/Armenia-SREP-Investment-Plan_final_-June-27-2014-arm-final.pdf)
3. Համաշխարհային բանկի տվյալները: <https://data.worldbank.org/indicator/EG.ELC.NUCL.ZS?locations=1W>
4. Պաշտոնական կայք՝ [www.lazard.com](http://www.lazard.com)
5. Aviel Verbruggen et al., “Renewable Energy Costs, Potentials, Barriers: Conceptual Issues,” Energy Policy 38, no. 2 (2010), 850–61.
6. Gevorg Sargsyan, Ani Balabanyan, and Denzel Hankinson, From Crisis to Stability in the Armenian Power Sector: Lessons Learned from Armenia’s Energy Reform Experience, World Bank Working Paper, 2006
7. Global Trends in Renewable Energy Investment Report 2018, United National Environment Programme, April, 2018.
8. Jefferson, M., There's nothing much new under the Sun: The challenges of exploiting and using energy and other resources through history. Energy Policy, Volume 86, November 2015, pp. 804–811
9. Levelized Cost of Energy and Levelized Cost of Storage 2018, կայք՝ <https://www.lazard.com/perspective/levelized-cost-of-energy-and-levelized-cost-of-storage-2018/>
10. Nikolaus A., Klaus G. The future of nuclear fuel supply. NURIS 2015, the 1st International Conference on Nuclear Risk, Vienna, 16-17 April 2015. [http://nuris.org/wp-content/uploads/2015/04/ArnoldGufler\\_The-Future-of-Nuclear-Fuel-Supply.pdf](http://nuris.org/wp-content/uploads/2015/04/ArnoldGufler_The-Future-of-Nuclear-Fuel-Supply.pdf)



11. The World Nuclear Industry Status Report 2018, A Mycle Schneider Consulting Project, Paris, London, September 2018, p. 188.
12. The World Nuclear Industry Status Report 2018, A Mycle Schneider Consulting Project, Paris, London, September 2018, p. 194.
13. The World Nuclear Industry Status Report 2018, A Mycle Schneider Consulting Project, Paris, London, September 2018, p. 194.
14. Odabashian V., Karamyan G., “Fuel Cells Development in Armenia, Renewable Energy: Reality and Perspectives”, p5, Conference Proceedings, Yerevan, 2003.

## Հայկ Մարկոսյան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ ԱՐԴԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

**Ամփոփագիր:** Վերջին տասնամյակներում գերիշխող տեսակետի համաձայն ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման գործընթացում միջուկային էներգետիկան այլընտրանք չունի: Մի շարք ռազմավարական փաստաթղթերում ակնկալվում է Հայաստանում գործարկել նոր միջուկային կայան և դառնալ էլեկտրաէներգիա արտահանող տարածաշրջանային կենտրոն: Գնահատելով էներգետիկ ոլորտի զարգացման համաշխարհային և հայաստանյան միտումները, ցույց է տրվել, որ միջուկային էներգետիկան չի կարող երաշխավորել Հայաստանի էներգետիկ անվտանգությունը: Դրանով պայմանավորված առաջնային կարևորություն պետք է տրվի վերականգնվող էներգետիկայի համապարփակ զարգացմանը:

**Բանալի բաներ.** էներգետիկա, անվտանգություն, միջուկային, վերականգնվող, էլեկտրաէներգիա, սակագին, վառելիք:

## Айк Маркосян

### ОРИЕНТИРЫ ЭНЕРГЕТИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ АРМЕНИИ В КОНТЕКСТЕ СОВРЕМЕННЫХ ТЕХНОЛОГИЧЕСКИХ РАЗВИТИЙ

**Резюме:** В последние десятилетия, согласно преобладающей точке зрения, ядерная энергия не имеет альтернативы для обеспечения энергетической безопасности Армении. В ряде стратегических документов предполагается построить в Армении новую атомную электростанцию и превратится в региональный центр экспорта электроэнергии. Оценивая мировые и армянские тенденции в энергетическом секторе, было показано, что ядерная энергия не может гарантировать энергетическую безопасность Армении. Таким образом, основное внимание следует уделять всестороннему развитию возобновляемых источников энергии.

**Ключевые слова:** энергия, безопасность, атомная энергия, возобновляемые источники энергии, электричество, тарифы, топливо.

**Hayk Markosyan**

## **ARMENIA'S ENERGY SECURITY DIRECTIONS IN THE CONTEXT OF MODERN TECHNOLOGICAL DEVELOPMENTS**

**Abstract:** In the last decades, according to a prevailing viewpoint, nuclear energy has no alternative to Armenia's energy security. A number of strategic documents are assuming to launch a new nuclear power plant in Armenia and become a regional electricity exporting center. By evaluating the global and Armenian trends in the energy sector, it has been shown that nuclear energy cannot guarantee the energy security of Armenia. Thus, the primary importance should be given to the comprehensive development of renewable energy.

**Keywords:** Energy, security, nuclear, renewable, electricity, tariffs, fuel

## Լիլիթ Սարգսյան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ՇԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ՄՈԴԵԼԸ

ՀՀ ներքին սպառողական շուկան բավական փոքր է, ինչի արդյունքում էապես նվազում էր ՀՀ ներդրումային գրավչությունը: 2015թ., սակայն, ԵՏՄ անդամակցությամբ ՀՀ-ն լուծեց այս խնդիրը՝ հնարավորություն տալով ՀՀ-ում գործող կազմակերպություններին արտոնյալ պայմաններով դուրս գալու դեպի ԵՏՄ բազմամիլիոնանոց շուկա: Այդուհանդերձ, սակայն, ՀՀ ներդրումային միջավայրի վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանը դեռևս հեռու է թե՛ ներքին, և թե՛ օտարերկրյա ներդրողների համար գրավիչ երկիր լինելուց: Իհարկե ՀՀ ներդրումային դաշտի բարելավման համար առաջնային քայլերը ստվերային տնտեսության, մոնոպոլիաների և կոռուպցիայի նվազեցումն է, սակայն դրանք համակարգային մոտեցումներ են, որոնք արդեն իսկ փորձում է իրագործել ՀՀ կառավարությունը: Այդուհանդերձ ՀՀ ներդրումային միջավայրում առկա են նաև բազմաթիվ այլ խնդիրներ, որոնց լուծման պարագայում հնարավոր կլինի ապահովել տեղական և արտասահմանյան ներդրումների ներհոսք դեպի ՀՀ տնտեսություն:

Հասկանալու համար, թե որքանով են մինչ օրս կատարած օտարերկրյա ներդրումները նպաստել ՀՀ ՀՆԱ-ի ավելացմանը՝ մենք էկոնոմետրիկ մեթոդների կիրառմամբ հաշվարկել ենք այդ ազդեցության գործակիցը: 1998-2018թթ. համար բացահայտվել է հետևյալ փոխառնչությունը. ՕՈՒՆ աճի տեմպի մեծացումը 1 դրամական միավորով նպաստում է ՀՆԱ-ի աճի ավելացմանը 1.23 միավորով, մինչդեռ 1998-2010թթ. համար հաշվարկված նույն ցուցանիշը 1.1 էր: Ստացվում է, որ վերջին 8 տարվա ընթացքում ՕՈՒՆ ավելի մեծ նպաստում է ունեցել ՀՆԱ-ի աճին, քան նախկինում, ինչը կարող է պայմանավորված լինել ավելի մեծ ավելացված արժեքի ստեղծմամբ: Հարկ է նշել նաև, որ մեր կողմից կատարված էկոնոմետրիկ հաշվարկները ցույց տվեցին նաև, որ ՕՈՒՆ-ը առավել մեծ չափով է նպաստել ՀՀ տնտեսական աճին ներդրման և դրան հաջորդող եռամսյակում<sup>17</sup>:

Հիմնվելով Բացահայտ համեմատական առավելության ինդեքսի հաշվարկի վրա՝ կարող ենք նշել, այն ոլորտները, որոնցում ԵՏՄ անդամ, ինչպես նաև հարևան Վրաստանի և Իրանի համեմատությամբ միայն ՀՀ-ն ունի ԵՏՄ շուկա արտահանման տեսանկյունից բացահայտ համեմատական առավելություն: Դրանք են՝ կենդանի ծառեր, թփեր, բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք, ծխախոտ և դրա արդյունաբերական փոխարինողներ, կաշվե իրեր, կենդանիների աղիքից իրեր, տրիկոտաժե հագուստ և պարագաներ, գլխարկներ ապրանքախմբերը: Ուստի այս ոլորտները

<sup>17</sup> Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից՝ ըստ ՀՀ ՎԿ տվյալների՝ [www.armstat.am](http://www.armstat.am)

կարելի է համարել ՀՀ տնտեսություն այսօր արդեն ամենամեծ ներդրումների ներգրավման հնարավորություն ունեցողներից:

Գործարարության դյուրինության ինդեքսի 10 ենթակետերից 2-ում ՀՀ-ն ավելի վատ դիրքում է գտնվում, քան ԵՏՄ անդամ երկրները, իսկ 4-ում զիջում է ԵՏՄ անդամ առնվազն 3 երկրի, հարևան Վրաստանին զիջում է բոլոր ենթակետերով, իսկ Իրանին՝ միայն 1-ում<sup>18</sup>: Այսպիսով՝ գործարարության դյուրինության ինդեքսի բարելավման համար ՀՀ-ն պետք է դիրքերի բարելավման քայլեր իրականացնի շինարարության թույլտվության ստացման, էլեկտրաէներգիայի միացման, փոքր ներդրողների պաշտպանության, հարկերի վճարման, պայմանագրերի կիրարկման և վեճերի քննման տեսանկյունից: Ընդ որում՝ նշված ցուցանիշներից ամենավատ դիրքում ՀՀ-ն գտնվում է շինարարության թույլտվության ստացման ցուցանիշի տեսանկյունից:

Իսկ ներդրումային ներուժի և ներդրումային դիսկի գնահատման համար ընտրված 35 ցուցանիշներից ԵՏՄ բոլոր երկրներին զիջում է միայն 5-ում, իսկ 13 ցուցանիշի մասով գրանցել է լավագույն արդյունքը: Սակայն Վրաստանին ՀՀ-ն զիջում է նշված 35 ցուցանիշներից 26-ով և գերազանցում է միայն 9-ով:

Իսկ ահա Իրանի պարագայում պատկերն այլ է՝ 35 ցուցանիշից 22-ի տեսանկյունից ՀՀ դիրքերն անհամեմատ ավելի լավ են, քան ԻԻՀ-ինը: Նշված 35 ցուցանիշի տեսանկյունից մտահոգիչ են ՀՀ ցուցանիշերը ՕՈՒՆ ներհոսքի, 1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի, աղքատության, բիզնեսի կողմից վճարվող հարկերի տեսանկյունից<sup>19</sup>:

Վերլուծությունն առավել հիմնավոր դարձնելու համար մեր կողմից փորձ է արվել բացահայտելու ներդրումային դաշտի թերությունները ՀՀ-ում՝ սոցիոլոգիական հարցման միջոցով: Հարցմանը մասնակցել է 500 կազմակերպության ներկայացուցիչ<sup>20</sup>:


Հարցմանը մասնակցած կազմակերպություններն ընտրվել են հետևյալ ոլորտներից՝ գծապատկեր 1:

---

<sup>18</sup> Վերլուծությունը կատարվել է հեղինակի կողմից՝ համաձայն <http://www.doingbusiness.org/ru/rankings> կայքի տվյալների

<sup>19</sup> Վերլուծությունը կատարվել է հեղինակի կողմից՝ համաձայն <http://knoema.com>, <http://www.theglobaleconomy.com>, <http://www.tradingeconomics.com> կայքերի տվյալների:


<sup>20</sup> Նշենք, որ ՀՀ-ում գործող կազմակերպությունների շրջանում 95% վստահության մակարդակ և առավելագույնը 5% սխալի մակարդակի պահպանմամբ հարցում իրականացնելու համար՝ համաձայն սոցիոլոգիական հարցման սկզբունքների, անհրաժեշտ էր հարցում իրականացնել 384 կազմակերպության շրջանում:



**Գծապատկեր 1.** Կազմակերպությունների ոլորտային բաշխում

Ինչպես և ՀՀ տնտեսության ոլորտներում կազմակերպությունների բաշխումն է, այդպես էլ մեր հարցման պարազայում ռեսպոնդենտների մեծամասնությունը ծառայությունների ոլորտից է ընտրվել:


Հարցմանը մասնակցած կազմակերպությունների չափերը ներկայացված են գծապատկեր 2-ում:



**Գծապատկեր 2.** Կազմակերպությունների տարանջատումը՝ ըստ չափի


Այստեղ ևս փորձել ենք պահպանել ՀՀ-ում գործող կազմակերպությունների առկայությունն՝ ըստ չափի:

Հարցված կազմակերպությունների մի մասի գործունեությունն ուղղված է միայն տեղական պահանջարկի բավարարմանը, մյուս մասինը՝ տեղական և արտաքին շուկաների պահանջարկին՝ գծապատկեր 3:




**Գծապատկեր 3.** Կազմակերպությունների բաշխումն՝ ըստ թիրախավորած շուկայի

Համաձայն հարցման արդյունքների՝ դրան մասնակցած կազմակերպությունների 3%-ը սկսնակ է, 62%-ը ՀՀ-ում գործում է արդեն 1-10 տարի, իսկ 35%-ը՝ 10 տարուց ավելի (գծապատկեր 4):




**Գծապատկեր 4.** ՀՀ-ում կազմակերպության գործունեության տևողությունը

Ռեսպոնդենտների 52.5%-ը նշել է, որ կազմակերպությունը հիմնադրելիս հաշվի է առել տվյալ ոլորտում նախկինում իր ունեցած փորձը, 47.3%-ը՝ իր տնօրինության ներքո եղած ֆինանսական միջոցների չափը, 19%-ը՝ տվյալ ոլորտին պետության կողմից տրամադրվող աջակցությունը, 0.8%-ը՝ նորարարական մոտեցմամբ շուկա մուտք գործելու իր հնարավորությունը և այլն՝ (գծապատկեր 5):



**Գծապատկեր 5.** Ներդրում կատարելու որոշման վրա առավելապես ազդած գործոնները


Կազմակերպության գրանցման ընթացքում հանդիպած խոչընդոտները ներկայացված են գծապատկեր 6-ում:



**Գծապատկեր 6.** Կազմակերպության գրանցման ընթացքում հանդիպող խոչընդոտները


Տվյալ պարագայում այլ պատասխանների շարքում գերակշռում են հարկային, մաքսային օրենսդրությունների միջև առկա անհամապատասխանությունները, պատկան մարմինների դանդաղ աշխատանքը, օրենքների երկիմաստ մեկնաբանությունները և այլն:

Հարցված կազմակերպությունները նշել են նաև իրենց գործունեության ընթացքում աշխատուժի կամ կապիտալի հետ առնչվող խնդիրները (գծապատկեր 7-8):



**Գծապատկեր 7. Աշխատողի ներգրավմանն առնչվող խնդիրներ**

Աշխատողների մասնագիտական հմտությունների անհամապատասխանությունը կազմակերպության պահանջներին ամենահաճախ հանդիպած խնդիրն է, դրան հաջորդում են աշխատողների արտագաղթն ու աշխատանքային ռեսուրսների պակասը կամ տվյալ ոլորտում և տվյալ տարածաշրջանում՝ առհասարակ բացակայությունը:




**Գծապատկեր 8. Կապիտալի ներգրավմանն առնչվող խնդիրներ**

Կապիտալի ներգրավման տեսանկյունից ամենաշատ բարձրաձայնվող խնդիրը վարկային բարձր տոկոսադրույքն է սկսնակ ներդրողի համար, դրան հաջորդում է վարկի առավելագույն սահմանաչափի անհամապատասխանությունը ձեռնարկության հիմնադրման համար անհրաժեշտ կապիտալի չափին, և վարկավորման համար պահանջվող գրավի առկայությունը: Սա հատկապես արդիական է մարզերում գործող կազմակերպությունների համար, օրինակ՝ պահածոների գործարան, հյուրանոց և այլն, որոնց հիմնադրման համար անհրաժեշտ գումարը շատ ավելի մեծ է, քան սեփականատիրոջ տնօրինած գրավադրվող գույքի արժեքն է:

Մենք փորձել ենք պարզել նաև հարկային վարչարարության և հարկային




օրենսդրության հետ կապված խոչընդոտները՝ (գծապատկեր 9):



**Գծապատկեր 9.** Հարկային վարչարարության և հարկային օրենսդրության հետ կապված խոչընդոտներ


Այս տեսանկյունից հիմնական խնդիրները բարձր հարկադրույքներն են, ինչպես նաև հարկադրույքների հաճախակի փոփոխությունից առաջացող անորոշությունը:

Մրցակիցներին առնչվող խնդիրներից մասնավորապես նշվում է գերիշխող դիրքի չարաշահումը, մաքսային մարմինների կողմից խտրական մոտեցումը և այլն (գծապատկեր 10):




**Գծապատկեր 10.** Մրցակիցներին առնչվող խնդիրներ

Այլ խոչընդոտներ շարքում հաճախ նշվում են գազի և էլեկտրաէներգիայի բարձր սակագինը, ներմուծվող հումքի և սարքավորումների բարձր մաքսադրույքը, ճանապարհների ոչ բավարար վիճակը և այլն (գծապատկեր 11):




**Գծապատկեր 11.** Կազմակերպության գործունեության սկզբնական ժամանակահատվածում հանդիպող այլ խոչընդոտներ

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ կազմակերպություններն իրենց անհրաժեշտ ֆինանսական միջոցների պակասը լրացնում են հիմնականում սեփական շահույթի վերաներդրմամբ, վարկերի միջոցով, նոր ներդրողների ներգրավմամբ և այլն (գծապատկեր 12):




**Գծապատկեր 12.** Ֆինանսական միջոցների պակասը լրացվում են հետևյալ աղբյուրներից

Արտահանման և ներմուծման ընթացքում հանդիպած հիմնական խոչընդոտները փոխարժեքի տատանումից կազմակերպության կրած վնասներն են և անհրաժեշտ փաստաթղթերի բազմազանությունը (գծապատկեր 13-14):




**Գծապատկեր 13.** Արդյաշահանման ընթացքում հանդիպած խոչընդոտներ



**Գծապատկեր 14.** Ներմուծման ընթացքում հանդիպած խոչընդոտներ

Թեպետ ԵՏՄ անդամակցությունից դեռ բավարար ժամանակ չի անցել հստակ պատկեր ստանալու համար, այդուհանդերձ ռեսպոնդենտները ԵՏՄ անդամակցության ազդեցությունն իրենց կազմակերպության գործունեության վրա գնահատում են հետևյալ կերպ՝ աճել կամ նվազել են հումքի գները, ինչպես նաև առաջացել են մաքսային ձևակերպումների բարդություններ (գծապատկեր 15):



**Գծապատկեր 15.** ԵՏՄ անդամակցության ազդեցությունը կազմակերպության գործունեության վրա

Ռեսպոնդենտներին խնդրել ենք նշել նաև իրենց գործունեության վրա առավել բացասական և առավել դրական ազդող գործոնները: Ըստ այդմ՝ առավելապես բացասական ազդող գործոնների շարքում են օրենքների անկատարությունը, գների և փոխարժեքի փոփոխությունից առաջացող անորոշությունը, դրանց հաջորդում են հարկային դրույքաչափերի մեծությունը, վարկերի տրամադրման պայմանները և այլն: Առավելապես դրական են ազդել կազմակերպությունների գործունեության վրա պետության կողմից վարվող արտաքին քաղաքականությունը, հարկային դրույքաչափերի նվազեցումը և այլն:

Այսպիսով, ՀՀ-ում գործող իրավաբանական անձանցից 500-ի շրջանակում մեր կողմից իրականացված սոցիոլոգիական հարցման (95% վստահության մակարդակի և առավելագույնը 5% սխալի մակարդակի պահպանմամբ) հիման վրա բարձրաձայնված ամենաէական խնդիրները հետևյալն են՝ առևտրային վարկի բարձր տոկոսադրույք՝ 52.7%, առևտրային վարկի համար պահանջվող գրավի առկայություն՝ 27.3%, նոր ներդրողների ներգրավման դժվարություն՝ 25.7%, աշխատողների մասնագիտական հմտությունների անհամապատասխանություն կազմակերպության պահանջներին՝ 49.2%(այս խնդիրը բարձրաձայնել են հիմնականում ծառայությունների ոլորտի ձեռնարկությունները), բարձր հարկադրույքներ՝ 36.6% (այս խնդիրը բարձրաձայնել են հիմնականում փոքր և գերփոքր, սակայն արտադրության ոլորտում գործող ձեռնարկությունները), մաքսազերծման ժամանակ հսկիչ գների չարդարացված չափի արդյունքում առաջացող վճարումներ՝ 24.2% և այլն:

Այս խնդիրների լուծմանն ուղղված արդյունավետ քաղաքականությունը կարող է նպաստել ՀՀ տնտեսությունում նոր ներդրողների աճին, ինչպես նաև արդեն իսկ գործող կազմակերպությունների ընդլայնմանը: Իհարկե, «տնտեսական հեղափոխություն» եզրույթ գոյություն չունի մասնագիտական գրականության մեջ: Այդ պատճառով անհրաժեշտ ենք համարում մանրամասնել տվյալ պարագայում ինչ ասել է՝ ներդրումային միջավայրի բարելավման հեղափոխական մոդել: Հեղափոխական մոդելի ներքո մենք կհասկանանք այն քայլերի ամբողջությունը, որոնք չեն իրականացվել մինչ օրս գործող որևէ կառավարության կողմից, սակայն կարող են էականորեն բարելավել ներդրումային միջավայրը, ինչպես նաև այն անհրաժեշտ միջոցառումները, որոնք անխուսափելիորեն պետք է իրականացվեն նախորդ իշխանություններից ժառանգություն մնացած ծրագրերի մի մասի շտկման և արդյունավետության բարձրացման համար:

Այսպիսով, գործարարության համաթվի, ներդրումային ռիսկի և ներդրումային դաշտի վրա ազդող ցուցանիշների վերլուծությամբ, ինչպես նաև ՀՀ-ում անցկացված սոցիոլոգիական հարցման արդյունքում բացահայտված խնդիրների չեզոքացման և ներդրումային միջավայրի բարելավման նպատակով ներկայացվող առաջարկությունները կներկայացնենք ստորև:

## **1. Ներդրումային դաշտի կարգավորման համար պարասխանապու կառույցների գործառույթների վերանայում**

Ներկայիս կառուցվածքով ՀՀ կառավարությունը նախկինից ժառանգություն է ստացել կառավարության կողմից տարբեր տարիներին ստեղծված բազմաթիվ կառույցներ, որոնք, որպես կանոն, կրկնում են միմյանց, ինչպես նաև այս կամ այն նախարարության գործառույթը: Այս երևույթի շարունակականության պարագայում երբևէ կառավարության տեսանկյունից հնարավոր չի լինի բացահայտել, թե տվյալ գործառույթի թերի իրականացումը կամ չիրագործումը հատկապես որ կառույցի պատասխանատվության ներքո էր գտնվում: Իսկ ստեղծված կառույցներն էլ իրենց հերթին չեն ջանա իրագործել տվյալ գործառույթը, քանի դեռ հստակ չէ, որ դրա ոչ լիարժեք իրագործման պարագայում հենց իրենք են պատասխանատվություն կրելու: Նմանատիպ կառույցները բազմաթիվ են: Օրինակ՝ 2015թ. ՀՀ կառավարության նախաձեռնությամբ ստեղծվեց Հայաստանի զարգացման հիմնադրամը, որը ներկայումս վերաբրենդավորված Բիզնես Արմեիան է<sup>21</sup>: Այս կառույցի հիմնական գործառույթները ներդրումների ներգրավումն ու արտահանման խթանումն է, որոնք նաև հանդիսանում են ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության գործառույթները (թեպետ կառույցը ստեղծված է նախարարության կազմում, այդուհանդերձ, նախարարությունում առկա են նաև նշված գործառույթների իրականացման առանձին ստորաբաժանումներ): Ընդ որում՝ նշված գործառույթները մասամբ իրականացվում են նաև Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության, ՓՄՁ ԶԱԿ-ի, ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի և այլ պետական կառույցների կողմից: Բազմիցս միմյանց կրկնում են նաև ՓՄՁ ԶԱԿ-ի և Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության, ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի գործառույթները և այլն: Ընդ որում, չի առաջարկվում գործող կառույցների կամ նրանց մի մասի վերանայում, պարզապես անհրաժեշտ է հստակեցնել նրանց գործառույթները և բացառել գործառույթների կրկնությունը:

## **2. Ներդրումային առցանց հարթակի ստեղծում կամ նախկինում մշակված հարթակի էական բարեփոխում՝ ծրագրային համապարասխան լուծումների միջոցով**

Մեր կողմից առաջարկվում է ստեղծել ներդրումային առցանց հարթակ, որտեղ կհանդիպեն ներդրման կարիք և ներդրման հնարավորություն ունեցող տնտեսական սուբյեկտները: 2017թ. Հայաստանի զարգացման հիմնադրամը մշակեց նման մի հարթակ՝ investmentprojects.am, որը, սակայն, շատ թերի էր և

<sup>21</sup> <https://www.businessarmenia.am/about>

ներկայում անգամ չի էլ գործում անհայտ պատճառներով<sup>22</sup>: Այդուհանդերձ այդ կայքի ստեղծման համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է զգալի գումար: Ուստիև կարծում ենք, որ անգամ բավական անհաջող և մակերեսայնորեն ստեղծված լինելու պարագայում կայքը կարող էր շարունակել իր գործունեությունը՝ վերափոխված տարբերակով: Մեր կողմից առաջարկվող տարբերակում<sup>23</sup> կայքը կունենա առանձնացված բաժիններ՝ start-up-ի համար և տարբեր ոլորտներում գործող սկսնակ և ոչ սկսնակ բիզնեսների համար: Ներդրման կարիք ունեցողների համար կայքը կսահմանի պարտադիր դաշտեր, որոնք պետք է լրացվեն գրանցվելիս, այդ թվում և՛ էլեկտրոնային ստորագրություն: Նրանք մուտք կգործեն համակարգ առանձին մուտքանունով և գաղտնաբառով և կունենան հնարավորություն իրենց հատկացված օգտահաշվում ստանալ հարցեր կամ մեկնաբանություններ պոստենցիալ ներդրողներից՝ դրանց պատասխանելու հնարավորությամբ: Ներդրման կարիք ունեցողների համար գրանցումը կարող է լինել միանվագ 3000 ՀՀ դրամ անդամավճարով, որի օրենսդրական կանոնակարգման համար առաջարկում ենք Պետական տուրքի մասին ՀՀ օրենքի հոդված 16-ում կատարել հետևյալ փոփոխությունը՝ «Ներդրումային հարթակում ձեռնարկությունների պետական գրանցման համար պետական տուրքը սահմանել բազային տուրքի եռապատիկի չափով»: Ներդրողների գրանցումը կլինի անվճար: Մեր կողմից առաջարկվող մեխանիզմով հարթակը հնարավորություն կտա ներդրողներին միաժամանակ գումարներ ներդնել տարբեր նախագծերում կամ գործող ձեռնարկություններում՝ այսպիսով դիվերսիֆիկացնելով և նվազեցնելով ռիսկերը: Մյուս կողմից հարթակը հնարավորություն կտա նաև օտարերկրյա տնտեսական սուբյեկտներին ևս ներդրումներ իրականացնել ներկայացված տարբեր նախագծերում: Բացի այդ կայքը պետք է նախատեսի հնարավորություն նաև յուրաքանչյուր նախագծի համար անհրաժեշտ գումարի մի մասի ներդրման համար՝ հնարավորություն տալով տվյալ նախագծի համար անհրաժեշտ գումարը հավաքագրել տարբեր աղբյուրներից: Սա ունի 3 հիմնավորում՝ նախ հնարավորություն կտրվի ներդրողին տարբերակել իր ներդրումային պորտֆելը, բացի այդ հնարավորություն կտրվի նախագծի հեղինակին կախում չունենալ մեկ ներդրողից, և ի վերջո՝ նախագծի հեղինակը կկարողանա առաջարկվող բոլոր ներդրողների հետ բանակցություններ վարելու և ընտրելու իր տեսանկյունից առավել վստահելիներին: Այս-

<sup>22</sup> Կայքի գործունեության դադարեցման պատճառների մասին փորձել ենք տեղեկանալ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունից, ինչպես նաև Բիզնես Արմենիայից, սակայն որևէ պատասխան մինչ օրս առկա չէ: Թերևս սա արդեն իսկ ապացուցում է 1-ին հիմնասյան անհրաժեշտությունը, քանի որ կայքը ստեղծվել էր նախարարության նախաձեռնությամբ Հայաստանի զարգացման հիմնադրամի կողմից, սակայն որևէ կերպ չէր արձանագրվել, թե որ կառույցն է պատասխանատու դրա գործունեության շարունակականության ապահովման, որը՝ դրա առաջնիման և հետագա զարգացման համար, ուստի ներկայումս թե նախարարությունը, թե Բիզնես Արմենիան պատասխանում են, որ կայքի գործունեության մասին տեղեկատվությունն անհրաժեշտ է ճշտել մյուս կառույցից:

<sup>23</sup> Կայքի նախատիպը մեր կողմից մշակվել է որպես լավագույն հարթակների օրինակ դիտարկելով Ֆիլիպինների <https://www.angelinvestmentnetwork.com.ph/>, Ռուսաստանի <https://rusinvestproject.ru/katalog-investproektov/>, ԵՄ-ի <https://ec.europa.eu/eipp/desktop/en/index.html?2nd-language=en> կայքերը և այլն:

ինքն՝ մեր առաջարկած մոդելում ընտրության հնարավորություն է տրվում ոչ միայն ներդրողին, որն առկա էր investmentprojects.am-ի պարագայում, այլ նաև նախագծի հեղինակին: Կայքի ստեղծման մանրամասնությունները շատ են, ուստի դրանց կանդիդատնանք անհրաժեշտության դեպքում: Հետագա զարգացման պարագայում կայքը կունենա նաև համապատասխան բջջային հավելված՝ առավել ճկունություն ապահովելու համար: Հարկ է նշել նաև, որ կայքի ստեղծումը ինքնին չի կարող հանդիսանալ ներդրումների ներգրավմանն ուղղված քայլ: Անհրաժեշտ է նաև անհապաղ իրականացնել դրա առաջնորդ արտերկրում՝ ինչպես սոցիալական ցանցերի, այնպես էլ արտերկրում գործող ՀՀ ներկայացուցչությունների կամ դիվանագիտական ներկայացուցչությունների ստորաբաժանումների միջոցով:

### **3. *Ներդրողներին պատասխանող «1 պատուհանի սկզբունքի» կամ «թեժ գծի» ներդրում***

Ներկայումս ՀՀ տնտեսությունում ներդրում կատարող անձինք հնարավորություն ունեն արտոնյալ պայմաններով արտադրված ապրանքն արտահանելու դեպի ԵՏՄ շուկա: Սակայն ՀՀ տնտեսությունը օտարերկրյա ներդրողների համար դեռևս մնում է չբացահայտված, նրանք դժվարանում են ՀՀ տնտեսությունում գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ տեղեկատվություն գտնելու հարցում՝ իրենց հասանելի լեզվով ոչ բոլոր օրենքների և իրավական ակտերի առկայության, ինչպես նաև դրանց փոփոխությունների պատճառով: Ընդ որում այդ խնդիրն առկա է նաև տեղական գործարարների պարագայում: Նրանց համար, նախ և առաջ բարդ է ընկալել շարունակաբար փոփոխվող օրենսդրությունը: Բացի այդ, հասկանալի է, որ գործարարները, իսկ առավել ևս սկսնակ գործարարները միշտ չէ, որ իրավաբան են և կարող են ճիշտ մեկնաբանել նոր ընդունված կամ նախկինից գործող օրենքը: Այդ պատճառով առաջարկում ենք ներդնել տեղական և օտարերկրյա գործարարների հարցերին պատասխանող, ինչպես նաև օտարերկրյա գործարարների և պետական մարմինների միջև առաջացող խնդրահարույց իրավիճակների լուծմամբ զբաղվող «1 պատուհանի սկզբունք» կամ «թեժ գիծ»՝ իր պաշտոնական կայք-էջով, ինչպես նաև դրան կից էջերով linkedin և facebook սոցիալական հարթակներում: Մեր առաջարկած մոդելի պարագայում գործարարը կապվելով տվյալ 1 պատուհանի կամ թեժ գծի հետ, կներկայացնի իրեն հետաքրքրող բոլոր հարցերը, որոնց պատասխանները կմշակվեն և կներկայացվեն նրան՝ իր թողած կոնտակտային տվյալների միջոցով որոշակի սահմանված ժամկետում: Գաղտնիք չէ, որ ներկայումս դեռևս ՀՀ պետական կառավարման համակարգում առկա է նախորդից ժառանգած փորձը, երբ որևէ հարցի պատասխան ստանալու համար ստիպված ես ժամերով կամ օրերով զանգահարել կամ նաև կազմակերպել կապ հաստատել այս կամ այն կառույցի տարբեր ստորա-

բաժանումների հետ<sup>24</sup>: Սա ամենևին էլ դրական լույսի ներքո չի ներկայացնում ՀՀ ներդրումային միջավայրը գործարարի և հատկապես՝ օտարերկրյա ներդրողի աչքերում: Առաջարկվող մոդելի պարագայում գործարարը կամ պոտենցիալ ներդրողը չեն վատնի իրենց ժամանակը համապատասխան նախարարության կամ առընթեր մարմինների տարբեր ստորաբաժանումներ զանգելու վրա: Նրանց փոխարեն դա կիրականացնեն 1 պատուհանի կամ թեժ գծի համապատասխան աշխատակիցները և նրանց կներկայացնեն ամփոփ և հստակ պատասխան, թե իրենց հարցի որ մասը որ օրենքի որ կետի համաձայն և ինչպես է կարգավորվում:

#### **4. Համայնքի զարգացման խնդիր լուծող կազմակերպությունների գործունեության բարելավում**

Հարցումները ցույց են տվել, որ ՀՀ մարզերում գործող մի շարք ձեռնարկություններ ունեն պետական աջակցության կարիք՝ վարկային արտոնությունների կամ երաշխավորման տեսքով, ֆինանսատնտեսական ճգնաժամի արդյունքում առաջացած ֆորս-մաժորային իրավիճակի հաղթահարման և աշխատակիցների ու արտադրության ծավալի նախաճգնաժամային մակարդակի հասնելու համար: Այս դեպքում խոսքը վերաբերում է միջին և խոշոր կազմակերպություններին, ուստի մեր կողմից առաջարկվում է համայնքի զարգացման խնդիր լուծող նորաստեղծ կամ ընդլայնման ծրագիր ունեցող կազմակերպություններին՝ կազմակերպության ստեղծման, առողջացման կամ ընդլայնման կենսունակ ծրագիր ներկայացնելու դեպքում տրամադրել պետական աջակցություն առևտրային բանկերից առանց համապատասխան գրավի առկայության պետական երաշխավորմամբ վարկերի տրամադրման տեսքով: Այս պարագայում հաշվի է առնված այն հանգամանքը, որ համայնքում գործող միջին և խոշոր ձեռնարկատերերը մեծածավալ ներդրումների իրականացման համար չունեն պահանջվող ներդրման գումարին համապատասխանող արժեքի գրավ: Մեր կողմից մշակված այս դրույթի համաձայն համայնքի զարգացման խնդիր լուծող կազմակերպություն կարելի է համարել առնվազն 200 աշխատատեղ ունեցող, կամ ընդլայնման արդյունքում աշխատատեղերի քանակը առնվազն 200-ի հասցնող իրավաբանական անձին, որի 200 աշխատակիցների ամսական աշխատավարձը նվազ չէ 100000 ՀՀ դրամից: Այս պարագայում ուռճացված տվյալների ներկայացման, ինչպես նաև գրանցված, սակայն իրականում ավելի քիչ աշխատավարձի վճարման ռիսկից խուսափելու համար անհրաժեշտ

<sup>24</sup> Մասնավորապես investmentprojects.am կայքի գործունեության դադարեցման պատճառների մասին մեկնաբանություն ստանալու փորձերը ձգձգվեցին 2 օր, որի արդյունքում այդպես էլ չպարզվեց կայքի գործունեության դադարեցման պատճառը: Միայն Բիզնես Արմենիայի մեկ շարքային աշխատակից կարծիք հայտնեց, որ հավանաբար դա կապված է կառավարության փոփոխության հետ, և ներկայիս կառավարությունը պետք է հաստատի առկա ծրագրերը, որպեսզի դրանք շարունակվեն՝ նշելով, որ դա պաշտոնական պատասխան չէ, այլ իր կարծիքը: Թերևս ավելի լուրջ և հիմնավոր հարցերի առկայության պարագայում գործարարներն ավելի շատ ժամանակ կծախսեն:



է սահմանել տույժ յուրաքանչյուր նմանատիպ բացահայտված դեպքի համար նվազագույն աշխատավարձի 300-ապատիկի չափով: Նշենք, որ 200 աշխատատեղի սահմանման համար հիմք ենք ընդունել ՀՀ մարզերի քաղաքաբնակ բնակչության թվաքանակը: Եթե ընդունենք, որ միջին վիճակագրական ընտանիքը 4 հոգի է, 200 հոգու աշխատանքով ապահովելով գրեթե բոլոր մարզերում հնարավորություն է ստեղծվում քաղաքաբնակ բնակչության 1%-ին վեր հանել աղքատության գծից: Այս փոփոխության պարագայում նոր շունչ կստանան «Արագած» հյուրանոցը, որը չի կարողանում իրականացնել ընդլայնման ծրագիրը, «Արմավիրի պահածոների գործարանը», որն ընդհանրապես ֆինանսատնտեսական ճգնաժամի արդյունքում կրած վնասներից հետո դարձել է օտարերկրյա սուբյեկտի՝ «Գազպրոմ Արմենիայի» սեփականություն, և բազմաթիվ այլ կազմակերպություններ:

### **5. Շինարարության թույլտվության համար պահանջվող գործարքների քանակի նվազեցում**

Ինչպես ցույց է տալիս գործարարության իրականացման դյուրինության ինդեքսի վերլուծությունը, դրանում ՀՀ-ի դիրքերը բարելավելու նպատակով ամենաառաջնային գործոնը շինարարության թույլտվության ստացման գործընթացում փոփոխությունների իրականացումն է: Այս տեսանկյունից առաջարկում ենք ներկայիս 20 գործողության փոխարեն շինարարության թույլտվությունը տալ 8 գործողությունների արդյունքում՝ մի շարք պետական և ոչ պետական կառույցների հետ թույլտվություն ստացողի շփումը հասցնելով նվազագույնի և այդ գործառույթը դնելով քաղաքապետարանի վրա՝ էականորեն կրճատելով շին. թույլտվության ստացման համար պահանջվող ժամանակահատվածը: Սա սակայն բարեփոխումների միջանկյալ տարբերակ կարող է հանդիսանալ, քանզի բարեփոխումների վերջնական տարբերակի համար մեր կողմից մշակվել է «1 պատուհանի սկզբունքը», որի իրագործումը հնարավոր կլինի մի շարք կառուցվածքային փոփոխությունների արդյունքում: Այսպիսով 20 պատուհանի մոտենալու փոխարեն շին. թույլտվություն ստացողը մեր կողմից առաջարկվող միջանկյալ տարբերակի համաձայն կմոտենա 8 պատուհանի: Այս տարբերակում ՀՀ-ն տվյալ ցուցանիշի մասով իր դիրքերը կարող է բարելավել առնվազն 20 կետով, որի արդյունքում նաև էապես կբարելավվի գործարարություն իրականացնելու դյուրինության ինդեքսի տեսանկյունից ՀՀ զբաղեցրած դիրքը:

### **6. Արտադրական գործունեություն իրականացնող փոքր կազմակերպությունների համար շրջանառության հարկով հարկման տարեկան շրջանառության չափի վերանայում**

Մեր կողմից իրականացված հարցումները ցույց տվեցին, որ տոնավաճառում վաճառվող ապրանքի համար փաստաթուղթ չեն ներկայացնում փոքր արտադրողները, որոնք, ամենայն հավանականությամբ, շրջանառության հարկ վճարողներ են: Փաստաթուղթ չտրամադրելու հանգամանքն այս դեպքում, սա-

կայն, ունի միանգամայն օբյեկտիվ հիմք՝ տարեկան 58.35 մլն դրամի շրջանառության շեմ սահմանելը՝ անկախ գործունեության տեսակից ամենևին էլ արդարացի չէ: Այս շեմը միանգամայն ընդունելի է մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտի, ինչպես նաև այլ ոլորտի գերփոքր կազմակերպությունների համար: Սակայն արտադրական գործունեություն իրականացնող փոքր ձեռնարկությունը, որն ունի, օրինակ, 15 աշխատակից, 58.35 մլն դրամ տարեկան շրջանառություն ունենալու պարագայում չի կարող ստանալ շահույթ, քանի որ այդ շրջանառությունից պետք է հանվեն հումքի, սարքավորումների գները, աշխատողների աշխատավարձերը, հարկերը և այլն: Այս պատճառով էլ փոքր կազմակերպությունները կխուսափեն փաստաթղթավորումից՝ ԱԱՀ-ի և շահութահարկ վճարողի դաշտ չանցնելու համար: Այս շեմի պահպանմամբ ՀՀ տնտեսությունում գործող փոքր ձեռնարկություններին առավել շահավետ կլինի ներմուծել ապրանքն ու վաճառել, քան արտադրել: Ուստի առաջարկում ենք ՀՀ շրջանառության հարկի մասին օրենքում փոփոխություն կատարել՝ կախված կազմակերպության գործունեությունից՝ արտադրող կազմակերպությունների համար այս շեմը բարձրացնելով մինչև 100 մլն, քանզի հենց սա է այն սահմանաչափը, որի պարագայում ձեռնարկությունը համարվում է փոքր՝ ըստ ՀՀ օրենսդրության:

### ***7. Որոշակի գումարից պակաս տարեկան շրջանառություն ունեցող, ինչպես նաև սկսնակ գործարարներին ուղղված հարկային բարեփոխումներ***

Իրականացված հարցումների արդյունքում պարզ դարձավ, որ սկսնակ բիզնեսները գրեթե միշտ գործունեության սկզբում գերադասում են գործել ստվերում մինչև որոշակի զարգացման մակարդակի հասնելը: Ուստի ստվերայնության մակարդակի կրճատման և ներդրումային ակտիվության խրախուսման նպատակով առաջարկում ենք ՀՀ Հարկային օրենսգրքի գլուխ 23-ի 127-րդ հոդվածում կատարել համապատասխան փոփոխություն, համաձայն որի start-up բիզնեսները կազատվեն շահութահարկի վճարումից մինչև 2 տարի ժամանակահատվածով, իսկ արտադրական գործունեություն իրականացնող նորաստեղծ ձեռնարկությունները՝ 6 ամսից մինչև 1 տարի ժամկետով՝ որոշակի քանակի աշխատատեղերի ապահովման պարագայում:

### ***8. Ներմուծվող ապրանքների համար ԱԱՀ-ի գանձման պայմանների վերանայում***

Ներկայումս համաձայն ԱԱՀ-ի մասին ՀՀ օրենքի՝ ներմուծվող ապրանքի համար ԱԱՀ-ն գանձվում է սահմանին, որը, սակայն, լրացուցիչ բեռ է դառնում ձեռնարկատերերի համար: Այս տեսանկյունից առաջարկում ենք ԱԱՀ-ի մասին ՀՀ օրենքի 30-րդ հոդվածում ԱԱՀ դաշտում գործող, ինչպես նաև շրջանառության հարկ վճարող ՀՀ իրավաբանական անձանց համար ներմուծված ապրանքի ԱԱՀ-ի վճարման համար նախատեսված տասնօրյա ժամկետը փոփոխել և սահմանել 1 տարի ժամանակահատված՝ հաշված ապրանքի մաքսազերծման օրվանից: Սա, փաստորեն հնարավորություն կտա սահմանափակ ֆինանսա-

կան ռեսուրսներ ունեցող կազմակերպություններին ներմուծել 20%-ով ավելի շատ ապրանք, այդ թվում և՛ հումք, որի գոնե որոշակի մասի իրացումից կամ վերամշակումից հետո միայն կվճարվի ԱԱՀ-ն՝ այսպիսով հնարավորություն կստեղծվի ապրանքաշրջանառության ծավալների աճի համար՝ բազմարկչի էֆեկտով աշխուժացնելով տնտեսության առանձին հատվածները ևս: Առաջարկվող փոփոխության պարագայում, իհարկե, այս մասով կնվազեն ամսական կամ եռամսյակային կտրվածքով բյուջեի մուտքերը, սակայն տարեկան կտրվածքով դրանք էապես կաճեն՝ բազմարկչի էֆեկտի ազդեցությամբ:

**9. ՀՀ և ԼՂՀ տնտեսական սուբյեկտների միջև իրականացվող տնտեսական գործարքների պայմանների բարելավում**

Հարցումների արդյունքում պարզ դարձավ նաև, որ ներկայումս ՀՀ և ԼՂՀ իրավաբանական անձանց միջև իրականացվող գործարքների պարագայում առաջանում է լրացուցիչ հարկային պարտավորություն՝ ոչ ռեզիդենտի շահութահարկի տեսքով: Իհարկե խնդիրը տվյալ պարագայում տնտեսական հարթությունից չի առաջանում: Սակայն հաշվի առնելով դրա ընդգրկման մասշտաբները և դրա արդյունքում ՀՀ և ԼՂՀ տնտեսական սուբյեկտների կրած վնասները՝ առաջարկում ենք տնտեսական գոնե միջանկյալ լուծում տվյալ խնդրի համար: Դա կարող է լինել, օրինակ, ՀՀ և ԼՂՀ միջև կնքվող կրկնակի հարկումը բացառող համաձայնագրի տեսքով՝ ՀՀ և ԼՂՀ իրավաբանական անձանց միջև տնտեսական գործարքների իրականացման պարագայում կամ գոնե որոշակի գաղտնի համաձայնագրի տեսքով՝ իրավական տեսանկյունից խնդիրներից խուսափելու համար:

**10. Արժեթղթերի շուկայի զարգացման նոր մեխանիզմների մշակում**

Ինչպես հայտնի է ներկայումս ՀՀ արժեթղթերի շուկան բավական թույլ է զարգացած: Սակայն սա, ըստ էության ունի միանգամայն օբյեկտիվ հիմք՝ ՀՀ բնակչության մեծամասնությունը չունի ազատ դրամական միջոցներից երկարաժամկետ հրաժարվելու հնարավորություն, իսկ արժեթղթերի շուկայի զարգացման համար անհրաժեշտ են «երկար փողեր»: Ուստի այս խնդրի լուծման նպատակով մենք առաջարկում ենք ՀՀ կուտակային կենսաթոշակների մասին օրենքի 41-րդ հոդվածում կատարել համապատասխան փոփոխություն՝ համաձայն որի կուտակային կենսաթոշակի կառավարիչները կպարտավորվեն հավաքագրված գումարների 25-30%-ը ներդնել ՀՀ տնտեսությունում: Այսպիսով՝ աստիճանաբար կլուծվի արժեթղթերի շուկայի կայացման խնդիրը, միաժամանակ նաև՝ ՀՀ տնտեսության զարգացումը նոր տեմպ կստանա: Սա որոշակիորեն կնվազեցնի սոցիալական լարվածությունն այն գիտակցմամբ, որ գումարների որոշակի մասն ուղղվում է մեր տնտեսության զարգացմանը՝ աշխուժացնելով նաև արժեթղթերի շուկայի գործունեությունը:

### **11. Արտահանման ներուժ ունեցող կազմակերպություններին միջազգային ցուցահանդեսներում ներկայանալու աջակցության տրամադրում**

Սոցիոլոգիական հարցման արդյունքում պարզ դարձավ, որ ինչպես ապրանքներ արտադրող, այնպես էլ ծառայություն մատուցող փոքր և միջին ձեռնարկատերերը ունեն արտաքին շուկաներում գործընկերներ գտնելու և վստահության մթնոլորտ ստեղծելու խնդիր: Որպես խնդրի լավագույն լուծում նրանցից շատերը կընտրեին միջազգային արտադրական ցուցահանդեսներին մասնակցելու տարբերակը, եթե դրա համար տրամադրվեր որոշակի ֆինանսական աջակցություն: Այս տեսանկյունից մեր կողմից առաջարկվում է յուրաքանչյուր տարի ընտրել 1 ոլորտ, որի արտահանման խրախուսումը կլինի տվյալ տարվա հրամայականը, և ֆինանսավորել տվյալ ոլորտի կազմակերպությունների ներկայացումը ոլորտին առնչվող միջազգային ցուցահանդեսին՝ տրանսպորտային կամ տաղավարի վարձակալության ծախսերի որոշակի մասի փոխհատուցմամբ:

Համանման եղանակով գյուղ. մթերքի ոլորտի կազմակերպությունների համար միջազգային ցուցահանդեսի մասնակցության աջակցությունը կարող է փոխարինվել Մոսկվայում նորաբաց Food city հսկայական գյուղ. մթերքի շուկայում ներկայանալու հնարավորության ընձեռնմամբ հետևյալ մեխանիզմով. ՀՀ համապատասխան պետական կառույցը կվարձակալի Food city-ում օրինակ՝ 50-100քմ մեծությամբ տաղավար, որը վարձակալությամբ կտրամադրի գյուղ. մթերքի արտադրության կամ վերամշակման ոլորտում գործող մի քանի կազմակերպության միաժամանակ՝ 10-20 քմ տարածքով՝ 1 ամսով՝ հերթափոխության սկզբունքով: Միևնույն ժամանակ 20 քմ տարածք կհատկացվի Մոսկվայում գործող ՀՀ առևտրային ներկայացուցչության ներկայացուցչի, որտեղ նա կներկայացնի այն կազմակերպությունների արտադրանքների օրինակները, որոնց վարձակալության 1 ամիսն արդեն լրացել է, և նրանց փոխարինելու են եկել նոր կազմակերպություններ: Բնականաբար, Food city-ի առաջին հարկում գտնվող պահեստում վարձակալված տարածքում կպահվեն տարբեր կազմակերպությունների արտադրանքները, իսկ առևտրային ներկայացուցչի կողմից դրանց վաճառքի պարագայում այդ վաճառքի որոշակի տոկոս կտրամադրվի պետությանը՝ վարձակալած պահեստի գումարի փոխհատուցման համար:

### **12. Արտահանման առցանց հարթակի ստեղծում**

Առաջարկում ենք նաև ՀՀ արտահանող կազմակերպություններին աջակցելու նպատակով ստեղծել ՀՀ արտահանման հարթակ, որտեղ կազմակերպությունների գրանցումը կլինի կամավոր և ոչ մեծ չափի անդամավճարի պայմանով: Գրանցվող կազմակերպությունները կներկայացնեն տվյալ հարթակում իրենց արտադրանքի տեսականին՝ համապատասխան նկարագրությամբ: Արտերկրի գործարարը, մուտք գործելով կայք, կկարողանա ապրանքներ պատվիրել ինչպես մեկ, այնպես էլ մի քանի արտադրողից: Ինչպես հայտնի է՝ բազմաթիվ են դեպքերը, երբ հատկապես փոքր արտադրողները չեն կարողա-

նում բավարարել մեկ պատվիրատուի համար անհրաժեշտ ծավալները: Այս հարթակը հնարավորություն կտա այս խնդիրը լուծել մի քանի արտադրողների արտադրանքի միաժամանակյա պատվիրման միջոցով: Իսկ տվյալ կայքի առաջնդման գործառույթը կդրվի տարբեր երկրներում գործող ՀՀ առևտրային ներկայացուցչությունների վրա, որոնց արդյունավետությունը ներկայումս այնքան էլ նկատելի չէ: Մեր կարծիքով, անհրաժեշտ է օպտիմալացնել պետական ֆինանսավորմամբ գործող բոլոր կառույցների աշխատանքը՝ կամ դրա արդյունավետության բարձրացման կամ տվյալ կառույցներից հրաժարման միջոցով: ՀՀ առևտրային ներկայացուցչությունները ներկայումս այդպիսի կառույցների շարքում են: Նրանց վրա պետք է դրվի ստեղծված արտահանման հարթակի առաջնդման գործառույթը իրենց իրավասության տակ եղած տարածաշրջանում գործարար միջավայրի հետ առերես շփման, linkedin սոցիալական հարթակի օգտագործման և այլ միջոցներով: Արտահանման հարթակի այցելությունների թվի աճի ցուցանիշի, ինչպես նաև դրանց աշխարհագրական տեղաբաշխման արդյունքում ակնհայտ կլինի այս կամ այն ներկայացուցչության լավ կամ վատ աշխատանքը, որի արդյունքում էլ նրանք կշարունակեն իրենց գործունեությունը նույն անձնակազմով կամ տեղի կունենա անձնակազմի փոփոխություն: Բացի այդ ներկայացուցչությունները, պարբերաբար շուկայի հետազոտություն իրականացնելով, կպարզեն շուկայում պահանջարկի փոփոխությունը և կտեղեկացնեն արտադրողներին՝ այսպիսով կողմնորոշելով նրանց նախատեսվող տեսականու արտադրության հարցում:

Այսպիսով, ինչպես ցույց տվեց վերլուծությունը, ՀՀ ներդրումային միջավայրը դեռևս ունի բազմաթիվ խնդիրներ, որոնք էապես խոչընդոտում են ներդրումների ներհոսքին: Այդ պատճառով մենք հնարավորինս ընդգրկուն վերլուծության հիման վրա բացահայտեցինք առկա խնդիրները և ներկայացրեցինք այն համալիր միջոցառումները, որոնց վրա կարող է հիմնվել ներդրումային դաշտի բարեփոխումները հետհեղափոխական Հայաստանում:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. <http://knoema.com>,
2. <http://www.armstat.am>
3. <http://www.doingbusiness.org/ru/rankings>
4. <http://www.theglobaleconomy.com>,
5. <http://www.tradingeconomics.com>
6. <https://ec.europa.eu/eipp/desktop/en/index.html?2nd-language=en>
7. <https://rusinvestproject.ru/katalog-investproektov/>,
8. <https://www.angelinvestmentnetwork.com.ph/>,
9. <https://www.businessarmenia.am/about>

## Լիլիթ Սարգսյան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ՀԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ՄՈՂԵԼԸ

**Ամփոփագիր:** Հոդվածում էկոնոմետրիկ գործիքների կիրառմամբ հաշվարկվել է ներդրումների ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի վրա: Հիմնվելով գործարարության դյուրինության համաթվի, ինչպես նաև ներդրումային միջավայրը պայմանավորող այլ գործոնների վերլուծության և սոցիոլոգիական հարցման արդյունքների վրա՝ ներկայացվել են ՀՀ ներդրումային դաշտի հիմնական խնդիրները և առաջարկվել է ՀՀ ներդրումային դաշտի բարելավմանն ուղղված հեղափոխական մոդել: Վերլուծության համար տվյալները վերցվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի և Համաշխարհային բանկի տվյալների բազայից:

**Բանալի բառեր.** ներդրումային միջավայր, ՕՈՒՆ, տնտեսական աճ, առցանց հարթակ, համայնքի զարգացում, հիմնասյուն:

Лилит Саргсян

### РЕВОЛЮЦИОННАЯ МОДЕЛЬ ДЛЯ РЕФОРМЫ ИНВЕСТИЦИОННОЙ СРЕДЫ АРМЕНИИ

**Резюме:** В статье оценивается влияние инвестиций на экономический рост Армении с использованием эконометрических инструментов. Основываясь на анализе индекса легкости ведения бизнеса, а также других факторах, влияющих на инвестиционную среду, и результатах социологического опроса, представлены основные проблемы инвестиционной среды Армении и предложена революционная модель улучшения инвестиционного климата в Армении с 12 основными направлениями. Данные для анализа взяты на основе баз данных Статистического комитета РА и Всемирного банка.

**Ключевые слова:** инвестиционная среда, ПИИ, экономический рост, онлайн платформа, развитие региона, основные направления.

**Lilit Sargsyan**

**THE REVOLUTIONARY MODEL OF ARMENIA'S INVESTMENT  
ENVIRONMENT REFORM**

**Abstract:** The article estimates the impact of investment on the economic growth in Armenia using econometric instruments. Based on the analysis of Doing business, as well as the other factors that make the investment climate and the results of the investor survey, the main problems of Armenian investment climate have been presented and a revolutionary model for improving the investment climate in Armenia with respect to 12 pillars and proposed. For the purpose of the analysis the statistical data released by the Statistical Committee RA and the World Bank have been used.


**Keywords:** Investment climate, FDI, economic growth, online platform, development of the region, pillars

## Գայանե Թովմասյան Ռուբիկ Թովմասյան

### ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐՆ ՈՒ ՌՒՂԵՆԻՇԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Զբոսաշրջությունը մարդու ամենագրավիչ պահանջմունքներից մեկն է: Այն իր դրսևորումներով բազմազան է ու բազմաբնույթ, ընդգրկում է մարդկությանը հայտնի բոլոր բնագավառները՝ պատմական, աշխարհագրական, բնական, սպորտային, կրոնական, կենցաղային, մշակութային: Աշխարհում զբոսաշրջության զարգացման տեմպերը գնալով աճում են: Այն երկրները, որոնք զբոսաշրջությունը կարողացել են օգտագործել նաև որպես դրսից եկած լրացուցիչ եկամուտների աղբյուր՝ պետական բյուջեն համալրելու առումով, լավ են ըմբռնել հեշտ և արագ հարստանալու գաղտնիքները:

Զբոսաշրջությունը ՀՀ տնտեսության գերակա ոլորտներից մեկն է, որը վերջին տարիներին դրսևորել է աճի միտումներ: Ըստ ՀՀ ՎԿ տվյալների՝ **2018թ. ՀՀ է ժամանել 1.651.782 զբոսաշրջիկ, իսկ ՀՀ-ից մեկնել է 1.622.791 զբոսաշրջիկ**<sup>25</sup> (գծապատկեր 1):



**Գծապատկեր 1. ՀՀ ներգնա և արտագնա զբոսաշրջիկների թվաքանակը, 2009-2018թթ.**<sup>26</sup>

Նախորդ տարվա համեմատ ժամանողների թվաքանակն աճել է 10.5%-ով: 2018թ. ժամանողների 21%-ը եղել են ՌԴ-ից, 13,9%-ը՝ ԱՄՆ-ից, 6,8%-ը՝ Իրանի Իսլամական Հանրապետությունից, 6,4%-ը՝ Գերմանիայից, 5,2%-ը՝ Ֆրանսիայից, 2,3%-ը՝ Վրաստանից և այլն: 2018թ. Հայաստան ժամանող զբոսաշրջիկ-

<sup>25</sup> ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2017-2018թթ. հունվար-դեկտեմբերին, էջ 135, [https://www.armstat.am/file/article/sv\\_12\\_18a\\_421.pdf](https://www.armstat.am/file/article/sv_12_18a_421.pdf)


<sup>26</sup> Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի Վիճակագրական տվյալների բազաներ, Միջազգային զբոսաշրջություն, <https://www.armstat.am/am/?nid=14>



ների 18,6%-ը հանգրվանել են հյուրանոցային տնտեսության օբյեկտներում (307473 զբոսաշրջիկ), իսկ մնացած 1344309-ը՝ բարեկամի կամ հարազատի տանը, վարձով տրվող բնակարաններում և այլն:

Հյուրանոցային տնտեսության օբյեկտներում հանգրվանած զբոսաշրջիկների 48,8%-ն այցելել են հանգստի և ժամանցի, 27,3%-ինը՝ գործնական, 1,4%-ը՝ բուժման, 22,5%-ը՝ այլ նպատակներով<sup>27</sup>:

Եթե դիտարկենք ՀՀ ժամանող զբոսաշրջիկների թվաքանակի փոփոխությունը, ապա գծապատկեր 2-ից պարզ է դառնում, որ աճի մեծ տեմպեր գրանցվել են 2001-2007թթ., այնուհետև՝ 2010թ. և 2017թ.: Կտրուկ անկում եղել է 2015թ.-ին՝ նախորդ տարվա համեմատ 1%-ով պակաս այցելություն (ինչը հիմնականում բացատրվում է Ռուսաստանից զբոսաշրջիկների հոսքի նվազմամբ, սակայն, միևնույն ժամանակ 2015թ.-ին էին Ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները, Քիմ Քարդաշյանի այցը, Համահայկական խաղերը, որոնք, անշուշտ, ազդեցություն ունեցան հաջորդ տարվա զբոսաշրջիկների թվաքանակի աճի վրա):



**Գծապատկեր 2.** ՀՀ ներգնա զբոսաշրջիկների թվաքանակի աճի տեմպը, 2001-2018թթ.

Նշենք նաև, որ ներգնա և արտագնա զբոսաշրջիկների ընդհանուր թվաքանակի հաշվարկման համար հիմք են հանդիսանում սահմանային անցման կետերում ուղևորների հաշվառման արդյունքում արձանագրված՝ ՀՀ ժամանողների և ՀՀ-ից մեկնածուների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը՝ ստացված ՀՀ ազգային անվտանգության ծառայության ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով, ինչպես նաև 2013թ. իրականացված «ժամանողների և մեկնողների ընտրանքային հետազոտության» արդյունքները: Այս հետազոտության ընթացքում շուրջ 22100 անձանց շրջանում կատարված հարցումների հիման վրա ձևավորված գործակիցները հիմք են հանդիսացել այդ և հետագա տարիների զբոսաշրջիկների թվաքանակի հաշվարկի համար: Բնական է, որ արդյունքներն այդքան էլ ճշգրիտ չեն

<sup>27</sup> ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019թ. հունվարին, էջ 105, [https://www.armstat.am/file/article/sv\\_01\\_19a\\_421.pdf](https://www.armstat.am/file/article/sv_01_19a_421.pdf)

ստացվի, ուստի ներկայումս մշակվել է նախագիծ՝ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի (ՍԷԿՏ)<sup>28</sup> ներդրման համար: Այս առումով կարծում ենք, որ խնդիրը հնարավոր էր վաղուց լուծել հետևյալ պարզ եղանակով՝ համակարգչային ծրագրի միջոցով սահմանային անցման կետերում համապատասխան աշխատակիցը կարող էր ֆիքսել անձնագիր ներկայացնողի քաղաքացիությունը, սեռը, տարիքը և կարճ հարցում անել այցելության նպատակի ու տևողության մասին: Ստացված տեղեկատվությունը թույլ կտար ունենալ ավելի ճշգրիտ և ամբողջական տեղեկատվություն զբոսաշրջիկների քաղաքացիության, սեռի, տարիքի, զբոսաշրջության նպատակի և տևողության մասին: Իսկ ճշգրիտ վիճակագրության առկայությունը, բնականաբար, կնպաստի նաև ոլորտի հետազոտությունների իրականացման, զարգացման հիմնախնդիրների վերլուծության արդյունավետության բարձրացմանը:

Հիմնավոր և ճշգրիտ վերլուծություն և դատողություն անելու պահանջից ելնելով՝ անհրաժեշտ է դիտարկել 2018թ. զբոսաշրջային այցելություններն ըստ եռամսյակների և այն համեմատել նախորդ երկու տարիների ցուցանիշների հետ (աղյուսակ 1):

2018թ. առաջին եռամսյակում Հայաստան է այցելել 346458 մարդ, ինչը 2017թ. առաջին եռամսյակի համեմատությամբ աճել է 16%-ով, իսկ 2016թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 37%-ով: 2018թ. երկրորդ եռամսյակում Հայաստան է այցելել 339521 մարդ, ինչը 2017թ. երկրորդ եռամսյակի համեմատությամբ աճել է շուրջ 5%-ով, իսկ 2016թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ շուրջ 37%-ով: 2018թ. երրորդ եռամսյակում Հայաստան է այցելել 589230 մարդ, ինչը 2017թ. երրորդ եռամսյակի համեմատությամբ աճել է շուրջ 7%-ով, իսկ 2016թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ շուրջ 26%-ով: 2018թ. չորրորդ եռամսյակում Հայաստան է այցելել 376573 մարդ, ինչը 2017թ. չորրորդ եռամսյակի համեմատությամբ աճել է շուրջ 16.8%-ով, իսկ 2016թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ շուրջ 29.5%-ով:

2018թ. երկրորդ եռամսյակում առաջին եռամսյակի համեմատ ներգնա զբոսաշրջիկների թվաքանակը նվազել է շուրջ 2%-ով, իսկ 2017թ. երկրորդ եռամսյակում առաջին եռամսյակի համեմատ ներգնա զբոսաշրջիկների թվաքանակն աճել էր շուրջ 8,5%-ով, 2016թ.՝ նվազել 1,5%-ով: 2018թ. երրորդ եռամսյակում երկրորդ եռամսյակի համեմատ ներգնա զբոսաշրջիկների թվաքանակն աճել է շուրջ 74%-ով, իսկ 2017թ. երրորդ եռամսյակում երկրորդ եռամսյակի համեմատ ներգնա զբոսաշրջիկների թվաքանակն աճել էր շուրջ 70%-ով, 2016թ.՝ աճել էր շուրջ 88%-ով: 2018թ. չորրորդ եռամսյակում երրորդ եռամսյակի համեմատ ներգնա զբոսաշրջիկների թվաքանակը նվազել է շուրջ 36%-ով, իսկ 2017թ. չորրորդ եռամսյակում երրորդ եռամսյակի համեմատ ներգնա զբոսաշրջիկների թվաքանակը նվազել էր շուրջ 41%-ով, 2016թ.՝ նվազել էր շուրջ 38%-ով:

---

<sup>28</sup> Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության վիճակագրության վարման մեթոդի կատարելագործմանն ուղղված միջոցառումների մասին, <https://www.e-draft.am/projects/636/about>

Աղյուսակ 1

ՀՀ ներգնա և արտագնա զբոսաշրջիկների թվաքանակը 2016-2018թթ., մարդ

	2016Q1	2016Q2	2016Q3	2016Q4	2017Q1	2017Q2	2017Q3	2017Q4	2018Q1	2018Q2	2018Q3	2018Q4
Ժամանել են ուղևորներ, որոնք ըստ ՋՀԿ մեթոդաբանության համարվում են զբոսաշրջիկ	252,506	248,612	467,892	290,647	298,533	323,847	550,022	322,377	346,458	339,521	589,230	376,573
Մեկնել են ուղևորներ, որոնք ըստ ՋՀԿ մեթոդաբանության համարվում են զբոսաշրջիկ	227,587	243,194	432,848	359,058	266,324	304,076	505,652	405,703	300,832	310,111	537,598	474,250


Աղյուսակ 2

ՀՀ վճարային հաշվեկշռի ճանապարհորդության թվերը, 2017-2018թթ., մլն ԱՄՆ դոլար

	2017Q1	2017Q2	2017Q3	2017Q4	2017	2018Q1	2018Q2	2018Q3	2018Q4	2018
<b>Ճանապարհորդություն</b>	6.54	-14.19	-19.15	-122.83	<b>-149.62</b>	4.21	-18.40	-31.88	-151.5	<b>-197.6</b>
<i>կրեդիտ</i>	219.51	234.27	418.61	247.78	<b>1,120.17</b>	247.53	238.61	439.83	281.9	<b>1,207.9</b>
<i>դեբետ</i>	212.97	248.46	437.76	370.60	<b>1,269.80</b>	243.31	257.01	471.71	433.4	<b>1,405.5</b>
<b>Գործնական</b>	-21.91	-28.64	-40.50	-36.35	<b>-127.40</b>	-25.25	-29.75	-40.94	-34.9	<b>-130.8</b>
<i>կրեդիտ</i>	23.18	26.44	46.49	31.01	<b>127.11</b>	23.79	24.49	45.15	32.9	<b>126.4</b>
<i>դեբետ</i>	45.09	55.08	86.99	67.36	<b>254.51</b>	49.04	54.24	86.09	67.8	<b>257.2</b>
<b>Անձնական</b>	28.45	14.45	21.36	-86.48	<b>-22.23</b>	29.46	11.35	9.05	-116.6	<b>-66.8</b>
<i>կրեդիտ</i>	196.33	207.83	372.13	216.77	<b>993.06</b>	223.74	214.12	394.68	249.0	<b>1,081.5</b>
<i>դեբետ</i>	167.89	193.38	350.77	303.25	<b>1,015.29</b>	194.28	202.77	385.62	365.6	<b>1,148.3</b>

Ինչպես հայտնի է՝ զբոսաշրջությունից ստացված ֆինանսական մուտքերն ու ելքերն արտացոլվում են վճարային հաշվեկշռում<sup>29</sup>: Եթե դիտարկենք նաև վճարային հաշվեկշռի ճանապարհորդության կրեդիտի թվերը ըստ եռամսյակների (աղյուսակ 2), ապա կտեսնենք, որ 2018թ. առաջին եռամսյակում ՀՀ ներգնա զբոսաշրջիկները ծախսել են 714,4 դոլար, երկրորդ եռամսյակում՝ 703 դոլար, երրորդ եռամսյակում՝ 746,4 դոլար, չորրորդ եռամսյակում՝ 749 դոլար (2018թ. զբոսաշրջիկների միջին ծախսը տարեկան կտրվածքով կազմել է 731 դոլար, իսկ 2017թ.՝ 749 դոլար):

Կոռելացիոն-ռեգրեսիոն վերլուծությունը ցույց է տալիս, որ ներգնա և ներքին զբոսաշրջիկների թվաքանակի և ՀՆԱ-ի միջև (2001-2018թթ. սվյալների հիման վրա) Պիրսոնի R գործակիցը 0.882 է, իսկ դետերմինացիայի գործակիցը՝ R<sup>2</sup>-ն՝ 0.778, այսինքն զբոսաշրջիկների թվաքանակի փոփոխության ազդեցությունը ՀՆԱ-ի փոփոխության վրա 77,8% է (զձապատկեր 3):



**Գձապատկեր 3.** Ռեգրեսիոն մոդելը ՀՀ ներքին ու ներգնա զբոսաշրջիկների թվաքանակի և ՀՆԱ-ի միջև

Հաշվի առնելով ներգնա զբոսաշրջիկների թվաքանակի փոփոխությունները՝ կանխատեսման արտարկման մեթոդով հաշվարկել ենք զբոսաշրջիկների թվաքանակի աճը մինչև 2030թ.:

Հաշվարկները կատարվել են՝ հաշվի առնելով տարբեր սցենարներ.


- հաշվարկվել է 2001-2018թթ. ներգնա զբոսաշրջիկների թվաքանակի միջին աճի տեմպը (18,5%) և ենթադրվել է, որ հաջորդ տարիներին աճի տեմպը այդքան կլինի: Ըստ այս սցենարի՝ 2020թ. ներգնա զբոսաշրջիկների թվա-

<sup>29</sup> Հայաստանի Հանրապետության արտաքին հաշիվներ, ՀՀ վճարային հաշվեկշիռ, <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>

քանակը կկազմի 2319474 մարդ, 2025թ.՝ 5419774 մարդ, 2030թ.՝ 12664059 մարդ (լավատեսական սցենար),

- հաշվարկվել է 2008-2018թթ. ներգնա զբոսաշրջիկների թվաքանակի միջին աճի տեմպը (11,5%) և ենթադրվել է, որ հաջորդ տարիներին աճի տեմպը այդքան կլինի: Ըստ այս սցենարի՝ 2020թ. ներգնա զբոսաշրջիկների թվաքանակը կկազմի 2053537 մարդ, 2025թ.՝ 3538969 մարդ, 2030թ.՝ 6098895 մարդ (իրատեսական սցենար),
- հաշվարկվել է վերջին երեք տարիների ներգնա զբոսաշրջիկների թվաքանակի միջին աճի տեմպը (11,6%) և ենթադրվել է, որ հաջորդ տարիներին աճի տեմպը այդքան կլինի: Ըստ այս սցենարի՝ 2020թ. ներգնա զբոսաշրջիկների թվաքանակը կկազմի 2057222 մարդ, 2025թ.՝ 3561247 մարդ, 2030թ.՝ 6164858 մարդ (իրատեսական սցենար),
- հաշվարկվել է վերջին հինգ տարիների ներգնա զբոսաշրջիկների թվաքանակի միջին աճի տեմպը (9,0%) և ենթադրվել է, որ հաջորդ տարիներին աճի տեմպը այդքան կլինի: Ըստ այս սցենարի՝ 2020թ. ներգնա զբոսաշրջիկների թվաքանակը կկազմի 1962482 մարդ, 2025թ.՝ 3019522 մարդ, 2030թ.՝ 4645909 մարդ (իրատեսական սցենար),
- հաշվարկվել է վերջին յոթ տարիների ներգնա զբոսաշրջիկների թվաքանակի միջին աճի տեմպը (10,4%) և ենթադրվել է, որ հաջորդ տարիներին աճի տեմպը այդքան կլինի: Ըստ այս սցենարի՝ 2020թ. ներգնա զբոսաշրջիկների թվաքանակը կկազմի 2013218 մարդ, 2025թ.՝ 3301690 մարդ, 2030թ.՝ 5414790 մարդ (իրատեսական սցենար),
- հաշվարկվել է 2001-2018թթ. ներգնա զբոսաշրջիկների թվաքանակի ամենացածր աճի դրական տեմպը (5,1%) և ենթադրվել է, որ հաջորդ տարիներին աճի տեմպը այդքան կլինի: Ըստ այս սցենարի՝ 2020թ. ներգնա զբոսաշրջիկների թվաքանակը կկազմի 1824560 մարդ, 2025թ.՝ 2339762 մարդ, 2030թ.՝ 3000443 մարդ (վատատեսական սցենար),
- հաշվարկվել է 2001-2018թթ. ներգնա զբոսաշրջիկների թվաքանակի փոփոխության ամենացածր տեմպը (-1,0%) և ենթադրվել է, որ հաջորդ տարիներին փոփոխության տեմպը այդքան կլինի: Ըստ այս սցենարի՝ 2020թ. ներգնա զբոսաշրջիկների թվաքանակը կկազմի 1618912 մարդ, 2025թ.՝ 1539569 մարդ, 2030թ.՝ 1464115 մարդ (խիստ վատատեսական սցենար):

Այսպիսով՝ լավատեսական սցենարի դեպքում 2020թ. << ներգնա զբոսաշրջիկների թվաքանակը կկազմի 2.319.474 մարդ, իրատեսական սցենարների դեպքում՝ 1.962.482-2.057.222 մարդ, վատատեսական սցենարի դեպքում՝ 1.824.560 մարդ, իսկ խիստ վատատեսական սցենարի դեպքում՝ 1.618.912 մարդ:



	2018	2019	2020	2021	2022	2023	2024	2025	2026	2027	2028	2029	2030
◆ average of 2001-2018, 18.5%	1651782	1957362	2319474	2748576	3257063	3859619	4573649	5419774	6422432	7610582	9018540	10686970	12664059
■ average of last 3 years, 11.6%	1651782	1843389	2057222	2295860	2562179	2859392	3191082	3561247	3974352	4435376	4949880	5524066	6164858
▲ average of last 5 years, 9.0%	1651782	1800442	1962482	2139106	2331625	2541471	2770204	3019522	3291279	3587494	3910369	4262302	4645909
✕ average of last 7 years, 10.4%	1651782	1823567	2013218	2222593	2453743	2708932	2990661	3301690	3645065	4024152	4442664	4904701	5414790
✱ average of 2008-2018, 11.5%	1651782	1841737	2053537	2289693	2553008	2846604	3173964	3538969	3945951	4399735	4905705	5469861	6098895
● min of 2001-2018 (only growths), 5.1%	1651782	1736023	1824560	1917613	2015411	2118197	2226225	2339762	2459090	2584504	2716313	2854845	3000443
— min of 2001-2018, -1.0%	1651782	1635264	1618912	1602722	1586695	1570828	1555120	1539569	1524173	1508931	1493842	1478904	1464115

Գծապատկեր 4. ՀՀ ներգնա զբոսաշրջիկների թվաքանակի կանխատեսումը արտարկման մեթոդով

Հարկ է նշել, որ վերջին տարիներին աճել է նաև ՀՀ ներքին զբոսաշրջիկների թվաքանակը:

### Աղյուսակ 3

#### ՀՀ ներքին զբոսաշրջիկների թվաքանակը, 2014-2018թթ.<sup>30</sup>

Ժամանակահատվածը	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.
<b>Ընդամենը զբոսաշրջիկներ*</b> , որոնցից՝ ըստ նպատակի					
գործնական	859703	871888	979968	1086707	1092322
հանգստի և ժամանցի	189465	160089	171601	252787	207761
բուժման	540375	591271	696582	742188	781668
այլ	84133	63494	58194	43558	58339
այլ	45729	57034	53591	48174	44554

\*Տվյալներն արտաջրում են հյուրանոցային տնտեսության օբյեկտներում (հյուրանոցներ, հյուրանոցափոխ հանգրվաններ, առողջարաններ, հանգստյան տներ և այլն) հաշվառված զբոսաշրջիկներին:

2018թ. ՀՀ ներքին զբոսաշրջիկների թվաքանակը կազմել է 1092322 մարդ: Ներքին զբոսաշրջիկների մեծ մասի նպատակը եղել է հանգիստը և ժամանցը:

Հաշվի առնելով ներքին զբոսաշրջիկների թվաքանակի փոփոխությունները՝ կանխատեսման արտարկման մեթոդով հաշվարկել ենք նաև ներքին զբոսաշրջիկների թվաքանակի աճը մինչև 2030թ.:

Հաշվարկները կատարվել են՝ հաշվի առնելով տարբեր սցենարներ.

- հաշվարկվել է 2001-2018թթ. ներքին զբոսաշրջիկների թվաքանակի միջին աճի տեմպը (14,9%) և ենթադրվել է, որ հաջորդ տարիներին աճի տեմպը այդքան կլինի: Ըստ այս սցենարի՝ 2020թ. ներքին զբոսաշրջիկների թվաքանակը կկազմի 1442085 մարդ, 2025թ.՝ 2887958 մարդ, 2030թ.՝ 5783504 մարդ (լավատեսական սցենար),
- հաշվարկվել է 2008-2018թթ. ներքին զբոսաշրջիկների թվաքանակի միջին աճի տեմպը (10,9%) և ենթադրվել է, որ հաջորդ տարիներին աճի տեմպը այդքան կլինի: Ըստ այս սցենարի՝ 2020թ. ներքին զբոսաշրջիկների թվաքանակը կկազմի 1343426 մարդ, 2025թ.՝ 2253572 մարդ, 2030թ.՝ 3780326 մարդ (իրատեսական սցենար),
- հաշվարկվել է վերջին երեք տարիների ներքին զբոսաշրջիկների թվաքանակի միջին աճի տեմպը (7,9%) և ենթադրվել է, որ հաջորդ տարիներին աճի տեմպը այդքան կլինի: Ըստ այս սցենարի՝ 2020թ. ներքին զբոսաշրջիկների թվաքանակը կկազմի 1271726 մարդ, 2025թ.՝ 1859948 մարդ, 2030թ.՝ 2720245 մարդ (իրատեսական սցենար),
- հաշվարկվել է վերջին հինգ տարիների ներքին զբոսաշրջիկների թվաքանակի միջին աճի տեմպը (10,7%) և ենթադրվել է, որ հաջորդ տարիներին

<sup>30</sup> ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018թ. հունվար-հոկտեմբերին, էջ 126,

[https://www.armstat.am/file/article/sv\\_10\\_18a\\_432.pdf](https://www.armstat.am/file/article/sv_10_18a_432.pdf); ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2016թ.

հունվարին, էջ 96, [https://www.armstat.am/file/article/sv\\_01\\_16a\\_422.pdf](https://www.armstat.am/file/article/sv_01_16a_422.pdf); ՀՀ սոցիալ-տնտեսական

վիճակը 2018թ. հունվարին, էջ 97, [https://www.armstat.am/file/article/sv\\_01\\_18a\\_422.pdf](https://www.armstat.am/file/article/sv_01_18a_422.pdf); ՀՀ

սոցիալ-տնտեսական վիճակը 2019թ. հունվարին, էջ 106,

[https://www.armstat.am/file/article/sv\\_01\\_19a\\_422.pdf](https://www.armstat.am/file/article/sv_01_19a_422.pdf)

աճի տեմպը այդքան կլինի: Ըստ այս սցենարի՝ 2020թ. ներքին զբոսաշրջիկների թվաքանակը կկազմի 1338585 մարդ, 2025թ.՝ 2225277 մարդ, 2030թ.՝ 3699322 մարդ (իրատեսական սցենար),

- հաշվարկվել է վերջին յոթ տարիների ներքին զբոսաշրջիկների թվաքանակի միջին աճի տեմպը (12,7%) և ենթադրվել է, որ հաջորդ տարիներին աճի տեմպը այդքան կլինի: Ըստ այս սցենարի՝ 2020թ. ներքին զբոսաշրջիկների թվաքանակը կկազմի 1387390 մարդ, 2025թ.՝ 2522424 մարդ, 2030թ.՝ 4586038 մարդ (իրատեսական սցենար),
- հաշվարկվել է 2001-2018թթ. ներքին զբոսաշրջիկների թվաքանակի ամենացածր աճի դրական տեմպը (0,5%) և ենթադրվել է, որ հաջորդ տարիներին աճի տեմպը այդքան կլինի: Ըստ այս սցենարի՝ 2020թ. ներքին զբոսաշրջիկների թվաքանակը կկազմի 1103273 մարդ, 2025թ.՝ 1131123 մարդ, 2030թ.՝ 1159694 մարդ (վատատեսական սցենար),
- հաշվարկվել է 2001-2018թթ. ներքին զբոսաշրջիկների թվաքանակի փոփոխության ամենացածր տեմպը (-2,6%) և ենթադրվել է, որ հաջորդ տարիներին փոփոխության տեմպը այդքան կլինի: Ըստ այս սցենարի՝ 2020թ. ներքին զբոսաշրջիկների թվաքանակը կկազմի 1036260 մարդ, 2025թ.՝ 908371 մարդ, 2030թ.՝ 796266 մարդ (խիստ վատատեսական սցենար):

Այսպիսով՝ լավատեսական սցենարի դեպքում 2020թ. ՀՀ ներքին զբոսաշրջիկների թվաքանակը կկազմի 1.442.085 մարդ, իրատեսական սցենարների դեպքում՝ 1.271.726-1.387.390 մարդ, վատատեսական սցենարի դեպքում՝ 1.103.273 մարդ, իսկ խիստ վատատեսական սցենարի դեպքում՝ 1.036.260 մարդ (զճապատկեր 5):


Կարող ենք ասել, որ վերոնշյալ լավատեսական սցենարներն իրականացնելու համար անհրաժեշտ են ոլորտի զարգացմանն ու առաջնդմանն ուղղված համակողմանի և համալիր մի շարք միջոցառումների հետևողական իրականացում, որոնք ներկայացրել ենք հոդվածի վերջում:

Ըստ Ճանապարհորդության և զբոսաշրջության համաշխարհային խորհրդի հրապարակումների՝ ՀՀ-ում զբոսաշրջության համախառն ներդրումը ՀՆԱ-ում 2018թ. կազմել է 868,7 մլրդ դրամ կամ 1.8 մլն դոլար (ՀՆԱ-ի 14,1%-ը), զբոսաշրջության համախառն ազդեցությունը զբաղվածությանը կազմել է 137000 մարդ (զբաղվածների 12,5%-ը)<sup>31</sup>: Նշենք նաև, որ 2018թ. պետական բյուջեից զբոսաշրջության ոլորտին հատկացվել է 272 մլն դրամ<sup>32</sup>, ինչն ուղղվել է 2018թ. զբոսաշրջության զարգացման ծրագրով նախատեսված հիմնական միջոցառումների իրականացմանը՝ էլեկտրոնային մարքեթինգի ապահովում, գովազդատեղեկատվական նյութերի մշակում բոլոր նպատակային շուկաների համար, այդ շուկաներում մարքեթինգային և խթանման միջոցառումների իրականացում:

<sup>31</sup> WTTC Travel & Tourism Economic Impact 2019 Armenia, p. 1, <https://www.wttc.org/economic-impact/country-analysis/country-data/>

<sup>32</sup> ՀՀ 2018թ. պետական բյուջեի մասին ՀՀ օրենքը, ընդունված 2017թ., <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=118144>





Գծապատկեր 5. ՀՀ ներքին զբոսաշրջիկների թվաքանակի կանխատեսումը արդարական մեթոդով

նացում, հայաստանյան և նպատակային շուկաներից օտարերկրյա լրագրողների և զբոսաշրջության ոլորտի մասնագետների ճանաչողական այցերի կազմակերպում, Սփյուռքում մարքեթինգային և խթանման միջոցառումների իրականացում, մասնակցություն միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսներին, պետական աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեության ապահովմանը, մարքեթինգային միջոցառումներում զբոսաշրջության մեծ պոտենցիալ ունեցող նոր ուղղությունների ընդգրկում, ՀՀ մարզերում ավանդական փառատոների կազմակերպում, քայլարշավային երթուղիների մշակում, մարդկային ռեսուրսների զարգացում, միջազգային համագործակցություն<sup>33</sup>:

Իսկ ինչպե՞ս ազդեց 2018թ. գարնան թավշյա հեղափոխությունը զբոսաշրջության վրա: Դեռ գարնանն անդրադարձել ենք ՀՀ-ում հեղափոխական զբոսաշրջության զարգացման հնարավորություններին, ներկայացրել կարմիր զբոսաշրջությունը Ռուսաստանում և Չինաստանում<sup>34</sup>: **2018թ. ներզնա զբոսաշրջության թվերը վկայում են, որ զբոսաշրջիկների կտրուկ աճ չի եղել ՀՀ-ում (10,5% նախորդ տարվա 18,7%-ի դիմաց)**: Իհարկե ակնկալել, թե 2018թ. աճը պետք է զգալի լիներ, միանշանակ սխալ կլինի, քանի որ թավշյա հեղափոխության իրականացումը շատ զբոսաշրջիկների համար կարող էր հետաքրքիր լինել և այցելության խթան հանդիսանալ, շատերի մոտ էլ կարող էր երևակայական բացասական արձագանք առաջացնել հնարավոր ենթադրյալ վտանգների և ռիսկերի հետ կապված: Դիսկի առկայությունը կարճաժամկետ բնույթ էր կրում և վերաբերում էր միայն ապրիլ-մայիս ամիսներին, սակայն հնարավոր է, որ դա ազդեցություն է ունեցել այն հանգամանքի վրա, որ 2018թ. երկրորդ եռամսյակում 2017թ. երկրորդ եռամսյակի համեմատ ժամանողների թվաքանակն աճել է 5%-ով, այն դեպքում, երբ 2017թ. երկրորդ եռամսյակում 2016թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճը կազմել էր 30%: Պետք է նաև ընդունենք, որ 2017թ. զբոսաշրջության ոլորտի 18,7% աճը 2016-2017թթ. իրականացված մարքեթինգային միջոցառումների արդյունք էր<sup>35</sup>:

**Ինչ խոսք, մեր հեղափոխությունը դրական արձագանք ունեցավ միջազգային մամուլում, և դրան հաջորդող 9 ամիսների կտրվածքով զբոսաշրջության թվաքանակը միայն կարճաժամկետում ցույց տվեց այդ դրական արձագանքի արդյունքները:** Միևնույն ժամանակ կարծում ենք, որ այդ ընթացքում պետք էր մշակել համապատասխան հեղափոխական զբոսաշրջային պրո-

<sup>33</sup> Զբոսաշրջության զարգացման 2018թ. ծրագիրը և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին ՀՀ ՏՀՆՆ Զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահի հրաման, 2018թ. N - 20-Ս, <http://mineconomy.am/media/2018/02/2865.pdf>

<sup>34</sup> Թովմասյան Գ., Հեղափոխական զբոսաշրջություն. Նոր հնարավորություն Հայաստանի համար, <https://asue.am/amberd/publications/analytics/revolution-tourism-new-opportunity-for-armenia>; Tovmasyan G., Revolutionary Tourism. New Opportunity For Armenia, SocioEconomic Challenges, Vol. 2, Issue 3, 2018, pp. 76-82, <http://armgpublishing.sumdu.edu.ua/wp-content/uploads/2016/12/files/sec/volume-2-issue-3/7.pdf>


<sup>35</sup> Թովմասյան Գ., Ինչպիսի՞ն էր ՀՀ զբոսաշրջության ոլորտը 2017թ., <https://asue.am/amberd/publications/analytics/what-was-tourism-industry>

դուկտ և դա ակտիվ գովազդել, ինչն իհարկե դեռ կարելի է անել, քանի դեռ շատ ժամանակ չի անցել և հետաքրքրությունը չի մարել:

Անշուշտ, Հայաստանյան խաղաղ հեղափոխության իրականացումը կարող է հետաքրքիր լինել զբոսաշրջիկներին, և խնդիրը միայն հասցեական ու նպատակային մարքեթինգի իրականացումն է՝ Հայաստանը ներկայացնելով որպես ապահով ու անվտանգ երկիր, խաղաղ հեղափոխություն կատարած ժողովուրդ:

Ձբոսաշրջիկների համար այցելության երթուղին կարող է ներառել այն քաղաքները, որտեղ կատարվել են քայլերթերը՝ Գյումրի, Վանաձոր, Սպիտակ, Դիլիջան, Սևան, Հրազդան, Աբովյան, Երևան: Այցելության վայր կարող է լինել նաև ՀՀ Ազգային ժողովը, նախագահի, վարչապետի նստավայրերը (աշխարհի մի շարք երկրներում օրվա որոշակի ժամերի նման պետական հիմնարկները ընդունում են զբոսաշրջիկների, ուստի մենք ևս որոշ աշխատասենյակներ կարող ենք ներառել զբոսաշրջային այցերի ծրագրերում, ինչից նաև լրացուցիչ գումար կստանանք: Նշենք, որ այսօր արդեն իսկ Ազգային ժողովի և վարչապետի նստավայրերի բակերի մուտքերն ազատ են այցելությունների համար):

**Հեղափոխության հնարավոր ազդեցությունները կարող են լինել.**



**Գծապատկեր 6. Հեղափոխության հնարավոր ազդեցությունը Հայաստանում (գծապատկերը մշակվել է մեր կողմից)**

Այսպիսով, լավ մարքեթինգի պարագայում հնարավոր է հեղափոխության արդյունքում ավելացնել զբոսաշրջիկների թվաքանակը, ներգրավել նոր ներդրումներ, մեծացնել երկրի իմիջը դրսում, և այլն: Հուսանք, որ երկարաժամկե-

տում կտեսնենք հեղափոխության դրական ազդեցությունը և՛ զբոսաշրջիկների թվաքանակի, և՛ ներդրումների ու, հետևաբար նաև տնտեսական աճի վրա:

2019թ. փետրվարին ընդունված ՀՀ կառավարության ծրագրում նշվում է. «...Զբոսաշրջության զարգացումը բացառիկ հնարավորություն է փոքր և միջին բիզնեսի զարգացման համար: ...Կառավարության անելիքը հստակ է. զբոսաշրջիկների համար անհրաժեշտ է ապահովել անհրաժեշտ ենթակառուցվածքներ և սպասարկման բարձր մակարդակ: Զբոսաշրջիկների համար տեղանքների և տրանսպորտային ուղիների հասանելիությունը բարձրացնելու նպատակով կարևորվելու է օտար լեզուներով ուղեցույցներով, համապատասխան փողոցային և զբոսաշրջային վայրերում նշաններով կահավորումը: Զուգահեռաբար պետք է առանձնացվեն զբոսաշրջային մեծ ներուժ ունեցող զբոսաշրջային ենթաճյուղեր՝ էկոտուրիզմ, գաստրոտուրիզմ, էքստրիմ տուրիզմ, էթնո տուրիզմ՝ համաշխարհային շուկայում Հայաստանը թիրախավորված դիրքավորելու և համապատասխան հետաքրքրություններ ունեցող զբոսաշրջիկների համար մեր երկիրն առավել գրավիչ դարձնելու նպատակով: Կառավարությունը կարևոր է համարում նաև Հայաստան մուտքի վիզային ռեժիմների ազատականացմանը և օդային տրանսպորտի գների նվազեցմանն ուղղված հարցերի կարգավորումը»<sup>1</sup>:

Կարծում ենք՝ մեծ ներուժ ունեցող զբոսաշրջային ենթաճյուղերը ավելի շատ են, քան առանձնացված են ծրագրում: Հաշվի առնելով ՀՀ զբոսաշրջային ռեսուրսները՝ կարող ենք առանձնացնել զբոսաշրջության հիմնական տեսակները, որոնք ունեն զարգացման մեծ հեռանկարներ: Դրանք կանոնակարգված ներկայացված են աղյուսակ 4-ում:

#### Աղյուսակ 4

### Զբոսաշրջության հիմնական տեսակների զարգացման ռեսուրսային ներուժը ՀՀ-ում

h/h	Զբոսաշրջության հիմնական տեսակը	Առկա ռեսուրսային ներուժը
1	2	3
1.	Կրոնական զբոսաշրջություն	Հայաստանը համարվում է քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունած առաջին երկիրը (301թ.): Էջմիածնի եկեղեցիները, Խոր Վիրապը, Գեղարքը, Հաղարծինը, Գոշավանքը, Հաղպատն ու Սանահինը, Տաթևը, Նորավանքը յուրահատուկ սրբազան վայրեր են՝ իրենց պատմական ավանդույթներով, որոնք կարող են զբոսաշրջիկներ գրավել աշխարհի տարբեր անկյուններից:
2.	Պատմամշակութային զբոսաշրջություն	Հայաստանն ունի հին պատմություն և հարուստ մշակութային ժառանգություն: ՀՀ-ում կան ավելի քան 24000 պատմամշակութային հուշարձաններ: ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Համաշխարհային ժառանգության» ցանկում են ներառված Հաղպատի և Սանահինի վանական համալիրները, Գեղարքի վանական համալիրը և Ազատի վերին հովիտը, Էջմիածնի եկեղեցիները և Մայր Տաճարը, Զվարթնոցի հնագիտական տաճարը: Թեկնածու ցուցակում են Դվինի ավերակները, Երեբոյքի տաճարի ավերակները, Տաթևի վանական համալիրը, Տաթևի անապատը, Որոտանի հովիտը, Նորավանքի վանական համալիրը և Ամաղու հովիտը <sup>2</sup> : Բացի այդ ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցուցակում են հայկական դուդուկը և դրա երաժշտությունը, հայկական խաչքարերի արվեստը, «Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ» էպոսը, հայկական ավանդական հացը՝ լավաշը, քոչարին՝ հայկական ավանդական խմբային պարը <sup>3</sup> :

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր, Հավելված ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի N 65 - Ա որոշման, էջ՝ 48, <http://www.gov.am/files/docs/3133.pdf>

<sup>2</sup> Properties inscribed on the World Heritage List, <http://whc.unesco.org/en/statesparties/am>

<sup>3</sup> Representative List of the Intangible Cultural Heritage of Humanity, <https://ich.unesco.org>

Աղյուսակ 4-ի շարունակությունը

1	2	3
3.	Առողջարանային զբոսաշրջություն	<<-ում կան 10 կուրորտային գոտիներ (Արզնի, Դիլիջան, Հանքավան-Մարմարիկ, Բջնի-Արզական-Աղվերան, Ստեփանավան-Գյուլագարակ, Ծաղկաձոր, Սյունիք, Լոռի, Սևան, Ջերմուկ <sup>4</sup> ), որոնք ունեն առողջարանային զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ բնական բուժիչ ռեսուրսներ՝ հանքային ջրեր, բուժիչ ցեխեր և տորֆեր, կլիմայաբուժության կազմակերպման համար բարենպաստ կլիմայական պայմաններ:
4.	Գաստրոնոմիական և զինու զբոսաշրջություն	Հայկական խոհանոցը Ասիայի հնագույն խոհանոցներից է: Հայկական համեղ ուտեստները (խորոված, քյաբաբ, տոլմա, խաշլամա, խաշ, հարիսա, իշխան ձկան խորոված, դափամա, լավաշ, գինի, կոնյակ, և այլն) գրավում են զբոսաշրջիկներին: Արենի գյուղի մոտակայքում գտնվող քարանձավներից մեկում հայտնաբերված հնագույն գինեգործարանը ապացույց է, որ հայերը զբաղվում էին գինեգործությամբ դեռ 6000 տարի առաջ: Գինու զբոսաշրջությունը, որպես գաստրոնոմիականի տարատեսակ, ևս ունի զարգացման հեռանկարներ:
5.	Ագրոզբոսաշրջություն	Հայաստանում կազմակերպվում են բազում գյուղատնտեսական փառատոներ ու տոնավաճառներ, որոնք զբոսաշրջիկներին գրավում են դեպի հայկական գյուղեր: Հատուկ մասնագիտացված ագրոտուրերը, որոնք կներառեն գյուղատնտեսական աշխատանքների մասնակցություն, կխթանեն ագրոզբոսաշրջության և գյուղական համայնքների զարգացումը:
6.	Էկոզբոսաշրջություն	Հայաստանն ունի գեղատեսիլ բնություն ու հարուստ բուսականություն, մարգագետիններ, անտառներ ու կանաչ այգիներ: << տարածքի 13%-ը կազմում են բնության հատուկ պահպանվող տարածքները: Գնալով մեծանում է էկոզբոսաշրջության նկատմամբ հետաքրքրությունը՝ ձևավորելով համապատասխան վարքագիծ՝ բնության պաշտպանության և բնապահպանական խնդիրների լուծմանն ուղղված:
7.	Քաղաքային զբոսաշրջություն	Վարդագույն Երևանը, լինելով աշխարհի հնագույն քաղաքներից մեկը, հանդիսանում է թանգարան բաց երկնքի տակ՝ իր հին ու նոր կառույցներով, հարուստ պատմությամբ ու մշակույթով: Երևանից բացի քաղաքային զբոսաշրջության զարգացման հեռանկարներ ունեն Էջմիածինը, Գյումրին, Գորիսը, Վանաձորը, Իջևանը, Դիլիջանը, Ծաղկաձորը և այլն:
8.	Բուժական զբոսաշրջություն	Հայաստանում վերջին տարիներին աճել է զբոսաշրջիկների թվաքանակը, որոնք գալիս են բուժման նպատակներով: Ընդ որում նախընտրելի ծառայությունների ցուցակում են ինչպես սառնամաքածական, այնպես էլ վիրաբուժական ծառայությունները:
9.	Սպորտային և արկածային զբոսաշրջություն	Հայաստանն ունի սպորտային ու արկածային զբոսաշրջության զարգացման բազում նախադրյալներ: Լեռնադահուկային սպորտի համար լավագույն վայրեր են Ծաղկաձորը, Ջերմուկը, Ապարանը, Աշոցքը և Ամասիան, ջրային մարզաձևերի համար՝ Սևանա լիճը: Արկածային զբոսաշրջության սիրահարներին գրավում են լեռնանագլցման տուրերը Արագած, Աժդահակ, Խուստուփ, Արտանիշ լեռներ, արշավները դեպի Լաստիվեր, Թռչկանի, Շաքիի ջրվեժներ, Նորավանքի կիրճ, Գառնու ձոր, Դիլիջանի անտառների միջով դեպի Պարզ լիճ և այլն:
10.	Կրթական զբոսաշրջություն	Հայաստանում մի շարք բարձրագույն ուսումնական հաստատություններ իրականացնում են միջազգային ուսանողների ընդունելություն, շատերը համատեղ միջազգային ծրագրերի հիման վրա կազմակերպում են ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ ուսումնակրթական այցեր:
11.	Գիտական զբոսաշրջություն	Հայաստանի գիտական պատմությունն ու ներուժը նախադրյալներ են ստեղծում մեր երկրում գիտական զբոսաշրջության զարգացման համար: Այս առումով այցելության վայրեր կարող են լինել՝ հնագիտական վայրերը, արգելոցները, միջնադարյան համալսարանները, գիտական կազմակերպությունները, գիտական թանգարանները: Չնայած որոշ զբոսաշրջային կազմակերպություններ առաջարկում են հնագիտական (այցելություն թանգարաններ, հնավայրեր), երկրաբանական, գիտական տուրեր, սակայն ներքին և ներգնա զբոսաշրջային պահանջարկը այս ուղղության նկատմամբ դեռ մեծ չէ: Այնուամենայնիվ սա կարող է համարվել հեռանկարային ուղղություն համապատասխան քայլեր ձեռնարկելու պարագայում <sup>5</sup> :

org/en/lists?country[]=00014&multinational=3&display1=inscriptionID#tabs

<sup>4</sup> Атлас-климат и природные лечебно-оздоровительные ресурсы Армении / Под гл. ред. Б.Арутюняна. Ер.: 2010, стр. 124–133.

<sup>5</sup> **Թովմասյան Գ.**, Հայաստանը՝ գիտության երկիր. Գիտական զբոսաշրջությունը Հայաստանում, <http://media.asue.am/upload/amberd/verlucakanner/Gayane-Tovmasyan-dektember-2.pdf>

Զբոսաշրջության վերոնշյալ տեսակները, ինչպես նաև հեղափոխական զբոսաշրջությունը, համապատասխան միջոցառումների իրականացման արդյունքում զարգացման մեծ հեռանկարներ ունեն Հայաստանում:

Ամփոփելով, նշենք այն հիմնական քայլերը, որոնք, ի լրումն արդեն իսկ կառավարության ծրագրում նշված կետերի, անհրաժեշտ են զբոսաշրջության զարգացման համար և պետք է հաշվի առնվեն պատկան մարմինների կողմից՝ քաղաքականությունների մշակման և իրականացման ժամանակ.

- ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործում, զբոսաշրջության առանձին տեսակների զարգացման համար ռազմավարական ծրագրերի մշակում և իրականացում,
- զբոսաշրջային ենթակառուցվածքների բարելավում,
- շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների ընդհանուր վիճակի ու պահպանման մակարդակի բարձրացում,
- ոլորտում գիտահետազոտական աշխատանքների իրականացում, զբոսաշրջության կրթական համակարգի, առարկայական ծրագրերի, ուսուցման մեթոդների բարելավում, ոլորտի աշխատուժի պատրաստման և վերապատրաստման գործընթացի կատարելագործում, զբոսաշրջության կրթական համակարգի և աշխատաշուկայի միջև արդյունավետ կապերի հաստատում,
- ակտիվ մարքեթինգային գործունեության իրականացում արտերկրում՝ միջազգային զբոսաշրջիկների ներգրավման նպատակով,
- վիճակագրական հաշվառման բարելավում,
- տեղեկատվական տեխնոլոգիաների և խելացի լուծումների կիրառում զբոսաշրջության ոլորտում,
- ծառայությունների որակի բարելավում, գնային զեղչերի կիրառում, նոր փաթեթների, երթուղիների մշակում՝ նաև հարևան Վրաստանի և Իրանի հետ,
- Հայաստանի գաստրոնոմիական բրենդի և երթուղիների ձևավորում (այս առումով կարող է օգտակար լինել մեր մշակած գաստրոքարտեզը<sup>6</sup> և հետազոտությունները ոլորտում<sup>7</sup>),
- Երևանի զբոսաշրջային բրենդի ստեղծում (այս առումով կարող է օգտակար լինել մեր մշակած բրենդը<sup>8</sup>):

Ամփոփելով կարող ենք ասել, որ վերոնշյալ աշխատանքների հետևողական ու արդյունավետ իրականացումը կնպաստի զբոսաշրջության զարգացմանը ՀՀ-ում:

---

<sup>6</sup> **Թովմասյան Գ.**, Հայաստանի և Արցախի գաստրոքարտեզը որպես զբոսաշրջային մարքեթինգի բաղադրիչ, <https://asue.am/amberd/publication/analytics/Gastroenterology-of-Armenia-and-Artsakh-as-a-component-of-tourism-marketing>

<sup>7</sup> **Թովմասյան Գ.**, Գաստրոզբոսաշրջությունը որպես ՀՀ զբոսաշրջային ներուժային ուղղություն, <https://asue.am/am/amberd/publications/analytics/gastro-tourism-potential-armenia>

<sup>8</sup> **Թովմասյան Գ.**, Ինչպիսի՞ն պետք է լինի Երևանի բրենդը զբոսաշրջիկներին գրավելու և քաղաքային զբոսաշրջությունը զարգացնելու համար, <https://asue.am/amberd/publication/analytics/brand-of-yerevan-for-attracting-tourists-and-developing-city-tourism>

## **Օգտագործված գրականության ցանկ**

1. Զբոսաշրջության զարգացման 2018թ. ծրագիրը և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին ՀՀ ՏՀՆՆ Զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահի հրաման, 2018թ. N20-Ա, <http://mineconomy.am/media/2018/02/2865.pdf> (վերջին մուտքը՝ 10.04.2019)
2. Թովմասյան Գ., Գաստրոզբոսաշրջությունը որպես ՀՀ զբոսաշրջային ներուժային ուղղություն, <https://asue.am/am/amberd/publications/analytics/gastro-tourism-potential-armenia> (վերջին մուտքը՝ 10.04.2019)
3. Թովմասյան Գ., Ինչպիսի՞ն պետք է լինի Երևանի բրենդը զբոսաշրջիկներին գրավելու և քաղաքային զբոսաշրջությունը զարգացնելու համար, <https://asue.am/amberd/publication/analytics/brand-of-yerevan-for-attracting-tourists-and-developing-city-tourism> (վերջին մուտքը՝ 10.04.2019)
4. Թովմասյան Գ., Ինչպիսի՞ն էր ՀՀ զբոսաշրջության ոլորտը 2017թ., <https://asue.am/amberd/publications/analytics/what-was-tourism-industry> (վերջին մուտքը՝ 10.04.2019)
5. Թովմասյան Գ., Հայաստանը՝ գիտության երկիր. Գիտական զբոսաշրջությունը Հայաստանում, <http://media.asue.am/upload/amberd/verlucakanner/Gayane-Tovmasyan-dektember-2.pdf> (վերջին մուտքը՝ 10.04.2019)
6. Թովմասյան Գ., Հայաստանի և Արցախի գաստրոքարտեզը որպես զբոսաշրջային մարքեթինգի բաղադրիչ, <https://asue.am/amberd/publication/analytics/Gastroenterology-of-Armenia-and-Artsakh-as-a-component-of-tourism-marketing> (վերջին մուտքը՝ 10.04.2019)
7. Թովմասյան Գ., Հեղափոխական զբոսաշրջություն. նոր հնարավորություն Հայաստանի համար, <https://asue.am/amberd/publications/analytics/revolution-tourism-new-opportunity-for-armenia> (վերջին մուտքը՝ 10.04.2019)
8. Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության վիճակագրության վարման մեթոդի կատարելագործմանն ուղղված միջոցառումների մասին, <https://www.e-draft.am/projects/636/about> (վերջին մուտքը՝ 10.04.2019)
9. Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր, Հավելված ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի N 65 - Ա որոշման, կետ՝ 5.7, էջ՝ 48, <http://www.gov.am/files/docs/3133.pdf> (վերջին մուտքը՝ 10.04.2019)
10. Հայաստանի Հանրապետության արտաքին հաշիվներ, ՀՀ վճարային հաշվեկշիռ, <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx> (վերջին մուտքը՝ 10.04.2019)
11. Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր, Հավելված ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի N 65 - Ա որոշման, էջ՝ 48, <http://www.gov.am/files/docs/3133.pdf> (վերջին մուտքը՝ 10.04.2019)
12. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2017-2018թթ. հունվար-դեկտեմբերին, էջ 135, [https://www.armstat.am/file/article/sv\\_12\\_18a\\_421.pdf](https://www.armstat.am/file/article/sv_12_18a_421.pdf) (վերջին մուտքը՝ 10.04.2019)

13. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019թ. հունվարին, էջ 105, 106,  
[https://www.armstat.am/file/article/sv\\_01\\_19a\\_421.pdf](https://www.armstat.am/file/article/sv_01_19a_421.pdf);  
[https://www.armstat.am/file/article/sv\\_01\\_19a\\_422.pdf](https://www.armstat.am/file/article/sv_01_19a_422.pdf) (վերջին մուտքը՝  
10.04.2019)
14. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018թ. հունվար-հոկտեմբերին, էջ 126,  
[https://www.armstat.am/file/article/sv\\_10\\_18a\\_432.pdf](https://www.armstat.am/file/article/sv_10_18a_432.pdf) (վերջին մուտքը՝  
10.04.2019)
15. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2016թ. հունվարին, էջ 96,  
[https://www.armstat.am/file/article/sv\\_01\\_16a\\_422.pdf](https://www.armstat.am/file/article/sv_01_16a_422.pdf) (վերջին մուտքը՝  
10.04.2019)
16. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018թ. հունվարին, էջ 97,  
[https://www.armstat.am/file/article/sv\\_01\\_18a\\_422.pdf](https://www.armstat.am/file/article/sv_01_18a_422.pdf); (վերջին մուտքը՝  
10.04.2019)
17. ՀՀ վիճակագրական կոմիտեի Վիճակագրական տվյալների բազաներ, Միջազգային զբոսաշրջություն, <https://www.armstat.am/am/?nid=14> (վերջին մուտքը՝ 10.04.2019)
18. ՀՀ 2018թ. պետական բյուջեի մասին ՀՀ օրենքը, ընդունված 2017թ.,  
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=118144> (վերջին մուտքը՝  
10.04.2019)
19. Атлас-климат и природные лечебно-оздоровительные ресурсы Армении / Под гл. ред. Б. Арутюняна. Ереван, 2010.
20. Properties inscribed on the World Heritage List, <http://whc.unesco.org/en/statesparties/am> (վերջին մուտքը՝ 10.04.2019)
21. Tovmasyan G., Revolutionary Tourism. New Opportunity For Armenia, Socio Economic Challenges, Volume 2, Issue 3, 2018, pp. 76-82, <http://armgpublising.sumdu.edu.ua/wp-content/uploads/2016/12/files/sec/volume-2-issue-3/7.pdf> (վերջին մուտքը՝ 10.04.2019)
22. WTTC Travel & Tourism Economic Impact 2019 Armenia, p. 1,  
<https://www.wttc.org/economic-impact/country-analysis/country-data/> (վերջին մուտքը՝ 10.04.2019)
23. Representative List of the Intangible Cultural Heritage of Humanity of Armenia,  
[https://ich.unesco.org/en/lists?country\[\]=00014&multinational=3&display1=inscriptionID#tabs](https://ich.unesco.org/en/lists?country[]=00014&multinational=3&display1=inscriptionID#tabs) (վերջին մուտքը՝ 10.04.2019)



**Գայանե Թովմասյան**  
**Ռուբիկ Թովմասյան**

## **ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐՆ ՈՒ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

**Ամփոփագիր:** Հոդվածում ներկայացվել է զբոսաշրջության առկա վիճակը Հայաստանում և 2018թ. մայիսյան թավշյա հեղափոխության ազդեցությունը ոլորտի ցուցանիշների վրա: Կանխատեսման արտարկման մեթոդով հաշվարկվել են զբոսաշրջիկների թվաքանակի հնարավոր փոփոխությունները հետագա տարիներին: Ներկայացվել են զբոսաշրջության հիմնական տեսակները, որոնք ունեն զարգացման մեծ ներուժ և մատնանշվել մի շարք առաջարկություններ, որոնք կարող են օգտագործվել ոլորտի զարգացման ծրագրեր մշակելիս և իրականացնելիս:

**Բանալի բառեր.** զբոսաշրջություն, հեղափոխություն, բրենդ, մարքեթինգ, գաստրոքարտեզ:

**Гаяне Товмасын**  
**Рубик Товмасын**

## **ПЕРСПЕКТИВЫ И ОРИЕНТИРЫ РАЗВИТИЯ ТУРИЗМА В АРМЕНИИ**

**Резюме:** В статье представлено современное состояние туризма в Армении и влияние майской бархатной революции 2018г. на отраслевые показатели. Экстраполяционным методом прогноза были рассчитаны возможные изменения количества туристов в ближайшие годы. Представлены основные виды туризма, которые имеют большой потенциал для развития и ряд рекомендаций, которые могут быть использованы для разработки и реализации проектов развития туризма.

**Ключевые слова:** туризм, революция, бренд, маркетинг, гастрономическая карта.

**Gayane Tovmasyan**  
**Rubik Tovmasyan**

## **PERSPECTIVES AND DIRECTIONS OF TOURISM DEVELOPMENT IN ARMENIA**

**Abstract:** The article presents the current state of tourism in Armenia and the effect of the May velvet revolution of 2018 on the industry indicators. The possible changes in the number of tourists for the future years has been forecasted by the

extrapolation method. The main types of tourism have been presented, which have a great potential for development and a number of recommendations that can be used to process and implement sector development projects.

**Keywords:** Tourism, revolution, brand, marketing, gastromap

## Սամվել Ավետիսյան

### ՀՀ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԻՐԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ<sup>9</sup>

Զանգվածային լրատվության միջոցներով կամ տարբեր քննարկումների ժամանակ, կարծիքներ է հնչում, որ Հայաստանը ագրարային քաղաքականություն չունի: Այլ հարց է, որ մոտ մեկ տասնամյակ առաջ ընդունված «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը», «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը», «Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման հայեցակարգը» և այլ ծրագրային փաստաթղթեր վերանայման կարիք ունեն և որ անհրաժեշտ է վերջապես ընդունել «Գյուղատնտեսության մասին» օրենք: այլ միանգամից ասում են՝ **ագրարային քաղաքականություն չունենք**: Նկատենք որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ոլորտի քաղաքականության հիմնարար փաստաթղթերը մշակել է ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO), Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD), Համաշխարհային բանկի (WB) և այլ միջազգային կազմակերպությունների տեխնիկական աջակցությամբ: Փորձեք ուսումնասիրել ագրարային քաղաքականության միջազգային փորձը և կհամոզվեք, որ ՀՀ ագրարային ոլորտի ռազմավարական փաստաթղթերում հիմնականում ներառված են գյուղատնտեսության պետական աջակցության, նորամուծական տեխնոլոգիաների ու գործիքակազմի ներդրման գաղափարներն ու կառուցակարգերը:

Ներկայում գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման, գյուղատնտեսական կոոպերատիվների կազմավորման, արտոնյալ պայմաններով տեխնիկայի տրամադրման, ցանքատարածության հաշվով ուղղակի պետական աջակցության, հողերի միավորման, ջերմոցային տնտեսությունների, տոհմային անասնաբուծության, ինտենսիվ այգեգործության, արդյունաբերական գյուղատնտեսության զարգացման բազմաթիվ ծրագրեր պաշտոնապես ընդունվել են դեռևս 2000-ական թվականների սկզբին: Սակայն, մի բան է քաղաքականության մշակումը և մեկ այլ բան դրա հետևողական ու ամբողջական իրականացումը: Թեև ՀՀ-ում գյուղատնտեսությունը հռչակվել էր տնտեսության առաջնային ոլորտ, սակայն պետական բյուջեից խիստ սահմանափակ հատկացումների, դրանց ոչ միշտ հիմնավորված տեղաբաշխման և ոչ հաշվենկատ օգտագործման պատճառով ակնկալվող արդյունքները խիստ համեստ էին: Ավելին, հատկապես 2011-2016 թվականներին գյուղատնտեսության նախարարությունը, մագպետարանների և համայնքների ղեկավարների հետ պայմանա-

<sup>9</sup> ՀՀ կառավարության 2019-2023 թթ. ծրագրի 5.10. «Գյուղատնտեսությունը» բաժնի վերաբերյալ:

վորվելով, սկսեց անհիմն բարձրացնել ցանքատարածությունների, բերքատվության, անասնազվաքանակի և գյուղատնտեսության համախառն արտադրանքի կատարողական ցուցանիշները: Եվ, երբ 2016թ. երկրորդ կիսամյակից գյուղատնտեսության արդյունքային ցուցանիշների հավելագրումները սկսեցին աստիճանաբար պակասել, անգամ պետական աջակցության ավելացումը հնրավորություն չընձեռեց կասեցնել գյուղատնտեսության անկումը: Վերջինիս վկայությունն է, որ 2010-2017 թթ. գյուղատնտեսության ոլորտի մեկ զբաղվածի հաշվով տարեկան ՀՆԱ-ի ամենաբարձր ցուցանիշը (2017թ.) կազմել է 2623,4 հազ. դրամ, իսկ համախառն արտադրանքը՝ 2863,7 հազ. դրամ: Այսինքն, պաշտոնական վիճակագրության տվյալներով հաշվարկելիս՝ գյուղատնտեսության մեջ զբաղված աշխատողը միջին հաշվով օրական ստեղծել է 7187.3 դրամի (14.9 ԱՄՆ դոլար) նոր արդյունք (աղյուսակ 1):

### Աղյուսակ 1

#### **«Կյուղատնտեսության ոլորտի մեկ զբաղվածի հաշվով ստեղծված ՀՆԱ-ի և համախառն արտադրանքի ցուցանիշները»<sup>10</sup>**

Հ/Հ	Ցուցանիշները	Չափման միավորը	Տարիները			
			2015	2016	2017	2018
1.	«Կ զբաղվածների թիվը	հազ. մարդ	1316.4	1226.3	1230.7	1230.7*
2.	Գյուղատնտեսության ոլորտի զբաղվածները	հազ.մարդ	379.0	338.1	317.1	317.1*
3.	«Կ ՀՆԱ-ն , ընդամենը	մլրդ. դրամ	5043.6	5067.3	5568.1	6002.7
4.	Որից՝ Գյուղատնտեսության	մլրդ. դրամ	886.7	830.5	831.9	819.7
5.	Տարեկան ՀՆԱ-ն մեկ զբաղվածի հաշվով,					
5.1	Ընդամենը	հազ. դրամ	3831.3	4132.2	4524.3	4877,4
5.2.	գյուղատնտեսություն	հազ. դրամ	2339.0	2456.0	2623.4	2616,5
6.	Մեկ զբաղվածի հաշվով օրական ՀՆԱ-ն					
6.1.	Ընդամենը	դրամ	10497.6	11321	12395	13362,7
6.2.	Գյուղատնտեսություն	դրամ	6408.2	6728.0	7187.3	7168,5

\*2018թ. տվյալների բացակայության պատճառով պայմանական ընդունել ենք 2017թ. տվյալները:

Համեմատության համար նշենք, որ ԱՄՆ-ում գյուղատնտեսության մեկ զբաղվածի հաշվով տարեկան ՀՆԱ-ն 2018թ. կազմել է 82947,6 դոլար, իսկ օրական հաշվարկով՝ 227,2 դոլար<sup>11</sup>: Իսրայելում 2018թ. տվյալներով այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են՝ 114583 և 314 դոլար<sup>12</sup>: Այդ երկրների հաջողության գաղտնիքը նորամուծական տեխնոլոգիաների և արդյունավետ

<sup>10</sup> Աղբյուրը ՀՀ ԱՎԿ Պարենային ապահովություն և աղքատություն, 2018թ. հունվար-դեկտեմբեր, [https://www.armstat.am/file/article/f\\_sec\\_4\\_2018\\_1.pdf](https://www.armstat.am/file/article/f_sec_4_2018_1.pdf)

<sup>11</sup> <https://visasam.ru/emigration/canadausa/vvp-usa.html>

<sup>12</sup> <https://aggeek.net/ru-blog/agrarnyj-sektor-izrailya-kogda-pesok-produktivnee-chernozema>

կառավարման համակարգի ներդրումն է, ինչպես նաև՝ ենթակառուցվածքների ու շուկայահանման լոգիստիկայի զարգացումը: Այս տեսանկյունից Հայաստանում առկա են որոշակի դժվարություններ, որոնք կարելի է հաղթահարել, եթե գյուղատնտեսության ոլորտում արմատավորվի կոոպերացիայի գաղափարը:

Դեռևս մեկ տասնամյակ առաջ նշել ենք, որ «Եթե բիզնեսի մյուս ոլորտներում գործարարը տարբեր պատճառներով տանուլ է տալիս, ապա նա վատագույն դեպքում սնանկանում ու հեռանում է բիզնեսից: Գյուղատնտեսության մեջ այդ երևույթը, բացի տնտեսական հետևանքից, նաև սոցիալ-ժողովրդագրական լուրջ հիմնախնդիրներ է ստեղծում: Այս ոլորտում ցածր եկամտաբերությունը և տարբեր ռիսկերի ազդեցությամբ պայմանավորված վնասները, գյուղացուն ուղակիորեն հարկադրում են հեռանալ գյուղից»<sup>13</sup>: Նաև այս առանձնահատկությունը հաշվի առնելով, ՀՀ կառավարության 2019-2023 թթ. ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) 5.10. «Գյուղատնտեսությունը» բաժնի առաջին պարբերության մեջ նշվում է. «Կառավարության գյուղատնտեսական քաղաքականության առանցքը լինելու է գյուղատնտեսության արդյունավետության բարձրացումը, պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը, արդի տեխնոլոգիաների ներմուծումը, արտահանման ծավալների ավելացումը, գյուղատնտեսական ամբողջ արժեքի շղթայում ընդգրկված բոլոր սուբյեկտների՝ փոքր տնային տնտեսությունների, գյուղացիական կոոպերատիվների, վերամշակողների և արտահանողների եկամտաբերության բարձրացումը»<sup>14</sup>: Ընդունված է վկայակոչել, որ գյուղատնտեսության ցածր արդյունավետության հիմնական խանգարող գործոնը մեծ թվով փոքր չափեր ունեցող տնտեսությունների առկայությունն է, առկա ռեսուրսների անհաշվենկատ օգտագործումը և ոլորտի համակարգված կառավարման բացակայությունը:

Նախ անդրադառնամ վերջինին: Հայաստանի նման երկրում ուղղակի շռայլություն է 10 մարզպետարանների գոյությունը, որոնք հիմնական գործառույթներով ուղղակի և անհարկի կրկնում են ոլորտային նախարարություններին: Ըստ իս, անհրաժեշտ է իրականացնել տարածքային կառավարման ապակենտրոնացման քաղաքականություն, յուրաքանչյուր բնակավայրի դիմագիծը պահպանելով, շարունակել համայնքների միավորման գործընթացը, ընդլայնել տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները և պայմանագրային հիմքերի վրա դնել ոլորտային նախարարությունների (կառավարության) հետ համագործակցությունը:

Ծրագրում հատուկ շեշտադրվում է. «Կառավարությունն անթույլատրելի է համարում, որ գյուղատնտեսական նշանակության հողերի շուրջ 1/3-ը մնացել է անմշակ: Կառավարությունը գործուն քայլեր է ձեռնարկելու չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերը նպատակայնորեն օգտագործելու ուղղությամբ: Այս նպատակին հասնելու համար մշակվելու են խթաններ ու մե-

<sup>13</sup> Սամվել Ավետիսյան, Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը. – Եր.: «Լիմուշ» հրատ., 2010թ. էջ 27:

<sup>14</sup> ՀՀ կառավարության 2019-2023 թթ. ծրագիր, էջ 50:

խանիզմներ»<sup>15</sup>: Խնդիրը նոր չէ, բայց գնալով ավելի սուր բնույթ է ստանում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ չօգտագործվող հողերը գերազանցում են Ծրագրում նշված թվին: Դիցուք, 2018 թվականին, երբ վիճակագրական տվյալների հավաստիությունը ավելի բարձր է, վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը կազմել է ընդամենը 54.4% (աղյուսակ 2): Հաշվարկման մեթոդաբանության առումով, այս ցուցանիշը ևս ճշգրտման կարիք ունի, քանի որ տնամերձ հողերի ցանքերը ևս ներառվում է ցանքատարածությունների մեջ, բայց հողային հաշվեկշռում դրանք դասվում են բնակավայրերի հողերին: Օրինակ, 01.07.2018թ. դրությամբ տնամերձ հողերը կազմել են մոտ 90 հազ. հա<sup>16</sup>, որի զգալի մասը վարելահողեր են:

## Աղյուսակ 2

### «Հ-ում վարելահողերի նպատակային օգտագործման ցուցանիշները 2012-2018 թթ. տվյալներով»

Ցուցանիշները	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.
Վարելահողերի տարածք, հազ. հա	448.4	448.2	447.5	446.7	446.4	445.9	445.5
Ընդամենը ցանքատարածությունները, հազ. հա	304.2	318.1	324.2	337.5	353.4	294.0	242,3
Ոչ նպատակային օգտագործվող վարելահողերը, հազ. հա	144.2	130.1	123.3	109.2	93.0	151.9	203,2
Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը, %	67.8	71.0	72.4	75.5	79.2	65.9	54,4

\*Աղյուսակը կազմել է հեղինակը ՀՀ ԱՎԿ-ի և Անշարժ գույքի կադաստրի տվյալներով:

Հայաստանի Հանրապետության 2014 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման արդյունքները վկայում են, որ մշակվող հողեր (վարելահողեր և բազմամյա տնկարկներ) ունեն 345875 ֆիզիկական և 342 իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող տնտեսություններ: Մեկ տնտեսության հաշվով մշակվող հողերը համապատասխանաբար կազմում է 1.48 և 62.57 հա<sup>17</sup>: Ֆիզիկական անձի կարգավիճակ ունեցող տնտեսություններին բաժին է ընկնում ընդամենը մշակվող հողերի 96 %-ը: Այսպիսի փոքր հողատարածքի վրա, առավել ևս, որ դրանք կազմված են 3-4 հողակտորներից, շատ դժվար է նորամուծական տեխնոլոգիաների կիրառումն ու գյուղատնտեսական տեխնիկայի արդյունավետ օգտագործումը:

Մեր կարծիքով այս իրավիճակը կարելի է փոխել և տնտեսությունների չափերը օպտիմալացնել հետևյալ տարբերակներով.

ա) Հողերի միավորում և գյուղացիական տնտեսությունների կոոպերացում:

<sup>15</sup> ՀՀ կառավարության 2019-2023 թթ. ծրագիր, էջ 50:

<sup>16</sup> [https://www.cadastre.am/storage/files/pages/pg\\_4062968307\\_22.pdf](https://www.cadastre.am/storage/files/pages/pg_4062968307_22.pdf)

<sup>17</sup> Աղբյուրը. Հայաստանի Հանրապետության 2014 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման հիմնական արդյունքները/ ՀՀ ԱՎԾ. – Եր.: Տիգրան Մեծ, 2016.- էջ 31:

Սա աշխարհում ընդունված ամենաարդյունավետ և քաղաքակիրթ ձևն է: Այս ուղղությամբ իրականացվող քաղաքականությունը Հայաստանում դեռևս սպասված արդյունք չի ապահովում, որը սակայն պետք է շարունակել և դարձնել ավելի նպատակամետ:

բ) Հողի շուկայի ակտիվացման շնորհիվ, գյուղատնտեսական հողատեսքերի գնումների և երկարաժամկետ վարձակալության միջոցով գյուղում նպաստել խոշոր հողօգտագործող-ձեռներեցների ձևավորմանը: Այս տարբերակը, անշուշտ, կուժեղացնի գյուղաբնակների բևեռացումը, որը թեև սկզբնական փուլում կմեծացնի սոցիալական լարվածությունը, բայց աստիճանաբար, աշխատանքի բնականոն բաժանման շնորհիվ, շատերը զբաղվածություն կգտնեն խոշոր ձեռներեցների մոտ: Ինտենսիվ գյուղատնտեսության զարգացումը կնպաստի նաև ոչ գյուղատնտեսական բնույթի միջհամայնքային ծրագրերի, ծառայությունների ու վերամշակող ձեռնարկությունների զարգացմանը, որը կբարձրացնի գյուղական բնակչության զբաղվածության մակարդակը և հիմքեր կստեղծի գյուղական աղքատության հաղթահարման համար:

գ) Կատարել օրենսդրական փոփոխություններ և սեփականաշնորհված հողը չօգտագործող կամ ոչ նպատակային նշանակությամբ օգտագործող սուբյեկտների նկատմամբ կիրառել խիստ վարչարարություն: Ակնհայտ է, որ ներկայումս գրեթե բոլոր գյուղական համայնքներում կան լքված հողեր, որոնց սեփականատերերը համայնքից բացակայում են: Արդյունքում՝ այդ հողերը ոչ միայն չեն մշակվում, այլև տարիներ շարունակ դրանց համար հողի հարկ չի վճարվում: Մեր կարծիքով նման պայմաններում, համայնքի ավագանու որոշմամբ, պահպանելով սեփականության իրավունքը, այդ հողամասերը պետք է օգտագործման տրամադրել առավել ակտիվ գյուղատնտեսներին: Նման գործարքի համար անհրաժեշտ է ստանալ սեփականատիրոջ գրավոր համաձայնությունը, իսկ դրա անհնարինության կամ առանց հիմնավոր պատճառների անհամաձայնության դեպքում՝ գործել օրենքի ուժով: Վերջինս պահանջում է ՀՀ Հողային օրենսգրքի հոդվածներ 43-ում, 44-ում և 102-ում, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հոդվածներ 12-ում, 18-ում, 32-ում և 43-ում կատարել համապատասխան փոփոխություններ ու լրացումներ և իրավական հիմքեր ստեղծել պասիվ սեփականատերերի կողմից անօգտագործելի թողնված հողամասերը որոշակի ժամանակահատվածով անհատույց օգտագործման կամ վարձակալության սկզբունքով հանձնել առավել ակտիվ գյուղատնտեսներին: Սույն միջոցառումը կարող է լուծել մի քանի խնդիր, նախ՝ արդյունավետ ու նպատակային օգտագործել հողը որպես ազգային հարստություն, երկրորդ՝ ապահովել հողի հարկի վճարումները և երրորդ՝ կանխել հողի դեգրադացիայի գործընթացները<sup>18</sup>:

Ծրագրում նշվում է, որ «Կառավարությունը գյուղատնտեսության ոլորտում ևս մեկ ռազմավարական նպատակ է ձևակերպում. այն է՝ Հայաստանում ոռոգման ջուրը նույնքան հասանելի և տարածված պետք է լինի, ինչպես էլեկտրամա-

<sup>18</sup> Առավել մանրամասն տես՝ <https://asue.am/amberd/publications/analysis-of-agricultural-land-use-in-the-ra>

տակարարումն է տարածված և հասանելի»։ Կարծում ենք, որ այս ռազմավարական նպատակը խիստ հավակնոտ է և իրականացման առումով դժվարին։ Խնդիրն այն է, որ ոռոգման ջրի հասանելիությունը չի կարող համեմատվել էլեկտրաէներգիայի մատակարարման հետ, քանի որ ոռոգման ջրի տեղափոխման բարդություններն ու դժվարությունները անհամեմատ ավելի մեծ են։ Ուստի նախապատվությունը պետք է տալ ջրախնայողական տեխնոլոգիաներին և բարձր արդյունավետ մշակաբույսերին։

Հայաստանում ոռոգելի հողատարածքների ավելի քան 90%-ի վրա կիրառվում է մակերեսային ոռոգում, որի պատճառով ջրի կորուստը կազմում է 40-50%։ Այդ կորուստները 1.5-2 անգամ ավելանում են գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում։ ՀՀ Արմավիրի, Արարատի, Արագածոտնի և Կոտայքի մարզերի 52 համայնքներ ունեն գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող տարածքներ, որոնց ոռոգման համար լրացուցիչ պահանջվում է ավելի քան 1.5 մլրդ դրամի ջուր։ Սակայն ջրի անբավարար մատակարարման և ջրախնայողական տեխնոլոգիաների բացակայության պատճառով հողօգտագործողները յուրաքանչյուր տարի ավելի քան 12 մլրդ դրամի կորուստ են ունենում։ Բացի այդ, կլիմայի տաքացումը մի կողմից պահանջում է 1 հա հաշվով ոռոգման ջրի ծավալի ավելացում և մյուս կողմից նվազեցնում է ջրի մակերեսային հոսքը։ Ուստի անհրաժեշտ է նախապատվությունը տալ ջրախնայողական տեխնոլոգիաներին և բարձրարդյունավետ մշակաբույսերին։

Գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող տարածքներում տնտեսապես արդյունավետ է պտղատու մշակաբույսերի մշակությունը։ Մինչև նորատունկ այգու բերքատու դառնալը միջջարքային տարածությունները կարելի է զբաղեցնել բանջարաբոստանային և հատապտղային մշակաբույսերով։ Տեխնոլոգիան կիրառվել է ՀՀ Արագածոտնի մարզի Ոսկեվլազ համայնքում հիմնված կեռասենու Կրուպնոպլոդնայա սորտի այգում, որտեղ 2014թ. գարնանը միջջարքային տարածությունները մուլչապատվել են պոլիէթիլենային թաղանթով և կատարվել է ելակի /Ֆրեսկա F1/ դաշտի սածիլում։ Ոռոգումն իրականացվել է միկրոանձրևացման «Գոլդեն սփրեյ» համակարգով։ Այն իրենից ներկայացնում է ճկուն խողովակ, որի վրա բացված անցքերի միջոցով իրականացվում է հողատարածքի անձրևացում, և գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում մոտ 10 անգամ կրճատում է էներգածախսերը։ Քանի որ պտղատուների և հատապտուղների ոռոգման նորմերը և ռեժիմները տարբեր են, ոռոգման ցանցը բաղկացած է 2 մասից։ Պտղատուները ոռոգվել են առանձին միկրոհիդրանտային /բնային/ եղանակով։ Դա հնարավորություն է տալիս ջուրը մատակարարել անմիջապես ծառերի սնման մակերեսին։ Միջջարքային տարածքներում մշակվող ելակը ոռոգվում է գոլդեն սփրեյ 4 միկրոանձրևացման խողովակներով, որոնց ընդգրկման մակերեսը յուրաքանչյուրի համար կազմում է 600 մ<sup>2</sup>։ Խողովակներին ջուրը մատակարարվում է բենզինի միկրոշարժիչով աշխատող պոմպի միջոցով։ Հատկանշական է, որ տեխնոլոգիան բարդ չէ, կիրառվող սարքավորումները մատչելի են և հեշտ շահագործվող։ Տարածված է Հարավային



Կորեայի արտադրության Golden Spray A համակարգը: Շարժական փոքր պոմպեր արտադրվում է բազմաթիվ ֆիրմաների կողմից:

Կեռասենու 1 հա հաշվով այգու հիմնման և մինչև բերքատվության անցնելը խնամքի անհրաժեշտ ծախսերը առաջին չորս տարիներին մոտավորապես կազմում են 3 610 հազ. դրամ: Հինգերորդ տարում, երբ այգին լիարժեք բերքատու հասակում է, տարեկան եկամուտը կկազմի շուրջ 1 500 հազ. դրամ: Միաժամանակ, միջշարային տարածություններում ելակի մշակության շնորհիվ տարեկան զուտ եկամուտը կկազմի 1600 հազ. դրամ: Բերքահասակ դառնալուց հետո այգու հիմնադրման և պահպանման ծախսերը կփոխհատուցվեն 2.4 տարում ( $3610/1500=2.4$ ):

Կարծում ենք, որ գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող տարածքներում ՀՀ կառավարությունը պետք է հրաժարվի ոռոգման ջրի սուբսիդավորման ավանդական գործելաոճից և իրականացնի առաջարկվող տեխնոլոգիայով ինտենսիվ այգիների հիմնման, ինչպես նաև ոռոգման Golden Spray A համակարգի ձեռքբերման աջակցություն: Այս համակարգի ներդրումը բացի տնտեսական արդյունավետությունից ապահովում է սոցիալական և բնապահպանական արդյունավետություն: Մասնավորապես՝ 1) կրճատվում է ոռոգման ջրի համար վճարումը մոտ 2 անգամ, 2) մինչև ծառերի բերքատու հասակը միջշարային տարածքներից ստացվում է բավականին բարձր եկամուտ, 3) ապահովում է աշխատաժամանակի և ոռոգման ջրի խնայողություն, 4) հնարավորություն է ընձեռում խուսափել ջրային էրոզիայից, 5) բարելավվում է հողի կառուցվածքը:

Ծրագրում նշվում է, որ «Նոր տեխնոլոգիաների և գիտական հենքի վրա հիմնված մրցունակ և արդյունավետ գյուղատնտեսություն ստեղծելու ճանապարհին Կառավարությունը խնդիր է դրել» կարևորել 9 հիմնական ուղղություններ: Հարկ է նշել, որ այդ ուղղություններով պետական աջակցության ծրագրեր իրականացվել են նաև նախորդ տարիներին և այն հանգամանքը, որ դրանք նորից են շեշտադրվում ոչ միայն պետական աջակցության շարունակականության սկզբունքի դրսևորում է, այլև առավել նորովի ու արդյունավետ իրականացման ակնկալիք: Հետևաբար, անհրաժեշտ է հետհայաց վերլուծության միջոցով հիմնավորել ծրագրերի կարևորությունը, գնահատել վերջնարդյունքները և ներկայացնել կառուցակարգերի արդյունավետության բարձրացման առաջարկություններ:

Գյուղացիական տնտեսությունների շրջանում հարցումները ցույց են տվել, որ բյուջետային ծրագրերի արդյունավետությունը դեռևս ցածր է և չի համապատասխանում այն ակնկալվող արդյունքներին, որոնք ներկայացված են դրանք հիմնավորող փաստաթղթում: Այսպես, ՀՀ երեք մարզերի 210 գյուղացիական տնտեսություններում կատարված հարցումների արդյունքները հնարավորություն են տալիս գնահատել գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրերի արդյունավետությունը:

Հարցումների համար ընտրվել են՝ ՀՀ Արարատի մարզի Խարբերդ, Արևշատ, Քաղցրաշեն, Շահումյան, Փոքր Վեդի, Դարակերտ և Ռանչպար, ՀՀ Շիրակի

մարզի Ազատան, Արևիկ, Կամո, Մեղրաշեն, Փանիկ, Ողջի և Մեծ Սեպասար, ՀՀ Գեղարքունիքի մարզի Դդմաշեն, Լճաշեն, Նորատուա, Սարուխան, Ներքին Գետաշեն, Զոլաքար և Մեծ Մասրիկ համայնքների 10-ական գյուղացիական տնտեսություններ: Հարցվողներին առաջադրվել է 100 բալային համակարգով գնահատել գյուղատնտեսության պետական աջակցության 13 ծրագրերից յուրաքանչյուրի անհրաժեշտությունն ու արդյունավետությունը:

Մեր դիտարկումները հիմք են տալիս եզրակացնելու, որ շահառուները համեմատաբար մեծ կարևորություն են տալիս և արդյունավետ են գնահատում «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» և «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» ծրագրերը: «Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար» և «Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» ծրագրերը կարևորվում է, սակայն արդյունավետության գնահատականները ցածր է: Թերևս, ճիշտ էր, որ 2018 թվականին դադարեցվեցին «Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար» և «Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վառելիքի ձեռքբերման համար» սուբսիդավորվող ծրագրերը: Առավել ևս, որ դիզվառելիքի ծրագիրն արդյունավետ են գնահատել հարցվողների 20-30%-ը: Այդ ծրագրերի համար նախատեսված սուբսիդավորման գումարները վերաբաշխվեց «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» ծրագրին: Ի դեպ, ՀՀ կառավարության 2017թ. սեպտեմբերի 14-ի նո. 39 արձանագրային որոշումով արտոնյալ վարկերից օգտվելու հնարավորություն ստացան միայն խոշոր տնտեսությունները, քանի որ արտոնությունը գործում էր բացառությամբ 3-10 մլն վարկի գումարի դեպքում: Մենք օպերատիվ արձագանքել ենք այդ որոշմանը և շեշտադրել ակնհայտ անարդարացիությունը<sup>19</sup>: Բարեբախտաբար, մոտեցումը վերանայվել է, և 2019 թվականից իրականացվում է նաև «Փոքր գյուղացիական տնտեսությունների վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր»:

Ընդհանուր առմամբ ուսումնասիրվող բոլոր մարզերում հարցվողների կողմից գյուղատնտեսության աջակցության բյուջետային ծրագրերի կարևորությունը գնահատվել է 53.8-56.1, իսկ արդյունավետությունը՝ 36.1-39.6%: Այս ցուցանիշները բավականին ցածր են և նման գնահատականները պահանջում են պարբերաբար վերանայել ծրագրերի իրականացման կառուցակարգերը:

2019թ-ից իրականացվելու է նաև «Գյուղատնտեսությամբ զբաղվողներին ուղղակի աջակցության տրամադրում» ծրագիրը, որի նպատակն է բարձրացնել լեռնային, բարձր լեռնային և սահմանամերձ համայնքների հողօգտագործողներին վարելահողերի ըստ նշանակության օգտագործման և գյուղատնտեսական

<sup>19</sup> Ս. Ավետիսյան, Գյուղատնտեսական վարկերի և լիզինգի տոկոսադրույքների սուբսիդավորման կառուցակարգերի կատարելագործման մասին,- Ֆինանսներ և էկոնոմիկա, 11-12, 2017թ. էջ 141-144:

մշակաբույսերի մշակության արդյունավետությունը:

Առաջարկում են, որպես պետական աջակցության անկյունաքար ընդունել հասցեականության և պետություն-մասնավոր հատված գործընկերության սկզբունքները, նախապատվություն տալ շահառուների համաֆինանսավորումով ծրագրերի իրականացմանը:

Ծրագրում նշվում է, որ «Կառավարությունը նաև գործուն քայլեր է ձեռնարկելու մեքենատրակտորային համակազմի թարմացման և Հայաստանի գյուղատնտեսության կարիքներն առավելագույնս բավարարելու ուղղությամբ»: Այս դրույթի իրականացումը օրհասական անհրաժեշտություն է, քանի որ գյուղատնտեսության արդյունավետության բարձրացման համար կարևոր նշանակություն ունի մեքենա-տրակտորային պարկի արդիականացումը, էներգոզինվածության և էներգոապահովվածության մակարդակի բարձրացումը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ներկայումս շահագործվող տրակտորների միայն 9% և հացահատիկահավաք կոմբայնների 3.27% ունի մինչև 10 տարվա շահագործման ժամկետ: Ավելին, տրակտորների 80 % և հացահատիկահավաք կոմբայնների 84% շահագործվում է ավելի քան 26 տարի (աղյուսակ 3):

Որպես կանոն, գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման օպտիմալ ժամկետը 8-12 տարի է, ուստի գերնորմատիվային ժամկետում շահագործումը հանգեցնում է կատարված աշխատանքի միավորի հաշվով շահագործման ծախսերի ավելացման, տեխնիկայի արտադրողականության նվազման և վերջին հաշվով մեքենայացման մակարդակի իջեցման ու արտադրվող արտադրանքի ինքնարժեքի բարձրացման: Միանգամայն ակնհայտ է, որ մեքենատրակտորային հավաքակալայնի անբավարար համալրման և ծայր աստիճան մաշվածության պատճառով, հանրապետության գյուղատնտեսությունը հսկայական կորուստ ու գերաժախս է ունենում: Մինչև 2012թ. հանրապետության գյուղատնտեսության տեխնիկական համակազմը հիմնականում լրացվում էր Ճապոնիայի, Չինաստանի և Հնդկաստանի տրամադրած դրամաշնորհների ու օգնության ծրագրերի միջոցով: Այնուհետև այդ նպատակով օգտագործվում են միջազգային ֆինանսական կազմակերպություններից վերցված վարկային միջոցները: Մասնավորապես, ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» վարկային ծրագրի շրջանակներում «Արոտօգտագործողների կոոպերատիվներ»-ին է տրամադրվել՝

- 2012թ.՝ 23 միավոր գյուղ. տեխնիկա, որից 19 միավոր տրակտոր,
- 2013թ.՝ 138 միավոր գյուղ. տեխնիկա, որից 21 միավոր տրակտոր,
- 2014թ.՝ 159 միավոր գյուղ. տեխնիկա, որից 36 միավոր տրակտոր,
- 2015թ.՝ 131 միավոր գյուղ. տեխնիկա, որից 23 միավոր տրակտոր,
- 2016թ.՝ 137 միավոր գյուղ. տեխնիկա, որից 52 միավոր տրակտոր,
- 2017թ.՝ 180 միավոր գյուղ. տեխնիկա, որից 13 միավոր տրակտոր:

2013-2015թթ. ՀՀ գյուղատնտեսության նախարարության նախաձեռնությամբ՝ Բելառուսի Հանրապետության գյուղատնտեսական մեքենաներ արտադրող ըն-

կերությունների հետ բանակցությունների արդյունքում, հանրապետություն է ներկրվել և ՓՄՁ ՉԱԿ-ի միջոցով ուղղակի վաճառքի ու լիզինգային եղանակով շուկայականից անհամեմատ ցածր գներով տնտեսավարող սուբյեկտներն և անհատներին է տրամադրվել 292 միավոր «ՄՅ 82.1» մակնիշի տրակտոր, 20 միավոր հավաքիչ-մանլիչ, 20 միավոր կուլտիվատոր, 40 միավոր գույթան, 34 միավոր կարտոֆիլատնկիչ և կարտոֆիլաքանդիչ, 16 միավոր շարքացան:

### Աղյուսակ 3

#### «Հում առկա գյուղատնտեսական տեխնիկայի խմբավորումն ըստ օգտագործման տարիների»<sup>20</sup>

Խմբերն ըստ օգտագործման տարիների	Տրակտորներ				Ընդամենը տրակտորներ		Հացահատիկահավաք կոմբայներ	
	Թրթուրավոր		Անիվավոր					
	հատ	%-ը ընդ. նկատմամբ	հատ	%-ը ընդ. նկատմամբ	հատ	%-ը ընդ. նկատմամբ	հատ	%-ը ընդ. նկատմամբ
1	2	3	4	5	6	7	8	9
1-ին խումբ 1-5 տարի	5	0.10	879	8.26	884	5.78	21	1.45
2-րդ խումբ 6-10 տարի	4	0.08	493	4.63	497	3.25	26	1.82
3-րդ խումբ 11-15 տարի	-	-	474	4.45	474	3.10	58	4.05
4-րդ խումբ 16-20 տարի	-	-	276	2.59	276	1.80	46	3.22
5-րդ խումբ 21-25 տարի	3	0.06	12	0.11	15	0.09	-	-
6-րդ խումբ 26-30 տարի	1414	30.46	2852	26.79	4266	27.91	108	7.55
7-րդ խումբ 30-35 տարի	1455	31.35	2850	26.78	4305	28.16	531	37.15
8-րդ խումբ 36 տ- ից ավել	1769	38.11	2806	26.36	4575	29.93	561	39.25
Ընդամենը	4641	100	10642	100	15283	100	1429	100

Վերջին երկու տասնամյակում հաճախակի էր շահարկվում Գյուղատնտեսական տեխնիկայի կայանների (ԳՏԿ) գաղափարը: Մինչդեռ մեր վերլուծությունները ցույց էին տալիս, որ ԳՏԿ-ի ծրագիրը խիստ ռիսկային է, քանի որ գյուղատնտեսական գործունեություն իրականացնող սյուբեկտների ցածր վճարունակության, տեխնիկական սպասարկում իրականացնող մասնավոր անձանց հետ անհավասար մրցակցության պայմաններում, մեքենատրակտորային կայանները մրցունակությանը չէին դիմանալու: Այդպիսի փորձնական ծրագիր իրականացվել է նաև Արցախի Հանրապետությունում և մեծ գումարի բյուջետա-

<sup>20</sup> Աղյուսակը կազմել է հեղինակը ՀՀ գյուղատնտեսության նախարարության տեխնիկայի պետական տեսչության տվյալներով:

յին վարկերի վերադարձը հարցականի տակ է:

Այդուհանդերձ, Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2017 թվականի մարտի 30-ին ընդունեց «Գյուղատնտեսական տեխնիկայի կայանի կազմակերպման մասին» N 342-Ն որոշումը և 700 մլն. դրամ տրամադրեց «Նաս Զեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ին՝ տեխնիկա ներկրելու համար: Որոշման կատարման ընթացքը ցույց տվեց, որ ծրագրի հեռանկարը խիստ մշուշոտ է: Ուստի միանգամայն տրամաբանական էր, որ ՀՀ կառավարության 2019 թվականի 28 փետրվարի N 175-Ն որոշումով ուժը կորցրած ճանաչվեց նախկին որոշումը և ՀՀ գյուղատնտեսության նախարարության և «Նաս Զեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի միջև կնքվող հաշտության համաձայնագրով փորձ է արվում վերականգնել հատկացված պետական միջոցները<sup>21</sup>:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ, ի թիվս այլ, սույն հիմնախնդրի լուծման լավագույն տարբերակը նույնպես կոոպերացիայի զարգացումն է: Հետևաբար, միանգամայն հիմնավորված է, որ Ծրագրում շեշտադրվում է. «օժանդակել կոոպերատիվ գյուղատնտեսության զարգացմանը և սահմանել կոոպերատիվների կայացման համար անհրաժեշտ նվազագույն նախադրյալներ»: Թերևս, այս կարևոր գաղափարը կարելի էր ավելի հստակ շարադրել, բայց, քանի որ այն Ծրագրում ներկայացվել է որպես՝ «մրցունակ և արդյունավետ գյուղատնտեսություն ստեղծելու ճանապարհին» կառավարության առաջնահերթ խնդիր, ուրեմն պետք է հուսալ, որ գործնական քայլեր կձեռնարկվեն կոոպերացիայի զարգացման ուղղությամբ: Հատկապես կարևոր է մշակել գյուղատնտեսության կոոպերացիայի զարգացման հայեցակարգ և հիմնավոր ծրագիր:

Վերջին տարիներին ջերմոցային տնտեսությունների աննախադեպ զարգացման փորձը ցույց է տալիս, որ ՀՀ ագրարային ոլորտի լավագույն տեսլականը արդյունաբերական գյուղատնտեսությունն է: Ուրեմն, ողջունելով խելացի անասնաֆերմաների և ինտենսիվ այգեգործության գաղափարը, պետք է խթանել նաև ձկնաբուծական փակ համակարգերի, կուլտուրական արոտավայրերի, խելացի պլանտացիաների, սպառողական կոոպերացիայի միջոցով գյուղատնտեսական արտադրանքի մեծածախ շուկաների և արտահանման խթանման լոգիստիկ համակարգերի, ագրարային գիտության և կրթության, խորհրդատվության և տեղեկատվության, սերմնաբուծական, տնկարանային և տոհմաբուծական տնտեսությունների ցանցի ձևավորման, քաղաքային գյուղատնտեսության, գյուղի սոցիալական զարգացման, ոչ գյուղատնտեսական զբաղվածության, ապահովագրության և բնական ռիսկերի կանխարգելման, ագրովերամշակման և ագրո-արդյունաբերական ինտեգրացիայի զարգացման ծրագրերը: Թվարկածներից յուրաքանչյուրը առանձնահատուկ է և կարևոր: Նորից շեշտադրենք, որ Հայաստանի առանձնահատկությունների պայմաններում դրանց իրականացման լավագույն գործիքը գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացումն է:

<sup>21</sup> <http://www.irtek.am/views/act.aspx?aid=98602>

## Սամվել Ավետիսյան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԻՐԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ

**Ամփոփագիր:** ՀՀ կառավարության 2019-2023 թթ. ծրագրի «Գյուղատնտեսությունը» բաժնում ներկայացված են ագրարային քաղաքականության հիմնական գերակայությունները և խնդիրները: Հոդվածում համառոտ վերլուծվում է ներկա իրավիճակը, գնահատվում առաջադրված խնդիրների լուծման հնարավորությունները և պետական աջակցության ծրագրերի կառուցակարգերը: Առավել կարևորվում են գյուղատնտեսության արդյունավետության բարձրացման, հողային և ջրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, վարկավորման, գյուղատնտեսության տեխնիկական սպասարկման և այլ խնդիրները: Առանձնահատուկ կարևորություն է տրվում գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացմանը, որը ոլորտի կարևոր հիմնախնդիրների լուծման ինստիտուցիոնալ արդյունավետ համակարգ է:

**Բանալի բառեր.** գյուղատնտեսություն, արդյունավետություն, կոոպերացիա, աջակցություն, հողօգտագործում, տեխնիկական սպասարկում, վարկավորում, զարգացում

## Самвел Аветисян

### РЕАЛЬНЫЕ ВОЗМОЖНОСТИ И МЕХАНИЗМЫ РЕШЕНИЯ ПРИОРИТЕТНЫХ ЗАДАЧ АГРАРНОЙ ПОЛИТИКИ АРМЕНИИ

**Резюме:** В разделе «Сельское хозяйство» Программы Правительство Республики Армения 2019-2023 годов обозначены основные приоритеты и проблемы аграрной политики. В данной статье анализируется сложившаяся ситуация, оцениваются возможности предлагаемых задач и программ государственной поддержки. Наиболее важным считается повышение продуктивности сельского хозяйства, рациональное использование земельных и водных ресурсов, кредитование, техническое обслуживание сельского хозяйства и другие вопросы. Особое значение придается развитию сельскохозяйственных кооперативов, которые являются эффективной институциональной системой для решения ключевых вопросов в этой области.

**Ключевые слова:** сельское хозяйство, эффективность, кооператив, поддержка, землепользование, техническая поддержка, кредитование, развитие

**Samvel Avetisyan**

**REAL OPPORTUNITIES AND MECHANISMS FOR SOLVING THE PRIORITY OBJECTIVES OF THE AGRICULTURE POLICY OF ARMENIA**

**Abstract:** In the “Agriculture” section of the Program of the Government of the Republic of Armenia for 2019–2023, the main priorities and problems of the agriculture policy are identified. This article analyzes the current situation, evaluates the capabilities of the proposed tasks and state support programs. The most important is the increase in agricultural productivity, the rational use of land and water resources, lending, technical maintenance of agriculture and other issues. Of particular importance is the development of agricultural cooperatives, which are an effective institutional system for solving key issues in this area.

Keywords: Agriculture, efficiency, co-operation, support, land use, maintenance, lending, development.

## Մերի Մանուչարյան

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԵՆԻՇ

Մեծ է ապահովագրության դերը ագրարային ոլորտի արտադրական գործընթացների և գույքի օգտագործման ռիսկերի կառավարման ու դրանց հետևանքների կարգավորման գործում: Ըստ էության այն հանդիսանում է պետության կողմից գյուղատնտեսական արտադրանքի, հումքի, պարենի և այլ մթերքների արտադրության, վերամշակման և իրացման գործընթացների խթանման կարևորագույն պայման:

Շուկայական հարաբերությունների ձևավորման արդյունքում ՀՀ տնտեսության ագրարային հատվածում ձևավորվեցին նոր տնտեսական հարաբերություններ: Նախադրյալներ ստեղծվեցին գյուղում առկա արտադրական ներուժի արդյունավետ օգտագործման, գյուղատնտեսական արտադրության զարգացման և արդյունավետության բարձրացման համար: Սակայն ագրարային ոլորտում իրականացված հախուռն սեփականաշնորհումը և բարեփոխումները՝ ակնկալվող արդյունքների առումով, դեռևս հեռու են սպասված արդյունքներից:

Գյուղատնտեսության տեսակարար կշիռը ՀՀ համախառն ներքին արդյունքում 2013-2017թթ. միջին տվյալներով կազմել է 16.9%, գյուղատնտեսությունում զբաղված են (2017թ.) հանրապետության ընդհանուր զբաղվածների 31.3%-ը կամ 317.1 հազար մարդ<sup>2</sup>: Իր նշանակությամբ ճյուղը բացառիկ է երկրի բնակչության պարենային ապահովության ու պարենային անվտանգության գործում:

Գյուղատնտեսությունը ՀՀ-ում մշտապես ենթարկվելով անբարենպաստ բնակլիմայական պայմանների, բնական, տարերային աղետների ներգործությանը, դասվում է բարձր ռիսկայնություն ունեցող ճյուղերի շարքին:

Համաշխարհային բանկը Հայաստանը դասում է աշխարհի 60 ամենաաղետավտանգ երկրների թվին: Աշխարհում հայտնի 350 բնական վտանգներից Հայաստանին բնորոշ են շուրջ 110-ը: Դա բացատրվում է նրանով, որ Հայաստանը բարդ ռելիեֆ ունեցող երկիր է՝ կտրուկ լեռնաշղթաներով, դաշտավայրերով և խիստ մասնատված բարձրության մեծ տատանումների տարածքով (բարձրությունների տարբերությունը ավելի քան 3500 մ է): Երկիրը գտնվում է աշխարհի առավել բարձր սեյսմիկ ակտիվության գոտիներից մեկում, ուստի այստեղ առկա են գեոֆիզիկական վտանգներին առնչվող նշանակալի ռիսկեր:

<sup>1</sup> Պարենային ապահովություն և աղքատություն: Վիճակագրական տեղեկագիր, Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, 2018թ. հունվար-սեպտեմբեր, Երևան, 2018, էջ 9:

<sup>2</sup> Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում 2013-2017: Վիճակագրական ժողովածու: Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, Երևան, 2018, էջ 70:



Հարկ է նկատել, որ այդ 110 բնական վտանգներից մեր հանրապետությանն առավել հաճախ սպառնում են շուրջ 10 տեսակը, որոնց ազդեցությունը կրում է աղետալի բնույթ:

Համաձայն ՀՀ ԱԻՆ փրկարարական ծառայության տվյալների ՀՀ տարածքը ենթակա է հետևյալ վտանգներին՝

- 0,5% - փլուզումների ու քարաթափումների,
- 4,1% - սողանքների (ավելի քան 2500 սողանք, որից 300-ը՝ բնակեցված տարածքներում),
- 12% - ցրտահարությունների,
- 15% - երաշտի,
- 17% - կարկտահարման,
- 30% - սելավների և հեղեղումների
- 100% - ուժեղ երկրաշարժերի և այլն:

ՀՀ հողատարածքների 80%-ից ավելին ենթակա է էրոզիայի, աղակալման կամ ալկալիացման, գերխոնավության, ջրակալման վտանգների ազդեցության<sup>1</sup>:

Գյուղատնտեսության խոցելիությունը պայմանավորված է նաև հարաբերական սակավահողությամբ (ըստ 2018թ. վիճակագրական տարեգրքի, վարելահողերը կազմում են գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի 21,8%-ը)<sup>2</sup>, սակավաջրությամբ, արտադրական, սոցիալական և ֆինանսական ենթակառուցվածքների ոչ բավարար կենսունակությամբ, ներդրումների անբավարարությամբ, ինստիտուցիոնալ առանձին կառույցների գործունեության անկատարությամբ և մի շարք այլ գործոններով:

ՀՀ ագրարային ոլորտում ռիսկերի կառավարման բնագավառում արդյունավետության բարձրացումը կարևոր ու առանձնահատուկ ռազմավարական նշանակություն ունի, հաշվի առնելով գյուղատնտեսության ոլորտի դերը երկրի պարենային անվտանգության, գյուղական աղքատության հաղթահարման, տեղական արտադրության հաշվին պարենամթերքով ինքնաբավության (պարենային անկախության) մակարդակի բարձրացման, պարենամթերքի ներքին շուկայի կարգավորման, արտաքին առևտրաշրջանառության հաշվեկշռի բարելավման, սպառողների առողջության համար սնուցման լիարժեքության ապահովման տեսանկյունից: Ռիսկերի կառավարման բնագավառում արդյունավետ համակարգի ձևավորման հիմնախնդրի լուծումը վերապահված է ՀՀ պետական կառավարման մի շարք մարմիններին, մասնավորապես՝ ՀՀ գյուղատնտեսության, տարածքային կառավարման և զարգացման, բնապահպանության նախարարություններին, ՀՀ քաղաքաշինության կոմիտեին: Իսկ քանի դեռ մշակված չէ այդ բնագավառը կարգավորող միասնական ծրագիր (ռազմավարություն), հանրապետական, ինչպես նաև տարածքային կառավարման մարմինների ու ՀՀ

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսությանը վնաս պատճառող բնական և մարդածին աղետների ռիսկերի նվազեցման ուղեցույց, Երևան, 2015, էջ 23:

<sup>2</sup> Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2018, Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, Երևան, 2018, էջ 301:

կառավարությանն առընթեր գերատեսչությունների գործունեության համակարգումը գյուղատնտեսությունում ռիսկերի կառավարման ուղղությամբ լիարժեք չի իրականացվում: Բացի այդ, դեռևս լիարժեք չեն գնահատվել գյուղատնտեսության վարման ռիսկերը՝ ըստ տարածաշրջանների ու վտանգների (սպառնալիքների) տեսակների, ուստի հստակ կանխորոշված չեն ռիսկերի կառավարման ուղղությամբ աշխատանքների բարելավման հիմնական ուղիները, այդ բնագավառում պետական աջակցության գերակայությունները, մեխանիզմները, ինչն անհրաժեշտ է հատկացվող միջոցների առավել արդյունավետ օգտագործման և ոլորտի կայուն զարգացում ապահովելու համար:

Այնուհանդերձ, գյուղատնտեսությունում ռիսկերի կառավարման վերջին տասնամյակի որոշ դրական տեղաշարժերը << պետական բյուջեի, վարկային միջոցների, դրամաշնորհների, տնտեսվարողների սեփական ներդրումների հաշվին իրականացվող հողերի մելիորատիվ վիճակի բարելավման, արոտների ջրարբիացման, հակասելավային, հակակարկտային, հակահեղեղային, անտառավերականգնողական, անտառաշերտերի ստեղծման, ինչպես նաև տարաբնույթ այլ միջոցառումների ուղղությամբ դեռևս խիստ անբավարար են, եթե հաշվի առնենք, որ տարերային աղետների հետևանքով հանրապետության տարբեր գոտիներում ամեն տարի միջին հաշվով ոչնչանում է բերքի 20-25%-ը (շուրջ 15-20 մլրդ դրամի):

1990-ին գյուղատնտեսական կազմակերպությունների պարտադիր գույքային ապահովագրության (կենդանիների, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքի) չեղյալ համարելը չուղեկցվեց հուսալի ապահովագրական պաշտպանվածության պատշաճ կազմակերպման կանոնների ստեղծմամբ: Գործադիր իշխանության կողմից ընդունված առանձին որոշումները չունեն համակարգային բնույթ: Համապատասխան իրավական-նորմատիվային բազայի և դրանց իրականացման մեխանիզմի բացակայությունը գյուղատնտեսական ապրանք արտադրողներին խիստ կախվածության մեջ դրեց շուկայի և բնակլիմայական պայմանների տատանումներից՝ իր բացասական հետևանքներն ունենալով գյուղատնտեսական կազմակերպությունների և ֆերմերային տնտեսությունների մեծ մասի ֆինանսական վիճակի վրա: Ցրտահարության, կարկտահարության և այլ բնակլիմայական պայմանների հետևանքով հնարավոր կորուստները մեղմելու և գյուղացիական տնտեսությունների ֆինանսական կայունություն ապահովելու նպատակով անհրաժեշտ է <<-ում ներդնել գյուղատնտեսության ապահովագրությունը:

Ապահովագրությունը վտանգներից պաշտպանվելու գործիք է, որի էությունը դարերի ընթացքում չի փոխվել, թեև զգալիորեն փոխվել են նրա կազմակերպման ձևերը: Այն աստիճանաբար դարձել է մարդկային կենսագործունեության անբաժան մասը: Պատմական ժամանակներից ի վեր վնասի փոխհատուցումը դարձել է անհրաժեշտություն, իր զարգացման ընթացքում կրել է

էական փոփոխություններ ու տարածվել բազմաթիվ դեպքերի վրա<sup>1</sup>:

Ըստ ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի N 581-Ա որոշմամբ հավանության արժանացած՝ ՀՀ կառավարության ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույցի, գյուղատնտեսությունը համարվում է Հայաստանի Հանրապետության 3 առաջնահերթություններից մեկը<sup>2</sup>, իսկ գյուղատնտեսության ապահովագրությունը համարվում է այդ ոլորտի առաջնային խնդիրներից: Սակայն հարկ է նշել, որ գյուղատնտեսական մշակաբույսերի բերքի և կենդանիների՝ կարկտահարությունից, ցրտահարությունից, երաշտից, համաճարակից, ջրհեղեղից և այլ բնական աղետներից ապահովագրությունը կապված է որոշակի ռիսկերի հետ: Այս ոլորտի ապահովագրության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ հաճախ բացակայում են ճշգրիտ տվյալները՝ օրինակ, ապահովագրվող մշակաբույսերի բերքատվության մասին, և սա վերաբերում է հատկապես նոր ձևավորվող տնտեսություններին: Ինչպես նաև, կախված կլիմայական պայմաններից, նույն տարածաշրջանում գտնվող տնտեսությունները տուժում են միաժամանակ, և տվյալ պարագայում մեծ գումարներ են անհրաժեշտ լինում վնասը փոխհատուցելու համար: Հաջորդ առանձնահատկությունը պայմանավորված է նրանով, որ գյուղատնտեսության ապահովագրությունն էությամբ տարբերվում է դասական ապահովագրությունից: Դրա վառ օրինակն է բերքի կորուստի ապահովագրությունը, որի դեպքում վնասի իրական չափի որոշումը շատ բարդ է, քանի որ կորստի պատճառ կարող է հանդիսանալ և՛ բնակլիմայական աղետը, և՛ մարդկային գործոնը: Ու քանի որ գյուղատնտեսության ռիսկերը մեծ են, ապահովագրական ընկերությունները նպատակահարմար չեն գտնում գործունեություն իրականացնել այս ոլորտում: Ի դեպ նշենք, որ 2019թ.-ի փետրվար ամսին ՀՀ գյուղատնտեսության նախարարության և MicroFinance Strategy-ն (Հայաստանում գյուղատնտեսական ապահովագրության ներդրման ծրագրի իրականացման համար խորհրդատվական ընկերություն) անցկացրեցին գյուղատնտեսական ապահովագրության վնասի գնահատման մասնագետների ուսուցման և սերտիֆիկացման անվճար դասընթացներ, որը վարում էին արտերկրից հրավիրված փորձառու մասնագետներ:

Ներկայումս Հայաստանում կիրառվում են մի շարք միջոցառումներ բնական աղետներից գյուղատնտեսության վնասների չափը նվազեցնելու ուղղությամբ (գյուղացիական տնտեսություններում տեղադրում են հակակարկտային տեղակայաններ, ներդրվում են հակակարկտային ցանցեր, փորձում են կիրառել ոռոգման կաթիլային եղանակը): Դրանց արդյունավետ կազմակերպելու համար հիդրոմետ ծառայությունը նախապես տեղեկացնում է ցրտահարությունների մասին, իսկ գյուղնախարարությունն իրազեկում թե ինչպես պաշտ-

<sup>1</sup> Արզարյան Կ., Ճուղուրյան Ա., Ապահովագրական գործ, Երևան, 2007, էջ 9-11:

<sup>2</sup> ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի N 581-Ա որոշմամբ հավանության արժանացած՝ ՀՀ կառավարության ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույց, Հավելված ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 28-ի N 141-Ա որոշման:

պանել այգիներն ու ցանքատարածությունները: Նշված միջոցառումները պահանջում են բավականին մեծ ֆինանսական ներդրումներ: Ընդհանրապես գյուղատնտեսության նորագույն տեխնոլոգիաների կիրառումը, դիսկերի կանխարգելման հնարավորությունների ընդլայնումը հնարավոր է միայն պետական աջակցության պարագայում, և միայն այդ դեպքում գյուղացին կարող է հաղթահարել իր առջև ծառայած դժվարությունները:

Գյուղատնտեսության համար շրջադարձային նշանակություն ունի բերքի ստացման ավտոմատ համակարգի ներդրումը: Վերջինս հնարավորություն է ստեղծում ամբողջ վեգետացիայի ընթացքում համակարգչային ծրագրով հետևել բույսերի աճին և զարգացմանը, ավտոմատ կերպով կարգավորել ոռոգման, պարարտացման ու բուժման գործողությունները: Այս միջոցառումները բարձրացնում են ոչ միայն մշակաբույսերի բերքատվությունը, այլ նաև իջեցնում են համախառն բերքի կորստի ռիսկայնությունը<sup>1</sup>:

«Կարիքների գնահատում կլիմայական ռիսկերը մեղմելու համատեքստում Հայաստանում գյուղատնտեսության ապահովագրության ներդրման» թեմայի ուսումնասիրության արդյունքում՝ դոկտոր Կլեմանս Տատեն - Ժալերանը անդրադարձ է կատարում նաև ֆինանսական և շուկայական ռիսկերին, հատկապես շեշտադրելով, որ «Ֆերմերները ենթարկվում են այնպիսի ռիսկերի, որոնք չեն սահմանափակվում եղանակով և վնասատուներով: Նրանք հանդիպում են այնպիսի մարտահրավերների, ինչպիսիք են՝ գնային տատանումները, բարձր արտադրական ծախսերը, ֆինանսավորման ծախսերը և շուկայի հասանելիության բացակայությունը»<sup>2</sup>:

Գյուղատնտեսության ապահովագրության վերահսկողությունը կատարվում է տվյալ երկրի իշխանության կողմից, նպատակ ունենալով՝

- արդար և թափանցիկ ապահովագրական շուկայի ձևավորումը,
- շուկայի ֆինանսական կայունության ապահովումը,
- ապահովադիրների շահերի պաշտպանությունը,
- շուկայի վարվելակերպի կանոնների պահպանումը,
- ապահովագրական հատուցումների տրամադրման ապահովումը,
- ֆինանսական խարդախությունների կանխումը,
- շուկայի մասնակիցների կողմից օրենսդրության պահանջների կատարումը,
- տնտեսության մասշտաբով ապահովագրության հիմնական գործառույթների ապահովումը<sup>3</sup>:

Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության համակարգի ստեղծման

---

<sup>1</sup> Ավետիսյան Ս. և ուրիշներ, Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության համակարգի ներդրման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Եր., «Տնտեսագետ», 2016, 114 էջ, («Ամբերդ» մատենաշար), էջ 5:


<sup>2</sup> «Կարիքների գնահատում կլիմայական ռիսկերը մեղմելու համատեքստում Հայաստանում գյուղատնտեսական ապահովագրության ներդրման համար» ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակ, 2014թ., էջ 7:

<sup>3</sup> Սարգսյան Հ.Ի., Ապահովագրական վերահսկողությունը ՀՀ ապահովագրական շուկայի զարգացման համատեքստում, 2008, էջ 211-217, <http://iraber.asj-oa.am/426/4/Sargsian.pdf>

հիմնական նպատակներն են՝ պաշտպանել գյուղատնտեսական ապրանք արտադրողների գույքային շահերը և կայունացնել նրանց եկամուտները:

Գյուղատնտեսության ապահովագրության և դրա միջոցով գյուղացիական տնտեսությունների ֆինանսական վիճակի բարելավման տարբեր երկրների ուսումնասիրությունները վկայում են, որ գյուղատնտեսության ապահովագրության ներդրման համար կարևոր պայման է հանդիսանում պետության մասնակցությունը, որն առանձին երկրներում տարբեր կերպ է արտահայտվում՝ կախված երկրի տնտեսական զարգացման մակարդակից, իրականացվող քաղաքականությունից, գյուղատնտեսության առանձնահատկություններից, ապահովագրական շուկայի զարգացվածության աստիճանից, բնակչության կենսամակարդակից և այլ գործոններից:

Ստորև ներկայացված գծապատկերի միջոցով ներկայացված է դիսկերի բաշխման և փոխանցման սխեմաները Իսպանիայի գյուղատնտեսությունում, որը հետագայում կարելի է կիրառել նաև ՀՀ գյուղատնտեսության մեջ:



**Գծապատկեր 1. Դիսկերի բաշխման և փոխանցման սխեմաները Իսպանիայի գյուղատնտեսությունում<sup>1</sup>**

<sup>1</sup> OECD (2011) Managing Risk in Agriculture: Policy Assessment and Design, OECD Publishing, 2011, p. 230

Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության իսպանական համակարգը պետության և մասնավոր հատվածի բազմակողմանի համագործակցության արդյունք է: Ապահովադիրները գյուղատնտեսական մթերքների արտադրողներն են, որոնք ապահովագրվում են հիմնականում իրենց կոոպերատիվների և միությունների միջոցով՝ կիրառելով փոխադարձ ապահովագրության մեխանիզմները: Բացի ֆերմերներից, համակարգի կարևոր և բաղկացուցիչ մաս են կազմում հետևյալ կառույցները՝

1. ENESA գյուղատնտեսական ապահովագրության պետական գործակալությունը որպես գյուղատնտեսության, ձկնաբուծության և սննդի նախարարությանն առընթեր գյուղատնտեսության ապահովագրության վարչություն:

2. AGROSEGURO գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության պոլիս (հիմնադրվել է 1980թ.), որին մասնակցում են 33 ապահովագրական ընկերություններ, որոնք համամասնորեն բաժանում են ապահովագրական պատասխանատվությունը միմյանց միջև:

3. CCS-ը որպես էկոնոմիկայի նախարարության պետական վերաապահովագրական կազմակերպություն (հիմնադրվել է 1941թ.), որն իրականացնում է պարտադիր օբլիգատորային վերաապահովագրություն, ինչպես նաև աղետալին (մեծածավալ) ռիսկերի ապահովագրություն:

## Աղյուսակ 1


### Գյուղատնտեսության ապահովագրության խոշորագույն շուկաները աշխարհում և ՌԴ-ում, 2017թ.<sup>1</sup>

Երկիրը	Մշակաբույսերի ապահովագրված տարածքը, %	Ապահովագրության համակարգը	Սուբսիդիաները, %	Ապահովագրական պոլիս առկայությունը	Պետական վերաապահովագրություն
ԱՄՆ	85	Բազմառիսկային	>70	-	+
Չինաստան	35	Բազմառիսկային	80	+	Մասամբ (+/-)
Հնդկաստան	30	Բազմառիսկային	80	-	+
Կանադա	85	Բազմառիսկային և կարկուտից	55	-	+
Իսպանիա	60	Բազմառիսկային	50	+	+
Թուրքիա	23	Բազմառիսկային	50	+	+
Ֆրանսիա	55	Բազմառիսկային և կարկուտից	65(բազմառիսկային)	-	-
Իտալիա	20	Բազմառիսկային	65	Սահմանափակ ձևով	-
Գերմանիա	60	Կարկուտից	0	-	-
Արգենտինա	58	Բազմառիսկային և կարկուտից	0	-	-
Հարավային Աֆրիկա	40	Բազմառիսկային և կարկուտից	0	-	-
Ռուսաստան	<2	Բազմառիսկային	Մինչև 50	-	-

<sup>1</sup> Годовой отчет 2017, Агрострахование для России, Национальный союз агростраховщиков, 2018г., стр. 12.

Միջազգային փորձի ուսումնասիրությունը հիմք է հանդիսանում եզրակացնելու, որ գյուղատնտեսության ապահովագրությունը և դրա կառավարումը ռազմավարական կարևոր նշանակություն ունեն ոլորտի կայուն զարգացման, գյուղական բնակչության կենսամակարդակի բարձրացման և երկրի պարենային ապահովության հիմնախնդիրների լուծման համար: Այժմ մի փոքր անդրադարձ կատարենք գյուղատնտեսության ապահովագրության աշխարհում գոյություն ունեցող խոշորագույն շուկաներին, որպեսզի կարողանանք Հայաստանի համար օպտիմալ տարբերակ առաջարկել:

Հարկ է նշել, որ տարբեր երկրներում գյուղատնտեսական մշակաբույսերի ապահովագրության պայմանագիրը ուժի մեջ մտնելու ժամանակահատվածը տարբեր է (գծապատկեր 2).



**Գծապատկեր 2.** *Ապահովագրության պայմանագրի գործողության սկիզբը տարբեր երկրներում<sup>1</sup>*


Օրինակ ԱՄՆ-ում և Կանադայում գյուղատնտեսական մշակաբույսերի ապահովագրության պայմանագիրը սկսում է գործել պայմանագրի կնքման հաջորդ օրը ժամը 12:00-ին, Ավստրալիայում՝ 2 օրից, Իսրայելում պայմանագիրն ուժի մեջ է մտնում պայմանագիրը ստորագրելուց 3 օր հետո, Իսպանիայում տվյալ ժամանակահատվածը կազմում է 6 օր, Թուրքիայում՝ 7 օր, իսկ ամենաերկար ժամանակահատվածը Լեհաստանում և Գերմանիայում է՝ 14 օր:

Այժմ ներկայացնենք գյուղատնտեսական մշակաբույսերի ապահովագրության գծով ապահովագրական պատահարի տեղի ունենալու մասին ապահովագրական ընկերության տեղյակ պահելու ժամկետները տարբեր երկրներում (գծապատկեր 3):

Ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել է, որ տարբեր երկրներում ապահովագրողների համար գոյություն ունեն տարբեր պահանջներ ապահովագրական ընկերությանը տեղի ունեցած ապահովագրական պատահարի մասին տեղյակ պահելու վերաբերյալ: Օրինակ, ինչպես տեսնում ենք գծապատկերից, ամենակարճ ժամանակահատվածում՝ տեղի ունեցած պատահարի մասին, այն է՝ 3 օրվա ընթացքում, պետք է տեղյակ պահեն Իսրայելի, Լեհաստանի և Ավստրալիայի ապահովագրողները, իսկ ամենաերկար ժամանակահատվածում՝

<sup>1</sup> [www.agroinsurance.com](http://www.agroinsurance.com)

Թուրքիայի՝ 15 օրվա ընթացքում:



**Գծապատկեր 3.** Ապահովագրական պատահարի տեղի ունենալու մասին ապահովագրական ընկերության տեղյակ պահելու ժամկետները տարբեր երկրներում (օրեր) <sup>1</sup>

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ պետությունները մշակում և իրականացնում են ագրարային ոլորտի ռիսկերի ապահովագրության ներդրման և զարգացման խթանման քաղաքականություն: Մասնավորապես՝ ԱՊՀ երկրներից Ռուսաստանի Դաշնությունում կառավարությունը գյուղատնտեսության նախարարությանը կից ստեղծել է դաշնային պետական կազմակերպություն՝ «Ագրոպարենային արտադրության ոլորտում ապահովագրության պետական աջակցության դաշնային գործակալություն», որի հիմնական գործառնություններից է ապահովագրության զարգացման և պետական կարգավորման քաղաքականության իրականացումը, ինչը նաև նպատակահարմար կլինի իրականացնել Հայաստանում:

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության ապահովագրության ներդրման անհրաժեշտությունը պայմանավորված է վերջին տարիներին բնակլիմայական պայմանների վատթարացման և բնական աղետներից տուժած անձանց թվի ու կրած վնասներով և այդ վնասների լիարժեք հատուցման մեխանիզմների բացակայությամբ:

Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության համակարգի ներդրումն առաջին հերթին ունի կարևորագույն սոցիալական նշանակություն, քանի որ գյուղատնտեսական գործընթացները տնտեսական գործունեության ամենառիսկայիններից են, իսկ բազմապիսի ռիսկերի շարքում առավել դժվար կառավարվողները բնական և տարերային աղետներն են: Ուսումնասիրությունները վկայում են, որ վերջիններիս հետևանքով Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսությանը միջին հաշվով պատճառվել է տարեկան 20.0 մլրդ դրամի վնաս:

<sup>1</sup> www. agroinsurance. com



Քանի որ գյուղատնտեսության ապահովագրության ներդրումը մեր երկրում նորոյթ է, ապա պետությունն այս դեպքում չպետք է միայն դրամական միջոցներ հավաքի կամ բաշխի, այլև կարգավորի ֆինանսական հոսքերը և բաշխման հարաբերությունները՝ շուկայականին բնորոշ մեխանիզմների ու կառույցների միջոցով:

Որքան էլ բնական ռիսկերի հասցրած վնասները մեղմելու նպատակով պետությունը փորձում է որոշակի օգնություն տրամադրել տարերային աղետներից տուժած գյուղացիներին, սակայն ՀՀ պետական բյուջեի հնարավորությունները խիստ սահմանափակ են և, որպես կանոն, կորուստներն ամբողջովին չեն փոխհատուցվում:

Գյուղատնտեսության ապահովագրության ներդրման հիմնախնդիրների և գյուղացիական տնտեսությունների ֆինանսական վիճակի բարելավման վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները և վերլուծությունները հիմք են տալիս ներկայացվող եզրակացությունների ու առաջարկություններ համար:

1. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ապահովագրության հիմնախնդիրների լուծումը երկրի տնտեսության ագրարային ոլորտի կայուն ու համաչափ զարգացման հիմնական նախապայմաններից է: Այս բնագավառի բազմաթիվ խնդիրների աստիճանական լուծումը մեծապես կնպաստի ագրարային ոլորտի մրցունակության բարձրացմանը, ոլորտում տնտեսվարողների ֆինանսական վիճակի բարելավմանը, գյուղատնտեսական մթերքների (հումքի) արտադրության ծավալների ավելացմանը, գյուղական տարածքների զարգացմանը և վերոնշյալներով պայմանավորված՝ երկրի պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանն ու գյուղական աղքատության նվազմանը: Ուստի անհրաժեշտ է ստեղծված և կանխատեսվող իրավիճակի համալիր վերլուծության արդյունքում մշակել այնպիսի քաղաքականություն, որի իրականացումը հնարավորություն կընձեռի կանխել կամ մեղմել խոչընդոտող գործոնների բացասական ազդեցությունը և հնարավորինս ճիշտ օգտագործել գյուղատնտեսական արտադրությունում առկա բնատնտեսական ներուժը:
2. Ագրարային ոլորտը Հայաստանում բնութագրվում է դրա կողմից իրականացվող գործընթացների վարման բարձր ռիսկայնությամբ, քանի որ, այլ ոլորտների համեմատությամբ, այն ավելի շատ է ենթարկվում բնակլիմայական պայմանների ազդեցությանը, որն էլ հիմնականում պայմանավորում է ոլորտի խոցելիությունը: Ուսումնասիրությունները վկայում են, որ գործող ռիսկերի խմբում ընդգրկվում են մարդածին գործոնով պայմանավորված, ինչպես նաև բազմաթիվ այլ ռիսկեր, ներառյալ՝ խոշոր օբյեկտների հնարավոր տեխնածին վթարները, հակամարտությունները, շրջակա միջավայրի աղտոտվածությունը, էկոհամակարգերի խաթարումը, սննդամթերքի անվտանգությանն առնչվող ռիսկերը, ինչպես նաև միջազգային շուկայում պարենամթերքի գների անկայունությունը, էներգակիրների գնաճը, որը կարող է հանգեցնել երկրի գյուղատնտեսության մրցակցային հնարավորությունների

նվազմանը:

3. Իրողությունն այն է, որ գյուղացիական տնտեսությունների կողմից գյուղատնտեսության ապահովագրության նկատմամբ պահանջարկը դեռևս մեծ չէ, ինչը բացատրվում է մի շարք հանգամանքներով, որոնցից մասնավորապես կարելի է առանձնացնել գյուղմթերք արտադրողների վճարունակության ցածր մակարդակը:
4. Գյուղատնտեսության ապահովագրության ներդրման միջազգային փորձը վկայում է այն մասին, որ շուկայական հարաբերությունների արմատավորումը զուգորդվում է մրցակցային միջավայրի ձևավորմամբ, տնտեսության կառուցվածքում մասնավոր հատվածի ընդլայնմամբ, ձեռնարկատիրական գործունեության խթանման շնորհիվ ներդրումների ներհոսքի ավելացմամբ: Նշվածի հետ մեկտեղ տեղի է ունենում պարենամթերքի շուկայի որոշակի անկանխատեսելիությունը, տնտեսվարողների որոշ խմբերի անվճարունակության բարձրացումը (սնանկացումը), հավաստի տեղեկատվության պակասի և մարքեթինգային աշխատանքների անկատարության հետևանքով՝ իրացման հիմնահարցերի ի հայտ գալը:
5. Հայաստանի գյուղատնտեսությունը դիվերսիֆիկացված է, զարգացած են ինչպես բուսաբուծության, այնպես էլ անասնապահության ոլորտներն, ընդ որում, վերջին տարիների տվյալներով, գյուղատնտեսության համախառն արտադրանքի ավելի քան 60%-ը բաժին է ընկնում բուսաբուծությանը, որն առավելապես ենթարկվում է անբարենպաստ բնակլիմայական պայմանների (կարկտահարություններ, ցրտահարություններ, ջրհեղեղներ, սելավներ, երաշտ, սողանքներ, խորշակներ և այլն) ներգործությանը: Ըստ գնահատման՝ գյուղատնտեսությանը միայն անբարենպաստ բնակլիմայական պայմանների հետևանքով հասցված ամենամյա վնասը, միջին հաշվով կազմում է առնվազն մինչև 20 մլրդ. դրամ, ինչը զգալիորեն վատթարացնում է գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող տնտեսվարողների սոցիալ-տնտեսական վիճակը: Թերևս այդ պատճառով էլ ապահովագրական համակարգը հանդիսանում է շուկայական տնտեսության առանցքային ինստիտուցիոնալ կառույցներից մեկը:
6. Գյուղատնտեսության ապահովագրություն իրականացնելու տեսանկյունից առանձնանում է գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների ապահովագրությունը, քանի որ բարդություններ են առաջանում ռիսկերի հստակ սահմանման, վնասի չափի գնահատման, ապահովագրական գումարի որոշման առնչությամբ՝ հաշվի առնելով, որ գույքային ապահովագրության այլ ենթատեսակների համեմատությամբ, բուսաբուծությունում ապահովագրության օբյեկտը՝ դեռ չստացված բերքն է: Գյուղատնտեսական կենդանիների ապահովագրությունը, համեմատաբար, դրսևորվում է պակաս ռիսկայնությամբ, ավելի փոքր ծախսատարությամբ, մեթոդաբանական դյուրինությամբ, ուստի կազմակերպման առումով, այն կարելի է համարել ավելի մատչելի, իսկ գյուղացիական (ֆերմերային) տնտեսություն-

ների ու առևտրային կազմակերպությունների շենքերի, շինությունների, տրանսպորտային միջոցների, սարքավորումների և այլ անշարժ գույքի ապահովագրությունն իրականացվում է այլ ոլորտներում՝ գույքի ապահովագրության հիմնական սկզբունքներին (մոտեցումներին) համապատասխան և այդ առումով, ըստ էության, որևէ առանձնահատկություն չունի:

7. ՀՀ ագրարային հատվածում ապահովագրության համակարգի ներդրման գործընթացում պետության աջակցությունը արդյունավետության հիմնական նախապայմաններից է: Այդ մոտեցումը պահանջում է օրենսդրորեն ամրագրել գյուղատնտեսության ապահովագրության 3 գլխավոր կողմերի՝ գյուղատնտեսական մթերք արտադրողների (վերամշակողների), ապահովագրող ընկերությունների և պետության (ի դեմս լիազորված մարմինների) փոխհամագործակցության ձևերը, աջակցության ուղղությունները, չափերը և այլն: Այդ կապակցությամբ առաջարկվում է «Գյուղատնտեսությունում ռիսկերի կառավարման և ապահովագրության մասին» ՀՀ օրենքի մշակումը և սահմանված կարգով ընդունումը՝ ելնելով ոլորտի առանձնահատկություններից և գործընթացը խոչընդոտող գործոնների հաղթահարման անհրաժեշտությունից (գյուղական բնակչության ցածր վճարունակությունը, ապահովագրողների և ապահովադիրների փոխադարձ անվստահությունը, շուկայական տնտեսության պայմաններում ապահովագրության փորձի, ինչպես նաև որակյալ կադրերի պակասը, օրենսդրության որոշակի անկատարությունը, պետության աջակցության ուղղությունը և այլն):
8. Հայաստանում առկա գյուղատնտեսական ռիսկերի գնահատման և տվյալների բազայի ստեղծման աշխատանքներ դեռևս չեն իրականացվել, որն էլ ավելի է բարդացնում գյուղատնտեսության ապահովագրության ներդրման գործընթացը: Ռիսկերի գնահատումը հիմնավորված իրականացնելու նպատակով անհրաժեշտ է կատարել դրանց բազմակողմանի ուսումնասիրություն և վերլուծություն:
9. Ապահովագրական գործուն համակարգի ներդրման հիմնական նախապայմանը գյուղատնտեսության վարման ներկայիս պայմաններում ապահովագրական ռիսկերի համապարփակ գնահատումն է, և որին համահունչ ապահովագրական դաշտում ընդգրկվող գյուղատնտեսական մշակաբույսերի և կենդանիների գծով առաջարկվում է պետական միջոցների հաշվին ապահովագրական ռիսկերի համատարած գնահատման ծրագրերի իրականացումը:
10. Ապահովագրության գործընթացի պետական կարգավորման և վերահսկողության բնագավառներում իրականացվելիք քաղաքականությունը պետք է համարժեք լինի հանրապետությունում ագրարային ոլորտում գույքային ապահովագրության ռիսկերին: Այդ մոտեցումը կարևորվում է այն պատճառով, որ Հայաստանում գործող ապահովագրական ընկերությունները դեռևս չունեն բավարար փորձ, հմտություններ և համապատասխան ռեսուրսներ, որպեսզի կարողանան արդյունավետ մրցակցել օտարերկրյա խոշոր

(կայացած) ընկերությունների հետ: Հետևաբար գտնում ենք, որ նշված հիմնահարցերի լուծումը պահանջում է վերահսկողության և հաշվետվության համակարգի համապատասխանեցումը IAS և IFRS միջազգային կազմակերպությունների ստանդարտների (չափորոշիչների) պահանջներին: Միաժամանակ պետք է նշել այն իրողությունը, որ հանրապետությունում դեռևս չի ձևավորվել գյուղատնտեսության ապահովագրության «մշակույթը», և այդ գործընթացը բավականին ժամանակատար է, ուստի այդ ուղղությամբ նույնպես կատարվելիք միջոցառումները հանդիսանալու են ապահովագրության բնագավառում իրականացվելիք քաղաքականության նախընտրելի ուղղություններից մեկը:

11. Ինդեքս ապահովագրության միջոցով գյուղատնտեսական ռիսկերի կառավարման միջազգային փորձի ուսումնասիրումը և մեր կողմից իրականացված հետազոտությունները հիմք են տալիս առաջարկելու ՀՀ-ում կիրառել ոչ միայն ավանդական, այլև նորարարական պրոդուկտներ, որոնք էական առավելություններ ունեն: Ինդեքս ապահովագրության ներդրման գործընթացում կարևորվում է «ռիսկերի քարտեզագրումը»: Տեղի մասնագետները միջազգային փորձագետների խորհրդատվությամբ պետք է իրականացնեն քարտեզագրումը, որը կարելի է կազմել ինչպես ամբողջ երկրի, այնպես էլ մի մարզի կամ համայնքի կտրվածքով:
12. Ապահովագրական պատահարների դեպքում վնասների գնահատումը գյուղատնտեսության ապահովագրության ամենաբարդ և կարևորագույն գործընթացներից է, որի համար առաջարկվում է հիմնել անկախ փորձագետների ինստիտուտ: Ըստ որի անկախ փորձագետը պետք է ունենա համապատասխան մասնագիտական կրթություն, բավարար գիտելիքներ և ստանա անկախ փորձագետի որակավորման վկայական: Փորձագետների որակավորման համար պետք է ստեղծվի համապատասխան հանձնաժողով, իսկ որակավորման կարգը պետք է սահմանվի ՀՀ կառավարության կողմից:
13. Անհրաժեշտ և պարտադիր պայման է. որոշակի տարածքներում, խոշոր տնտեսություններում, առանձին համայնքներում իրականացնել փորձնական (պիլոտային) ապահովագրական ծրագրեր, մասնավորապես կապված սահմանափակ ռիսկերի հետ: Տեղին կլինի ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրությունը սկսել կարկուտի ռիսկի ապահովագրությունից: Միաժամանակ, հաշվի առնելով հացահատիկային մշակաբույսերի, հատկապես ցորենի կարևոր նշանակությունը պարենային անվտանգության ապահովման հարցում, ինչպես նաև ցորենի ինքնաբավության ցածր աստիճանը, գտնում ենք, որ առաջնահերթ պետք է ապահովագրել ցորենի ցանքատրածությունները: Ապահովագրության ոլորտի մասնագետների կարծիքով հացահատիկային մշակաբույսերն այլ մշակաբույսերի համեմատությամբ ապահովագրության տեսանկյունից պակաս ռիսկային են: Այս հանգամանքը ևս կարևոր է գյուղատնտեսության ապահովագրության համակարգի

ներդրման սկզբնական փուլում:

Այսպիսով, ապահովագրությունը այդ թվում նաև ագրարային ոլորտում, երկրի տնտեսության կարևորագույն օղակներից է, որը նպաստում է երկրի ֆինանսական կայունության, ինչպես նաև տնտեսական ու սոցիալական անվտանգության ապահովման հիմնախնդիրների լուծման գործընթացին:

Ամփոփելով վերը նշվածը կարելի է փաստել, որ ՀՀ գյուղատնտեսության մեջ ապահովագրական համակարգի ներդրումը կնպաստի գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվողների եկամուտների կայունացմանը, գյուղատնտեսությունում ներդրումներ կատարելու գրավչության բարձրացմանը, ինչպես նաև պետությանը կազատի տարերային աղետներից տուժած գյուղացիական տնտեսություններին աջակցություն ցուցաբերելու պարտավորությունից:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. Աբգարյան Կ., Ճողովյան Ա., Ապահովագրական գործ, Երևան, 2007:
2. Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում 2013-2017: Վիճակագրական ժողովածու: Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, Երևան, 2018թ.:
3. Ավետիսյան Ս. և ուրիշներ, Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության համակարգի ներդրման ուղիները Հայաստանի Հանրապետությունում Երևան, «Տնտեսագետ», 2016, 114էջ («Ամբերդ» մատենաշար):
4. «Կարիքների գնահատում կլիմայական ռիսկերը մեղմելու համատեքստում Հայաստանում գյուղատնտեսական ապահովագրության ներդրման համար» ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակ, 2014թ.:
5. Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսությանը վնաս պատճառող բնական և մարդածին աղետների ռիսկերի նվազեցման ուղեցույց, Երևան, 2015:
6. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2018, Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, Երևան, 2018:
7. ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի N 581-Ա որոշմամբ հավանության արժանացած՝ ՀՀ կառավարության ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույց, Հավելված ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 28-ի N 141-Ա որոշման:
8. Պարենային ապահովություն և աղքատություն: Վիճակագրական տեղեկագիր, Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, 2018թ. հունվար-սեպտեմբեր, Երևան, 2018:
9. Սարգսյան Հ.Ի., Ապահովագրական վերահսկողությունը ՀՀ ապահովագրական շուկայի զարգացման համատեքստում, 2008թ.: <http://lraber.asj-oa.am/426/4/Sargsian.pdf>
10. Годовой отчет 2017, Агрострахование для России, Национальный союз агро-страховщиков, 2018г.
11. OECD (2011) Managing Risk in Agriculture: Policy Assessment and Design, OECD Publishing, 2011.

## Մերի Մանուչարյան

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԵՆԻՇ

**Ամփոփագիր:** Հոդվածում ներկայացված են գյուղատնտեսության ապահովագրության դերը և ներդրման հիմնախնդիրները ՀՀ-ում և, թե ինչպես այն կարող է ազդել գյուղացիական տնտեսությունների ֆինանսական վիճակի վրա:

Գյուղատնտեսության ապահովագրության և դրա միջոցով գյուղացիական տնտեսությունների ֆինանսական վիճակի բարելավման տարբեր երկրների ուսումնասիրությունները վկայում են, որ գյուղատնտեսության ապահովագրության ներդրման համար կարևոր պայման է հանդիսանում պետության մասնակցությունը, որն առանձին երկրներում տարբեր կերպ է արտահայտվում՝ կախված երկրի տնտեսական զարգացման մակարդակից, իրականացվող քաղաքականությունից, գյուղատնտեսության առանձնահատկություններից, ապահովագրական շուկայի զարգացվածության աստիճանից, բնակչության կենսամակարդակից և այլ գործոններից:

Տվյալ հոդվածում կատարված առաջարկությունները կարող են նպաստել գյուղացիական տնտեսությունների ֆինանսական կայունությանը, ինչպես նաև երկրի տնտեսական ու սոցիալական անվտանգության ապահովման հիմնախնդիրների լուծմանը:

**Բանալի բառեր.** ապահովագրություն, գյուղատնտեսություն, գյուղացիական տնտեսություններ, ռիսկեր, ֆինանսական վիճակ, ագրարային ոլորտ, բնակլիմայական պայմաններ, անվճարունակություն:

## Мери Манучарян

### ВНЕДРЕНИЕ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННОГО СТРАХОВАНИЯ КАК ОРИЕНТИР УЛУЧШЕНИЯ ФИНАНСОВОГО СОСТОЯНИЯ ФЕРМЕРСКИХ ХОЗЯЙСТВ

**Резюме:** В статье представлена роль сельскохозяйственного страхования в Республике Армения и его влияние на финансовое состояние фермерских хозяйств.

Исследования различных стран по улучшению финансирования сельского хозяйства и финансового положения фермерских хозяйств доказывают, что участие государства является предпосылкой для внедрения сельскохозяйственного страхования, которое в разных странах различается в зависимости от

уровня экономического развития страны, проводимой политики, особенностей сельского хозяйства, уровня развития страхового рынка, уровня жизни населения и других факторов.

Рекомендации, сделанные в этой статье, могут способствовать финансовой стабильности фермерских хозяйств, а также процессу решения вопросов экономической и социальной безопасности страны.

**Ключевые слова:** страхование, сельское хозяйство, фермерские хозяйства, риски, финансовое состояние, аграрный сектор, климатические условия, неплатежеспособность.

**Meri Manucharyan**

## INTRODUCTION OF AGRICULTURAL INSURANCE AS WAY OF IMPROVING THE FINANCIAL CONDITION OF RURAL ECONOMIES

**Abstract:** The article presents the role of the agriculture insurance and the introduction of the issues in the Republic of Armenia and how it can affect the financial condition of the farms.

Studies from various countries on improving agricultural finance and the financial situation of farmers prove that state participation is a prerequisite for the introduction of agricultural insurance, which in different countries differs depending on the country's economic development level, policy implemented, agricultural peculiarities, level of development of insurance market, living standards of the population and other factors.

Recommendations in this article can contribute to the financial stability of rural economies, as well as the process of solving economic and social security issues of the country.

**Keywords:** insurance, agriculture, rural economies, risks, financial condition, agrarian sector, climatic conditions, insolvency.

## Արամ Խաչատուրյան Վահագն Խաչատուրյան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒ- ԹՅՈՒՆԸ. ՄՏՈՐՈՒՄՆԵՐ, ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ

#### Նախաբան

Մարդկությունն իր զարգացման տարբեր ժամանակաշրջաններում փոխել է վերաբերմունքը բնության, շրջակա միջավայրի նկատմամբ՝ պայմանավորված տվյալ հասարակարգի անդամների պահանջմունքների էվոլյուցիայով, անձնական, խմբային պահանջների բավարարման համար պարզունակ մեթոդներից հասնելով մինչև ժամանակակից զարգացած հասարակությանը բնորոշ պահանջների բավարարման համար անհրաժեշտ տեխնոլոգիապես բարդ կառավարման մեթոդների: Հայաստանն էլ իր զարգացման մի փուլում հնարավորություն է ստացել արդյունաբերական եղանակով շահագործելու իր ընդերքը, դրանով ապահովել զարգացում, երկրի տնտեսական պոտենցիալի հզորացում, տնտեսական աճ և, ի վերջո, ընդհանուր կենսամակարդակի բարձրացում: Տարիների ընթացքում ինչպես աշխարհում, այնպես էլ մեզ մոտ փոխվել է վերաբերմունքը, հասարակական կարծիքը ընդերքի շահագործման նկատմամբ: Ծայրահեղ մոտեցումները, կապված ընդերքի շահագործումը դադարացնելուց մինչև այն ընդլայնելը, հատկապես վերջին տարիներին, լայն քննարկման առարկա են եղել, դժգոհությունների առիթ հանդիսացել: Վերջինս պայմանավորված է եղել ընդերքի շահագործման հստակ, հիմնավորված, բնապահպանական և շրջակա միջավայրի վրա ազդեցության ժամանակակից պահանջներին համապատասխանող ծրագրեր չունեցող կառավարությունների գործունեության հետ: Այն ինչ, ընդունելի էր և թույլատրելի տարիներ առաջ ընդերքի շահագործման առումով, այսօր այլևս ընդունելի չէ՝ տեխնիկական և տեխնոլոգիական ձեռքբերումների ժամանակակից հնարավորություններն են այդպես պահանջում: Մյուս կողմից մարդկանց տեղեկացվածության հնարավորությունների մեծացումը նրանց դարձնում է ավելի պահանջատեր իր երկրի ընդերքի շահագործման արդյունավետության բարձրացման առումով:

Մի կարևոր հանգամանք ևս, եթե նախկինում բնապահպանական և ընդերքի շահագործման հարցերը շատ չէին կարևորվում, ապա այսօր դրանք մղվել են առաջին պլան և էական ու վճռորոշ դեր են կատարում որևէ որոշում կայացնելիս: Պատահական չէ, որ ժամանակակից տնտեսագիտության մեջ արդեն իսկ տնտեսական աճը հաշվելիս առանձնահատուկ ուշադրության է արժանանում վերը նշված հանգամանքը: Այլևս միայն տնտեսական աճը՝ բացարձակ արժեքով, բավարար չէ ամբողջական գնահատական տալու նրա ազդեցության, որակի առումով, եթե հատուկ չկա պարզաբանում, թե ի՞նչ գործոնների հաշվին է այն տեղի ունեցել, ինչքանով է այն վնաս պատճառել բնու-



թանը, պահպանվել են արդյո՞ք բնապահպանական նորմերը: Պատահական չէ, որ այսօր առանձնահատուկ ուշադրության են արժանանում այն գիտական աշխատանքները, որոնք հնարավորություն են տալիս հաշվի առնելու, գնահատելու էկոլոգիայի վրա ազդեցության մեծությունը: Պատահական չէ նաև, որ անցյալ տարվա Նոբելյան մրցանակը հանձնվեց հենց այդ հարցերին վերաբերող հետազոտությունների հեղինակների՝ Ռոմերին և Նորդհաուզին: Նրանք արժանացել են մրցանակի երկարաժամկետ մակրոտնտեսական վերլուծության բնագավառում ձեռքբերումների համար: Նորդհաուզը պարզևատրվել է կլիմայի փոփոխության հանգամանքը հաշվառման-վերլուծությունների մեջ ներդնելու համար, Ռոմերը՝ տնտեսական աճի վրա նորարարության ազդելու հանգամանքը բացահայտելու համար:

Երկուսն էլ իրենց աշխատանքներով ընդլայնեցին տնտեսական վերլուծության շրջանակները, ստանալով մոդելներ, որոնք բացատրում են թե ինչպես է շուկայական տնտեսությունը հաշվառում բնությունը և գիտությունը: 90-ականներին Նորդհաուսն առաջին տնտեսագետն էր ով մշակեց մոդել, որը նկարագրում է տնտեսության վրա կլիմայի ազդեցությունը: Այսօր այդ մոդելը լայն կիրառում ունի, որով էլ բացահայտվում է թե ինչպես են տնտեսությունն ու կլիման իրար հետ փոխկապակցված շարժվում<sup>1</sup>:

Ժամանակակից պայմաններում հենց բնապահպանական հարցերն են, որ մեծացնում են պետության կարգավորիչ դերը: Նոր իրավիճակը, կապված համաշխարհային մակարդակով էկոլոգիական աղետները կանգնեցնելու և հետագայում խուսափելու հետ, պարտադրում են արդեն համաշխարհային մակարդակով կարգավորել աշխարհի բնական ռեսուրսների շահագործումը: Այս գործի հաջողությունն էլ պայմանավորված է նրանով, թե որքանով և ինչ արագությամբ են պետությունները կարողանում արձագանքել, իրենց կառավարչական ռեսուրսները օգտագործել իրավիճակը կառավարելի դարձնելու համար:

Մյուս կարևոր հանգամանքը, որը կարող է փոխել ընդերքի շահագործման նկատմամբ վերաբերմունքը պայմանավորված է վստահության գործոնով: Ինչքանով են տարբեր երկրների մարդիկ, հասարակությունները վստահում իրենց երկրների իշխանություններին, կառավարություններին, ընդհանրապես պատասխանատուներին: Առանց այդ վստահության, համատեղ որոշումների կայացման՝ պետություն-քաղաքացի մասնակցությամբ, այսօր անհնար է էկոլոգիային առնչվող որևէ ծրագրի իրականացումը: Առանց փոխադարձ վստահության, պատասխանատվության, նմանատիպ ցանկացած ծրագրերի իրականացում անհնար է դառնում. հիշենք «Ամուսար»-ի պատմությունը: Բնական ռեսուրսների շահագործման որևէ նախագիծ հաջողություն կարող է ունենալ նաև մեկ այլ ոչ պակաս հանգամանքի առկայության դեպքում: Չմոռանաք, որ որպես ընդունված նորմ, ամեն մի երկրում ընդերքը պատկանում է այդ տարածքում ապրող մարդկանց-պետությանը, այդ նորմը շատ հաճախ ամրա-

<sup>1</sup> <https://www.rbc.ru/politics/08/10/2018/5bbaffe99a79477a49648931>

գրված է յուրաքանչյուր երկրի ամենաբարձր իրավական կամ իրավունքի ակտում՝ ՀՀ քաղաքացիների մասով այն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 2-րդ մասում<sup>2</sup>: Սրանից հետևում է, որ ընդերքի շահագործման արդյունքներն էլ պետք է հասանելի լինեն երկրի քաղաքացիներին՝ բոլորին, և ոչ թե առանձին խմբերի: Մեզ մոտ, համոզված ենք նաև աշխարհի շատ երկրներում՝ հատկապես զարգացող, թույլ ժողովրդավարական, ընդերքի շահագործման արդյունքներից օգտվողները սահմանափակ են, դրա պատճառով էլ այն կորցնում է և կորցրել է իր ներառականության պոտենցիալը: Սա էլ պատճառ է դարձել, որ ընդերքի շահագործումը մի կողմից մարդկանց երջանկություն է պարգևում, առաջընթաց ապահովում, մյուս կողմից պատճառ է դառնում աղքատության, կործանարար հետևանքների:

Այն իրավիճակը, որում հայտնվել է Հայաստանի Հանրապետությունը, պատճառ է այն քաղաքականության, որ տարիներ շարունակ իրականացվել է մեր երկրում հարյուրամյա պատմություն և բնականաբար նշանակություն ունեցող տնտեսության ճյուղի՝ հանքարդյունաբերության նկատմամբ: Այդ բնագավառի պատասխանատուները, չունենալով տնտեսության համար կարևորագույն նշանակություն ունեցող ճյուղի զարգացման ռազմավարություն, նպաստել են հանքարդյունաբերության տարերային զարգացմանը, որն էլ իր հերթին արդեն դարձել է և դառնալու է աղետների պատճառ: Կարծում ենք, Թեղուտի հանքավայրի աշխատանքների դադարեցման անհասկանալի, մինչ օրս չպարզաբանված փաստը դրանով է պայմանավորված: Պատահական չէ նաև մարդկանց վերաբերմունքը ընդերքի շահագործման հետ կապված գործընթացներին:

Ի՞նչը կարող է փոխել իրավիճակը, արդյոք մարդիկ կդառնան համախոհ և համագործակցող այդ գործընթացներին: Հարցերի պատասխանը կախված է պետության կողմից վարվող քաղաքականությունից՝ ընդհանրապես երկրի և տնտեսության կառավարման և, մասնավորապես, հանքարդյունաբերության կառավարման, գոյություն ունեցող խնդիրների նկատմամբ մոտեցումների առումով: Այն պոտենցիալը, որն իր մեջ պարունակում է հանքարդյունաբերությունն, իհարկե, պետք է օգտագործվի, օգտագործվի նորովի, այն սկզբունքների կիրառմամբ, որոնք ամրագրված են ՀՀ կառավարության ծրագրում՝ հաստատված 2019 թվականի փետրվարի 8-ին<sup>3</sup>, որտեղ մասնավորապես գրված է. «Կառավարության քաղաքականությունը հանքարդյունաբերության ոլորտում ուղղված է թափանցիկության, հանրության առջև բարձր հաշվետվողականության ապահովմանը: Բնական պաշարների արդյունավետ և թափանցիկ կառավարման դեպքում երկիրը կարող է ստանալ տնտեսական արդյունքներ, որոնք կօգնեն ապահովել տնտեսական աճ:

Ներկայումս հանքարդյունաբերության ոլորտի համապարփակ քաղաքականության մշակումը հնարավորություն կտա ապահովելու ոլորտի կայուն զարգացում, որը կհավասարակշռի տնտեսական, սոցիալական և բնապահպանա-

<sup>2</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510>


<sup>3</sup> Տե՛ս ՀՀ կառավարության ծրագիր, <http://www.gov.am/files/docs/3133.pdf>

կան կայունությունը, ինչպես նաև կապահովի ոլորտի թափանցիկությունը, հաշվետվողականությունը և հրապարակայնությունը»<sup>4</sup>:

Աշխատանքը նպատակ ունի ներկայացնելու Հայաստանի Հանրապետության տնտեսական կյանքին հանքարդյունաբերության մասնակցության չափը, տնտեսության զարգացմանը մասնակցելու պոտենցիալը, այն խոչընդոտները, որոնք սահմանափակում են այդ հնարավորությունները:

### Հանքարդյունաբերության պոտենցիալը

Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտը ազգային տնտեսության մեջ ունի առանցքային մասնաբաժին: Հայաստանից արտահանվող նյութերի առնվազն կեսը բաժին է ընկնում հանքային խտանյութերին և մետաղներին, որոնք երկրից արտահանվող արտադրանքների ցուցակում առավել կարևոր տեղ են զբաղեցնում (տե՛ս գծապատկեր 1):



Գծապատկեր 1. ՀՀ արտահանման կառուցվածքի տեղաշարժերը 1993-2017թթ.<sup>5</sup>

Արտահանման և ընդհանրապես տնտեսության վրա մետաղների արդյունահանման և վերամշակման ազդեցության մեծացումը սկսած 1993թ.-ից մինչ օրս հիմնականում պայմանավորված է եղել մետաղների համաշխարհային գներով, որոնք, օրինակ, 2010 թվականին հասան իրենց ամենաբարձր մակարդակին: Այսօր փաստացի արտահանման կառուցվածքում մետաղների և խտանյութի տեսակարար կշիռը ավելի քան 45 տոկոս է, գյուղատնտեսական արտադրանքի, խմիչքի և ծխախոտի բաժինը 20 տոկոս է, ոսկե իրերինը՝ 10 տոկոս:

Օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռում ներկայումս հաշվառված են հաստատված պաշարներով օգտակար հանածոների շուրջ 871 հանքավայրեր (43 մետաղական, 760 ոչ մետաղական, 44 ստորերկրյա քաղց-

<sup>4</sup> ՀՀ կառավարության ծրագիր, <http://www.gov.am/files/docs/3133.pdf>, էջ 55

<sup>5</sup> <https://www.kavkaz-uzel.eu/blogs/83781/posts/33459>, Промышленность Армении

րահամ և 24 հանքային ջրերի), ինչպես նաև օգտակար հանածոների 580 հանքերևակումներ (131 մետաղական և 449 ոչ մետաղական), օգտակար հանածոների ավելի քան 130 տեսակներ, որոնցից շուրջ 25-ը՝ մետաղական:

Հայաստանի Հանրապետության ընդերքը հարուստ է հետևյալ մետաղական օգտակար հանածոների տեսակներով՝ երկաթ, պղինձ, մոլիբդեն, կապար, ցինկ, ոսկի, արծաթ, ծարիր, այլումին, ինչպես նաև դրանցում պարփակված հազվագյուտ ու ցրված մետաղներով: Այդուհանդերձ, գլոբալ մակարդակով վերցված, այս հանքավայրերը համեմատաբար փոքր են: Հայաստանի պղնձամոլիբդենային ամենախոշոր հանքավայրը Քաջարանում իր մեծությամբ աշխարհում գրավում է մոտ 110-րդ տեղը, իսկ ոսկու ամենախոշոր հանքավայրը Սոթքում աշխարհի ոսկու 300 խոշորագույն հանքավայրերի ցանկից դուրս է<sup>6</sup>:

Ըստ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության հրապարակած տեղեկատվության, օգտակար հանածոների հանքավայրերի պետական կադաստրում հաշվառված է հաստատված պաշարներով օգտակար հանածոների ավելի քան 850 հանքավայր, ներառյալ՝ 42 մետաղական օգտակար հանածոյի հանքավայր: Դրանցից ներկայում շահագործվում է շուրջ 400՝ այդ թվում՝ 28 մետաղական հանքավայր: Հայաստանում գրանցված է 27 մետաղական հանքաքար արդյունահանող ընկերություն: Վերջիններիս գործունեության իրականացման շրջանակներում առկա է 28 թույլտվություն:

Ոչ մետաղական հանքային պաշարների հարստությամբ ու բազմազանությամբ Հայաստանի Հանրապետությունն աշխարհում առաջատար տեղ է գրավում: Հանրապետության փոքրիկ տարածքում հանդիպում են աշխարհում հայտնի գրեթե բոլոր տեսակի հանքանյութային ապարները<sup>7</sup>:

Մեր ուսումնասիրության շրջանակները սահմանափակվում են ՀՀ մետաղական հանքարդյունաբերության ոլորտով՝ պայմանավորված ՀՀ տնտեսության վրա դրա ազդեցությամբ: Ստորև ներկայացնենք մի քանի աղյուսակներ, որոնց հիման վրա էլ կարելի է ամբողջական պատկերացում ունենալ մետաղական հանքարդյունաբերության տնտեսության մեջ մասնակցության մասին (տե՛ս աղյուսակ 1,2,3)<sup>8</sup>: Ընդամենը մի դիտարկում՝ ելնելով ներկայացված փաստական տվյալներից: Եթե հանքարդյունաբերության մեջ զբաղվածները 2017թ. կազմել են ընդհանուր զբաղվածների 0.7 տոկոսը, ապա հանքարդյունաբերության ընկերությունների կողմից պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները նույն թվականին կազմել են ընդհանուրի 7.1%-ը, իսկ նրա բաժինը ՀՆԱ-ում եղել է 3,2%: Այս թվերը խոսում են հանքարդյունաբերության բարձր արդյունավետության մասին, երկրորդ այսպիսի պատկեր կլինի միայն բարձր տեխնոլոգիաների բնագավառում:

<sup>6</sup> Համաշխարհային բանկ, Armenia - Strategic mineral sector sustainability assessment (Washington D.C.: The World Bank Group, 2016), էջ 23:

<sup>7</sup> [www.minenergy.am/page/472](http://www.minenergy.am/page/472)

<sup>8</sup> Աղյուսակները կազմվել են մեր կողմից

## Աղյուսակ 1

### 2010-2017թթ. ընդհանուր արդյունքը և հանքարդյունաբերության ու բացհանքերի շահագործման ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ի կառուցվածքում<sup>9</sup>

Տեսեսական գործունեության տեսակ, մլն ՀՀ դրամ	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.
<b>ՀՆԱ արտադրություն, մլն ՀՀ դրամ</b>	3,460,200	3,777,900	4,266,500	4,555,638	4,828,626	5,043,633	5,067,293	5,568,901
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	588,205	767,880	763,941	839,821	872,631	868,671	830,553	831,881
<i>ՀՆԱ-ի մասնաբաժին</i>	17.0%	20.3%	17.9%	18.4%	18.1%	17.2%	16.4%	14.9%
Շինարարություն	599,495	491,082	497,985	476,564	448,772	474,107	393,176	409,830
<i>ՀՆԱ-ի մասնաբաժին</i>	17.3%	13.0%	11.7%	10.5%	9.3%	9.4%	7.7%	7.4%
Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլետների նորոգում	444,712	476,695	508,630	548,613	570,369	551,485	499,043	601,348
<i>ՀՆԱ-ի մասնաբաժին</i>	12.9%	12.6%	11.9%	12.0%	11.8%	10.9%	9.8%	10.8
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)	389,126	412,324	458,234	506,428	546,335	535,801	508,804	574,238
<i>ՀՆԱ-ի մասնաբաժին</i>	11.2%	10.9%	10.7%	11.1%	11.3%	10.6%	10.0%	10.3%
Մշակող արդյունաբերություն	335,108	399,271	397,549	441,103	466,755	464,326	521,153	569,836
<i>ՀՆԱ-ի մասնաբաժին</i>	9.7%	10.6%	9.3%	9.7%	9.7%	9.2%	10.2%	10.2%
Հանքագործական արդյունաբերություն և բացհանքերի շահագործում	89,251	102,847	114,327	102,687	102,553	107,718	130,836	176,989
<i>ՀՆԱ-ի մասնաբաժին</i>	2.6%	2.7%	2.7%	2.3%	2.1%	2.1%	2.6%	3.2%

## Աղյուսակ 2

### Ընդհանուր զբաղվածություն, զբաղվածությունը արդյունաբերության ու հանքարդյունաբերության և բացհանքերի շահագործման ոլորտում<sup>10</sup>

	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.
Ընդհանուր զբաղվածություն, հազար մարդ	1,185.2	1,175.1	1,172.8	1,163.8	1,133.5	1,072.6	1,006.2	1,011.7
Ընդհանուր զբաղվածությունը արդյունաբերությունում, հազար մարդ	120.6	128.7	138.3	131.9	131.0	120.8	121.4	132.9
Հանքագործական արդյունաբերություն և բացհանքերի շահագործում, հազար մարդ	11.0	10.4	10.0	9.4	7.9	9.3	8.8	9.2
Մետաղական հանքաքարերի արդյունահանում, հազար մարդ	5.8	6.3	6.8	7.0	7.0	8.3	7.6	7.5
Հանքարդյունաբերության և բացհանքերի շահագործման ոլորտի % ընդհանուր արդյունաբերությունում	5.6%	5.7%	5.7%	6.1%	6.0%	7.5%	7.2%	6.9%
Հանքարդյունաբերության և բացհանքերի շահագործման ոլորտի % ընդհանուր զբաղվածության մեջ	0.6%	0.6%	0.7%	0.7%	0.7%	0.8%	0.9%	0.9%
Մետաղական հանքաքարերի արդյունահանման ոլորտի % ընդհանուր զբաղվածության մեջ	0.5%	0.5%	0.6%	0.6%	0.6%	0.8%	0.8%	0.7%

<sup>9</sup> armstat.am (սույն տեղեկատվությունը դուրս է բերվել Վիճակագրական կոմիտեի համապատասխան տարեգրքերից)

<sup>10</sup> armstat.am

### Աղյուսակ 3

## Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից պետաղական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները 2016- 2017թթ.<sup>11</sup>

մլն ՀՀ դրամ

1	2016թ.		2017թ.	
	2	3	4	5
Պետական բյուջեի եկամուտները, մլն ՀՀ դրամ	1,171,107	100%	1,237,781	100%
Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից հաշվարկված հարկային վճարումներ, մլն ՀՀ դրամ	51,100	4.36%	87,048	7.1%
Ռոյալթի	23,571	2.01%	37,575	3.04%
ԱԱՀ	9,030	0.77%	16,995	1.37%
Եկամտային հարկ	11,824	1.01%	14,363	1.16%
Շահութահարկ	4,224	0.36%	11,811	0.95%
Տույժեր	362	0.03%	1,310	0.11%
Տուգանքներ	509	0.04%	1,045	0.08%
Բնապահպանական վճարներ (հարկեր)	71	0.01%	794	0.06%
Հանքարդյունաբերության թույլտվության պետական տուրք	-	0.00%	240	0.02%
Ալցիդային հարկ	117	0.00%	65	0.01%
ԵԱՏՄ երկրներից ներմուծված ապրանքների համար գանձված բնապահպանական վճարներ (հարկեր)՝ ըստ ներկայացված ներմուծման հարկային հայտարարագրերի	3	0.00%	5	0.00%
ԵԱՏՄ անդամ չհամարվող երկրներից ներմուծված ապրանքների համար գանձված բնապահպանական վճարներ (հարկեր)՝ ըստ ներկայացված մաքսային հայտարարագրերի	10	0.00%	15	0.00%
Մաքսատուրք և մաքսավճարներ	1,083	0.09%	2,036	0.16%
Այլ	298	0.03%	794	0.06%

Մետաղական հանածոների արդյունահանումը երկար պատմություն ունի Հայաստանում: Պղնձի արդյունահանումը սկսվել է Լոռու մարզում գտնվող Ալավերդիում 1770-ականներին: 1840-ականներին Կապանում սկսել են արդյունահանել պղինձ, իսկ XX դարի կեսերին սկսել է գործել Քաջարանի ավելի խոշոր պղնձամուլիբդենային հանքը: Ոլորտը բաղկացած է մի քանի փոքր ու միջին հանքերից և ընդամենը մեկ խոշոր ու կայուն աշխատող հանքից՝ ԶՊՄԿ-ի Քաջարանի պղնձամուլիբդենային հանքից, որը տարեկան արտադրում է մոտ 29,4 միլիոն տոննա հանքանյութ, ինչը կազմում է հանքարդյունաբերության ոլորտի ողջ շրջանառության ավելի քան 80 տոկոսը<sup>12</sup>: Պղնձի մեկ այլ հանքավայր, որ կարող է դառնալ նշանակալի արդյունահանող, Թեղուտն է Լոռու մարզում, որը գործարկվել է 2014 թ. վերջին: Շահագործման արդյունավետությունից կախված՝ այստեղ պղնձի արտադրությունը կարող է հավասարվել Քաջարանի արտադրական ծավալի կեսին: Ցավոք, մինչ օրս չպարզաբանված տեխնիկական հանգամանքների պատճառով արդեն մեկ տարի է ինչ հանքը չի շահագործվում:

Մետաղական օգտակար հանածոների թվում առկա են 7 պղնձամուլիբդենային, 4 պղնձի, 24 ոսկու և ոսկի-բազմամետաղային, 2 բազմամետաղային, 1 մոլիբդենային, 1 ալյումինահանքային, 1 մագնեզիումասիլիկատային ապարների և քրոմիտի, 3 երկաթահանքային հանքավայրեր: Պետական հաշվեկշռում գրանցված հանքավայրերի հանքաքարերում, բացի հիմնական մետաղներից,

<sup>11</sup> **Աղբյուրը**՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից

<sup>12</sup> ՀՀ ԱՎԾ, Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում 2017թ.:

բացահայտված է հազվադեպ և ցրված տարրերի առկայություն՝ ռենիում, սելեն, թելուր, կադմիում, ինդիում, հելիում, թալիում, բիսմութ և այլն: Մետաղական հանքաքարի արդյունահանումը կազմում է ընդհանուր հանքագործության արժեքի ավելի քան 90%-ը<sup>13</sup>: Հայաստանը աշխարհում 7-րդ տեղն է զբաղեցնում մոլիբդենի արտադրության և 9-րդ՝ հաշվարկված պահուստների մասով (2014 թվականի տվյալներով):

Երկայուն Հայաստանի լեռնամետալուրգիական համալիրի համար վերջնական արտադրանքը հիմնականում խտանյութերն են (պղնձի, մոլիբդենի, ցինկի, որոշ դեպքերում՝ ոսկու և արծաթի բարձր պարունակությամբ, մոտ հեռանկարում՝ նաև կապարի խտանյութեր), ինչը թույլ չի տալիս ամբողջովին օգտագործել հանքավայրերի տնտեսական ներուժը: Հայաստանում արդյունահանվող մետաղական օգտակար հանածոների վերամշակման արտադրության կազմակերպումը փակ և ավարտուն ցիկլերով՝ հանույթից մինչև պատրաստի արտադրանքի ստեղծում, հնարավորություն կտա ստանալ բարձր արժողությամբ արտադրանք, որն էլ կապահովի ՀՆԱ-ի աճ:

ՀՀ-ում չկան պետական ընդերքօգտագործող ընկերություններ, և արդյունաբերությունն ամբողջովին գտնվում է մասնավոր հատվածի տիրապետության տակ: Ռուսական ծագումով ընկերությունները շահագործում են հանքավայրերի զգալի մասը, այդ թվում՝ Կապանի ոսկու հանքավայրը (Polymetal International PLC), Սոթքի ոսկու և Ագարակի պղնձամոլիբդենային հանքավայրերը (Geopromining) և Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրը (Vallex Group): Կան նաև Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի և այլ երկրների հետ կապված ընկերություններ, սակայն դրանց իրական ծագումը բացահայտելը հիմնականում խնդրահարույց է: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մետաղական հանքավայրերը շահագործող ընկերությունների մեծ մասը գրանցված են օֆշորային տարբեր գոտիներում կամ փոխկապակցված են դրանցում գրանցված ընկերությունների հետ<sup>14</sup>:

### **Խնդիրներ**

Հայաստանը դեռևս չունի հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարություն: 2017թ. օգոստոսի 24-ին ՀՀ կառավարության N°36 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել հանքարդյունաբերության ոլորտի զարգացման հայեցակարգը<sup>15</sup>, որի համաձայն առաջիկայում նախատեսվում է մշակել և ներդնել հանքարդյունաբերության ոլորտի զարգացման քաղաքականություն և ռազմավարություն:

Համաձայն այդ փաստաթղթի հանքարդյունաբերության ոլորտի զարգաց-

<sup>13</sup> Ավագյան Հ.Ս., Լեռնահանքային և մետալուրգիական արդյունաբերությունների զարգացման ուղիներն ու հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում, 2011 թ.:

<sup>14</sup> Իշխանյան Ա. և այլոք, Civil Society, Development and Environmental Activism in Armenia (Yerevan, Armenia: City House Print, 2013), էջ 71-72,

<sup>15</sup> ՀՀ կառավարության 2017թ. օգոստոսի 24-ի «Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» N°36 արձանագրային որոշում:

ման հայեցակարգի նպատակն է նպաստել ոլորտի կայուն զարգացմանը՝ վեր հանելով առկա խնդիրները՝ հիմք հանդիսանալով հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության և ռազմավարության մշակման համար: Հայեցակարգում նախ ներկայացված է հանքարդյունաբերության ներկա իրավիճակը, անդրադարձ է կատարված առկա խնդիրներին, տրվել են այդ խնդիրների լուծման հնարավոր ուղղությունները: Հայեցակարգով ամրագրվել է, որ ներկայացված խնդիրների լուծման և ոլորտի հետագա կայուն զարգացման, ինչպես նաև միջազգային շուկայում Հայաստանը ներկայացնելու համար անհրաժեշտ է մշակել և ներդնել հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականություն և ռազմավարություն՝ ներգրավելով բոլոր շահագրգիռ կողմերին: Ռազմավարական գործողություններն ամրագրելու համար պետք է նախապես իրականացնել որոշ ախտորոշիչ ուսումնասիրություններ և վերանայել արդեն առկա հետազոտությունները<sup>16</sup>:


Հանքարդյունաբերության զարգացումը պայմանավորված է ներքին և արտաքին գործոններով: Ընդ որում՝ արտաքին կախվածությունը էական է, պայմանավորված հումքի համաշխարհային շուկայում մետաղների գներից, որոնք էլ սովորաբար դրսևորում են անկայուն, անկանխատեսելի վարքագիծ (տե՛ս գծապատկերներ 2,3,4):

Հանքարդյունահանումը ցիկլային բիզնես է, որտեղ ապրանքների գները տատանվում են, այսպես կոչված, «գերցիկլային» հաճախականությամբ, ինչը, իր հերթին, կարող է տևել մեկ կամ մի քանի տասնամյակ: Այսպես, 2005 թ. նախորդող տասնամյակը (որին հաջորդել է Չինաստանից եկող պահանջարկի աճը) բնութագրվել է ապրանքների ցածր գներով և երկրաբանահետախուզական աշխատանքների սահմանափակ ծավալներով: Մինչդեռ 2005-2011թթ. հանքարդյունաբերության ոլորտում արձանագրվել է վերելք, որը մեծապես պայմանավորված էր Չինաստանի պահանջարկով: Վերջին մի քանի տարիներին (2011 թ. ի վեր) տեղի է ունեցել ապրանքների գների աճի դանդաղում և նվազում, իսկ ներկայումս ներդրողների հետաքրքրությունը հանքային ոլորտի նկատմամբ համեմատաբար ընկել է: Ներքին գործոններով պայմանավորված հանքարդյունաբերության ազդեցությունը զգալի է տնտեսության, սոցիալական և բնապահպանական ոլորտների վրա:


---

<sup>16</sup> Հայեցակարգ հանքարդյունաբերության ոլորտի զարգացման, ՀՀ կառավարության արձանագրային որոշում, 24 օգոստոսի 2017 թվականի N° 36:





**Գծապատկեր 2.** Պղնձի համաշխարհային գները, ամսական 2009-2019թթ.<sup>17</sup>, տ/հազ.ԱՄՆ դոլար



**Գծապատկեր 3.** Ոսկու համաշխարհային գները, ամսական 2009-2019թթ.<sup>18</sup>, տ/հազ.ԱՄՆ դոլար

<sup>17</sup> Աղբյուր՝ <https://www.indexmundi.com/commodities/?commodity=copper&months=120>

<sup>18</sup> Աղբյուր՝ <https://www.indexmundi.com/commodities/?commodity=gold&months=120>



SOURCE: TRADINGECONOMICS.COM | OTC

**Գծապատկեր 4. Մոլիբդենի համաշխարհային գները, ամսական 2009-2019թթ.<sup>19</sup>, տ/հազ.ԱՄՆ դոլար**

Հանքարդյունաբերության ազդեցությունը երկրի սոցիալական, բնապահպանական և առողջապահական ոլորտների վրա ինչպես դրական է, այնպես էլ բացասական: Դրական ազդեցությունն այն է, որ այն ստեղծում է աշխատատեղեր մարզերում՝ ապահովելով համեմատաբար բարձր եկամուտներ գյուղական համայնքների բնակչության համար: Տեղական բյուջեներ վճարված հարկերի շնորհիվ այն նաև հնարավորություն է տալիս լուծել համայնքների առջև ծառայած խնդիրները: Սակայն դրան զուգահեռ, ոչ պատշաճ գործունեության արդյունքում հանքարդյունաբերությունը ստեղծել և շարունակում է ստեղծել բնապահպանական ու առողջապահական խնդիրներ: Աղյուսակ 4-ում ներկայացված են ազդեցությունների մի քանի օրինակներ: Քաղաքացիական հասարակության կողմից պարբերաբար բարձրաձայնվում են ոլորտի վերաբերյալ խնդիրներ, որոնք պահանջում են լուծումներ:

Նմանատիպ խնդիրների լուծման համար միջազգային ասպարեզում պարբերաբար առաջարկվում են ոլորտի կարգավորման նոր մոտեցումներ, մեխանիզմներ և տեխնոլոգիաներ՝ բնապահպանական ոլորտի օրենսդրությամբ սահմանված պահանջների վերանայում, ընդերքօգտագործման թափոնների կրկնակի վերամշակման հնարավորությունների ստեղծում, օգտակար հանածոների արդյունահանված տարածքների վերականգնման և ընդերքօգտագործման թափոնների կառավարման մեխանիզմների կատարելագործում, որոնք թույլ են տալիս ապահովել հանքարդյունաբերության կայուն զարգացում, այն է

<sup>19</sup> Աղբյուր՝ <https://tradingeconomics.com/commodity/molybden>

նաև տնտեսական, սոցիալական և բնապահպանական կայունություն:

**Աղյուսակ 4**

**Ընդերքօգտագործման դրական և բացասական ազդեցությունների օրինակներ**

<b>ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	<b>ԴՐԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>
Շրջակա միջավայրի տևական դեգրադացիայի վտանգ և ազդեցություն մարդկանց առողջության և կենսամակարդակի վրա	Լրացուցիչ աշխատատեղեր, ներդրումներ տնտեսությունում
Ջրի որակի նվազում (բազմաթիվ հանքերի և արտադրամասերի կողմից ջրառի ազդեցությունը ստորերկրյա և գրունտային ջրերի վրա)	Տեղերում գործարարության զարգացում հանքարդյունաբերող ընկերությունների կողմից կատարվող գնումների արդյունքում
Հողի և ապրուստի ավանդական միջոցների աղբյուրների կորուստ	Ճանապարհների և ենթակառուցվածքների բարելավում
Տնտեսության այլ ոլորտների թուլացում (գյուղատնտեսություն, հանքարդյունաբերություն)	Ներդրումներ կենսաբազմազանության պահպանության և վերականգնման համար
Գնաճ (օրինակ՝ անշարժ գույքի և վարձակալության շուկայում) և անհամարժեք բարձր ազդեցություն հանքարդյունաբերության ոլորտում չաշխատող մարդկանց վրա	Ծառայությունների և ենթակառուցվածքների (օրինակ՝ կրթական հաստատությունների մարզական թիմերի) որակի բարելավում ապահովող բնակչության աճ
Լրացուցիչ բեռ առկա սոցիալական ծառայությունների վրա (օրինակ՝ երեխաների խնամքի, առողջապահության և կրթության)	Մարդկային կապիտալի (ունակությունների, զբաղվածության, ուսումնառության) զարգացում
Ընդերքօգտագործման աշխատանքներից փոշու առաջացում և օդի որակի վատթարացում	
Երթևեկության խցանումներ և ճանապարհների վատթարացում	

Մետաղական օգտակար հանածոների արդյունահանման գործող ծրագրերից ոչ մեկը չի կարելի համարել էկոլոգիապես կայուն: Հիմնական խնդիրները պայմանավորված են հետևյալով.

- ա) Մետաղական օգտակար հանածոներ արդյունահանող փոքր ընկերությունները, որոնք ընդգրկված են խորհրդային շրջանում հայտնաբերված հանքավայրերի վատ կառավարվող արդյունահանման/հետախուզման ծրագրերում, զգալի վնաս են հասցնում շրջակա միջավայրին:
- բ) Հանքերի գործունեության և վերանշակման աշխատանքների հետևանքով առկա է օդի ու ջրի զգալի շարունակական աղտոտվածություն:
- գ) Ընդհանուր առմամբ, չկան համապատասխան ծրագրեր և ֆինանսական միջոցներ, որոնք անհրաժեշտ են հանքերի տեղամասերի, պոչամբարների վերականգնման և մելիորացիայի համար: Բնության և շրջակա միջավայրի պահպանման դրամագլխի միջոցները բավարար չեն նպատակին ծառայելու համար, իսկ նախկինում (նախքան մասնավորեցումը) պետությանը պատկանած հանքերի դեպքում գոյություն չունի պետության և նոր սեփականատիրոջ միջև պարտավորությունների բաշխման ֆորմալ կարգավորում:
- դ) Բարձր սեյսմիկ ռիսկի և հողի անկայունության հետ կապված ընդհանուր ռիսկի պայմաններում չափազանց մեծ է վտանգը, որ պոչամբարները

կարող են փլվել կամ վթարվել պոչամբարների շինարարության ժամանակ ոչ համարժեք մեթոդի կիրառման հետևանքով (հին՝ «վերընթաց բարձրացման» մեթոդով նախագծերի կիրառում):

ե) Ոչ մետաղական և մետաղական օգտակար հանածոների արդյունահանման ոլորտում շահագործված տարածքների վրա սովորաբար վերականգնման կամ հողաբարելավման զգալի աշխատանքներ չեն կատարվում:

Առանձին և ոչ պակաս կարևոր խնդիր են ՀՀ տարբեր վայրերում գտնվող պոչամբարները: Այսօր հանրապետության տարածքում առկա են օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ընթացքում առաջացող թափոնների կուտակման 21 պոչամբարներ, որոնց ծավալներն անցնում են մի քանի մլն. խմ-ից և զբաղեցնում են մոտ 700 հա ընդհանուր մակերես: Ներկայումս պոչամբարներում կուտակված օգտակար հանածոների արդյունահանման և վերամշակման արդյունքում առաջացած արտադրական թափոնները չեն օգտագործվում, չնայած դրանք պարունակում են մեծ քանակությամբ բազմամետաղներ: Կառավարությունը խրախուսում է պոչամբարների վերամշակումը, ընդունվել է հատուկ օրենք, որի համաձայն՝ երեք կոնկրետ պոչամբարների հսկողությունն անցել է պետությանը՝ վերամշակման իրավունքները պայմանագրային հիմունքով այլ անձանց հանձնարարելու նպատակով: Լավագույն դեպքում հնարավոր է վերամշակել որոշ պոչամբարներ և դրանով իսկ լուծել բնապահպանական հարցերն ու ստեղծել տնտեսական հնարավորություններ: Սակայն միջազգային փորձը ցույց է տալիս, որ պղնձի պոչամբարների վերամշակման ծրագրերը չափազանց հազվադեպ են:

Հնարավոր է, որ տնտեսապես նպատակահարմար լինի այդ վայրերից մի քանիսի վերագործարկումը, թեև այլ երկրների փորձը ցույց է տալիս, որ այդ պարտավորությունների մեծ մասը պետք է կատարի կառավարությունը՝ իրականացնելով վերականգնման և մեղմացման միջոցառումներ: Բացի այդ, անհրաժեշտ է կարգավորել հնարավոր բնապահպանական ազդեցությունների համար պատասխանատվության խնդիրները:

### **Եզրակացություն**

Ամփոփելով, մեկ անգամ ևս ընդգծենք, որ հանքարդյունաբերության ոլորտը կարևոր ներդրում ունի Հայաստանի ազգային տնտեսության մեջ, բացի դրանից, այն հանդես է գալիս որպես արտահանման եկամուտների, օտարերկրյա ուղղակի ներդրումների և քաղաքաբնակ կենտրոններից դուրս համեմատաբար բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծման աղբյուր: Փորձը ցույց է տալիս, որ համեմատած այլ ոլորտների հետ՝ հանքարդյունաբերությունն ավելի լավ է ապահովում հարկային եկամուտները: Ոլորտը աչքի է ընկնում նաև ներդրումների ծավալներով, այսօր դրանք կազմում են հարյուր միլիոնավոր դոլարներ: Այսպես, համաձայն ՀՀ ԱՎԾ-ի տվյալների 1988-2017թթ. ժամանակահատվածում օտարերկրյա ներդրումների համախառն հոսքերը հանքարդյունաբերության և հարակից գործունեության բնագավառում կազմել են

2,107 տրլն.դրամ, իսկ ամբողջ իրական հատվածում՝ 8,627 տրլն.դրամ<sup>20</sup>:

Միաժամանակ այս ոլորտում գործունեությունը զուգորդված է ռիսկերով և խոչընդոտներով, շատ հաճախ երկրաբանական հետախուզությունն արդյունավետ չի եղել: Բացառված չեն նաև էկոլոգիական և սոցիալական բնույթի մասշտաբային ռիսկերը՝ պայմանավորված թափոններով, պոչամբարների կառուցումով և բնակչության վերաբնակեցման անհրաժեշտությամբ: Սակայն ռիսկերի առկայությունը չի նշանակում, թե ոլորտում գործունեություն պետք չէ ծավալել: Նշված ռիսկերից շատերը կարելի է մեղմել կամ չեզոքացնել: Դրա համար անհրաժեշտ է համապատասխան ռազմավարություն, օրենսդրություն, նորմատիվ ակտեր և դրանց հետևողական կիրարկում: Անհրաժեշտ է նաև ծրագրել հանքավայրերի ապագան, դրանց փակումից հետո, ընդ որում՝ մինչև շահագործումը սկսելը: Երկրաբանական հետախուզության ռիսկերը կարելի է նվազեցնել օժանդակ գործիքների կիրառման միջոցով: Ռազմավարության կայունությունը և կանխատեսելիությունը ևս ռիսկերի նվազեցման գործոնների թվում է, քանի որ նման պայմաններում շահագրգիռ կողմերը գործում են կանխատեսելի պայմաններում:

Մտահոգության տեղիք են տալիս հանքերի արդյունաբերական շահագործման արդյունքում շրջակա միջավայրին հասցվող վնասները: Նման ռիսկերի նվազեցման գործիքները պետք է ներառեն բնական հանածոների արդյունահանումը սահմանափակող կանոնների խստացումը, արդյունահանող ընկերությունների կողմից բնությանը հասցված վնասի մեղմման և դրանց վերացման ֆինանսական երաշխիքների տրամադրումը, ժամանակակից տեխնոլոգիաների և մոնիտորինգի ու գնահատման համակարգերի կիրառումը: Հաշվի առնելով հանքարդյունաբերության ազդեցությունը տեղական համայնքների վրա, արդյունքի արդարացի բաշխման անհրաժեշտությունը, առաջնային խնդիր է սոցիալական ռիսկերի մեղմումը:

Որպեսզի մեղմվեն թվարկված բոլոր ռիսկերը, լավ օրենքների և նորմատիվ ակտերի առկայությունը հաճախ բավարար չէ: Պետությունը պետք է զարգացնի կարգավորման և տեխնիկական փոխհատուցման իր կարողությունները: Վերջապես, ռիսկերի շուրջ խնդիրներ առաջանալու դեպքում (այդ թվում, թե ով պետք է դրանք կրի), անհրաժեշտ է ունենալ լուծման արդյունավետ մեխանիզմներ և ինստիտուտներ, որոնք հասանելի կլինեն բոլորի համար:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թվականի հունվար-փետրվարին, ՀՀ ԱՎԾ:
2. ՀՀ կառավարության 2017թ. օգոստոսի 24-ի «Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» №36 արձանագրային որոշում:

---

<sup>20</sup> Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թվականի հունվար-փետրվարին, ՀՀ ԱՎԾ:

3. Հայեցակարգ հանքարդյունաբերության ոլորտի զարգացման, ՀՀ կառավարության արձանագրային որոշում, 24 օգոստոսի 2017 թվականի №36
4. ՀՀ կառավարության ծրագիր, <http://www.gov.am/files/docs/3133.pdf>
5. Համաշխարհային բանկ, Armenia - Strategic mineral sector sustainability assessment (Washington D.C.: The World Bank Group, 2016), էջ 23:
6. ՀՀ ԱՎԾ, Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում 2017թ.
7. Ավագյան Հ.Ս., Լեռնահանքային և մետալուրգիական արդյունաբերությունների զարգացման ուղիներն ու հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում, 2011 թ.:
8. Իշխանյան Ա. և այլք, Civil Society, Development and Environmental Activism in Armenia (Yerevan, Armenia: City House Print, 2013), էջ 71-72,
9. <https://www.indexmundi.com/commodities/?commodity=copper&months=120>
10. <https://www.indexmundi.com/commodities/?commodity=gold&months=120>
11. <https://tradingeconomics.com/commodity/molybden>
12. <https://www.rbc.ru/politics/08/10/2018/5bbaffe99a79477a49648931>
13. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510>
14. <https://www.kavkaz-uzel.eu/blogs/83781/posts/33459>, Промышленность Армении
15. [www.minenergy.am/page/472](http://www.minenergy.am/page/472)
16. [armstat.am](http://armstat.am)

## **Արամ Խաչատուրյան** **Վահագն Խաչատուրյան**

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ. ՄՏՈՐՈՒՄՆԵՐ, ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ**

**Ամփոփագիր:** Հայաստանն էլ շատ երկրների պես զարգացման մի փուլում հնարավորություն է ստացել արդյունաբերական եղանակով շահագործելու իր ընդերքը: Տարիների ընթացքում ինչպես աշխարհում, այնպես էլ մեզ մոտ փոխվել է վերաբերմունքը ընդերքի շահագործման նկատմամբ, այժմ ավելի են կարևորվում էկոլոգիական խնդիրները: Արդյոք ՀՀ-ն ի վիճակի է ապահովել հանքարդյունաբերության հետագա զարգացումը՝ բնապահպանական և շրջակա միջավայրի լրացուցիչ խնդիրներ չհարուցելով: Հոդվածում փորձ է արվել տալ այդ հարցի պատասխանը:

**Բանալի բառեր.** ընդերք, շրջակա միջավայր, էկոլոգիա, պոչամբար, կարգավորիչ դեր, ռիսկեր:

**Арам Хачатурян**  
**Ваагн Хачатурян**

## **ГОРНОДОБЫВАЮЩАЯ ПРОМЫШЛЕННОСТЬ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ: МЫСЛИ, УЗЛЫ**

**Резюме:** Армения, как и многие другие страны, имела возможность развивать свои недра в промышленном развитии. За прошедшие годы и мир, и мы изменили отношение к эксплуатации недр, и теперь экологические проблемы приобретают еще большее значение. Сможет ли Армения обеспечить дальнейшее развитие горнодобывающей промышленности без дополнительных проблем для экологии и окружающей среды? В статье предпринята попытка найти ответ на этот вопрос.

**Ключевые слова:** недра, окружающая среда, экология, хвостохранилище, регулирующая роль, риски.

**Aram Khachaturyan**  
**Vahagn Khachaturyan**

## **MINING INDUSTRY IN THE REPUBLIC OF ARMENIA: THOUGHTS, KNOTS**

**Abstract:** Armenia, like many other countries, has had an opportunity to develop its subsurface in industrial development. Over the years, both the world and we have changed attitudes towards the exploitation of the earth's surface, and nowadays, the environmental issues are becoming of more importance. Will Armenia be able to provide further development of the mining industry without addressing and environmental issues? An article has attempted to give the answer to that question.

**Keywords:** *Subsoil, environment, ecology, tailing dump, regulating role, risks*

## Աշոտ Մարկոսյան Էլյանորա Մաթևոսյան

### ՊԵՏՈՒԹՅՈՒՆ - ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾ ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ

Պետության և մասնավոր կազմակերպությունների գործընկերությունը իրականացվում է տարբեր ձևերով՝ յուրաքանչյուր երկրի իշխանության կողմից ընտրված և որևէ փաստաթղթի տեսքով (օրենք, միջոցառումների ծրագիր, այլ) ձևակերպված քաղաքականության շրջանակներում: Պետություն - առևտրային կազմակերպություն գործընկերության հիմնական նպատակն է զգալիորեն ընդլայնել կապիտալների ազատ շարժի տիրույթը (սահմանները) և հնարավոր դարձնել մասնավոր կապիտալի ներթափանցումը այնպիսի ոլորտներ, որտեղ նախկինում անհնար էր դրա գոյությունը:

Պետության<sup>21</sup> և մասնավոր հատվածի տնտեսական համագործակցությունը պետության և մասնավոր գործարարության միջև ինստիտուցիոնալ ու կազմակերպական միավորման ձև է, որի նպատակն է լայնածավալ, ազգային և միջազգային մակարդակով նշանակալի ծրագրերի իրագործումը՝ սկսած արդյունաբերության ռազմավարական ճյուղերից մինչև հանրային ծառայությունների մատուցման բնագավառը: Շատ դեպքերում համագործակցության այս ձևը ժամանակավոր բնույթ է կրում, քանի որ ստեղծվում է կոնկրետ ծրագրի իրականացման համար և դադարում է իր գոյությունը ծրագրի ավարտից հետո:

Պետություն - մասնավոր հատվածի գործընկերության (ՊՄԳ) համակարգը խառը տնտեսության տարրերից մեկն է<sup>22</sup>, որը հանդես է գալիս որոշակի ինստիտուցիոնալ միջավայրի և հարաբերությունների կառուցվածքի տեսքով և ներառում է գործունեության բազմաթիվ տեսակներ: Պետության բազմաթիվ տնտեսական գործառույթներից կարևորագույնը ինստիտուցիոնալ միջավայրի ձևավորումն է, որի բաղկացուցիչ մասերից են նաև գործընկերության ինստիտուտները: Արդի տնտեսավարման մի շարք բարդ ձևեր անհնար են առանց տնտեսության որոշ ճյուղերում և ոլորտներում պետության ուղղակի միջամտության: Գործընկերությունները դառնում են տնտեսության պետական կարգավորման նոր ձև:

Պետության և մասնավոր հատվածի գործընկերության անհրաժեշտությունը գործարար միջավայրի բարելավման, ներդրումային խոշոր ծրագրերի իրականացման համար, ընդգծված է ՀՀ կառավարության 2019-2023թթ. ծրագրում, որտեղ, մասնավորապես, նշվում է՝ «Մեծածավալ ներդրումներ ներգրա-

<sup>21</sup> Արդի քաղաքական և տնտեսական գիտության մեջ «պետություն» հասկացությունն օգտագործվում է բավականին լայն իմաստով և նշանակում է հասարակական ինստիտուտների ամբողջություն, որոնք իրականացնում են իրավական և օրենսդրական իշխանությունները, ինչպես նաև կարևոր նշանակություն ունեն հասարակական գործընթացների և գործառույթների համար:

<sup>22</sup> Մարկոսյան Ա, Պետությունը և շուկան, գիրք առաջին, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2000, էջ 108-126:



վելու տեսանկյունից կարևորվելու է պետություն - մասնավոր գործընկերության շրջանակներում ենթակառուցվածքային ծրագրերում օտարերկրյա ներդրումների ներգրավման հնարավորությունը: Նշվածը մի կողմից՝ կապիտալի շուկայի զարգացման և օտարերկրյա ներդրումներ կլանելու զգալի հնարավորություն է, իսկ մյուս կողմից՝ բարելավված ենթակառուցվածքների շնորհիվ կարող է էապես բարձրացնել այլ ծրագրերում օտարերկրյա ներդրումների ներգրավման արագությունը և նշված ծրագրերի մրցունակությունը: Նշված խնդրի լուծման նպատակով կառավարությունն արագացնելու է պետություն - մասնավոր գործընկերության իրավական կարգավորումների և դրանց կիրառության ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը»<sup>23</sup>:

Պետության և մասնավոր հատվածի գործընկերության վերաբերյալ բազմաթիվ այլ անդրադարձեր են կատարվում ՀՀ կառավարության ծրագրում, մասնավորապես հանրային ծառայությունների ոլորտների (էլեկտրաէներգիայի, ջրամատակարարման և ջրահեռացման) հետագա արդիականացման վերաբերյալ դրույթներում<sup>24</sup>:

Պետություն - մասնավոր հատված գործընկերության ոլորտում կարևորվում են մի շարք տեսական հարցեր: Առաջինը վերաբերում է պետության և սոցիալական խավերի միջև հարաբերություններին: Երկրորդը՝ տնտեսության մեջ պետության դերի, տնտեսական գործընթացներում պետական միջամտության ընդունելի չափերի և դրա սահմանների մասին է: Երրորդ կարևորագույն հարցը ծագում է ապապետականացման գործընթացի շուրջ, որի ժամանակ առաջանում է պետության և մասնավոր հատվածի համագործակցության ձևերի ընտրության հարցը:

Պետություն - մասնավոր հատված գործընկերության ընդունված ձևերն ու հայեցակարգերը տարբերվում են ըստ երկրների և որոշվում են պետության միջամտության բնույթով: Ըստ առաջին հայեցակարգի պետությունն ընտրում է համագործակցության այնպիսի ձևեր, որպեսզի ապահովի իշխող խավի շահերը, երկրորդ հայեցակարգի համաձայն գործընկերությունները թույլ են տալիս ապահովել պետության չեզոքությունը տնտեսական կյանքում և ողջ հասարակության շահերի պահպանությունը<sup>25</sup>:

Վերջին երեք տասնամյակում բազմաթիվ երկրներում անցկացվեցին տնտեսությունների ազատականացման միջոցառումներ, աստիճանաբար փոքրացվեց պետության դերակատարումը նյութական և ոչ նյութական արտադրության ոլորտներում և կապիտալի ձևավորման գործընթացում: Սակայն պետության և մասնավոր հատվածի գործընկերության լայնորեն կիրառվող պրակտիկան

---

<sup>23</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը, ընդունվել է ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ (կետ 5.6. Ներդրումների աճը՝ մրցակցության և կայուն աճի նախապայման, էջ 47), ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈՒ-002-Ն որոշմամբ:

<sup>24</sup> Նույն տեղում, կետ 6.2, Էներգետիկ բնագավառը, կետ 6.4, Զրային տնտեսությունը:

<sup>25</sup> Варнавский В. “Партнерство государства и частного сектора: теория и практика”, “Мировая экономика и международные отношения”, N 7, 2002г., стр. 31.

վկայում է, որ պետությունը, թեև անուղակիորեն, մասնակցում է շահույթի ձևավորման գործընթացում: Ինչ չափով պետությունը կարող է գործընկերությունների միջոցով կառավարել տնտեսությունը, կարող է արդյոք այն չեզոք մնալ մասնավոր տնտեսությունից և պահպանել իր վերահսկողական դերը տնտեսավարման մեխանիզմում:

Ըստ մի շարք հետազոտողների պետությունը որոշակի չեզոք դիրք պետք է ունենա տնտեսության և քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտների նկատմամբ, իսկ պետության չեզոքությունը շուկայական հարաբերությունների համակարգի պահանջն է: Պետությունը դիտարկվում է որպես «վերտնտեսական» ուժ, որի նպատակն է վերացնել կամ հաղթահարել շուկայական և սեփականատիրական հարաբերությունների (գոյություն ունեցող քաղաքացիական և հասարակական-իրավական նորմերի և ինստիտուտների սահմաններում) միջև գոյություն ունեցող հակասությունները: Պետության և մասնավոր հատվածի համագործակցության ուժեղացումը կապված է պետության այս գործառույթների իրականացման հետ:

Մեկ այլ տեսակետի համաձայն նման գործընկերությունները պետությանը թույլ են տալիս ներգրավել կապիտալի կուտակման գործընթացում և միջամտել շուկայական հարաբերություններին, ինչը բերում է գործարարությունից պետության կախվածությանը:

Պետության չեզոքության հարցը ուղակիորեն կապված է տնտեսական կյանքին պետության միջամտության հիմնախնդրի հետ: Հետազոտողներից շատերը նշում են մի շարք իրարամերժ գործոններ, որոնք տարբերակում են պետության և տնտեսավարող սուբյեկտների գործառույթները: Պետության միջամտության սահմանները դիտարկելիս մի շարք գիտնականներ նշում են, որ այն չպետք է տարածվի գնագոյացման ոլորտում:

Սակայն, ընդհանուր առմամբ, տնտեսական կյանքին պետության միջամտության սահմանները, հասարակության առջև նրա պատասխանատվության աստիճանը, պետության ընդունելի (լավագույն) չեզոքությունը, մասնավորապես գործընկերությունների ստեղծման, կարգավորման և վերահսկողության ոլորտում, մնում է արդիական և չլուծված հիմնախնդիրներից մեկը: Երկրների մեծ մասին բնորոշ ընդհանուր միտումների հետ մեկտեղ առանձին երկրներում պետության միջամտության առանձնահատկությունները որոշելիս պետք է նկատի ունենալ սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակը, ազգային ավանդույթներն ու մտածողությունը (մենթալիտետը):

Գործընկերությունների ստեղծման և զարգացման արդյունավետությունը պայմանավորված է ինստիտուցիոնալ միջավայրի առկայությամբ, որն անհրաժեշտ է վերափոխումների իրականացման համար<sup>1</sup>: Ընդ որում, խոսքը ոչ միայն կառավարության քաղաքական կամքի, այլ նաև հասարակության այլ շերտերում «քաղաքական ապահովվածության» առկայության մասին է, որը

---

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, Հ.Սարգսյան, Ա.Մարկոսյան, Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները, Եր., «Հանգակ» հրատ., 2014, 552 էջ:

թույլ կտա ապահովել հասարակության հանդուրժողականությունը սոցիալական-արտադրական ենթակառուցվածքների մասնավորեցման հարցում: Ապապետականացման ծրագրերի հաջող իրականացման պարտադիր պայմաններից է գործընկերությունների մասին լիարժեք և հասկանալի օրենսդրության մշակումը, դրանց գործունեության թափանցիկության ապահովումը, հստակ կանոնակարգերի մշակումը, պետական քաղաքականության հոչակված սկզբունքների պահպանումը, ընդհանուր քաղաքական կայունությունը:

Այն երկրներում, որտեղ շուկայական տնտեսության և քաղաքացիական հասարակության ինստիտուտները բավականաչափ մշակված չեն, կարևոր դեր են խաղում արտաքին գործոնները: Զարգացած երկրների հաջողությունների հոգեբանական ճնշումը որոշ դեպքերում հանգեցնում է դրանց կուրորեն պատճենահանմանը: Նման տնտեսական քաղաքականությունը, որը հաշվի չի առնում ազգային գործոնները, կարող է ճիշտ հակառակ արդյունք ունենալ:

Պետություն - մասնավոր հատված գործընկերության ներկայումս կիրառվող ձևերը կապված են ազգային տնտեսությունների վերափոխման գործընթացների հետ և իրենց էությանբ անուղղակի մասնավորեցման ձևեր են: Ավելի ստույգ, գործընկերությունները տնտեսավարման կիսամասնավորեցման ձևերն են: Ճիշտ է, որոշ դեպքերում գործընկերությունների ստեղծումը ուղղակի անվանում են մասնավորեցում: Օրինակ, «Պետության և մասնավոր հատվածի գործընկերությունը. հասարակական բարեկեցության ֆինանսավորում» ամերիկյան աշխատության մեջ նշվում է, որ ենթակառուցվածքների ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրներից մեկը կարող է դառնալ մասնավորեցումը: Ըստ նշված հասկացության մասնավորեցումը՝ տարբեր համաձայնագրերի կնքում է, համաձայն որոնց զգալիորեն մեծանում է մասնավոր ընկերությունների մասնակցությունը պետական ձեռնարկությունների ֆինանսավորման, նախագծման, կառուցման, տիրապետման և օգտագործման գործում<sup>1</sup>:

Պետություն - մասնավոր հատված գործընկերության անհրաժեշտությունը բխում է զարգացման ազատական հայեցակարգի երկու հիմնարար դրույթներից՝ մասնավոր սեփականության ինստիտուտների ձևավորման և տնտեսական աճի արագացման համապատասխանեցումից, ինչպես նաև մասնավոր սեփականության վրա հիմնված տնտեսության արդյունավետությունից՝ այն տնտեսությունների համեմատ, որոնք հիմնված են պետական սեփականության և պետության ուղղակի կարգավորման վրա:

Պետությունը հրաժարվում է տնտեսավարման ոչ արդյունավետ ձևերից տրամադրելով իր սեփականության կառավարման գործառույթները մասնավոր հատվածին, որն, օգտվելով պետական երաշխիքներից, արտադրության մեջ ներդնում է փորձառություն, գիտելիքներ, նուր-հաու, ներդրումներ է իրականացնում, ձեռնարկատիրական գործունեության ռիսկերը հասցնում է նվազագույնի: Հասարակության համար տնտեսական արդյունքը կայանում է նրանում, որ այն նվազագույն ծախսերով ստանում է ավելի որակյալ արտադրանք և

<sup>1</sup> Public/Private Partnerships: Financing a Common Wealth, Fd. Weiss B., Washington, 1985, p. 67.

ծառայություններ:

Ընդհանուր առմամբ կիրառվում են պետություն – մասնավոր հատված գործընկերության հետևյալ ձևերը՝ (1) պետական կարիքների համար արտադրանքի մատակարարում, աշխատանքների կատարման և հանրային ծառայությունների մատուցման քաղաքացիական պայմանագրեր, (2) տեխնիկական օգնության պայմանագրեր, (3) ենթապայմանագրեր, (4) կառավարման պայմանագրեր, (5) լիզինգ, (6) «շինարարություն-կառավարում-փոխանցում» ձևի կոնցեսիաներ և գործընկերություններ, (7) «շինարարություն-կառավարում-տիրապետում» ձևի գործընկերություններ, (8) համատեղ ձեռնարկություններ, որոնք ստեղծվում են պետության և մասնավոր կապիտալի մասնաբաժիններով: Նշված առաջին հինգ ձևերը պայմանագրային հարաբերություններով կարգավորվող գործարքներ են, իսկ 6-րդ և 7-րդը՝ կոնցեսիոն: Համատեղ ձեռնարկությունները կարող են ստեղծվել բազմաթիվ ճանապարհներով՝ կախված պետության մասնակցության չափից, ընկերությունների կազմակերպարավական ձևից և մի շարք այլ գործոններից:

Ի տարբերություն, այսպես կոչված, «լրիվ» մասնավորեցման գործընկերության, նշված ձևերը չեն նախատեսում պետական սեփականության իրավունքի փոխանցում մասնավոր կապիտալին: Եվրամիության, ԱՄՆ-ի, Ճապոնիայի, Ավստրալիայի և մի շարք այլ երկրների օրենսդրության համապատասխան մասնավոր հատվածը իրացնում է միայն պետության կողմից պատվիրակված օգտագործման և տիրապետման իրավունքները և միայն որոշ պայմանների առկայության դեպքում՝ նաև սեփականության տնօրինման լիազորությունները: Աշխարհի մասշտաբով մասնավորեցման և կիսամասնավորեցման գործարքները բաշխվում են մոտավորապես հավասարաչափ, սակայն ակտիվների արժեքի տեսանկյունից մասնավորեցման այլընտրանքային ձևերը գերակայում են, հաշվի առնելով, որ դրանք իրականացվում են հիմնականում ենթակառուցվածքների և սոցիալական ոլորտներում:

Պետություն - մասնավոր հատված գործընկերության առավել առաջադիմական ձև են կոնցեսիաները: Ի տարբերություն պայմանագրային հարաբերությունների դրանք երկարատև բնույթ են կրում, ինչը թույլ է տալիս երկու կողմերին էլ իրականացնել գործունեության ռազմավարական պլանավորում: Կոնցեսիաների դեպքում մասնավոր հատվածն ունի վարչատնտեսական և կառավարչական որոշումների ընդունման լիարժեք ազատություն: Այնուամենայնիվ, կոնցեսիոն պայմանագրի շրջանակներում պետությունը կոնցեսիա վերցնողի նկատմամբ ունի բավականաչափ լծակներ՝ կոնցեսիայի պայմանների և օրենսդրության խախտման դեպքում պատժամիջոցների կիրառման, ինչպես նաև հանրության շահերի պաշտպանության համար:

Ժամանակի ընթացքում այն երկրներում, որտեղ ձևավորվեցին շուկայական տնտեսության իրավական նորմերը և գույքային իրավունքների պահպանության նորմերը (ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա, Եվրամիության երկրներ և այլն) լայն կիրառում ստացավ հանրային-իրավական օրենսդրությունը: Դրա գործունեությունը տարածվում էր պետական սեփականության օբյեկտների,

բնական ռեսուրսների, հանրային ծառայությունների, ինչպես նաև առանձին գործունեության ձևերի նկատմամբ պետական մենաշնորհների վրա: Նշված չորս բաղադրիչները զարգացած երկրների օրենսդրության համապատասխան կազմում են, այսպես կոչված, հանրային-իրավական սեփականությունը: Այն պատկանում է հանրությանը ընդհանրապես և ոչ ոքի՝ մասնավորապես:

Նշված երկրներում պետության և մասնավոր հատվածի գործընկերության մասին համաձայնագրերը կնքվում են հանրային-իրավական սեփականության օբյեկտների նկատմամբ: Նման պայմանագրերին բնորոշ են միաժամանակ և հանրային-իրավական ակտի և քաղաքացիաիրավական պայմանագրի դրույթները: Պետությունը հանդես է գալիս երկակի դերում՝ որպես հասարակության և իշխանության ներկայացուցիչ, որը ժամանակավորապես զիջում է կոնցեսիոներին իր բացառիկ իրավունքները և իրականացնում է նրա գործունեության վերահսկողությունը, ինչպես նաև հանդիսանում է քաղաքացիական իրավունքի սուբյեկտ:

Պետություն - մասնավոր հատված գործընկերության ուղղությամբ ինստիտուցիոնալ վերափոխումները առավել խորությամբ տեղի ունեցան Մեծ Բրիտանիայում, երբ 1992 թվականին Ջ.Մեյջորի կառավարությունը հայտարարեց պետական սեփականության կառավարման նոր հայեցակարգի՝ «մասնավոր ֆինանսավորման նախաձեռնության» մասին: Հայեցակարգի էությունն է՝ գործընկերության մասին համաձայնագրերի շրջանակներում մասնավոր հատվածին փոխանցել պետական արտադրական օբյեկտների և սոցիալական ենթակառուցվածքների շինարարության, ֆինանսավորման (այդ թվում՝ շահագործման, վերակառուցման, կառավարման և այլն) գործառույթները: 1992-2001 թվականների ընթացքում Մեծ Բրիտանիայի կառավարությունն իրականացրեց ավելի քան 400 նախագծեր, որոնց ընդհանուր գումարը կազմում է 19 մլրդ ֆունտ ստերլինգ<sup>1</sup>: Այդ ընթացքում գործընկերության մասին համաձայնագրեր ստորագրվեցին տնտեսության մի շարք ոլորտներում, ներառյալ հանրային տրանսպորտը և տրանսպորտային ենթակառուցվածքները, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը, շրջակա միջավայրի պահպանությունը, քաղաքաշինությունը և այլն: Ի լրումն ավանդական ոլորտների բրիտանական իշխանությունները մասնավոր հատվածի հետ պայմանագրեր կնքեցին նաև սոցիալական ենթակառուցվածքների ոլորտում ծառայություններ մատուցելու համար՝ առողջապահության, կրթության և աշխատուժի որակավորման բարձրացման, սոցիալապես խոցելի խավերին աջակցության, հասարակության սոցիալապես չափազանց բևեռացման հաղթահարման գործում: Գործընկերային հարաբերությունների տիրույթում ընդգրկվեցին այնպիսի օբյեկտներ, ինչպիսիք են՝ բանտերը, զորամասերը և ռազմաուսումնական հաստատությունները: Այստեղ ի հայտ եկավ տնտեսական իշխանության ապակենտրոնացումը՝ տեղական իշխանության մարմիններին լրացուցիչ լիազորությունների տրամադրումը և պետության սոցիալական, իրավապահական և ռազմական որոշ գործառույթների

<sup>1</sup> Finance & Development, 2001, Volume 38, N 3.

մասնակի ապապետականացումը: Օրինակ, կրթության և առողջապահության ոլորտում կնքված երկարատև պայմանագրերին համապատասխան Մեծ Բրիտանիայի տեղական իշխանությունները մասնավոր ընկերություններին են վճարում բնակչությանը մատուցված ծառայությունների արժեքը՝ մաս-մաս պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում (որպես կանոն 30 տարվա ընթացքում): Բացի այդ, վճարումները կատարվում են յուրաքանչյուր տարի միայն այն դեպքում, եթե ծառայությունները մատուցվել են երկրում ընդունված ստանդարտներին համապատասխան: Ընդ որում, պետությունը պատասխանատվություն է կրում բնակչությանը մատուցված հիմնական ծառայությունների համար:

Պետական սեփականության կառավարման գործընկերային ձևերի լայնորեն ներդրումը Մեծ Բրիտանիայում հանգեցրեց պետական ապարատի և գործարարության ոլորտներում զգալի ինստիտուցիոնալ փոփոխությունների: Ի հայտ եկած տնտեսության նոր ճյուղը, որը կրում է «պետական քաղաքացիական պայմանագրեր և կոնցեսիաներ» պայմանական անվանումը պետական ծառայողներին ստիպում է դառնալ գործարարներ, մշակել և իրենց ենթակայության տակ գտնվող հաստատություններում ներդնել վարքագծի նոր կանոններ, որոնք համապատասխանում են շուկայական մեխանիզմներին: Հատկանշական է, որ «Մասնավոր ֆինանսավորման նախաձեռնություն» ծրագրի կիրարկումից անմիջապես հետո ստեղծվեց պետական ծառայողներից և Սիթիի ներկայացուցիչներից կազմված բարձր որակավորում ունեցող անձնակազմ, որը կոչված էր համակողմանի օգնություն տրամադրել նախարարություններին և դեպարտամենտներին իրենց ոլորտներում առևտրայնացման տարրեր ներդնելու հարցում: Գործընկերությունների գործունեության տարբեր խնդիրների լուծման համար կառավարությունը և նախարարությունները ստեղծեցին խորհրդատվական և այլ ընկերություններ, ինչպես նաև վերահսկողություն իրականացնող կազմակերպություններ: Երկրում զգալիորեն բարձրացավ որակավորված ֆինանսիստների, կառավարիչների, տնտեսագետների, իրավաբանների և հաշվապահների պահանջարկը: Ստեղծվեցին բազմաթիվ մրցակից կառավարիչ ընկերություններ, որոնք աշխատում էին սոցիալական և արտադրական ենթակառուցվածքների ոլորտում: Ընդհանուր առմամբ, Մեծ Բրիտանիայում պետական սեփականության կառավարման քաղաքականությունը ձևակերպվում է հետևյալ կերպ՝ մասնավորեցման փոխարեն լիարժեք համագործակցություն:

ՏՀԶԿ-ի գնահատմամբ պետության և մասնավոր հատվածի գործընկերության ձևերի կիրառումը Մեծ Բրիտանիային թույլ է տալիս տնտեսել պետական ծախսերի 15-20 տոկոսը<sup>2</sup>:

ՏՀԶԿ-ի մյուս երկրներում նույնպես նկատվում են նմանատիպ միտումներ, որոնք առանձին ուղղություններով ընթանում են տարբեր արագությամբ և հաշվի են առնում ազգային առանձնահատկությունները: 1980-1990 թվականներ-

<sup>2</sup> Issues and Development in Public Management: Surveys 1996-1997, OECD, Paris, 1998, 97 pages.

րին Ֆրանսիայում իրականացված իշխանության ապակենտրոնացումը արտաքին էֆեկտների տեսանկյունից ավելի քիչ արմատական փոփոխություններ բերեց, սակայն հանգեցրեց ավելի խորքային ինստիտուցիոնալ փոփոխությունների, քանի որ այն ընդգրկում էր հիմնական օրենսդրական ակտերը, որոնք տարանջատում էին պետական իշխանության մարմինների լիազորությունները: Նման պետական քաղաքականության իրականացման համար ընդունվեցին դեպարտամենտների, տարածաշրջանների և պետության իրավասությունների տարանջատման մասին օրենքներ, ինչպես նաև ֆինանսավորման աղբյուրների տարանջատման մասին օրենքը: Սա թույլ տվեց ընդլայնել տեղական մարմինների լիազորությունները և ապահովեց դրանց ինքնուրույնությունը:

Ինստիտուցիոնալ փոփոխությունների շրջանակներում և ազատական հայեցակարգերի ազդեցության ներքո Ֆրանսիայում վերանայվեցին պետության դերն ու գործառույթները ենթակառուցվածքների կարգավորման ոլորտում: Եվրամիության որոշումներին համապատասխան Ֆրանսիայում թույլատրվում է մրցակցություն հանրային ծառայությունների մի շարք հատվածներում, մասնավորապես էներգետիկայի ոլորտում (գազ և էլեկտրաէներգիա) և հեռահաղորդակցության ոլորտում (հեռուստահաղորդակցություն և փոստ): Այսպիսով վերջ դրվեց «Էլեկտրիսիտե դե Ֆրանս» և «Ֆրանս Տելեկոմ» մենաշնորհներին: Ֆրանսիան հրաժարվեց ենթակառուցվածքների ոլորտում ուղղակի մասնավորեցման ճանապարհից, նախապատվությունը տալով այլընտրանքային ձևերին՝ մասնավոր կառավարիչների հետ պայմանագրերին և կոնցեսիաներին:

Նախկին խորհրդային տարածաշրջանում նույնպես աշխատանքներ տարվեցին գործընկերությունների սեփական տարբերակների մշակման ուղղությամբ: Սակայն այդ աշխատանքներն իրականացվում են գրոյական հիմքի վրա (նկատի ունենք այն հանգամանքը, որ տվյալ երկրներում պատմականորեն ձևավորված ավանդույթներ կամ ընդհանրապես չեն եղել, կամ չեն պահպանվել): Այս երկրներում գործընկերային գործունեության հիմք են ծառայում, որպես կանոն, կոնցեսիաների մասին օրենքները: 1990-ական թվականներին նման օրենքներ են ընդունվել շատ երկրներում. 1991թ.-ին՝ Չերնոգորիայում, 1992թ.-ին՝ Խորվաթիայում և Ղրղըզստանում, 1995թ.-ին՝ Մոլդովայում, 1997թ.-ին՝ Բուլղարիայում և Սերբիայում, 1999թ.-ին՝ Ուկրաինայում, 2002թ.-ին՝ Հայաստանի Հանրապետությունում<sup>3</sup>:

Ըստ էության, ազատական (լիբերալ) բոլոր տնտեսագետները ընդունում են պետության սահմանափակ մասնակցությունը տնտեսության կառավարման գործում, որն էլ պետք է սահմանափակվի միայն երկրի քաղաքացիների ֆիզիկական գոյության և սեփականության իրավունքի պահպանմամբ<sup>4</sup>:

<sup>3</sup> Տե՛ս 2002թ.-ի նոյեմբերի 5-ին ՀՀ Ազգային ժողովի ընդունած «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքը:

<sup>4</sup> Տե՛ս, օրինակ, Ռոտբարդ Մ., *Власть и рынок: Государство и экономика / Мюррей Ротбард; Пер. с англ. Б. С. Пинскера под ред. Гр. Сапова.- Челябинск, Изд.-во «Социум», 2002г., с. 4-6, 22-26, Гумбольдт, Вильгельм фон. О пределах государственной деятельности. М.: Социум, 2012, с.*

Հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր փուլերում և ժամանակահատվածներում պետության և ձեռնարկատիրության համագործակցությունը հետապնդել է տարբեր նպատակներ, հետևաբար՝ տարբեր երկրներում կիրառվել են այդ համագործակցության տարբեր մոտեցումներ: Սակայն դրանք նույնպես ունեն որոշակի ընդհանրություններ: Այսպես, տնտեսագետներ Ա.Չերնիկովը, Դ.Ռոզենկովը<sup>5</sup> առանձնացնում են պետության և ձեռնարկատիրության համագործակցության 4 մոդելներ<sup>6</sup>.

- «Ճնշման և հարկադրանքի» մոդել, որն իր մեջ ներառում է վարչարարական հարկադրանքի լծակները,
- «պատրոնաժի» մոդել, որն իր մեջ ներառում է մասնավոր հատվածի ծախսերի փոխհատուցում՝ ի նպաստում սոցիալական ծրագրերի իրականացման,
- «չմիջամտության» մոդել, երբ իշխանությունները բացարձակապես չեն միջամտում սոցիալական քաղաքականությանը,
- «համագործակցության» մոդել, որը կառուցված է երկու կողմերի (պետական և մասնավոր հատվածների) փոխշահավետ համագործակցության և շահերի փոխզիջման վրա<sup>7</sup>:

Տնտեսագիտական գրականությունում գոյություն ունի պետության և ձեռնարկատիրության համագոյակցության «սոցիալական» մոդելը<sup>8</sup>, որն իր մեջ ընդգրկում է երեք կողմերի՝ ձեռնարկատիրության, պետության և հասարակության շահերի իրականացումը՝ նպատակ հետապնդելով կայուն տնտեսական աճի ապահովումը և բնակչության կյանքի որակի բարելավումը<sup>9</sup>:

Պետություն - մասնավոր հատված գործընկերության արդյունավետությունը զգալի չափով պայմանավորված է համատեղ ձեռնարկատիրական ծրագրերի նախաձեռնությամբ և դրանց իրագործմամբ: Այսինքն, ձեռնարկատիրության կողմից նպատակային ծրագրերի իրականացման արդյունքում լուծվում են շահույթի ստացման և սոցիալական խնդիրները: Օրինակ՝ Մ. Կուրբատովի և Գ.Լևինի կարծիքով պետության և ձեռնարկատերերի փոխհարաբերությունները բնութագրվում են «սպիտակ», «սև» և «մոխրագույն» համատեղ գործունե-

---

104-134, Մարկոսյան Ա.Խ., Պետությունը և շուկան, գիրք առաջին, Եր., «Տիգրան Մեծ», 2000, էջ 44-50, Մարկոսյան Ա., Մաթևոսյան Է., Պետությունը և ձեռնարկատիրությունը, Եր., «Զանգակ - 97», 2005, էջ 61-66:

<sup>5</sup> Батаева Б.С. Корпоративная социальная ответственность и устойчивое развитие России: монография, М.: ФГБОУ ВПО «Финансовый университет при Правительстве Российской Федерации», 2010, с. 17-21.

<sup>6</sup> Батаева Б.С. Политика российских компаний в отношении местных сообществ в решении социальных проблем регионов, Экономика и управление, 2010, №9, с. 26-31.

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> Айрапетян Л.Н. Государственно-частное партнерство в рамках разработки и реализации целевых программ, Сборник научных статей Современные корпоративные стратегии и технологии в России, 2014, вып. 9, часть 2, с. 6-14.

<sup>9</sup> Айрапетян Л.Н. Проблемы разработки и реализации целевых программ и способы их решения, Вестник университета (Государственный университет управления), 2014, №8, с. 99-104.



ության շրջանակներում<sup>1</sup>: Այսպես, համատեղ գործունեության «սպիտակ» շրջանակը ենթադրում է պետության և ձեռնարկատիրության օրինական հարաբերություններ, ինչպիսիք են հարկային հարաբերությունների կարգավորումը:

Պետության և ձեռնարկատիրության համատեղ գործունեության «սև» շրջանակը ենթադրում է ոչ օրինական հարաբերություններ, ինչպիսիք են՝ տարբեր ոլորտներում կոռուպցիոն ռիսկերի առաջացումը, ստվերային տնտեսության տարածումը, քաղաքական ներդրումների գերակայությունը ձեռնարկատիրական ներդրումների նկատմամբ, կեղծ ապրանքաշրջանառությունը և առանց փաստաթղթի հաշվապահական հաշվառման վարումը, եկամուտների թերհայտարարագրումը և հարկերից խուսափելու զանգվածային վարքագիծը և այլն:

«Մոխրագույն» փոխհարաբերությունների դեպքում ձևավորվում են ոչ օրինական հարաբերություններ իշխանության և ձեռնարկատիրության միջև, մենաշնորհների առաջացման, կոռուպցիայի ավելացման արդյունքում<sup>2</sup>:

Հետևաբար՝ կարելի է եզրակացնել, որ պետության և ձեռնարկատիրության «մոխրագույն» և «սև» փոխհարաբերությունների արդյունքում զարգանում է կոռուպցիան և լոբբիզմը<sup>3</sup>:

Մասնավոր հատվածի մասնակցությամբ իրականացվող ներդրումները, հատկապես, ենթակառուցվածքների ծրագրերում կարևոր նշանակություն են ունեցել և այժմ էլ ունեն բյուջետային (ֆինանսական) խոչընդոտների (սահմանափակումների) հաղթահարման, ենթակառուցվածքների ծառայությունների և դրանց որակի բարելավման, ինչպես նաև սոցիալապես թույլ պաշտպանված մարդկանց հատկացվող ապրանքների թողարկման և ծառայությունների մատուցման ընդլայնման գործում: Չարգացող երկրները եղել են և այժմ էլ շարունակում են մնալ այդ հարաբերությունների «առաջնագծում», առաջ բերելով ավելի արդյունավետ մոտեցումներ ենթակառուցվածքների ծառայությունների բազմատեսականացման և ավելի մեծ ավելացված արժեք ունեցող տնտեսական գործունեության տեսակներով զբաղվելու համար, որոնք ձևավորվում են մրցակցության և սպառողների պահանջմունքների հիման վրա: Օրինակ, 1990-2006թթ.-ի ընթացքում ավելի քան 3800 ծրագրեր են իրականացվել 139-ից ավել զարգացող երկրներում՝ ներկայացնելով մասնավոր հատվածի մասնակցությունն առնվազն մեկ ենթակառուցվածքի հատվածում<sup>4</sup>:

Աշխարհի բոլոր երկրներում ընդունված է, որ պետություն – մասնավոր գործընկերությունը (ՊՄԳ) ենթակառուցվածքների և դրանց հետ կապված

<sup>1</sup> Ткачева Л.А. Исследование форм и механизмов взаимодействия региональной власти и бизнес-структур, Бизнес в законе, 2011, №6, с. 80-283.

<sup>2</sup> Васецкий А.А. Лоббизм в политическом процессе современной России, Управленческое консультирование, 2008, №1, с. 79-97.

<sup>3</sup> Воробьев О. Минфин определился с налоговыми льготами для Дальнего Востока [Էլեկտրոնային լեռնաբեր]. Известия, <http://izvestia.ru/news/541368> (օգտագործման ամսաթիվը: 17.07.2016).

<sup>4</sup> World Development Indicators, 2008, WB, p. 271.

հանրային ծառայությունների մատուցման՝ ֆիսկալ տեսանկյունից առավել պատասխանատու և գերադասելի զարգացմանը հասնելու միջոց է: Սակայն դա ինքնըստինքյան ստացվող արդյունք չէ, այլ կախված է տարբեր գործոններից, որոնք պայմանավորում են այդպիսի գործընկերության ինստիտուցիոնալ մոդելի հաջող սահմանումը՝ ներառյալ պայմանագրային համաձայնությունների նախագծումն ու ընթացակարգերի որակը: ՊՄԳ-ների առաջնային նպատակները հետևյալներն են.

- ենթակառուցվածքների կենսապարբերաշրջանի անհրաժեշտ ծախսերի կրճատումը և դրանց շինարարության, շահագործման և պահպանման որակի բարելավումը,
- ակտիվի շահագործման ժամկետի ընթացքում դրա պատշաճ և ժամանակին պահպանման ապահովումը,
- հանրային ծառայությունների և ենթակառուցվածքների հասանելիության, բնակչության համար մատչելիության բարձրացումը,
- հանրային ծառայությունների և ենթակառուցվածքների որակի բարելավումը,
- մասնավոր հատվածի փորձից, առաջնային տեխնոլոգիաներից, արդյունավետությունից և նորարարության հետ կապված կարողություններից բխող օգուտների ստացումը:

ՊՄԳ ձևաչափը առանձին երկրներում հետապնդում է նաև այլ՝ օժանդակ նպատակներ, որոնք տարբերվում են ըստ երկրների: Հայաստանի Հանրապետության համար այդպիսի օժանդակ նպատակներից կարող ենք նշել՝

- ենթակառուցվածքների և հանրային ծառայությունների հետ կապված պետական և համայնքային մարմինների, կազմակերպությունների, հիմնարկների կողմից կատարվող ծախսերի մասով առավել թափանցիկության և բյուջետային որոշակիության ապահովումը,
- հանրային ծառայությունների ոլորտում հաճախորդակենտրոն մշակույթի ստեղծումը,
- նորարարությունների խրախուսումը,
- հանրային ենթակառուցվածքների ձեռքբերման գործընթացում թափանցիկության և հանրության առջև հաշվետվողականության բարձրացումը և այլն:

Ցանկացած դեպքում, պետություն – մասնավոր հատված գործընկերությունը առարկայական և ընկալելի է դառնում, երբ այն ձևակերպված է իրավաբանորեն: Այսպես, պետություն – մասնավոր գործընկերություն ասելով հասկանում ենք՝ որոշակի ժամկետով իրավաբանորեն ձևակերպված և ռեսուրսների միավորման ու ռիսկերի բաշխման վրա հիմնված համագործակցություն, որի մի կողմը հանրային (պետական) գործընկերն է, իսկ մյուս կողմը՝ մասնավոր կազմակերպություն(ներ)ը:

«-ում պետություն-մասնավոր գործընկերության նպատակներն են՝

- տնտեսության մեջ մասնավոր ներդրումների ներգավումը,
- այն ապրանքների, աշխատանքների և ծառայությունների մատչելիության և որակի ապահովումը, որոնց մատուցման պարտականությունը գտնվում է պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթնե-

րի տիրույթում:

Եվ եթե փորձենք բացահայտել վերը նշված նպատակների էությունը, ապա ակնհայտ կդառնա, որ պետություն - մասնավոր հատված գործընկերության գործիքակազմը տարածվում է ոչ միայն ենթակառուցվածքային խոշոր ծրագրերի վրա (ինչպես հաճախակի մեկնաբանվում է այդ հասկացությունը), այլ կիրառելի է տնտեսության բոլոր ոլորտներում:

ՀՀ կառավարությունը պետք է աջակցի պետություն - մասնավոր հատված համագործակցության ծրագրերին և հասկանա (առնվազն՝ իր տեսադաշտում պահի) մասնավոր հատվածի հիմնական մտահոգությունները՝ հարգելով վերջինիս սեփականության, պայմանագրային իրավունքների իրացման, ինչպես նաև առևտրային (գործարար) բնույթի ակնկալիքները:

Այս իմաստով, ՀՀ կառավարությունն էլ պետք է մտադրված լինի Հայաստանի իրավական և ինստիտուցիոնալ լայն շրջանակին համապատասխանող և Հայաստանի կարիքներին ու երկրում գոյություն ունեցող խոչընդոտներին (սահմանափակումներին) հարմարեցված պետություն - մասնավոր գործընկերության միջազգային լավագույն փորձի ներդրմանը: Դրա վառ ապացույցն այն է, որ ՀՀ կառավարությունը ընդունեց պետության և մասնավոր հատվածի գործընկերության քաղաքականության վերաբերյալ հայեցակարգը<sup>1</sup> հանձնարարականներ բաշխելով գործողությունների ամբողջ տիրույթի համար օրենսդրական դաշտի մշակման (ներառյալ՝ օրենքի նախագծի ներկայացման), ինստիտուտների հզորացման, ծրագրերի կատարման հաշվետվողականության ներդրման, ինչպես նաև իրականացված ծրագրերի արդյունավետության գնահատման պրակտիկան ներդնելու (կամ գոյություն ունեցողները ուժեղացնելու, հստակեցնելու) վերաբերյալ:

Հայաստանում ընդունված՝ պետության և մասնավոր հատվածի համագործակցության քաղաքականության նպատակներն են՝

- պետություն-մասնավոր գործընկերության նպաստավոր ռեժիմի ստեղծման, խթանման և պահպանման նպատակով անհրաժեշտ օրենսդրական և ինստիտուցիոնալ հիմքերի և փոփոխությունների համար բարձր մակարդակի քաղաքականության շրջանակի սահմանումը: Սա իրենից ներկայացնում է ինստիտուցիոնալ և իրավական բաղադրիչը, որը ենթադրում է ինչպես առանձին օրենքի, այնպես էլ այդ օրենքի գործողությունն ապահովող իրավական ակտերի, ռազմավարությունների, ծրագրերի, ընդհուպ մինչև պայմանագրերի օրինակելի ձևերի մշակումը, այնուհետև՝ համապատասխան մարմնի (կամ մարմինների) և պատասխանատու անձանց մատնանշումը,
- Հայաստանում պետություն-մասնավոր գործընկերության միջազգային լավագույն փորձի ներդրման խրախուսումը ենթադրում է, որ Հայաստանում պետք է ներդրվի կարիքներին ու մեր երկրի առջև ծառայած խնդիրներին հարմարեցված միջազգային լավագույն փորձը:

<sup>1</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության պետություն-մասնավոր գործընկերության քաղաքականություն» փաստաթղթին հավանություն տալու մասին», հաստատված է ՀՀ կառավարության 2017թ.-ի նոյեմբերի 9-ի նիստի N 47 արձանագրային որոշմամբ:

Նշված երկու գործառույթների իրականացման համար պահանջվում են զգալի մարդկային ռեսուրսներ և լայնածավալ աշխատանք, որն այժմ ընդամենը իր սկզբնական փուլում է:

«-ում պետության և մասնավոր հատվածի գործընկերությունը բնութագրող հիմնական գիծը ավելի շատ երկարաժամկետ համագործակցությունն է պետական և մասնավոր հատվածների միջև, երբ մասնավոր հատվածն իրականացնում է ենթակառուցվածքային օբյեկտների կառուցման ու զարգացման ֆինանսավորումը և/կամ կառավարումը, ինչպես նաև իրականացնում է պետության կարիքների համար որոշակի ծառայությունների մատուցում, ինչը ավանդաբար իրականացվել է պետության կողմից և համարվել է նրա սեփականությունը:

ՊՄԳ մոդելները սահմանում են ակնկալվող արդյունքի նկատմամբ առաջադրվող պահանջները, որոնք վերաբերում են ենթակառուցվածքների քանակին, որակին և հասանելիությանը, իսկ պայմանագրի կողմերը որոշում են, թե ներդրումներին և կառավարմանն առնչվող ինչպիսի որոշումներ հարկ կլինի կայացնել՝ նման պահանջները բավարարելու համար: Ի հավելումն արդյունավետության բարձրացման և նորարարությունների առաջացման հզոր շուկայական խթաններ տրամադրելուն, ՊՄԳ-ները թույլ են տալիս ծրագրերի ռիսկերը ողջամտորեն կիսել կառավարության և մասնավոր ընկերությունների միջև, իսկ մասնավոր կապիտալը ներգրավել հիմնականում դեպի ենթակառուցվածքների ոլորտ:

Կարծում ենք, որ ՊՄԳ լայնածավալ պրակտիկայի ներդրման համար աշխատանքները պետք է տարվեն հետևյալ ուղղություններով՝

- ՊՄԳ տնտեսաիրավական և գույքային ասպեկտների քննարկումը, իրավունքների ու պատասխանատվությունների բաժանումը և դրանց պահպանման համար իրավական, օրենսդրորեն ամրագրված մեխանիզմների սահմանումը,
- ՊՄԳ ծրագրերի ռիսկերի ողջամտորեն սահմանումը և բաշխումը կառավարության ու մասնավոր ընկերությունների միջև,
- ՊՄԳ ծրագրերի գնահատման համակարգի ներդրումը՝ որոշումների կայացման փուլում՝ նպատակ ունենալով բարձրացնել այդ ծրագրերի իրականացման հաջողությունը, թույլ չտալ տապալումը,
- պետական մարմիններում օժանդակ կառավարչական ծառայությունների օպտիմալացման և այդպիսի ծառայությունները մասնավոր հատվածից ձեռքբերման պրակտիկայի ներդրումը,
- պետության կողմից մատուցվող ծառայությունների արտապատվիրման շրջանակի ընդլայնումը՝ ներառելով բոլոր այն ոլորտները, որտեղ մասնավոր հատվածը կարող է գործել գնային ավելի մատչելի պայմաններով և տեխնիկապես նորագույն ձևերով,
- պետություն - մասնավոր հատված գործընկերության հիմնական ձևերի առանձնացումը՝ հաշվի առնելով «Օրենսդրության «պատրաստվածությունը և ընկալունակությունը» (նկատի ունենք, որ առաջարկվող ծրագրերը,

պայմանագրերը պետք է հնարավոր լինի ադապտացնել ՀՀ իրավական դաշտում):

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքը, ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2002թ.-ի նոյեմբերի 5-ին, ՀՕ-440-Ն, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական՝ [www.arlis.am](http://www.arlis.am) կայք:
2. «Հայաստանի Հանրապետության պետություն-մասնավոր գործընկերության քաղաքականություն» փաստաթղթին հավանություն տալու մասին», հաստատվել է ՀՀ կառավարության 2017թ.-ի նոյեմբերի 9-ի նիստի N 47 արձանագրային որոշմամբ:
3. Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը, ընդունվել է ՀՀ կառավարության 2019թ.-ի փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ, ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2019թ.-ի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ:
4. Մարկոսյան Ա., Պետությունը և շուկան, գիրք առաջին, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2000թ., 560 էջ:
5. Մարկոսյան Ա., Մաթևոսյան Է., Պետությունը և ձեռնարկատիրությունը, Եր., «Զանգակ - 97», 2005, 416 էջ:
6. Սարգսյան Հ., Մարկոսյան Ա., Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները, Եր., «Զանգակ» հրատ., 2014թ., 552 էջ:
7. Айрапетян Л.Н. Государственно-частное партнерство в рамках разработки и реализации целевых программ, Сборник научных статей Современные корпоративные стратегии и технологии в России, 2014, вып. 9, часть 2.
8. Айрапетян Л.Н. Проблемы разработки и реализации целевых программ и способы их решения, Вестник университета (Государственный университет управления), 2014, №8.
9. Батаева Б.С. Корпоративная социальная ответственность и устойчивое развитие России: монография, М.: ФГОБУВПО «Финансовый университет при Правительстве Российской Федерации», 2010.
10. Батаева Б.С. Политика российских компаний в отношении местных сообществ в решении социальных проблем регионов, Экономика и управление, 2010, №9.
11. Варнавский В. «Партнерство государства и частного сектора: теория и практика», «Мировая экономика и международные отношения», N 7, 2002г.
12. Васецкий А.А. Лоббизм в политическом процессе современной России, Управленческое консультирование, 2008, №1.
13. Воробьев О. Минфин определился с налоговыми льготами для Дальнего Востока [Էլեկտրոնային ռեսուրս]. Известия, <http://izvestia.ru/news/541368> (օգտագործման ամսաթիվը: 17.07.2016).

14. Гумбольдт, Вильгельм фон. О пределах государственной деятельности. М.: Социум, 2012г.
15. Ротбард М., Власть и рынок: Государство и экономика / Мюррей Ротбард; Пер. с англ. Б. С. Пинскера под ред. Гр. Сапова.- Челябинск, Изд.-во «Социум», 2002г.
16. Ткачева Л.А. Исследование форм и механизмов взаимодействия региональной власти и бизнес-структур, Бизнес в законе, 2011, №6.
17. Finance & Development, 2001, Volume 38, N 3.
18. Issues and Development in Public Management: Surveys 1996-1997, OECD, Paris, 1998, 97 pages.
19. Public/Private Partnerships: Financing a Common Wealth, Ed. Weiss B., Washington, 1985.
20. World Development Indicators, 2008, WB.

## **Աշոտ Մարկոսյան Էլյանորա Մաթևոսյան**

### **ՊԵՏՈՒԹՅՈՒՆ - ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾ ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ**

**Ամփոփագիր:** Պետություն - մասնավոր հատված գործընկերության հիմնական նպատակներն են՝ զգալիորեն ընդլայնել կապիտալների ազատ շարժը, հնարավոր դարձնել մասնավոր կապիտալի ներթափանցումը այնպիսի ոլորտներ, որտեղ նախկինում անհնար էր դրա գոյությունը, բարելավել հանրային ծառայությունների և ենթակառուցվածքների որակը, կրճատել պետության կողմից կատարվող ծախսերը, պետական հատվածում ներդնել մասնավոր հատվածին բնորոշ նորարարական լուծումներն ու կարողությունները:

Հեղինակների կողմից պետություն – մասնավոր գործընկերություն ժամանակակից պրակտիկայի առաջացման հիմքերի, պատմական զարգացման, կիրառման ոլորտների ու առանձնահատկությունների, ինչպես նաև ինստիտուցիոնալ և իրավական կարգավորման հիմքերի ուսումնասիրությունը թույլ է տվել համապատասխան առաջարկություններ ներկայացնել ՀՀ-ում այդպիսի պրակտիկայի բարելավման համար:

**Բանալի բառեր.** պետություն, մասնավոր հատված, ենթակառուցվածք, հանրային ծառայություն, գործընկերություն, ներդրում, պայմանագիր:

**Ашот Маркосян**  
**Элянора Матевосян**

## **ГОСУДАРСТВЕННО - ЧАСТНОЕ ПАРТНЕРСТВО: СОСТОЯНИЕ И ОРИЕНТИРЫ РАЗВИТИЯ**

**Резюме:** Основные цели государственно – частного партнерства можно сформулировать как: содействие расширению свободного движения капиталов, создание возможностей для проникновения частного капитала в области, где частный сектор действует с осторожностью, улучшение качества предоставляемых государственных услуг и инфраструктурных отраслей, сокращение государственных расходов, внедрение в государственном секторе инновационных решений и возможностей, характерных для частного сектора экономики.

Изучение основ возникновения современной практики государственно-частного партнерства, его исторического развития, областей и особенностей применения, а также институциональных и правовых основ для развертывания такой деятельности, позволило авторам разработать соответствующие рекомендации по совершенствованию этой практики в Республике Армения.

**Ключевые слова:** правительство, частный сектор, инфраструктура, общественные услуги, партнерство, инвестиции, контракт.

**Ashot Markosyan**  
**Elyanora Matevosyan**

## **PUBLIC - PRIVATE PARTNERSHIP: CONDITION AND WAYS OF DEVELOPMENT**

**Abstract:** The main objectives of public-private partnerships can be formulated as the followings: facilitating the expansion of free capital flow, creating opportunities for private capital to penetrate areas where the private sector acts with caution, improving the quality of public services and the infrastructure, reducing government's spending, introducing innovative solutions to public services and opportunities specific to the private sector.

Studying the principle of evolution of modern public-private partnerships, its historical development, areas and features of application, as well as institutional and legal frameworks for the development of such activities, allowed the authors to propose respective recommendations for improving this practice in the Republic of Armenia.

**Keywords:** Government, private sector, infrastructure, public services, partnership, investments, contract

## **Գոհար Վարդանյան, Դիանա Պողոսյան**

### **ՋԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

Ջրոսաշրջությունը համաշխարհային տնտեսության ամենաշարժուն և շահութաբեր ոլորտներից է, որի զարգացման արագ տեմպերը և արտարժույթ ձեռք բերելու առավել մեծ հնարավորությունները նպաստավոր պայմաններ են ստեղծում տվյալ երկրի տնտեսության առանձին ոլորտների, մասնավորապես, զբոսաշրջային ինդուստրիայի ձևավորման ու զարգացման համար: Այն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում ոչ միայն առանձին երկրների տնտեսություններում, այլ նաև միջազգային տնտեսական հարաբերություններում: Մեր ժամանակներում զբոսաշրջությունը բնորոշվում է որպես «20-րդ դարի ֆենոմեն», քանի որ գիտատեխնիկական առաջընթացի, մասնավորապես տրանսպորտի զարգացման համընթաց, զբոսաշրջությունը դարձել է 20-րդ դարի ամենազանգվածային բնույթ կրող երևույթներից և տնտեսության ամենակարևոր գործոններից մեկը<sup>1</sup>: Համաշխարհային տուրիզմի կոնֆերանսում (Մադրիդ, 1981թ.) զբոսաշրջությունը հաստատվեց որպես ակտիվ հանգստի ձևերից մեկը, բնորոշվելով որպես ճամփորդություն, որի նպատակը երկրների հետ ծանոթությունն է<sup>2</sup>:

Տուրիզմի ոլորտի հանրահայտ գիտնականներ, ակադեմիկոսներ Ի.Վ.Ջորինը և Վ.Ա. Կվարտալնովը գտնում են, որ տուրիզմի մասին գիտության զարգացումը սերտորեն կապված է հենց տուրիզմի պատմության հետ<sup>3</sup>: Հնուց ի վեր տուրիզմի՝ որպես գիտական դիսցիպլինի ուսումնասիրությամբ զբաղվել են իրենք՝ ճանապարհորդները, և նրանց մեկնաբանությունները համապատասխանում էին տվյալ ժամանակի տուրիզմի ոգուն և բնույթին: Հնագույն ժամանակներում մարդիկ մշտապես ճանապարհորդել են և հնագույն ժողովուրդները, որ բնակվում էին Մերձավոր և Միջին Արևելքում ու Միջերկրականի ավերին գրառումներ են թողել իրենց ճամփորդությունների մասին: Այդ պատմական ակնարկները ցույց տվեցին, որ առևտրային գործունեության ընդլայնմանը և նվաճումներին զուգահեռ Հունաստանում, Հռոմում, Չինաստանում բարձր խավի ներկայացուցիչներն ավելի հաճախ էին մեկնում զվարճանքի ուղևորությունների, ինչպես նաև գնում այլ երկրներ՝ առևտրի և դիվանագիտական նպատակներով: Հերոդոտոսն, օրինակ, թողել է նշանակալի գրավոր ժառանգություն իր կարճ ուղևորությունների և երկարատև ճամփորդությունների մասին: Նման գրականության մեջ, որ ունի կյանքի նկարագրական բնույթ

<sup>1</sup> Кабушкин Н.И., Мемеджмент туризма; Минск, 2001, 409 стр., Квартальнов В.А. Туризм: Учебник, Финансы и статистика”, М.: 2000, 320с.

<sup>2</sup> Кусков А.С., Джаладян Ю.А., Основы туризма, 3-е издание, М.: ”Кнорус”, 2008, 400с.

<sup>3</sup> Ջորին Ի.Վ., Կվարտալնով Վ.Ա., «Տուրիստիկա», Եր.: Անտարես, 2006, էջ 4:



և պատմական ուղղվածություն, դիտարկվում էին ճանապարհորդության փիլիսոփայական իմաստը, լեզուները, կրոնները, արվեստը, ավանդույթները, երկրի բնակչության կենցաղի և հյուրընկալության բնորոշ գծերը:

Թոմաս Կուկին (1808-1892) բնութագրելով որպես միջազգային տուրիզմի «հայրերից» մեկին, Ի.Վ.Ջորինը և Վ.Ա.Կվարտալնովը գտնում են, որ զանգվածային տուրիզմի առևտրային հեռանկարները ուղենշել է Թ.Կուկը՝ դնելով ժամանակակից տուրիստական ինդուստրիայի հիմքը, ստեղծելով առաջին ճանապարհորդական բյուրոները, նախաձեռնելով փոխադրամիջոցներում և հյուրանոցներում նախօրոք տեղեր պատվիրելու գործը, հյուրանոցների դասակարգումը, ճամփորդական չեկերը, կազմելով չվացուցակներ և սպառիչ տեղեկատվությամբ որակյալ ուղեցույցներ: Արդյունքում՝ միջազգային տուրիզմը ձեռք բերեց զանգվածային բնույթ: Իր բովանդակությամբ զբոսաշրջությունն արտաքին առևտրի մի մասն է, քանի որ ծառայությունները, որոնք տրամադրվում են զբոսաշրջիկին տրանսպորտի, հյուրանոցների, սննդի և այլ ձևերով, կրում են ապրանքային բնույթ և ինչպես ցանկացած այլ ապրանք, այն հանդիսանում է առք ու վաճառքի առարկա համաշխարհային շուկայում: Զբոսաշրջությունը իրենից ներկայացնում է տվյալ երկրի ժամանակավոր այցելուների կողմից արտարժույթով ձեռք բերվող նյութական և մշակութային բարիքներ, ծառայություններ, ապրանքներ, այսինքն՝ ապրանքների և ծառայությունների արտահանում, որն իրականացվում է տվյալ երկրի սահմաններում: Դրա համար էլ զբոսաշրջությունը անվանում են «անտեսանելի արտահանում»<sup>4</sup>:

Զբոսաշրջության վիճակագրական փաստաթղթերում բերվում է զբոսաշրջային արտադրանքի հետևյալ տեսականին.

- հյուրանոցային ծառայություններ,
- հասարակական սննդի ծառայություններ,
- մարդատար տրանսպորտային ծառայություններ,
- զբոսաշրջային օպերատորների, գործակալությունների և զբոսավարների ծառայություններ,
- մշակութային ոլորտի ծառայություններ,
- ռեկրեացիոն ծառայություններ,
- ֆինանսական, ապահովագրական, վարձակալական և այլ տիպի զբոսաշրջային ծառայություններ:

«-ում կան զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ ռեսուրսներ, որոնց նպատակային, արդյունավետ օգտագործելու դեպքում այն կարող է դառնալ ազգային տնտեսության կարևորագույն բնագավառներից և նպաստել տարածքային համաչափ զարգամանը: «Ղ զբոսաշրջության համալիր զարգացման համար կարևորվում է մարզերի ներգրավվածությունը, դրանց ենթակառուցվածքների զարգացվածության մակարդակը, զբոսաշրջային ռեսուրսների

<sup>4</sup> Դուրգարյան Է.Ռ., Աշխարհագրական գործոնների վերլուծություն և գնահատում զբոսաշրջության զարգացման նպատակով («Ղ Սյունիքի մարզի օրինակով), ատենախոսություն աշխ. գիտ. թեկն. գիտ. աստիճ. հայցման, ԵՊՀ, Եր., 2016, էջ 11:

հասանելիությունը, դրանց համակողմանի գնահատումն ու արդյունավետ օգտագործումը: Տարածաշրջանի՝ մարզի մակարդակով զբոսաշրջության ինդուստրիայի պլանավորված կազմակերպումն անդրադառնում է տվյալ մարզի տնտեսության աճի և բնակչության կյանքի որակի բարձրացման վրա:

Այս համատեքստում, առանձնահատուկ կերպով պետք է նշել, որ ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 1-ի թիվ 581-Ա որոշմամբ հաստատված միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները նպատակաուղղված են տնտեսության մեջ արդյունքային ցուցանիշների ապահովմանը<sup>5</sup>: ՀՀ կառավարությունը վերահաստատելով երկրի տնտեսական զարգացման երեք հիմնական առաջնահերթությունները մեծ տեղ է հատկացրել զբոսաշրջությանը, նշելով, որ թավշյա, ոչ բռնի ժողովրդական հեղափոխության արդյունքում առաջացել են տնտեսական և ներդրումային դրական սպասումներ, որոնք մեծ հավանականությամբ վերածվելու են ներդրումային հոսքի, և որոնք կառավարությունը ուղղորդելու է դեպի մարզեր՝ քաջալերելով առավել մեծ թվով նոր աշխատատեղերի ստեղծմանը: Այս առումով, Հայաստանում ահռելի հեռանկարներ են բացվել զբոսաշրջության զարգացման համար, քանի որ թավշյա հեղափոխության դրական լույսի ներքո աննախադեպ բարձր մակարդակի վրա է դրվել մեր երկրի և ժողովրդի վարկանիշը, ինչն էլ նախադրյալներ է ստեղծում զբոսաշրջության աննախադեպ աճման համար, որովհետև, ինչպես նշված է ծրագրում, «...կանխատեսելիորեն մարդիկ պիտի ցանկանան գալ տեսնելու, թե այս ի՞նչ երկիր է, որ կարողացել է սիրո և համերաշխության այնպիսի հեղափոխություն անել, որ հուզել և գրավել է համաշխարհային հանրությանը»: Արդյունքում՝ զբոսաշրջիկների սպասվող աճը հնարավորություն կստեղծի փոքր և միջին բիզնեսի զարգացման համար, հետևաբար, անհրաժեշտ կլինի ապահովել համապատասխան ենթակառուցվածքներ, սպասարկման այնպիսի մակարդակ, ինչը հարիր կլինի Հայաստանի այն իմիջին, որը հեղափոխության արդյունքում ձևավորվել է միջազգային հանրության մոտ: Այս առումով, ծրագրում նախատեսվում է.

- զբոսաշրջիկների համար տեղանքների և տրանսպորտային ուղիների հասանելիությունը բարձրացնելու նպատակով առավել տարածված օտար լեզուներով կահավորել հանրային տրանսպորտի ուղեցույցները, համապատասխան փողոցային և զբոսաշրջային վայրերում նշանները,
- համապատասխան հետաքրքրություններ ունեցող զբոսաշրջիկների համար զուգահեռաբար առանձնացնել զբոսաշրջային մեծ ներուժ ունեցող զբոսաշրջային ենթաճյուղեր, այն է. էկոտուրիզմ, գաստրոտուրիզմ, էքստրիմ տուրիզմ, էթնոտուրիզմ՝ համաշխարհային շուկայում Հայաստանը թիրախավորված դիրքավորելու և մեր երկիրն առավել գրավիչ դարձնելու նպատակով,
- չափազանց կարևորելով զբոսաշրջության դերը, կառավարությունը վերջի-

<sup>5</sup> [www.e-gov.am](http://www.e-gov.am)

նիս զարգացման համար նախատեսում է ավիավառելիքի շուկայի ազատականացմանն ուղղված հակամենաշնորհային միջոցառումներ, որոնք կնպաստեն օդային տրանսպորտի գների անկմանը,

- ոչ պակաս կարևոր է նաև ուստիկանության և մյուս իրավապահ մարմինների աշխատանքը, քանի որ նրանք հանրության հետ համագործակցված պետք է ապահովեն, որպեսզի քրեաձին ակտիվությունը ՀՀ-ում շատ արագ հասնի աննախադեպ ցածր մակարդակի: Հանրապետությունում այսօր հաստատված մթնոլորտը նման արդյունքի հասնելու բացառիկ հնարավորություն է տալիս:

Աղյուսակ 1

**ՀՀ ժամանողների և մեկնողների թվաքանակի դինամիկան 2009-2018թթ.<sup>6</sup>, մարդ**

Տարի	Ժամանել են	Մեկնել են	Աճի տեմպերը			
			Ժամանողներ		Մեկնողներ	
			Բազիսային եղանակով	Շղթայական եղանակով	Բազիսային եղանակով	Շղթայական եղանակով
2009	586755	551682	-	-	-	-
2010	729260	715470	124,29	124,29	129,69	129,69
2011	832746	830492	141,92	114,19	150,54	116,08
2012	963035	965372	164,13	115,65	174,99	116,24
2013	1081984	1080021	184,40	112,35	195,77	111,88
2014	1203745	1198060	205,15	111,25	217,16	110,93
2015	1192119	1187369	203,17	99,03	215,23	99,11
2016	1259657	1262687	214,68	105,67	228,88	106,34
2017	1494779	1481755	254,75	118,67	268,59	117,35
2018	1651782	1622791	281,51	110,50	294,15	109,52

Հարկ է նշել, որ ՀՀ վիճակագրության կոմիտեն «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցներում հրատարակում է տվյալներ միջազգային զբոսաշրջության ցուցանիշների վերաբերյալ՝ ըստ ժամանող և մեկնող ուղևորների, որոնք ըստ ՄԱԿ-ի զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՉՀԿ) մեթոդաբանության համարվել են միջազգային զբոսաշրջիկ, համաձայն որի այն իրենից ներկայացնում է ցանկացած անձ, ով հանգստանալու, բուժվելու, հարազատներին այցելելու, գործնական, կրոնական կամ այլ նպատակներով ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրից մեկ այլ վայր ոչ պակաս, քան քսանչորս ժամ և ոչ ավելի, քան անընդմեջ

<sup>6</sup> Աղյուսակը կազմված և հաշվարկված է հեղինակների կողմից «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցների տվյալների հիման վրա, 2009-2018թթ. հունվար-դեկտեմբերին:

մեկ տարի ժամանակով: Այսինքն՝ նրա հիմական նպատակը ճանապարհորդելն է, այլ ոչ թե աշխատանքային գործունեությամբ զբաղվելը, որի դեպքում ուղևորության համար վճարումները կկատարվեին ժամանած վայրում աշխատանքային գործունեությունից ստացված ֆինանսական միջոցների հաշվին<sup>7</sup>: Պաշտոնական վիճակագրության տեղեկատվության համաձայն վերջին տասը տարիներին ՀՀ ժամանողների և ՀՀ-ից մեկնողների թվաքանակի դինամիկան ներկայացված է ներքոհիշյալ թիվ 1 աղյուսակում:


Թիվ 1 աղյուսակի տվյալներից ակներև է, որ 2018թ.-ին 2009թ.-ի համեմատությամբ ՀՀ ժամանողների թվաքանակը աճել է 181,51 տոկոսով, կամ՝ 1065027 մարդով, իսկ մեկնողների թվաքանակը՝ 194,15 տոկոսով, կամ՝ 1071109 մարդով: Միայն մեկ տարում՝ 2017-2018թթ. ընթացքում, ինչպես նշված է ՀՀ կառավարության 2019թ.-ի փետրվարի 28-ի թիվ 141-Ա որոշման մեջ, հավանության արժանացնելով ՀՀ կառավարության ծրագրի կատարման ընթացքը և արդյունքները, զբոսաշրջությունը Հայաստանում աճել է 10,5 տոկոսով ( դա ևս ակնառու կերպով երևում է մեր կողմից հաշվարկված շրջայական աճի տեմպերում), իսկ մեկնողների թվաքանակը՝ 9,52 տոկոսով: Միայն 2018թ.-ի չորրորդ եռամսյակում Հայաստան այցելությունների թիվը կազմել է 376573, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելի է շուրջ 16,8 տոկոսով<sup>8</sup>: Ներքոհիշյալ թիվ 1 գծապատկերում ներկայացված է ՀՀ ժամանողների թվաքանակի դինամիկան վերջին տասը տարում, ուր բացի փաստացի տվյալներից, կատարված է նաև ժամանակային շարքի հարթեցում ուղիղ գծի մոդելով, համաձայն որի այն ցուցաբերել է կայուն աճի միտում նշված ողջ ժամանակաընթացքում, տարեկան աճելով 108409 մարդով<sup>9</sup>:

Մոդելի համաձայն կատարելով կանխատեսում մինչև 2022թ. կունենանք Հայաստան ժամանողների 2085418 թվաքանակ: ՀՀ-ից մեկնողների թվաքանակի դինամիկան ներկայացված է թիվ 2 գծապատկերում: Այստեղ նույնպես առկա են կայուն աճի միտումներ նշված ողջ ժամանակաընթացքում, տարեկան աճելով 108782 մարդով: Մոդելի համաձայն կատարելով կանխատեսում մինչև 2022թ. կունենանք Հայաստանից մեկնողների 2057919 թվաքանակ:


<sup>7</sup> International Recommendations for Tourism Statistics 2008, Compilation Guide, UN WTO, Madrid, November 2010.

<sup>8</sup> Տե՛ս ՀՀ կառավարության 2019թ.-ի փետրվարի 28-ի թիվ 141-Ա որոշումը «ՀՀ կառավարության 2018թ.-ի հունիսի 1-ի թիվ 581-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին», էջ 27-28:

<sup>9</sup> Վարդանյան Գ.Վ., «Էկոնոմետրիկայի հիմունքները», ուսումնական ձեռնարկ, Երևան, 2003թ., էջ 60-61:



**Գծապատկեր 1.** ՀՀ ժամանողների թվաքանակի դինամիկան 2009-2018թթ.



**Գծապատկեր 2.** ՀՀ-ից մեկնողների թվաքանակի դինամիկան 2009-2018թթ.

Զբոսաշրջությունը մրցակցային ոլորտ է, քանի որ անկախ զբոսաշրջիկների շրջագայության դրդապատճառներից, այն մշտապես ունի որակյալ ծառայությունների և բարձրակարգ սպասարկման կարիք: Գործարար ծրագրով ճանապարհորդողները միմյանց հետ հանդիպման, համաձայնագրերի ընդունման ու հաստատման վայր են ընտրում իրենց ժամանցի ու հանգստանալու պահանջներին համապատասխան, որի հետևանքով այդ վայրի բնակիչները կարող են ստանալ լրացուցիչ եկամուտներ՝ այցելած գործարարների հանգիստը կազմակերպելու և նրանց սպասարկումն ապահովելու համար:

Աշխատող զբոսաշրջիկները իրենց հանգիստը նախընտրում են անցկացնել աշխատավայրից հեռու: Թողակառուները շրջագայության վայր ընտրելիս դեկավարվում են անցյալը վերհիշելու ցանկությամբ: Նորապսակները փնտրում են ռոմանտիկա, ընտանիքով շրջագայողները նախընտրում են իրենց հանգիստն անցկացնել հաճելի և հանգիստ միջավայրում: Հայաստանի տեսարժան վայրերը գտնվում են այս բոլոր նախասիրությունների ու ցանկությունների կենտրոնում, որն ընդգրկում է թե՛ պատմական վայրերի այցելություններ, թե ժողովրդական կիրառական արվեստի և արհեստների աշխատանքների կամ ուղղակի բնության գողտրիկ վայրում լուռության մեջ հանգիստը<sup>10</sup>: Այս համատեքստում հարկ է նշել, որ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին 2019թ.-ի փետրվարի 28-ի թիվ 141-Ա որոշման մեջ նշված են միայն վերջին տարվա ձեռքբերումները, որոնք հանգում են հետևյալին.

- Հայաստանի զբոսաշրջային ճանաչելիության ավելացման ուղղությամբ միջազգային զբոսաշրջային տարբեր ցուցահանդեսներում տեղական զբոսաշրջային կազմակերպությունների համագործակցությամբ ներկայացվել են Հայաստանում զբոսաշրջային հնարավորությունները,
- տուրիստական գրավչությունը և տեղեկացվածության մակարդակը բարձրացնելու նպատակով իրականացվել են մարզային մի շարք փառատոներ, իրականացվել են զբոսաշրջային տարբեր արդյունքների մշակման աշխատանքներ (դրանցից են՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Կալավան համայնքում տուրիստական կենտրոնի կառուցման աշխատանքները, «Գինու զբոսաշրջություն» բրոշյուրի և տեսահոլովակի պատրաստումը, «Ուխտագնացություն դեպի առաջին քրիստոնյա երկիր» երթուղիների մշակումը),
- զբոսաշրջիկների համար տեղանքների և տրանսպորտային ուղիների հասանելիությունը բարձրացնելու նպատակով մեկնարկել է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների նշանների տարատեղման սխեմաների պատրաստումը: Տեղադրվել են 3500 ճանապարհային նշաններ,
- զբոսաշրջային վայրերի և հուշարձանների հասանելիությունը բարձրացնելու նպատակով իրականացվել են ճանապարհների վերականգման աշխատանքներ (դեպի Գառնի, Տաթև, Կումայրի պատմական կենտրոնի տարածքում), լրացվել են զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնները<sup>11</sup>:

Հարկ է նշել, որ վերջին երեք տասնամյակների ընթացքում Հայաստանում բուռն զարգացում է ապրում ագրոտուրիզմը և ներկայումս այն դարձել է ժամանակակից զբոսաշրջային արդյունաբերության կարևորագույն հատվածներից

<sup>10</sup> Դուրգարյան Է.Ռ., Աշխարհագրական գործոնների վերլուծություն և գնահատում զբոսաշրջության զարգացման նպատակով (ՀՀ Սյունիքի մարզի օրինակով), ատենախոսություն աշխ. գիտ. թեկն. գիտ. աստիճ. հայցման, ԵՊՀ, Եր., 2016, էջ 130-131:

<sup>11</sup> ՀՀ կառավարության 2019թ.-ի փետրվարի 28-ի թիվ 141-Ա որոշումը «ՀՀ կառավարության 2018թ.-ի հունիսի 1-ի թիվ 581-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին», էջ 27-28:

մեկը, քանի որ այն աչքի է ընկնում իր մի շարք առավելություններով: Դրանցից կարելի է առանձնացնել հետևյալները.

- լինելով նվազ ծախսատար այն մատչելի է բնակչության գրեթե բոլոր խավերի համար,
- այն, որպես կանոն, ընտանեկան տուրիզմ է և հնարավորություն է ընձեռում մասնակցելու գյուղատնտեսական աշխատանքներին ու հաղորդակցվելու գյուղական կյանքին (ներգրավելով նաև երեխաներին),
- այն չի պահանջում մեծածավալ ներդրումներ, քանի որ այստեղ հիմնական ներդրողը գյուղական բնակչության ունևոր խավն է, իսկ վերջինս նպաստում է գյուղատնտեսության զարգացմանը, ինչն էլ իր հերթին բերում է գյուղում սոցիալական ենթակառուցվածքների և մշակույթի զարգացմանը և գյուղական կյանքի աշխուժացմանը:

Մասնագետները գտնում են, որ ապագայում ագրոտուրիզմը պետք է դառնա Հայաստանի տնտեսության առաջավոր ոլորտներից մեկը<sup>12</sup>: Վերլուծաբանների կարծիքով զբոսաշրջիկները այցելում են բնության տեսարժան վայրերի՝ 34,1%, արկածային՝ 30,6%, մշակութային՝ 30,2% և ժառանգության՝ 8,8% նպատակներով: Այս համատեքստում, ագրոտուրիզմի ակտիվացման համար նպատակահարմար է արձակուրդային օրերին ՀՀ մարզերում, համայնքներում ներգրավել առավելագույն քանակի այցելուների, նպաստել, որպեսզի նրանք առավելագույնս երկար մնան տվյալ վայրում և, վերջապես, այցելուների հանգիստը կազմակերպել այնպես, որ նրանք նորից այդտեղ վերադառնալու ցանկություն ունենան և ավելին՝ իրենց հետ այցելության հրավիրեն ծանոթների ու բարեկամների:

Որպես վերջաբան նշենք, որ յուրաքանչյուր երկիր և անգամ տարածաշրջան իր համար ձևավորում է տուրիզմի զարգացման սեփական հայեցակարգ: Իրականում նրանք միմյանցից էականորեն տարբերվում են հանգստի ռեսուրսների առկայությամբ, օտարերկրացիների համար դրանց գրավչության մակարդակով, տեղական բնակչության կենսամակարդակով և տնտեսական խնդիրների բնույթով: Այստեղ կարևոր դեր է խաղում տուրիզմի զարգացման տնտեսական արդյունավետության և նպատակահարմարության գործոնը, որը շուկայական տնտեսության պայմաններում հաճախ որոշվում է ոչ թե ներդրված միջոցների ուղղակի վերադարձով, այլ, թե ինչից ենք մենք զրկվում՝ չներդնելով այդ միջոցները մեկ ուրիշ՝ ավելի արդյունավետ ոլորտում<sup>13</sup>:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. ՀՀ կառավարության ծրագիր, 2018թ., հաստատված ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 1-ի թիվ 581-Ա որոշմամբ, կետ 6 «Տնտեսության շարունակական զարգացում», ենթակետ 6.4.3 «Առաջնահերթություն, թիվ 3. Զբոսաշրջություն», էջ 27-28:

<sup>12</sup> gegharkunik.agro.am,aadmag.am,ace.aua.am

<sup>13</sup> Զորին Ի.Վ., Կվարտալնով Վ.Ա., «Տուրիստիկա», Եր.: Անտարես, 2006, էջ 20:

2. Кабушкин Н.И., Мемеджмент туризма; Минск: 2001, 409 с.
3. Квартальнов В.А., Туризм: Учебник, "Финансы и статистика", М.: 2000, 320с.
4. Кусков А.С., Джаладян Ю.А., Основы туризма, 3-е издание, М.: "Кнорус", 2008, 400с.
5. Զորին Ի.Վ., Կվարտալնով Վ.Ա., «Տուրիստիկա», Եր.: Անտարես, 2006, 368 էջ:
6. Դուրգարյան Է.Ռ., Աշխարհագրական գործոնների վերլուծություն և գնահատում զբոսաշրջության զարգացման նպատակով (ՀՀ Սյունիքի մարզի օրինակով), ատենախոսություն աշխ. գիտ. թեկն. գիտ. աստիճ. հայցման, ԵՊՀ, Եր., 2016, 150 էջ: [www.e-gov.am](http://www.e-gov.am).
7. International Recommendations for Tourism Statistics 2008, Compilation Guide, UN WTO, Madrid, November 2010. 151 p.
8. «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցներ, 2009-2018թթ. հունվար-դեկտեմբերին, ՀՀ վիճակագրության կոմիտե, 2019թ.
9. ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 28-ի թիվ 141-Ա որոշումը «ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 1-ի թիվ 581-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին»:
10. Վարդանյան Գ.Վ., «Էկոնոմետրիկայի հիմունքները», ուսումնական ձեռնարկ, Երևան, 2003, 82 էջ:
11. [gegharkunik.agro.am](http://gegharkunik.agro.am),
12. [aadmag.am](http://aadmag.am),
13. [ace.aua.am](http://ace.aua.am)

## **Գոհար Վարդանյան Դիանա Պողոսյան**

### **ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

**Ամփոփագիր:** Հոդվածում ուսումնասիրության է ենթարկվել ՀՀ-ում զբոսաշրջության զարգացման հիմնահարցերը վերջին տասնամյակում, առանձնակի ուշադրություն դարձնելով այդ երևույթի փոփոխություններին 2018թ. հանրապետությունում տեղի ունեցած տնտեսական հեղափոխությունից հետո: Փաստացի վիճակագրական տեղեկատվության հիման վրա հեղինակների կողմից վերլուծության է ենթարկվել 2009-2018թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ ժամանողների և ՀՀ-ից մեկնողների թվաքանակի դինամիկան, դուրս բերելով հիմնական միտումները, և այդ հիման վրա կատարվել են կանխատեսումներ մինչև 2022 թվականը:

**Բանալի բառեր.** զբոսաշրջություն, առաջնահերթություն, տնտեսության շարունակական զարգացում, գերակա խնդիրներ, ժամանողներ, մեկնողներ, այցելուներ:



**Гоар Варданян  
Диана Погосян**

## **ОРИЕНТИРЫ РАЗВИТИЯ ТУРИЗМА В АРМЕНИИ**

**Резюме:** В статье рассматриваются вопросы развития туризма в Армении за последнее десятилетие, уделяя особое внимание изменениям данного явления после экономической революции в стране в 2018 году. На основе фактических статистических данных, авторами проанализирована динамика количества прибывших и выбивших туристов из Армении за 2009-2018 гг., выявлены основные тенденции изменений и на этой основе произведены прогнозы до 2022 года.

**Ключевые слова:** туризм, преемственность, непрерывное развитие экономики, приоритетные вопросы, прибывшие, выбившие, посетители.

**Gohar Vardanyan  
Diana Poghosyan**

## **TOURISM DEVELOPMENT DIRECTIONS IN ARMENIA**

**Abstract:** The article focuses on tourism development issues in Armenia over the last decade, paying special attention to changes in the phenomenon after the economic upheaval in the country in 2018. Based on actual statistical data, the authors have analyzed the number of arrivals and departures of the tourists for the period 2009-2018, and identified the main trend patterns and make forecasts until 2022 on thereof.

**Keywords:** Tourism, priority, perpetual development of the economy, priority issues, arrivals, departures, visitors

## Վահագն Խաչատրյան

### ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ - ԱՋԱՏԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ

#### Նախաբան

Հայաստանի Հանրապետությունում նախկինում ձևավորված տնտեսական զարգացման տեսակն անկայուն էր և, ի թիվս այլ խնդիրների՝ բարձր աղքատություն և գործազրկություն, մենաշնորհային և ոչ մրցակցային տնտեսություն, երկրում լրջագույն պրոբլեմներ է ստեղծել և մեծ վնաս է հասցրել շրջակա միջավայրին: Տարիներ շարունակ ինստիտուցիոնալ, վարչական և կառուցակարգերի մեխանիզմների անկատարության պայմաններում խնայողաբար և արդյունավետ չեն օգտագործվել երկրի բնական, այդ թվում պարենային նշանակություն ունեցող պաշարները, աղտոտվել են օդը, ջուրը և հողը, չեն լուծվել թափոնների հեռացման ու օգտահանման խնդիրներ: Շրջակա միջավայրի աղտոտումը, պաշարների անարդյունավետ օգտագործումը սահմանափակ պաշարներ ունեցող, դեպի ծով ելք չունեցող և տարածաշրջանային բարդ պայմաններում գտնվող Հայաստանի տնտեսության ապագա կայունության վրա ազդող կարևորագույն գործոններից են:

Պատահական չէ, որ ՀՀ նոր կառավարությունն իր գործունեության հենց սկզբից առանձնակի ուշադրություն է դարձնում ազգաբնակչության բոլոր շերտերին մտահոգող բնապահպանական խնդիրներին: Այդ առնչությամբ կառավարության ծրագրի «Շրջակա միջավայր» բաժնում գրված է. «Շրջակա միջավայրի կառավարման քաղաքականությունն ուղղված է շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների համալիր պահպանությանը, բարելավմանը, վերականգնմանը և ողջամիտ օգտագործմանը՝ հավասարակշռելով այն սոցիալական արդարության և տնտեսական արդյունավետության հետ: Շրջակա միջավայրի կառավարման հիմնական խնդիրն է նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի՝ օդի, կլիմայի, ջրի, հողերի, բուսական և կենդանական աշխարհի վրա վնասակար ազդեցությունները, բացառել բնական ռեսուրսների գերշահագործումը և ապօրինի օգտագործումը, ապահովել կանխարգելման միջոցառումների իրականացումը»<sup>14</sup>: Ծրագիրը նախատեսում է նաև շրջակա միջավայրի կառավարման տնտեսական մեխանիզմների և լծակների ճկուն համակարգի ներդրում, միջազգային կառույցների հետ համատեղ ֆինանսավորման նորարարական մեխանիզմների (ներառյալ բնապահպանական ծրագրերով պարտավորությունների հաշվանցման մեխանիզմի) մշակում և ներդրում: Ավելի ամբողջական ներկայացնելով ծրագրային այդ դրույթները, կարելի է ասել, որ կառավարությունը բնապահպանական կարգավորման խնդիրն ուզում է լուծել

<sup>14</sup> Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր, փետրվար, 2019, էջ 37, <http://www.gov.am/files/docs/3133.pdf>

դրանք համատեղելով նաև տնտեսական գործունեության համար նպաստավոր պայմաններ ստեղծելու պահանջներին: Բարդ խնդիր, որն այսօր, ոչ թե մեր երկրի, այլ մարդկության առջև կանգնած ամենահրատապ լուծում պահանջողներից է: Հարցի վերջնական լուծումը ծախսատար է, ժամանակատար և Հայաստանից, ինչպես նաև շատ ու շատ այլ երկրներից պահանջում է սկզբունքայնություն, վճռականություն, հետևողականություն<sup>15</sup>: Մեր կողմից առաջարկվում է բնապահպանական կարգավորման մի մեխանիզմ, որը պրակտիկ կիրառության դեպքում կօգնի իրականացնելու նաև կառավարության վերը նշված ծրագրային պահանջները:

### **Շրջակա միջավայրի կորուստների սահմանափակման և փոխհատուցման մեխանիզմները**

Մարդկությունը երրորդ հազարամյակ է մտել բարդագույն տնտեսական, քաղաքական, սոցիալական էթնիկական և գյուրալ բնապահպանական խնդիրների բեռով, խնդիրներ, որոնք իրենց կարևորությամբ նախադեպը չեն ունեցել: Միայն այդ խնդիրների գիտակցումը և դրանց հաղթահարմանը ուղղված գործունեությունը կարող են ապահովել մարդկության գոյատևումը:


Ընդհանուր առմամբ քաղաքակրթության զարգացման վերջին երկու հազարամյա պատմությունը կարելի է բնութագրել որպես աստիճանական հարձակողական: Եթե մեր թվարկության սկզբին Երկրի ազգաբնակչությունը կազմում էր մոտ 100-200 միլիոն մարդ, ապա 1500թ.-ին արդեն մոտ 450 միլիոն էր: Սակայն բնակչության աճը միշտ չէ, որ եղել է անընդհատ՝ համաճարակների, տարբեր հիվանդությունների, անոմալ բնակլիմայական երևույթների պատճառով: Միայն 15-րդ դարից սկսած մարդկությունը հասավ որոշակի ազրարային մշակույթի, կարողացավ ավելացնել սննդամթերքի արտադրությունը և դրանով իսկ ապահովել իր թվաքանակի համեմատաբար կայուն աճ: Այդ ժամանակ էր, որ մարդկությունը աստիճանաբար սկսեց արագացնել իր զարգացման տեմպերը, որի արդյունքում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կտրուկ աճ արձանագրեց (տե՛ս գծապատկեր 1):

Այդ ժամանակ էր նաև, որ սկսվեց հողի անվերահսկելի օգտագործումը, որը հետագայում իր հերթին էկոլոգիական խնդիրների պատճառ դարձավ: Եվ միայն 20-րդ դարի սկզբին ակնհայտ դարձավ մարդու բնության վրա ազդեցության գյուրալ բնույթը: Արդյունաբերական հեղափոխության սկիզբը, որը բնութագրվում է էլեկտրականության հայտնագործմամբ, մեխանիկական տրանսպորտի ստեղծմամբ, նավթի և գազի օգտագործմամբ, մարդկությանը զգալի էներգետիկ ուժ ու հզորություն տվեց: Պետք է նշել, որ այդ ժամանակաշրջանը հայտնի է ոչ միայն հողի, ջրի, անտառային, օգտակար հանածոների ռեսուրսների տնտեսական շրջանառության մեջ օգտագործելու ինտենսիվությամբ, որը բնորոշ է հասարակության զարգացման ցանկացած շրջանին, այլև շրջակա միջավայրի վրա անտրոպոգեն ազդեցության էական աճով: Այդ շրջանում էր,

<sup>15</sup> Տե՛ս UN, Sustainable Development Goals, January 2019, <https://www.un.org/sustainabledevelopment/news/communications-material/>

որ գլոբալ էկոլոգիական խնդիրներն այլ հարթություն անցան՝ ավելի բարդ և վտանգավոր:


Արդյունաբերության ինտենսիվ զարգացման շրջանում ռեսուրսների օգտագործումը՝ ֆիզիոլոգիական նորմերի համեմատ, աճեց տասը, հարյուր և նույնիսկ հազար անգամ: Վերջին 100 տարվա ընթացքում էներգիայի համաշխարհային օգտագործումը աճեց 14 անգամ: Էներգոռեսուրսների գումարային օգտագործումը գերազանցեց 400 մլրդ.տոննա պայմանական վառելիքի չափը:



**Գծապատկեր 1.** Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի դինամիկական աշխարհի խոշորացված փարածաշրջանների համար 1000-1998թթ. (ԱՄՆ դոլար, 1990թ.)<sup>16</sup>

Միաժամանակ, քաղաքակրթության զարգացման ընթացքում բնակչության թվաքանակի աճը այսպիսի վտանգավոր չափերի չի եղել: Մեկ սերնդի կյանքի ընթացքում բնակչությունը աճեց 2,5 անգամ, իսկ ռեսուրսների քանակությունը, որ անհրաժեշտ է նրա կենսագործունեության ապահովման համար և մնացորդների քանակությունը, որ վերադարձվում են նրա կողմից շրջակա միջավայր աճում են երկրաչափական պրոգրեսիայով (տե՛ս գծապատկեր 2): Պատահական չէ ժամանակակից գիտնականների մեծամասնության ահազանգն առ այն, որ վտանգվում է երկրագնդի վրա մարդկության գոյատևումը, եթե առաջիկա տասնամյակներում հիմնարար կերպով չփոխվի վերաբերմունքը բնության նկատմամբ:

<sup>16</sup> Աղբյուր. The World Economy: A Millennial Perspective, by Angus Maddison, OECD 2001



**Գծապատկեր 2. Աշխարհի բնակչությունը 0-2019թթ. (մլն.մարդ) – ըստ աշխարհի խոշորացված տարածաշրջանների և առանձին երկրների<sup>17</sup>**

Մինչև 20-րդ դարի կեսերը խնդիրը որպես այդպիսին, նման սրությամբ չէր դրվել: Զարգացած երկրների մի մասը երկար ժամանակ իրենց զարգացման, ծաղկման շրջանում առանձնապես հոգ չէին տանում շրջակա միջավայրի մասին: Այսօր ցածր կամ միջին եկամուտ ունեցող երկրները չեն կարող իրենց թույլ տալ նման շքեղություն: Անհիմաստ է կրկնել զարգացած երկրների փորձը, և ոչ միայն բնության հանդեպ սիրո պատճառաբանությամբ: «Հիմա աճում ենք, կհարստանանք, հետո կգբաղվենք» մոտեցումը այլևս պարզապես ձեռնտու չէ:

Ըստ Համաշխարհային բանկի, բնապահպանական դեգրադացիայից և ռեսուրսների կորստից տարեկան վնասները կազմում են համաշխարհային ՀՆԱ-ի մոտ 10%-ը: Չինաստանում այս ցուցանիշը գնահատվում է ՀՆԱ-ի 9%-ի չափով, Հայաստանի նման երկրներում յուրաքանչյուր տարի տնտեսության զարգացումը շրջակա միջավայրին պատճառում է ՀՆԱ-ի 8-10 %-ին համարժեք վնաս<sup>18</sup>:

Ժամանակի ընթացքում թյուր տեսակետ էր տարածվել առ այն, որ բնական ռեսուրսներն անսպառ են, և բնական է դրանից հետևում էր, որ տնտեսության զարգացման տեխնոգեն բնույթը չէր կարող անհանգստացնել մարդկությանը: Ավելին, արդեն վաղուց համարյա բոլոր տնտեսագետների և տնտեսագիտական ուղղությունների կողմից աքսիոմատիկ էր այն տեսակետը, որ տնտեսական աճը պայմանավորված է երեք գործոնով՝ աշխատանքով, կապիտալով և բնական ռեսուրսներով: Այս ելակետից էլ տրվում էին բնապահպանության

<sup>17</sup> Աղբյուր. The World Economy: A Millennial Perspective, by Angus Maddison, OECD 2001; <http://www.worldometers.info/world-population/population-by-country/>:

<sup>18</sup> Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն, «Նախարարական զեկույց 2007-2011», Երևան, 2011, 111 էջ:

բնագավառում առաջացող նորանոր խնդիրների բացատրությունները:

Սակայն հետագայում էկոլոգիական վիճակի կտրուկ վատացումը և ռեսուրսների սահմանափակ լինելու գիտակցումը, ինչպես նաև տնտեսական զարգացմանը խոչընդոտող նոր հանգամանքները ստիպեցին վերանայել նախկին մոտեցումները: Տնտեսության աճը այսօր ավելի շատ պայմանավորված է գիտության նվաճումների և նոր տեխնոլոգիաների կիրառման աստիճանով<sup>19</sup>: Սա նշանակում է, որ այդ հանգամանքը, որպես տնտեսական զարգացման գործոն չի կարող անտեսվել, որ խիստ հրատապ է դարձել տնտեսության այնպիսի մոդելի ստեղծումը, որը բավարարի երկու՝ առաջին հայացքից իրար հակասող, պահանջներ. ապահովել տնտեսական աճ և միաժամանակ շրջակա միջավայրին ու բնությանը վնաս չպատճառել:

Խնդրի լուծման շուրջ ծավալվող տեսակետներն այսօր տնտեսագիտության տեսական և կիրառական քննարկումների հիմնական և կարևորագույն թեմաներից են: Մինչ հարցի պատասխանին անդրադառնալը, փորձենք ավելի մանրամասն՝ տեսական դատողությունների օգնությամբ որոշակի պարզաբանումներ տալ:

Ըստ Պոլ Հեյնեի, անհատներն իրենց գործունեության ուղղությունն ընտրում են՝ համադրելով ցանկացած որոշման արդյունքում ակնկալվող հնարավոր սահմանային եկամուտը և սահմանային ծախսը: Ուրիշների եկամուտները և ծախսերը չեն ազդի այդ որոշման վրա, բացառությամբ այն ծախսերի և եկամուտների, որոնք նշանակություն ունեն գործող անձի համար<sup>20</sup>:

Սա չափազանց կարևոր է հասկանալու առկա բազմաթիվ սոցիալական խնդիրները, այդ թվում՝ բնապահպանական: Յուրաքանչյուր ոք՝ անհատ կամ իրավաբանական անձ, իր որոշումը կայացնելիս հաշվի չի առնում այդ ծախսը, տնտեսագետները դա կոչում են գործողությունների արտաքին ծախս կամ բացասական էքսթերնալ: Դրա պակաս մոդայիկ անվանումը հավելյալ ծախսն է: Ցանկացած ոք կտխրի, իմանալով, որ ինքը բացասական էքսթերնալներ է ստեղծում, բայց մեծ բավականություն կգգա, երբ իմանա, որ հաճախ ստեղծում է նաև դրական էքսթերնալներ: Դրանք այն գործողություններից ստացվող օգուտներն են, որոնք որոշում կայացնողը հաշվի չի առնում:

Պետք է պարզապես ընդունել, որ բացասական էքսթերնալները չեն կարող ամբողջովին վերանալ: Մենք կանդրադառնանք հիմնականում բացասական էքսթերնալներին, քանի որ մեզ հետաքրքրող հարցադրումը կապված է հենց այդ հանգամանքի հետ:

Զարգացած հասարակությունում, հազարավոր մարդկանց ամենօրյա փոխազդեցություններում բացասական էքսթերնալները կարող են կտրուկ ավելանալ: Քաղաքային բնակչությունը սովորել է անտեսել բացասական էքսթերնալների մեծ մասը, որոնք ուրիշները պատճառում են իրենց և փորձում են

<sup>19</sup> Stu'The Prize in Economic Sciences 2018, <https://old.nobelprize.org/ecopress.pdf?ga=2.251959305.1870737811.1538987393-524376562.1538987393>

<sup>20</sup> Պոլ Հեյնե, Պիտեր Բոտկե, Դեյվիդ Պրիչիտկո, Տնտեսագիտական մտածելակերպ, Եր., 2011:

զգույշ լինել այն անկանխատեսելի ծախսերի հարցում, որոնք իրենք իրենց գործողություններով պարտադրում են ուրիշներին: Նույնը վերաբերում է նաև տնտեսության բոլոր բնագավառներին, այսինքն՝ անձնական հարաբերությունների ժամանակ առաջացած բացասական էքսթերնալները առաջանում են նաև տնտեսական գործունեություն ծավալելու ժամանակ ևս: Այստեղ է, որ առաջացած հակասությունները կարող են բախումների պատճառ դառնալ՝ քաղաքացիների, հասարակության տարբեր խմբերի միջև: Եթե բոլորը պնդեն ստանալ բացարձակապես այն ամենը ինչի իրավունքը, իրենց կարծիքով, իրենք ունեն, ապա միշտ բախումներ կլինեն:

Ի՞նչ պետք է անել

Բարդ խնդիրը, որը ծառայել է հասարակության առջև բախումներից խուսափելու համար, այնպիսի օրենքներ ստեղծելն է, որպեսզի հնարավոր լինի խուսափել կոպիտ անարդարությունից և նվազագույնի հասցնել նպատակին հասնելու հետ կապված ծախսերը: Մեր կողմից քննարկվող հարցի բնույթից ելնելով մենք ուշադրությունը կսևեռենք երկրորդ չափանիշի վրա ոչ այն պատճառով, որ այն ավելի կարևոր է, այլ որ տնտեսագիտության տեսությունը կարող է ավելի շատ բան հաղորդել ծախսերը նվազագույնի հասցնելու, քան արդարությունն առավելագույնի հասցնելու մասին:

Հանրային շատ հիմնախնդիրներ, որոնք կոչվում են «աղտոտվածություն», կարող են դիտարկվել որպես բացասական էքսթերնալների արդյունք: Մարդիկ օդը կամ ջուրն աղտոտում են ոչ այն պատճառով, որ գերադասում են ապրել աղտոտված օդի և ջրի պայմաններում, այլ որովհետև դրանք որոշ գործունեությունների անկանխատեսելի հետևանք են, որոնցով ցանկանում են նրանք զբաղվել, ինչպիսիք են ավտոմեքենա վարելը կամ վաճառքի համար բարիքներ արտադրելը: Նրանք ուշադրություն չեն դարձնում այն փաստին, որ օդի աղտոտումն ազդում է հազարավոր այլ մարդկանց վրա և իրենց կողմից ստեղծվող աղտոտումն ավելանալով մյուսների կողմից ստեղծված աղտոտվածությանը՝ դառնում է զգալի: Այնուամենայնիվ, այս հիմնախնդրի յուրաքանչյուր մասնակից գործում է այնպես, կարծես ավտոմեքենա վարելուց օգուտը գերազանցում է այն աննշան լրացուցիչ ծախսը, որն իր գործողությամբ պարտադրում է համայնքում ապրող յուրաքանչյուրին: Վերջնական արդյունքը կարող է աղետալի լինել: Թվում է, լուծումը պետք է լինի նոր օրենսդրության միջոցով էքսթերնալները յուրացնելը:

Օրենսդրությամբ ֆիզիկական միասնական սահմանափակումների սահմանումը տարածված մոտեցում է աղտոտվածության խնդրին: Այն կոչվում է «հրամայիր և վերահսկիր»: Ինչ-որ մի ամսաթվից հետո ոչ մեկին չի թույլատրվում օդային կամ ջրային ավազան արտանետել սահմանված քանակից ավելի այս կամ այն նյութի մասնիկներ: Այս մոտեցումը, սովորաբար, չի բերում աղտոտվածության նվազեցման միավոր ծախսը նվազագույնի հասցնելուն: Այն անտեսում է տարբեր միջոցները, որոնց օգնությամբ, սովորաբար, կարելի է հասնել տվյալ նպատակին, ուստի, ամենաէֆեկտիվն այլընտրանքային հնարավոր-

րությունները փնտրելու և ներդնելու թույլ խթան է: Չխորանալով շատ մանրամասների մեջ նշենք, որ մենք էլ ենք կիսում այն տեսակետը, որ աղտոտվածությունը նվազեցնելու նպատակով հրամանի և կարգադրության օգտագործումը սխալ մոտեցում է:

Իսկ կա արդյո՞ք այլ մոտեցում: Իհարկե կա:

Աղտոտվածությունը նվազեցնելու համար տնտեսագիտորեն ավելի ընդունելի մոտեցումն աղտոտման միավորի հարկ սահմանելն է: Որից հետո պետք է թույլ տրվի յուրաքանչյուր աղտոտողի արձագանքել այնպես, ինչպես ինքը ճիշտ կհամարի: Եթե ընդունում ենք, որ աղտոտումը կողմնակի ծախս է, որը չի կրում դրա ստեղծողը, ապա աղտոտման աղբյուր հանդիսացող գործունեության հարկումը շատ խելամիտ է: Եթե ինչ-որ ձևով հնարավոր լինի աղտոտող նյութերի միավորի հարկը սահմանել միավորի կողմնակի ծախսին հավասար, ապա ծախսերը կկրի դրանք ստեղծողը, ով, ենթադրաբար, շահույթ է ստանում դրանց ստեղծումից: Ընդ որում, եթե աղտոտում առաջացնող գործունեության շարունակումը շատ ծախսատար լինի, ապա այն կդադարեցվի, եթե դրա հետ կապված ծախսերն ավելի շատ են, քան օգուտը: Եթե հարկերը վճարելուց հետո օգուտը դեռևս գերազանցում է ծախսը, ապա աղտոտում առաջացնող գործունեությունը կշարունակվի, բայց ավելի փոքր ծավալով, քանի որ այն հիմա ավելի ծախսատար է: Բայց այս դեպքում հարկից ստացվող եկամուտը կարելի է օգտագործել հավելյալ ծախսեր կրողներին փոխհատուցում վճարելու՝ նրանց համաձայնությունը գնելու համար:

Այստեղ է, որ կարիք է զգացվում պետական միջամտության, որը կնշանակի՝ պետությունը կամ նրա կողմից լիազորված մարմինը պետք է հնարավորություն ունենա համեմատել արտանետումների կրճատման սահմանային ծախսերը սահմանային օգուտների հետ: Հարկի կիրառումը այդ մարմնին հնարավորություն կտա տեղեկատվություն ստանալ այդ ծախսերի և օգուտների մասին՝ հետևելով, թե ինչ է տեղի ունենում, երբ տարբեր ձևերով գնահատված աղտոտվածության ծախսերը գնահատվում են աղտոտվածության աղբյուրի կողմից: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս սովորել փորձերի միջոցով: Իսկ ծախսերի և օգուտների մասին հուսալի տեղեկատվություն ստանալը շրջակա միջավայրի պաշտպանության ցանկացած ծրագրի համար, որն առնչվում է մարդկանց բարեկեցությանը, էական նշանակություն ունի:

Ոմանք դեմ են աղտոտողների նկատմամբ հարկեր կիրառելուն, քանի որ համարում են, որ նման հարկեր կիրառելը բացարձակապես անարդար է: Նրանք ենթադրաբար աղտոտվածության նվազեցման ամբողջ բեռը դնում են աղբատների վրա, մինչդեռ հարուստներին թույլատրվում է ուղղակիորեն աղտոտել շրջակա միջավայրը: Աղտոտվածությունը նվազեցնելու համար մարդկանց ընտրությունը, որը հիմնված է այդ նվազեցումը նվազագույն ծախսերով կատարելու վրա, շատերը նույնպես կամայական և անարդար են համարում: Արդարության խնդիրը բարձրացնողների պատասխանն այն է, որ արդյունավետ լուծման կարելի է հասնել՝ անկախ արդարության խնդրի կարգավորման



եղանակից: Այլ խոսքով, երբ ընտրվում է ամենաարդյունավետ լուծումը, պարտադիր չէ ակնկալել, որ կարելի է ծախսերը փոխադրել որոշակի խմբերի վրա<sup>21</sup>:

Աղտոտվածության նվազեցումը շատ նման է ցանկացած այլ օգտակար գործունեության նրանով, որ դրա որոշ տեսակներ ավելի արդյունավետ են, քան մյուսները: Մենք շահում ենք, երբ մեր սնունդը, խաղալիքները, օժանելիքն արտադրում են նրանք, ովքեր հարաբերական առավելություններ ունեն այդ արտադրության մեջ: Ճիշտ այդպես էլ մենք շահում ենք, երբ լրացուցիչ մաքուր օդն արտադրում են նրանք, ովքեր այդ գործում ամենամեծ հարաբերական առավելություններն ունեն: Բայց հարաբերական առավելություններն իրացվում են փոխանակության միջոցով: Ահա թե ինչու աղտոտվածության նվազեցման հարկային մոտեցումն, ընդհանուր առմամբ, նախընտրելի է այն մոտեցումից, որը ֆիզիկական սահմանափակումներ է սահմանում որոշակի ֆիրմաների նկատմամբ: Հարկային մոտեցումը ձգտում է հարաբերական դրամական ծախսերն այնպես փոխել, որպեսզի դրանք արտացոլեն նոր որոշումներն այն մասին, թե ով ինչ իրավունքներ ունի: Դրանից հետո բոլոր կողմերին է թողնվում իրենց սեփական հարաբերական առավելությունների հիման վրա փոխանակության ազատությունը, որպեսզի ապահովվի հասարակական նոր նպատակների իրագործումն առավել արդյունավետ ձևով:

Օդի աղտոտվածությունը մաքրելուց ստացվող օգուտները կապված են դրան հասնելու մեծ ծախսերի հետ, ինչը ստիպում է համեմատել ցանկացած համակարգ, որը տալիս է ցանկացածից ավելի շատ՝ քիչ ծախսերով: Նույնը վերաբերում է բնապահպանական կամ շրջակա միջավայրին առնչվող բոլոր խնդիրներին: Ներկա պայմաններում էկոլոգիական խնդիրների ամբողջ համալիրն ունի հանրային և քաղաքական մեծ հնչեղություն, քանի որ մարդիկ տարածայնություններ ունեն իրավունքների շուրջ: Ավելի շատ մարդիկ են սկսում ասել. «Դուք ձեր օգուտը ստանում եք ծախսը դնելով ինձ (կամ մեզ) վրա, բայց դուք դա անելու բարոյական իրավունք չունեք, հետևաբար դա օրինական իրավունք չէ»: Այսօրինակ տարածայնությունները չափազանց դժվար է հարթել: Նման դեպքերում խնդիրը լուծելու համար տնտեսագիտությունն առաջարկում է մի քանի սկզբունք:

Առաջինն այն է, որ ցանկացած բարիքի, նույնիսկ մաքուր օդի պահանջարկը երբեք չի լինում ամբողջովին ոչ էլաստիկ: Մարդիկ պետք է որոշեն, թե ինչքան են ցանկանում մաքուր օդ ունենալ՝ օբյեկտիվորեն ընդունելով, որ դրանից շատ ցանկանալու դեպքում պետք է հրաժարվեն բազմաթիվ այլ բարիքներ ունենալուց, որոնք նույնպես ցանկանում են ունենալ:

Երկրորդն այն է, որ մարդկանց այնքան ազատություն է պետք տալ, որքանով կարող է ընտրվել նրանց համաձայնությունը ձեռք բերելու եղանակը: Օրինակ, եթե մարդկանց նպատակն այրվող վառելիքի նվազեցումն է, ապա պետք է թույլ տրվի նրանց ընտրել այն միջոցները, որոնք նվազեցնում են իրենց

---

<sup>21</sup> Սարգսյան Ս., Տոնոյան Գ., Տնտեսաէկոլոգիական գործընթացների մոդելավորման որոշ ասպեկտներ, ԵՊՀ Տարեգիրք 2011, Երևան, 2011:

ծախսերը: Պետք է խուսափել «հրամայիր և վերահսկիր» մեթոդից, որը, սովորաբար, ավելացնում է ցանկացած նպատակի հասնելու ծախսը, իսկ ծախսն ավելացնելով ավելանում է նաև նպատակին հասնելու դիմադրությունը: Ծախսերը նվազեցնելու համար պետք է օգտագործել գների համակարգը, ինչպես նաև թույլ տալ նվազեցված ծախսերը փոխանակել:

Այս առումով արժե մեկ անգամ ևս անդրադառնալ Նոբելյան մրցանակակիր Նորդհաուզի մոդելին, որը հնարավորություն է տալիս մոդելավորելու տնտեսության և կլիմայի փոխկապակցված զարգացումը. մասնավորապես, այն օգտագործվում է ածխածնի արտանետման հարկեր սահմանելիս<sup>22</sup>:

Վերջապես, միշտ պետք է հիշել սեփականության կայուն իրավունքների կարևորությունը: Երբ մարդիկ գիտեն խաղի կանոնները և վստահ կարող են հենվել դրանց վրա, ու դրանց փոխանակությունը չի կատարվում կամայականորեն, ապա նվազում են գործարքային ծախսերը, և ավելանում է արդյունավետ համագործակցությունը:

### **Եզրակացություն**

Ամփոփելով, մեկ անգամ ևս նշենք, որ դեռևս չկա տնտեսական այն ունիվերսալ մոդելը, որը կարող է մեղմացնելով արտաքին ազդեցությունները՝ էքստենսիվները, ամբողջապես լուծի մարդկության առջև կանգնած և հրատապություն պահանջող բնապահպանական հիմնախնդիրները: Բացի քաղաքական կամքից, որը պահանջվում է միջազգային կազմակերպություններից, պետություններից, միջազգային վերազգային կորպորացիաներից, դեռևս չկա նաև խնդրի տեսական լուծման վերջնական ձևակերպումը: Սակայն կան մոտեցումներ, որոնք պրակտիկայում կիրառելու դեպքում արդյունավետ միջոց կդառնան վերը նշված խնդիրների լուծման համար: Նշենք դրանցից մի քանիսը.

- Բնապահպանական խնդիրների լուծման նպատակով կամ պետությունը պետք է ամբողջությամբ ստանձնի այդ խնդրի լուծման բեռը կամ արտաքին բացասական ազդակները ներառի արտադրական ծախսերի մեջ, այսինքն՝ դրանք դարձնի արտադրողի անուղղակի ծախսերի մաս: Վերջին տարբերակը տնտեսագիտության տեսության մեջ հայտնի է «ինտենսիվացում անվամբ»:
- Շրջակա միջավայրի պահպանման արդյունավետ տնտեսական մեխանիզմ ստեղծելու համար անհրաժեշտ է, որպեսզի արտաքին տնտեսական էֆեկտներն (էքստենսիվները) արտահայտվեն արտադրական ծախսերում՝ հիմքում ունենալով օրենսդրորեն թույլատրելի նորմատիվային բազան: Ընդ որում՝ շեշտը պետք է դրվի այն սկզբունքի վրա, ըստ որի «պետք է վճարի նա, ով աղտոտում է շրջակա միջավայրը»: Այդպիսի մեխանիզմի ներդրումը շրջակա միջավայրի պաշտպանության հիմնախնդիրը կդարձնի ձեռնարկության ներքին խնդիր, ինչն արտադրողին կստիպի փնտրել առավել արդյունա-

<sup>22</sup> <https://www.rbc.ru/politics/08/10/2018/5bbaffe99a79477a49648931>

վետ, տնտեսապես շահավետ մեթոդներ արտաքին տնտեսական ծախսերը կրճատելու համար<sup>23</sup>:

- Անհրաժեշտ է, որպեսզի պետությունն օրենսդրորեն սահմանի տնտեսական զարգացման էկոլոգիական սահմանները: Այն հանգամանքը, որ այսօր էքստենսիվները չեն ընդգրկվում արտադրական ծախսերի մեջ, ցույց է տալիս այնպիսի կարևոր մակրոտնտեսական ցուցանիշների անկատարությունը, ինչպիսին են ՀՆԱ-ն, ՀԱԱ-ն: Այդ ցուցանիշներում նախատեսված չեն «կենսաբանական կապիտալի» կորուստները: Իսկ էկոլոգիական աղտոտումները և էկոլոգիական ճգնաժամերը վերացնելու համար նախատեսված ծախսերը չեն հաշվարկվում այդ մակրոտնտեսական ցուցանիշներում, որոնք համարվում են հասարակության բարեկեցության համընդհանուր չափորոշիչներ և, ընդհակառակը, արտահայտվում են դրանցում որպես տնտեսական աճի բաղադրիչ:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. ՀՀ կառավարության ծրագիր, փետրվար 2019, <http://www.gov.am/files/docs/3133.pdf>
2. ՀՀ բնապահպանության նախարարություն, «Նախարարական զեկույց 2007-2011», Երևան, 2011, 111 էջ:
3. Պոլ Հեյնե, Պիտեր Բոտկե, Դեյվիդ Պրիչիտկո, Տնտեսագիտական մտածելակերպ, Երևան, 2011:
4. Սարգսյան Ա., Տոնյան Գ. Տնտեսաէկոլոգիական գործընթացների մոդելավորման որոշ ասպեկտներ, ԵՊՀ Տարեգիրք 2011, Եր., 2011:
5. Մարկոսյան Ա., Արժեքային համակարգի հիմքերը, Եր., 2011:
6. <https://www.rbc.ru/politics/08/10/2018/5bbaffe99a79477a49648931>
7. The World Economy: A Millennial Perspective, by Angus Maddison, OECD 2001; <http://www.worldometers.info/world-population/population-by-country/>
8. The Prize in Economic Sciences 2018, <https://old.nobelprize.org/ecopress.pdf?ga=2.251959305.1870737811.1538987393-524376562.1538987393>
9. UN, Sustainable Development Goals, January 2019, <https://www.un.org/sustainabledevelopment/news/communications-material/>

### **Վահագն Խաչատրյան**

#### **ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ - ԱԶԱՏԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ**

**Ամփոփագիր:** Տնտեսության աճն այսօր ավելի շատ պայմանավորված է գիտության նվաճումների և նոր տեխնոլոգիաների կիրառման աստիճանից: Սա նշանակում է, որ այդ հանգամանքը, որպես տնտեսական զարգացման գործոն,

---

<sup>23</sup> Մարկոսյան Ա., Արժեքային համակարգի հիմքերը, Երևան, 2011:

չի կարող անտեսվել, և դա է պատճառը, որ խիստ հրատապ է դարձել տնտեսության այնպիսի մոդելի ստեղծումը, որը բավարարի երկու՝ առաջին հայացքից իրար հակասող, պահանջներ. ապահովել տնտեսական աճ և միաժամանակ շրջակա միջավայրին ու բնությանը վնաս չպատճառել:

**Բանալի բառեր.** շրջակա միջավայր, արտաքին և բացասական էքսթերնալներ, սահմանային ծախսեր, սահմանային օգուտներ, տնտեսական աճ:

**Ваагн Хачатурян**

## ЭКОЛОГИЧЕСКОЕ РЕГУЛИРОВАНИЕ И ЭКОНОМИЧЕСКИЙ РОСТ - ЛИБЕРАЛЬНЫЙ ПОДХОД

**Резюме:** Рост экономики в настоящее время обусловлен развитием науки и применением новых технологий. Это означает, что это обстоятельство нельзя игнорировать как фактор экономического развития, и поэтому крайне необходимо создать модель экономики, которая удовлетворяет, на первый взгляд противоречивый друг другу, двум требованиям: обеспечить экономический рост и не наносить вреда окружающей среде и природе одновременно.

**Ключевые слова:** Окружающая среда, внешние и отрицательные факторы, экономический рост, предельные расходы, предельные выгоды.

**Vahagn Khachaturyan**

## ENVIRONMENTAL REGULATION AND ECONOMIC GROWTH - LIBERAL APPROACH

**Abstract:** Nowadays, the growth of the economy is mainly associated with the level of achievements in science and discoveries, and the degree of penetration and utilization of new technologies. This means that this circumstance cannot be ignored as a factor of economic development, and therefore it is highly required to create such an economic model that, at first glance, satisfies two requirements contradict each other: to ensure an economic growth and not harm the environment and nature simultaneously.

**Keywords:** Environment, external and negative factors, economic growth, marginal cost, marginal benefit

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ**

<i>h/h</i>	<i>Անուն, ազգանուն</i>	<i>Ուղղության, ոլորտի և հոդվածի վերնագիրը</i>	<i>Կառավարության ծրագրի այն կետը, որից բխում է հոդվածը</i>
<b>1. ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ</b>			
1.	<b>Վլադիմիր Հարությունյան Տիգրան Հարությունյան</b>	Հարկային պարտավորությունների հաշվարկման կատարելագործման օրենսդրական և մեթոդաբանական ուղենիշերը անուղղակի հարկերի մասով:	8.1. Հարկային համակարգ
2.	<b>Վլադիմիր Հարությունյան</b>	Ֆինանսական համակարգի կատարելագործման ուղենիշերը ՀՀ-ում:	8.1. Հարկային համակարգ
3.	<b>Տիգրան Հարությունյան, Աննա Հարությունյան</b>	Հարկային պարտավորությունների հաշվարկման կատարելագործման օրենսդրական և մեթոդաբանական ուղենիշերը ուղղակի հարկերի մասով:	8.1. Հարկային համակարգ
4.	<b>Դավիթ Հարությունյան</b>	Հարկային պարտավորությունների հաշվարկման կատարելագործման օրենսդրական և մեթոդաբանական ուղենիշերը գույքային հարկերի և հաստատագրված վճարների մասով:	8.1. Հարկային համակարգ
5.	<b>Վլադիմիր Հարությունյան, Եվգենյա Հակոբյան</b>	Հարկեր/ՀՆԱ ցուցանիշի շարունակական աճի ապահովման ուղենիշերը ՀՀ-ում:	8.1. Հարկային համակարգ
6.	<b>Ռոբերտ Սարինյան</b>	Ազգային տնտեսության հանգույցներում	8.2. Պետական ծախսեր
7.	<b>Քրիստինե Բաղդասարյան</b>	Բենզինի և դիզվառեյի շուկայի ազատականացման ուղենիշերը	3.3. Տնտեսական գործունեության թափանցիկություն
8.	<b>Աշոտ Մարկոսյան Էլյանորա Մաթևոսյան</b>	Հարկային բարեփոխումների իմացաբանական հիմքերը	8.1. Հարկային համակարգ
9.	<b>Ամայա Գալստյան</b>	Հանրային ֆինանսների կառավարման արդյունավետության բարձրացման ուղենիշերը ՀՀ-ում	8.2. Պետական ծախսեր
10.	<b>Թաթուլ Մանասերյան Ռոբերտ Քոչարյան</b>	Կանխիկ դրամաշրջանառության սահմանափակումը որպես ստվերային տնտեսության դեմ պայքարի ուղենիշ	8.1. Հարկային համակարգ

**2. ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ՌԱԶՄԱՐԴՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ**

1. <b>Սվետլանա Դալլաքյան</b>	Բարձր տեխնոլոգիական և ինովացիոն տնտեսության հիմնախնդիրները ու զարգացման ուղենիշերը ՀՀ-ում	7.1 Բարձր տեխնոլոգիաներ
2. <b>Գայանե Հարությունյան</b>	Հայաստանը «նոր տնտեսության» ճանապարհին. ռազմարդյունաբերություն	7.1. Բարձր տեխնոլոգիաներ
3. <b>Ատոմ Մարգարյան Սոնա Մարգարյան</b>	ՀՀ տնտեսության բարձրտեխնոլոգիական հատվածում ներդրումների ներգրավման և խթանման ուղենիշերը	7.1. Բարձր տեխնոլոգիաների զարգացում
4 <b>Վահագն Խաչատրյան</b>	Բնապահպանական կարգավորում և տնտեսական աճ - ազատական մոտեցում	4.8. Շրջակա միջավայր

**3. ՄՐՅՈՒՆԱԿ, ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

1 <b>Հայկ Մարկոսյան</b>	Հայաստանի էներգետիկ անվտանգության ապահովման ուղենիշերը արդի զարգացումների համատեքստում	6.2. Էներգետիկ բնագավառ
2 <b>Լիլիթ Սարգսյան</b>	Հայաստանի ներդրումային միջավայրի բարեփոխման հեղափոխական մոդելը	5.6. Ներդրումների աճը՝ մրցունակության և կայուն աճի նախապայման
3. <b>Գայանե Թովմասյան Ռուբիկ Թովմասյան</b>	Զբոսաշրջության զարգացման հեռանկարներն ու ուղենիշերը ՀՀ-ում	5.7. Զբոսաշրջություն
4. <b>Սամվել Ավետիսյան</b>	ՀՀ ագրարային քաղաքականության գերակա խնդիրների լուծման իրական հնարավորությունները և կառուցակարգերը	5.10. Գյուղատնտեսություն
5. <b>Մերի Մանուչարյան</b>	Գյուղատնտեսության ապահովագրության ներդրումը որպես գյուղացիական տնտեսությունների ֆինանսական վիճակի բարելավման ուղենիշ	5.10. Գյուղատնտեսություն
6. <b>Գոհար Վարդանյան Դիանա Պողոսյան</b>	Զբոսաշրջության զարգացման ուղենիշերը ՀՀ-ում	5.7. Զբոսաշրջություն
7. <b>Աշոտ Մարկոսյան Էլյանորա Մաթևոսյան</b>	Պետություն - մասնավոր հատված գործընկերության ուղենիշերը	5.4. Գործարար միջավայրը, ներքին շուկաների ազատությունը, արդար մրցակցությունը
8. <b>Արամ Խաչատրյան Վահագն Խաչատրյան</b>	Հայաստանի Հանրապետության հանքարդյունաբերությունը. մտորումներ, հանգույցներ	6.3. Հանքարդյունաբերության ոլորտ

**ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ**

<i>h/h Անուն, ազգանուն</i>	<i>Գիտական աստիճանը, գիտական կոչումը, աշխատանքի վայրը</i>
1. <b>Վլադիմիր Հարությունյան</b>	ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
2. <b>Տիգրան Հարությունյան</b>	ԵՊՀ դասախոս, որակավորված աուդիտոր, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ
3. <b>Աննա Հարությունյան</b>	ՀՊՏՀ դասախոս, տնտեսագիտության թեկնածու
4. <b>Դավիթ Հարությունյան</b>	Հայաստանում ամերիկյան համալսարանի դասախոս, որակավորված աուդիտոր, տնտեսագիտության դոկտոր
5. <b>Հայկ Մարկոսյան</b>	ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի փոխտնօրեն գիտության գծով, տնտեսագիտության թեկնածու
6. <b>Քրիստինե Բաղդասարյան</b>	ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտ.քարտուղար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
7. <b>Եվգենյա Հակոբյան</b>	ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
8. <b>Վահագն Խաչատուրյան</b>	Տնտեսագետ, փորձագետ
9. <b>Արամ Խաչատուրյան</b>	ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող
10. <b>Ատոմ Մարգարյան</b>	ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու, փորձագետ
11. <b>Թաթուլ Մանասերյան</b>	ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի պրոֆեսոր, փորձագետ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
12. <b>Յուրի Սուվարյան</b>	ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
13. <b>Ռոբերտ Սարինյան</b>	ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

14. **Աշոտ Մարկոսյան** ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր
15. **Էլյանորա Մաթևոսյան** ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ֆինանսահաշվային ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու
16. **Մերի Մանուչարյան** ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, բաժնի վարիչ, թեմայի ղեկավար
17. **Գայանե Թովմասյան** ՀՊՏՀ ԱՄԲԵՐԴ հետազոտական կենտրոնի ավագ հետազոտող, տնտեսագիտության թեկնածու
18. **Ռուբիկ Թովմասյան** ՀԱԱՀ դասախոս, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
19. **Լիլիթ Սարգսյան** ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, թեմայի ղեկավար
20. **Սվետլանա Դավլաբջյան** ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, բաժնի վարիչ
21. **Ամալյա Գալստյան** ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
22. **Գայանե Հարությունյան** Իսաչատուր Աբովյանի անվ. ՀՊՄՀ տնտեսագիտության և կառավարման, ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ՀՀ պաշտպանության նախարարության ՊԱՀՀ գիտնական-վերլուծաբան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
23. **Գոհար Վարդանյան** Հայաստանի ազգային ազրարային համալսարան, տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր
24. **Դիանա Պողոսյան** Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի դասախոս
25. **Ռոբերտ Քոչարյան** Հայաստանի ազրարային համալսարանի ասպիրանտ
26. **Սամվել Ավետիսյան** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ փորձագետ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր



**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ  
ՈՒՂԵՆԻՇԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**Ժողովածուն նվիրվում է թավշյա հեղափոխության միամյակին  
(2018-2019թթ.)**

Հրատարակության խմբագիր՝	Ա. Հովակիմյան, Ա. Սահակյան
Շարվածքը՝	Մ. Բաբայանի
Էջադրումն ու ձևավորումը՝	Դ. Սարաֆյանի

Հրատ. պատվեր № 943  
Չափսը՝ 70×100<sup>1/16</sup>: 22 տպ. մամուլ:  
Տպաքանակը՝ 100 օրինակ: